

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՄԲԻՈՆ
THE ARMENIAN DEPARTMENT OF HAIGAZIAN UNIVERSITY

ՀԱՅԿԱԶԵԱՆ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍ

هايكازيان
مجلة الدراسات الأرمنية

HAIGAZIAN
ARMENOLOGICAL
REVIEW

Volume 44/2

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
Առաքելություն եւ Տեսլական

Հրատարակել հայության անցեալի ժառանգի, այժմու կենսագործունէութեան եւ ապագայի տեսլականին վերաբերող գիտական հիմքերով, կարծիքի ազատութեան վրայ կառուցուած բազմառամունքային եւ բազմալեզու աշխատութիւններ:

Այժմէականացնել հայագիտութեան վաղեմի ասանդը. գիտական նորագոյն իրագործումներով ամրապնդել հայագիտութեան տեղն ու դերը համաշխարհային հասարակագիտութեան քարտէսին վրայ:

Կարելորել եւ զարգացնել հայագիտութեան ռազմավարական նշանակութիւնը, քանի որ ան կը նպաստէ ազգային ինքնաճանաչողութեան եւ հաւաքական յանձնառութեան բարձրացման: Համագործակցական ամբիոն դառնալ՝ Միջին Արեւելքէն, եւ սատարել երիտասարդ ուժերու, ինչպէս նաեւ՝ գիտական հայերէնի, մանաւանդ արեւմտահայերէնի զարգացման:

HAIGAZIAN ARMENOLOGICAL REVIEW
Mission Statement

To publish research articles related to the heritage, current output and future prospects of the Armenian nation. These multidisciplinary papers should be based on freedom of thought and can be written in diverse languages.

To revisit past accomplishments of the Armenian Studies; to consolidate the place and role of Armenian Studies on the map of world social sciences through modern technological means.

To drive forward the importance of Armenian Studies and develop its strategic role, as it contributes to national identity and the promotion of collective commitment.

To be a forum of cooperation in the Middle East; to support young scholars and to stimulate the development of Western Armenian scientific language in particular.



ԱՐՇԱԼՈՅ
ԹՕՓԱԼԵԱՆ
(1944-2024)

Դուկտ. Արշալոյս Թօփալեան ծնած է Դամասկոս, 1944ին: 1969ին աւարտած է Երեւանի պետական համալսարանի պատմութեան ֆակուլտետը, մագիստրականի վկայականով: 1970-84 իբրեւ գիտաշխատող պաշտօնավարած է ԳԱ Արեւելագիտութեան ինստիտուտին մէջ, իսկ 1974-77՝ դասախօսած ԵՊՀի մէջ: 1983ին թեկնածուա-

կան ատենախօսութիւն պաշտպանած է Հայաստանի ԳԱ Արեւելագիտութեան ինստիտուտին մէջ, ընդդիմախօս ունենալով Եւկենի Փրիմաքովը:

Դուկտ. Թօփալեան մասնակցած է հայ ժողովուրդի պատմութեան նուիրուած գիտաժողովներու: Իր ուսումնասիրութիւնները հրատարակուած են Արեւելագիտութեան ինստիտուտի *Արաբական երկրներ* հատորաշարքին, ինչպէս նաեւ *Հայկազեան հայագիտական հանդէսին* մէջ:

1985-86 կրթաշրջանին միացած է Հայկազեան համալսարանի (այն ատեն գոլէճ) դասախօսական կազմին: Այնուհետեւ, մինչեւ 2021 դասաւանդած է Հայ ժողովուրդի պատմութիւն, Քննական տեսութիւն հայ ժողովուրդի պատմութեան (590-875), Քննական տեսութիւն հայկական Կիլիկիոյ պատմութեան (1071-1375), Քննական տեսութիւն հայ ժողովուրդի պատմութեան (1441-1914), Հայ գաղթականութեան եւ հայկական գաղութներու պատմութիւն, Առաջին աշխարհամարտը, արեւմտահայութիւնը եւ Մեծ Եղեռնը, Հայ գրականութիւն, Հայ պատմագրութեան պատմութիւն, Հայկական Հարցի հոլովոյթը ԺԹ. դարակէսէն մինչեւ Լոզան, Հայ մշակոյթի պատմութիւն, Արաբական գրականութիւն, Արաբական երկիրներու պատմութիւն դասանիւթերը:

1991ին մաս կազմած է Հայկազեան հայագիտական հանդեսի խմբագրակազմին, որուն յառաջադրանքն էր վերսկսիլ հրատարակութիւնը Հանդէսին: Այդ հանգամանքով, դոկտ. Թօփալեան մնաց գործուն անդամ խմբագրակազմին, մինչեւ իր մահը՝ 3 Հոկտեմբեր 2024:

Դոկտ. Թօփալեան Հայկազեանի երկարամեայ դասախօսներէն մին էր, հայոց պատմութեան նուիրեալ մասնագէտ: Թէեւ իր դասանիւթերուն ուսանողներուն մեծամասնութիւնը իբրեւ մասնագիտութիւն հայագիտութիւնը ընտրած չէր ըլլար, սակայն իր բժախնդիր մօտեցումով, ուսանողութեան հանդէպ իր ջերմ եւ գուրգուրոտ վերաբերմունքով, գիտելիք փոխանցելու իր անսպառ ջանքով, իր շահեկան, օգտաշատ բացատրութիւններով ու վերլուծութիւններով գիտէր թէ՛ դասաւանդութեան մակարդակը պահելու եւ թէ՛ ոչ-մասնագէտ ուսանողներուն իր նիւթը սիրցնելու եղանակը:

Հայկազեան հայագիտական հանդէսի խմբագրութեանս համար պատիւ էր գործակցիլ ազնուութեամբ, մարդասիրութեամբ յատկանշուող, հայութեամբ եւ հայագիտութեամբ կենսաւորուող դոկտ. Թօփալեանի հետ: Ան մնաց միշտ համեստ, երէցին ու կրտսերին հետ հաւասարաչափ յարգալից, միշտ հետամուտ՝ քննական մօտեցումի, գիտական ճշգրտութեան ու ընդհանրապէս ճշմարտութեան: Խմբագրակազմի քննարկումներուն դոկտ. Թօփալեան առարկայական, հանդարտաբարոյ, բժախնդիր ու սկզբունքային կեցուածք կը ցուցաբերէր, միշտ ալ ընդունելով այլոց համոզիչ տեսակէտերը:

Դոկտ. Արշալոյս Թօփալեանի մահով Հայկազեան հայագիտական հանդէսը կը կորսնցնէ տոկուն գիտնական-հայագէտ մը, տիպար գործընկեր մը եւ անկեղծ ու սիրելի գործակից մը:

**ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹԵԱՆ/ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹԵԱՆ
ԲՆԱԳԱԽԱՌՆԵՐՈՒ, ԻՒՐԱՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ,
ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ, ՅԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒ,
ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐՈՒ, ՄԱՐՏԱՀՐԱԽԷՐՆԵՐՈՒ,
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՔԱՐՏԵՍԻՆ
ՎՐԱՅ ՏԵՂԻ ՀԱՐՑԵՐ**

Հայկազեան հայագիտական հանդէսի 42րդ հատորի երկրորդ գիրքով, խմբագրութիւնս նախաձեռնեց նոր ամսագրութի մը, որով Հանդէսի իրաքանչիւր հատորի երկրորդ գիրք սկսի հայագիտութիւնը շահագրգռող այժմեական նիւթի մը շուրջ հայագիտութեան վաստակաւոր մշակներու ուղղուած հարց-պատասխաններով: Ստորեւ կը ներկայացնենք պատմութեան դոկտորներ Գայիանէ Մախմուրեանի, Վահրամ Շէմմասեանի, Խաչատուր Ստեփանեանի եւ Սիմոն Փայասլեանի տեսակէտերը՝ հայ պատմագրութեան եւ պատմագիտութեան մասին – Խ.:

Ա. հարցում.- Ինչպէ՞ս կը բնորոշէք հայ պատմագիտութեան առաքելութիւնն ու յառաջադրանքները:

Գայիանէ Մախմուրեան.- Կարծում եմ, պատմագրութիւնը որպէս գիտութիւն պէտք է ուսումնասիրի եւ վերլուծի հեռաւոր, նաեւ շատ թարմ անցեալը իր ժողովրդին աւելի ուժեղ ու տեղեակ դարձնելու համար: Իւրաքանչիւր ազգ ու պետութիւն ընտրութիւն է կատարում պատմական բազմաթիւ փաստերից՝ ընտրելով օգտակարը: Այսինքն՝ ողջ փորձից ընտրում է այն, ինչ յարգանք է առաջացնում իր հասարակութեան հանդէպ, որով ինքն աւելի հրապուրիչ է դառնում ու քիչ սխալներ կատարող: Նկարագրելով անցեալը մենք ստեղծում ենք այսօրուայ ժողովրդի կերպարն եւ այդ կերպարը ազդելու է նրա ապագայ գործունէութեան վրայ:

Ուրեմն պատմագրութիւնը ունի բուն գիտական, ազգապահպան ու զուտ քաղաքական նշանակութիւն: Այդ բոլոր ճիւղերն էլ բարդ են: Գիտութիւնը պահանջում է ոչ միայն նկարագրել անցեալն, այլեւ վերլուծել, համադրել ու համեմատել Հայաստանում տեղի ունեցածը՝ մօտ հարեւանների եւ առաջատար տէրութիւնների նուաճումների հետ: Հետեւաբար՝ հարկաւոր է հին եւ արդի լեզուների իմացութիւն, լաւ աղբիւրագիտական զինուածութիւն:

Հայ պատմագրութիւնը պէտք է ձեւաւորի հայերի միասնութիւնը, իւրաքանչիւրին հասցնելով իր ժողովրդի անթիւ եւ աննման նուաճումները՝ լինի դա հին ժամանակաշրջանի հզօր տէրութիւնը, վաղ միջնադարի փիլիսոփայական, պատմական ու գրական երկերը, միջնադարեան պետութիւնների ռազ-

մապաշտպանական գործունեությունն ու ճարտարապետությունը, ուշ միջնադարի օրէնսդրությունն եւ առեւտուրը կամ նորագոյն փուլի ազատագրական պայքարն ու կերտած հանրապետությունը: Իւրաքանչիւր հայ պէտք է տիրապետի եւ հետեւաբար հպարտ լինի իր ազգի շքեղ ու բացառիկ նուաճումներով:

Միաժամանակ մենք կանգնած ենք դառն անհրաժեշտութեան առաջ. հասկանալ՝ այդ ինչու՞ մեր լայնարձակ ու մարդաշատ Հայաստանը վերածուեց փոքրիկ մի երկրի, որն անընդհատ նուազում է իր չափերով: Մեծ Եղեռնի իրականացնողը պէտք է խիստ կշտամբուի եւ դատապարտուի, իսկ Մեծ Ոճիրի զոհը բնաւ նրա մեղաւորը չէ: Սա հասկանալի է, թէ՛ մեր թշնամիները յաճախ են նենգափոխում զոհի եւ մեղաւորի դերերը: Յամենայնդէպս՝ հայ պատմաբանին անհրաժեշտ է վերլուծել մե՛ր իսկ բացթողւումներն ու չօգտագործուած հնարաւորութիւնները: Արդեօ՞ք դատապարտուած էինք եւ ենք բազմաթիւ նուաճողների ներկայութեան հետեւանքով: Հեռաւոր-մօտ անցեալն ու այժմէական վիճակն ուսումնասիրելիս կարող ենք մեծ օգուտ բերել մեր պետութեանն ու հասարակութեանը: Մանաւանդ եթէ չփաթաթենք մեր երիտասարդութեանը միայն հին ու ոչ-այդքան յաջող դուրս եկած միջոցները:

Վահրամ Շէմմասեան.- Հայ պատմագրութեան առաքելութիւնն է ուսումնասիրել, գիտնալ, սորվիլ եւ մասնագէտնետու ու հանրութեան մատչելի դարձնել հին ու արդի ժամանակներուն առկայ ամէն բան (ինչպէս՝ պատմութիւն, լեզու, մշակոյթ եւն.) որ բնականօրէն կապ ունի հայութեան հետ: Իսկ Յառաջադրանքն է՝ գործնականութիւնը: Ասյինքն՝ անոր կիրառելիութիւնը:

Ուսումնասիրութիւնները՝ յօդուածի կամ գիրքի կամ այլ ձեւաչափով, պէտք է ժողովուրդին ուղղուին: Այլ խօսքով, պէտք է մտածել «արուեստը արուեստին եւ արուեստը ժողովուրդին ծառայութեան համար» սկզբունքով: Այս երկուքը կրնան գործադրուիլ համատեղ: Պատմագիտական նիւթը ժողովուրդին համար պէտք է ունենայ դաստիարակչական բնոյթ, դուրս գայ փղոսկրեայ աշտարակներէն առանց որակի անկումին: Եթէ ժողովուրդին օգտակար չէ՝ պատմագրութիւնը իր նպատակին միայն մասամբ ծառայած կ'ըլլայ: Հայ պատմագրութիւնը պէտք է ծառայէ հրատարակութիւններու միջոցով, ինչպէս նաեւ բեմերէն եւ խորհրդաժողովներու ատեն բարձրաձայնուած մտահոգութիւններու գիտական արծարծումին, գործադրումին, արտացոլացնել արձանագրուած խօսոյթը: Հայ պատմագրութիւնը սակայն մասնակի կ'արտացոլացնէ այս բոլորը:

Խաչատուր Ստեփանեան.- Համաշխարհային եւ տարածաշրջանային փոփոխութիւնների, քաղաքակրթական խմորումների եւ փոխակերպումների մեր ժամանակներում հայ պատմագրութեանն լուրջ առաքելութիւն է վերապահուած: Այդ առաքելութիւնը պայմանաւորուած է ոչ միայն հայ մարդու, հայկական հասարակութեան, հայկական պետականութեան պատմութեան ուսումնասիրութեան գիտական հետաքրքրութիւն ներկայացնող շարժառիթներով, այլեւ մեր օրերում հայ ժողովրդի եւ հայկական պետականութեան առջեւ ծառայած մարտահրաւերների ղիմագրաւելու անհրաժեշտութեամբ: Հայ պատ-

մագրութիւնը այս տրամաբանութեան մէջ պէտք է մեր անցեալն այնպիսի գաղափարական հիմնաւորումներով մատուցի հայ հասարակութեանն ու հայ սերունդներին, որ պետականութեան կայացման եւ հզօրացման, Սփիւռքում հայապահպանութեան գործընթացում որեւէ երկմտանք չլինի մեր աներկբայելի ճշմարտացիութեան մէջ: Հայ մարդուն որեւէ տարակուսանք չպէտք է լինի իր հայրենիքի միակ եւ իրական տէրը լինելու համոզման մէջ: Իսկ այդ համոզման գաղափարաբանական հիմնաւորումը տալու է հայ պատմագրութիւնը: Հայ պատմաբանները պէտք է իրենց առջեւ խնդիր առաջադրեն աշխարհին աւելի պատշաճ ներկայացնելու հայ պատմական անցեալը, համաշխարհային պատմութեան մէջ հայ ժողովրդի ունեցած մեծ ներդրումը եւ, միաժամանակ, պէտք է կանխել մեր պատմութիւնը կեղծելու եւ խեղաթիւրելու օտար փորձերը:

Simon Payaslian.- The concept of “mission” in the context of historiography must be viewed with a certain degree of skepticism. “Mission” implies an ideologically, theoretically and empirically pre-molded archetypical paradigm designed for the propagation of a clearly defined, specific objective. Usually, mission-oriented histories are found in nationalistic or patriotic historical narratives—for example, commonly found for didactic, pedagogical purposes in textbooks which seek to instill loyalty in citizens, to mobilize public support for a national cause, and so forth. There are several problems with this “mission” model of writing history, the most obvious being that such an approach is predicated upon an ideological uniformity, and conformity, that shapes the theoretical parameters of the historical narrative in both temporal and spatial perspectives.

One question that immediately comes to mind inevitably is whether it is necessary or desirable to develop a certain uniformity in national historical narratives. Rather than think in terms of “missions,” I espouse historiographical pluralism and prefer to think in terms of perspectives. While to some extent it is possible and desirable to develop consensus in the scholarly community on certain issues, the advancement of Armenian historiography requires scholarly imagination and creativity. Contending theories, approaches, and interpretations would signify a healthy, dynamic field, encouraging a cultural environment conducive to creative thought and cultivation of the scholar’s imagination. Nina G. Garsoian’s *The Paulician Heresy* comes to mind as an excellent example of creativity in forming an original research project.

Historians are interpreters of events and personalities and offer diagnosis of the health and wealth of the nation. The historian writes the record of national and personal accomplishments, record of cultural advances, of successful and failed governments, as in the case of the monumental works by Nikoghayos Adonts (*Armenia in the Period of Justinian*) and Richard G. Hovannisian (*The Republic of Armenia*, four volumes). There is an urgent need to republish the massive eight volume *Hay Zhoghovrdi Patmutyun* [*History of the Armenian People*] but without the imposition of Soviet Marxist ideology. Nevertheless, there is an absence of contending perspectives on various issues in Armenian history.

Բ. հարցում.- Ի՞նչ են հայ պատմագրությունները.- ա) գլխավոր բնագավառները, բ) իրայատկությունները, գ) բացթողումները:

Գ.Մ.- Մենք ունենք հայագիտության գլխավոր բնագավառների բաժանումն, որը, կարծես, չի հակասում աշխարհում ընդունուած դասակարգմանը: Միայն ցանկալի է յստակեցնել՝ արդեօ՞ք մուտք ենք գործել նոր ժամանակաշրջան՝ նրան յատուկ գործարաններով, երկաթուղիներով, Անգլիայի կամ Նիդեռլանդների հետ միաժամանակ: Բացի դրանից, մեզ հարկավոր է շատ անելի մեծ ուշադրություն դարձնել հին ու միջնադարի հատուածներին, որոնք մանրակրկիտ եւ աշխատատար վարժանք են պահանջում՝ աղբիւրագիտութեամբ ու լեզուներով հանդերձ: Ուստի, մեր շեշտադրումն է՝ հին պատմութիւնն ու Մեծ Հայքը՝ ռազմաքաղաքական ու տնտեսական թեմաներով: Ողջ միջնադարը՝ յատկապէս հայ-բիւզանդական ու հայ-պարսկական յարաբերութիւնները, Բագրատունիների եւ Կիլիկիոյ թագաւորութիւնները: Ուշ միջնադարից՝ հայ-հնդկական առետուրը ԺՁ.-ԺԸ. դարերում: ԺԹ.-ԻԱ. դարերի առնչութեամբ՝ անկասկած, Արեւմտեան Հայաստանի տնտեկասական կեանքը, մշակոյթն ու ազատագրական պայքարը: Մեծ Եղեռնը պահանջում է քաղաքական ու ընկերաբանական տեսութիւնների, նրա նոր դրսետրումների կանխարգելման, այդ ոլորտում միջազգային համագործակցութեան ու ջարդերից պաշտպանութեան ձեւերի դասաւանդումը:

Հայաստանի առաջին Հանրապետութեան փորձը պահանջում է անելի շատ վերլուծական, քան քարոզչական մօտեցում: Նոյնն է պահանջում նաեւ արդիական գործընթացների զննումը՝ մեր այսօրուայ հանրապետութեամբ ու նրա բազմաթիւ խնդիրներով հանդերձ:

Հաշուի առնելով մեր մեծաթիւ Սփիւքը, հայերէնի կողքին գրքերը հարկավոր է զանգուածաբար հրատարակել նաեւ օտար լեզուներով՝ մանաւանդ Հայաստանի պատմութեան համառօտ հատորները: Նրանք ոչ միայն ազգապահպան, այլեւ գովազդի դեր են կատարելու՝ Հայաստանի արտադրանքը օտար շուկաներում հաստատելու համար:

Ինչ վերաբերում է բացթողումներին՝ մեր աշխատութիւնները յաճախակի ունեն նկարագրական բնոյթ, իսկ հեղինակները քիչ են հետետում Հայաստանից դուրս հրապարակուող գրականութեանը: Սա առնչում է ոչ միայն կեղծարարութիւնների հետ, որոնք լիարժէք պատասխան չեն ստանում: Ցաւօք, սատարածում է նաեւ արդիական մեթոդաբանութեան, արտերկրի հեղինակների պատմաքաղաքական վերլուծութիւնների եւ նրանց ձեւակերպած օրինաչափութիւնների վրայ: Այդ իրողութիւնը նուազեցնում է մեր աշխատանքի որակը:

Վ. Շ.- Վերջին տարիներուն լուսարձակի տակ առնուած են մանաւանդ Միջին Արեւելքի, Եւրոպայի, Ամերիկաներու հայօճախներու պատմութիւնը, մինչ անդին քիչ են ուսումնասիրութիւնները Ափրիկէի, Հարաւ-արեւելեան Ասիոյ, Աստրալիոյ հայօճախներուն մասին: Ասոնց քիչ ուշադրութիւն կը դարձուի: Կրնան այդ հայօճախները փոքր ըլլալ, բայց ասոնց հետքերով ալ պէտք է երթալ, որպէսզի համապատկեր մը ունենանք: Համապատկերային մօտեցումը

կ'օգնէ համատեղութեան, միացումի, միասնականութեան հարթակին, մտադրոյթին զարգացման: Ռուսաստանի հայօճախը Սփիւռքի ամէնամեծաթիւ հայօճախն է, որուն մասին ուսումնասիրութիւններուն քննական թէ որակական իմաստով շատ տեղեկացուած չենք – մանաւանդ՝ նախկին Սովետ. Միութեան տարածքէն դուրս գտնուող Սփիւռքս – թերեւս որովհետեւ ուսումնասիրութիւնները մեծ մասամբ ռուսերէն են, ուստի՝ գրեթէ անմատչելի արտասահմանին: Որոշապէս անտեղեակ ենք այդ հսկայ հայօճախին մասին: Հայ պատմագրութիւնը պէտք չէ երոպակեղրոն, միջինարեւելակեղրոն, ամերիկակեղրոն, ռուսաստանակեղրոն, հայաստանակեղրոն ըլլայ: Անոր տեսադաշտը պէտք է ընդգրկէ ամբողջ հայ տիեզերքը, իր անցեալով եւ ներկայով: Մատնանշելի է որ երոպական հայ պատմագրութիւնը աւելի կը զբաղի հին եւ միջնադարեան հայ պատմագրութեամբ, թէեւ վերջին տասնամեակներուն առաւել ուշադրութեան նիւթ դարձած են Հայոց Յեղասպանութիւնը, Ժամանակակից հարցերը:

Բացթողումներու առումով տկար մնացած է հայ տան (իր լայն առումով) պատմագրութիւնը: Քիչ առաջ անդրադարձայ պատմագրութեան ժողովրդացման: Խոշոր բացթողում է հայ անհատին՝ իր ընտանիքին պատմութիւնը սահմանափակ գիտնալու փաստը: Հայ պատմագրութեան պարտականութիւնն է հայ անհատը կամրջել նոյնինքն ի՛ր ընտանիքին պատմութեան: Հայու իւրաքանչիւր տուն տարբեր տարողութեամբ թանգարան է իր հին լուսանկարներով, դպրոցական վկայականներով, նամակներով, ձեռագիր յուշերով, այլազան փաստաթուղթերով, ընտանեկան բանաւոր պատմութեամբ, ծայներիզներով եւն., որոնցմէ շատեր ձեղնայարկը նետուած կը բորբոսին, իսկ երբ տան երէցները կը մեռնին, ձեղնայարկի այդ նիւթերէն շատերը կը թափուին: Թերեւս՝ աւելի ուշադիր ենք հայերէն գիրքերուն, որոնցմէ հարիւրաւոր օրինակներ տպուած են եւ հաւանական է որ արդէն իսկ անոնցմէ նմուշներ կը գտնուին հայկական կեղրոնական գրադարաններու մէջ: Բայց ընտանեկան լուսանկարները եւ վերոյիշեալ ընտանեկան արխիւային նիւթերը յատուկ են, երկրորդ օրինակ չկայ, ուստի եւ անոնց կորուստը շատ բան կը պակսեցնէ թէ՛ տուեալ ընտանիքին պատմութենէն եւ թէ՛ ընդհանրապէս հայ ընտանիքի պատմութեան համապատկերէն: Հայ պատմագրութիւնը պէտք է ձգտի հայ տունը ապրող, կենդանի թանգարանի վերածել, այլապէս նոր սերունդը կ'անգիտանայ ի՛ր իսկ անցեալը, որ նաեւ ներկան է, իր ինքնութիւնն է, իր գերդաստանին, նոյնինքն ի՛ր շարունակականութիւնն է: Այս արթնացումը, այս գիտակցումը հայ պատմագրութեան դերի եւ առաքելութեան խոշոր բացթողում է: Սովորութիւն էր, իւրաքանչիւր ընտանիք իր Աստուածունչի վերջին էջերուն կ'արձանագրէր ընտանիքի կազմութեան եւ ծաղկման անկիւնադարձային թուականները (պսակ, ծնունդ-մկրտութիւն, մահ եւն.), որոնցմով կարելի է կազմել ընտանիքին պատմութեան հիմնագիծերէն միքանին: Հայ պատմագրութեան յառաջադրանք է հայ ընտանիքին մտադրոյթին մէջ հայ պատմագրութեան անհասանելիութիւնը, անմատչելիութիւնը նուազագոյնի հասցնելը: Ժողովրդացման այս ծիրին մէջ պէտք է դիտել Library of Congressի ներկայացուցած հայերէնի տառադարձութեան ասանդակական համակարգը, որ

ըստիս կարիքն ունի պարզացման, թէեւ միջնադարագէտները կրնան գոհ ըլլալ այդ համակարգէն:

Խ.Ս.- Հայ պատմագրութեան առաջնային բնագաւառներից մէկը հայ ժողովրդի ծագման եւ կազմաւորման հարցն է: Յայտնի է, որ մինչեւ ԺԹ. դարը հիմնականում գերիշխել է Մովսէս Խորենացու *Պատմութիւն հայոցի* «Ծննդաբանութիւն հայոց մեծաց» բաժնում հնչած տեսակէտը: Սակայն ԺԹ.-ԻԱ. դարերում հայ ժողովրդի ծագման եւ կազմաւորման հարցերով զբաղուած եւ զբաղուող հայ եւ օտարագրի գիտնականները առաջադրել են տարբեր, երբեմն հակասական տեսակէտեր ու տեսութիւններ: Հարցն առ այսօր վերջնական լուծում չի ստացել յատկապէս նշուած հակասականութեան պատճառներով: Մի խումբ գիտնականների կողմից վիճարկելի է համարուում յատկապէս Ուրարտու-Վանի կամ Արարատի թագաւորութեան խնդիրը: Սա մեծ բացթողում է: Անվիճելի է մի բան, հայերը բնիկներ են: Մեր կարծիքով յատկապէս անկախ պետականութեան շրջանում մենք պարտաւոր էինք լուծել եղած հակասութիւնները, չնայած որ դեռ ուշ չէ: Արարատեան թագաւորութեան շուրջ եղած հակասութիւնները պէտք է հարթել:

Հայ պատմագրութեան միւս կարեւոր բնագաւառը հայկական պետականութեան առաջացման եւ յետագայ ճակատագրի հարցն է: Խնդիրը բաւական այժմէական է այն առումով, որ թուրքական եւ դրան ձայնակցող ադրբեջանական պատմագրութիւնը, ոտնահարելով պատմական իրականութիւնը, անհիմն ճգնում է առհասարակ ժխտել հայկական պետականութեան գոյութիւնը: Պարզ է, որ հին ժամանակներից իվեր հայկական պետականութեան գոյութեան հարցը որեւէ կասկած չի յարուցում: Այստեղ մենք պարտաւոր ենք ոչ միայն արժանի հակահարուած տալ թուրքական եւ ադրբեջանական նպատակադրուած խեղաթիւրումներին, այլեւ շարունակել հազարամեակների պատմութիւն ունեցող մեր պետականութեան դեռեւս անյայտ ծայքերի ուսումնասիրութիւնը: Իսկ մեր հազարամեակների պետականութեան փորձի ուսումնասիրութիւնն այսօր կիրառական մեծ նշանակութիւն կարող է ունենալ:

Միւս կարեւոր բնագաւառը հայ ժողովրդի կեանքում մեծ դերակատարում ունեցած կրօնի եւ եկեղեցու պատմութեան ուսումնասիրութիւնն է: Հայ հեթանոսական կրօնը, քրիստոնէութեան ընդունումը, Վարդանանց պատերազմը, հաւատակից Բիւզանդիայի հետ ունեցած դաւանաբանական վեճերը, իսլամի հետ ունեցած առնչութիւնները, Հայ Եկեղեցու ներքին խնդիրները, առօրեայ կեանքում անհրաժեշտութիւն համարուող եկեղեցական կանոնները, կրթութեան, մշակոյթի, հասարակական մտքի բնագաւառում եկեղեցու դերը դեռ կարօտ են յետագայ ուսումնասիրութիւնների: Այս առումով պէտք է հաշուի առնել նաեւ այն, որ զարգացման բարձր մակարդակում գտուող խորհրդահայ պատմագրութիւնը շատ քիչ է անդրադարձել եկեղեցու պատմութեանը:

Առանձին խնդիր է հայ մշակոյթի պատմութեան յետագայ առաւել համակողմանի ուսումնասիրութիւնը: Հայ ժողովուրդն օժտուած է այնպիսի մշակութային յատկանիշերով, որ իրաւամբ կարող է համաշխարհային մակարդակով յաւակնել մշակութաստեղծ ազգ կոչուելուն: Սկսած վաղնջական ժամանակներից Հայկական Լեռնաշխարհը հանդիսացել է քաղաքակրթութեան բնօր-

րան, իսկ այստեղ ձեւաորուած հայ ժողովուրդը հազարամեակներ շարունակ զարկ է տուել քաղաքակրթութեան զարգացմանը: Դեռեւս ուսումնասիրման ենթակայ են ոչ միայն հայ հին, այլեւ միջնադարեան մշակոյթը:

Հայ պատմագիտութեան կարեւոր բնագաւառ պէտք է դիտարկել նաեւ հայ-վրացական յարաբերութիւնների պատմութեան յետագայ ուսումնասիրութիւնը: Հայ եւ վրացի ժողովուրդները հանգամանքների բերումով յայտնուել են թշնամաբար տրամադրուած թուրքական աշխարհի շրջափակման մէջ: Անժխտելի է, որ ընդդէմ թուրքական նուաճողականութեան հայ-վրացական առանցքն այլընտրանք չունի: Այս առումով կարեւոր է հայ-վրացական համագործակցութեան անցեալի փորձի յետագայ գիտական հետազոտութիւնը:

Չնայած այն հանգամանքին, որ հայ ազգային-ազատագրական շարժումների պատմութիւնը բաւական լայնօրէն ուսումնասիրուել է հայ պատմագրութեան կողմից, այդուհանդերձ ազատագրական շարժման պատճառների, ընթացքի, հետեւանքների, գաղափարախօսութեան, առանձին դրուագների մի շարք հարցեր դեռեւս հիմնաւոր հետազոտութեան կարիք ունեն:

Արդի հայ պատմագիտութեան խնդիր պէտք է դիտարկել նաեւ աւագ սերունդների թողած ժառանգութեան քննական ընկալումը: Մեծագոյն յարգանք դրսեւորելով աւագ սերունդի պատմաբանների հանդէպ՝ պէտք է հաշուի առնել նրանց գործունէութեան ժամանակաշրջանը եւ հարկ եղած դէպքում թէկուզ այդ դիտանկիւնից մօտենալ նրանց հետազոտութիւններին: Այս առումով մեծ ուշադրութիւն պէտք է դարձնել յատկապէս խորհրդահայ պատմագրութեանը: Օրինակ, ԽՍՀՄում անհատի պաշտամունքի տարիներին ստեղծուել են գրքեր, որոնք շարադրուել են փաստերի խեղաթիւրմամբ կամ թիւր մեկնաբանմամբ: Բացի այդ արգելուել էր որոշ թեմաների ուսումնասիրութիւնը: Միաժամանակ անհրաժեշտ է նաեւ տարբեր սերունդների պատմաբանների գիտական ժառանգութեան յաջորդական կապի ստեղծումը: Այս տեսակէտից կարեւոր է պատմագիտական տարբեր հայեցակարգերի եւ դպրոցների ուսումնասիրութիւնը, որոնք որեւէ ժամանակաշրջանում տիրապետող են եղել կամ ազդեցութիւն են ունեցել հայոց պատմութեան ուսումնասիրութեան ասպարէզում:

Հայ պատմագրութեան արդիական հիմնահարցերից է Հայոց Յեղասպանութեան ուսումնասիրութիւնը նոր մակարդակի հասցնելը: Չնայած այն հանգամանքին, որ հայ ժողովրդի ապրած ողբերգութեան փաստը որեւէ կասկած չի յարուցում, անհրաժեշտ է դրա պատճառների, ընթացքի եւ յատկապէս հետեւանքների յետագայ խորքային ուսումնասիրութիւնը: Պէտք է շարունակուեն այլ ժողովուրդների նմանատիպ ողբերգութիւնների հետ համեմատական ուսումնասիրութիւնները: Հասկանալի է, որ այս խնդիրն ունի ոչ միայն գիտական, այլեւ քաղաքական, հոգեբանական կարեւոր նշանակութիւն:

Հայոց անկախ պետականութեանը սատարելու առումով հայ պատմագիտական միտքը պէտք է շարունակի Առաջին հանրապետութեան պատմութեան խորքային ուսումնասիրութիւնը: Հայաստանի Առաջին հանրապետութեան դասերի ընկալումը եւ մատուցումը մեր պատմագրութեան առաջնահերթութիւններից պէտք է համարել:

Հայ պատմագրության առաջնահերթ խնդիրներից են նաեւ հայոց քաղաքական կողմնորոշման խնդրի ուսումնասիրութիւնը, Խորհրդային Հայաստանի պատմութեան նորովի ուսումնասիրութիւնը, Սփիւռքի պատմութեան ուսումնասիրութիւնը, հայ հասարակական-քաղաքական մտքի պատմութեան ուսումնասիրութիւնը:

Որպէս պատմական գիտութեան ուսմունք պէտք է խրախուսել նաեւ պատմաաշխարհագրական բնոյթի յետագայ հետազօտութիւններն ու պատմական քարտէզագրութեան զարգացումը:

S.P.- Clearly, there are numerous gaps in Armenian historiography; some gaps are quite obvious, others are revealed only as result of extensive archival research. I alluded to the absence of contending perspectives on specific issues in Armenian history. Examples abound and include, for instance, the absence of theoretical, analytical divergences in histories of the Armenian dynasties, contending theories regarding the history of the Armenian language, contending approaches to the modernization of Armenian culture.

Among numerous other gaps include the writing of Armenian history through gender lenses and examinations of socio-cultural issues, history of philosophy of science, and environmental issues, to name a few. In addition to the familiar approaches to Armenian history, studies are needed exploring psychological phenomena, political culture, literary and cultural imagination, and the Armenian national *mentalité*, the Armenian *Weltanschauung*.

Armenian historiography consists of numerous examples of great works which offer examples of the intellectual rigor, art, and skill in writing history. Among local or regional histories of specific cities include, for example, Ashot Melkonyan's *Erzerum* and Claude Mutafian's *Le Royaume arménien de Cilicie*. Other works that have set high standards in Armenian historiography include, for example, Hakob Manandyan's contributions to economic historiography (eg, *The Trade and Cities of Armenia*). Such studies are required in the present historical context—for example, a history of Armenia's relations with the United Nations, with the IMF—a research agenda now facilitated by the availability of documents and scholarly publications in digitalized form.

Գ. հարցում.- Ի՞նչ են հայ պատմագիտութեան արդի գիտական եւ թեքնիք մարտահրաւերները (փոխգործակցութիւն, մեթոտաբանութիւն, լեզու, աղբիւր, նիւթական...).

Գ.Մ.- Արդի հայագիտութիւնը կանգ է արել բազմաթիւ մարտահրաւերների առաջ: Նրանցից առաջինը այն զանգուածային, մեր պատմութեան բոլոր հիմնական թեմաներն ընդգլոյ կեղծարարութիւնն է, որը պետական մակարդակով իրագործում է մեր բոլոր հակառակորդների կողմից: Այդ չարիքին հակազդելու համար հարկաւոր է մտածուած թարգմանական ու քարոզչական աշխատանք: Երեսուն տարի մեր պատմագրութիւնը աշխատել է բացառապէս ներքին շուկայի համար, թէւ արտաքին շուկան, պարզապէս դրսի աշխարհը

ոչ-պակաս կարեւոր են: Մենք բոլորովին ուշադրութիւն չենք դարձրել համացանցին ու միայն վերջերս սկսեցինք նիւթեր եւ ամսագրեր տեղադրել այդտեղ: Այնինչ, համակարգչին վարժ լինելը ոչ միայն հեշտացնում է առօրեան, այլեւ վայրկեանապէս կապեր է ստեղծում Հայաստանից դուրս առկայ մասնագէտների հետ:

Իհարկէ, սա պահանջում է պատմաբաններին տրամադրուած գործիքակազմների էական շատացում եւ նրանց ծրագրերի թարմացում: Ընդհանուր առմամբ, մեզ համար սովորական պէտք է դառնան արտերկրի գիտնականների հետ մշտական շփումը համակարգչի միջոցով, նոյնանման խորհրդատուութիւններ, գիտաժողովներ, համատեղ յօդուածների կամ ժողովածուների հրատարակում, գուցէ ուսանողների, ուսուցիչների կամ զբօսաշրջավարձների հետ հանդիպումներ: Չէի ասի, որ այդ ասպարէզը բոլորովին դատարկ է, բայց անելիքները շատ են:

Համակարգիչների աւելի արդիւնաւէտ կիրառումը վերաբերում է ոչ միայն գիտութեանը: Մեր հակառակորդները պարզունակ, գոեհիկ բայց լարուած կերպով ստեր են տարածում Վիկիպեդիայում, Եոյթիութում, համացանցի այլ համակարգերում: Նշանակում է՝ ԳԱԱ հասարակագիտական իւրաքանչիւր հիմնարկ պէտք է առնուազն երկու աշխատակից յատկացնի՝ Վիկիպեդիայի նիւթերն լրացնելու համար: Ուրեմն պատմաբանները պէտք է պարբերաբար հանդիպեն լրագրողների հետ՝ նրանց տրամադրելով քարոզչական նշանակութեան փաստերն ու դրոյթները:

Իմ ներկայացրած քարոզչական խնդիրը պահանջում է լեզուների իմացութիւն: Լեզուների դրուածքը միշտ լուրջ էր ԳԱԱ աշխատակիցների համար՝ մեծ գիտնական Վիկտոր Համբարձումեանի տարիներից սկսած: Այո, անցեալ տասնամեակների ծանր ժամանակահատուածը լաւ չազդեց գիտութեան վրայ: Այնուամենայնիւ՝ հին լեզուներից մինչեւ արդիականները, այդ հարցը լուրջ ուշադրութիւն է պահանջում:

Նոյնն է վերաբերում աղբիւրներին՝ պեղումներից եւ Հայաստանից դուրս տեղակայուած արխիւներից սկսած: Աշխատելու համար հարկաւոր են միջոցներ՝ գործուղումներ եւ համապատասխան նիւթեր տուն բերելու համար: Այնուամենայնիւ, առաջին հերթին այդ միջոցները հարկաւոր են բարեյաջող սերնդափոխութեան համար: Երիտասարդները չեն կարող կատարել իրենց պարտականութիւններն առանց բաւարար փոխհատուցման: Այսօրուայ աշխատավարձով նրանց անհնարին է ընտանիք կազմել, երեխայ մեծացնել: Բայց աշխատակիցը կամ ասպիրանտը աշխատում է. նա պէտք է գործն անի ամէն օր, առնուազն ութը ժամ: Իդէպ, քանի որ դպիրը նաեւ ուսեալ մարդ էր նշանակում, արդեօ՞ք մեր ասպիրանտները չեն կարող դպիր անուանուել:

Իսկ գիտութիւնը որպէս ողջ տնտեսութեան էական մասը սիրողական չի լինում՝ բարձրակարգ մարզիկի նման պէտք է շարունակ գիրք կարդաս, գիտելիք իւրացնես: Ամբողջ աշխատանքային օրը: Հետեւաբար, գիտութեան առաջին խնդիրն է՝ բարելաւել երիտասարդների կենսամակարդակը: Առանց դրա ոչ մի սերնդափոխութիւն չի լինելու ու մենք պարզապէս վերանալու ենք՝ պատմաբան թէ ֆիզիկոս, իրաւագէտ, տարրաբան թէ կենսաբան:

Վ.Շ.- Գործակցութեան առումով, առաջին հերթին պէտք է մատնանշել համահեղինակութեամբ լոյս տեսնող գիրքերը, որոշ թեմայի մը նուիրուած, կամ գիտաժողովի մը արդիւնք հանդիսացող նիւթերու հրատարակումը: Բայց ասոնք բաւարար չեն, պէտք է աւելի՛ն ընել: Պէտք է մտածել տարբեր հայավայրերու մէջ նոյն նիւթին շուրջ ուսումնասիրութիւններու մասին:

Միս կողմէն, կարեւոր խնդիր սկսած է դառնալ օսմաներէնի չիմացութիւնը: Ասիկա կարեւոր է սկզբնաղբիւրներու ուսումնասիրման համար: Մեծ բացթողում է նաեւ նոր իրագործումներու եւ հրատարակութիւններու անծանօթութիւնը, չիրազեկումը, անոնց հանդէպ անտեղեկակութիւնը: Յստակ է որ հայկական տիեզերքին մէջ բազմաթիւ պատմագիտական եւ ընդհանրապէս հայագիտական ուսումնասիրութիւններ կը կատարուին եւ կը հրատարակուին: Սակայն ուսումնասիրները մասնակիօրէն կ'իմանան ասոնց մասին: Այս առումով ալ հայագիտական ամբիոնները, հայագիտական ընկերակցութիւնները պարտին ուրիշ տարողութեամբ եւ յառաջադրանքներով գործակցիլ: Միս խնդիրը գրախօսականներն են, որոնցմէ գէթ ոմանք չեն ծառայեր գիտական գրախօսականի նպատակին: Յաճախ կը հանդիպինք նաեւ խմբագրման ոչլուրջ մօտեցումներու: Լաւ պիտի ըլլար որ հատորը գրախօսուէր նիւթին քաջահմուտ մասնագէտի մը կողմէ, որ երբեմն ալ դիմէր ուրիշ մասնագէտներու օգնութեան:

Մեթոտաբանութեան առումով հարցը կ'առնչուի մանաւանդ աղբիւրներու եւ նիւթերու առկայութեան եւ համապատասխան օգտագործման: Դժբախտաբար, շատեր կ'օգտագործեն նիւթին վերաբերող առկայ եւ մատչելի ոչ-բոլոր արխիւներ եւ այլ սկզբնաղբիւրներ՝ կամայ թէ իրենցմէ անկախ պատճառներով: Կարեւոր է նիւթը քննարկել առաւելագոյն ելակէտերէ եւ երեսակներէ, ինչո՞ւ չէ նաեւ՝ ժամանակային առումով: Այլապէս ուսումնասիրութիւնը կը դառնայ միակողմանի, կը կորսնցնէ իր համապարփակութիւնը, չ'ունենար բազմակողմանիութիւն եւ համարժէք հաւասարակշռուած դատողութիւն:

Ինչ կը վերաբերի սերնդափոխութեան, ապա պէտք է ըսել, թէ հայ պատմագէտներու նոր սերունդին թիւը քիչ է: Միս կողմէն, կը ցցուի նաեւ նկարագրային գիծ մը, երբ դոկտորական պաշտպանած երիտասարդը յանկարծ ինքզինք կը նկատէ ամենագէտ եւ միակողմանի քննադատութեան թիրախ կը դարձնէ այս կամ այն: Գիտական քննադատութիւնը էական է, բայց ատիկա չի նշանակեր միայն բացասական կողմերը ներկայացնել ուսումնասիրութեան. անհրաժեշտ է մատնանշել ուսումնասիրութեան դրական կողմերը եւս:

Խ.Ս.- Նախ ընդունենք, որ ընդհանրապէս մարդասիրական գիտութիւնը եւ մասնաւորապէս պատմագիտութիւնը ամբողջ աշխարհում լաւ վիճակում չեն գտնուում, բայց հայ պատմագիտութեան պարագայում մարտահրաւերներն աւելի ընդգրկուն են ու խորքային:

Ասել, թէ՛ միջազգային համագործակցութեան առումով ոչինչ չի արում, սխալ կը լինի: Յատկապէս որոշ բնագաւառներում՝ հնագիտութիւն, ցեղասպանութիւնների պատմութիւն, մշակոյթի պատմութիւն, բաւական լայն ծաւալի համագործակցութիւն կայ արտասահմանեան պատմաբանների հետ: Այլ բնագաւառներում նոյնպէս որոշակի մակարդակ կայ: Բայց հաշուի առնելով

արդի մարտահրավերներն ու վերելում սահմանած առաքելությունը, մենք ուղղակի միջազգային համագործակցությունը որպես գերակայ նպատակներից մէկը սահմանելու պարտաւորութիւն ունենք:

Թող ինձ ներեն իմ հայաստանցի գործընկերները, բայց ցաւօք, բացառութեամբ միքանի դէպքերի, Հայաստանում պատմագրութեան մեթոդաբանութեանը պատշաճ մօտեցում չի ցուցաբերում: Սա առաւել ակնյայտ է դառնում երբ մենք վերցնում ենք թէկուզ խորհրդահայ պատմագրութեան մէջ ունեցած մեր փորձը: Համաշխարհային պատմագիտական միտքը մեթոդաբանութեան ասպարէզում նորանոր ձեռքբերումներ է արձանագրում, իսկ մենք այս ոլորտում, ցաւօք, կաղում ենք: Միգուցէ դա պայմանաւորուած է նաեւ հայ պատմագիտական հանրոյթի փոքրաթիւ լինելու հանգամանքով, երբ փորձում ենք համեմատուել ուժեղների եւ մեծերի հետ, բայց ամէն դէպքում, մենք անլիին ենք ունակ:

Աղբիւրների մասով պէտք է նշել, որ հարուստ հիմք ունենք: Միայն հայկական ձեռագրերը, արդէն լուրջ աղբիւր են: Հայաստանի հնավայրերում իրականացուող պեղումների արդիւնքում յայտնաբերած եւ յայտնաբերուող հնագիտական նիւթերը նոյնպէս լուրջ աղբիւր են հանդիսանում մեր պատմագիտութեան զարգացման համար: Հայկական արխիւներում (Հայաստանի ազգային արխիւ, ՀՅԴ պատմութեան կենտրոնական արխիւ եւն.), արտասահմանեան պետական եւ մասնաւոր արխիւներում ահռելի նիւթ կայ դեռ չուսումնասիրուած: Աղբիւրագիտական հարուստ հիմք է հանդիսանում մեր մամուլը, որի չնչին մասն է միայն ուսումնասիրուել եւ օգտագործուել:

Մենք պէտք է մինչ այժմ անյայտ աղբիւրների գիտական շրջանառութեան մէջ դնելու գործընթացը նոր մակարդակի հասցնենք:

Ցաւօք սրտի բաւարար չէ պետական հովանաւորութիւնը: Ճիշտ է պետական ծրագրերով որոշ թեմաների ուսումնասիրութիւն հովանաւորում է, արտասահմանում կան հայագիտական հետազօտութիւններին աջակցող հիմնադրամներ, որոշ արտասահմանեան համալսարաններ նոյնպէս հայագիտութեան ճիւղերի խնդիրներով են հետաքրքրուած: Սակայն այսօր պատմագիտութեան ոչ-հրապուրիչ լինելու հանգամանքը, ինչպէս նաեւ հարեանների կողմից հայոց պատմութեան դէմ իրականացուող արշաւը մեզ ստիպում են, որ նիւթական լուրջ միջոցներ ներդնենք մեր պատմութեան ուսումնասիրութեան եւ միջազգային հարթակներում մատուցելու վրայ: Անհրաժեշտ են թէ՛ նոր ուսումնասիրութիւններ, եւ թէ՛ օտար լեզուներով հրապարակումներ:

Մտահոգիչ է սերնդափոխութեան խնդիրը: Պատմագիտութիւնը ոչ-հրապուրիչ է դարձել երիտասարդութեան համար: Արհեստագիտական զարգացումները այլ հետաքրքրութիւններ են առաջ բերում երիտասարդների մօտ: Այս առումով տուժողը յատկապէս հայագիտութեան ոլորտն է, հայ պատմագիտութիւնը, բանասիրութիւնը: Հայ պատմագիտութեան մէջ ունենք բնագաւառներ, օրինակ միջնադարագիտութիւնը, որտեղ սերնդափոխութեան հարցն անլի սուր է դրուած:

S.P.- The current situation in Armenian historiography is confronted with a number of challenges.

Methodologically speaking, traditionally the prevailing mode of analysis in Armenian historiography has been the chronological, unilinear progression in Armenian history. While such approaches are necessary, there is a great need for scholarship considering long-term (*longue durée*) historical structures and recurring patterns in Armenian history for better understanding of political leadership, economic history, political movements, the changing character of state-church relations, and so forth.

Language and access appear to represent the most difficult cases. Language, for instance, is a fundamental problem and presents a particular challenge in preparing the next generation of historians, as demonstrated by applicants to graduate studies who wish to specialize in Armenian history but are not fluent in the Armenian language.

With respect to cooperation, the specific nature of that cooperation matters a great deal. Cooperation appears in different forms—scholar-to-scholar, scholar-to-institution, institution-to-institution. In general, I do not consider cooperation an essential ingredient in the development of historiography. On the contrary, a rigidly circumscribed cooperation can easily morph into control in matters of methodology and ideology and generate hegemonic narratives.

Historically, one of the fundamental problems in Armenian historiography has been the intertwined nature of history and mythology (or “mytho-history”). As I have argued elsewhere, it is necessary to separate history from mythology. Perhaps we can accept the fact that writing history is not an objective endeavor, and achieving *That Noble Dream* (to refer to Peter Novick’s important book) is an impossible task. Nevertheless, writing history must be a rational undertaking exploring and explicating concrete facts in their historical contexts. In his book, *Historians’ Fallacies*, David Hackett Fischer discusses issues related to inquiry, explanation, and argument, and encourages historians to pay close attention to several fallacies, such as “fallacies of question-framing,” “fallacies of narration,” and “fallacies of substantive distraction.” Blurring the boundaries between mythology and actual history results in such fallacies.

An essential point regarding the political leadership-mythologies nexus is the recent case of the loss of Nagorno-Karabagh (Artsakh): National understanding of political and geopolitical realities in nationalistic mythological terms and in nationalistic rhetorical platitudes and over-simplifications does not provide a nation with the necessary instruments for national security. A powerful military, not nationalistic mythologies, defend national security—a political reality Armenians should have learned given their long national history.

Դ. հարցում.- Ո՞ր է հայ պատմագիտությունը միջազգային պատմագիտության քարտեզին վրայ:

Գ.Մ.- Այդ ճշմարտությունից ելնելով փաստենք՝ երեսունհինգ տարի առաջ Հայաստանի պատմագիտությունը համար առաջինն էր հայագիտության ասպարեզում: Այսօր նոյնը չենք ասի: Հայագիտության ոլորտում անզամ հարկատր

է ամրապնդել մեր համբաւը ԱՄՆ, Իտալիայի կամ Ֆրանսայի մասնագետների կողքին: Հայագիտական ամսագրերը բացակայում են ՍԿՕՊՈՒՍԻ ցուցակում, մեր անունները քիչ են հնչում միջազգային գիտաժողովների ժամանակ: Այնպէս որ անելիքները շատ են եւ առաւել ուժեղ գործիքն են՝ կադրային ճիշտ քաղաքականութիւնը, հետազօտման թեմաների մտածուած բաշխումը, լեզուների եւ աղբիւրների որակեալ տիրապետումը, հաշուիչ մեքենաների աւելի լայն կիրառումն ու Հայաստանի, Սփիւռքի եւ օտար մասնագետների միջազգային լայն համագործակցութիւնը: Այլ ճանապարհ չի նշմարում:

Վ.Շ.- Մինչեւ գրեթէ շուրջ կէս դար առաջ հայ պատմագիտութիւնը գրեթէ գոյութիւն չունէր միջազգային պատմագիտական հարթակին վրայ: Հայոց Յեղասպանութեան ուսումնասիրութեանց միջոցով կարելի եղաւ մուտք գործել միջազգային պատմագիտութիւն: Ներկայիս, հայ պատմագրութեան նուիրուած գիտաժողովները ընդհանրապէս բազմազգեան են, որ շատ քաջալերելի է: Այս մերձեցումին զարգացումը մեզմէ կախեալ է՝ թէ ինչ համեմատութեամբ եւ ինչ ուղղութեամբ կը յառաջնղենք: Իսկ հայ պատմաբաններ օտար՝ պատմագրութեան մէջ, նուազ ծանօթ են քան միջազգային քաղաքագիտութեան բնագաւառին մէջ եղող հայ գիտնականները: Հարցը զանոնք հայ իրականութեան առնչելն է, մանաւանդ՝ հայ պատմագրութեան առնչուող նիւթերուն առնչելը, որուն պարագային մեծապէս կը շահի հայ պատմագրութիւնը եւ քիչ մը աւելի բազմաուսմունքային կը դառնայ: Մանաւանդ կը նուազի հայ պատմագրական ուսումնասիրութիւններու մէջ առկայ գիտականօրէն հիմնաւորուած քաղաքական տեսակէտի եւ ելակէտի բացթողումը: Նման վիճակ մը առաւել հետաքրքրական կրնայ դարձնել հայ պատմագրութիւնը եւ աւելցնել անով հետաքրքրողներուն եւ զայն կարդացողներուն թիւը: Ասիկա կ'օգնէ նաեւ հայ մտադրոյթին մէջ գիտական-քաղաքական երեսակին աճումին ու զարգացման:

Խ.Ս.- Հայ պատմագիտութիւնը միջազգային պատմագիտական քարտէզում իր տեղը պիտի ունենայ: Որոշ ճիւղերում, օրինակ, հնագիտութիւն, ցեղասպանութեան պատմութիւն, մշակոյթի պատմութիւն, աղբիւրագիտութիւն, օսմանագիտութիւն, բիւզանդագիտութիւն, կովկասագիտութիւն մենք գնահատելի ներկայութիւն ունենք համաշխարհային պատմագիտական քարտէզի վրայ: Սակայն դա քիչ է: Համաշխարհային պատմագիտական միտքը, օրինակ, պարբերաբար ուսումնասիրում է պատմագիտական հայեցակարգերի փոփոխման օրինաչափութիւնները, վերլուծում է պատմական գիտութեան մէջ գոյութիւն ունեցող տարբեր ուղղութիւնների տեսական եւ մեթոդաբանական սկզբունքները: Մենք այստեղ էլ պէտք է լինենք: Պատմագիտութեան այլ բնագաւառներում եւս, օրինակ խորհրդային պատմութիւն, մեր ասելիքն ու տեղն անպայման պիտի ունենանք:

S.P.- Armenian historiography lacks a significant representation on the “international map” at this point in history, perhaps with the exception of Armenian genocide studies, which unfortunately has become highly politicized.

ISSUES RELATED TO THE FIELD, CHARACTERISTICS, MISSION, AGENDA, GAPS,
AND CHALLENGES OF ARMENIAN HISTORIOGRAPHY AND ITS
PLACE ON THE MAP OF INTERNATIONAL HISTORIOGRAPHY
(SUMMARY)

In an attempt to better formulate the field of Armenian Historiography and related issues four Armenian historiographers were asked to answer the following questions: a) What are the mission and objectives of Armenian historiography? B) What are the i) main areas, ii) characteristics, iii) gaps of Armenian historiography? C) What are the main technological and scientific challenges of modern Armenian historiography (cooperation, methodology, language, sources, funding, generational gap...), d) Where does Armenian historiography stand on the international map of historiography?

This paper is a compilation of the answers given by Drs. Kayane Makhmourian, Simon Payaslian, Vahram Shemmassian and Khachadur Stepanian.

This is the third series of questions being published in every second book of the *Haigazian Armenological Review*. The questions of the previous years revolved around issues related to Eastern and Western Armenian language, as well as issues related to Armenian Studies.

ՅՕԴՈՒԱԾ-ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՑԼԻ ԵՒ ՕԶԱՎԻՇԱՊԻ ԱՍՏՂԱՅԻՆ-ԵՂԱՆԱԿԱՅԻՆ ԿՈԴԵՐԸ ՀԻՆ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԱՅԵԱՑՔՈՒՄ՝

ԳԱԳԻԿ ՄԱՐՏՈՅԵԱՆ
martoyangagik474@gmail.co



Լոռիփամբակեան տիպի հայկական գորգի ոտմբը, Եղեգնածորի վիշապի թագակիր ցուլը եւ Վանքի լճի փորագրապատկերը

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

ԺԹ. դարի Լոռիփամբակեան տիպի հայկական մի գորգի զարդանախշերում ծայրերը հատած սպիտակ շեղանկին քառանկյունու ուշագրաւ մանրամասնը զարմացնում է նորագոյն ժամանակներում Եղեգնածորից յայտնաբերուած թագակիր ցլի պատկերով վիշապաքարի եւ Թոխմախան վանքի լճի յայտնի վիշապաքարի փորագրապատկերների հետ իր բացառիկ նոյնութեամբ: Պատկերուած է միեւնոյն թագակիր ցլի գլուխը: Յուլը դիմահայեաց զոյգ թռչունների ֆոնին է՝ նման Թոխմախան վանքի լճի վիշապաքարի թռչուններին, որոնք նոյնպէս դիմահայեաց են: Տարբե-

¹ Հայ բանագիտութեան մէջ Յլին եւ Վիշապին վերաբերող առասպելաբանական պատկերացումների մասին բազմաթիւ ուշագրաւ անդրադարձեր են կատարուել: Յօդուածը չձանրաբեռնելու համար նպատակայարմար չենք համարում բոլոր տեսակէտերը քննել առանձին: Այստեղ մեր խնդիրը առասպելական այդ 2 արարածներին աստղային երկնքում որոնելն է, ինչի վերաբերեալ հայ բանագիտութեան մէջ մեզ որեւէ ուսումնասիրութիւն յայտնի չէ:

րուփինն այն է, որ վիշապաքարերի ցուլերի բերանից ջուր է յորդում, իսկ գորգի ցուլի բերանից՝ ոչ, ինչպես նաեւ թռչունները Թոխամախան վանքի լճի վիշապաքարի վրայ կռունկ կամ արագիլ են յիշեցնում, իսկ գորգի վրայ ոճաւորուած են:

Համարում է, որ Եղէգնաձորի վիշապը, որը քաղաքային այգի է տեղափոխուել, Սարուխանից յայտնաբերուած վիշապի հետ միասին նախապէս նոյն տարածքում է գտնուել²: Հայ-իտալական արշաւախմբի 1994-2011ի գործունէութեան ընթացքում Սարուխան գիւղում յայտնաբերած վիշապաքարի ցլի գլխի 3 ելուստով պարզորոշ թագը հաստատում է, որ Եղէգնաձորի վիշապի գլխին նոյնպէս թագ է պատկերուած:

Լօռիփամբակեան գորգի սպիտակ շեղ քառանկիւնի թագակիր ցլի երկու կողմերում եւս ցլեր կան, բայց այնպէս, որ եռանկիւնաձեւ մռուփը երկու ցլի համար էլ ընդհանուր է: Մի ցուլն ուղիղ դիրքով է, միւսը՝ գլխիվայր շրջուած: Տպաւորութիւն է ստեղծում, որ նոյն ցուլը շրջանաձեւ պտոյտի մէջ է գտնուում: Այդպիսի նոյնական եւս 2 ցուլ սպիտակ շեղ քառանկիւնու ներքեւի հատուածում են: Բոլոր 4 ցուլերն էլ անթագ են: Վերեւի պտտուող 2 ցուլերի ներքեւում 4 վիշապ կայ³:

Մէկ այլ՝ դարձեալ արտերկրեայ մասնաւոր հաւաքածուներում պահուող «Խնձորեսկ» տիպաբանական խմբին պատկանող, նոյնպէս ԺԹ. դարի



Սարուխանի վիշապի գլխի թագը

² Սիմոն Հմայակեան, Հայկ Յակոբեան, Նորայր Հազէեան, Մարինէ Մելքոնեան, «Սարուխանի 'վիշապը'», *Վիշապ քարակոթողները*, «Գիտութիւն» հրատ. երեւան, 2015, էջ 219-21:

³ Վիշապաքարերի մասին առաջին ուսումնասիրութիւններն Ատրպետի, Նիկողայոս Մառի եւ Եակով Սմիռնովի, Աշխարհաբէկ Քալանթարի ձեռամբ Ի. դարի առաջին կէտում են ասպարէզ իջել, այդ պատճառով գրեթէ բացառում է, որ ԺԹ. դարի լօռիփամբակեան գորգի զարդանախշային յօրինուածքի հեղինակը կարող էր ազդուած լինել իր տեսած վիշապաքարերի պատկերագրութիւնից: Մանաւանդ որ վիշապաքարի թագակիր ցլի պատկերը բոլորովին վերջերս է յայտնի դարձել: Առաւել հաւանական է, որ գորգի պատկերային խորհրդաբանութիւնը ժողովրդական յիշողութեան արգասիք է:



«Խնձորեսկ» տիպաբանական
խմբի վիշապագորգը

վիշապագորգի վրայ պատկերուած են 3 ռոմբեր⁴, որոնց մէջ մուգ եւ բաց գոյնի ութական վիշապներ կան, իսկ իւրաքանչիւրի կենտրոնի սեղան երկրաչափական պատկերների մէջ վիշապները կարծես պտտուող կեն- խաչ են ձեւաւորում: Ռոմբերի մէջ, վերին հատուածներում հորիզոնա- կան շարուած վեցական աստղ է պատկերուած, ինչն ուղղակիօրէն յու- շում է, որ յօրինուածքը աստղային երկնքի հետ կապուած ինչ-ինչ իրո- ղութիւններ է մատնանշում: Շեղ քա- ռանկիւնիները 3 գոյն ունեն՝ կանաչ, կարմիր եւ սպիտակ, որոնք տար- ռան 3 եղանակներն են խորհրդան- շում՝ կանաչը որպէս գարնան գոյն, կարմիրը՝ հասուն այգիներով ամ- ռան, իսկ սպիտակը՝ ձիւնածերմակ ձմռան⁵:

ՎԻՇԱՊԸ (ՕՁԸ) ԵՒ ՑՈՒԼՆ ԱՍՏՂԱՅԻՆ ԵՐԿՆՔՈՒՄ

Յայտնի է, որ աստղային երկնքում Ցուլը Կենդանաշրջանի գօտու մէջ մտնող համաստեղութիւն է եւ իր տարեկան օրինաչափ «պտոյտով», ծա- գումով եւ խոնարհումով (առասպելաբանաստեղծական մտածողութեամբ՝ «ծնունդով» եւ «մահուամբ») եղանակային-օրացուցային նշանացոյց է ծա-

⁴ Ընդունուած է ասել խորաններ՝ ի նմանութիւն հայ միջնադարեան ձեռագրերի մանրանկարների խորանների:

⁵ Տարին 3 եղանակների բաժանելու ամանդոյթը դեռեւս Հին Միջագետքից է յայտ- նի: Ենթադրաբար Ք. ա. 1000ին կազմուած բաբելոնեան MUL. APIN (Գութանի աստղ) շարադրանքում աստղային երկինքը բաժանուած է Էա, Անու եւ Էնիլ աստ- ռուածների միջեւ, որոնք վերահսկում են տարուայ ցուրտ եւ տաք եղանակները (Յ. Յան – Դեր – Յարժեն, *Пробуждающаяся наука II. Рождение астрономии* (Արթնա- ցող գիտութիւն II. Աստղագիտութեան ծնունդը), «Գիտութիւն» հրատ., Մոսկուա 1991, էջ 90-91): Մեր պատմիչներից Թովմա Արծրունին Թ.-Շ. դարերում տարին 2 եղանակի՝ ձմռան եւ ամռան բաժանելով, նշում էր, որ դրան կարող է աւելանալ գարունը (Թովմա Արծրունի եւ Անանուն, *Պատմութիւն Կասկա Արծրունեաց*, «Մա- գադաթ» հրատ., Երեւան, 2006, էջ III, Ը, Թ), այսինքն՝ աշունը միացած էր հա- մարում ձմռանը:

ռայել հազարամեակներ շարունակ: Մօտաւորապէս⁶ Ք.ա. 4300-2150ին համապատասխանել է գարնան առաջին ամսին, իսկ մօտաւորապէս Ք.ա. 2150-Ք.ե. 10ին գարնան երկրորդ ամսին է եղել: Մեր ժամանակներում Յուլն Ապրիլի եւ Մայիսի միջեւ ընկած համաստեղութիւն է:

Նոյն օրացուցային նշանակութիւնը հնարաւոր չէ վերագրել Վիշապ համաստեղութեանը, քանի որ բեւեռին մօտ է, ուստի, ո՛չ ծագում է, ո՛չ էլ՝ խոնարհում, այլ մշտապէս պտտում է հորիզոնում: Նրա փոխարէն քննարկման ենթակայ ամենահաւանական համաստեղութիւնը Յուլից 180 աղեղնային աստիճան հեռաւորութեան վրայ, հորիզոնում Յուլի ուղիղ դէմ դիմաց գտնուող ներկայի Օձակրի Օձն է⁷, որը թէւեւ Կենդանաշրջանի գօտում ներառուած համաստեղութիւն չէ, բայց Արեւը նրա միջով անցնում է աշնանը, երբ պէտք է Կենդանաշրջանում Օձի հարեան Կարիճ համաստեղութիւնով էլ անցնի:

Անկախ աստղային երկնքում Օձի՝ Միջազգային աստղագիտական ընկերութեան 1919ին հաստատած ներկայի պայմանական տարածքից, այս համաստեղութեան մասին տեղեակ է եղել դեռեւս Ք. դարի ուշ հելլենիստական աստղագէտ Կլաւդիոս Պտղոմէոսը, որն իր համաստեղութիւնների քարտարանում նրա միայն գլխի աստղերն է թուարկել⁸: Նրանից մէկ դար առաջ Օձ համաստեղութիւնը յիշատակում է նաեւ հռոմէացի բանաստեղծ Պուբլիոս Վերգիլիոս Մարօն իր *Մշակականք*ում: Գարի ցանելու ժամանակահատուածի մասին խօսելիս, նա հողագործին զգուշացնում էր որ եթէ չհետեւի, թէ ինչպէս է «*Կշէոքը հաւասարապէս կիսում լոյսն ու մութը*⁹, ինչպէս են Արկտուրը, Այծերը եւ **պայծառ Օձը** ծագում, ապա նրա ճիգերը թիավարի ջանքերին կը նմանուեն, որն իր մակոյկն ալիքների դէմ է փա-


⁶ Շեշտում ենք՝ մօտաւորապէս, քանի որ հաշուարկը կարող է միքանի տարուայ սխալ թոյլատրել, բայց ոչ հարիւրամեակների: Անշուշտ, ոչ ոք չգիտէ, թէ 6000 կամ 4000 տարի առաջ Կենդանաշրջանի գօտում ինչ սահմաններ են ունեցել Յուլ կամ Խոյ համաստեղութիւնները, բայց հաստատապէս յայտնի է, որ 12 համաստեղութիւնից իւրաքանչիւրին 30 աղեղնային աստիճանի տիրոյթ է յատկացուած եղել: Յայտնի է նաեւ այն, որ գարնանային օրահաւասարի կէտը մօտաւորապէս 2160 տարի է մնում Կենդանաշրջանի տուեալ համաստեղութիւնում: Եթէ համարում է, որ գարնանային օրահաւասարի կէտը մօտաւորապէս 2200 թուականին է Ձկներ համաստեղութիւնից Ջրիոս համաստեղութիւն տեղափոխուելու, ուրեմն յետհաշուարկով վերոբերեալ մօտաւոր թուականներն են ստացում:

⁷ Ժէ. դարի լեռ աստղագետ Եան Հեւելիոսի աստղային երկնքի քարտեզում երկար պոչով Օձին պատկերուած ենք տեսնում Օձակրի ձեռքերում սեղմուած: Օձակիրն Օձ համաստեղութեանը 2 մասի է բաժանել:

⁸ Клавдий Птоломей, *Альмагест или математическое сочинение в тринадцати книгах* (Ալմագեստ կամ ուսողական շարադրանք տասներեք գրքերում), «Գիտութիւն» հրատ., Մոսկուա, 1998, գիրք VII, էջ 5):

⁹ Այսինքն՝ աշնանային օրահաւասարի ժամանակ:

նում»¹⁰: Հռոմի միտրայական սրբարանների շատ յայտնի տարրքտոնեան (ցլասպանական) հարթաքանդակային տեսարաններում, որոնք Արեւ Միտրայի ուրին են ներկայացնում Կենդանաշրջանի համաստեղութիւններով, Օձ համաստեղութիւնը մշտապէս Կարիճ համաստեղութեան սերտ հարեանութեամբ է պատկերում: Կենդանաշրջանի գոտու 1653ին հրապարակուած մի բոլորակ քարտէզում, որն աստղագիտութեան պատմաբան Ալեքսանդր Սապլինն է մէջբերում իր աստղաբաշխական հանրագիտարանում՝ Աթանասիոս Կիրչէրի *Oedipus Aegyptiacus* գրքին յղում անելով, պատկերուած է Կարիճ աստուածը, որի երկու ոտքերը վիշապի գալարոտղ պոչեր են: Մակագրուած է Scorpius (Կարիճ) եւ միեւնոյն ժամանակ Tiphon¹¹ (Վիշապ յունական դիցաբանութեան մէջ): Սրանով աստղաբաշխները հնում



Կենդանաշրջանի գոտու 1653ին հրապարակուած բոլորակ քարտէզը

ցոյց են տուել, որ Արեւը թէ՛ Օձ, թէ՛ Կարիճ նոյնաբնոյթ համաստեղութիւններով էլ անցնում է: ԺԹ. դարի ամերիկացի հետազոտող Ռիչարդ Հինքլի Ալէնը Օձի, որպէս առանձին համաստեղութեան գոյութիւնը մինչեւ միջագետքեան աստղաբաշխների ժամանակներ է հասցնում, ասելով, թէ «Եփրատեան աստղագետները» Կարիճ համաստեղութեան վրայ կանգնած Օձակրին կամ նրա մի մասին (Օձին - Գ.Մ.) Nutsir - da անունով էին ճանաչում¹²:

Ըստ ազգագրագէտ Արմէն Սարգսեանի գրառած դաշտային նիւթերի, մինչեւ նորագոյն ժամանակներ պատկերացուել է, որ առասպելական վիշապը մեռնող արարած է, բայց մեռնելուց յետոյ էլ կարող է պիտանի լինել մարդկանց: Նա պատմում է, որ Լօռու մարզի Շամուտ գիւղից մօտ 25 քմ. հեռաւորութեան վրայ «Անհատի բինա» կոչուող սարուորների մի ամառանոցում 1,5-2 մ. երկարութեամբ քարեր են պառկած: Դրանց տեղացիները «Ուշաբի գոռեր», այսինքն՝ Վիշապի գերեզմանոցներ են անուանում: Երաշտի ժամանակ մեծահասակ սարուորները երեխաներին ասում են.

¹⁰ Публий Вергилий, Буколики. Георгики. Энеида, (Հովուականք, Մշակականք, Էնէական), «Գեղարուեստական գրականութիւն» հրատ., Մոսկուա, 1979, հտր. I, էջ 175-210):

¹¹ А. Ю. Саплин, *Астрологический энциклопедический словарь*, (Աստղաբաշխական հանրագիտարանային բառարան), «Օլմա Պրէս» հրատ., Մոսկուա, 2001, էջ 209:

¹² Richard Hincley Allen, *Star-names and their meanings*, New York, Leipzig, London, Paris, 1899, էջ 299:

«Ուշաբը ջրի գլխին նստած՝ ջուրը կտրել ա. ջուր չկայ»: Այնուհետև պատուիրում են կտրով ջուր տանել, լցնել վիշապ քարերի վրայ բացուած շրջանածու փոսերի մէջ, որ անձրեւ գայ¹³:

Օձը (լայն իմաստով՝ վիշապն) ուրեմն անձրեւաբեր, ջրաբեր առասպելական էակ է ընկալուել: Երբ Ք.ա. շուրջ 2150-Ք.ե. 10ին Արեւն աշնանը Կշէոք համաստեղութիւնից ելնելով, Կարիճ եւ Օձ է մտել, Օձը մէկ ամսուայ (Կենդանաշրջանի 30 աղեղնային աստիճանի չափը) ընթացքում աստիճանաբար հորիզոնից ցած է իջել՝ գետնի տակ՝ հորիզոնից ներքեւ անհետանալով: Դրա փոխարէն ծագել են հորիզոնի հակառակ կողմում գտնուող Յուլի աստղերը: Նոյն ժամանակամիջոցում երկրային օձերն էլ, ցրտերը սկսուելու հետ, գետնի տակի իրենց բներն են քաշում: Գարնանը միանգամայն հակառակ իրողութեանն են ականատես եղել. Արեւը Խոյից դուրս գալով, մտել է Յուլ, որը մէկ ամսուայ ընթացքում աստիճանաբար հորիզոնից ցած է իջել, իսկ նրա փոխարէն Օձն է բարձրացել: Նոյն ժամանակ երկրային օձերը դուրս են գալիս գետնի տակից: Թուացել է, թէ Օձն ու Յուլն անհաշտ թշնամանքի մէջ են. մէկի «ծնունդը» միւսի «մահով» է պայմանաւորուած, մէկն աշխարհ է եկել միւսի տեղը զբաղեցնելու, նրանից տարածք նուաճելու հաշուին: Հարիւրութուն աղեղնային աստիճանի ներքոյ մէկ Յուլն է սպանել Օձին, մէկ էլ Օձն է սպանել Յիւն:

Այս թշնամանքը դարերի խորքից եկող աստղաբաշխական ընկալման արդիւնք է: Հին աստղաբաշխները Կենդանաշրջանում 180 աղեղնային աստիճանի ներքոյ գտնուող համաստեղութիւնների մէկը միւսի նկատմամբ դիրքաւորուածութիւնը «երկնային կերպ (*ասպեկտ*)» կամ «ընդդիմութիւն» էին անուանում¹⁴: Հայոց Էֆիմերտէն¹⁵ դա կոչում է «լրումն» եւ Յուլի ու նրա դէմ դիմաց 180 աղեղնային աստիճանի ներքոյ գտնուող Կարիճի (աստղային երկնքում Օձի մերձաւոր հարեւանի) մասին ասում է, թէ մէկը միւսին «հակադիր հայեցուածով» է նայում¹⁶: ԺԳ. դարի մատենագիր Յովհաննէս Երզնկացին նոյնպէս հորիզոնի հակառակ ծայրերի երկու կենդանակերպերի դիրքը միմեանց նկատմամբ «բացասական» է կոչել. (*«Յորժամ վեցիւք կենդանակօքն են հեռաստան, // Հարիւր ութսուն աստիճանօք են բացա-*

¹³ Արմէն Սարգսեան, «Վիշապը հայոց բառ ու բանում» *Վիշապը հեքիաթի եւ իրականութեան սահմանին*, Հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտի հրատ., Երեւան, 2019, էջ 251-52:

¹⁴ Секст Эмпирик, “Против астрологов”, *Сочинения т. II* («Ընդդէմ աստղաբաշխների», *Երկեր, հղր. Ք*), «Մխոք» հրատ., Մոսկուա, 1976, էջ 176. նաեւ՝ Б. Ван – дер – Варден, էջ 311:

¹⁵ Յունարէն «Էֆեմերիս»՝ ամէնօրեայ բառից: Աստղաբաշխութեան մէջ գործածուել է «Երկնային լուսատուների ամէնօրեայ դիտարկումներ» իմաստով:

¹⁶ *Գրգուկ, որ կոչի էֆիմերտէ*, «Ապոլոն» հրատ., Երեւան, 1992, էջ 7-8:

սական»)»¹⁷: Ե. դարի մատենագիր Եզնիկ Կողբացին եւ քննադատում էր իր ժամանակակիցների մէջ դեռեւս պահպանուած հեթանոսական հաւատալիքն առ այն, թէ վիշապին եզներով են հանում (բարձրացնում)¹⁸: Այսինքն՝ դա ընկալուել է այնպէս, որ Յուլն աստղային երկնքում իջնում-խոնարհուում է, եւ դրա շնորհիւ Օձն է բարձրանում: Նոյն աստղային երեւոյթը Վանի Մալկարա գիւղում մի հաւատալիքի ձեւով վերապրել էր մինչեւ նորագոյն ժամանակներ. հաւատում էին, թէ վիշապը գոմէշից է ծնում¹⁹: Այսինքն՝ Յուլի «մահուանը»՝ հորիզոնից ներքեւ իջնելուն յաջորդում է Օձի աստղերի ծագումը: Մէկը միսին հակադիր են մահով եւ ծնունդով: Միայն այս տեսանկիւնից կարելի է բացատրել օրփէոսեան²⁰ փիլիսոփաների այն առեղծուածային բանաձեւը, որը ամերիկացի հետազօտող Հարոլդ Վիլլոբին մէջբերում է Բ. դարի եկեղեցական մատենագիր Կղեմէս Աղեքսանդրացուց՝ «Յուլն օձ է ծնում, օձը՝ ցուլ»²¹:

Օձի (Վիշապի) եւ Յլի առասպելական թշնամանքի մէկ դրուագը, երբ այսպէս կոչուած Ամպրոպի աստուածը (Յլի խորհրդանիշ կրողը) յաղթում է օձ-վիշապին, հանգամանալից ուսումնասիրել են Վիաչեսլաւ Իւանովը եւ Վլադիմիր Տոպորովը՝ բալթասլաւոնական հեքիաթները, հմայախօսութիւնները եւ բիլինային դիւցազնավէպը բանագիտական եւ լեզուաբանական համակողմանի քննութեան ենթարկելով: Նրանք պարզել են, որ բալթասլաւոնական ծիսաառասպելական ասանդոյթում կենտրոնական մտտի է Օձ-Վելէսի եւ Ամպրոպի աստուած Պերուն-Պերկունասի հակամարտութիւնը: Վերակազմուած առասպելը, որին հեղինակները «Հիմնական առասպել» անունն են տալիս, նկարագրում է, թէ ինչպէս վերելում՝ լեռան վրայ, Կենաց ծառի գագաթին գտնուող Ամպրոպի աստուածը շանթահարում է լեռան ստորոտում, Կենաց ծառի արմատների մօտ գտնուող Օձին՝ այն բանից յետոյ, երբ վերջինս առեւանգում է ընտանի անասուններին: Պարտուած Օձն անհետանում է ծառի արմատների մէջ՝ ստորերկրեայ ջրերում: Օձի պարտութեանը յաջորդում է պտղաբերութեանը նպաստող անձրեւը²²:

¹⁷ *Յօհաննիսի Երզնկացոյ տեղորակ համառօտ եւ լի իմաստախոս բանիւք*, Նախիջեան 1792, էջ 33-34: Վեցը Կենդանաշրջանի 6 համաստեղութիւններն են, որոնք փոփոխաբար երեւում են աստղային երկնքի տարեկան «պտոյտի» ժամանակ:

¹⁸ Եզնկայ Կողբացոյ Բագրեանդայ եպիսկոպոսի *Եղձ աղանդոց*, Վենետիկ, Ս. Ղազար 1826, էջ 1, ԻԵ:

¹⁹ Վ. Խօշիկեան, *Մալկարայի հայ գաղութը*, տպ. «Փարոս», Փլովտիւ, 1943, էջ 125:

²⁰ Ք. ա. Ձ. դարում Յունաստանում եւ Թրակիայում ծագած փիլիսոփայական ուսմունք, որը կապուած էր առասպելական երգիչ Օրփէոսի անուան հետ:

²¹ Harold R. Willoughby, *Pagan Regeneration, A Study of Mystery Initiations in the Greco-Roman World*, Chicago – Illinois 1929, էջ 94-95:

²² В. В. Иванов, Вл. Н. Топоров, *Исследования в области славянских древностей*, (Հետազօտութիւններ սլաւոնական հնութիւնների շրջանում), «Գիտութիւն» հրատ., Մոսկուա, 1974, էջ 5):

Հիսիստուսական հաւատալիքներում եւ ծէսերում յատուկ նշանակութիւն է ունեցել Ամպրոպի աստծոյ պատմական ժառանգորդ Իլիա (Եղիա) մարգարէի ցուլը կամ Իլիայի ոսկորը: 2. դարի բիւզանդացի հեղինակ Պրոկոպիոս Կեսարացու հաղորդմամբ, «կայծակների արարչին» ցուլեր էին զոհաբերում: Սլաւոններն ընտրել են կարմիր ցուլերի, որոնք հունձքի եւ խոտհարքի ընթացքում պայծառ եղանակ պէտք է ապահովէին: Հաւատացել են, որ խնջոյքների ժամանակ ով «Իլիայի ոսկորից» մի կտոր պոկի եւ իր հետ կրի՝ Իլիան միշտ իր հետ կը լինի²³:

Իւանովը եւ Տոպորովը իրենց ուսումնասիրութեամբ այն եզրակացութեանն են յանգել, որ «Հիմնական առասպելի» մերձարեւելեան եւ բալթասլաւոնական տարբերակներից զատ հաւանական է, որ աւելի հնաւանդ առասպել է գոյութիւն ունեցել, որի համաձայն, Օձի հակառակորդը ոչ թէ Ամպրոպի աստուածն է եղել, այլ՝ Արեւը²⁴:

Հայ ժողովրդական յիշողութիւնը պահպանել է ոչ միայն առասպելական Օձի (Վիշապի) եւ Յլի միջեւ տեղի ունեցած մենամարտի մատնանշուած երկու տարբերակների, այլեւ վիշապին, ինչպէս նաեւ Յլին յաղթած Արեւի առասպելոյթները: Ստորեւ քննենք դրանցից իւրաքանչիւրն առանձին:

ՎԻՇԱՊԻ ԴԷՄ ՅԼԻ ՏԱՐԱԾ ՅԱՂԹԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ ԱԻԱՆԴԱՋՐՈՅՑԸ

Այս ասանդագրոյցը հաղորդել է Կարկառի շրջանի (Արեւմտեան Հայաստան) Բերկրի գիւղացի Խուրօն: Գրառել է Ազատ Համբարեանը²⁵: Պատմուել է իբրեւ Տարոս (Յուլ) եւ Ջագրոշ լեռների միջեւ տեղի ունեցած մենամարտ: Նրանցից երկուսն էլ սակայն եղջրակիր վիշապներ են ներկայացում: Ջագրոշը որոշել է կոլ տալ Տարոսին եւ մարտի է նետուել նրա դէմ, բայց Տարոսն այնպէս է հարուածել նրա ճակատին, որ վիշապի եղջիրները պոկուել են: Մի եղջիրը Վերին Միջագետքում թռել, ցցուել է գետնին եւ դարձել Մասիուս լեռ, միւրը խրուել է Արարատ լեռան կողը: Այս հարուածից շնորհիւ Ջագրոշը թիկունք է դարձրել, բայց մի հարուած էլ է ստացել, որից մարմինը պատռուել եւ դրանից ձոր է ձեւաւորել: Ձորի միջով Ջաբ գետն է հոսում, որը վիշապի արիւնն է: Այնուհետեւ Ջագրոշի փորի աղի ջրերը հասել են մինչեւ Վան եւ Վանայ լիճն են առաջացրել: Դրանից յետոյ պարտուած Ջագրոշը քաշուել-հեռացել է²⁶:

Ինչպէս տեսնում ենք, բացայայտ է հայկական Վիշապի եւ Յուլի մասին այս ասանդագրոյցի նախնական աղբյւրը «Հիմնական առասպել»ին: Բացակայում է միայն Վիշապի պարտութեանը յաջորդող անձրեւը, բայց անձրեւի փոխարէն նկարագրում են Վիշապի փորի Վանայ լիճ դարձած աղի

²³ Նոյն, էջ 169:

²⁴ Նոյն, էջ 154:

²⁵ Արամ Ղանալանեան, *Ասանդապարում*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1969, էջ 422:

²⁶ Նոյն, № 50, էջ 23 – 24:

ջրերը եւ արիւնը, որ գետի է վերածուել: Այսինքն՝ վիշապի պարտութիւնից յետոյ այնուամենայնիւ ջուր է հոսում, ինչը յիշեցնում է Փիւնիկէի արքայորդի Կադմոսի մասին յոյների պատմած առասպելը, թէ՛ Ջեսը Յլի կերպարանքով առեւանգում է Կադմոսի քրոջը՝ Երոպային, իսկ Կադմոսը գնում է նրան որոնելու: Ճանապարհին վիթխարի օձը յարձակում է Կադմոսի վրայ եւ հսկայական գալարներով նետում է երկինք, ապա յորդառատ գետի նման մղում է դէպի իր հակառակորդը: Կադմոսը սպանում է օձին, որի արիւնը ոռոգում է դաշտերի դալար սէզերը: Ժամանակ անց Կադմոսը՝ ինքը օձ է դառնում եւ տեղափոխւում երկինք²⁷: Այս առասպելում նոյնպէս չկայ անձրեւ, բայց դրա փոխարէն կայ դաշտերի նորածիլ սէզերը ոռոգող վիշապի արիւն եւ Վիշապի մարմնի ու գետի համեմատութիւն:

Նոյնպիսի համեմատութիւնների հանդիպում ենք վեղայական Ինդրայի եւ նրա ախոյեան Վրիտրա վիշապի կռուի մասին առասպելում. Վրիտրան պառկած է լեռների վրայ, նրա դէմ Ինդրան մարտի է նետում ինչպէս «կատաղած ցուլ»: Ինդրան սպանում է վիշապին եւ ազատութիւն է տալիս նրա որովայնում արգելափակուած տիեզերական ջրերին (7 ալիքուող գետ է բաց թողնում), որոնք վաղուց փափաքում էին ազատուել բանտուածութիւնից²⁸:

Ասուածից կարելի է եզրակացնել.- 1) նախնական առասպելոյթում Վիշապի սպանութեանը յաջորդում է տիեզերական պտղաւորող ջրերի հոսքը, որոնք Կադմոսի առասպելում եղանակային որոշակի ցուցիչ են պարունակում, ակնարկելով տարուայ տաք ժամանակահատուածը, երբ ջրում են մարգերի դալար սէզերը: 2) Հայկական Տարոսի եւ Չագրոշի կռում որեւէ հետք չի պահպանուել հոսող ջրերի պտղաբեր լինելու մասին: Այս ասանդագրոյցում իսպառ բացակայում են եղանակային ցուցիչները: Նախնական եղանակային փոփոխութեան բովանդակութիւնն աղարտուել եւ վերածուել է պարզ, բնապատկերային փոփոխութեան նկարագրութեան, իսկ գործող դիցաբանական կերպարները դարձել են լեռներ: Բայց այն, որ վիշապի եւ Յլի կռիւը հայկական հաւատալիքներում նախապէս եղանակային-օրացուցային առասպելաբանութիւն է եղել, երեւում է ստորեւ ներկայացուող յաջորդ դիպաշարից, որտեղ ոչ թէ Տուլն է յաղթանակ տանում Վիշապի նկատմամբ, այլ հակառակը՝ պարտում է նրանից:

²⁷ Публий Овидий Назон, *Метаморфозы* (Փոխակերպումներ), «Գեղարուեստական գրականութիւն» հրատ., Մոսկուա, 1977, էջ 81-84, 113-18). նաեւ՝ Гигин, *Мифы* (Առասպելներ), «Ալատէյա» հրատ., Սանկտ Պետերբուրգ, 2000, էջ 6:

²⁸ Ригведа, *Мандалы* I – IV, (Մանդալներ), «Գիտութիւն» հրատ., Մոսկուա 1989, I, էջ 32, 11, II, էջ 12, 3. նաեւ՝ Э. Н. Тёмкин, В. Г. Эрман, *Мифы Древней Индии* (Հին Հնդկաստանի առասպելները), «Գիտութիւն» հրատ., Մոսկուա 1982, էջ 38:

ԲՈՐ ԵՁԻ ՀԵՔԻԱԹԸ

«Բոր եզ» հեքիաթը²⁹ գրառուել է 1915ին Մշոյ Բաղլու գիւղացի Տոնէ Հովէանից: Գրառել է Նազարէթ Մարտիրոսեանը: «Բոր» նշանակում է կարմիր: Եզը հենց այդ գոյնով էլ կոչւում է հեքիաթի միւս տարբերակում՝ «Կարմիր եզն ու հուշապ»³⁰, որը դարձեալ Մուշից է, 1916ին Սալըկան գիւղի նախկին բնակիչ Մարտիրոս Գէորգեանից գրառել է Արտաշէս Բարսեղեանը: Համառօտ դիպաշարը հետեւեալն է.

Խորթ մայրն ամուսնուց պահանջում է նրա 15 ամեայ որդուն հորը զգել: Հայրը կատարում է նրա կամքը. որդին 40 օր հորում է անցկացնում: Այդ ընթացքում տղային կերակրում է Բոր եզը, որի մի եղջիրից մեղր է հոսում, միւսից՝ անմահութեան ջուր: Քառասուն օր անց, երբ տղային հորից 2 եզնեքով քաշում, հանում են, տեսնում են, որ կրկնակի անգամ մեծացել է եւ զօրացել: Խորթ մայրը Կարմիր եզան գաղտնիքն իմանալով, իր հարազատ որդուն էլ է ուզում հորում մեծացնել, բայց եզան օգնութիւնը չստանալով, որդին հորում մաշում, նիհարում է: Մայրը պահանջում է մորթել Կարմիր եզանը, բայց սա իր հովանաւորեալ տղայի հետ փախչում է: Նրան տանում, հանում է մի սարի գլուխ, որտեղ ծառ է աճում (բարդի): Տղան բարձրանում է ծառի վրայ: Յանկարծ քամի է սկսում եւ «Արեւի երեսը բռնում է». Վիշապն է մօտենում: Սա Բոր եզին տեսնելով, մարտակոչ է ուղղում նրան. «Կամ մաշ, կամ գիւլաշ», այսինքն՝ կամ հողային տարածք, կամ գօտեմարտ: «Գիւլաշ» բղաւում է Կարմիր եզը: Կուում Վիշապը սկսում է ուտել Կարմիր եզին: Մեռնելուց առաջ Եզը Վիշապին պատգամում է. «Ամանաթ (աւանդ - Գ.Մ.) Աստուած, ամանաթ ծառ»: Վիշապը նայում է ծառին եւ տեսնում է այնտեղ բարձրացած տղային, որին որդեգրում, տանում է իր պալատ: Պալատի սենեակներում մարդիկ, թռչուններ եւ գազաններ կան բանտարկուած: Մի սենեակում գայլի առջեւ խոտ է դրուած, դոջի (խոյի - Գ.Մ.) առջեւ՝ միս: Մէկ այլ սենեակում Վիշապի 3 ոտանի ձին է, միւս սենեակում՝ սեւ, սպիտակ եւ կարմիր 3 հրեղէն ձիեր կան: Սրանք էլ յանձն են առնում տղային փախցնել Վիշապից: Տղան փախչելուց առաջ ազատ է արձակում մարդկանց, թռչուններին եւ գազաններին, վերացնում է շփոթը. գայլի առջեւ միս է դնում, խոյի առջեւ՝ խոտ: Գայլիս, հասնում է Խազալ քաղաք, որը մշեցիների բարբառում մի տեսակ օձի անուն է³¹: Վիշապը հետապնդում է նրան եւ բռնել չկարողանալով, ջուրն ընկնում, խեղդում է:

Ինչպէս տեսնում ենք, Բոր եզան հեքիաթում եւս ակնյայտ են «Հիմնական առասպել»ի որուագծերը՝ միայն այն տարբերութեամբ, որ Վիշապը ոչ

²⁹ Հայ ժողովրդական հեքիաթներ (ՀԺՀ), հղր. XIII, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1985, էջ 161-77:

³⁰ ՀԺՀ, հղր. XII, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1984, էջ 524-39:

³¹ Հր. Աճառեան, Հայկական գաւառական բառարան, Լազարեան ճեմարան արեւելեան լեզուաց, Թիֆլիս 1913, էջ 445:

թէ սկզբում է պարտութիւն կրում, այլ՝ վերջում՝ ջրերի մէջ անհետանալով: Սկզբում նկարագրում է նրա անվերապահ յաղթանակը Յլի, այսինքն՝ Ամպրոպի աստծոյ կենդանական ցուցիչի նկատմամբ: Առկայ է Վիշապի առեանգած կենդանիների մոտիւր, սարը, այնտեղ աճող Կենաց ծառը, որի մասին Վիշապը խոստովանում է, թէ դրա շրջակայքն իր սովորական տեղն է, եւ այդ ծառի առջեւ է նա ամէն անգամ գանազան կենդանի արարածների յօշոտում³²: Հայկական ժողովրդական այլ հեքիաթներ եւս հաստատում են, որ առասպելական Վիշապը Կենաց ծառի շուրջ է պտտում եւ ձգտում է ուտել Ծառի վրայ բնակուող Զմռուտ զուշի ձագերին: Թագաւորի 3 որդիներից արեւային յատկանիշերով բնութագրուող կրտսերը Մուֆ՝ հանդերձեալ աշխարհ ընկնելով, սպանում է Վիշապին եւ նրա թելերի վրայ Լոյս աշխարհ՝ մեր աշխարհ է վերադառնում³³: «Մուֆ աշխարհ» է համարուել տարուայ եղանակային այն շրջափուլը, երբ Արեւը նախ ամառային արեադարձին սկսում է հեռանալ մեզանից, ապա աշնանը հասնում է օրահաւասարի կէտին, ինչի հետեւանքով գիշերները ցերեկների համեմատ երկարում են՝ ցերեկները շուտ են մթնում: Լոյս աշխարհ Արեւը վերադառնում է ձմեռային արեադարձին, երբ ցերեկներն են սկսում երկարել:

Բոր եզան հեքիաթում նոյնպէս Կենաց ծառը բարձրացած 15ամեայ պատանին³⁴ Արեւն է, որը մինչ այդ 40 օր փոսում է անցկացնում՝ մի շրջան, երբ գարնանամուտի Մարտ ամսից սկսած, ձմեռը մաքառում է իր դիրքերը չգիջելու համար, օրերը փոփոխական կերպով դեռ ցուրտուտաք են, իսկ Արեւը դեռ զօրացած չէ, ե՛ւ կայ, ե՛ւ չկայ դրութեան մէջ է ու կարծես հորն ընկած լինելով, չի ջերմացնում: Հորն այս դէպքում գարնանային Զատկի տօնին նախորդող Մեծ Պահքի շրջանն է, որն ազգագրական ամենատարբեր շրջաններից գրառուած հայ ժողովրդական հանելուկները 7 գազանոց փոսի հետ են համեմատում («Եօթը գազանոց հոր, // Ծերին մի կարմիր խնձոր»)³⁵: «Եօթ գազ»ը Մեծ Պահքի 7 շաբաթն է, որը 49 օր է կազմում, բայց քանի որ ոչ ոք չի կարող որոշել, թէ Զատկի տօնին նախորդող ցրտերը ստոյգ քանի օր կը տեւեն, միջինացուած 40 օր են ասել:

³² ՀԺՀ, *հպր. XIII*, էջ 164:

³³ ՀԺԾ, *հպր. VII*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1979, էջ 11-15 («Լուս նան մթնն աշխարքնէն»), *հպր. II*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1959, էջ 23-38 («Անմահական խնձոր»), *հպր. VII*, էջ 585-97 («Ուակէ խունձուրուն նաղլը»), *հպր. I*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1959, էջ 27-48 («Հազարան բլբուլ կամ Այօ Դինոյի նաղլը»), *հպր. V*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1966, էջ 415-25 («Աժդահակը») են:

³⁴ Տասնհինգ տարեկան հասակը, ըստ երեւոյթին երիտասարդական ամենալաւ տարիքն է համարուել: Հեքիաթի վերջում պատանին իր հերթին հիանդ թագաւորին առիւծի կաթ, առիւծի ձագի կաշի եւ անմահական խնձոր հասցնելով, երիտասարդացնում, 15 տարեկան է դարձնում (ՀԺՀ, *հպր. XIII*, էջ 173-77):

³⁵ Ս. Յարութիւնեան, *Հայ ժողովրդական հանելուկներ*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1965, Երեւան, էջ 196:

Այսպիսով տեսնում ենք, որ Բոր եզ-Ցուլը գարնանամուտի 40օրեայ ցրտերի ընթացքում փոսն ընկած Արեւին զորացնողն է: Իր այդ առաքելութիւնը կատարելուց յետոյ նա կուլ է գնում Վիշապին, անհետանում է, իսկ Արեւը դրանից յետոյ շարունակում է բացառապէս Վիշապի հետ գործ ունենալ՝ մինչեւ սա էլ ամենավերջում ջրում խեղդուելով, հեռանում է ասպարէզից: Սկզբում նրանք հաշտ են, բայց երբ տղան պարզում է, որ Վիշապի պալատում մարդիկ, թռչուններ եւ գազաններ կան բանտարկուած, խոյի առջեւ միս է դրուած, իսկ գայլի առջեւ՝ խոտ, այդ պահից սկսում է նրանց երկուսի հակամարտութիւնը: Պատկերը բացայայտօրէն ձմռան գալուստն է ակնարկում, երբ դաշտերում խոյի համար խոտի պակաս կայ, իսկ գայլի համար՝ մսի, ցրտերը կաշկանդում, բանտում են թէ՛ մարդկանց (նրանց տներում), թէ՛ գազաններին ու թռչուններին (թաքստոցներում):

Արեւ պատանու 3՝ սեւ, սպիտակ եւ կարմիր հրեղէն ձիերը, ինչպէս նաեւ Վիշապի 3 ոտանի ձին նոյնպէս եղանակային ծածկագրեր են կրում: Ինչպէս վերելում ասացինք, հնում տարին 2 կամ 3 եղանակ է ունեցել, որոնք Թովմա Արծրունի կենդանիների օրինակով է յիշատակել առանց աշնան անունը տալու: Նա պատմում է, որ երբ հիւսիսային սառն օդը շնչել է սկսում, վիշապը տագնապում եւ մինչեւ գարնան գալը անդնդախոր տաք վայրեր ձմեռելու է իջնում³⁶: Աշունը որպէս ձմեռնամուտ ընկալելու ասանդոյթը պահպանուել էր մինչեւ նորագոյն ժամանակներ: Ազգագրագէտ Վարդ Բդոյեանի պատմելով, երբ Ախալքալաքում գարնանը գորտերը մեծ խմբերով դէպի լեռներն էին բարձրանում, ժողովուրդն ասում էր. «Դիորի (մինչեւ) գորտը չը կըռկըռայ, գարուն չի գայ»: Երբ գորտերն աշնանը լծից տեղափոխուում էին դէպի աղբիւրները, ասում էին. «գորտը գնաց, ձմեռ է»³⁷:

Այդպէս էլ Բոր եզի հեքիաթի Վիշապն է Արեւին հետապնդում այնքան, մինչեւ ձմռան շունչը զգացնել է տալիս, եւ ինքը խեղդուում է ջրի մէջ, ինչպէս «Հիմնական առասպել»ի Օձը, որն Ամպրոպի աստծոյ դէմ մղուող կռում իվերջոյ պարտում եւ կորչում է Կենաց ծառի արմատների տակ եղած ստորերկրեայ ջրերում:

Ասուածից հետեւում է, որ հայկական հաւատալիքներում Ցուլի մահը գարնան յաղթանակն է ազդարարել, իսկ Վիշապի պարտութիւն-մահը՝ աշնանամուտը կամ որ ատելի ստոյգ է՝ ձմեռնամուտը, քանի որ ԺԲ.-ԺԳ. դարերի տոմարագէտ Վանական Վարդապետը եւս ձմեռնամուտը ոչ թէ Սեպտեմբերի նշանակ Կշէռք (Սեպտեմբերին), այլ Կենդանաշրջանում նրան յաջորդող Կարիճի հարեւան Օձի նշանակ Սահմի (Հոկտեմբերին) է վերագ-

³⁶ Թովմայ Արծրունի եւ Անանուն, *Պատմութիւն Կրանն Արծրունեաց*, «Մագաղաթ» հրատ., Երեւան, 2006, III, Ը:

³⁷ Վարդ Բդոյեան, «Երկրագործական պաշտամունքի մի քանի հետքեր հայերի մէջ», *Աշխարհութիւններ Հայաստանի պետական պատմական թանգարանի*, 3:1950, Հայկական ՍՍԴ ԳԱ հրատ., էջ 8:

րում. «Սահմի. զի գնայ հարաայինն եւ գայ հիւսիսայինն (հողմ), եւ դարձեալ իմաստուն արք սահմանեն գրունս իրեանց առ ի գալ ձմերան»³⁸:

Բոր եզան հեքիաթում ուշագրաւ է եզին ուղղած Վիշապի «Կամ մաշ, կամ գիւլաշ» մարտակոչը, ինչը պարզ է դարձնում, որ նրանց երկուսի կոիւր նախեառաջ մէկը միւսից տարածք նուաճելու համար է, եւ այդ տարածքը Կենաց ծառի շրջակայքն է, որը սովոր մի վայր է թէ՛ Յուլի, թէ՛ Վիշապի համար: Աստղային երկնքում այդպէս Յուլ եւ Կլաւդիոս Պտղոմէոսի նկարագրած Օձ համաստեղութեան աստղերն են տեղաւորուած Ծիր կաթինի³⁹ (մեր միասնական աստղային համակարգութեան պատկերը կողքից նայելիս) հակադիր ծայրերում՝ 180 աղեղնային աստիճանի ներքոյ⁴⁰: Նրանց միջեւ 6 ամիս (տարուայ ուղիղ կէտը) եւ Կենդանաշրջանի գօտու 6 համաստեղութիւն է ընկած, որոնցից իրաքանչիւրը, ըստ Կենդանաշրջանի գօտին կազմած հին աստղաբաշխների մտայղացման, մէկ ամսուան ընթացքում հորիզոնից սահելով, պէտք է իջնէր «գետնի տակ», իսկ նրա նախորդ համաստեղութիւնն առաջ գար: Այդպէս ամիսը՝ մէկ Կենդանաշրջանի գօտու իրաքանչիւր անհետացած համաստեղութեան փոխարէն մէկ այլ համաստեղութիւն «գետնի տակից» դուրս է գալիս:

Արեւուդու այսինքն՝ Կենդանաշրջանի գօտու վրայ գտնուող իրաքանչիւր համաստեղութեան դիտելիութիւնը միջին լայնութիւններում ապրողների համար մօտաւորապէս 6 ամիս է: Ինչու՞ մօտաւորապէս. որովհետեւ, թէեւ Կենդանաշրջանի գօտին կազմողները իրաքանչիւր համաստեղութեան համար մէկ ամսուայ մասնաբաժին են յատկացրել, այդուհանդերձ Արեւը Կոյս համաստեղութիւնը, օրինակ, 1 ամսուայ փոխարէն 1 ամիս եւ 16 օրում է անցնում: Եթէ հին աստղաբաշխներն այս պարզ հաշուարկը կատարած չլինէին, միանգամայն անիմաստ կը լինէր արեւուդու աստղերը 12 համաստեղութիւն-ամիսների բաժանելը: Մեզ տեսանելի աստղային երկնքում այդ

³⁸ «Յաղագս տարեմտին ի Վանական Վարդապետէ ասացեալ» *Մատենադարանի գիտական նիւթերի ժողովածու*, 1:1941, էջ 160:

³⁹ Կենաց ծառ – Ծիր Կաթին համեմատութիւնը գերմանացի հետազօտող Էրիխ Յերկենն է կատարել, իսկ դրա վրայ աճող խնձորները նոյնացրել է աստղերին: Ծիր Կաթին երկնային ծառն էլ երկրային ծառերի նման, ըստ տարուայ եղանակների, ունենում է «ծաղկման», «հատունացման» եւ թառամելու ժամանակահատուածներ: (Эрих Церен, *Луныиъ бог* (Լուսնային աստուածը), «Գիտութիւն» հրատ., Մոսկուա, 1976, էջ 118-20, 203): Նկատի ունի Ծիր Կաթինի պայծառ կամ համեմատաբար խամրած տեսանելիութեան աստիճանները

⁴⁰ Ծիր կաթինը, անշուշտ, ծայրեր չի կարող ունենալ, ինչպէս, որ ծայրեր չի կարող ունենալ սկաւառակը կամ մատանին: Այդպիսի սկաւառակ է նաեւ Ծիր կաթինը՝ մեր միասնական աստղային համակարգութեան, որի կողքից մեզ տեսանելի մէկ հատուածը աստղային երկնքի կամ հորիզոնի մի ծայրից միւսն է ձգում: Հասկանալի է, որ խօսքն այդ ծայրերի մասին է, այլ ոչ թէ բուն միասնական աստղային համակարգութեան:

12ի ուղիղ կէսն է տեղատրում: Իւրաքանչիւր ամիս նրանցից մէկն իջնում է հորիզոնից ներքեւ, իսկ ներքեւինը բարձրանում է: Յատուկ հարկ է ընդգծել, որ խօսքը Կենդանաշրջանի գօտու համաստեղութիւնների մասին է, այլ ոչ թէ աստղային երկնքի Հիւսիսային կամ Հարաւային կիսագնդերում տեղաբաշխուածների, որոնցից որոշները միջին լայնութիւններում ապրողների համար կարող են 10 ամսից աւելի կամ պակաս տեսանելիութիւն ունենալ, կարող են ընդհանրապէս չերեւալ կամ երեւալ մշտապէս:

Ի լրումն այս ամէնի, ուզում եմ մէջբերել Բիւրականի աստղադիտարանի լաւագոյն աստղագէտներից մէկը համարուող Նայիրա Ազատեանի խօսքը, որը ինձ ասել է 5 տարի առաջ այս թեմայով զրուցելու կապակցութեամբ. «*Բացառուած է, որ Ջողիակի գօլրու որեւէ համաստեղութիւն 10 ամսուայ տեսանելիութիւն ունենայ: Շեղումներ կարող են լինել, բայց՝ այնքան փոքր, որ նոյնիսկ 8 ամիս չեն կարող ձգել*»:

ՎԵՐԱԴԱՌՆԱՆՔ ՅՈՒԼԻՆ ԵՒՎԻՇԱՊԻՆ

Վիշապաքարերի թագակիր Յուլը, որը ծմռան տիրակալն էր, անհետացել է, իսկ Օծը՝ բարձրացել: Գարնան Գ. ամիսն է: Արեւը մտել է Երկուորեակներ: Այդ պատճառով էլ վիշապաքարերի վրայ երկուորեակ գարնանաբեր արագիլ եւ կռունկ են պատկերում: Վիշապը խժռել է Բոր եզին, գարունը վերջնական յաղթանակ է տարել ծմռան ցրտերի նկատմամբ: Վեց ամիս յետոյ՝ աշնանը տեղի կ'ունենայ միանգամայն հակառակը. Ջագրոշ եղջրաւոր վիշապը մարտահրաւիր կը նետի Տարոս Յլին եւ չարաչար կը պարտուի նրա դէմ մղած կռում: Այսինքն՝ Արեւն աշնանը դուրս կը գայ Օծ համաստեղութիւնից, Օծը կ'անհետանայ, իսկ նրա փոխարէն, հորիզոնի հակառակ ծայրում աշխարհի կը գայ Օծին յաղթած Յուլ համաստեղութիւնը: Կը սկսուի ձմեռը: Աստղային երկնքի միայն այս իրողութիւններն են օգնում հասկանալ, թէ Հայկական Լեռնաշխարհում նախապէս տարուայ եղանակային ո՞ր շրջափուլում է ըմբռնուած եղել Տարոսի եւ Ջագրոշի մենամարտը, ինչի մասին ասանդագրոյցը բացարձակապէս ոչինչ չի պահպանել:

ԲԱՐԵԲԵՐ ՕԶԻ ՄԱՍԻՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՄԲՈՆՈՒՄԸ

Այսպիսով, Յուլի դէմ նախայարձակ եղած Օծը Բոր եզան հեքիաթում, ի տարբերութիւն գարնան Արեւին զօրացնող Կարմիր Յլի, վնասակար բնոյթով է պատկերացուել, թէպէտ նրա (նրա աստղերի) ծագելը (աշխարհ գալը) գարնան գալստեամբ է ուղեկցուել: «Հաբրմանի» վերնագրով ժողովրդական մէկ այլ հեքիաթում⁴¹ (Շիրակի դաշտավայրից գրառել է Աղեքսանդր Ափրիկեանը) Յուլ չկայ, բայց պարզ նկարագրում է, թէ ինչպէս գարնանաբեր Օծը կարող է նաեւ բարի բնոյթով ընկալուել, որի անհետանալը կարող է իչիք դարձնել նրա ստեղծած բոլոր բարիքները:

⁴¹ ՀԺՀ, հպր. IV, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1963, էջ 15-26:

Օձի անունը Հաբրմանի է: Սա անտառում թաքնուում է ծերունու ցախերի մէջ եւ գալիս է նրա տուն, ապա պատուիրում է գնալ եւ թագաւորի աղջիկն ուզել իր համար: Թագաւորն օձի առջեւ պայման է դնում մէկ գիշերուայ մէջ պալատ կառուցել, այգի տնկել եւ մէկ կտորանի գորգ փռել դէպի իր պալատը, ապա 7 ձեռք դիւղ-գունայով այնպիսի համերգ բացել, որ բոլորը լսեն, բայց երաժիշտներին չտեսնեն: Հաբրմանին կատարում է թագաւորի պատուէրը եւ ամուսնանում է նրա դստեր հետ: Գիշերը նա հանում է իր օձէ շապիկը եւ ջահել տղայ է դառնում: Կնոջը խնդրում է ոչ մէկին չյայտնել իր գաղտնիքը: Կինը սակայն այդ մասին պատմում է քոյրերին: Հաբրմանին անհետանում է: Իր հետ անհետանում են չքնաղ պալատը, գորգն ու այգին: Կինը նրան գտնում է 6 բերդ անցնելուց յետոյ: Եօթերորդ բերդում Հաբրմանին է՝ ջադու Պառաւի գերութեան մէջ, որն ուզում է իր աղջկան ամուսնացնել նրա հետ: Պառաւը Հաբրմանիի կնոջն ուղարկում է պարկերով բմբուլ բերելու, որպէսզի իր աղջկայ օժիտի համար վերմակ, ներքնակ կարի: Հաբրմանիի կինը բարձրանում է սարի գագաթը եւ այնտեղից բղաւում, թէ Հաբրմանին մեռել է: Աշխարհի բոլոր թռչունները գալիս, փետուրները թողնում, հեռանում են: Յաջորդ անգամ Պառաւը Հաբրմանիի կնոջը պատուիրում է իր աղջկայ համար 12 ձեռք հագուստ գտնել, բայց այս անգամ Հաբրմանին եւ իր կինը փախուստի են դիմում: Պառաւն իր աղջկան ուղարկում է նրանց բռնելու: Հաբրմանին կնոջը ջրաղաց է դարձնում, ինքը դառնում է ջրաղացպան: Յաջորդ անգամ կնոջն այգի է դարձնում, ինքը դառնում է այգեպան: Զադուի աղջիկը ոչինչ չնկատելով, ետ է դառնում: Զադուն այս անգամ ինքն է հետապնդման նետում՝ «թոզ ու դուման» բարձրացնելով, երկինքն ու երկիրն իրար խառնելով: Հաբրմանին կնոջը շիւ է դարձնում, ինքը դառնում է օձ եւ փաթաթում է շիւին: Պառաւը ճանաչում է նրանց: Հաբրմանին խնդրում է հանգիստ թողնել իրենց: Պառաւը հեռանում է, իսկ Հաբրմանին վերականգնում է իր պալատն ու այգին եւ շարունակում ապրել այնտեղ իր կնոջ հետ:

Այս հեքիաթը ծայրից ծայր բաւականին վառ արտայայտուած մի հոյակապ տոմարական առասպել է. ցոյց է տալիս, թէ ինչպէս է օձի յայտնուելուն պէս յայտնուում գարունը, իսկ երբ նա անհետանում է, գարնան չքնաղ բնաշխարհը (պալատը), այգին, մէկ կտորանի գորգը (ծառ ու ծաղկունքը), անտես երաժիշտների համերգը (թռչունների դայլայլը, ծառերի շնկշնկալը) նոյնպէս անհետանում են: Անհետացած Հաբրմանիին նրա կինը 7րդ բերդում է գտնում, որը Կենդանաշրջանի գօտում Կարիճի հարեւան Օձ համաստեղութիւնից հաշուած, 7րդ՝ Յուլ համաստեղութիւնն է՝ գարնան 2րդ ամսուայ նշանակը (1. Կարիճին կից Օձ՝ Հոկտեմբեր, 2. Աղեղնաւոր՝ Նոյեմբեր, 3. Այծեղջիւր՝ Դեկտեմբեր, 4. Զրիոս՝ Յունուար, 5. Ձկներ՝ Փետրուար, 6. Խոյ՝ Մարտ, 7. Յուլ՝ Ապրիլ): Նշանակում է՝ Յուլ եւ Օձ համաստեղութիւնները կէս տարի անց կրկին 180 արեղնային աստիճանով փոխել են իրենց դիրքերը եւ Օձը Յուլի տեղում է յայտնուել: Գարնան առաջին 2 ամիսներում

սկսում է թռչունների փետրափոխությունը, ինչի շնորհիվ էլ Ջադուն ուզում է իր աղջկայ համար փետր է վերմակ, ներքնակ կարել: Ջադուն գարնան առաջին ամիսների ընթացքում նահանջելու դատապարտուած տաքուցուրտ ամիսների մարմնատրումն է: Այդ պատճառով էլ, երբ Հաբրմանին եւ նրա կնոջը հետապնդելու է նետում՝ իրար է խառնում երկինքն ու երկիրը եւ «թող ու դուման» է բարձրացնում (գարնան քամիները), իսկ գարնանաբեր Օձը եւ իր կինն ընդհակառակը՝ ջրաղաց ու ջրաղացպան, այգի եւ այգեպան են դառնում (դարձեալ գարնան ցուցիչներ):



Բակտրիական կնիքներ

Հաբրմանին նոյնական է հայկական ժողովրդական հեքիաթների կիսով չափ օձ եւ գեղեցիկ երիտասարդ դարձող Օձ Մանուկին⁴²: Նոյն այդ մարդակերպ Օձը բակտրիական կնիքներում Արեւին համադրուած ենք տեսնում: Մի կնիքում նա երկու ձեռքով 2 օձ է բռնել, մէկ այլ կնիքում իր 2 ձեռքերն են օձ: Երկու դէպքում էլ ուսերից Արեւի ճառագայթներ են ելնում՝ ճիշտ այնպէս, ինչպէս շումերներն ու աքքադներն էին իրենց Ութու-Շամաշ Արեւին ուսերից ելնող ճառագայթներով պատկերում⁴³: Օձն Արեւի հետ է համադրուել այն պատճառով, որ գարնանն է գետնի տակից դուրս գալիս: Նոյն կերպ Օձ համաստեղութեան աստղերն են Կարիճի հետ միասին գարնանը «գետնի տակից» հորիզոնի վրայ բարձրանում: Եւ այդպէս կրկնում է

⁴² Նրա կերպարի քննութիւնը տե՛ս՝ Գագիկ Մարտոյան, *Օձամիշապ Արեւի դիցաբանութիւնը*, «Չանգակ» իրատ., Երեւան, 2001:

⁴³ Victor Sarianidi, *Myths of Ancient Bactria and Margiana on Its Seals and Amulets*, Publisher Pentaglyphic, Moscow 1998, էջ 22:

ամէն տարի՝ «մեռնում եւ յարութիւն է առնում», ինչպէս իրականում էլ օձը կաշին փոխելով, ջահելանալու տպաւորութիւն է թողնում⁴⁴:



Շումէրների ու արքայների
Ութու-Շամաշ Արեւը

Այսպիսով, տեսնում ենք, որ ժողովրդական ընկալումներում Օձը (Վիշապը) երկակի բնոյթով է ներկայանում: Եթէ մի դէպքում նրա վնասակար էութիւնն է շեշտում, երբ նա խժռում է գարնանային Արեւին զօրացնող Յլին եւ աշնանամուտին (ձմռանը) բանտում է մարդկանց, թռչուններին եւ գազաններին («Հիմնական առասպել»ում առեանգում է ընտանի անասուններին), հայկական հեքիաթում Խոյի առջեւ միս է դնում, գայլի առջեւ՝ խոտ, միս դէպքում միանգամայն բարեբեր բնոյթ ունի. յայտնում է եւ իր հետ գարուն է բերում, անհետանում է ականայից, բայց կրկին յայտնուելով, մաքառում է ձմռան

ցրտերի դէմ եւ դարձեալ գարուն է բերում:

ԱՄԱՌԱՅԻՆ ՏԱՊԻ ՎԻՇԱՊԸ

Վիշապի (Օձի) երկուական բնոյթի վնասակար կողմը միայն նրա անհետանալու հետ միասին ձմռան ցրտերի մուտքով չի դրսետրում: Խոյի դարաշրջանում՝ էոնում (երբ գարնանային օրահաւասարի կէտը Խոյ համաստեղութիւն էր) նա աստղային երկնքում տեսանելի է եղել գարնան կէսի, ամբողջ ամռան եւ աշնան կէսի ընթացքում, ուստի նա նաեւ ամռան տապի մարմնատրումն է: «Սասնայ Ծռեր» դիւցազնավէպում Վիշապը գտնում է Կանաչ քաղաքում, նստել է սարի գլխին եւ փակել քաղաքի միակ աղբիւրի ակը: Երբ Սանասար եւ Բաղդասար եղբայրները քաղաք մտնելով մի Պառաւի տանն են հիւրընկալում⁴⁵, ծարաւած լինելով, ջուր են խնդրում նրանից: Պառաւը յայտնում է, որ Վիշապի ահից ոչ ոք չի համարձակում ջրի գնալ: Վիշապը մի պուտ ջուր է բաց թողնում միայն այն ժամանակ, երբ ա-

⁴⁴ Արեւն օձի հետ է համադրուել նաեւ այն պատճառով, որ օձերը գիշերով իրենց բներն են քաշում եւ ցերեկով են միայն դուրս գալիս, ինչպէս Արեւն է մայրամուտին հորիզոնից ներքեւ («գետնի տակ») իջնում եւ արշալոյսին դուրս գալիս:

⁴⁵ «Պառաւի տուն»ը Կոյս համաստեղութիւնն է, որում աստղային առասպելները յունական Դեմետրային եւ նրա դստերը՝ Պերսեփոնէ-Կորային են տեղատրում (A. Бонюв, *Мифы и легенды о созвездиях* (Առասպելներ եւ լեգենդներ համաստեղութիւնների մասին), «Ղազախստան» հրատ., Ալմա-Աթա 1985, էջ 98-99:

մուրի աղջիկ են զոհաբերում: Այժմ հերթը թագաւորի մօտ գտնուող մի աղջկայ է հասել: Եղբայրները ձիթհանքի 2 կլոր քար վերցնելով, սարն են բարձրանում, որ Վիշապի վերջը տան: Ահա, յայտնուում է Վիշապը, որ «մէկ գոմշի չափ բարձր է, հինգ գոմշի չափ էրկէն»: Սանասարը եւ Բաղդասարը քարերով ջարդում են նրա գլուխը: Ջրի ակը բացւում է, եւ մարդիկ սկսում են ջուր կրել⁴⁶: Սա նոյն այն դիպաշարն է, որի մասին վերետում յիշատակեցինք 3 եղբայրներին նուիրուած հեքիաթների մասին խօսելիս: Արեւ երրորդ եղբայրն ամառային արեւադարձի կէտում իջնում է հանդերձեալ աշխարհի, ապա աշնանային օրահաւասարի կէտում յայտնուում է Մուս աշխարհում եւ Պառաւի խորհրդով գնում, սպանում է ջրի ակը փակած Վիշապին: «Սասնայ Ծոեր»ում շեշտադրումն արուած է Մուս աշխարհի կանաչ գոյնի վրայ՝ ցոյց տալու համար, որ խօսքը փարթամօրէն կանաչած, ամառային աշխարհի մասին է, երբ Օձ համաստեղութիւնը սարի նման կորածեւ երկնակամարում շարժուելով, Յուլիս-Օգոստոս ամիսներին երկնքի կատարներին է հասել եւ կալանել է երկնային ջրերը՝ անձրեւները, որոնք ամռանը հազուադէպ երեւոյթ են: Ջրերի ակունքները բացւում են աշնանը, երբ Արեւը դուրս է գալիս Օձ համաստեղութիւնից, եւ Օձն անհետանում է հորիզոնից (Արեւը «սպանում է» իր գագաթնակէտից իջած Օձին):

Նոյն այս առապելը պահպանուել է նաեւ *Յայսմաւուրք*ում: Սբ. Թէոդորոս զօրավարը յայտնուում է Երապոլիս քաղաքում (Խարբերդի նահանգ): Ճանապարհին շոգից նեղուելով, քուն է մտնում պուրակում: Մի կին զգուշացնում է նրան, որ մօտակայ քարայրում վիշապ է ապրում, որը դուրս է գալիս միջօրէին (այսինքն՝ օրուայ ամենաշոգ ժամին): Ահա, գալիս է վիթխարի վիշապը՝ աչքերից կրակ թափելով⁴⁷ (դարձեալ ամառային տապի մասին ակնարկ): Թէոդորոսը գեղարդը խրում է նրա գլխի մէջ, որից յետոյ ջուր է յորդում⁴⁸:

Այսպիսով, ասուածն իմի բերելով, կարող ենք եզրակացնել, որ հայկական վիշապները բնոյթով 2 տեսակի են՝ բարեբեր եւ վնասակար, տոմարական առումով, տարուայ հնում ընկալուած երեք հիմնական եղանակների՝ ձմռան (աշնան), գարնան եւ ամառային տապի ազդարարներն են:

ՅԼԱՍՊԱՆ ԱՐԵԻԸ

Հայկական հաւատալիքներում Վիշապի հակառակորդ Յուլը նոյնպէս 2 տեսակի է՝ բարեբեր եւ վնասակար՝ Կարմիր եւ Սեւ: Ծաղկագարդին՝ Մեծ Պահքի վերջին Կիրակի օրը նշուող գարնանային տօնին երեխաները

⁴⁶ *Սասունցի Դաւիթ. հայկական ժողովրդական էպոս*, երկրորդ հրատարակութիւն «Հայպետհրատ», Երեւան, 1961, էջ 79-83:

⁴⁷ Բանահիւսական նիւթերում կրակը կարող է նաեւ վիշապի բերանից թափուել:

⁴⁸ Յայսմաւուրքից մէջբերել է ազգագրագէտ Լիլիթ Սիմոնեանն իր *Հաւքն իր թելով, օձն իր պորպոով* գրքում (ԵՊՀ հրատ., Երեւան, 2011, էջ 91):

«կարկաչա» կոչուող փայտէ աղմկարար կոթաւոր տուփիկը չխկչխկացնելով եւ անձրեւի ձայնին նմանակելով, երգում էին. «Կարկաչա, կարինկաչա, // Սեւ եզան սեւ սամաթեռ, // Կարմիր եզան օղն ու կոճակ»⁴⁹: Սամաթեռը սայլին ամրացուած այն օղակն է, որով խեղդելու աստիճան պինդ ձգում էին չենթարկուող եզան, տուեալ դէպքում՝ Սեւ եզան վիզը՝ նրան զսպելու նպատակով: Դրա փոխարէն Կարմիր եզին, ըստ երեւոյթին, կոճակով օղ են խոստացել, այսինքն՝ թոյլ, նեղութիւն չտուող օղակ: Կարմիր եզը նոյն Բոր (Կարմիր) եզն է, որը Մեծ Պահքի ընթացքում - ինչպէս տեսանք - իր առատութեան եղջիւրներով սնուցում, զօրացնում է Մեծ Պահքի փոսի մէջ գտնուող գարնան Արեւին եւ ապա Պահքի վերջում զոհ է գնում Վիշապին՝ իր մահով հաստատելով ճմռան ամառն ու գարնան վերջնական յաղթանակը ցրտերի նկատմամբ: Այսինքն՝ Յոլ համաստեղութիւնը, որն աշնանից սկսած, ամբողջ ճմռռուայ ընթացքում հորիզոնի վրայ էր, այժմ գարնան գալստեամբ, իր տեղը զիջում է Օձ համաստեղութեանը, որն այս անգամ ինքը գարնանամուտից մինչեւ խոր աշուն հորիզոնի վրայ պէտք է գտնուի:

Սեւ եզան կերպարը կատարեալ կերպով պահպանել է «Սասնայ Ծռեր» դիւցազնավէպը: Այստեղ նրան հեծնում է Սպիտակ դելը եւ աշխարհով մէկ պտտուելով, ւերածութիւններ է գործում, գերի է տանում կոյս Արմաղանին, երբ վերջինս զբօսնում է «խաս բաղջ»ում⁵⁰, այնպէս, ինչպէս յունական դիցաբանութեան մէջ անդրաշխարհի տիրակալ Հադէսն է յանկարծակի առեւանգում ծաղկունքի դիցուհի Պերսեփոնէ-Կորային, երբ սա իր ընկերուհիների հետ զբօսնում էր Նիսիական ծաղկուն հովտում⁵¹: Պերսեփոնէի վերադարձը հանդերձեալ աշխարհից գարնան վերադարձն էր խորհրդանշում, իսկ հայկական դիւցազնավէպում Արմաղանին վերադարձնելու համար Սեւ եզի եւ Սպիտակ դելի դէմ կռուի է դուրս գալիս Մեծ Միեր (Միիր) Արեւը: «*Ժամանակը գարուն էր,-* ասում է էպոսը,- *Սար հազար ծաղկունքով, ւելուկով լեցուն էր*»: Միերը նախ մի ճահճուտ վայրում գտնում է Սեւ եզին եւ թուրը փորն է խրում, ապա կռուի է բռնում Սպիտակ դելի հետ, որի մարմինը խմորի նման է: Միերը, երբ ձեռքը զցում է՝ խոր խրում է դելի մարմնի մէջ, սակայն իվերջոյ նրան էլ է սպանում⁵²: Այդպէս Արեւը յաղթում է շուրջը սպիտակ, փխրուն, խմորի նման փափուկ ձիւնով ծածկող ճմռանը, որը Միրջա էլիադէի յայտնի տեսութեան՝ տարեվերջեան քայքայուող Տիեզերքն է: Նրա մահով վերածնում է նոր տարին, տուեալ դէպքում՝ գարնանային տարեմուտը:

⁴⁹ Արտակ արքեպիսկոպոս Մանուկեան, *Հայ եկեղեցու փոփոխութիւնները*, Թեհրան, 1999, էջ 110:

⁵⁰ *Սասունցի Դաւիթ*, էջ 108-10, 112:

⁵¹ *Гомеровы гимны, К Деметре*, (в кн. *Эллинские поэты*), (Հոմերական հիմներ, V, Դեմետրային, 10 («*Հելլենական բանաստեղծներ գրքում*)), «Գեղարուեստական գրականութիւն» հրատ., Մոսկուա 1963:

⁵² *Սասունցի Դաւիթ*, էջ 110-13:

«Սասնայ Շոեր»ում նոյն կերպ Մեծ Մհերի որդի Սասունցի Դաւիթն է, որպէս Արեւ, նախ գարնան առաջին 40 ցուրտ օրերի նշանակ 40 գազանոց հորում յայտնուում, ապա հորից դուրս գալով, մարտի է գնում իր ակոյեան Մարայ Մելիքի դէմ, որն էպոսում բացայայտօրէն ցլային յատկանիշերով է նկարագրուում. Մելիքը քնած է վրանում, բերանից շոգեւք է դուրս գալիս (ինչպէս ցլի բերանից՝ ցուրտ եղանակին), 7 ամուրի աղջիկ նրա վրայից ճանճերն են քշում (ինչպէս ճանճերն իրականում էլ ցլի անբաժան ուղեկիցներն են): Երբ Մելիքն արթնանում, տեսնում է Դաւիթին, փշում է, որ թոցնի, բայց երբ Դաւիթն իր տեղում կանգնած է մնում, «մօտէն քառսուն գոմշի ուժ է պակասում»⁵³: Մելիքը թաքնուում է հորում (հորիզոնից իջնում է գետնի տակ) եւ վրան 40 գոմէշի կաշի է քաշում, երբ Դաւիթն իր վերջին, վճռական հարուածը պէտք է հասցնի նրան⁵⁴: Մելիքը նոյնիսկ գոյթանի «գնճիկ» ունի, որով կալանում է Դաւիթին, սակայն Դաւիթը կտրում է դա⁵⁵: Հայկական դիւցազնավէպը ճշգրտօրէն տեղորոշել է նաեւ Մարայ Մելիքի դիրքն աստղային երկնքում. նրա ճանճերը քշող եօթ ամուրի աղջիկները Յուլ համաստեղութեան աստղակուտակ Բազումքի 7 աստղերն են, որոնք աստղաբաշխութեան մէջ յունական դիցաբանութեան տիտան Ատլանտի 7 դուստրերն են: Յունաստանում նրանց ծագելն անձրեւների շրջանն էր ազդարարում⁵⁶: Հայկական դիւցազնավէպում անձրեւը յաջորդում է Մելիքի սպանութեանը, ինչն արտայայտուած է նրա մօր՝ Իսմիլ Խաթունի երազում. «Մըսրայ էրկիր ամպ էր, մուփն էր, // Մըժ էր, անձրեւ կը գար: // Հեղեղ կայնաւ. Հեղեղի ջուր դառաւ արուն, // ու ջանդաքներ մէջ կը տանէր»⁵⁷: Այսինքն՝ ստացում է այնպէս, որ ինչպէս Վիշապի, այնպէս էլ Սեւ եզան սպանութիւնը՝ Արեւի դէմ կռուելով, հորիզոնից նրա անհետանալն անհրաժեշտ պայման է, որպէսզի սկսուեն գարնանային կենարար անձրեւներն ու դրանց հետեանքով առաջացող սելաւ-հեղեղները, եւ սեւ հողն առանձնանայ սպիտակ ձիւնից:

ՎԻՇԱՊԻ ԵՒ ՅԼԻ ՄԱՐՄՆԱԿԱԶՄԱԿԱՆ ԽԱՌՆՈՒՐԴԸ

Վերետում շարադրուած Տարոսի եւ Զագրոշի մասին ժողովրդական անանգարոյցը Տարոսին, չնայած նրա անուան ցուլ բացատրութեանը, նոյնպէս վիշապ է ներկայացնում, իսկ վիշապ Զագրոշին՝ եղջրակիր: Տպաւորութիւնն այնպիսին է, որ ժողովրդական մտածողութիւնը երկուսին էլ ցլավիշապի մարմնակազմական խառնուրդով է պատկերացրել: Ճիշտ այդպէս արեւելեան սլաւոններն իրենց Ամպրոպի աստծո՝ Պերուն-Պերկունասի

⁵³ Նոյն, էջ 263-37:

⁵⁴ Նոյն, էջ 245:

⁵⁵ *Սասնայ Շոեր, հպր. Բ, II մաս*, «Հայպետհրատ», Երեւան, 1951, էջ 220:

⁵⁶ Библейская энциклопедия архимандрита Никифора, («Плеяды»), Типография А. И. Снегирёвой, Москвa 1891 – 1892.

⁵⁷ *Սասունցի Դաւիթ*, էջ 219:

հակառակորդ Վելէս օձին էին ցույի եղջիրներով պատկերում⁵⁸: Ճիշտ այդպէս է «Սասնայ Ծոեր» դիցազնավէպում սարի գլխին նստած վիշապը նկարագրում՝ «մէկ գոմշի չափ բարձր, հինգ գոմշի չափ էրկէն» (տես վերետում): Նախիջեանցիները նոյնպէս պատմել են, որ Օծասար լեռան վրայ եղջրակիր վիշապ թագաւոր է ապրում, որն իր հպատակների հետ իջնում, աղբիւրից ջուր է խմում⁵⁹: Նոյնպիսի մի օձ ապրելիս է եղել Վարանդայի Քառասնի գիւղի մօտ գտնուող բարձր ժայռի վրայ եւ ոսկէ եղջիրներ է ունեցել⁶⁰: Համշէնահայերը ե՛ւ հաւատացել են եղջրաւոր օձի գոյութեանը ե՛ւ նոյնիսկ նրա եղջիրն են ցոյց տուել՝ «փոքրիկ, սուրուլիկ, մի քիչ ծակուած ոսկոր՝ սեւագոյն ու դրսից պլպլուն»⁶¹: Տպաւորիչ է յատկապէս Մշոյ Առաքելոց եկեղեցու դռան (1134, Հայաստանի պատմութեան թանգարան) ձախ կողմում պատկերուած կենդանիների շարքում երկու իրար յաջորդող ցուլերից մէկի պատկերը, որի պոչը վիշապ է: ԺԵ. դարի մի վիշապագորգում, որը Բեռլինի իսլամական արուեստի թանգարանում է պահուում եւ ներկայացւում է իբրեւ անատոլիական մահմեդական մշակոյթի նմուշ, պարզ երեւում է, որ տեղական վաղնջական վիշապի եւ ցլի ոճաւորուած մարմնակազմական միասնութիւնն է պատկերուած: Բակտրիական մի կնիքում էլ յստակ երեւում է ցլի եւ վիշապի մարմնակազմական խառնուրդը⁶²:



Մշոյ Առաքելոց եկեղեցու դռան մանրամաս

Անկախ այն հանգամանքից, որ ցուլի պոչն իրականում էլ օձանման է, Օծավիշապի մարմնակազմական խառնուրդի մասին նմանօրինակ պատկերացման հիմքը Խոյի դարաշրջանում աստղային երկնքի Օձի եւ Յլի փոխադարձ «ճնունդով» եւ «մահով» է պայմանաւորուած (մէկի մահը միւսի

⁵⁸ О. Диксон, П. Гросс, *Тайны древних наук* (Հնագոյն գիտութիւնների գաղտնիքները), изд. «Рипол классик», Մոսկուա 2001, էջ 18:

⁵⁹ Ե. Լալայեան, *Ջաւախքի բուրմունք*, տպ. Մ. Դ. Ռուսուինեանց, Թիֆլիս, 1892, էջ 45-46:

⁶⁰ Ե. Լալայեան, *Երկեր, հփր. II*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1988, էջ 171:

⁶¹ Յ. Մուրադեան, *Համշէնցի հայեր*, տպ. Կ. Մարտիրոսեանց, Թիֆլիս 1901, էջ 93:

⁶² Sarianidi, էջ 22:



ԺԵ. դարի մի վիշապագորգ

ծննդեան պատճառն է եւ՝ հակա-
նակը): Ինչպէս տեսանք, նրանք
տարուայ 2 կէսերի՝ գարնան (ամ-
նան) եւ աշնան (ծմռան) մունետիկ-
ներն են: Տարուայ 12 ամիսներից
ճում, գարնանից սկսած (ներառեալ
ամառը), հորիզոնից վեր է գտնուում
Օձ համաստեղութիւնը, իսկ այդ ըն-
թացքում Յուլը չի երեւում: Յաջորդ
6 ամսում, աշնանից սկսած (նե-
րառեալ ձմեռը), Յուլն է երեւում,
իսկ օձն անտեսանելի է⁶³:

Առասպելաբանաստեղծական
մտածողութեամբ, երկուսն էլ թէ-
պէտ միմեանց նկատմամբ հակա-
մարտութեան մէջ են, այնուամե-
նայնիւ տարուայ բոլորապտոյտի 2
տարբեր անքակտելի, բաղկացու-
ցիչ մասերն են՝ ամառուայ եւ ձմեռ-
ուայ խորհրդանիշերը, ինչպէս ժո-
ղովորդն այժմ էլ տարին 2 կէսից է
(ամառ - ձմեռ) բաղկացած համա-
րում: Այդ պատճառով էլ Վիշապը
եւ Յուլը հակադրամիասնականու-
թեան մէջ են դիտարկուել, որպէս

մէկը միւսի մարմնակազմական շարունակութիւն:

Վիշապն, ուրեմն, նոյնինքն Յուլն է, բայց այդքանով միայն չի սահմա-
նափակուում Վիշապի կենդանական բազմորդութիւնը: Հայ հին հեթանո-
սական հաւատալիքները քննադատող Կողբացին վիշապներ էր անուա-
նում հսկայ ձկներին⁶⁴: Հայկական մի ասանդագրոյցի համաձայն, այդպիսի
մի Վիշապ է ովկիանոսում ապրող Լեւիաթանը, որի գլխին աշխարհի այս
ու այն կողմում փայլիլող ադամանդ քար կայ: Իր սեփական պոչը որպէս
թշնամի է ընդունում եւ ուզում է կծել, բայց չի կարողանում: Եթէ մի օր այդ
բանը նրան յաջողով՝ աշխարհը կը կործանուի: Լեւիաթանի գլխի աղա-

⁶³ Յաջորդ կիսամեակներում 2 համաստեղութիւնների այս դրափոխութիւնը տար-
ուայ նոյն եղանակներում կարող է կրկնուել մէկ դարաշրջանի (էոնի) ընթացքում՝
շուրջ 2160 տարի, քանի որ աղքան է Կենդանաշրջանի մէկ համաստեղութեան
մէջ մնում գարնանային օրահաւասարի կէտը՝ ըստ առաջընթացութեան երեւոյթի:
Այս մասին տե՛ս՝ Ի. Ա. Климишин, *Календарь и хронология* (Օրացոյց եւ ժամանա-
կագրութիւն), изд. «Наука», Մոսկուա 1985, էջ 25-26:

⁶⁴ Կողբացի, էջ I, ԻԵ:

մանդն այս ասանդագրոյցում, իհարկէ, աստղ է, իսկ ինքը՝ երկնքի Հիւսիսային կիսագնդում գտնուող Օձ համաստեղութիւնը:



Բակտրիական կնիքի ցույն ու վիշապը

Յաջորդ ասանդագրոյցը Լեւիաթանին Լեկէոն ձուկ է անուանում, որը Ղաֆար Ղոջա անունը կրող առասպելական սարի շուրջ 6 ամսում մէկ պտոյտ է կատարում: Ապա քաղցում է: Երախը բացում է, ինչքան, որ պէտք է, ջուր է կուլ տալիս եւ փչում է դէպի սարի գագաթը: Ջուրը հեղեղի նման սարից իջնում է ներքեւ եւ ճանապարհին սրբում, տանում է ամէն ինչ՝ բուսականութիւն, գազաններ, որոնք գալիս եւ հեղեղի հետ նրա փորն են լցում⁶⁵: Պարզ է, որ Լեկէոնի երախում հաւաքուած, ապա արտանետուած այդ ջրերը գարնան անձրեւների եւ սելանների փոխաբերութիւնն են, իսկ սարը, որի շուրջ

Լեւիաթան-Լեկէոն Օձ համաստեղութիւնը պտտում է 6 ամսում, սարի տեսք ունեցող կամարածե երկինքն է, որտեղ գարնանը յայտնուելով, նա 6 ամիս երեւում, այնուհետեւ կորչում է «գետնի տակ»: Աշնանը նրան հերթափոխելու եկած Յուլ համաստեղութիւնն այս անգամ ինքն է ամբողջ ձմռան ընթացքում իր փորի մէջ հաւաքում երկնային եւ երկրային ջրերը (երկնքում անձրեւը վերածում է ձեան, իսկ երկրի վրայ սառեցնում է լեռնային աղբիւրների ակունքները):

Երկնային եւ երկրային ջրերը խմած Յուլի ուռած, փքուած պատկերը կարելի է տեսնել Վանի թագաւորութեան պեղածոյ իրերի շարքում: Գտնուել են կլորաւուն կաթսաներ, սկահակներ, որոնց ցլի զլուխներ են ամրակցուած: Վանից գտնուած այդպիսի կաթսաներից մէկը դրուել է եռոտանու վրայ, որի ոտքերը ցլի կճղակներ ունեն⁶⁶: Նոյն այդ Յուլը պատկերուած է նաեւ Հայկական Լեռնաշխարհին բնորոշ Վիշապ կոչուող քարակոթողներին, որոնք քառակող սեղանատիպ տեսք ունեն կամ ձկնակերպ են եւ բարձր լեռնային գոգաւորութիւններում, մեծ մասամբ ջրային աւազանների մօտ են յայտնաբերուած: Կարելի է ասել, որ սեղանատիպ վիշապաքարերի դէմքը քարի վերին մասում պատկերուած գոհաբերուած Յլի զլուխն է, որի վերջոյթներն առանձին են ցուցադրուած: Որոշ ցլերի բերանից արտայայտիչ կերպով ջրի հզօր շիթեր են թափում՝ գարնան սելանների ու անձրեւների հոսքն այն բանից յետոյ, երբ Յուլ համաստեղութեանը «սպանում է» կամ

⁶⁵ Ղանալանեան, էջ 129-30:

⁶⁶ B. B. Piotrovskii, *The Kingdom of Van and Its Art*, published by Frederick A. Praeger, New York-Washington 1967, էջ 39-40, 76-77, fig. 26, 56, pl. 26:

Արեւը կամ Վիշապը: Սալաքարի միջնամասում երբեմն 2 զուգաչափ դիմահայեաց գարնանաբեր կոունկների կամ արագիլների պատկերներ են դրոշմուած՝ երկուորեակներ համաստեղութեան խորհրդանիշը, որտեղ գարնան Գ. ամսին մուտք է գործում Արեւը Բ. ամսուայ նշանակ Յուլ համաստեղութեանը «տապալելուց», «գետնի տակ» իջեցնելուց յետոյ: Ձկնակերպ վիշապների վրայ արուած փորագրումները կամ խիստ սահմանափակ են, կամ էլ իսպառ բացակայում են: Ակնյայտ է, որ ժողովուրդը Վիշապի եւ Յիլ մարմնակազմական խառնուրդը ցոյց տալու համար չի բաարարուել միայն սալաքարի վրայ Յուլ քանդակելով եւ այդ սալաքարը «Վիշապ» կոչելով: Որպէսզի ցոյց տայ նաեւ, որ ամռան (գարնան) եւ ձմռան (աշնան) յարափոփոխ ընթացքի 2 ազդարարները՝ Վիշապը եւ Յուլը ոչ միայն երկնային եւ երկրային ոլորտների, այլեւ եռամաս Տիեզերքի երրորդ հատուածի՝ ստորերկրայքի տիրակալներն են, ստեղծել է Յլավիշապից ածանցուած երրորդ կենդանու կոթողը ձկան պատկերով, իբրեւ ծովերի՝ հանդերձեալ աշխարհի ներկայացուցիչ: Այդ է պատճառը, որ վիշապները նաեւ դամբարանային միջավայրում են յայտնաբերում⁶⁷: Յիլ, ձկան եւ վիշապի մասին բոլոր այս պատկերացումները հիմք են տալիս վիշապաքարերին «Յլավիշապածուկ» անուանել, ինչը, չնայած իր երկարահնչութեանը, աւելի ստոյգ է արտայայտում այս յաղթակոթողներից իւրաքանչիւրի տոմարական բովանդակութիւնը:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Ամփոփելով ասենք, որ բերուած նիւթը ցոյց է տալիս, թէ վաղ քաղաքակրթութեան արշալոյսից սկսած, մինչեւ նոր ժամանակներ որքան առանցքային նշանակութիւն է ունեցել աստղային երկինքը մեր նախնիների առօրեայում: Նոր քարի դարում մարդը նստակեաց երկրագործ դառնալով, եղանակային օրինաչափութիւնները հասկանալու, տոմար ունենալու անհրաժեշտութիւն է ունեցել: Առանց տոմարի, հնարատր չէր ո՛չ տնտեսական, ո՛չ էլ հոգեւոր կեանք կազմակերպել, իսկ առանց աստղային երկնքի շարժմանը հետեւելու հնարատր չէր տոմար ունենալ: Այլ կայուն ցուցիչներ բնութեան մէջ կարելի է համարել, թերեւս, կենդանիների վարքը՝ նրանց զուգատրման ծնի, չուելու, վերադառնալու, թաքստոցները մտնելու-դուրս գալու ամիսները: Բայց դա այլ թեմա է, որին հարկ է առանձին ուսումնասիրութիւններով անդրադառնալ: Այստեղ անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ հների աշխարհայեացքը բացատրելիս, նրանց աստղագիտական ընկալումներին առաջնային տեղ չյատկացնելը նշանակում է գլխատր նիւթի ա-

⁶⁷ Աշոտ Փիլիպոսեան, Ռուզան Մկրտչեան, Յասմիկ Սիմոնեան, Արտաազդ Զաքեան, Արսէն Բոթիսեան, «Լճաշէնի "Վիշապի" դամբարանը. նորայայտ կենսափաստեր», *Վիշապը հեքիաթի եւ իրականութեան սահմանին*, Երեւան, 2019, Հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտի հրատ., էջ 573-74:

ծանցեալ դրսեւորումները բացատրել միայն: Նստակեաց երկրագործի համար գլխատրն աստղային երկնքի լուսատուներն են եղել եւ դրանց տեղաշարժերի ուսումնասիրութիւնը, ինչի արդիւնքում են առաջացել հին աշխարհի դիցաբանական պատկերացումները, ինչպէս նաեւ արուեստն ու ճարտարապետութիւնը: Մենք այստեղ միքանի դրուագ քննարկեցինք միայն հնէրի աստղագիտական-տոմարական պատկերացումներից: Այլ օրինակներ ամենուրեք կարելի է նկատել:

THE CONSTELLATION CODES OF THE OX AND THE SERPENT
IN OLD ARMENIAN PERCEPTION DURING DIFFERENT SEASONS
(SUMMARY)

GAGIK MARTOYAN
martoyangagik474@gmail.co

Basing their work on Balto-Slavic Bilin epic tales, prominent Russian philologists V.V. Ivanov and V.VI. Toporov reconstructed the myth of the duel between the bull-shaped God of Thunder and the Serpent. In the battle the Serpent is defeated and disappears into underground waters. Ivanov and Toporov claim that in Middle Eastern versions of this myth, the winner may be the Serpent. Besides, the Sun may also prevail over the Serpent.

Armenian beliefs have preserved two types of snake images. One of them is the horned Zagrosh, which is defeated by the bull Tavros. In the other version, the Snake fights the Ox and eats it. Armenian beliefs have two types of oxen: Black and Red. During the spring of the Palm Sunday holiday, in the Armenian tradition Black Ox is promised a rope around its neck that will choke it, while the Red Ox is promised a rope with a button. In the epic poem of *Daredevils of Sasun*, the White devil (symbol of winter), sits on the Black Ox and, moving around the world, ruins it. The Elder Mher (Mithra, the sun) kills them both, thereby driving away winter and bringing the spring and the New Year.

At the same time, the Serpent also takes part in the victory over the ox. In the universe they are embodied in the constellations of the Taurus and the Serpent. In spring, when the Sun leaves Taurus, the latter disappears below the horizon. At the same time, the Snake appears on the horizon. Thus, while simultaneously “killing” Taurus, both the Sun and the Snake bring the long-awaited spring. During this period, the Snake is perceived as a good beginning, but during summer it is perceived as harmful. In the middle of summer, the snake is in its culminating position in the sky and blocks the paths of heavenly waters (rains), generating heat and drought. During autumn, when the Sun enters and leaves the constellation of the Serpent, the latter disappears below the horizon. One gets the impression that in the autumn both the Sun and Taurus simultaneously triumph over the Snake. Thus, Taurus and the Snake remain above the horizon in turn for 6 months, thereby becoming the harbingers of spring (Snake) and winter (Taurus).

Popular beliefs considered large fish to be snakes, naming one of them Leviathan and the other Legeon. Legeon revolves around Mount Ghafar - Ghoja (the

personification of the domed, mountain-like sky) for 6 months and brings with it spring and autumn showers and floods.

This series of weather changes is depicted on the stone stellae (Vishap) which have a sacrificed bull carved on them. From its mouth spring waters flow strongly. Below the carving of the bull, sometimes silhouettes of spring birds, of storks and cranes, can be seen. They both symbolize the Gemini constellation, into which the Sun enters in the spring, after killing the Taurus and gaining the final victory over winter.

In the mountains Vishaps also look like huge stone fish, which are derived from the image of the Serpent.

MISATTRIBUTIONS OF ARMENIAN *MAFRASHES* AND THE MYTH OF THE SHAHSEVAN PILE RUG

ARTO TAVUKCIYAN
arto@armenianrugs.com

INTRODUCTION

In the 1970s a great many flat-weaves, *mafrashes* (bedding boxes), *khordjins* (saddlebags) and salt bags suddenly appeared on the rug market. Scholars and dealers were befuddled and sought a logical attribution. The Shahsevan, a collection of tribal groups of nomadic pastoralists in the region who regularly migrated to and from the Mughan plains and Ardabil, were thought to be the likely suspects. Armenians, a people with a long weaving history who also lived in the region, were ignored. Since Armenians were a settled people, rug scholars and dealers believed they did not weave or have a need for transportable flat-weaves. Flat-weaves and rugs having common motifs, the pile rugs were automatically attributed to the Shahsevan.

In this article I will demonstrate that many of the flat-weaves and pile rugs attributed to the Shahsevan were actually woven by Armenians.

"Shahsevan" means "those who love the shah" in Turkic. The Shasevans were a collection of tribal groups brought together in a confederacy sometime between the 16th and the 18th centuries. Most discussions of the term Shahsevan refer to its original meaning as extreme personal loyalty and religious devotion to the Safavid kings.¹ Until the early 20th century, the Shahsevan had a tribal and pastoral nomadic lifestyle, moving during summer 100–200 km. to the south on the Sabalan and nearby ranges, in the districts of Ardabil, Meshginshahr, and Sarab, and during the winter to the Mughan region. They were a minority in this area, but like the settled majority (whom the Shahsevan call "Tat"), they were Shia Muslims and spoke Azerbaijani.²

The **Mughan plain**, where they migrated to with their herds in winter, is an extremely fertile stretch of land, stretching presently from northwestern Iran to the southern part of the Republic of Azerbaijan. It is located on the bank of the Aras (Arax) River, extending to Iran. Just north of the Mughan plain are the Armenian historic provinces of Siunik and Artsakh.

¹ The Safavid dynasty ruled Iran between 1501 and 1736.

² Richard Tapper, "Shahsevan", <https://www.iranicaonline.org/articles/shahsevan> 2010.



Mughan Plains and their location on the southern banks of the Araxes river

As a side note, up to the 7th-century, the Mughan Plains were part of greater Armenia and were called Paytarakan. Located on the right bank of the Arax River, the plain was separated from the Armenian provinces of Artsakh, Siunik and Utik to the north, although some authors argue that it included territory on the left bank of the Arax as well.³ It was separated from Aderbadagan, the northwestern province in the Sasanid Empire, and almost corresponded to present-day Iranian Azerbaijan. On its south were the Karadagh and Talysh mountains, and it bordered the Caspian Sea to the east.⁴ It is believed to have encompassed the greater part of the Mughan Plain and the Lenkoran Lowlands.⁵

THE SHAHSEVAN MISATTRIBUTION OF ARMENIAN *MAFRASHES*

First let us examine the *mafrashes* since they have design characteristics common to many pile rugs and have never been attributed to Armenians. *Mafrashes*, which are rectangular bedding bags, or “boxes”, used for storing and transporting bedding and other personal possessions, were often woven by the *soumak* or kilim technique.

In spite of the great importance experts paid to the *mafrashes*, certain stereotypes (that *mafrashes* were woven only by nomads and not by sedentary peoples) prevented the thorough clarification of their significance.

³ Babken Harutyunyan, "P'aytakaran". In Hambardzumyan, Viktor (ed.). (in Armenian). Vol. 12. Yerevan 1986, pp. 301–2.

⁴ Tadevos Hakobyan, Stepan Melik-Bakhshyan, Hovhannes Barseghyan, "P'aytakaran" (in Armenian). Vol. 5. Yerevan State University Press, Yerevan 2001, pp. 229–30.

⁵ Harutyunyan, pp. 301–2.

Generally, they were attributed only to nomadic tribes and their lifestyle. The fact that *mafrashes* were used by nomads due to their frequent movements led observers to conclude they were woven and used only by nomads.



Mafrashes from Yeghegnadzor and Tavush regions, Armenia, late-19th century
(Nooter, *Flat Woven rugs and Textiles from the Caucasus*, pp. 156, 174)

This conclusion, however, ignored several facts, including the following:

a) Frequent movements were typical not only of nomadic tribes, but also of the settled Armenians, as Armenians engaged not only in agriculture, but in cattle breeding as well. This necessitated moving the cattle from winter to summer pastures as the nomadic tribes did.

մեկնում Փարիզ, ուր մնում է 5 տարի, յաճախում հայկական հին երգերի գործնական դասերին, դրան զուգահեռ՝ Սորբոնի համալսարանի Կինեմատոգրաֆի բաժինը, ստանում «մշակութային միջոցառումների կազմակերպում» մասնագիտությունը: 18 տարեկան հասակում արժանանում է Սելին Դիոն մրցանակին: Հինգ տարուց ավելի համերգերով ելոյթներ է ունենում լիբանահայ դաշնակահար Գի Մանուկեանի հետ: 19 տարեկանում ձայնագրում է իր առաջին երգը (Լամմա) արաբական ջազ ոճով. Դուբայ տեղափոխությունը՝ աշխատում է իր առաջին ձայնասկալառակի՝ «Միտան»ի (Իմ տուն) վրայ, որն ասարտին է հասնում 2008ին: Այն 2009ի «Armenian Music Awards» մրցանակաբաշխութեան շահեց «Լաւագոյն ողբ-ալբոմ» մրցանակը: 2020ին Բէյրութի նաւահանգստի պայթիւնից⁴² տուժածներին օգնելու համար կազմակերպուած առցանց համերգին Այլինը եւս իր մասնակցութիւնն ունեցաւ⁴³:

Միտանը նրա երկրորդ ալբոմն է, լոյս է տեսել 2008ին: Ձայնագրուել է Դուբայում: Սկաւառակում տեղ են գտել ոռկ-երաժշտութեամբ կատարած յայտնի հայկական ժողովրդական երգեր: Ալբոմի երգացանկում ընդգրկուել են Գարուն ա, Քարաւան, Նուբար, Տլէ եաման, Քէլէ քէլէ, Սարի սիրուն եար, Առաւօտ, Ջարթիր որդեակ, Օրօր երգերը: Ըստ էութեան, Այլինը վերարտադրում է հայկական ժողովրդական երգերը ողբ մեկնաբանութեամբ՝ դրանց հաղորդելով նոր շունչ:



Ռուսահայ ողբ երաժիշկուներ

Պիկասսոյի զաւակները/Дети Пикассо. խումբը ստեղծուել է 1997ին՝ ողբի եւ ֆոլկ երաժշտութեան ոլորտում փորձերի արդիւնքում՝ Գայա եւ Կարէն Յարութիւնեանների կողմից: 2002ին խումբը ելոյթ ունեցաւ «Սիրին» կանացի երգի փառատօնում ու «Нашествие» («Գրոհում») ողբ փառատօնում եւ հեռարձակուեց «Наше радио»ի (Մեր ռադիօ) եթերով: *FUZZ* ամսագրի մրցանակաբաշխութեան ժամանակ խումբը ճանաչուել է իբրեւ «2002ի լաւագոյն նոր խումբ»: 2000ականների ընթացքում խումբը ձայնագրել է միքանի ալբոմներ տարբեր ոճերում՝ ռուսերէն եւ հայերէն: 2007ին խումբը մշտական բնակութեան նպատակով Մոսկուայից տեղա-

⁴² Տե՛ս՝ <https://www.azatutyun.am/a/30767529.html>

⁴³ Տե՛ս՝ <https://hyetert.org/2020/09/18/%D6%84%D5%A5%D5%A6%D5%AB-%D5%B0%D5%A1%D5%B4%D5%A1%D6%80-%D5%BA%D5%A7%D5%B5%D6%80%D5%B8%D6%82%D5%A9/> :



փոխուեց Բուդապեշտ, որտեղ ստեղծագործում են նորովի, ինչի արդիւնքում "Picasso Children"ը վերածուել է ժամանակակից արեւելաեւրոպական երաժշտութեան հզօր ոճի կրող, որը պահանջուած է աշխարհի շատ երկրներում: Այնտեղ նրանք թողարկեցին միքանի ալբոմներ: *«Ժամանակակից ընդլայնակեայ մշակոյթը մեր իսկական ժամանակակից արուեստն է, որը կայ այսպէր եւ հիմա: Պետրութիւնը աջակցում է բառացի իմաստով՝ ոչ խօսքով, ոչ էլ յանուն ինչ-որ ձեւականութեան»*, - ասել է Գայիան⁴⁴:

Եւրի Կասպարեան

1980ականներին "Կինօ" խմբի կիթարահար էր: 1983ին խմբի հիմնադիր եւ մենակատար Վիկտոր Յոյը Կասպարեանին հրաւիրեց խումբ, իսկ միքանի տարի անց Եւրին դարձաւ խմբի երաժշտական առաջատարը: Ըստ Յոյի կենսագրի՝ *«Հենց Եւրիի ինքնարիպ նուագը մեծ մասամբ բնորոշեց 80ականների վերջի դասական «Կինոյի» դէմքը, ու ինչպէս եւ ինքը՝ Կասպարեանը, դարձաւ խմբի երաժշտական ոճի մարմնացումը: ... Կասպարեանը հիմա էլ համարում է Ռուսաստանի լաւագոյն կիթարահարներից մէկը ու, թերեւս, ա-*



⁴⁴ Հարցազրոյցը տես՝ <https://www.yerkramas.org/article/10042/deti-Picasso-s-armyanskogo-na-russkij> :

մենաճանաչելին»⁴⁵: 1990ականներին սկսեց ծայնագրել *ինտելեկտուալ*, առաջադեմ երաժշտություն⁴⁶: Նա այժմ էլ գործակցում է ռուսաստանեան ռոք երաժիշտների հետ:

Սրաս Նամին (Անաստաս Ալեքսեյի Միկոյեան)

Հայրը՝ Ալեքսեյ Անաստասի Միկոյեանը, ռազմական օդաչու էր: Մայրը՝ Նամի Արտեմի Միկոյեան (Յարութինովա), երաժիշտ, արուեստաբան, գրող: Հենց նրա անունն էր Ստասը վերցրել որպես ստեղծագործական ծածկանուն: Անաստաս Միկոյեանը (Ստաս Նամին) անուանակոչուել է 1923-76ի ԽՍՀՄ յայտնի քաղաքական գործիչ Անաստաս Իանի Միկոյեանի՝ հայրական պապի անունով: Պապի հարազատ եղբայրը՝



Արտիոմ Իանի Միկոյեանը, օդանավների յայտնի գիտաբար է, ՄԻԳ ինքնաթիռի ստեղծողը: Իսկ ինքը խորհրդային ռոք-մշակույթի հիմնադիրներից մեկն է, նաեւ առասպելական «Ծաղիկներ» խմբի հիմնադիրը, ով իր գրեթէ յիսունամեայ գործունեութեան ընթացքում վաճառել է ավելի քան 60 մլն. ծայնապնակ Խորհրդային Միութեան երկրների տարածքում, բազմաթիւ հանրաճանաչ («Ամառային երեկոյ», «Իսկապէս կարօտ», «Մենք ձեզ երջանկութիւն ենք ցանկանում» են.) երգերի հեղինակ: Կազմակերպել է Ռուսաստանում առաջին անկախ արտադրական SNC կենտրոնը, որտեղից դուրս են եկել ռուսական աստղերից շատերը, որոնցից մեկն էլ Նամինի ստեղծած «Gorky Park» խումբն էր: Երկրում առաջին պոպ եւ ռոք-փառատօների, այդ թւում՝ «Միասնական աշխարհ», «Ռոք Կրեմլից», 1989ին Լուժնիկիում կայացած Խաղաղութեան փառատօնի եւ այլ փառատօների կազմակերպիչն է: Ստեղծել է ծայնագրական ընկերութիւն, ռադիոկայան, հեռուստաընկերութիւն, համերգային գործակալութիւն, գեղարուեստական ձեւատրման գրասենեակ են., որոնք, կոտրելով պետութեան մենաշնորհը, դարձել են ռուսական *շոու-բիզնէսի* սկիզբը: Կազմակերպել է առաջին ոչ-

⁴⁵ Մանրամասն տես՝ Ա. Գրիգորեան «Վիկտոր Յոյ, Ծնորհակալութիւն, որ եկաք ու օգնեցիք Հայաստանին» <http://art-collage.com/post/Victor-Coy> :

⁴⁶ Ինտելեկտուալ երաժշտութիւն են անուանում այն ցանկացած երաժշտութիւնը, որը տանում է արտացոլման, մտորումների, ներհայեցման: Նման բնութագրերը կարող են լինել կառուցուածքային բարդութեան աստիճանը, ոչ-պարզ գաղափարների արտայայտումը, անսովոր ծայնային տեմբրերի օգտագործումը, յատուկ յուզական եւ տեղեկատուական բովանդակութիւնը:

պետական սիմֆոնիկ նուագախումբը եւ երկրում առաջին միզիքըլ թատրոնը: 1969ի վերջում, Վուդստոկի առասպելական փառատոնից տպաւորուած, նա ստեղծում է «Ծաղիկներ» նոր խումբը, որը յետագայում դառնում է ազգային (սովետական ապա ռուսական) առաջին խումբը եւ փաստօրէն երկրի գանգուածային մշակոյթում դնում է ռոք-շարժման սկիզբ:

2000ից իվեր Նամինը զբաղւում է անհատական գործունէութեամբ:

Որպէս թատերական բեմադրիչ ու արտադրիչ Նամինը իր 1999ին ստեղծած թատրոնում զբաղւում է ներկայացումների բեմադրութեամբ, որոնցից առաջիններն էին ամերիկեան հանրահոշակ «Hair»⁴⁷ միզիքըլը եւ «Jesus Christ Superstar» ռոք-օպերան. երկուսն էլ արդէն երկու տասնամեակ բեմահարթակից չեն իջնում: Նա հեղինակել է նաեւ փաստագրական ֆիլմեր, որոնցից ամենայայտնին է «Древние храмы Армении» (Հայաստանի հին վանքերը)⁴⁸:

2020ի Արցախեան պատերազմի ժամանակ նա աջակցել է հայ ժողովրդին, եւ նաեւ հանդէս եկել հրապարակային յայտարարութիւններով եւ հարցազրոյցներով⁴⁹:

Թուրքահայ ռոք երաժիշկներ

Եաշար Քուրթ⁵⁰. ծնուել է Ստամբուլում 1968ին, երաժշտութեանը ծանօթացել է տարրական դպրոցական տարիքից: Այս շրջանում նա իր ուսուցիչ Բեհրուզ Ֆիրուզմենտի խրախուսմամբ սկսել է երաժշտութիւն գրել իր խաղացած եւ բեմադրած թատերախաղերի համար:



Նրա նախնիներն ապրել են Վանի շրջանում՝ հայկական Անձեր գիւղում: 1915ին հայկական ջարդերի ժամանակ ամբողջ ընտանիքը կոտորուեց: Ողջ է մնացել միայն Իսմայիլ անունով ինը տարեկան տղան, ով ոտքով քայլել է Սեւ ծովի ափ, որտեղ նրան փրկել են բարի մարդիկ: Այս

⁴⁷ Hair.- միզիքըլը, որի երաժշտութիւնը գրել է Գալտ Մաքդերմոտը, բառերը՝ Ջէյմս Ռաթօն եւ Ջերոմ Ռանին: Առաջին բեմելը տեղի է ունեցել Նիւ Եորքում 1967 Հոկտեմբերի 17ին, ապա ցուցադրուել է Բրոդուեյում, Լոս Անջելըսում եւ Լոնդոնում: 1999 Նոյեմբերին Մոսկուայի էստրադային թատրոնում ցուցադրուեց ամերիկեան հեղինակային տարբերակը Ստաս Նամինի՝ Մոսկուայի թատրոնի, երաժշտութեան եւ դրամայի թատրոնի հետ համատեղ:

⁴⁸ Տե՛ս՝ <http://stasnamin.com/> :

⁴⁹ Տե՛ս՝ <https://www.armtimes.com/ru/article/199241> :

⁵⁰ Տե՛ս՝ <https://yasarkurt.com/> :

տղան Եաշարի նախապապն էր: Իր ընտանիքի պատմությունը նա իմացել է 40 տարեկանում եւ դա լեղաշրջող ազդեցություն է ունեցել նրա վրայ: Նա սկսեց սովորել հայոց լեզուն, կարդալ Հայաստանի պատմութեան մասին գրքեր: *«Բարձրաձայն յայտարարելով, որ ես այժմ հայ եմ, ես շարժանամիներ ձեռք բերեցի,- ասում է Եաշարը, ով դարձաւ Արշակ:- Նոյնիսկ նրանցից ոմանք, ում ես ընկերներ էի համարում, երես թեքեցին ինձանից: Մարդիկ կային, որ ասում էին. լաւ, քանի որ հայ ես, ուրեմն գնա Հայաստան: Ինձ համար դժուար է բացատրել, որ եթէ հայ եմ, ուրեմն այստեղ տանն եմ: Իմ նախնիների հայրենիքն այս երկրի մաս է դարձել ոչ իրենց կամքով: Բայց չնայած դրան, հայերն այնքան բան են արել այս երկրի համար, որ ես կարող եմ հանգիստ հպարտանալ իմ ծագմամբ»⁵¹:*

2011ին նա Հայաստանում աշխատել է Արտո Թունջբոյաջեանի եւ Armenian Navy Bandի հետ:

Հայկօ Զեփկին

Հայկօ Զեփկինը թուրքահայ ոռք երաժիշտ է, ով յայտնի է դարձել յարձակողապաշտ այլընտրանքային երաժշտութեան մէջ մեղեդային գոյներ հաղորդելու իր հմտութեամբ: Հայկօն աշխատում է այնպիսի ոճերում, ինչպիսիք են ոռքը, մետալը, անատոլիական ոռքը⁵²: Նա Ստամբուլի հայկական Կեդրոնական վարժարանի շրջանաարտ է, որտեղ շատ յայտնի հայեր են ուսանել, այդ թում՝ Միսաք Մեծարենցը, Հրաչեայ Աճառեանը եւ Արա Գիւլերը:

Զեփկինը իր երաժշտական գործունէութեան հետ կապուած բազմաթիւ միջոցառումներ կազմակերպել եւ ինքն էլ մասնակցել է: 2006ին, 2007ին եւ 2009ին մասնակցել է Rock'n Cokeին, իսկ 2007ին՝ է Rock Müzikallerին եւ Van için Rockին: Նա ստեղծել է Araf ֆիլմի հիմնական երաժշտութիւնը (Soundtrack), իսկ նրա «Son Kez» երգը Sakin Olmam Lazim ալբոմից նոյնպէս ներառուել է ֆիլմի երաժշտութիւններում:



⁵¹ Տե՛ս՝ <https://ok.ru/vsyaarmeni/topic/65183459120416> :

⁵² Անատոլիական ոռք (թրք.՝ Anadolu rock, անգլ.՝ Anatolian rock), թուրքական ժողովրդական երաժշտութեան եւ ոռքի միաձուլման արդիւնքում առաջացած երաժշտութեան ժանր: Սկիզբ է առել 1960ականներին այն բանից յետոյ, երբ արեւմտեան ոռք խմբերը՝ The Beatlesը, Rolling Stonesը, Led Zeppelinը, Yesը, Status Quoն եւ Omegaն, սկսեցին հանրամատչելի դառնալ Թուրքիայում:

Նրա իրայատուկ արտաքինը ճանաչելի է դարձրել Հայկոյին, թէև սկզբում բարդոյթների պատճառ էր: Նա շատ ինքնատիպ եւ կերպարային երաժիշտ է, ինչի շնորհիւ նաեւ նկարահանում է ֆիլմերում⁵³:

2018 Փետրուարին թուրքահայ մտատրականների հետ միասին միացել է Պոլսոյ պատրիարքի թեկնածուի ընտրութեան վերաբերեալ կոչին ⁵⁴:

Meluses

Համշէնահայ այս ոռք խումբը ստեղծուել է Ստամբուլում: Խումբը ներկայացնում է ֆոլկ-ռոք՝ համշէնահայերէն բարբառով: Ժամանակին նրանց «Գարմի» եւ «Խաղուլիկ» երգերը բաւականին աղմուկ բարձրացրին ունկնդիրների շրջանում: «Խաղուլիկ» բառը համշէնի խօսուածքում նշանակում է՝ շատ գեղեցիկ եւ խայտաբղէտ: Համշէնագէտ Սերգէյ Վարդանեանը⁵⁵ երգը գրական հայերէնի վերածելիս՝ օգտագործել է «խատուտիկ» բառը, որն այս պարագայում առաւել համահունչ է նաեւ երգի խօսքին:



Մելուսես՝ (մեր լոյսը) խմբի երգերի եւ երաժշտութեան հեղինակը մեծ մասամբ Մադրուֆ Քիբարն է: Նա ասում է, որ հենց այս առաքելութիւնն է ներդրուած խմբի էութեան եւ երաժշտական ոգու մէջ: *«Այս իմաստն ենք*

⁵³ Տե՛ս՝ <https://www.hurriyet.com.tr/kelebek/magazin/hayko-cepkin-hayata-eksi-1-ile-basladim-41705014> :

⁵⁴ Տե՛ս՝ <https://hetq.am/hy/article/85976> :

⁵⁵ 1980ականներից սկսած՝ Վարդանեանը զբաղում է համշէնահայերի բանահիւսութեամբ, բարբառի եւ երգարուեստի ուսումնասիրութեամբ, հրատարակել է բազմաթիւ յօդուածներ եւ բանահիւսական նիւթեր, որոնց մեծ մասը տպագրուել է իր իսկ կողմից հրատարակուող *Ձայն համշէնական* թերթում: 2009ին հրատարակել է նաեւ *Կրօնափոխ համշէնահայերի բարբառը, բանահիւսութիւնը եւ երգարուեստը* գիրքը:

տեսնում մեր երաժշտության մէջ եւ հենց սա էլ ուզում ենք փոխանցել մարդկանց,- ասում է նա,- «Մեր լոյսն» ասելիս՝ իրականում նկատի ունենք նաեւ այն, որ մեր երգերով կարող ենք բոլորի լոյսը լինել»⁵⁶:

Նրանք երգում են Համշէնի բարբառով, մասամբ՝ նաեւ թուրքերէն: Խմբի երգացանկում յաճախ են հնչում համշէնական ժողովրդական երգեր, ինչպէս Մադրուֆն է ասում՝ անանուն երգեր: «Մեծ մասամբ նոր գրուած երգեր են, բայց յաճախ, հիմնականում համերգերի ժամանակ, ներկայացնում ենք անանուն երգեր եւ մեղեդիներ: Թեմաները փարբեր են՝ աշխարհին վերաբերող ամէն ինչ, մինչեւ իսկ՝ աշխարհի վերջը,- ասում է Քիբարը,- երգում կամ նուագում ենք այնպէս, ինչպէս տեսնում ենք կեանքը, նայում աշխարհին: Սէր, բնութիւն, փորձութիւններ, կարօտ, երաժշտութեամբ պատմում ենք երբեմն էլ բաներ, որոնք խօսքերով չենք կարողանում պատմել»: Իսկ երաժշտական ոճի մասին թէեւ հենց խումբը ինքն իրեն չի բնորոշում որպէս ոռք, այնուամենայնիւ այն մոտ է ֆոլք ոռքին, ուստի մենք չենք կարող շրջանցել նրանց:

Համշէնահայերն իրենք ինքնութեան մասին խօսում են ամենատարբեր կերպով, մի մասն իրեն թուրք է համարում, մի մասը հայ, մի մասն առհասարակ հրաժարում է խօսել այդ մասին: «Դէ, թուրք չենք էլի, հօ սպիւպելով չի: Որովհետեւ փարբեր մի մշակոյթ, փարբեր մի լեզու, փարբեր մի ինքնութիւն կայ այստեղ: Ես սա թրքութեան մէջ չեմ կարողանում տեղաւորել, կը ներէք: Բայց միւս կողմից էլ՝ չնայած նոյն լեզուի կրողը լինելուն, հայկական ինքնութեան մէջ էլ ամբողջութեամբ չեմ կարողանում տեղաւորել համշէնականութիւնը»⁵⁷ ասում է «Վովա» ժողովրդական երգի խմբի մենակատարը: Համշէնահայերն իրենց ինքնութեան պահպանման համար կարեւորում են իրենց բարբառը, մշակոյթը, ծէսերը: Այնուամենայնիւ, երաժշտական գործունէութիւնը ամենայարմար եւ անվտանգ միջոցն է ինքնութեան դրսեւորման եւ պահպանման տեսակէտից, ուստի համշէնահայերն ունեն նաեւ ժողովրդական երգի խմբեր («Վովա», «Էնտու» են.):

Իսրայէլահայ ոռք երաժիշտներ Apo & the Apostles եւ Ալիօ Սահակեան

Ալիօ Սահակեանը փոփ-ոռք երաժիշտ է, ով ծնուել է Երուսաղէմի Հին քաղաքի հայկական թաղամասում: Նա ոռք երաժշտութիւնը մօտեցրել է փոփին՝ համադրելով նաեւ բլուզ եւ էթնիկ տարրերի հետ, աւելի ընկալելի

⁵⁶ Տե՛ս՝ <https://hetq.am/hy/article/78291> :

⁵⁷ Տե՛ս՝ <https://azator.gr/%D5%BE%D5%B8%D5%BE%D5%A1-%D5%AD%D5%B4%D5%A2%D5%AB-%D5%B4%D5%A5%D5%B6%D5%A1%D5%AF%D5%A1%D5%BF%D5%A1%D6%80%D5%A8/> :

դարձնելու եւ զանգուածայնացնելու համար: Նա Apo & the Apostles խմբի հիմնադիրն է, ով յայտնի է նաեւ անհատական գործունէութեամբ:



Միատրեւրով մասնակիցների բազմակողմանի փորձը՝ խումբը դարձաւ երաժշտական ոճի առաջամարտիկ, որը միատրում է բլուզ, պարային եւ Արեւելեան տարրեր: Բայց իրաքանչիւր նոր աշխատանքով Apo & the Apostlesը ձգտում է նոր ոճեր բերել իրենց հնչողութեանը: Նրանց բեմելային սինգլը՝ Baji Wenekը, ատելի քան մէկ միլիոն դիտում է հաւաքել Youtubeniւմ եւ ընկերային ցանցերի այլ հարթակներում: Buzzfeedում եւ այլ կայքերում նրանք ճանաչուել են որպէս տարածաշրջանի ամենայայտնի նոր խմբերից մէկը, որը յայտնի է իր գիշերային համերգերով: Նրանց առաջին "Back to Sababa" ալբոմը օգտագործում է շեփորներ, Արեւելքի դիթմեր եւ Արեւմուտքի մեղեդիներ, որոնք մարմնատրուած են առաջատար «Fil Zaman» սինգլում: Նրանց վերջին սինգլը՝ «Bandora Blues», ընդգրկուած է «Ya Zalamez» չորրորդ մինի ալբոմում: Universal Music ՄԵՆԱԻ թողարկած սինգլը եւ մինի ալբոմը մեծ ուշադրութիւն են գրաւել տարածաշրջանում խմբի զարգացող եւ բազմազան հնչողութեան շնորհիւ:

Սահակեանն աշխուժօրէն զբաղում է նաեւ իր անհատական նախագծով, որը նպատակ ունի վերականգնել հայի արժանապատուութիւնը (յատկապէս 2020ի պատերազմի աւարտից յետոյ), վերագտնել ինքնութիւնն ու ուժ գտնել խնդիրների լուծման համար: «Ֆորքս»ի կայքում հրապարակուած ամսագրի մշտական աշխատակից Միքա Հենդլերի հարցազրոյցում, երաժիշտն ասել է.- *«Ես իմ սոյօ նախագծին վերաբերում եմ ոչ թէ գործարարի, այլ հայրենասէրի տեսակէտից: Քանի որ ես մի ժողովրդի զաւակ եմ, որը տեսել է իր բաժին խաւարը, երբեմն ինձ թում է, որ հայ ժողովրդական երգերի կատարումը շարտ աղոյր լոյս է վառում այս շարտ մութ թունէլում: Ես իրապէս կարծում եմ, որ հայկական ժողովրդական երգի մէջ կախարդանք կայ: Հենց հիմա մենք՝ հայերս, անդունդն ենք ընկած, բայց ատելի լաւ է այդ*

անդունդում ինչ-որ ժողովրդական երգեր հնչեն, քան ընդհանրապես ոչինչ հնչի»⁵⁸:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայաստանից դուրս հայկական ոտքը գործում է անկախ եւ ինքնուրոյն, միաժամանակ կապուած լինելով հայկական իրականութեան հետ ընդհանուր յիշողութեամբ եւ պատմական անցեալով:

Այդ անցեալն ազդում է թէ՛ երգացանկի վրայ, թէ՛ երաժշտութեան, որի մէջ կարող են նաեւ յայտնուել ազգագրական ելեւէջներ: Հարցազրոյցների ընթացքում միջազգային լրատուամիջոցների միջոցով բարձրաձայնելով հայոց պատմութեան իրադարձութիւնների մասին՝ երաժիշտները նաեւ կատարում են մասամբ ճանաչողական աշխատանք:

Ի վերջոյ ոտքը ոչ միայն երաժշտութեան տեսակ է, այլեւ առաջին հերթին՝ պայքարի գործիք: Յամենայնդէպս իրենք՝ ոտք գործիչներն այդ մասին չեն մոռանում եւ ձգտում են իրենց ստեղծագործական ներուժն օգտագործել պայքարելու համար ինչ-որ բանի դէմ, կամ յանուն ինչ-որ բանի. որպէս կանոն դրանք բաւականին վեհ գաղափարներ են, ինչպէս ազատութիւնը:

PAGES OF ARMENIAN ROCK MUSIC HISTORY PART A.- THE ARMENIANS IN ROCK MUSIC (SUMMARY)

MANE KHARATIAN
art.phil.maneh@gmail.com

In the context of Armenian reality, the origin and manifestations of rock music have not been studied at all in the academic field, while the presence of Armenians in world rock culture and the localization of rock in Armenia are very interesting and significant and are worth studying. This series of articles consists of three separate papers, the first of which is devoted to the Armenian presence in the rock music of different countries.

Diaspora Armenians, using the mass nature of music, highlight issues like historical justice, freedom and other concepts in their lyrics. This gives them the opportunity to raise issues which seem intractable in the political sphere. Alongside the above-mentioned historical and noble ideological issues they touch upon topics of human loneliness, love and brotherhood, etc.

58

Տէս՝

<https://azg.am/culture/%d5%a5%d6%80%d5%b8%d6%82%d5%bd%d5%a1%d5%b2%d5%a5%d5%b4%d5%a1%d5%b0%d5%a1%d5%b5-%d5%a1%d6%83%d5%b8-%d5%bd%d5%a1%d5%b0%d5%a1%d5%af%d5%b5%d5%a1%d5%b6%d5%a8-%d5%b6%d5%b8%d6%80-%d5%af%d5%b5%d5%a1%d5%b6/> :

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆԻ «ԱՆՈՒՇ» ՊՈԵՄԸ ԵՒ

ԿՈՄԻՏԱՍԻ ՀԱՄԱՆՈՒՆ ԱՆԱԻԱՐՏ ՕՊԵՐԱՆ

ԱՐՓԻ ՎԱՐԴՈՒՄԵԱՆ
avardumyan8@gmail.com

ՄՈՒՏՔ

Յովհաննէս Թումանեանի բանաստեղծութիւնների ժողովածուի առաջին հատորը լոյս է տեսել 1890ին Մոսկուայում՝ իր մի խումբ բարեկամների օժանդակութեամբ, իսկ երկու տարի անց՝ 1892ին, լոյս է տեսել նոյնի երկրորդ հատորը, որտեղ զետեղուած է նաեւ նրա «Անուշ» պոեմի առաջին տարբերակը¹: Այն Թումանեանի վաղ շրջանի պոեմներից է, որոնց հերոսներին յատուկ է քնարական խորհրդաւորութիւնը: Յետագայում՝ 1901-3ին, հեղինակը հիմնովին վերամշակել է իր պոեմները՝ այդ թում եւ «Անուշ»ը. այդ նոր եւ ստուար ժողովածուն լոյս է տեսել 1903ին Թիֆլիսում, իսկ 1904ին բանասէր Ստեփան Լիսիցեանը «Հայ բանաստեղծներ» մատենաշարով առանձին վերահրատարակել է *Անուշ* պոեմը²:

Սարոյի «Ա՛խ, Անուշ, Անուշ» մեներգը

- ¹ Գառնիկ Ստեփանեան, *Կենսագրական բառարան, հայր. Ա, «Հայաստան»* հրատ., Երեւան, 1973, էջ 380-81:
- ² Յովհաննէս Թումանեան, *Անուշ, «Հայ բանաստեղծներ» մատենաշար, հրատ.՝ Ստ. Լիսիցեանի եւ ընկ., տպարան «Հերմէս», Թիֆլիս, 1904, էջ 3-40:*

Ա - ստւծ են ու - ուրիշ սող - ջիկ էր ինձ պիտ.

Սը նուս էր յա գին ու շե-կավ նա տես:

Փւեղ ճը ցո զա լով՝ ան հույս կը - ու - ցաւ:

Գսք - վից յո լա - ցալ ըս - ու - նի քնյի ձալ...

Ջը տի ին ձը լա 4ը լի փը կա իստ

գեո դո զուս է նա ու լի լի կա մայ:

ու ամ-բողջ տա - ռին մի միտք է ա - նուս:

քե յա - ռը յա - ռին ո՛նց է Իո - ճա - նուս -

Անուշի «Աստուծոյն ուրիշ» մեներգը

Կոմիտասն ընդհանուր առմամբ ունեցել է երաժշտական-բեմական ըստեղծագործութիւնների չորս մտայղացում՝ «Սասնայ ծռեր», «Վարդան» եւ «Անուշ» օպերաները, ինչպէս նաեւ «Քաղաքավարութեան վնասները» (ըստ Յակոբ Պարոնեանի) երաժշտական կատակերգութիւնը³ (օպերետը): Սակայն Կոմիտասն ամենից շատ հասցրել է աշխատել վերոնշեալ օպերաներից հենց «Անուշ»ի վրայ, քանի որ այդ պոեմը շատ հոգեհարազատ էր նրան իր ազգային նկարագրով եւ բնիկ ժողովրդական մտածողութեամբ:

³ Ռոբերտ Աթայեան, «Կոմիտասի ծեռագրերը», *Սովետական արուեստ* 4:1955, էջ 42-47:

ԻՇԽԱՆՈՒՀԻ ՄԱՐԻԱՄ ԹՈՒՄԱՆԵԱՆԸ⁴ ԵՒ ԿՈՄԻՏԱՍԻ «ԱՆՈՒՇ» ՕՊԵՐԱՆ

«Անուշ» պոեմը հայ գրականության ամենից սիրուած երկերից է, որի հիման վրայ 1912ին ստեղծուել է Արմէն Տիգրանեանի համանուն օպերան⁵: Սակայն յայտնի է, որ մինչ այդ՝ դեռեւս 1903ի վերջերին, լոյս տեսնելուց անմիջապէս յետոյ, Կոմիտաս վարդապետն արդէն ընթերցել էր Թումանեանի այս պոեմը եւ համակուել դրա յենքով ազգային առաջին օպերան ստեղծելու գաղափարով: Նշելի է, որ Թումանեանի բանաստեղծութիւնների արմատապէս վերամշակուած այս ժողովածուն 1903ին հրատարակուել է հասարակական ու թատերական գործիչ, Թիֆլիսի վերնախաւի անուանի ներկայացուցիչ իշխանուհի Թումանեանի ջանքերով: Դեռեւս անձամբ ծանօթ չլինելով Կոմիտաս վարդապետին, վերջինս իսկոյն ուղարկում է նրան մի օրինակ Թումանեանի նոր հրատարակուած *Բանաստեղծութիւններ* ժողովածուից, որը պարունակում էր նաեւ «Անուշ»ը՝ թելադրելով Կոմիտասին օպերա յօրինել այդ ազգային պոեմի հիման վրայ: Ահա թէ ինչ է պատասխանել նա իշխանուհի Թումանեանին. «Ուրախութեամբ կարդացի պր. Յ. Թումանեանի «Անուշը» եւ շար անուշ գրքիս, պատրաստ եմ Ձեր փափագն իրագործելու» (1904, Յունուարի 22): Յետագայում իշխանուհին գրել է Կոմիտասին. «Ես շար ուրախ եմ, որ հընարատրութիւն կ'ունենամ Ձեզ հետ ծանօթանալու եւ խօսելու «Անուշ» օպերայի մասին: Եթէ կարելի է Ձեզ հետ բերէք ծայնագրած կտորները, ասում են շար յաջող բան է դուրս եկել»⁶: Տարիներ անց իշխանուհին հետեւեալ գրառումն է կատարել. «Ես չեմ յիշում, թէ երբ եւ որպէս ծանօթացայ Կոմիտաս վարդապետի հետ, բայց իբրեւ երաժշտագէտի ես շար վաղուց էի ճանաչում նրան եւ բարձր գնահատում: Ես միշտ երազում էի լսել մի հայկական օպերա, որի թէ՛ բովանդակութիւնը եւ թէ՛ երաժշտութիւնը լինէր զուր ժողովրդական: Ես հաւատացած էի, որ Կոմիտասի գրչի փակից դուրս կը գայ մի հրաշալի բան եւ իմ մէջ միտք յղացաւ՝ առաջարկել նրան Թումանեանի «Անուշ»ը օպերա դարձնել, եւ այդ նպատակով ուղար-

⁴ «Թումանեան Մարիամ (1870-1945).– Մշակութային գործիչ: Ծնուել է Թիֆլիսում: Կինն է իշխան Գէորգ Թումանեանի: Ոնեցել է հասարակական, մշակութային գործունէութիւն, մեծապէս նպաստել է Թիֆլիսի հայ թատրոնին, եղել է Հայոց դրամատիկական ընկերութեան նախագահ: Նիւթական օժանդակութիւն է ցոյց տուել հայ գրողներին, յատկապէս Յովհաննէս Թումանեանին, որի մի շարք երկերը լոյս են տեսել նրա ջանքերով: Գրել է արժէքաւոր յիշողութիւններ» (Ստեփանեան, էջ 381):

⁵ Հեղինակի ղեկավարութեամբ կատարուել է 1919ին, *Հայկական Սովետական Հանրապետարան, հոյր. 1, էջ 463*:

⁶ Բախտիար Յովակիմեան, «Կոմիտասի թատերական աշխարհը», *Կոմիտասական, գիրք 2, կազմ.՝ Մ. Մուրադեան, խմբ.՝ Ռ. Աթայեան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1981, էջ 247*:

կեցի նրան իմ հրապարակած ժողովածուն»⁷: Այսպիսով, չնայած որ ազգային օպերա ստեղծելու գաղափարը Կոմիտասին յուշել էր իշխանուհի Թումանեանը, սակայն դա Կոմիտասի համար լոկ պատեհ առիթ է եղել. Հայագետ, Մանուկ Աբեղեանը⁸, որը Գեորգեան ճեմարանում երկար ժամանակ աշխատել է Կոմիտասի հետ, այդ մասին գրել է. «Նրա երազներից մէկն էլ այն էր, որ միշտ պատրաստուիմ էր մի օպերա շարադրելու հայկական եւ ընդհանրապէս արեւելեան եղանակների ոգով»⁹: Այդ շրջափուլում ազգային օպերա ունենալու գաղափարն արդէն իսկ թեւածում էր հայոց մշակոյթի երկնակամարում: Մարիամ Թումանեանը 1905ին վկայում է. «Բաւական բան էր գրել Կոմիտասը իր օպերայից եւ մի քանի կտոր նոյնիսկ նուագել է իմ տանը եւ հիացրել ինձ»¹⁰: Փաստօրէն, Կոմիտասն իսկոյն մեծ ոգետրութեամբ ձեռնամուխ էր եղել «Անուշ» օպերայի ստեղծմանը, մանաւանդ որ 1905ի ապրիլին Թիֆլիսում տեղի ունեցան Գեորգեան ճեմարանի երգչախմբի համերգերը Կոմիտասի ղեկավարութեամբ, որոնց ընթացքում էլ կայանում է նրա եւ Յովհաննէս Թումանեանի ծանօթութիւնը:

ԲԵՈՒԼԻՆԵԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ. ՕՊԵՐԱՅԻՆ ԱՐՈՒԵՍՏԻ ԱՇԽԱՐՀԸ

Ինչպէս յայտնի է, Կոմիտասը մինչ այդ արդէն իսկ հիմնաւոր կրթութիւն էր ստացել Բեռլինում, որտեղ էլ կայացել էր նրա առաջին ծանօթութիւնը եւրոպական թատերական աշխարհի հետ, եւ ուսանող ժամանակ նոյնիսկ բեմ էր բարձրացել Բեռլինի օպերային թատրոնում՝ որպէս երգչախմբի երգիչ: Հենց օպերայում երգելը եւ նրա դասական սկզբունքներին մօտիկից առնչուելն էլ նպաստել էր հայկական ազգային օպերային ստեղծագործութիւն կերտելու նրա գաղափարին¹¹: Լեզուաբան Հրաչեայ Աճառեանի վկայութեամբ, Կոմիտասի ծայնը մեծ ձայնածափ ունէր, եւ Բեռլինում «ուսումն ասարելելուց յետոյ գիրմանացիք առաջարկում են նրան օպերայի երգչի պաշտօն՝ ամսական 1000 մարկ ռոճիկով, սակայն Կոմիտասը մերժում է, յայտնելով, թէ ինքը վարդապետ է»¹²: Յետագայում նոյնպէս՝ Բեռլինում կայացած նրա դասախօսութիւն-համերգի վերջում, ուր նա

⁷ Նոյն, էջ 245 (ըստ Յովակիմեանի՝ *Խորհրդային Վրաստան օրաթերթ, 1939, N79*):

⁸ Ստեփանեան, էջ 9-11:

⁹ *Կոմիտասական, գ. 2, էջ 242*. նաեւ՝ *Ժամանակակիցները Կոմիտասի մասին*, կազմ.՝ Գասպար Նշանի Գասպարեան, Հայպետհրատ, Երեւան, 1960, էջ 72-73:

¹⁰ *Կոմիտասական, գ. 2, էջ 247*:

¹¹ Մանուկ Աբեղեան, «Յիշողութիւններ Կոմիտասի մասին», *Ժամանակակիցները Կոմիտասի մասին*, էջ 72-73. նաեւ՝ Բ. Յովակիմեան, «Կոմիտասի թատերական աշխարհը», *Կոմիտասական, գիրք 2, էջ 242*:

¹² Յովակիմեան, էջ 242-43. նաեւ՝ Հ. Աճառեան, *Կեանքիս յուշերից*, Հայպետհրատ, Երեւան, 1976, էջ 207-8:

ներկայացրել էր հայ ժողովրդական երգարուեստը, տեղի օպերային թատրոնի տնօրէնն անձամբ առաջարկել էր Կոմիտասին զբաղեցնել իրենց օպերայի գլխավոր երգչի տեղը՝ բացառիկ աշխատավարձով: Սակայն Կոմիտասը պատասխանել էր. «Իմ երգչի կարողութիւնները մէկ նըպատակի միայն կը ծառայեն՝ մեծ ժողովրդիս երգն ու երաժշտութիւնը ծանօթացնել երաժշտական աշխարհին եւ ապացուցել, որ հայ ստեղծագործ ժողովուրդը սկզբնական դարերէն ունեցեր է իր ինքնուրոյն երգն ու երաժշտութիւնը»¹³:

ԹՈՒՄԱՆԵԱՆԻ «ԱՆՈՒՇ» ՊՈԵՄԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Քաջատեղեակ լինելով հանդերձ արեւմտեան օպերային արուեստի դասական օրինաչափութիւններին, Կոմիտասն ընտրել էր յատկապէս Թումանեանի «Անուշ» պոեմը, քանի որ մտադիր էր ստեղծել հայոց ազգային մտածողութեամբ երաժշտական-բեմական տպավորիչ մի ստեղծագործութիւն, որի հիմքում ընկած լինէր գեղջկական կեանքին եւ նահապետական ընտանիքին յատուկ՝ անմիջական ու կենսական յոյզերով լի պատում, որը հնարաւորութիւն կը տար բացայայտել հայոց ամենդասակարգ հոգեբանութեան իւրօրինակ եւ ինքնատիպ նրբերանգները: Օպերայի վրայ աշխատելիս նա ձգտում էր հասնել առաւելագոյն արժանահաւատութեան, որի համար պատրաստ էր նոյնիսկ մեկնել Լօռի եւ ուսումնասիրել, ինչպէս ինքն էր ասում՝ «...տեղական խօսակցութեան ձայնաստիճանը», այսինքն՝ Լօռոյ բարբառին բնորոշ հնչերանգները: Կոմիտասի համար խիստ յատկանշական էր այս աստիճան գիտական մօտեցումը, եւ դա բնաւ զարմանալի չէ, քանզի նա գիտակցում էր, որ «Անուշ»-ն իր տեսակով առաջինն էր լինելու հայ իրականութեան մէջ, հետեւաբար այդ գործը նրա համար գրեթէ առաքելութեան էր հաւասարում: Դա պէտք է լինէր իր ժամանակին յարիր «ժողովրդական օպերա»՝ հնարաւորինս բնական ձայնելուներով օժտուած մեղեդիական յօրինուածքով, որում երգչական ու գործիքային նուազամասերը կատարելապէս ներդաշնակ պիտի լինէին եւ փոխադարձաբար լրացնէին միմեանց: Կոմիտասագէտ Ռոբերտ Աթայեանը Կոմիտասի «Անուշ» անաւարտ օպերային նուիրուած իր յօդուածում իրաւամբ նշել է. «Կոմիտասն ինքը, գոնէ նամակներում, իր «Անուշ»ը ոչ մի անգամ օպերա չի անուանել»¹⁴: Սա նշանակում է, որ վերջինս չափազանց խստապահանջ էր իր ստեղծագործութեան հանդէպ. նրա համար գերակայ խընդիր էր հայ ժողովրդական երաժշտական մտածողութիւնը համադրել օպերային արուեստի դասական ձեւի եւ բովանդակութեան հետ, որի արդիւնքում ստացուելու էր նոր տիպի մի ստեղծագործութիւն, որն իր բը-

¹³ Հրաչեայ Աճառեան, «Յուշեր Կոմիտասի մասին», *Ժամանակակիցները Կոմիտասի մասին*, էջ 80:

¹⁴ Ռ. Ա. Աթայեան, «Կոմիտասի «Անուշ» անաւարտ օպերայի ուրուագրերը», *Կոմիտասական*, գ. 2, էջ 49, ծխ. 5:

նոյթով դրանց օրգանական միաձուլումն էր լինելու: Այս առումով յիշարժան է այն, որ 1907ին, երբ Կոմիտասը Վենետիկի Ս. Ղազար կղզում էր գտնուում, Մխիթարեան Միաբանության հայրերի համար ունեցած զեկոյցին առընթեր՝ կատարելով հայոց հարսանեկան երգաշարերն ու յընթացս մանրամասն նկարագրելով ժողովրդական այդ կարետոր ծէսը, իր տըպատորիչ ելոյթի վերջում նա հետեւեալ կերպ է բնութագրել գիւղական հարսանիքը. «...մի ամբողջ օպերա է»¹⁵: Այսինքն՝ հայոց ասանդական հարսանիքը Կոմիտասը դիտարկում էր որպէս ծաւալուն մի ներկայացում իր բոլոր դրուագներով՝ երգերի կայուն հերթագայութիւնից մինչեւ յանկարծաբանական բնոյթը, դրանց ազգային արարողակարգը, որ կարող էր տեւել մինչեւ 7 օր՝ հարսին, փեսային եւ միւս գործող անձանց նուիրուած բազմաբնոյթ երգաշարերի սկիզբը, տրամաբանական զարգացումն ու հանգուցալուծումը, ինչն էլ կուռ ու միասնական էր դարձնում ամբողջ տօնակատարութիւնը: Քանի որ Թումանեանի «Անուշ» պոեմի սիւժէի հիմքում ընկած են հենց գեղջկական ասանդական հարսանիքի արարողութիւնն ու դրա հետ կապուած ժողովրդական հնօրեայ հաւատալիքները, ապա վերոնշեալ արտայայտութիւնը՝ օպերայի հետ զուգահեռ անցկացնելու վերաբերեալ, առաւել բնորոշ է դառնում:

ԿՈՄԻՏԱՍԻ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ

Կոմիտասը մեծ պատասխանատուութեամբ էր վերաբերում հայ իրականութեան համար դարակազմիկ նշանակութիւն ունեցող՝ դասական սեռի խոշոր կտաւի երաժշտական բարդ ու ծաւալուն ստեղծագործութեան մտայղացմանն ու իրագործմանը: Եւ գուցէ հենց դա էր պատճառը, որ նա այդպէս էլ չհասցրեց լիակատար աւարտին հասցնել իր նուիրական իղծը: Նշելի է, որ «Անուշ» օպերայի արիաները, արիոգօները, զուգերգերն ու խմբերգերը Կոմիտասը ջանում էր ստեղծել ժողովրդին հնարաւորինս հոգեհարազատ ելեւէջներով, երբեմն նոյնիսկ ներդնում էր բուն գեղջկական որեւէ երգ՝ փոխելով միայն խօսքը, իսկ նուագակցութեան գործիքային կազմում նա մտադիր էր օգտագործել նաեւ ժողովրդական նուագարաններ, որպէսզի նուագախումբն առաւել հայեցի հնչողութիւն ստանար: Ինչպէս վկայում է Աթայեանը երաժշտագէտ Ալեքսանդր Շահվերդեանի գրքի ծանօթագրութեան մէջ՝ «Կոմիտասը փորձում էր կապարելագործել սրինգը եւ սրեղծել փարբեր ձայնածաւալ ունեցող սրինգների կայուն տեսակներ: Այժմ յայտնի է նաեւ, որ իր «Անուշ» օպերայում Կոմիտասը մտադիր էր սիմֆոնիկ նուագախմբի կազմի մէջ ներմուծել յարկապէս սրինգ»¹⁶:

¹⁵ Հ. Կ. Ս. Սահակեան, «Հայկական երաժշտութիւն», *Բազմավէպ*, 7-8:1907, էջ 369-73:

¹⁶ Ալեքսանդր Շահվերդեան, *Հայ երաժշտութեան պատմութեան ակնարկներ. XIX-XX դդ., խմբ. եւ ծանօթ.*՝ Ռ. Աթայեան, Հայպետհրատ, Երեւան, 1959, էջ 385, 610 ծնթ. 10:

Բարեբախտաբար պահպանուել է Կոմիտասի սրինգների հաւաքածուն՝ կազմուած տարբեր չափի փայտեայ եւ մետաղեայ նուագարաններից, որոնք ցուցադրուած են իր անունը կրող թանգարան-ինստիտուտում: Ուշադրութեան արժանի է այն հանգամանքը, որ չնայած Կոմիտասը ձգտում էր լիարժէք վաւերականութեան, այդուհանդերձ՝ 1908 Յուլիսի 2ին գրած նամակում նա Մարիամ Թումանեանի միջոցով խնդրում է Յ. Թումանեանին, որ պոետնում երբեմն հանդիպող թուրքերէն բառերից որքան կարելի է խոյս տայ՝ երգի հայկական ոգին պահելու համար: Չնայած նրան, որ Կոմիտասն իր մանկութիւնը Քէօթահիայում (կամ Կուտինայում)՝ թրքախօս միջավայրում էր անցկացրել, եւ թում է, թէ նրա համար պիտի որ սովորական լինէր մեր բարբառներ սպորդած որոշ ոչ-հայերէն բառերի առկայութիւնը, սակայն թերեւս հենց այդ հանգամանքն էլ մղում էր նրան հնարաւորինս զտարին եւ անխառն պահել հայոց լեզուն (*Քէօթահիայում, ինչպէս եւ արեւմտեան Հայաստանի այլ բնակավայրերում, հայերը պարտադրուած էին իրենց մայրենի լեզուով չխօսել, քանի որ դա չափազանց վրտանգատոր էր կեանքի համար*)¹⁷: Վերը նշուած դիտողութեանը կցելով եւս մի քանի նկատառում, Կոմիտասը նոյն նամակի վերջում յաւելում է. «Գըրուածքը շուտ պատրաստէ, որ ես էլ ուտունասիրել կարողանամ ու երաժշտութեան ծրագիր մշակեմ: Չեմ կարող որոշ ասել, թէ երբ պատրաստ կը լինի, որովհետեւ ես մենակ եմ եւ բոլոր գործերը ինձ վրայ են ծանրացած»¹⁸: Սոյն տողերը պերճախօս կերպով վկայում են Կոմիտասի գերձանրաբեռնուած լինելու մասին: Կարելի է նաեւ նշել, որ մինչեւ 1907 նա նոյնիսկ դաշնամուր չուներ. Էջմիածնի միաբանութեան հանդիսասրահում առկայ էր լոկ չորս ութնեակ ձայնածաւալով մի փոքրիկ, հնամենի ֆիսհարմոն (*Harmonium*), որի ձայնը զուրկ էր նրբերանգներից¹⁹ եւ բաւարար չէր ազատօրէն ստեղծագործելու համար, եւ Կոմիտասը կարող էր հնչեցնել այն միայն օրուայ սահմանափակ ժամերին: Չնայած դրան, Կոմիտասն արդէն 1905ին Էջմիածնում, մտերմական շրջանում, կատարել է

¹⁷ Այս ցաւալի երեսոյթի մասին տե՛ս նաեւ՝ Արփի Վարդումեան, «Քէօթահիայի հայերի երաժշտական մշակոյթը (ըստ Կոմիտասի գրառած հայատառ թուրքերէն տեքստերով երգերի անտիպ ժողովածոյի)», *Հայ ժողովրդական մշակոյթ XVI, ասնդականը եւ արդիականը հայոց մշակոյթում, Դերենիկ Վարդումեանի ծնընդեան 90ամեակին նուիրուած գիտաժողովի նիւթերի ժողովածու*, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., 2014, Երեւան, 2014, էջ 153-60. նաեւ՝ Arpi Vardumyan, “The Musical Culture of Kutahia’s Armenian Community (as reflected in a unique collection of songs recorded by Komitas Vardapet),” *The Armenian Communities of Asia Minor*, “Armenian History and Culture Series, Historic Armenian Cities and Provinces”, Volume 13”, UCLA, 2014, Los Angeles, էջ 195-208:

¹⁸ *Կոմիտասական*, գ. 2, էջ 246:

¹⁹ Պատահական չէ, որ *դաշնամուրը* եւրոպական լեզուներով կոչում է *Fortepiano* – որ լատիներէն *Forte* – *ուճգին*, եւ *Piano* – *մեղմ* բառերի միակցումն է, որոնցով արտայայտում են երաժշտական հիմնական նրբերանգները:

որոշ հատուածներ («Ասում են ուրին», «Աղջի անաստուած» եւ «Բարձր սարեր»), իսկ ունկնդիրների շարքում եղել է նաեւ Յովհաննէս Թումանեանը²⁰:

ԿՈՄԻՏԱՍԻ «ԱՆՈՒՇ» ՕՊԵՐԱՅԻ ՊԱՀՊԱՆՈՒԱԾ ՀԱՏՈՒԱԾՆԵՐԸ

Կոմիտասի «Անուշ» օպերայից մնացել են 20ից ւելի մեներգեր, զուգերգեր, խմբերգեր եւ նուագախմբային մշակումներ, որոնք պահուում են իր արխիւում՝ Երեւանի Չարենցի անուան Գրականութեան եւ արուեստի թանգարանում (ԳԱԹ): *Կոմիտասական ժողովածուի՝ 1981ին լոյս տեսած 2րդ գրքում Աթայեանը ներկայացրել է այն ամէնը, ինչ հնարաւոր է եղել գտնել իր ժամանակ²¹: Ըստ այդմ՝ երգերի մի մասն արդէն եւրոպական նոտագրութեամբ էր գրառուած՝ գեղեցիկ, կոկիկ ձեռագրով, առանձին թերթիկների վրայ: Մաքրագիր այդ օրինակները 1905ի Ապրիլին Կոմիտասն իր հետ տարել էր Թիֆլիս՝ ցուցադրելու Մարիամ Թումանեանին: Իսկ միւս՝ դեռեւս սեւագիր մասը նոր հայկական (*Լիմոնձեանի կամ Արդի հայկական*) ծայնանիշերով է պահպանուել՝ «Անուշ» պոեմի 1903ի հրատարակութեան տողերի արանքում, որոնք յետագայում Աթայեանն ինքն է փոխադրել եւրոպական նոտագրութեան: Դրանց թում են՝ «Եկէք, քոյրեր» (փերիների երգը), «Վուշ-վուշ, Անուշ, վուշ-վուշ, քորիկ» (երգչախմբի երկու ձայնի համար), «Աղջի անաստուած, նստիր վըրանում» (Սարոյի երգը), «Ամպի տակից ջուր է գալի», Անուշի «Ասում են ուրին աղջիկ էր ինձ պէս» արիան, Սարոյի «Ա՛խ, Անու՛շ, Անու՛շ» ասերգը, Անուշի «Ա՛խ, չէ, ես գիտեմ, որ ես բախտ չունիմ» երգը, «Բարձր սարեր, ա՛յ սարեր», «Սիրուն աղջիկ, ի՛նչ ես լալիս», «Շնորհակալ եմ, անցուոր ախպէր», «Ետ դառ, ե՛տ, իգիթ», «Ա՛խ, էն կանաչ սարի լանջին», «Վ՛եր կաց, իգիթ», «Տեսէ՛ք, տեսէ՛ք, դափ ու զուռնով», «Բերում են, հըրե՛ն» երգերը²²: Աթայեանը յայտնում է նաեւ, որ 1952ին Կոմիտասի երեւանեան արխիւը նշանակալիօրէն համալրուել է մի շարք արժէքաւոր ձեռագրերով, որոնց հիման վրայ հնարաւոր է դարձել առաւել հանգամանալից անդրադառնալ նրա անտիպ ստեղծագործութիւններին²³:*

Հարկ է նշել նաեւ, որ 1956ին ռուսերէն լեզուով լոյս է տեսել օպերային արուեստի անուանի գիտակ Գէորգի Տիգրանովի *Հայ երաժշտական թատրոնը* երկհատորեակի Ա. հատորը²⁴, որտեղ հեղինակը ռուս

²⁰ Կոմիտասական, գ. 2, էջ 246:

²¹ Նոյն, էջ 42-82:

²² Նոյն:

²³ Ռ. Աթայեան, «Կոմիտասի ձեռագրերը», *Սովետական արուեստ*, 4:1955, էջ 42:

²⁴ Г. Г. Тигранов, *Армянский музыкальный театр, очерки и материалы, том 1, (IV. Оперные замыслы Комитаса)* [Գ. Գ. Տիգրանով, *Հայկական երաժշտական թատրոնը. ակնարկներ եւ նիւթեր, հպր 1, (IV. Կոմիտասի օպերային մտայնացումները)*, Հայպետհրատ, Երեւան, 1956, էջ 191-217]:

ընթերցողին է ներկայացրել հայկական առաջին դասական օպերային ստեղծագործությունների մի շարք, այդ թում նաև Կոմիտասի անաւարտ «Անուշ»ը: Հեղինակը, նամակագրական փաստերի հիման վրայ, ռուսալեզու ընթերցողի ուշադրութեանն է յանձնել Կոմիտասի եռանդուն գործունէութիւնը Թումանեանի «Անուշ» պոեմին ծանօթանալու պահից իվեր՝ իր յօդուածում տեղադրելով «Ասում են ուրին աղջիկ էր ինձ պէս», «Համբարձում եայլա» եւ «Սիրուն աղջիկ, ի՞նչ ես լալիս» երգերի նոտային օրինակները: Տիգրանովը հաւաստում է, որ պահպանուած նիւթերը յստակ պատկերացում են տալիս ո՛չ միայն Կոմիտասի յօրինած գլխաւոր լէյտմոտիւնների (մեղեդի կամ մեղեդիական դարձուածք, որ ծառայում է օպերայում որեւէ անձ, երեւոյթ, ապրում կամ գաղափար բնութագրելու համար)²⁵ մասին, այլեւ ուրուագծում են դրանց զարգացման հիմնարար սկզբունքները: Հեղինակը նշում է նաև նուագախմբի դերի կարեւորումը եւ Կոմիտասի մտադրութիւնը՝ օպերայում հայկական ժողովրդական գործիքներ ներմուծելու անհրաժեշտութեան մասին:

Այս ամէնով հանդերձ, Կոմիտասին այդպէս էլ վիճակուած չէր աւարտուն ու լիարժէք աստիճանի հասցնել իր փայլալայած «Անուշ»ը, քանի որ նա մշտապէս բազմազբաղ է եղել: Նոյնքան բազմազբաղ է եղել նաև Թումանեանը, եւ նրանց հանդիպումն ու գործակցութիւնն այդպէս էլ չի կայացել՝ մասամբ նաև վերջինիս վեցամսեայ ձերբակալութեան պատճառով, ինչը մեծ վիշտ է պատճառել Կոմիտասին: Ահա թէ ինչ է գրել նա իշխանուհի Մարիամին այդ ցաւալի իրողութեան մասին. «Մեր Յովհաննէսի ձերբակալուելը շարք վարդ փայտորութիւն թողեց վրաս, որքան է զըրկում մեր գրական բանաստեղծական կեանքը նրա՛ անգործ բանտում մընալով: Իհարկէ, երեսի դեռ երկար կը պահեն մինչեւ ամբողջ կծիկը բաց անեն... «Անուշն» առաջ է գնում, էլի մի շարք նոր բաներ գրեցի: Մնացել եմ մոլորուած, Յովհաննէսի բանտարկութիւնն էր պակաս, էլի կիսաւր մընաց «Անուշի» երգական խմբագրութիւնը: Յոյս ունէի, որ կը գար այս փօներին եւ վերջ կը տայինք, այդ էլ այդպէս մնաց...» (1909, Փետրուար 14)²⁶: Աթայեանը մէջբերել է նաև գրող Դերենիկ Դեմիրճեանի վկայութիւնը. «Յիշում եմ նրա հարուածները «Անուշ» օպերայից, որի վրայ աշխատում էր. երգեց Սարոյի եւ Անուշի հանդիպումը, «Ասում են ուրին»: Արիաները օրգանական ծնունդ էին ժողովրդական երգի եւ զարմանալի պարզ իրենց գեղեցկութեան մէջ: ... Մտքիւնքը յիշում եմ» (1906ի մասին է)²⁷: Յայտնի է, որ Դեմիրճեանը նաև հմուտ ջութակահար էր, այնպէս որ նրա խօսքը

²⁵ Կ. Սեծենսկի, *Երաժշտական տերմինների համառօտ բառարան*, Հայպետհրատ, Երեւան, 1955, էջ 47:

²⁶ Կոմիտասական, գ. 2, էջ 42. նաև՝ էջ 247-48:

²⁷ Նոյն, էջ 42-43:

մասնագիտական կշիռ ունէր²⁸: Յաւելենք, որ վերոնշեալ *ժամանակակիցները Կոմիտասի մասին* գրքի ներածականը՝ «Երկու խօսք» վերտառութեամբ, նոյնպէս հեղինակել է Դեմիրճեանը²⁹:

Ինչպէս գիտենք, Կոմիտասի եռանդուն գործունէութիւնը ցաւալիօրէն կարճ է տեսել՝ հազիւ 20 տարի: Իր ողջ ստեղծագործական կեանքում նա կարծես կանխազգալիս լինէր, որ ի վերուստ իրեն տրուած ժամանակը բաւարար չի լինելու բազում մտայղացումներն իրագործելու համար, այնպէս որ ստիպուած էր միաժամանակ միքանի բարդագոյն գործ ձեռնարկել: Կոմիտասն աշխատում էր օր ու գիշեր՝ երբեւէ չխնայելով իրեն, յաճախ նաեւ իր առողջութեան հաշուին: Սակայն... 1915ի գարնանն ընդհատուած նրա ստեղծագործական բուն կեանքը հազիւ թէ բաւարար լիներ իր համապարփակ ծրագրերը լիովին իրականացնելու համար:

ՍՓԻՒՌՔԻ ԵՐԱԺՇՏԱԳԷՏՆԵՐԻ ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐԸ ԿՈՄԻՏԱՍԻ «ԱՆՈՒՇ»ԻՆ

Կոմիտասի ծննդեան հարիւրամեակի առթիւ բանաստեղծ ու երգիչ Յակոբ Ասատուրեանը, ով բազմիցս տարբեր բեմերում կատարել է Կոմիտասի երգերը եւ հեղինակել *Կոմիտաս վարդապետ եւ հայ երգը* գիրքը³⁰, 1969ին՝ Կոմիտասի ծննդեան 100ամեակի առթիւ, լոյս է ընծայել նաեւ *Կոմիտաս վարդապետ. (Gomidas Vartabed)* յօդուածների ժողովածուն՝ հայերէն եւ նոյնի անգլերէն թարգմանութիւնը: Անդ առկայ է նաեւ արուեստագէտ Շահան Ռ. Պէրպէրեանի յօդուածը, որտեղ վերջինս իր ուշագրաւ մտորումներն է շարադրել Կոմիտասի անձի եւ գործի շուրջ. «*Իր մտերիմները ամէնքն ալ գիտեն, որ այդ արտն արդէն ձեռնարկած էր պատրաստութիւնը մեծ գործի մը որ իր ծրագրին մէջ իր բուն անձնական բերումը պիտի ըլլար երաժշտութեան: Յովհաննէս Թումանեանի «Անուշ»ին վրայ օրեռայի մը պատրաստութեան՝ որուն համար կը խորհէր յօրինել նոր, հայկական նուագախումբ մը, երոպական գործիքներու մէջէն ընտրելով եւ անոնց միացնելով հայկական ու արեւելեան գործիքներ, սրինգներ*

²⁸ Թումանեանը *ժամանակակիցների յուշերում*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1969, էջ 911. (Դերենիկ Դեմիրճեանի յուշագրութեան N20 ծանօթագրութեան տեղեկացմամբ՝ «1903 թ. ջութակի դասեր վերցնելու նպատակով նա (Դեմիրճեանը – Ա.Վ.) մեկնում է Մոսկուա, սակայն վատառողջութեան պատճառով շուտով ընդհատում է պարապմունքները»)՝ Հր. Մուրադեան, *Դերենիկ Դեմիրճեան*, ՀՍՍՀ ԳԱ, Երեւան, 1963, էջ 201:

²⁹ Դերենիկ Դեմիրճեան, «Երկու խօսք», *ժամանակակիցները Կոմիտասի մասին*, էջ 3-7:

³⁰ Յ. Ասատուրեան, *Կոմիտաս Վարդապետ, անձը եւ գործը. (իր ծննդեան հարիւրամեակին առթիւ)*, Gomidas Vardabed, His life & Work, (*On the centennial of his birth*), Published by the Diocese of the Armenian Church of Archbishop Torkom Manoogian, Primate, New York, October 1969:

մասնատրաբար: Ի՞նչ պիտի ըլլար այդ գործը. պատճառներ ունիմ կարծելու թէ մեծարժէք պիտի ըլլար: Ինձի երգած ու նուագած է անոր Նախերգանքը եւ խոր փայտորութիւն եմ կրած»³¹: Այս վկայութիւնը շատ կարեւոր է, քանզի սոյն յօդուածը՝ գրուած Կոմիտասի մահուան առաջին տարեկիցի առթիւ, մինչ այդ տպագրուել էր նաեւ «Ժամանակակիցները Կոմիտասի մասին» ժողովածուի մէջ³², որի վերոնշեալ մէջբերումը նկատի ունենալով՝ Աթայեանը նշել է, որ չնայած «Անուշ»ի նախերգանքի նօտաները չկան հեղինակի արխիւային նիւթերում, ինքը յոյս ունի, որ «*հետագայ փնտրումները նոր նիւթեր եւ կ'այայտնաբերեն*»³³: Իսկ Կոմիտասի մտերիմ Արշակ Չօպանեանն իր «Անահիտ» պարբերականում գրել է. «Կոմիտաս «Անուշ»ի քանի մը մեներգերուն եւ խմբերգերուն եղանակը յօրինած էր (ինքնահնար եղանակներ՝ ժողովրդական երգերու ոճով). ապոնք ինձի երգեց էջմիածին, եւ շար սիրուն գրայ...»³⁴:

ՊԱՏՇԱՃ ԼԻՐԻԵՏՈՅԻ ԲԱՅԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Կոմիտասի ստեղծագործութեանը լրջորէն խոչընդոտող հանգամանքներից էր նաեւ «Անուշ» պոեմի հիման վրայ գրուած պատշաճ լիբրետոյի բացակայութիւնը: Տեղեկութիւններ կան, որ Կոմիտասը քանիցս խնդրել է Թումանեանին՝ սցենար շարադրել «Անուշ» օպերայի համար, սակայն, ըստ երեւոյթին, ամենայն հայոց բանաստեղծի համար հոգեբանօրէն բարդ է եղել իր պոեմից որոշ հատուածներ կրճատել կամ յաւելել: «Կոմիտասը եւ հայ երաժշտութիւնը» յօդուածում Արշակ Չօպանեանն այդ մասին հետեւեալն է գրել. «*Թիֆլիս գորնուած միջոցիս (1908 – Ռ. Ա.) Կոմիտասի հետ Թումանեանի փունն էինք օր մը: Կոմիտաս նորէն խնդրեց, որ փութացնէ լիպրետոյին խմբագրումը, Թումանեան զգացուց, որ ափիկայ իր ընելիք բանը չէր. «Ես պոեմը գրեր եմ, ըսաւ խնդալով, լիպրետօսն էլ թող ուրիշը հանէ*»³⁵: Հեղինակը՝ Աթայեանը սրան յաւելում է. «*Հաւանաբար Թումանեանի համար շար դժուար պէտք է լինէր իր «միս ու արին» դարձած, բարձր կարարելութեան հասցուած «Անուշ»ից լիբրետօ պատրաստելու համար նրանում ինչ-որ բաներ փոխել կամ աւելացնել: Երբ նա*

³¹ Շահան Ռ. Պէրպէրեան, «Կոմիտաս Վարդապետ, անձը եւ գործը. յօրինողը», Սիոն, Յունուար, 1936. նաեւ նոյնը՝ «Կոմիտաս վարդապետ, անձը եւ գործը», էջ 26-27. նաեւ՝ Յակոբ Յ. Ասատուրեան, Կոմիտաս վարդապետի հետ, Բ. հրատ., Նարեկացի Արուեստի Միութիւն, Sipan printing co., Պէրյոպ, 1969, էջ 117:

³² Շահան Ռեթոս Պէրպէրեան, «Կոմիտաս», Ժամանակակիցները Կոմիտասի մասին, էջ 81-99:

³³ Ռ. Աթայեան, «Կոմիտասի երաժշտական ժառանգութիւնը», Կոմիտասական, գիրք 1, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1969, էջ 7-83:

³⁴ Ա. Չօպանեան, «Կոմիտասը եւ հայ երաժշտութիւնը», Անահիտ, 1-2:1931. նաեւ՝ Ասատուրեան, Կոմիտաս վարդապետի հետ, էջ 117:

³⁵ Աթայեան, Կոմիտասի «Անուշ» անաւարտ..., էջ 53-54, ծնթ. 11:

թոյլ էր փոփոխել որ ուրիշն այդ անի, դա էլ մեծ բան էր»³⁶: 1908 Մայիսի 24ին Աբ. Էջմիածնից գրած նամակով Կոմիտասը Թումանեանին յայտնում է. «Աղբեր, վաղուց է սկսել եմ եւ բաւական բան գրել եմ քու «Անուշ»ից, բայց դեռ պակասատր բաներ շար կան, որպէսզի մի ամբողջութիւն դառնայ: Այս գիրս առնելուն պէս գրիչդ կ'առնես եւ ինձ մի դրական բան կը գրես: Այս ամառուան արձակուրդին պէտք է զբաղուեմ առաւելապէս «Անուշով»: Գրի՛ր, թէ ե՛րբ կարող ես միքանի օրով ինձ մօտ հիւր գալ եւ այսպէղ միասին վերջացնենք եւ ես հանգիստ շարունակեմ. ամէն անգամ երբ փրամադրութիւնս փեղն է, ձեռքերս թուլանում են, որովհետեւ երգի յարմարեցրած չեն. դեռ բաներ ու պակասներ էլ կան»³⁷: Ըստ ամենայնի, Կոմիտասն ինքն է փորձել բեմագիր գրել, որը սակայն նոյնպէս անաւարտ է մնացել. առկայ է միայն օպերայի նախաբանի եւ առաջին պատկերի մանրամասն բեմագիրը: Յատկանշական է, որ մեծ երգահանը հնարաւորինս հարազատ է մնացել մեծ բանաստեղծի պոեմին, եւ միայն երբեմն է աննշան փոփոխութիւններ մտցրել բանաստեղծութեան մէջ, որպէսզի համահունչ դարձնի այն երգի տաղաչափութեանը: Կոմիտասը ձգտել է Թումանեանի բնագիրը հնարաւորինս լրիւ օգտագործել օպերայի մէջ. նրա համար թանկ է եղել «Անուշ»ի ամէն մի տողը: Ըստ Աթայեանի, գրականագէտ եւ թարգմանիչ Լիլի Տէր Մինասեանն իր յօդուածում (Գրական թերթ, 16 Յունիսի 1978) Կոմիտասին պատկանող՝ 1903ի հրատարակութեան մի օրինակի հիման վրայ փորձել է հաստատել, որ Թումանեանը անմասն չի մնացել Կոմիտասի համար լիբրետո ստեղծելու գործում, քանզի վերջինս պոեմի իր օրինակում գրութեան փոփոխութիւնների առաջարկները ուղարկել է բանաստեղծին, սակայն ըստ երեւոյթին այն ետ չի ստացել³⁸: Յետագայում Տէր Մինասեանն իր յօդուածների ժողովածուն լոյս է ընծայել *Թումանեանի ստեղծագործութիւնների երաժշտական մարմնաւորումները* վերտառութեամբ գրքով³⁹, որտեղ, ըստ ԳԱԹում պահպանուած արխիւային նիւթերի, մասնաւորապէս՝ Կոմիտասին պատկանող «Անուշ» պոեմի երեք օրինակներից մէկի վրայ սեւ մատիտով կատարուած բազմաթիւ նշումների՝ (Կոմիտասի ֆոնդ, N 485) համեմատելով դրանք Թումանեանի օրինակի վրայ վերջինիս կատարած այլ նշումների հետ, գրականագէտը յանգել է հետեւեալ եզրակացութեանը. «Ըստ երեւոյթին, Կոմիտասը Թումանեանին է փրամադրել «Անուշի» իրեն պատկանող օրինակներից

³⁶ Նոյն:

³⁷ Կոմիտաս Վարդապետ, *Նամականի*, աշխ.՝ Գուրգէն Գասպարեան, Սարգիս Խաչենց. Փրինթինֆօ, Երեւան, 2009, էջ 138-39:

³⁸ Աթայեան, «Կոմիտասի «Անուշ» անաւարտ օպերայի ուրուագրերը», *Կոմիտասական, գիրք 2*, 53-54, ծնթ. 11:

³⁹ Լ. Տէր-Մինասեան, *Թումանեանի ստեղծագործութիւնների երաժշտական մարմնաւորումները*, Յովհ. Թումանեանի թանգարան, Արեւելք-Արեւմուտք մատենաշար, «Հայկարի» ՍՊԿ տպարան, Երեւան, 2019, էջ 73-81:

մէկը՝ նախապէս նրա վրայ նշելով իր նկատարումները: Թումանեանն իր սիրալիրութեամբ սկզբում, երեւի, յանձն է առել լիբրետոյի ստեղծումը, բայց այդ մտքով շարքի չի ոգետրուել: Հնարաւոր է նաեւ, որ նրանք մի օր միասին էլ նստած լինեն եւ խորհած այդ հարցի շուրջ: Յայտնի է, որ Թիֆլիսում, բանաստեղծի տանը, Կոմիտասը միքանի կտոր երգել է իր «Անուշ»ից: Սակայն Թումանեանը Կոմիտասի առաջարկած տեքստային խըմբագրութիւնները, գոնէ այդ օրինակում, չի արել⁴⁰ - արձանագրում է գրքի հեղինակը եւ յաւելում,- Թումանեանի օրինակում կան նաեւ սեւ թանաքով նշումներ, որոնք յայտնապէս Թումանեանի ձեռքով են կատարուած: Սեւ մատիտով ընդգծուած թուրքերէն բառերի կողքին Թումանեանը սեւ թանաքով համարներ է դրել եւ փողապակին գրել դրանց նշանակութիւնները: Այսինքն փոփոխել է այդ բառերի բացատրութիւնները եւ ոչ թէ փոխարինել հայերէնով, ինչպէս խնդրել էր Կոմիտասը: Այդ բառերն ամբողջ պոետմում ընդամէնը քսանն են: Պարզ է, որ Կոմիտասը թուրքերէն շարքի աւելի լաւ գիտէր, քան Թումանեանը, բայց նա, ըստ երեւոյթին, իր իրաւունքը չէր համարում նրա գրութեան մէջ այդպիսի փոփոխութիւններ մտնելը, թէեւ գտնում էր, որ դա անհրաժեշտ է «երգի ոգին պահելու համար»⁴¹: Սա լուսագոյնս վկայում է հայոց երկու մեծերի փոխադարձ յարգանքի մասին: Տէր Մինասեանի գիրքը բացուած է Թումանեանի լուսանկարով՝ իր իսկ ձեռագրով արուած հետեւեալ մակագրութեամբ. «Բանաստեղծը միայն մարմին է տալիս իր մտքերին ու զգացմունքներին եւ իր ոգետրութիւնով կենդանութեան շունչ է տալիս նրան, որ նա ապրի մշտապէս, բայց որ նա թոչի, դրա համար նրան թելեր են հարկաւոր, իսկ թելեր առնել նա կարող է միմիայն էն կախարդական աշխարհում, որ կոչում է երաժշտութիւն...»⁴²: Ահա թէ ինչպէս է բնորոշել Թումանեանը բանաստեղծութեան եւ երաժշտութեան բուն էութիւնը. ըստ երեւոյթին նա խորապէս զգում էր երաժշտական արուեստի մոգական ուժը եւ անչափ երաժշտասէր անձ էր, ով երբեմն նոյնիսկ երգեր էր յօրինում եւ ինքն էլ կատարում էր դրանք: Նրա հեղինակած երգերից յայտնի է, օրինակ՝ «Ախ ի՞նչ լաւ են սարի վրայ» երգը, որը լայնօրէն տարածուած է ժողովրդի մէջ:

Անդրադառնալով Կոմիտասի «Անուշ» օպերայի պահպանուած հատուածներին, հարկ է նշել նաեւ, որ դրանց երաժշտական մտածողութիւնը միատարր չէ, այլ հարուստ է տարբեր բնոյթի մեղեդիների համադրութեամբ: Կոմիտասի ձեռագրերում առկայ են ինչպէս գեղջկական երգային ելեւէջներ, այնպէս էլ ժողովրդական որոշ եղանակներ, որոնք երբեմն օգտագործուած են գրեթէ առանց փոփոխութեան՝ փոխարինելով ասանդական խօսքը պոետի բառերով, նաեւ գուսանական կամ քաղաքային երգե-

⁴⁰ Նոյն, էջ 77-78:

⁴¹ Նոյն, էջ 78:

⁴² Նոյն, էջ 3:

րին յատուկ մեղեդիներ, որոնք նոյնպէս հմտօրէն յարմարեցուած են պոեմի բովանդակութեանը: Սակայն անգամ եթէ խօսքը Կոմիտասի յայտնաբերած գեղջկական եղանակների մասին է, ապա դրանք հենց գրի առնելիս էլ ենթարկուում էին գեղագէտ-բանահաւաքի բարձրաճաշակ մաքրագործմանը: Իսկ «Անուշ»ի դէպքում այնտեղ ներառուած ժողովրդական մեղեդիները Կոմիտասը նրբօրէն խմբագրում էր Թումանեանի պոեմի բանաստեղծական ատաղձին համահունչ՝ ստեղծագործելով ժողովրդական ոգով ու շնչով, ձգտելով հասնել խօսքի եւ մեղեդու կատարեալ միաձուլման: Ինչպէս հրաշալիօրէն բացայայտել է ֆրանսահայ գրող Շահան Շահնուրը, «...հում բնագիրէն քիչ բան փոխեց Կոմիտաս, պիտի ըսէինք, եթէ չգիրնայինք թէ քիչ բան գոյութիւն չունի բանաստեղծութեան մէջ: Միակ բառի մը, նոյնիսկ վանկի մը փոփոխութիւնը բաւ է որպէսզի բանաստեղծութիւնը նուազի կամ թեւածէ: Այս իմաստուն միջամտութիւնը գրաւականն էր այն սուր զգայնութեան, որով Վարդապետը կը թափանցէր բանաստեղծութեան ոգիին»⁴³: Նոյնը անշուշտ վերաբերում է Կոմիտասի գրրառած երգերի երաժշտական բաղադրիչին, որի հայեցողութիւնը նոյնպէս երբեմն կախում ունէր միքանի հնչիւնից կամ ելեւէջից:

Ընդհանուր առմամբ Կոմիտասի «Անուշ»ը երգեցողական տիպի օպերա է, որի պահպանուած երգչական հատուածները երբեմն քառեակային, իսկ ատելի յաճախ՝ երկու կամ երեք մասանի երգեր են, որոնք ընդգրկում են օպերայի բովանդակութեան գլխաւոր հանգուցային կէտերը, պոեմի բոլոր կարեւորագոյն մեներգային եւ զուգերգային դրուագները⁴⁴: Ինչ վերաբերում է ամբողջ կառոյցի երաժշտական տրամաբանութեանը, ապա դրանում նկատելի է լէյտմոտիային մտածողութիւնը, որի միջոցով Կոմիտասը ձգտում էր հասնել որոշակի ելեւէջային կամ մեղեդիական յիշեցումների⁴⁵ եւ բովանդակութեան ընդհանուր տրամաբանական միասնութեան:

Փոքր-ինչ շեղուելով սոյն հիմնական նիւթից, արժէ մէջբերել Կոմիտասի *հմայքին տակ* գրքում զետեղուած՝ Լիպարիտ Նազարեանցի յուզիչ գրրառումը՝ Կոմիտասի հետ ունեցած մի յիշարժան զրոյցի մասին, որի ընթացքում վերջինս դաշնամուրով նուագել էր իր յօրինած մի իւրօրինակ ստեղծագործութիւնը: Ահա թէ ինչ տպաւորութիւն էր ստացել յուշագրողը. «Տարօրինակ – եթէ ոչ արտասովոր – բան մը կար այդ երաժշտութեան մէջ. հայկական չէր ան՝ ընդունուած ըմբռնումով, ոչ ալ եւրոպական. ժուժկայ, անսթեւեթ, երբեմն մինչեւ իսկ չափազանց անպաճոյճ, բայց խորապէս յուզող, առինքնող: Հազիւ նշմարելի թախիժ մը կ'անցնէր կրորին մէ-

⁴³ Շահան Շահնուր, *Ազգայն Կոմիտաս եւ իբր յաւելագիր վաղը*, մատենաշար «Յառաջ», Փարիզ, 1970, էջ 10:

⁴⁴ Ալիքսանդր Շահվերդեան, *Հայ երաժշտութեան պատմութեան ակնարկներ*, էջ 437, ծնթ. 14, էջ 614-15:

⁴⁵ *Музыкальная энциклопедия, т. 4* [Երաժշտական հանրագիտարան, հտր. 4], «Սովետական հանրագիտարան» հրատ., Մոսկուա, 1978, էջ 597:

ջէն. թախիծ՝ որ չի ցաւցըներ, վասնզի անոր քով շարունակ լսելի են յամառ վճռականութեան հնչիւնները, որոնք կը խաղաղեցնեն հոգին եւ յուսոյ ու լաւարեւոյթեան երանութիւնը կ'ապրեցնեն»⁴⁶: Առաւել ուշագրաւ է շարունակութիւնն այս անջնջելի տպաւորութեան, որ ստացել է ունկնդիրը Կոմիտասի նուագից. «Վերյիշում, յուշանք – այդ գաղափարի գերմաներէն բառովը կոչած էր Կոմիտաս իր կտորը: – *Reminiszenz ... – Ինչու՞ այդպէս, – հարցուցի զարմացած: – Ժպտեցաւ ու ըսաւ միայն, թէ հայերէն ոչ մէկ բառ կ'արտայայտէ այդ գաղափարը այնպէս, ինչպէս որ ինքը կ'ըմբռնէ զայն: – Այսօր, ամբողջ քառորդ դար ետքը միայն կարելի եղած է հասկնալ ոչ միայն Reminiszenzի՝ այլեւ Կոմիտասի անհուն էութիւնը»⁴⁷:*

Սրանից կարելի է եզրակացնել, որ Կոմիտասի համար առանձնա-յատուկ նշանակութիւն է ունեցել երաժշտական յիշեցումի կամ վերյուշի գաղափարը. նա կիրառել է այդ խորհրդաւոր հնարքը նաեւ «Անուշ» օպերայում՝ գործող անձանցից իրաքանչիւրին օժտելով որոշակի ոճական ուղղութեամբ ունեցող մեղեդիներով, Կոմիտասը դրանց միջոցով տարբեր կերպարներ է կերտում, որոնց փոխարարութիւնների զարգացումն ապահովում է ստեղծագործութեան գրաւիչ ընթացքն ու խորը յուզակա-նութիւնը: Դրան նպաստում են նաեւ նուագախումբն ու երգչախումբը, որոնց դերը նշանակալից է օպերայում թէ՛ որպէս նուագակցութիւն, եւ թէ՛ որպէս կերպարային բնութագրումների երաժշտական արտայայտութիւն:

ԱՆԱԻԱՐՏ «ԱՆՈՒՇ» ՕՊԵՐԱՅԻ ԿԱՏԱՐՈՒՄՆԵՐԸ

Ժամանակակիցները Կոմիտասի մասին գրքում առկայ է Աղանի Մես-րոպեանի յուշերի մի ընդարձակ շարք, որտեղ խօսուում է նաեւ Կոմիտասի «Անուշ» օպերայի մի շարք հատուածների կատարման մասին՝ Կոստանդ-նուպոլիսի «Պըտի-Շան»ի ձմեռային թատրոնի բեմում. «Մեծ երաժշտա-գէտ-երգչին հասած հոգեկան դժբախտութենէն վերջ, անոր աշակերտնե-րէն խումբ մը միանալով Պոլսոյ հայ դրամատիկ թատերական խումբին ե-րիտասարդ դերասաններուն (որոնցմէ շատերը նոյնպէս Կոմիտասի «Գու-

⁴⁶ Եղուարդ Յակոբեան, Կոմիտասի հմայքին փակ. երաժշտական ուսումնասիրու-թիւններու եւ քննախօսութիւններու ժողովածու, Կրատ. Շիրակ, Պէրյուֆ, 1972, էջ 41:

⁴⁷ Նոյն. նաեւ՝ էջ 49-50: Եգիպտահայ երաժշտագէտ Եղուարդ Յակոբեանն իր վե-րոնշեալ գրքում արժարծել է Լիպարիտ Նազարեանցի անձի մասին ուշագրաւ տուեալներ. «Լիպարիտ Նազարեանցի անունը սերտօրէն կապուած է Կոմիտա-սի «ինքնակենսագրութիւնի»ի հրատարակման պատմութեան հետ» (էջ 31): Յակոբեանն ամբողջութեամբ մէջբերում է նաեւ Կ. Պոլսի «Ինիոն-ֆրանսէզ»ի սրահում 1911ին կայացած Կոմիտասի հրատարակային համերգի մասին վեր-ջինիս յօդուածը՝ «Կոմիտաս Վարդապետի համերգին շուրջ» խորագրով՝ որպէս Կոմիտասի գործի գնահատման առաջին լուրջ փորձ՝ Ռուբէն Լեւոնեան գրչանու-նով (էջ 32-36):

սան» երգչախումբին անդամներն էին), 1919 թուի գարնանը «Պրտի-Շան»ի ձմեռային թատրոնին մէջ, դերասան Աշոտ Մադաթեանի գլխաւորութեամբ առաջին անգամ ըլլալով ներկայացուցին Կոմիտասի ծայնագրած «Անուշ» օպերայէն որոշ հատուածներ՝ իր նախնական վիճակով: «Պրտի-Շան»ի ծովածաւալ հայ հասարակութիւնը օւսացիներով դիմաւորեց փարաքախտ Կոմիտասի «Անուշ»ի հատուածներու բեմադրութիւնը, որը դժբախտաբար եղաւ առաջինն ու վերջինը...»⁴⁸: Այս տեղեկութեան հաւաստիութիւնը Կոմիտասի աշակերտների միջոցով ժամանակին փորձել է ճշգրտել Աթայեանը, ըստ որի՝ «...Կոմիտասը գրել է մի շարք տեսարաններից առանձին երգեր-արիաներ, որոնք ցուցադրելիս նա շարունակ շեշտել է, թէ դեռ վերջնականապէս աւարտուած գործեր չեն»⁴⁹: Ի վերջոյ, հեղինակին յաջողում է պարզել, որ Պրտի-Շանում բեմադրուած «Անուշ»ը ո՛չ թէ Կոմիտասի հեղինակածն է եղել, այլ նոյն պոեմի հիման վրայ Յակոբ Սիրունու կազմած երգախառն դրաման, որը 1919ի Փետրուարի 16ին բեմադրել էր Մկրտիչ Զանանը՝ դեռեւս 1910ին նման մի ներկայացման համար Վարդան Սարգսեանի գրած մեներգերով ու խմբերգերով, որոնց մի մասը յետագայում՝ 1937ին, տպագրուել է Փարիզում⁵⁰: Վերը նշուած տեղեկութիւնն առկայ է նաեւ Սիրունու յուշերում՝ գրուած ամենայն հայոց բանաստեղծի Կ. Պոլիս այցելութեան առթիւ. «Թումանեան լսեր էր, թէ երկու փարի առաջ, 1919ին թատերախաղի վերածեր էի իր «Անուշը», որ երկիցս ներկայացուած էր Պոսոյ մէջ, Վարդան Սարգսեանի յորինած եղանակներով», իսկ դրա յղման մէջ գրուած է. «Անուշը» Պոլսում բեմադրուել է 1919 թ. Փետրուարի 16ին Փթի Շանի յայտնի թատրոնում: ... Ռեժիսորը եղել է Մկրտիչ Զանանը»⁵¹: Այսինքն՝ փաստօրէն Աղանի Մետրոպեանի վերոնշեալ յուշերում թիրիմացաբար Կոմիտասին է վերագրուել նրա սաներից՝ Սարգսեանի յորինած եղանակներով եւ Սիրունու գրած բեմագրով «Անուշ» օպերայի բեմադրութիւնը: Վերոնշեալ յուշը հաւաստի վկայում է, որ «Անուշ»ի 1919ի բեմադրութիւնը կապ չունի Կոմիտասի հետ:

Ինչ վերաբերում է Կոմիտասի հեղինակած եւ Աթայեանի յայտնաբերած՝ անաւարտ «Անուշ»ի պահպանուած երգերին, ապա դրանց հիման վրայ 1973ին (բանաստեղծի մահուան 50ամեակի օրը՝ Փետրուարի 23ին) Երեւանի Թումանեանի տուն-թանգարանում կայացած գիտաժողովի ընթացքում տեղի է ունեցել օպերայի կենդանի կատարումը հենց իր՝ անուանի կոմիտասագետի պատշաճ բացատրութիւններով հանդերձ: Կոմիտա-

⁴⁸ Աղանի Մետրոպեան, «Կոմիտասի «Անուշ» օպերայէն հատուածներ՝ «Պրտի-Շան»ի ձմեռային թատրոնին մէջ», *Ժամանակակիցները Կոմիտասի մասին*, էջ 309-10:

⁴⁹ Աթայեան, *Կոմիտասի «Անուշ» անաւարտ...*, էջ 43-44:

⁵⁰ Անդ:

⁵¹ Յակոբ Ճ. Սիրունի, «Բարի շունչը, զոր մեզ բերաւ Թումանեան», *Թումանեանը ժամանակակիցների յուշերում*, էջ 814, 975:

սի «Անուշ»ը կրկնուել է Արուեստի աշխատողների հանրապետական տանը՝ ՀՍՍՀ ԳԱ Արուեստի ինստիտուտի կազմակերպած յատուկ երեկոյին, ինչպէս նաեւ ցուցադրուել է հեռուստատեսութեամբ: Այդ բացառիկ միջոցառման երաժշտական բաժինն իրագործուել է Կոմիտասի անուան երաժշտանոցի եւ Ռոմանոս Մելիքեանի անուան երաժշտական ուսումնարանի սաների կատարմամբ: Չնայած «Անուշ»ի անաւարտ լինելու հանգամանքին, դրա կատարման արձագանգները վկայում են, որ ներկաները խորը ակնածանքով եւ մեծ հետաքրքրութեամբ են ունկնդրել այն: Ահա թէ ինչ է գրել այդ մասին Յովակիմեանն իր վերոնշեալ յօդուածում.

Երաժշտագէտ, Կոմիտասի երաժշտական ժառանգութեան հետազօտող Ռոբերտ Աթայեանը, ձեռնարկելով կոմիտասեան «Անուշի» համահաւաք երաժշտութեան ուսումնասիրմանը, այնքան խորացաւ այդ աշխատանքում, որ կազմակերպեց նաեւ նրա մեղեդիական հատուածների ցուցադրում ուսանողների ուժերով: Ի մի հաւաքելով օպերայի ավարտուած մեներգերն ու խմբերգերը, նա քանիցս կազմակերպեց «Անուշ» օպերայի համերգային ներկայացում՝ հեռուստատեսութեամբ եւ առանձին վայրերում, դրանով իսկ ամփոփ պատկերացում տալով Կոմիտասի անձանօթ ստեղծագործութեան մասին: Ամէնից գրաւիչը, թերեւս, Թումանեանի տուն-թանգարանում կայացած համերգային կատարումն էր՝ բանաստեղծի մահուան 50ամեակի առթիւ հրաւիրուած գիտական նստաշրջանում: 1973 թ. Մարտի 23ին, օպերան գրուելուց վեց-եօթ տասնամեակ անց, Թումանեանի յարկի տակ, առաջին անգամ, յուրախութիւն ներկայ գտնուողների, հնչեցին Անուշի եւ Սարոյի մեներգերը եւ մի շարք խմբերգեր: Ռ. Աթայեանի հանգամանալից ծանօթութիւնից յետոյ հանդէս եկան ուսանողներ Արաքսի Մանսուրեանը (Անուշ), Արգաս Ոսկանեանը (Սարո), Լ. Աբրահամեանը, Ս. Աղեանը, Զ. Մանուկեանը եւ Շ. Մկրտչեանը (երգեցիկ խումբ)»⁵²:

Կարծում ենք, որ այժմ նոյնպէս հնարաւոր կը լինէր նորովի իրագործել այդ հոյակապ մտայղացումը, մանաւանդ որ համապատասխան անհրաժեշտ նիւթերն արդէն 1981ին տպագրուել են Աթայեանի վերոնշեալ յօդուածին կից: Գուցէ անհրաժեշտ կը լինի վերախմբագրել այս ամէնն ու նորովի բեմադրել այն՝ Կոմիտասի ստեղծագործութիւնը յատու պատշաճի ներկայացնելու նպատակով:

ԱՄՓՈՓՈՒՄ

Այսպիսով, Յովհաննէս Թումանեանի «Անուշ» պոեմի յենքով հայոց առաջին ազգային օպերան ստեղծելու ուղղութեամբ Կոմիտասի կատարած հսկայական աշխատանքը՝ բնիկ հայկական թեմայով, հայ ժողովրդական լեզուով եւ դասական օպերային սկզբունքներով ազգային երաժշտական ներկայացում ստեղծելու խորապէս մտածուած առաջին փորձն է: Այդ տե-

⁵² Յովակիմեան, էջ 251-52:

սակեւոյց, նոյնիսկ անաւարտ վիճակում, Կոմիտասի «Անուշ» օպերան գեղարուեստական եւ պատմական բացառիկ կարեւոր նշանակութիւն ունի:

HOVHANNES TUMANYAN'S POEM "ANUSH" AND
THE HOMONYMOUS UNFINISHED OPERA BY KOMITAS
(SUMMARY)

ARPI VARDUMYAN
avardumyan8@gmail.com

The first version of the poem “Anush” by Tumanyan was published in 1892 in Moscow, in the second volume of his poems. As is well known, in the early 1900s, the author completely revised all his poems, including “Anush”. This collection was published in Tbilisi in 1903, and after reading it, Komitas had the idea of creating an opera based on the poem “Anush”.

Komitas had received a fundamental musical education in Berlin, where he became acquainted with the principles of musical theater, the opera genre and the laws of classical opera. He decided to write an opera based on the poem “Anush”, since this plot most closely corresponded to his plan to create a truly folk vocal and musical work. He intended to subordinate the laws of classical opera to the spirit of Armenian folk musical thinking; in the end a new type of musical work would result, which might be a synthesis of these two styles.

Unfortunately, Komitas’s plan remained unfinished, although there are more than 20 arias, duets, choral and orchestral parts from this opera.

Based on this material, in 1973, in connection with the 50th anniversary of Tumanyan’s death (March 23), the opera “Anush” by Komitas was staged in Yerevan by singers-students of the Komitas Conservatory and the Romanos Melikyan College of Music. The performance was a great success; it was repeated in the Armenian House of Artists –at the end of the Scientific Conference at the Institute of Art of the Armenian Academy of Sciences; it was even broadcast on television.

ԱԿՆԱՐԿ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՄԲ ԿԱՄ ՀԱՅԱՊԱՏԿԱՆ ԿՆԻՔ ԿՐՈՂ ՊՂՆՁԵԱՅ ԴԳԱԼՆԵՐՈՒ ԵՒ ՊԱՏԱՌԱՔԱՂՆԵՐՈՒ

ԱՆԴՐԱՆԻԿ ՏԱԳԷՍԵԱՆ
adakessian@haigazian.edu.lb

ՄՈՒՏՔ

Մեր նախորդ ակնարկներով լուսարձակի տակ առած էինք հայկական պղնձագործության զանազան երեսակներ¹: Ստորեւ կը ներկայացնենք հայկական արձանագրութեամբ կամ հայապատկան կնիք կրող պղնձեայ դգալներու եւ պատառաքաղներու նուիրուած ակնարկը, զոր շարադրած ենք Միհրան Մինասեանի, Սասուն Սիմոնեանի² եւ Անդրանիկ Տագէսեանի հաւաքածոներուն հիմամբ: Շնորհակալութիւն կը յայտնենք անոնց երկուքին, որ մեր տրամադրութեան տակ դրին իրենց հաւաքածոն, որուն հիմամբ ալ կարելի եղաւ յառաջացնել նիւթերու բաւարար քանակ մը՝ նման ակնարկի մը համար: Հասկնալի է, որ նիւթը սպառած չենք նկատեր. այս ակնարկը կը նպատակադրէ առաջին քայլերը կատարել հայ պղնձագործութեան այս ենթախումբին ուսումնասիրութեան ուղղութեամբ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՇՈՒՄՆԵՐ

Վերոյիշեալ հաւաքորդներուն քով կարելի չեղաւ գտնել որեւէ դանակի նմուշ, մինչ նոյն դգալ-պատառաքաղներու նմուշներու հանդիպեցանք ա-

¹ Անդրանիկ Տագէսեան, «Յաւելեալ տեղեկութիւններ եւ նորութիւններ հայկական տիւրքներու մասին», *Հայկազեան հայագիտական հանդէս*, ԼԱ:2011, էջ 643-59. նաեւ նոյնի՝ «Յեղասպանութեան զոհ՝ Ուրֆայի պղնձագործութիւնը եւ արիեստագէտ Յակոբ Մաներեան», *Հայկազեան հայագիտական հանդէս*, ԼԵ:2015, էջ 375-98. նաեւ նոյնի՝ «Ֆրունճեան եղբայրներ եւ սրճաղացներու ճարտարարուեստը Լիբանանի մէջ (1940ականներ)», *Հայկազեան հայագիտական հանդէս*, ԽԱ:2021, էջ 537-50 «Ակնարկ հայկական արձանագրութեամբ պղնձեայ թասերու վրայ», *Հայկազեան հայագիտական հանդէս*, ԽԲ/1:2022, էջ 339-50. նաեւ նոյնի՝ «Հայկական պղնձեղէնի Սարգիս Զամպաքճեանի հաւաքածոն», *Հայկազեան հայագիտական հանդէս*, ԽԲ/2:2022, էջ 525-50. նաեւ նոյնի՝ «Ակնարկ հայերէն արձանագրութեամբ բաղնիքի պղնձեայ կաւամաններու վրայ», *Հայկազեան հայագիտական հանդէս*, ԽԳ/1:2023, էջ 49-70. նաեւ նոյնի՝ «Երեք դիտարկում ԺԸ. Դարակէսի, Վանի եւ Երուսաղէմի հայկական պղնձագործութեան մասին», *Հայկազեան հայագիտական հանդէս*, ԽԴ/1:2024, էջ 231-40:

² Սասուն Սիմոնեանի նիւթերուն ծանօթացանք 6 Դեկտեմբեր 2023ին, Պէյրութ: Միհրան Մինասեանի նիւթերուն ծանօթացանք 15 Յուլիս, 2024ին, Երեւան: Հաւաքորդներուն քով կային նոյն կնիքը կրող մէկէ աւելի նմուշներ, յաճախ ալ նմուշները կը կրկնուէին այլ հաւաքորդներու քով:

նոնց քով: Դգալ-պատառաքաղները գրեթե ամբողջությամբ մեծ չափի էին, իսկ փոքրաչափ դգալ-պատառաքաղները՝ հազուադեպ:

Մեկնելով առկայ նիւթէն, պէտք է ընդգծել, որ պատառաքաղները նոյնատեսակ են, մանր տարբերութիւններով, բոլորն ալ՝ խոհանոցային օգտագործման: Դգալները, սակայն, կը բաժնուին երկու հիմնական խումբի.- 1) ուտեստի դգալներ, 2) չափումի կլոր դգալներ, որոնք օգտագործուած են դեղարաններու մէջ՝ հեղուկ կամ փոշի դեղի չափը ճշտելու համար:

Նշենք նաեւ թէ, դգալ-պատառաքաղները պատրաստուած են ձուլմամբ, քան թէ՛ կոփումով: Արդարեւ, ի տարբերութիւն պնակներու, գաւաթներու, թասերու, դոյլերու, շերեփներու են., դգալ-պատառաքաղը ընդհանրապէս կարելի է անհամեմատ դիւրութեամբ յառաջացնել ձուլման գործընթացով, եւ գրեթե երբեք՝ կոփումով: Յիրափ, այս իրերուն պարագային շատ ակնյայտ են խարտոցումի հետքերը (նաեւ՝ մակերեսներու հազուադէպ մանր ծակոտկէտութիւնը), որոնք յաւելեալ ապացոյց են ձուլման աշխատանքներուն: Պէտք է անելցնել, սակայն, որ դիտարկուած դգալ-պատառաքաղներուն մեծամասնութեան մակերեսը ունի ուշագրաւ ողորկութիւն, սահունութիւն: Անոնք ԺԹ. դարավերջ-Ի. դարակէսի (հաւանաբար մինչեւ 1960ականներ) արտադրութիւններ պէտք է նկատել:



Վերեւի նկար.- Christofle ընկերութեան արտադրութեան դգալ-պատառաքաղներ. ներքեւի նկար.- եւրոպական այլ ընկերութիւններու նմուշներ նմանակող դգալը



Այս դգալ-պատառաքաղներէն ոմանց ձեւը, մանաւանդ կոթի բաժնին ձեւաւորումը կը նմանի հանրաձանօթ Christofle ընկերութեան 1880-1950ականներուն արտադրած մէկ նմուշին: Իդէպ, բերանի եւ կոթի միջանկեալ հարթ բաժիններով դգալները եւս կը նմանին նոյն շրջանին, եւրոպական

այլ ընկերություններէ արտադրուած դգալներու: Ըստ երեւոյթին, ընդօրինակում-նմանակում մը եղած է երոպական ձեւերու:

Այստեղ լուսարձակի տակ կ'առնենք միմիայն հայապատկան կնիք կրող դգալ-պատառաքաղները, որոնք ընթեռնելի են, երկու բացառութեամբ³:

ա) Նկարագրութիւն ուրեստի դգալներու⁴

Ասոնք երկու տեսակ են. ոմանց բերանի եւ կոթի միջանկեալ բաժինը խողովակաձեւ է, ոմանցը՝ հարթ:

Հարթ միջանկեալ բաժինով ուրեստի դգալներ.-

- 1) Կոթին աւարտը հարթ է, կոթին եւ վիզին եզերքը՝ թեք հարթութիւն մը ունի, կոնակը միահարթ է, կնիքը՝ اسكان երեսակողմն է: Ան կը տարբերի այս ենթախումբին պատկանող բոլոր միւս դգալներէն իր ձեւով:
- 2) Կոթը կոր աւարտ ունի եւ հորիզոնական շրջագիծ, կնիքը երեսակողմն է (جوج): Թիւ 2-9 կրող դգալները ձեւով նման են իրարու եւ յստակօրէն կը տարբերին թիւ 1 դգալէն:
- 3) Կոթը եւ վիզը հարթ հորիզոնական շրջագիծ ունին, կոթը կոր աւարտ ունի, կնիքը՝ حجيان بدروس երեսակողմն է:
- 4) Կոթը եւ վիզը հորիզոնական շրջագիծ ունին, կոթը կոր աւարտ ունի, կնիքը՝ بدروس երեսակողմն է:
- 5) Կոթը եւ վիզը հորիզոնական շրջագիծ ունին, կոթը կոր աւարտ ունի, կնիքը՝ اوهانتيان երեսակողմն է:
- 6) Կոթը եւ վիզը հորիզոնական շրջագիծ ունին, կոթը կոր աւարտ ունի, կնիքը երեսակողմն է (JOZEF):
- 7) Կոթը եւ վիզը հորիզոնական շրջագիծ ունին, կոթը կոր աւարտ ունի, կնիքը՝ BEDROS, երեսակողմն է:
- 8) Կոթը եւ վիզը հորիզոնական շրջագիծ ունին, կոթը կոր աւարտ ունի, կնիքը՝ اسكان سرکيس երեսակողմն է:
- 9) Կոթը հարթ է, նուազ-կոր աւարտով, կնիքը՝ GORG.K, երեսակողմն է:

խողովակաձեւ միջանկեալ բաժինով ուրեստի դգալներ.-

- 10) Կոթը նուազ-կոր աւարտ ունի, կնիքը՝ اسكان سرکيس երեսակողմն է, ասոր կը նախորդէ դաստակէն մինչեւ ցուցամատը ցոյց տուող երկրորդ մատնանիշ-կնիք մը, ուղղուած անուանակնիքին:
- 11) Կոթը նուազ-կոր աւարտ ունի, կնիքը (جوج د) երեսակողմն է:

³ Որոշ վերապահութեամբ ընդգրկած ենք կնիք մը, որ կը կրէ արաբերէն Նուրի անունը, նկատի առնելով որ ան ծանօթ եւ հայերու կողմէ օգտագործուած շուկայական անուն եղած է: Երկրորդը՝ արաբատառ Ս եւ Շ սկզբնատառերը ունեցող կնիքն է, որուն հայապատկանութիւնը հաւանական կը նկատենք:

⁴ Այս դգալներուն չափագրութիւններուն համար տեսնել կցեալ աղիւսակը:

- 12) Կոթը կոր աարտ ունի, կոթը հորիզոնական աարտ ունի, երկու կնիք ունի՝ երեսակողմին, մին՝ մաշած խորհրդանշան մըն է, երկրորդը՝ **AGOP**, անուանակնիքն է:
- 13) Կոթը նուագ-կոր աարտ ունի, կնիքը՝ اکوب երեսակողմն է:
- 14) Կոթը նուագ-կոր աարտ ունի, կնիքը՝ مریاتی اکوب երեսակողմն է:
- 15) Կոթը նուագ-կոր աարտ ունի, կնիքը՝ ارتین երեսակողմն է:
- 16) Կոթը նուագ-կոր աարտ ունի, կնիքը՝ کره بیت երեսակողմն է:
- 17) Կոթը կոր աարտ ունի, կնիքը՝ کیورك երեսակողմն է:
- 18) Կոթը նուագ-կոր աարտ ունի, կնիքը՝ عمل نوري երեսակողմն է:
- 19) Կոթը հարթ է, կնիքը - 2 հատ՝ արաբերեն եւ անգլերեն- ORIGINAL COLOUR, بادیقو կոնակին է:
- 20) Կոթը հորիզոնական մանր բաժանարար գիծ մը ունի, կնիքը - ձեռագիր - (Sahag) երեսակողմն է, ունի նաեւ արծիւ կենդանակերպով կնիք:
- 21) Կոթը հորիզոնական մանր բաժանարար գիծ մը ունի, կնիքը (جمبرجیان) երեսակողմն է:
- 22) Կոթը նուագ-կոր աարտ ունի, կնիքը՝ **JOZEP⁵**, երեսակողմն է:
- 23) Կոթը կոր աարտ ունի, կնիքը՝ صرافیان سرکيس երեսակողմն է:
- 24) Կոթը կոր աարտ ունի, կնիքը՝ اسکان بنیامین երեսակողմն է:
- 25) Կոթը նուագ-կոր աարտ ունի, կնիքը՝ **BEDROS**, երեսակողմն է:
- 26) Կոթը նուագ-կոր աարտ ունի, կնիքը՝ بدروس حجیان երեսակողմն է:

Աղիսակ 1.- Դգալներու չափագրութիւն (սմ.-կր.)							
Բերանի եւ կոթի հարթ միջանկեալ բաժինով դգալներ							
#	Պտ կն.	Կնիք	Մե-տաղ	Կշիռք	հասակ	Բերանի	
						չափ	խորք
1	ՄՄ	اسکان	Դեղ. պղ.	48	19.6	6.5x3.7	
2	ԱՏ	جويج	Դ.Պ.	70	21	7.5x4.5	1.5
3	ՄՄ	بدروس حجیان	Դ.Պ.	40-46	19.6-20	6.3-6,5x3.5-4	
4	ՄՄ	بدروس	Դ.Պ.	52	20,2	7x4.2	
5	ԱՏ	اوهانیان	Դ.Պ.	45	19.6	4x6.6	1
6	ԱՏ, ՄՄ	JOZEF	Դ.Պ.	69	21	4.5x7.5	1.5
7	ՄՄ	BEDROS	Դ.Պ.	44-49	19.4-20	3.4-3.6x6.3-6.8	
8	ՍՍ	اسکان سرکيس	Դ.Պ.	52	19-19.5	4x6.9	
9	ՍՍ	GORG.K	Դ.Պ.	43	19.5	3.5x6.5	

⁵ Այս անուանակնիքին վերջին տառը կրնայ F կամ P ըլլալ:

Բերանի եւ կոթի խողովակաձեւ միջանկեալ բաժինով դգալներ							
10	ԱՏ, ՍՍ	اسكان سرکيس	Դ.Պ.	44-52	19.5-20.1	3.8-4x6.5-6.8	1.3
11	ԱՏ	د جورج	Դ.Պ.	50-60	19.8-20	4.2-4.3x7.2	1.5-1.7
12	ԱՏ	AGOP	Դ.Պ.	71	24.5-25	4.4/4.5x7.1/7.2	1.5-1.7
13	ՄՍ	اکوب	Դ.Պ.	70	19.9	6.5x4	
14	ՄՍ	مرياتي اکوب	Դ.Պ.	46	19,5	7x3.8	
15	ԱՏ	ارتين	Դ.Պ.	46	19,5	3.9x6.7	1.5
16	ԱՏ	کره بيت	Դ.Պ.	55	19.3	3.9x6.9	1.4
17	ԱՏ	کيورک	Դ.Պ.	48	19.3	3.8x6.8	1.2
18	ԱՏ	عمل نوري	Դ.Պ.	44	20.2	4x6.8	1.3
19	ՄՍ	ORIGINAL COLOUR, بادريق	Դ.Պ.	46	18.8	6.5x4	
20	ՄՍ	Sahag	Դ.Պ.	44	19.9	6.2x3.5	
21	ՄՍ	جمبرجيان	Դ.Պ.	50	19.3	6.5x3.6	
22	ՍՍ	JOZEF	Դ.Պ.	45-56	19.5-21	3.8-4.2x6.5-7.2	
23	ՍՍ	صرافيان سرکيس	Դ.Պ.	62	20.1	4x7	
24	ՍՍ	اسكان بنيامين	Դ.Պ.	51	19.5	4x7	
25	ՍՍ ՄՍ	BEDROS	Դ.Պ.	44-49	19-20	3.5-4x6.8-7	
26	ՄՍ	بدروس حجيان	Դ.Պ.	40	19.6	3.5x6.3	

Կնիքներ⁶.-

Դիտարկուող դգալներուն բոլոր կնիքները կոթերուն վրայ են, երբեմն երեսակողմին, երբեմն՝ կոնակը: Չհանդիպեցանք դգալներու որոնք կը կրեն երկու անուանակնիք, կամ կնքուած են թէ՛ երեսակողմին եւ թէ՛ կոնակին:

Դիտարկուող դգալները ունին անգլերէն 4 եւ/կամ արաբերէն 17 կնիքներ⁷, որոնք կը համապատասխանեն - այբէնական կարգով - Արթին, Գէորգ, Ժողէֆ, Իսկէն[եան], Իսկէն[եան] Բենիամին, Իսկէն[եան] Սարգիս, Կարապետ, Ճորճ, Ճորճ Տ., Ճորճ Գ., Չեմպերճեան, [Յ]ակոբ, Միրիաթի [Յ]ակոբ, Նուրի, Պատրիկ, Պետրոս, Պետրոս Հաճեան, Սարաֆեան Սարգիս, Օհանեան անձնանուն-ազգանուններուն⁸:

⁶ Կնիքները կը ներկայացնենք ըստ իրենց գրութեան:

⁷ «جورج» անուանակնիքով երկու տարբեր կնիքներ կան. մին կլոր, միւսը՝ հակթաձեւ շրջանակի մէջ, որոնք գործածուած են տարբեր ձեւի դգալներու վրայ:

⁸ Ատոնցմէ միքանին կրնան պատկանիլ նոյն արիեստանոցին, ինչպէս՝ Իսկէն եւ Իսկէն/Բենիամին/Սարգիս, Ժողէֆ, Ճորճ, Ճորճ Տ, Ճորճ Գ, Պետրոս են. կնիքները: Շատ հաւանական է որ ոչ-հայատառ օտարանուն կնիքը պատկանած ըլլայ հայ պղնձագործի, մանաւանդ որ կ'ենթադրենք որ խնդրոյ առարկայ դգալ-պատառաքաղներուն մեծ մասը արտադրուած է Հալէպի մէջ, ուր յաճախորդներուն մեծա-

ա2) Չափումի դգալներ

Նկարագրություն.-

Դիտարկուող հաաքածոներուն մէջ այս դգալներուն թիւը երեք է, որոնցմէ մին անկնիք է⁹, երկրորդը ունի արաբերէն Ս. Շ. (س ش) սկզբնատառերով կնիք մը, իսկ երրորդը արաբերէն Աքոպ (اكوب) անուանակնիքը: Այս երեք դգալներն ալ նոյնանման են, կոթը հարթ, վիզը՝ քառակողմ, Աքոպը կնքուած է կոթին կոնակը, իսկ միւս կնիքը՝ երեսակողմը:

Աղիւսակ 2.- Կլոր փոս դգալներու չափագրութիւն (սմ.-կր.)						
#	Պտկն.	կնիք	մետաղ	կշիռը	հասակ	Բերանի չափ
1	US	اكوب	Դ.Պ.	48	18.5	5.5
2	US	س ش	Դ.Պ.	53	20	5.8



բ) Պատառաքաղներ

Նկարագրություն.-

Ի տարբերութիւն դգալներուն, դիտարկուող պատառաքաղները միաձեւ են, միայն մէկը փոքրաչափ է: Պէտք է անելցնել նաեւ, որ ի տարբերութիւն դգալներուն, բոլոր պատառաքաղներուն բերանի եւ կոթի միջանկեալ բաժինը խողովակաձեւ է:

- 1) Կոթը հարթ է, կոր աւարտով, կնիքը՝ سرکيس قناجيان երեսակողմն է:
- 2) Կոթը հարթ է, կոր աւարտով, կնիքը՝ ՆԱՉԱՐ, կռնակն է:

մասնութիւնը ոչ-հայ էր, երկրին պետական լեզուն՝ արաբերէնը, որ հաւանաբար պարտադրուած էր հանրային ու շուկայի օգտագործման համար: Հաւանական է նաեւ, որ լատինատառ անուանակնիքները արտադրուած ըլլան մինչեւ ֆրանսական իշխանութեան աւարտը՝ Սուրիոյ մէջ, կամ գոյատեւած ըլլան առաւելագոյնը մինչեւ 1950ականներ, երբ Սուրիան առաւել արաբականացաւ:

⁹ Ասիկա կ'արձանագրենք, որովհետեւ զայն մեզի տուողը յայտնեց թէ իր ծնողը զայն բերած է Մարաշէն:

- 3) Կոթը հարթ է, կոր աւարտով, կնիքը՝ اسكان سرکيس երեսակողմն է: Կան եւ պատառաքաղներ, որոնց այս կնիքին կը նախորդէ դաստակէն մինչեւ ցուցամատը ցոյց տուող երկրորդ կնիք մը, ուղղուած անուանակնիքին:
- 4) Կոթը հարթ է, կոր աւարտով, կնիքը՝ اسكان بنيامين երեսակողմն է:
- 5) Կոթը հարթ է, կոր աւարտով, կնիքը՝ ADOUR, կռնակին է:
- 6) Փոքր պատառաքաղ, կոթը հարթ է, կոր աւարտով, վիզը խողովակած է, կռնակին ՀՅԴ զինանշանի դրոշմը կնքուած է:

Կնիքներ¹⁰.-

Պատառաքաղները կ'ընդգրկեն մէկ անգլերէն, մէկ հայերէն եւ երեք արաբերէն անուանակնիքներ: Հետեւաբար, այբէնական կարգով, վերոյիշեալ պատառաքաղներուն վրայ ունինք Ատուր, Իսկէն[եան] Բենիամին, Իսկէն[եան] Սարգիս, Գնաճեան Սարգիս եւ Նազար կնիքները:

Աղիւսակ 3.- Պատառաքաղներու չափագրութիւն (սմ.-կր.)						
#	Պտ կն.	Կշիռք	Կնիք-գրութիւն	Մետաղ	Երկայնք	Բերանի չափեր
1	ՍՍ		قناجيان سرکيس ¹¹	Դ.Պ.	37-41	18.8-19
2	ՄՄ	50	ՆԱԶԱՐ	Դ.Պ.	20.1	6.5x 2.2
3	ՄՄ, ԱՏ	36-37	اسكان سرکيس	Դ.Պ.	18.7-19.6	2-2.2-6-6.5
4	ՄՄ	40	اسكان بنيامين	Դ.Պ.	19.2-19.4	6x 2.2-2.4
5	ԱՏ	31-33	ADOUR	Դ.Պ.	18.7	2.3/2.4-5.9-6
6	ՄՄ	18	ՀՅԴ զինանշան	Դ.Պ.	12	4.2x1.9



Քիւրկ-Գէորգ

¹⁰ Կնիքները կը ներկայացնենք ըստ իրենց գրութեան:

¹¹ Սիմոնեան վերապահ է այս կնիքին «قناجيان» ընթերցման:



ADOUR-Ատուր



Արթին-ارتين



ՆԱԶԱՐ



Պատրիկ-بادريق



Sahag-Սահակ



Կարապետ-Կրե Բիտ



Օհանեսան-Օհանյան



Նուրի (ամալ՝ գործ)-عمل نوري



ՇԱ-Ս Ս



Ճեմապերճեան - Յմբրճեան



Ակրթ [3]-ՅՅՅ



Ակոբ-Յակոբ



Ակոբ-Յակոբ



Մ[ի]րիաթի Ակոբ-Յակոբ



S-ճորճ-ճ



Գ GORG.K-ճորճ



ճ-ճորճ



Գնաճեան Սարգիս Գնաճեան Սարգիս



BEDROS-Պետրոս



Պետրոս-Բեդրոս



Հաճեան Պետրոս-Բեդրոս Հաճեան



JOZEF/P-ժողով



اسكان بنيامين - Բենիամինի իսկէն



هکان-հսկէն



هکان سرکيس - հսկէն Սարգիս



اسكان سرکيس - Իսկէն Սարգիս



صرافيان سرکيس - Սարաֆեան Սարգիս



ՀՅԴ զինանշանի դրոշմը

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Մեկնելով ի ձեռի ունեցած մեր նիւթերէն, կարելի է եզրակացնել, թէ հայկական արձանագրութեամբ կամ հայապատկան կնիք կրող պղնձեայ դգալներ-պատառաքաղները.-

- 1) Ձուլման քան թէ պղնձակոփումի արդիւնք են.
- 2) Յարդ անգտանելի են դանակներ.
- 3) Մեծ ու փոքր չափի դգալ-պատառաքաղներէ բացի, գոյութիւն ունին նաեւ կլոր դգաներ, որոնք օգտագործուած են դեղարաններու մէջ՝ հեղուկ կամ փոշի դեղի չափ ճշտելու համար.
- 4) Դգալ-պատառաքաղներուն մեծամասնութիւնը հաւանաբար ԺԹ. դարավերջ--Ի. դարակէսի (հաւանաբար մինչեւ 1960ականներ) արտադրութիւններ են.: Անոնց վրայ թուական կամ վայր նշուած չէ:
- 5) Ասոնք ունին հետեւեալ հայերէն, անգլերէն եւ արաբերէն անուանակնիքները.- Ատուր, Արթին, Գէորգ, Գնաճեան Սարգիս, Ժոզէֆ, Իսկէն, Իսկէն[եան] Բենիամին, Իսկէն[եան] Սարգիս, Կարապետ, Ճորճ, Ճորճ Տ., Ճորճ Գ., Չեմպերճեան, [Յ]ակոբ, Միրիաթի [Յ]ակոբ, Նազար, Նուրի, Պատրիկ, Պետրոս Հաճեան, Ս. Շ., Սարաֆեան Սարգիս, Օհանեան:

ՅԵՏ ԳՐՈՒԹԵԱՆ

Ճիշտ է որ ուղղակիօրէն չեն առնչուիր նիւթին, յամենայնդէպս մասնակիօրէն կապ ունենալուն համար այստեղ կը ներկայացնենք արծաթեայ փոքրաչափ դգալ մը եւ պատառաքաղ մը, իրենց իւրայատկութեան համար: Ասոնք իրենց կոթին կոնակին կը կրեն հայերէն նոյն սկզբնատառերը՝ Բ եւ Ի: Պատառաքաղը (20.8 կրամ) ունի 12.5, իսկ դգալը (22.1 կրամ) 11.5 սմ. հասակ: Դգալը ոճաւորուած է: Երկուքն ալ նկարազարդուած են: Նկարները ենթադրել կու տան որ Եգիպտոսի կամ Իրաքի հայ արծաթագործ վարպետի մը գործը ըլլան:





A SURVEY OF ARMENIAN COPPER FORKS AND SPOONS
(SUMMARY)

ANTRANIK DAKESSIAN
adakessian@haigazian.edu.lb

The study focuses on the diverse forms of copper forks and spoons, which have Armenian inscriptions or have Armenian names inscribed in Arabic or Latin letters. Unlike copper bath tasses, tasses used for clay, plates, or *divits*, the forks and spoons are molded rather than hammered and shaped by hand. And unlike the above-mentioned utensils, none of these have any dates or any data that hint at their provenance. The author notes that no knives with such inscriptions have been found yet, though surely the craftsmen produced knives as well.

Basing his analysis on an extensive collection of forks and spoons that belong to three antique collectors, the author has been able to discern 29 different inscriptions, of which 21 are found on the spoons, 6 on the forks and 2 on rounded spoons (used by chemists for measurement). Certain inscriptions are found both on spoons and forks as well.

Most of the inscriptions are in Arabic letters, a few are in Latin script and one is in Armenian. Most of the inscriptions bear only the first name of the craftsman, though some have the family name too.

The author lists the names inscribed on these utensils: ADOUR, [H]AGOP, [H]Akob, [H]Akob Miryati, Artin, Badrik, BEDROS, Bedros Hadjian, Garabed, George, George D., GORG.K, Isken[ian], Isken[ian] Peniamin, Isken[ian] Sarkis, Jemberjian, JOZEP, Jozef, Kevork, Nazar, Sahag, Kenadjian Sarkis, Nazar, Nouri, Ohanian, Sarafian Sarkis, and a stamp with the initials S and Sh.

ՀԱՅ-ՍՊԱՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԵՐՈՒ ԴՐՈՒԱԳՆԵՐ (ԺԹ. ԴԱՐ-1930ԱԿԱՆՆԵՐ)

ԱՐԾՈՒԻ ԲԱԽՉԻՆԵԱՆ
artsvi@yahoo.com

Փիրենէեան թերակղզին, ըլլալով Եւրոպայի արեւմտեան ծայրամասը, թէւ դարերու ընթացքին բազմիցս հրապուրած է մշտապանդուխտ հայ ժողովուրդը, մինչեւ Ի. դարու աւարտը մեծաքանակ հայ համայնք չէ ունեցած: Այդուհանդերձ, հայ եւ սպանացի ժողովուրդներուն մէջ երբեմն եղած են մշակութային փոխարաբերութիւններ: Շատեր նկատած են հայկական եւ սպանական ոգիներու հանգիտութիւնները եւ որոշ նմանութիւններ զոյգ ժողովուրդներու մտածելակերպին եւ արտայայտութիւններուն միջեւ¹:

Սոյն աշխատութիւնը փորձ մըն է մէկտեղելու հիմնականօրէն հայկական աղբիւրներու մէջ ցրուած տեղեկութիւնները՝ ԺԸ. դարէն մինչեւ 1930ականներու հայ-սպանական մշակութային կապերու վերաբերեալ: Մասնաւոր ուշադրութիւն դարձուցած ենք գրական կապերուն եւ սպանական երաժշտութեան ու պարին մէջ հմտացած հայ արուեստագէտներուն:

¹ Օրինակ, Յովսէփ Էմին, այցելելով Մեղրի, տեղի հայերու մասին գրած է. «Տղամարդիկ նոյնքան խանդոտ են իրենց կանանց հանդէպ, որքան իսպանացիներն ու պորտուգալացիները» (Յովսէփ Էմին, *Յովսէփ Էմինի կեանքն ու արկածները*, հեղինակային հրատ., Երեւան, 2018, էջ 370): Հայ թատերապարի (պալէ) պատմութեան նուիրուած հատորին հեղինակը նշած է. «Շատոնց նկատած են, որ մենք՝ հայերս, շատ յուզումնալից կը վերաբերինք սպանական պարերուն: Կա՛մ խառնուածքը կը գրաւէ, կա՛մ մերկացուած զգացումները, կա՛մ կշռոյթը կը խանդավառէ, սակայն սպանական ազգագրութեան հանդէպ ասանդական հետաքրքրութիւնը չի մարիր» (Ասմիկ Մարկոսյան, *Страницы истории армянского балета* (Հայ պալէի պատմութեան էջեր), «Գիտութիւն», Երեւան, 2010, էջ 61): Հեղինակը նկատի ունի երեւանեան բեմին վրայ Լուսովիկ Մինքրուսի «Տոն Քիշոթ» պալէի բեմադրութիւնը չորս անգամ՝ 1954-99ին, նաեւ 1972ին հայ պարայարդար Մարք Մնացականեանի «Լորքիանա» թատերապարային բեմադրութեան ստեղծումը՝ Ֆետերիքո Կարսիա Լորքայի բանաստեղծութեան եւ սպանական պարերու հիման վրայ:

ԳՐԱԿԱՆ ԿԱՊԵՐ

Հայ-սպանական գրական կապերով զբաղած են բանասերներ Ալվինա Արամեան² եւ Վարդան Մատթեոսեան³ : Սոյն գլուխին մէջ, առանց կրկնելու անոնց կողմէ յիշուած փաստերը, կատարենք քանի մը յաւելումներ:

ԺԹ. դարուն սպանական մշակոյթը եւ մասնաւորապէս գրականութիւնը, որպէս եւրոպական մշակոյթի մէկ մաս, սկսած է թափանցել հայութեան զոյգ հատուածներուն մէջ: 1846ին, թերեւ առաջին անգամ հայերէն գրուած ըլլայ Սպանիոյ մեծ գրագէտ Միկէլ Սերվանտէսի անունը («*Կերվանտէս անմահ ոգին Սպանիոյ՝ ոգեսպառ կարօր...*»⁴): Իսկ 1853ին տպագրուած է առաջին հայերէն յօդուածը սպանական իրականութեան ամենէն յայտնի իրողութիւններէն մէկուն՝ ցլամարտի մասին⁵:

Բանաստեղծ Թովմաս Թերզեանի (1840–1909) «Յայգանուագ» քերթուածը կը թուի ըլլալ սպանական երգի մը փոխադրութիւնը: Թէեւ այդ մասին յատուկ նշում չկայ, սակայն առաջին տունը նման ենթադրութեան բացայայտ հիմք կու տայ.

*Դիւթիչ ծաղիկ Կաստիլիոյ,
Թուխ եւ հրավառ ,
Ո՛հ, որչափ սէր կ'ազդեն ասկունքդ՝
Ինչու՞ չըզգար սիրտդ այնպէս՝...*

² Ալվինա Արամեան, «Սերվանտէսը եւ հայ գրականութիւնը», *Հայ գրականութեան միջազգային կապերը, հափորթ Բ.*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան 1987, էջ 113-36. նոյնի՝ «V-XVII դդ. հայ-իսպանական պատմամշակութային կապերի պատմութիւնից», *Լրաբեր հասարակական գիտութիւնների*, 8:1990, էջ 33-42. նոյնի՝ «Հայաստան-Իսպանիա. պատմամշակութային կապեր (V-XVII դդ.)», *Գարուն*, 8:2000, էջ 77-9. նոյնի՝ *Очерки истории армяно-испанских литературных и культурных отношений V-XX вв.* (Ե.-Ի. դարերու հայ-սպանական գրական եւ մշակութային առնչութիւններու ակնարկներ), «Գիտութիւն», Երեւան 2019. նոյնի՝ «Աւետիք Իսահակեանը՝ բասկերի երգի թարգմանիչ», *Լրաբեր հասարակական գիտութիւնների*, 2:2021, էջ 369-73:

³ Վարդան Մատթեոսեան, «Դրուագներ ԺԵ.-ԺԹ. դարերու հայ-սպանական մշակութային կապերէն», *Բազմավէպ*, 1-4:2003, էջ 178-216. նոյնի՝ «Հայ գրականութիւնը սպաներէն լեզուով», *Գրական-բանասիրական ուսումնասիրութիւններ*, Գրիգոր Մելիտինեցի գրական մրցանակ, Անթիլիաս 2009, էջ 363-80. նոյնի՝ «ԺԸ. դարու հայկական թեմայով սպաներէն թատերախաղ մը», *Միջազգային գիտաժողովի նիւթերի ժողովածու նուիրուած բանասիրական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր Մելս Սանթոյեանի ծննդեան 80-ամեակին*, «Միսմա» ՍՊԸ, Երեւան 2018, էջ 252-63:

⁴ «Ոգի տպարանի. խղճութիւն գրագիտաց», *Ազգասէր*, 2 Մայիս 1846, էջ 137:

⁵ Խ. Գ., «Ցլամարտութիւն», *Բազմավէպ*, 21:1853, էջ 326-31:

⁶ Թովմաս Թերզեան, *Երկեր*, «Նայիրի», Երեւան 1992, էջ 67:

Սպանուհիի անորոշ կերպար մը կայ Սմբատ Շահազիզի (1840–1908) «Երկու ասպետ» բանաստեղծութեան մէջ՝

*Երկու ասպետ, խըրոխտ կանգնած
Սպանուհու առաջին,
Վառ նայում են ազնիւ կուսին,
Նայում աչքի հե՛նց միջին...⁷*

Աւետիք Իսահակեան (1875–1957) 1900ին թարգմանած է «Իսպանական մի հին երգից» փոքր բանաստեղծութիւնը՝

*Երէկ սիրում էի,
Այսօր՝ փանջում.
Վաղն էլ կը մեռնեմ–
Այսօր եւ վաղը,–
Երէկ շա՛տ լաւ էր⁸...*

(Վերջին նախադասութիւնը համահունչ է Սայեաթ-Նովայի «Երէկ լաւ էր, քանց վուր էսօր» հանրայայտ տողին):

Օննիկ Չիֆթէ-Սարաֆ (1874-1932) իր *Միամիտի մը արկածները* վէպին մէջ ստեղծած է կրքոտ սպանացի հոմանոսիներու կերպարներ. երեք սպանուհի քոյրերը՝ «Լէ թրէ պելլէ Օթերո» [ֆրանսական անունով՝ Les très belles Otero] եւ *«հրաչէ ու փարփարենչիկ»* Էլէոնորան՝ «Իսաղի գիշերը» գլուխներուն մէջ⁹: Աւելի ուշ գրած է «Սպանուհին» վերնագրով պատմածք մը¹⁰, որուն հերոսուհին է Ֆրանսա ապրող հրէական ծագումով 15ամեայ որբ սպանուհի Սառա Բարտո, որ հայ որբի մը սիրահարութեան առարկան է:

Նկարիչ Յովնաթանեաններուն նուիրուած իր յօդուածին մէջ, Յովհաննէս Թումանեան յիշած է սպանացի մեծ նկարիչ Բարտոլոմէ Էստաբան Մուրիլիոյի (1617-1682) անունը. «...ամէն անգամ, երբ նայում եմ [Յովնաթանեանի] *‘Աւերընկալ Մարիամի՛ պարկերին, որ ազարտել է կորուստից, ու հիացման մէջ միշտ ուզում եմ Մուրիլիոյի Մադոննայի կողքին դնեմ՝ համեմարելու, թէ արդեօք ո՞րն է անելի չքնաղը էս աստուածային կանանցից, ամէն անգամ էլ ունենում եմ նոյն բուռն զայրոյթն ու ցաւի զգացումը*»¹¹: Ուրիշ առիթով ալ Թումանեան գրած է. «Եթէ մենք համեմարելու

⁷ Սմբատ Շահազիզ, *Երկեր*, «Սովետական գրող», Երեւան, 1980, էջ 481:

⁸ Աւետիք Իսահակեան, *Երկերի ժողովածու, հատոր 2*, «Հայաստան» հրատ., Երեւան 1974, էջ 273:

⁹ Չիֆթէ-Սարաֆ, *Միամիտի մը արկածները. երբ ամուրի էր*, տպ. Վ. եւ Հ. Տէր-Ներսէսեան, Կ. Պոլիս 1908, էջ 158-74, 217-36:

¹⁰ Յովհաննէս Ասպետ, «Սպանուհին», *Հայրենիք* ամսագիր, 1:1928, Պոսթըն, էջ 16-20:

¹¹ Յովհաննէս Թումանեան, *Երկերի լիակատար ժողովածու 10 հատորով, հատոր 6*, «Գիտութիւն», Երեւան 1994, էջ 312:

լինենք Երոպայի երիտասարդությունը մեր երիտասարդության հետ, կը տեսնենք, որ մենք այնքան ցածր աստիճանի վրայ ենք կանգնած, որ ոչ մի կրիտիկայի չի դիմանում. բացառություն կազմում է Սպանիան»¹²: Ասիկա ցոյց կու տայ, թէ Թումանեան որքան քաջատեղեակ էր իր ժամանակի երոպական հանրային կեանքէն:

Գուրգէն Մահարի (1903-1969) ստեղծագործութեան վաղ շրջանին գրած է մօտ 10 բանաստեղծութենէ կազմուած «Անդալուզեան գիշերներ» շարքը, որ անձնական է եւ կապուած չէ Անտալուզիոյ հետ: Ըստ Մահարիի որդի Գրիգոր Աճէմեանի բանաւոր հաղորդման՝ հայրը շարքը գրած է Հիսիսային Կովկաս եւ խորքին մէջ նկատի ունէր Վլադիկակակազը: Միակ բացառութիւնը կրնայ թուիլ այս բանաստեղծութիւնը՝ ձօնուած հեռաւոր, անձանօթ, հրապուրիչ եզերքի մը՝

ԱՆԴԱԼՈՒԶԻԱ՛...

*Անդալուզիա՛, ո՛վ ծփանք, ով բերկրութիւն անձանօթ,
Մարմարաշէն ու հզօր արեւահե՛ր թովչուիի.
Դուն լուսեղէն երազանք, դուն օրհնութիւն արեւուր,
Սարսուռներու արշալոյս՝ որ հոգիիս կը բացուի:
Օրերուն մէջ արփախայր գիս կը ժպտին ճամբաներդ
Ուրկէ դեռ նոր սար ելաւ անուրջներու հովուիին.
Քրիզանթէմնե՛ր չորս բոլոր, ոսկի սէրեր լուսաւէր,
Արտերուն հետ ոսկեհեր ճամբաներդ գիս կը ժպտին:
Անդալուզիա՛, անձանօ՛թ, դուն օրհնութիւն ու ժպիտ,
Հին օրերու որոնու՛մ, եղեմաբո՛յր դիցուիի.
Բացի աչքերս փրփում դէմ հեշտառապ համբոյրիդ,
Ու աչքերըս քեզմէ զատ ալ չեն տեսնար ո՛չ ոքի:
– Ինչպէ՛ս օրհնեմ քեզ արեւ, ինչ խօսքերով պաշտեմ քեզ,
Ինչպէս սիրեմ քու սարսուռդ, ի՛նչ աչքերով քեզ նայիմ.
Ժպիտ ունիմ ծովերուն, այգավարդեր լուսագէս,
Խորհուրդ ունիմ աստղերուն ու լուսինին դալկաղէմ:
Երբ դուն ծնար, այդ գիշեր, ծունկի եկան քերթողներ,
Գանկերուն մէջ արփամիտ ի՛նչ սարսուռներ երկնեցին,
Ու արքաներն վար դրին իրենց սուրերն շողահեր,
Աբեղաներն խենթօրէն քաղքին ճամբան բռնեցին:
Անդալուզիա՛, օրհնութիւն, դուն հաշտութեան ծիածան,
Մարմարեղէն սեմերուդ զերթ արշալոյս կը բացուիմ,
Ողջոյն շքե՛ղ լեռներուդ ու արտերուդ ոսկեման,
Ողջոյն նորոգ գարունին, սէրի՛ն, ժպտին, համբոյրին:*

¹² Բալթ, «Երիտասարդութիւնը», Մշակ, 10 Օգոստոս 1911:

*Դաշտերուն վրայ հոգիիս ոսկի արեւ կը նայի,
Ինչքան բարի ես արեւ, լեռներն ինձի՛ կը ժպտին.
Կախուի՛մ հաշիշ շուրթերէդ համբոյրով ջերմ ու հեշտին,
Աստուածօրէն բանալու հոգոս դուռնե՛րն աղարծի:
Անդալուզիա՛, օրհնութիւն՛, աղուորութիւն, սրբութիւն: (1919¹³)*

Նոյն թուականին 16ամեայ Մահարին գրած է նաեւ հետեւեալ արձակ բանաստեղծութիւնը, ուր անդալուզուիի պատկերը կը ներկայանայ որպէս հեռաւոր, անորոշ իգական կատարելութիւն մը.-

*ՕՐԱԳՐԻ ԷՋԵՐԷՆ
ԱՅՍՕՐ ԱԼ...*

Իմ ծիածանը կարմիր, Սպահանի կարմիր վարդերուն վրայ, երազէն գինով Անդալուզեան աղջկան... Կը սահի ժամանակը ծովուն քմայքոյ ալիքներուն նման դարձդարձիկ, արշալոյսներ կը շողան ու վերջալոյսներ կը մեռնին: Իմ ծիածանը կարմիր է Սպահանի ցօղաթուրմ վարդերուն վրայ, ժպտիւն գինով Անդալուզեան աղջկան... Այսօր ալ ցնորքիս նետուիլ կ'ուզեմ խենթացնող ժպտներէդ գինով, կարմիր ծիածանիդ մէջ այրուել կ'ուզեմ, որուն ոչ մէկ գոյն հիսուելու եկաւ, ոչ մէկ ամպ՝ ծածկելու: Ծիածանիդ գամ սաւոր մը գինիով, վերջալոյսի կարմիր ճամբաներէն, Սպահանի անրջաթերթ վարդերէն.

-Անդալուզեա՛ն աղջիկ...

1 Յունիսի 1919 թ.¹⁴

1910ականներէն սկսեալ հայ մամուլին մէջ լոյս կը տեսնեն սպանական գրականութեան նմուշներ միջնորդ լեզուներէ կատարուած թարգմանութիւններով¹⁵: Աւելի ուշ սպաներէնէ թարգմանութիւններ կատարած են մասնաւորապէս Յակոբ Ս. Ակայեան¹⁶ եւ իրանահայ գրող-թարգմանիչ

¹³ Գուրգէն Մահարի, *Երկերի լիակատար ժողովածու, հատոր 1*, «Անտարէս», Երեւան 2013, էջ 45-6:

¹⁴ Նոյն, էջ 78:

¹⁵ Օրինակ՝ «on Gustavo A. Becque [Bécquer], Մեռելները», թարգմ. Վ. Գ. Թաշճեան, *Ազգ*, 7 Մայիս 1917. նաեւ՝ Հուան (sic) Մանուէլ, «Բարեպաշտ ասպետը», թարգմ. Գէորգ Ա. Սարաֆեան, *Հայաստանի կոչնակ*, 1 Սեպտեմբեր 1923, էջ 1108-9. նաեւ՝ Եուան Ռամօն Եիմինէզ (իմա՝ Խուան Ռամօն Խիմինէս), «Մահը (բանաստեղծութիւն)», թարգմ.՝ Վահրամ Սետունի, *Յառաջ*, Փարիզ, 10 Հոկտեմբեր 1926. նաեւ՝ «Քաթալոնիացի կը յարգէ իր խօսքը, սպանիական պատմուածք», թարգմանեց Չի-Շինկ (իմա՝ Չի-Լինկ), *Արեւելք*, Սթամպոլ, 15 Փետրուար 1935. նաեւ՝ «Սպանիական եւ անտալուզիական քառեակներ», *Այսօր-ասպագայ*, Փարիզ, 6 Յունիս 1953 եւն.:

¹⁶ Օրինակ՝ Խոսէ Սորիլէա, «Տոն Խուան Թենորիօ», *Ապագայ*, Փարիզ, 25 Յունիս 1935:

Զօրայր Միրզայեան (մասնաւորապէս Ֆետերիքօ Կարսիա Լորքայէ, մնացած են անտիպ):

Հայ-սպանական մշակութային կապերու պատմութեան մէջ եզակի կղզի մըն է մեծանուն գրագէտ Կոստան Զարեանը: Ան վկայած է, թէ տարբեր ծածկանուններով աշխատակցած է եւրոպական, նաեւ սպանական մամուլին: Սպանիա այցելած է 1934ին իբրեւ Միլանի *էզամէ* գրական արուեստից ամսագրի եւ *Ամպրոզհանօ* օրաթերթի յատուկ թղթակից: Զարեան վեց ամիս մնացած է Սպանիա եւ պտտած գլխաւոր քաղաքները՝ նիւթեր դրկելով զոյգ հրատարակութիւններուն: Առօրեայ աշխատութիւններուն զուգընթաց, Սպանիոյ հայութեան հին պատմութեան եւ հայ-սպանական կապերուն մասին ուսումնասիրութիւն մը գրած է, որ 1935ի տուեալով՝ մօտ ատենէն հրատարակութեան պատրաստ պիտի ըլլար (այլ տուեալներ կը պակսին այս գործին մասին): Սպանիա գտնուած միջոցին Զարեան ծանօթացած է տեղւոյն մեծ մտածողներու եւ գրագէտներու՝ Միկէլ տէ Ունամունօ, Իկասէ (*Carmen de Icaza?*, սպանացի վիպագիր, 1899-1979), Ռամոն տէ լա Սերնա եւ ուրիշներ: Մատրիտի Աթենէոյի (*Ateneo de Madrid*, քաղաքական եւ մտաւորական բարձր կեդրոն) կարգադրութեամբ դասախօսած է հայ արուեստի եւ քաղաքակրթութեան մասին¹⁷:

Սպանիա կատարած ուղեւորութեան արդիւնքն է Զարեանի «Երկիրներ եւ Աստուածներ» շարքի մաս հանդիսացող *Սպանիա* գիրքը¹⁸՝ հեղինակին եւ առհասարակ հայ գրականութեան փայլուն գործերէն մին, որ ո՛չ միայն օրագրի եւ ուղեգրութեան ձեւով կը ներկայացնէ եւրոպական երկիր մը եւ մշակոյթ մը իր անցեալին եւ ներկային ընդմէջէն, այլեւ հայերու եւ սպանացիներու ազգամշակութային, հոգեբանական եւ այլ հետաքրքրական զուգահեռներ կը բանայ: Նաեւ՝ «Տարագրութիւն» վիպերգին մէջ Զարեան յիշած է Հայաստանի մասին իր մտորումները, զորս ունեցած է Սպանիոյ մէջ: Այս հատուածին մէջ յիշուած են սպանական տեղանուններ (Մատրիտ, Քասթիլիա, Աիլա, Սեկովիա, Թոլետո, Կրանատա, Թոսա տէ Մար, Սարակոսա, Փուերթա տէլ Սոյ), նշանաւոր անձինք (Սրբուի Թերեզա, Թորքեմատա, Կոյա, Կարսիա Լորքա), իրողութիւններ (ցլամարտ, սիէռա, ռամպլա, ֆանտանկօ) եւ բառեր («բուենոս տարդի»՝ բարի երեկոյ [*buenas tardes*

¹⁷ Մ. Օզանեան, «Տեսակցութիւն մը Կոստան Զարեանի հետ», *Հայրենիք*, 23 Մայիս 1935:

¹⁸ Առանձին հատորով լոյս տեսած է՝ «Նայիրի», Երեւան, 1998, թարգմանուած է ռուսերէն (*Костан Зарян, Страны и боги: Испания: Роман-эссе*, «Գասպրինտ», Երեւան, 2003, թարգմ. Իտա Կարումեան) եւ սպաներէն (*Kostan Zarian, Países y Dioses: España: Novela-Ensayo*, Trad. Luisa Muniz Concheso, Aredit, Yerevan 2012. վերջինը՝ ռուսերէնէ): 2017ին Զարեանի թողը՝ Հայկ-Գեորգ Զարեանը (Վիեննա), մեզի դրկած է իր քով եղած *Սպանիայի* գերմաներէն անտիպ թարգմանութեան քանի մը մեքենագիր էջերու լուսանկարներ՝ ինք ալ տեղեակ չըլլալով թարգմանիչի ինքնութեան:

– պունասա թարտէս]]¹⁹: Առհասարակ, «Կոստան Զարեան եւ Սպանիան» խորագնին ուսումնասիրութեան կարօտ գրականագիտական-մշակութաբանական արժէքաւոր նիւթ մըն է²⁰:

ՀԱՅ ՄՏԱԻՈՐԱԿԱՆՆԵՐ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏՆԵՐ՝ ՍՊԱՆԻՈՅ ՄԷՁ²¹

ԺԹ. դարու վերջէն սկսեալ հատուկենտ հայեր, հիմնականօրէն մտաւորականներ, այցելած են Սպանիա: Սպանիան մասնաւորապէս իր արուեստին շնորհիւ կը սկսի ճանչցուիլ հայ մտաւորականներու կողմէ եւ իր անդրադարձը կը գտնէ անոնց գործերուն մէջ:

Սպանիա այցելած առաջին հայ արուեստագէտներէն է նկարիչ Վարդգէս Սուրէնեանց (1860–1921), որ 1897–98՝ այդ երկրին մէջ ուսումնասիրած է տեղւոյն ճարտարապետութիւնը, գեղարուեստը, կատարած շարք մը գեղանկարներ եւ էթիւպներ: Ի թիւս այլ լեզուներու, Սուրէնեանց տիրապետած է նաեւ սպաներէնի: Մարիտանական ճարտարապետութիւն պատկերող անոր գեղանկարներուն շարքէն ակնառու են Ալիամարա մզկիթի բակը ներկայացնող կտաւը («Ալիամբրա. Իսպանիա», 1898) եւ «Իսպանուհիները» (1901): Բացի այդ, Սուրէնեանց ուղարկած է թղթակցութիւններ Թիֆլիսի *Արծազանք* լրագրին՝ «Նամակներ Սպանիայից» վերնագրով²²: Հոս ան նկարագրած է իր այցելած քաղաքները (Պարսելոնա, Վալենսիա, Կրանատա, Քորտոպա, Ալքազար տէ Սան Խուան), Քաթալոնիա եւ Անտալուզիա նահանգները, բնակիչները, սպանական եկեղեցիները՝ որոշ նմանութիւններ տեսնելով հայկական ճարտարապետութեան այլեայլ տարրե-

¹⁹ Կոստան Զարեան, *Սրբի ճանապարհով*, «Սարգիս Խաչենց»-«ՓՐԻՆԹԻՆՖՈՒ»-«Անտարես», Երեւան 2020, էջ 307-11:

²⁰ Նիւթին մասնակի անդրադարձած է Վարդան Մատթէոսեան («Սպանական ուղիներ. Միկէլ տէ Ունամունոյի հետ», *Կոստան Զարեանի շուրջ (ուսումնասիրութիւն)*, Գէորգ Մելիտինեցի գրական մրցանակ, Անթիլիաս, 1998, էջ 326-49:

²¹ Հոս նշենք, որ հաւանաբար սպանուհի կամ Պոլիս հաստատուած սպանախօս (սպանիոլերէն՝ սոմանեան հրեաներու ռոմանական լեզուն խօսող) հրեաներու զաւակ եղած է հայ առաջին արհեստավարժ թատերախումբի՝ Արամեան թատրոնի մասնակից դերասանուհիներէն Լիզա Ֆեռնանտէս (Բաբկէն Յարութիւնեան, *XIX-XX դարերի հայ թատրոնի փարեգրութիւն, հատոր առաջին (1801–1900)*, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան 1980, էջ 16): Հայ բեմի ականաւոր դերասանուհի Ազնիւ Հրաչեայ (1853–1920) Ադրիանուպոլսոյ մէջ հրէական թատերախումբի մը հետ բեմ ելած է «Փոլ Ճոն» թատերախաղին մէջ՝ հայերէնով գրի առնելով եւ զոց սորվելով սպաներէն դերը: Մէկ ներկայացում տրուած է ի նպաստ Ադրիանուպոլսոյ հրէական վարժարանին, միւսը՝ ի նպաստ Հրաչեայի: Հայ դերասանուհին այնքան յաջող խաղացած է իր դերը, որ իր մասին ըսուեր է, թէ «*Անիկա անպարճատ առաջուց գիպէր սպանեօլերէն. յայտնի է արտասանութենէն*» (Ազնիւ Հրաչեայ, *Իմ յիշողութիւնները*, տպ. Ներսէսեան, Փարիզ 1909, էջ 73-74):

²² Վարդգէս Սուրէնեան (sic), «Նամակներ Սպանիայից», *Արծազանք*, 1, 6, 14 Յունուար 1898:

րուն հետ, Պարսելունայի մէջ իր դիտած Ճուզեփիէ Վերտիի «Տոն Քարլոս» օփերայի բեմադրութիւնը եւն.:

Հայ լրագրող, Թիֆլիսի *Աղբիւր* եւ *Տարագ* ամսագրերու խմբագիր Տիգրան Նազարեան (1858-1926) 1907ին այցելած է Ֆրանսա, Սպանիա եւ Փորթուկալ²³: Սպանական Սան Սեպասթիան քաղաքէն Թիֆլիսի *Մշակ* օրաթերթին յղած նամակին մէջ ան գրած է իր տեսած ցլամարտին մասին. «Ապա տեղի ունեցաւ 'եզների կռիւ' կոչված (sic) վայրենի հանդէսը, որի համար այստեղի ժողովուրդն ու արիստոկրատիան գլուխ է պապոտում: Այդ հանդէսը, որին հաւաքվել էր (sic) տասն հազարից ատելի մի բազմութիւն, ինձ վրայ շար ծանր տպաւորութիւն թողեց: Բողոքեցի եւ հանդէսը չը վերջացած՝ հեռացայ կրկէսից: Ինձ հեպտեցին մի քանի ընկերակիցներ: Այո՛, ինկվիզիցիայի (sic) աշխարհը մարդկային ջղերը հզօրապէս ցնցող տրանսից ատելի վայրենի հանդէսներ ունենալ ու ստեղծել չէր կարող»²⁴: Ուշագրաւ է, որ ոմանք ցլամարտը Նազարեանի պէս կը սեպեն «վայրենի», մինչդեռ ուրիշներ չեն ունենար որեւէ ժխտական տպաւորութիւն:

Հայ բեմի մեծանուն դերասան Վահրամ Փափազեան (1888-1968) Միլանի մէջ աշակերտելով իտալացի թատերական գործիչ Էրմեթե Նովելլիին՝ անոր թատերախումբին հետ շրջապտոյտ կատարած է տարբեր երկիրներ, նաեւ Սպանիա՝ հասնելով մինչեւ Ճիպրալթար: Իր *Յեղատարծ հայեացք* յուշագրութեան մէջ ան հետեւեալը գրած է Սպանիոյ մասին.

Վարպետի (Նովելլիի – Ա.Բ.) հետ այցելած միւս երկրները թատրոնի տեսակէտից հետաքրքիր չեղան, միայն Իսպանիան զարմացրեց ինձ: Եւրոպայի մայր ցամաքի մէջ խրուած Աֆրիկայի շարունակութիւնն է այդ թերակղզին, իսկ Անդալուզիան գրեթէ նոյն Մարիտանիան է՝ նոյն բարքերով, նոյն ճաշակով, նոյն գոյներով, ուր մոլեռանդ իսլամի փոխարէն տիրապետում է մոլեռանդ կաթոլիկութիւնը, միայն թէ ատելի անհաշտ ու այլամերժ: Իսպանացիք, իրօք որ շատ գեղեցիկ՝ նոյն մարիտանուիներն են՝ զգեստի չնչին տարբերութիւններով: Ճարտարապետութիւնը արաբ ու գոթական ոճերի խառնուրդ է, որին կարելի է քաղաքավարութիւնից դրդուած ինքնուրոյն անուանել: Իսպանացին ի բնէ շատ քաղաքավարի եւ հաճոյակատար, առանց բնածին հպարտութիւնից մազաչափ իսկ շեղուելու եւ, հակառակ Սերվանտէսի՝ ապրում է դեռեւս Դոն Կիխոտի Իսպանիայում: Իսպանիան դերասաններով հարուստ չէ՛ եւ չի՛ էլ եղել, չնայած իր բեղմնատուր թատերագրութեան, բայց նրա Տորէադորը, նախ եւ առաջ՝ ընտիր դերասան է, իսկ ցլամարտը՝ շքեղ ներկայացում: Խումբն այցելեց Սեփիլիա, Սիրակուզա (Սարակուզա – Ա.Բ.), Ալբանտուրա (Ալկանդարա – Ա.Բ.), Բարսելոնա, իսկ Մադրիդում

²³ *Տարագ*, 10:1910, էջ 98:

²⁴ Տիգրան Նազարեան, «Նամակ Սպանիայից», *Մշակ*, 30 Սեպտեմբերի 1907:

մնացինք անլի երկար, երկու օր իրար վրայ այցելեցի Հսկորիալը, որի գեղարուեստական հարստությունները նմանը չունեն աշխարհում²⁵:

Փափագեանի սպանական մէկ դերակատարումին մասին (Կրիկորի Կէի «Մահապատիժ» թատերգութեան մէջ) ռուսական *Վեչերնէէ սլովօ* (Երեկոյեան խօսք) պարբերականը 1919ին գրած է. «...Փափագեանի ներկայացուցած Կուրպան: Դժուար թէ մարդ աթոռին վրայ նստած մնայ. կարծես թէ ան քեզ կը քաշէ բռնի, կը փանի Պիրենէեան լեռները. եւ սիսա՛ աջքիդ առջեւ կը պարզուին կրքոյ սպանիացիները եւ արեակէզ Սպանիան, ցլասպաններն ու ցլամարտիկները»²⁶: Իսկ 1928ին Օտեսայի մէջ Փափագեան հանդէս եկած է Խոսէի դերով՝ Պլաքօ Վիսենթէ Իպանիէսի «Արիւն եւ աագ» գործի բեմադրութեան մէջ²⁷:

Փափագեանին հետ կը կապուի նաեւ մէկ այլ սպանական առնչութիւն, որուն վաւերականութեան կը կասկածինք թէեւ, սակայն չենք կրնար չանդրադառնալ: 1983ին *Քուլիս* հանդէսին մէջ լոյս տեսած է իբրեւ թէ սպաներէնէ թարգմանուած յուշագրութիւն մը, գրուած ոմն Մերսետէ Մոնտէզ-Փափագեան անունով կէս սպանուի-կէս իտալուիի մը կողմէ եւ ծօնուած իր հայ բարեկամ Պետրոս Սարօլլանեանի, որ նշուած է որպէս այդ գրութեան թարգմանիչ²⁸: Մերսետէ կը պատմէ, թէ Պէյրութ գտնուած միջոցին ճանչցած եւ բարեկամութիւն հաստատած է Լիբանան գտնուող ծերունագարդ Փափագեանին հետ (դերասանն իսկապէս 1967ին գտնուած է Պէյրութ), որ անոր եւ ընտանիքին համար իտալերէն մենախօսութիւններ արտասանած է իր շէյքսպիրեան դերերէն: Մոնտէզ-Փափագեան յետոյ կ'ըսէ, թէ 1968ի աշնան իր ֆրանսահայ ամուսնոյն՝ Ալէն Փափագեանի հետ Երեան եկած է եւ պատահաբար Կոմիտասի անուան պանթէոնին մէջ տեսած նոյն տարուան Յունիս 5ին մահացած Փափագեանի շիրմաքարը:

²⁵ Վահրամ Փափագեան, *Երկեր հինգ հարորով, հարոր 1*, «Սովետական գրող», Երեան, 1979, էջ 128-29: Փափագեան պատմած է նաեւ գայթակալալից սիրարկած մը, որ իրեն պատահած է Մատրիտի մէջ (էջ 129-30):

²⁶ Նշան Պէշիկթաշլեան, *Թարերական դէմքեր*, Գէորգ Մելիտինեցի գրական մրցանակ, Անթիլիաս, 1969, էջ 1049: Հեղինակը սխալած է՝ *Վեչերնէէ սլովոյի* այդ թատերախօսականի հեղինակ համարելով ռուս նշանատր բանաստեղծ Վալերի Պրիստովը: Բարկէն Յարութիւնեանի *Վահրամ Փափագեան. կեանքի եւ սրբեղծագործութեան փորձագրութիւն 1888-1968* հատորին մէջ (ԵՊՀ հրատ., Երեան 2012, էջ 165) այդ յօդուածագրի անունը նշուած է «Էսէէ», իսկ Պրիստով այդ ծածկանունով հանդէս չէ եկած:

²⁷ Յարութիւնեան, *Վահրամ Փափագեան*, էջ 311: Իդէպ, այս ստեղծագործութիւնը 1941ին շարժանկարի վերածած է ամերիկահայ շարժանկարիչ Ռուբէն Մամուլեան (1897-1987)՝ սպանական դասական գեղանկարչութեան յղումներով եւ սպանական բներանգի հարազատ վերարտադրութիւնով:

²⁸ Մերսետէ Մոնտէզ-Փափագեան, «Բեմի կախարհ հայը», *Քուլիս*, 1983, թ. 879, էջ 14-17:

Մեծ յուզում ապրած է եւ մինչեւ Մատրիտ վերադառնալը ամէն օր ամուսնոյն հետ պանթոն այցելած ու կարմիր մեխակներ զետեղած դերասանի տապանաքարին վրայ: Այդ յօդուածին մէջ հայ դերասանի մը չափազանց մեծարումը եւ հայ մշակոյթի քաջիմացութիւնը, ինչպէս նաեւ այլ պարագաներ մեզի ենթադրել կու տան, թէ այդ բոլորը յօրինած է որպէս այդ յօդուածի թարգմանիչ ներկայացուած Պետրոս Սարօղլանեան (ամերիկաբնակ գրող):

Սպանիա կարեւոր դեր ունեցած է նաեւ հայազգի համբաւաւոր պարուիի եւ գրագիտուի Արմէն Օհանեանի (Սոֆիա Փիրբուդաղեան, 1887-1976) համար²⁹: Մատրիտի մէջ, 1921ին, սպաներէն լոյս տեսած է անոր «Շամախեցի պարուիին» ֆրանսերէն ինքնակենսագրական գիրքը՝ թարգմանութեամբ մեքսիքացի Մաքետոնիօ Կարզայի, որ ապագային պիտի ամուսնանար Օհանեանի հետ: Գիրքին լայնօրէն անդրադարձած է սպանական մամուլը: Նոյն թուականին Օհանեան ճամբորդած է Սպանիա, պարած Սեւիլիոյ մէջ: Գրած է «Իմ երգանքներու Սպանիան» յօդուածը³⁰: «*Եթէ կարելի է սպանական հոգին դադրել ըստ Տոն Քիշոթի, կարելի է ըսել, թէ Հայաստանը Ասիոյ Տոն Քիշոթն է*». այս եւ ուրիշ ուշագրաւ մտածումներ կ'արտայայտէ իր գրութեան մէջ Արմէն Օհանեանը:

Երգիչ Գրիգոր Մակարոֆի (Մակարեան) դուստրերէն Սիրանուշ 1910ականներու վերջ-1920ականներու սկիզբը երգած է Մատրիտի օփերային մէջ (անոր քոյրերէն Վարդուիին երգած է Լիզպոնի, իսկ Հայկանուշը՝ Պուենոս-Այրէսի մէջ³¹):

Փարիզաբնակ երգչուիի եւ ձայնամարզութեան ուսուցչուի Մարգարիտ Բաբայեան (1874-1968) իրովի նպաստած է սպանական եւ պասքեան երգերու տարածման՝ իր երկացանկին մէջ ունենալով քիչ կատարուող գործեր եւ ստեղծագործական սերտ կապերու մէջ գտնուելով ժամանակի սպանացի ականաւոր երաժիշտներու (Փոլին Վիարտո, Մանուէլ տէ Ֆալլա, Փապլօ Քազալս եւ այլք) հետ³²: Բաբայեան գործակցած է նաեւ յայտնի պասք երաժիշտ Խոսէ Անտոնիօ Սանթեսթեպանի (1835-1906) հետ, որմէ ստացած է պասքեան երգարուեստի նմուշներ եւ կատարած՝ իր համերգերուն: Իր հերթին, հայ երգչուիին հայ երաժիշտութիւնը ծանօթացուցած է Սանթեսթեպանիին: 1925 Յունիս 10ին ան նուագահանդէս մը տուած է Մատրիտ իր

²⁹ Այս մասին մանրամասն տե՛ս՝ Vartan Matiossian, Artsvi Bakhchinyan, *A Woman of the World: Armen Ohanian, the 'Dancer of Shamakha'*, The Press at California State University, Fresno, 2022. էջ 319-24:

³⁰ Գրութեան հայերէն թարգմանութիւնը տե՛ս՝ Վարդան Մատթեոսեան, «Արմէն Օհանեանի սպանական յօդուածը Հոնտուրասի մէջ», *Ազգ*, 9 Հոկտեմբեր 2010:

³¹ «Երգիչ Գրիգոր Մակարոֆ», Թէոդիկ, *Ամէնուն ցարեցոյցը*, Կ.Պոլիս 1923, էջ 314-15:

³² Artsvi Bakhchinyan, “Les lettres inédites des artistes français et espagnols adressées à Marguerite Babaïan,” *Հայկազեան հայագիտական հանդէս*, 24:2004, էջ 333-61:

երաժշտական դպրոցի մասնակցութեամբ, որուն յայտագրին մէջ, տարբեր ժողովրդական երգերու շարքին հնչած են նաեւ Կոմիտաս Վարդապետի «Հով արէք», «Երկինքն ամպել ա», «Գարուն ա» եւ «Իմ չինարի եարը» երգերը՝ արձանագրելով մեծ յաջողութիւն³³: Յատկանշական է, որ Փարիզի մէջ Բաբայեանին աշակերտած է 1930ականներու սպանացի յայտնի երգչուհի, սարսուելայի (սպանական ժողովրդական օփերէթ) վարպետ Փեփիթա Էմպիլ (1918–94)՝ ժամանակակից աշխարհահռչակ թենոր Փլասիտո Տոմինկոյի մայրը: Բաբայեանին աշակերտած են ուրիշ սպանացիներ եւս, ինչպէս՝ սոփրանօ Էսթրեմերա տէ Թորրէ, որ Մատրիտի ճայնասփիտի երգի մրցումին ստացած է Ա. մրցանակը: Մատրիտի թերթերու երաժշտական քննադատներ (որոնք յայտնի երաժիշտներ են) մեծ գովեստներով խօսած են այդ երիտասարդ երգչուհիին եւ անոր հայ ուուցչուհիին մասին³⁴: Բաբայեանին աշակերտած է նաեւ Մատրիտի երաժշտանոցէն պասքեան, սպանական եւ ֆրանսական ծագումով երգիչ եւ կիթառահար Ֆեռնանտօ Ֆեռնանտէս Լալի (1918–2003), որ 1954ին Փարիզի սպանական դեսպանատան կազմակերպած երաժշտահանդէսին ելոյթ ունեցած է՝ կատարելով նաեւ երկու երգ Կոմիտաս Վարդապետէն³⁵:

Ֆրանսաբնակ երգահան Ժաք-Միշէլ Ջուպալով (1876–1941), որ սերած է Թիֆլիսի մեծահարուստ Ջուբալեան ընտանիքէն, ի թիւս արեւելեան ոճի ստեղծագործութիւններու, գրած է նաեւ քանի մը սպանական պարային երկեր՝ «Սպանական էսքիզներ» եւ «Հաւանա» վերնագրին տակ խմբուած վեց թանկօ³⁶:

1929ին հայ մամուլը գրած է, թէ Պարսելունայի միջազգային ցուցահանդէսին Ջաւէն Յաբէթեան պէտք է ցուցադրէր արեւելեան գորգեր: Այդ ցուցահանդէսին թրքական տաղաւարին մէջ մասնակցելու հրաւիրուած է նաեւ Էօմէր Այտըն պէյ իր երգեցիկ խումբով, որուն մէջ եղած են նաեւ հայ նուագածուներ Քանոնի Յակոբ եւ Ուտի Հայկ³⁷:

Նկարիչ Երուանդ Քոչար (1899–1979) եւ Աւետիք Իսահակեանի որդին՝ Վիգէն Իսահակեան (1910–2005), Փարիզի մէջ անգամ մը ներկայ եղած են սպանական եւ արժանթինեան երգերու նշանաւոր կատարող Քարլոս Կարտէլի (1890–1935) կազմակերպած սպանական ընդունելութեան, որուն ներկայ եղած է նաեւ սպանացի համբաւուոր պարուհի Լա Արխենթինա

³³ «Հայ երգը օտար հորիզոնի տակ», *Արագած*, 1 Հոկտեմբեր 1926, թիւ 18-19, էջ 11:

³⁴ «Օր. Մ. Բաբայեանի աշակերտներուն յաջողութիւնը», *Արեւելք*, 28 Մայիս 1934, էջ 2:

³⁵ «Հայկական երգը սպանիական շրջանակի մէջ», *Հայաստանի կոչնակ*, 22 Մայիս 1954, էջ 497:

³⁶ Charles Tenroc, *Notice sur les œuvres de Jacques-Michel Zoubaloff*, Edit. Senart, Paris, 1928, էջ 9:

³⁷ «Կավոնօշի խողովակէն», *Կավոնօշ*, 10 Մարտ 1929, էջ 4:

(Անթոնիա Մերսէ-ի-Լուկէ, 1890–1936): Այս երեկոյին մասին Իսահակեան գրած է հետեւեալը.

Մի փոքր երաժշտախումբ՝ 5-6 հոգանոց, պարկում մեղմ նուագում էր իսպանա-արգենտինական մեղեդիներ եւ իհարկէ 'Տանգո', ու ստեղծում էր մի շատ հաճելի մթնոլորտ: Հրաւիրում էին պարելու: Նկատեցի, որ եկել էին մեծ թուով երիտասարդներ Հարաւային Ամերիկայից, արգենտինացիներ, բրազիլացիներ, Կուբայից եւ ուրիշ Անտիլեան կղզիներից: Բոլորը շատ գեղեցիկ, մազները սեւ սաթ՝ փայլուն, լաւ սանրուած, աչքները՝ խոր, դիւրազգայուն: Չոյգեր կազմեցին: ...Յանկարծ յայտնի իսպանացի պարուհին՝ Լա Արգենտինան, որը եկել էր իր ջքախմբով, չդիմանալով իրենց պարային հարազատ երաժշտութեանը, նետուեց պարողների մէջ: Նրանք բերեցին մի սեղան, Արգենտինային բարձրացրին վրան, ու նա սկսեց մոլեգնութեամբ պարել իր նշանաւոր 'Ֆլամենկո պարը՝ կաստանիէտներով աւելի շեշտելով երաժշտութեան դիրժը: Նուագախումբն սկսեց աւելի արագ նուագել, պարողները, որ շրջապատել էին սեղանը, աւելի համարձակ ու ջերմ էին պարում: Դոն Արգիլէսը չէր մոռացել սեղանիկների վրայ դնել իսպանական լաւագույն գինիներից բազմաթիւ շշեր: Սա էլ էր օգնում պարողների ներքին տրամադրութեան աստիճանի բարձրացմանը: Երիտասարդ կանայք՝ շրջապատուած այսքան գեղեցիկ արական սեռի ներկայացուցիչներով, չէին իմանում ինչպէս պահել իրենց արժանապատուութիւնը, շփոթուել էին: Այս երիտասարդ մարդկանց մարմնի հոտը, խառնուած օծանելիքի եւ թութունի հոտին, գլխապտոյտ էր պատճառում նրանց: Ու յանկարծ, Արգենտինան թողեց պարելը, իջաւ սեղանից, նետուեց մի բազկաթոռի մէջ: Նա գիտէր իրեն՝ եթէ շարունակէր պարել, պիտի սանձարձակ նուիրուէր իր կրքին, պարին, եւ ողջ գիշերը պիտի պարէր աւելի ոգետրութեամբ, հետն էլ կը տանէր ամբողջ շրջապատը, երեկոյթն էլ պիտի փոխուէր մի վալպորգեան բալետի, մի բաքոսականքի: ...Օգտուելով այս միջադէպից, ես ու Քոչարը ծլկեցինք անգլիական ձեռով, այսինքն՝ առանց մնաք բարով ասելու:

.... Քոչարն ասում էր. 'Ես լաւ գիտեմ Իսպանիան, այն ինձ համար անյայտ հող չէ, գիտեմ նրա պատմութիւնը, արուեստը, երաժշտութիւնը, նկարչութիւնը... Բայց երբեք այդքան մօտիկից չէի զգացել նրա բուրմունքը, հողի հոտը, նրա կախարդանքը, նրա իսպանականութիւնը: Լաւ երկիր է, պէտք է գնալ, տեսնել, մօտիկ է...': Չոր յոյսեր, երազներ, մանաւանդ երբ մենք եկանք Երեւան եւ դարձանք Սովետական Միութեան քաղաքացի³⁸:

³⁸ Վիգէն Իսահակեան, *Փարիզ. Քոչար. անցած օրեր*, «Տիգրան Մեծ», Երեւան 2006, էջ 63-65:

1930ականներուն սպանական քաղաքներուն մէջ յաջող ելոյթներ ունեցած է ամերիկահայ պարուհի Ատրինա Օթերո (Փանոսեան, 1910–1975), բեմական անունով՝ Adriana La Sevillana, որ հռչակուած է որպէս ֆլամենկո եւ սպանական դասական պարերու անզուգական կատարող: Ան իր մասնագիտական ուսումը ստացած է Սեփիլոյ «Օթերո» պարի կաճառին եւ ամերիկեան ու ֆրանսական մասնաւոր դպրոցներու մէջ եւ իբր բեմական անուն ընտրած է սպանացի հռչակաւոր պարուհի Օթերոյի (Քարոլինա Օթերո կամ La Belle Otero, իսկական անունը՝ Աւկուաթինա Օթերո Իկլեսիաս, 1868–1965) անունը³⁹: 1934ին անոր մասին գրուած է, թէ «Օր. Արրիանա սկսած է մեծ հռչակ ստանալ իր սպանիական պարերով, որոնց մէջ անպարտի պարուհիները կը գերազանցէ»⁴⁰: Մինչեւ 1952 ան համարուած է սպանական եւ ֆլամենկո պարերու ականաւոր վարպետներէն մին, ելոյթներ ունեցած է Եւրոպայի, զոյգ Ամերիկաներու եւ Հարաւային Ափրիկէի մէջ, զայն ընդունած են երկիրներու ղեկավարներ եւ թագաւորներ, պարգեւատրած մրցանակներով: Երբեմն համատեղ համերգեր տուած է մօր՝ երգչուհի Զապէլ Արամի հետ, որ իր հերթին յաջողութեամբ կատարած է սպանական երգեր: 1934ի Մայիս 6ին Զապէլ Արամ–Ատրինա Օթերոյի համատեղ մեծ երգահանդէսին երգչուհին կատարած է նաեւ հայկական եւ սպանական երգեր: «Սպանիացի ունկնդիրները՝ որոնք նշանակելի (sic) թիւ մը կը կազմէին, առաջին իսկ երգին՝ Լամենթո Խիթանո՝ խանդավառ բացազանչութեամբ յայտնեցին իրենց գնահատութիւնը»⁴¹: Օթերո 1940ին Մատրիտի մէջ նկարահանուած է սպաներէն եւ ֆրանսերէն շարժանկարի մը մէջ⁴²: Մատրիտի հռչակաւոր Փրատո թանգարանին մէջ կը ցուցադրուի անոր գեղանկարը՝ վրձնուած սպանացի ծանօթ նկարիչ Իկնասիօ Զուլուակայի ձեռամբ:

1935ին Սպանիա հիւրախաղերով հանդէս եկած է հայազգի ջութակահար Ֆիլիպ Աղազարեան: Անոր ընկերակցած է սպանացի երգահան Անթոնիօ Թոռնատէլ (1881–1963): Սպանական թերթերը դրուատալից եւ եր-

³⁹ Այս նշանաւոր պարուհիին ելոյթը Լոնտոնի մէջ իբրեւ թէ տեսած է Օննիկ Չիֆթէ-Սարաֆի Միամիտի մը արկածները վէպին հերոսը: Քանի որ այս վէպն ինքնակենսագրական առողջ ունի, կրնանք ենթադրել, թէ Չիֆթէ-Սարաֆ անձամբ տեսած է համբաւաւոր պարուհին՝ անոր մասին գրելով. «Իր աղոտութենէն, իր ճկունութենէն, իր հարուստ մարմինին խաղացումներէն, շնորհալի ծամաճոռումներէն, բեկբեկումներէն, չինական մելանի մէջ թաթխուած իր մազերուն ու նայուածքին խարող հուրքորութենէն ու կիսամերկ միսին ցոլացումներէն հիացում մը, շացում մը, միշտ գրգռող յիշատակ մը պահած էի ներսս» (Չիֆթէ-Սարաֆ, Միամիտի մը արկածները, էջ 158):

⁴⁰ «Հայ պարուհի մը», Արամագր, 4 Նոյեմբեր 1934, էջ 2:

⁴¹ Յովհ. Աագեան, «Երգահանդէս», Հայաստանի կոչնակ, 12 Մայիս 1934, էջ 469:

⁴² Գեղարուեստասէր, «Գովք Ատրինէ պարուհիի մասին», Հայաստանի կոչնակ, 2 Մարտ 1940, էջ 212:

կար խմբագրականներ ու յօդուածներ գրած են Աղազարեանի մասին՝ չվարաներով զայն անուանել նոր օրերու Սառասաթ⁴³:

1939ի Մայիս 6ին Նիւ Եորքի Ամերիկահայ երիտասարդական միութիւնը կազմակերպած է կովկասեան երեկոյ մը՝ գեղարուեստական ճոխ յայտագրով: Վերոյիշեալ երգչուհի Զապէլ Արամի միջնորդութեամբ երեկոյին մասնակցած են նաեւ վենեսուելացի երգիչ-դերասան Լորենսօ Էրերա (1896–1960) եւ պարուհի Կլորիա Պելմոնթ: Անոնց կատարած սպանական երգերն ու պարերը մեծ խանդավառութիւն յառաջացուցած են հայ հանդիսականներու մէջ: Ինչպէս վկայած է ժամանակակից մը, «Սպանացի արուեստագէտներու եւ ունկնդիր հայ հասարակութեան միջեւ ակնյայտօրէն սրեղծուած էր մրերմական յարաբերութիւն: Արուեստագէտները չափազանց սիրած էին հայ ժողովրդական երգերն ու պարերը: Այդպէս ալ յայտարարեցին: Իսկ հասարակութիւնն ալ վերին աստիճանի սիրած էր սպանական ժողովրդական երգերն ու պարերը: ...Մեր համայնքը դէպի սպանական բազմաչարչար եւ մարտական ժողովուրդը ունեցած բուռն համակրութիւնը, երկու ժողովուրդներու հոգեկան կապը ասկէ աւելի փայլուն կերպով չէր կրնար արտայայտուիլ ոչ մէկ արտեմ»⁴⁴:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՌՆՁՈՒԹԻՒՆՆԵՐ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Հայ-սպանական մասնակի առնչութիւններ կը վերաբերին նաեւ Խորհրդային Հայաստանին: Թէեւ նոր կազմաւորուած խորհրդային կայսրութեան ծայրագաւառի այդ մէկ անկիւնը աշխարհէն մեկուսացուած վիճակ մը կ'ապրէր, ուստիեւ աշխարհի տարբեր ժողովուրդներու հետ առնչութիւնները կը կրէին երբեմնակի եւ պատահական բնոյթ:

1923ին երգիծաբան Լեո Կամսար գրած է «Իսպանիա սուր է քաշեր...» ֆելիէթոնը՝ Սպանիոյ կողմէ Մարոքի գաղութացումին առնչութեամբ⁴⁵: Իսկ 1926ին մշակութային գործիչ Սարգիս Այվազեան (1867–1942) յօդուած մը ստորագրած է սպանական թատրոնի մասին⁴⁶:

1934ին Երեւանի մէջ դաշնամուրի համերգով հանդէս եկած է ռուս երգահան Սէրկէյ Փրոքոֆիեւ (1891–1953), որուն հետ եկած է նաեւ իր կինը՝ քաթալանական ծագումով երգչուհի Լինա Լիպեռա (ծնեալ Քարոլինա Քո-

⁴³ «Ջութակահար Ֆիլիպ Աղազարեանի նուագահանդէսը Փարիզում», *Ալիք*, 31 Դեկտեմբեր 1935:

⁴⁴ «Մեր երիտասարդութեան փայլուն մէկ նաճումը (sic)», *Լրաբեր*, 13 Յունիս 1939, էջ 3:

⁴⁵ Լեո Կամսար, «Իսպանիա սուր է քաշեր...», *Խորհրդային Հայաստան*, 13 Սեպտեմբեր 1923:

⁴⁶ Սարգիս Այվազեան, «Իսպանական թատրոնը եւ ռեփիսետր (sic) Բուրջալեանը («Պարտիզպանի շունը» պիէսի բեմադրութեան առթիւ)», *Խորհրդային Հայաստան*, 26 Փետրուար 1926, էջ 4:

տինա, 1897–1989): Յետագային ան իր յուշերուն մէջ թռուցիկ յիշած է իրենց այցը Երեւան, Էջմիածին եւ Սեւանայ լիճ⁴⁷:

1935 Օգոստոսին Երեւան ժամանած է սպանացի քաղաքական գործիչ, լրագրող, հրապարակախօս, դիւանագետ Խուլիօ Ալվարէս տէլ Վալյօ Ի Օլոքի (1891–1975): Շոգեկառքի կայարանը զինք դիմաւորած են գրողներ Դերենիկ Դեմիրճեան, Վահրամ Ալազան, Նայիրի Զարեան եւ այլք: «Վալյօն Հայաստան պիտի մնայ երկար ժամանակ եւ պիտի ծանօթանայ երկրի շինարարութեան եւ այլ նուաճումներուն: Անհրաժեշտ նիւթերը հաւաքելէ ետքը Հայաստանի մասին գիրք մը պիտի գրէ»⁴⁸: Սակայն սպանացի լրագրողէն նման գիրք մը յայտնի չէ:

Սպանիոյ քաղաքացիական պատերազմի (1936-39) տարիներուն խորհրդահայ մամուլը լեցուեցաւ Սպանիոյ, նաեւ անոր արուեստին վերաբերեալ բազմազան գրութիւններով⁴⁹, Երեւանի մէջ կազմակերպուեցան սպանական մշակոյթի միջոցառումներ: 1936ին Երեւանի երաժշտանոցի սրահին մէջ տեղի ունեցած է սպանական երաժշտութեան նուիրուած երեկոյ՝ ի համակրանս ֆաշականութեան դէմ մարտնչող սպանացիներու⁵⁰: Հանրապետական ժողովրդական ստեղծագործութեան եւ ինքնագործ արուեստի տունը 1937ին ռուսերէնէ թարգմանած է սպանական յեղափոխութեան վերաբերող «Նրանք չեն անցնի» թատերախաղը շրջանային ինքնագործ թատրոններու համար⁵¹: Քանի մը հայ գրողներ ալ իրենց գործերուն մէջ անդրադարձած են սպանացի պայքարող ժողովուրդին: Օրինակ, սպանուհի ծանօթ յեղափոխական Տոլորէս Իպարրուրիին (1895-1989) բանաստեղծութիւն նուիրած է Գուգարունի ծածկանուամբ հայաստանցի հեղինակ մը⁵², որուն ինքնութիւնը չկրցանք պարզել: Թէեւ ան որեւէ գրական արժէք չունի, ժամանակի տրամադրութիւնը ներկայացնելու համար կը մէջբերենք ամբողջովին.

⁴⁷ Израиль Нестев (сост.), Сергей Прокофьев: *статьи и материалы* (Սերգէյ Փրոքոֆիեւ. յօդուածներ եւ նիւթեր), «Մուզիկա», Մոսկուա 1965, էջ 217: Լինա Լիւպեռայի հետ մտերիմ եղած են հայ երգահան Էդուարդ Միրզոյեան եւ իր կինը (Эдуард Мирзоян, *Фрагменты* (Դրուագներ), «Ամրոց կրուփ», Երեւան 2005, էջ 221):

⁴⁸ *Խորհրդային Հայաստան*, 5 Օգոստոս 1935. նաեւ՝ «Սպանիացի գրող մը Երեւանի մէջ», *Յուսաբեր*, 12 Սեպտեմբերի 1935:

⁴⁹ Տե՛ս, օրինակ, Մ. Դ., «Կատալոնիայի հերոսները», *Խորհրդային արուեստ*, 1 Նոյեմբեր 1936. նաեւ՝ Լ. Նիկոլիւն, «Էլ Պրադօ թանգարանը», *Խորհրդային արուեստ*, 16 Նոյեմբեր 1936. նաեւ՝ Ֆ. Կելին, «Իսպանական թատրոն», *Խորհրդային արուեստ*, 16 Նոյեմբեր 1936:

⁵⁰ «Իսպանական երաժշտութեանը նուիրուած երեկոյ», *Խորհրդային արուեստ*, 1 Յունուար 1937, էջ 11:

⁵¹ «Արուեստի լրատու», *Խորհրդային Հայաստան*, 1 Սեպտեմբեր 1937:

⁵² *Կարմիր սպորտ*, 31 Դեկտեմբեր 1936:

Դուրդէս Իբարրուրուն

Ըմբոսւոյացած ժողովրդի ծոցից ելած՝
Ազատութեան համար մղուող պայքարում
Քո եզակի եւ առնական կամքը լարած՝
Մարտնչում ես մարտիկների շարքերում...
Ընդդէմ ճնշող, շահագործող դասակարգի,
Ընդդէմ դաժան օրէնքների եւ կարգի...

Բռնութեան դէմ սուր ես ճօճում շողշողացող,
Հայեացքներդ յառում սուրսայր, շեշտակի,
Մարտիկների սիրտը լցնում արեւ ու շող,
Որ կուտմ են սարսափի փակ գնդակի –
Ընդդէմ ճնշող, շահագործող դասակարգի,
Ընդդէմ դաժան օրէնքների եւ կարգի...

Ամէնուրեք, որտեղ էլ որ շահագործուող
ժողովուրդ կայ – ազատ կեանքի փենչանքով
Հիանում է խիզախ ու վե՛հ, ըմբոստացող
Եւ ամրակուտ, անընկճելի քո կամքով–
Ընդդէմ ճնշող, շահագործող դասակարգի,
Ընդդէմ դաժան օրէնքների եւ կարգի...

–Վիւա՛, վիւա՛, Պասիոնարիա⁵³, օ՛ր Դուրդէս,
Գոչում են քեզ մարտիկները քաջարի
Եւ թափ առնում, գօրեպնդում կամքով քո վէս՝
Խրոխտաբար ելնում ահեղ պայքարի–
Ընդդէմ ճնշող, շահագործող դասակարգի,
Ընդդէմ դաժան օրէնքների եւ կարգի...

1937ին բանաստեղծ Գեղամ Սարեան (1902–1976) հրատարակած է *Իսպանիայի պատանի հերոսները* գրքոյկը: Ճաշակ մը տալու համար՝ մէջբերենք «Ալվարո» բանաստեղծութենէն հատուած մը՝

Թախօ գետի ափով կանաչ՝
Մի քաջ փղայ զինուած,
Քայլում է լուռ դէպի առաջ,
Հեփախուզման ելած:
Թփուտների մէջ աննկատ,
Ճամբով արեւայի,
Ալվարօն է երիտասարդ
Թոլեդոյից գալի:

⁵³ Տոլդէս Իպարրուրիի յեղափոխական անունը (սպաներէն՝ Pasionaria՝ կրքոտ կամ կիրքի ծաղիկ):

*–Իսպանիա, քեզ ազատություն
Մենք կը բերենք արեամբ,
Քեզ վառողի ծուխն է պատում
Հիմա ինչպէս սեւ ամպ.
Ազատութեան արեւով վառ
Կը ցրենք ամպ ու մէգ,
Ու կը լինենք կուում յամառ,
Չենք նահանջի երբեք:*

Իսկ արձակագրուի Լիսի Թարգիլ (1905–1955) 1939ին հրատարակած է *Դէպի Իսպանիա* վէպը, ուր կոչ ըրած է կամաւորական ջոկատներով օգնութեան հասնելու սպանացի ապստամբներուն...

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայ-սպանական մշակութային կապերու այս դրուագները ցոյց կու տան իրարմէ աշխարհագրականօրէն հեռու եւ պատմականօրէն յաճախ ջարաբերած երկու ժողովուրդներու փոխճանաչումի թէեւ պատահական, սակայն միանգամայն ուշագրաւ իրողութիւններ: Անոնք արտայայտուած են միմեանց գրականութեան թարգմանութեամբ (ե՛ւ՝ տարերայնօրէն ե՛ւ միջնորդ լեզուներէ), հայ արուեստագէտներու այցելութիւններով Սպանիա եւ հայ գրագէտներու գործերուն մէջ սպանական նիւթի անդրադարձումներով: Այս առումով ամենէն բեղմնատուրը եղած է բանաստեղծ եւ արձակագիր Կոստան Զարեան: Տարբեր երկիրներու հայազգի արուեստագէտներ ալ հմտացած են սպանական արուեստին (պար, երաժշտութիւն) մէջ:

Սպանական արուեստը որոշ չափով ծանօթ եղած է նաեւ 1920-30ականներու Խորհրդային Հայաստանի մէջ, ուր ծաւալած է ան յատկապէս Սպանիոյ քաղաքացիական պատերազմի տարիներուն, երբ Երեւանի մէջ կազմակերպուած են սպանական մշակութային միջոցառումներ, իսկ խորհրդահայ գրագէտներ, պետական քարոզչութեան ծիրին մէջ, անդրադարձած են սպանական նիւթերու՝ ի համակրանս մարտչող սպանացի ժողովուրդի:

ARMENIAN-SPANISH CULTURAL RELATIONS (19TH CENTURY-1930S)
(SUMMARY)

ARTSVI BAKHCHINYAN
artsvi@yahoo.com

The article explores significant episodes of Armenian-Spanish cultural relations from the 19th century to the 1930s, divided into three main sections.

The first section, “Literary Connections,” highlights Spanish themes in the works of Armenian authors and the initial translations of Spanish literature into Armenian.

The section “Armenian Intellectuals and Artists in Spain” focuses on notable Armenian figures, including Vardges Surenyants, Vahram Papazyan, Kostan Zaryan, and Armen Ohanian, who traveled to Spain, drawing inspiration from its culture and integrating it into their work.

The final section, “Cultural Relations in Soviet Armenia,” discusses particularly the period during the Spanish Civil War (1936–1939), when Soviet-Armenian publications featured extensive writings on Spain and its art. Armenian writers began to compose works about the Spanish people's struggle, and Spanish cultural events were organized in Yerevan.

These accounts of Armenian-Spanish cultural connections demonstrate the mutual appreciation between two geographically distant nations with limited historical interaction, showcasing several notable episodes of cross-cultural recognition.

ԹԱԴԵՒՈՍ ՏՈՆՈՅԵԱՆ. ԱՇԽԱՐՀ, ՈՐ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ Է ԳՈՅՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ (Ա)

ՎԱՀԱԳԱՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ
vachik_grigoryan@mail.ru

ՄՈՒՏՔ

Թադեոս Տոնոյեանը ծնուել է Երեւանում՝ 1961ին: 1990-2000ականների հայ գրականութեան ինքնատիպ դէմքերից է: Նրա խօսքը ներքին լարուածութեամբ մշտապէս բարձր նոտայի վրայ է պահում բանաստեղծութեան ոգին: Դրան նպաստում է եւ մատուցման կերպը: Տոնոյեանը նախընտրում է խօսքի կարճ, բայց բովանդակութեամբ տարողունակ ձեւերը:

Մանուկների համար գրուած բանաստեղծութիւններից¹ բացի առայժմ հրապարակել է եօթ ժողովածուներ՝ *Սերմաստղ* (Նայիրի հրատ., 1994), *Մայրերու հրեշտակներ* (Ապոլոն հրատ., 1997), *Մոմի կաթիլներ* (Աղբիւր հրատ., 2001), *Երկրից յեփոյ* (2002), *Երկնքից առաջ* (Աղբիւր հրատ., 2010), *Մայրերու հրեշտակներ* (Էդիթ Պրինտ, 2015), *Սահմանումներ Հայաստանի համար* (Աղբիւր հրատ., 2016):

Տոնոյեանը զբաղում է եւ գրականագիտական աշխատանքով: Ունի տասնեակ հրապարակումներ՝ գիտական մամուլում տպագրուած:

Մեր ուսումնասիրութիւնը Թադեոս Տոնոյեանի հրապարակուած ժողովածուների քննութեան փորձ է: Նպատակը գրողի բանաստեղծական աշխարհի, դրա սահմանների, առանձնայատկութիւնների բացայայտումն է: Քանի այդ քննությունը ծաւալուն է, նպատակայարմար ենք գտնում այն տպագրել երկու մասով: Առաջին մասում գերազանցապէս խօսում են մինչեւ *Երկնքից առաջ* ժողովածուից առաջ տպագրուած բանաստեղծութիւնների մասին: Իսկ երկրորդ մասում այս ժողովածուն ներառեալ մնացեալ բանաստեղծութիւնների մասին:

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԷՆ

Արդի հայ բանաստեղծութեան մէջ տեղի են ունեցել որոշակի ներքին տեղաշարժեր, որոնք էապէս փոխում են ինչպէս ասելիքի ուղղութիւնը, այնպէս էլ ընդգրկման սահմանները:

Այս բանաստեղծութիւնն այլեւս ժամանակ չունի ընթերցողին պարուրելու գեղեցիկ ստով: Յաճախ առանց միջնորդաւորուած ձեւերի այն մատուցում է ասելիքը նոր չափումների մէջ: Նոր իրադրութիւնը, որ դարձել է ան-

¹ Այդ բանաստեղծութիւնները ամփոփուած են հետեւեալ հատորների մէջ՝ *Կամուրջներ* (1990), *Ծննդեան հեքիաթ* (2001), *Ծիծաղն ու իր բախարը* (2003), *Թեաւոր ծաղիկներ* (2004), *Հեքիաթ աղբիւրի ձայնի մասին* (2012):

կանախատեսելի ու վտանգաւոր, բանաստեղծութեան մարմնից դուրս է հանել բնապատկերը, տարածութիւնն ու ժամանակը անհնարաբար իմաստով, ինչը կազմում էր նախորդ շրջափոխի բանաստեղծութեան մարմինը:

Դասական բանաստեղծութիւնը յաճախ էր բնապատկերով տեղայնացնում խօսքը, էլ չենք խօսում ժամանակի մասին, երբ բանաստեղծութիւնը «մատնում» էր հասարակական կեանքի այս կամ այն ժամանակը: Այս իմաստով նախորդ բանաստեղծութիւնը անելի հակուած էր *արտաքին պատկերների կամ գրողից դուրս երեւոյթների իմաստաւորմանը*: Բայց սիւս ժամանակակից պոեզիան, ձերբազատուելով այս տեսարաններից ու ժամանակից, հիմնականում առանցքում է *անհատի ներաշխարհի շուրջ*: Ամէն պարագայում մեր բանաստեղծութեան պատմութեան զարգացման ընթացքը գնում է այս ուղիով: Առարկայական աշխարհը աստիճանաբար իր տեղը զիջում է անհատի ենթակայական վ ցանկութիւն-մղումներին: Սա արդէն իրականութեան արձանագրում չէ, այլ անհատի՝ իրականութեան իրատեսակ ընկալում, *երբ տարածութիւնն ու ժամանակը վերստեղծում են բանաստեղծի բացառապէս անհատական զգացողութիւն-խոհերի եզրագծում, ինչը նոյնքան անհատական է ու անկրկնելի, որքան անհատական ու անկրկնելի է ինքը՝ մարդը*: Բայց այս պարագայում բնաստեղծութիւնը կարող է իր ներքին շերտի, կ'ուզէք՝ հիմքի բացակայութեամբ դառնալ անհետաքրքիր, քանի որ առանց այդ ազդակի, խօսքը չի կարող կայանալ որպէս բնաստեղծութիւն: *Տարածութեան ու ժամանակի նոր չափումները, որոնք գերազանցապէս տեղակայուած են բանաստեղծի հոգեմտաւոր աշխարհի սահմաններում, ձեռք են բերում ոչ այնքան առօրէական, որքան տիեզերական բնոյթ*: Թաղետոս Տոնոյեանի ժողովածուներում մշտապէս նկատելի են Երկնքի ու Երկրի միջեւ յայտնուած մարդու դրաման: Այդ ոլորտներն իրենց փոխկապուածութեամբ միանգամայն տարբեր տարածաժամանակային չափումներ են:

Հայ դասական գրականութեան մէջ Յովհաննես Շիրազի բանաստեղծութիւնը լաւագոյն օրինակներից է՝ երեւոյթները տիեզերական չափումներով իմաստաւորելու ճանապարհին: Շիրազի օրինակը անհրաժեշտ է ցոյց տալու դասական եւ արդի պոեզիայի տարբերութիւնները:

Շիրազի պատկերամտածողութիւնն առարկայական է: Ամենատարբեր զուգորդումների, համեմատութիւնների մէջ բանաստեղծն ասելիքը խտացնում է սեղմ, շօշափելի պատկերի մէջ, անլին՝ թուացեալ ծայրաբեւեռները մօտեցնում է իրար՝ բացայայտելով երեւոյթների անտեսանելի կապը կամ յարաբերութիւնը: Տարածութիւնն ու ժամանակը նրա պոեզիայում տիեզերական չափումներ ունեն («Ես բանաստեղծ եմ՝ յաւերժի որդի»): Շիրազի պոեզիան սնուում է կեանքի առարկայական պատկերներից ու երկրի կենսական ուժի գործակցութեամբ արարում է յստակ սահմանագծերով ու ներքին կորովով լեցուն մի աշխարհ, որտեղ տեսանելի երեւոյթներն իրենց մէջ անսահմանի շերտը ունեն:

Տոնոյեանի բանաստեղծութեան մէջ առարկայական պատկերներից չեն արտածուում տիեզերական տարածութիւնն ու ժամանակը: Դրանք անհատական ապրումների բովում դառնում են օրգանական ամբողջութիւն, որ ներառում են ներկան ու նաեւ անցեալը՝ որպէս հազարամեակների շարունակութիւն:

Ժամանակի ու տարածութեան այս տիեզերական ընկալումը, որ ւելի շուտ վիճակ է, քան թէ մտորումների արդիւնք, արտայայտուած է արդի պոեզիայում: Հենրիկ Էդոյեանի պոեզիան եւս ձերբազատուած է բնանկարից, ներկայ ժամանակի առօրեական պատկերներից: Նրա խօսքում բաց *տեքստով* խօսուում է հնի ու նորի հակասութեան մասին, որ ւելի ընկալումների տարբեր ոլորտներին է վերաբերում: Պատկերներն ու առօրեյա հարցերը բանաստեղծին չեն գրաւում, դրանք ձանձրալի են: Աւանդական ընկալումներն առաւել դժուարընթաց են դարձնում տիեզերական չափումների գնացող պոետի երթը. «Գնալով ւելի դժուար է դառնում տողերն իրար կապել... իսկ քար-բետոնէ հսկա քաղաքի քիմքը պահանջում է նկարագրութիւն...»:

Սա որպէս ընդհանուր դիտարկում: Այսուհանդերձ Տոնոյեանի բնաստեղծութեան մէջ աշխարհագրական այս տարածքը աստիճաբանար ուրուագծուում է ժողովածուից ժողովածու: Տիեզերքում մարդ-արարածի գոյակցութեան, երեւոյթների իմաստաւորման խնդիրները նրան անհագատացրել են դեռեւս առաջին գրքից սկսած: Բանն այն է, որ երկնքին հաղորդակցուելու մղումը դարձաւ առանցքային, քանի որ ներկայի ու յաւիտենականի, կեանքի ու մահուան խնդիրները նրան մշտապէս անհանգատացրել են: Յետագայում արդէն տարբեր ոլորտները դարձան ւելի որոշակի՝ իրենց սահմաններով, բայց միասնական՝ քնարական հերոսի ներաշխատում՝ որպէս հակադիր եզրագծեր, որպէս մարմնի եւ հոգու թափառումների, միմեանց վերաիմաստաւորող երեւոյթներ:

Երկիրն ու Երկինքը այնքան են միասնական, որքան մարմինն ու հոգին: Նրանք միասնութեամբ են իմաստաւորում մարդուն: Տոնոյեանի քնարական հերոսը մշտապէս Երկրի ու Երկնքի միջեւ է: Երկրը մեղսական ու ծանրաբեռ, Երկինքը մաքուր՝ որպէս յաւերժին տանող կապոյտ արահետ: Բայց բանաստեղծական լարումի խնդիրը կապուած է անցումների բարդութեան հետ, քանի որ մարդը միայն մարմին չի կամ հոգի, մարդը մարմին է եւ հոգի: Երկիրը նաեւ Երկինքն է՝ առանց որի անհնարին էր լինելու երկրային գոյընթացը: Ամէն ինչ իմաստաւորուելու էր նրանց միասնութեան մէջ: Առանց դրանցից մէկի գոյութեան անհնարին ու անիմաստ էր լինելու միւսի գոյութիւնը: Ինչքան անվերջ է ու խորհրդաւոր Երկիրը, նոյնքան անվերջ է ու խորհրդաւոր Երկինքը: *Ինչքան տարբեր են ու անվերջ մարմնի պահանջները, նոյնքան չվերջացող ու անսպառ են հոգու պահանջ-իրահանգները:*

ՏԻԵԶԵՐՔԻ ՁԱՅՆԵՐԻՆ ՈՒՆԿՆԴԻՐ

Թադեոս Տոնոյեանի առաջին ժողովածուն տպագրուել է 1994ին՝ «Սերմաստղ» խորագրով: Չորս ենթաբաժիններ ունի՝ «Հոգեանուշերից», «Սերմաստղ», «Մահուան հիացում», «Հայրենիք»:

Երիտասարդ բանաստեղծը ծայնի, հնչիւնի, նուագի ու համանուագի գործադրմամբ ստեղծում է սեփական աշխարհն այնպիսի մտահոգութեամբ, որ այս ներքին տրամադրութիւնները յետագայի մէջ զարգանալու ներքին միտումն ունենան: Հետեաբար վերաբերմունքը բառի, վանկի, տողի հանդէպ պատասխանատու բնոյթ ունի: Եւ սա կապում է, լայն իմաստով, ամենդոյթ հասկացութեան հետ:

Մարդը կարող է գիրք գրել, բայց դա չլինի առաջին գիրքը: Երջանիկ բացատրութիւններ լինում են: Այս իմաստով *Սերմաստղը* Տոնոյեանի առաջին գիրքն է: Բայց գրքոյկի արժէքը ոչ թէ անհատական մղումի զգացական ապրումներն են, այլ *պատմութեան զգացողութիւնը*: Խօսքը պատմութեան առարկայական մարմնի մասին չէ: Դա ամէլի պատմութեան ոգու մասին է, որ տարածում է բանաստեղծական աշխարհի սկզբից՝ լոյսի ճառագայթի նման: Այս զգացողութիւնը վկայում է, որ անցեալը միայն հեռաւոր իրողութիւն չէ, այլ շարունակում է ներկայում: Սա արտաժամանակային կամ վերժամանակային երեւոյթ է: Հենց այս հանգամանքն է գրողին ներառում մեր ներկայացրած ամենդոյթ ասած հասկացութեան ոլորտը: *Պատմութեան զգացողութիւնը անցեալն ու ներկան որպէս ամբողջական մարմին զգալու կարողութիւնն է*: Սա ստեղծագործողին հարկադրում է դառնալ մշակոյթը հարստացնող անհատ: Ահա ելակէտային այս սկզբունքն էլ Տոնոյեանին ստիպել է գործադրել միջոցներ, որոնք իրենց բնոյթով ոչ այնքան առարկայական են, որքան քնարական, ոչ այնքան բանական, որքան զգայական: Հետեալէս երեւոյթները, որոնց առնչում է հեղինակը, ոչ թէ անցեալի մէջ են, այլ ներկայում կենդանի, շարունակութիւն ունեցող որակներ են՝ «ընդհանուր» զգացողութիւնների յարադրումներով:

Ընդհանուր ժամանակը համզգալու ուղին բացայայտում, ներկայացում է հնչիւնի, ձայնի միջոցով, այն որպէս երեւոյթ, ներկայ է մարդու գոյութեան սկզբից իվեր: Մարդիկ ժառանգում են ոչ միայն իրենց նախնիների մարմնի ձեւը, հոգեբանութիւնը, այլեւ այն ձայնը, հնչիւնները, որոնք կան աշխարհի սկզբից իվեր:

Ունկնդրենք հնչիւնները

Եւ գոյութեամբ արձագանգենք գոյութեանը նրանց.

Մեր ցեղի աչքերն են նրանք,

Որ սերնդէսերունդ փոխանցում

Ու ժամանակի տիեզերքում

Իրենց սլացքն են պահպանում նոյնիսկ այնժամ,

Երբ մի պահ

Դադար են առնում մեր ականախոռոչներում:

Դրանք պահում են իրենց խորքում մեր ամբողջ անցեալը, ադամորդու մանկութիւնց բացի իրենց մէջ բերելու են նաեւ «Մեր չտեսած, կորուսեալ հայրենիքի» պատկերը: Ու եթէ դա այդպէս է, ուրեմն ծայնը կարող է ինքնայատուկ բովանդակութիւն ու նաեւ երանգ ունենալ:

Բայց հեղինակը լսում է ոչ միայն այն ծայները, որոնք առնչուում են երկրին, նա լսում է բոլոր ծայները, անելի ճիշտ՝ Տիեզերքի ծայները: Ու եթէ որպէս ունկնդիր նրան հասանելի են դրանք, ապա որպէս խօսքի վարպետ, աններելի է յապաղումը այդ բոլոր ծայներին պատասխան չգտնելն ու չպատասխանելը, դա պարզապէս նման է ինքնսպանութեան: Ինչպէս կարելի է համրանալ Տիեզերքի ծայների դէմ ու գոցել ականջները դրանց դէմ: Եւ քանի որ բանաստեղծը լսում է տիեզերական ծայները, իրեն է վերագրում երկնաքարերին վիճակուող ճակատագիրը՝ տիեզերքում սլացող ու վերջացող, որի հետեւանքը լոյսն է:

Եւ հնչիւններ՝ ծայների մէջ,
Ու թռչուններ՝ ճախրանքներում,
Ու մանուկներ՝ ծննդեան մէջ,
Ձիեր, ձիեր՝ վարճումներում,
Եւ մարդկային երակներում՝
Առաւօտի վառուող արիւն,
Աստղ ու ասուպ՝ անձրեւի մէջ,
Ու անձրեւներ աշնան սրտում,
Մոլորակներ՝ իրենց ծիրում,
Եւ լռութիւն՝ խլութեան մէջ...

Տիեզերքից եկող ծայները, որ լցում են մարդկային հոգին, իրենց չվերջացող ջրվէժով տարանջատուում են աղմուկներից՝ միմեանց հարադրուելով դառնում են կենդանի մարմին՝ առանց անելորդութեան ու առանց ճիչի:

Աշխարհը, Տիեզերքը ծայների հոսքով իր մէջ է առնում եւ մարդուն՝ որպէս այս ամէնը ընկալող ու նաեւ սեփական ծայնը աշխարհի երթին համադրող անհատ: Բայց մի՞թէ եղել է ժամանակ, երբ հնչել է ծայնը լիաթօք ու ինքնաբոլի՝ որպէս մարդկային էութեան ազատ ու համարձակ խոհերի վկայութիւն: Որքան շատ են կորուստները՝ «լռած երամների» տեսքով, որոնք այդպէս էլ երկինք չհասան: Երբ հոգում ծնուած խօսքը կարող էր երկինք համբառնող ոգու կանչ լինել, այդպէս էլ մնաց որպէս չծնուած ու չիրականացած երագ: Բայց քանի որ բանաստեղծի հոգու ծալքերում մշտապէս առկայ է պատմութեան զգացողութիւնը, հետեւապէս անհնարին է մոռանալ այն ամէնը, ինչը նախորդել է նրան՝ որպէս կորուսեալ հայրենիքի ցաւ: Ու եթէ ինչ-որ պահի հարկադրել են լռել, ապա չի նշանակում, որ դարձել ես մունջ՝ ժամանակի խլութեան դէմ: Քո ժողովրդի պատմութիւնը, անցեալը կը յառնի քո մէջ՝ որպէս անխաբ նշան գոյութեան բաւիղներում:

Կորուսեալ երկրի յայտնութիւնն անհերք

Կը գայ իվերջոյ, մեզ դու՛րս կը կորզի
Մամլակից երկու նոտագծերի,
Կախադաններից մեզ կը բերի վար,
Կ'իջեցնի խաչից սեւ դիեզների
Ու մեզ վերստին կը նուիրի Ձայն՝
Որպէս ի վերուստ երգեցիկ ցեղի:

Բանաստեղծը հակադրում է ներկային: Հասարակութեան ինքնակամ ու երբեք յարմարաւետութիւնից վեր ջլառնող վարքը մնաց պատեհ ու տաքուկ, քամուց ու անձրեւից, հողմից ու կարկուտից հեռու, ստորոտների ամայութեան մէջ: Մինչդեռ արուեստը, որ փառաւորելու էր մարդկանց հոգիները, առանց կապանքների բռնելու էր իքնակայացման ուղին, չզօրեց արտաբերել ընդամէնը մէն մի հնչիւն, որ կը բաւէր ճշմարտութիւնը լոյս աշխարհի բերելու համար, եւ այդ պահին կը ծնուէր աղմուկից դէպի մեղեդին գնացող երգը:

Բայց տես, որ համանուագին հասնելու, դրանով ապրելու ներքին փափագը չի իրականանայ այնքան ժամանակ, քանի դեռ հնչիւնները սանձող Ջութակահարի համար չկայ բաղձալի հայրենիքը, որ ականջալուր կը լինի բոլոր ձայներին ու իր հոգուց ելած հնչիւնները չեն լինի բանտուած ու ոչ ներդաշնակ: Եթէ չկայ հայրենիքը, եթէ չկան նրանք, ովքեր կը զգային բանաստեղծի հոգու ճիշը, ուրեմն քանի դեռ հնչիւնների ՉՈՒՆ փափագելի հայրենիքը չէր գտել, կրկնակի անգամ ծանրանում է պոետի բեռը: Մնում է բանաստեղծի էութեան միջից դուրս կորզել ինչպէս սեփական հոգու ձայնը, այնպէս էլ հնչիւնների սլացքից զրկուած հայրենիքը:

Երկնաքարերի նուագող քամի,
Աստղատարափ ու սերմեր՝ հողի տակ,
Եւ ՉՈՒՆ հայրենիք չի գտել քանի,
Դու ինքդ ես աղեղ, դու ինքդ ես ջութակ,

Մանուկ ու տխուր իմ ջութակահար:

Իսկ ճիւղն է 1990ականների հայ պոեզիային բնորոշ որակը, ինչը արտայայտուած է եւ Թադեոս Տոնոյեանի հենց առաջին ժողովածուի մէջ:

Չկայ տօնականութիւն, կեանքը վայելելու, դրա գեղեցկութեամբ հրճուելու կարողութիւն: 1990ականների բանաստեղծները սկսեցին ստեղծագործել հեղաբեկումների շրջանում: Հսկայական երկրի համընդհանուր փլուզումը անլի շատ մտահոգութիւններ էր առաջացնում, ոչ այնքան մեծ երկրի, որքան անզօր ու վտանգներով լեցուն Հայաստանի համար: Անտեղի ուրախութիւնը իր տեղը զիջում էր լրջութեանը, մտահոգութեանը, որ դառնում էր բանաստեղծութեան առանցքը: Դժուար էր ծիծաղել, երբ դրա առիթը չկար: Եթէ կայ հրճուանք, եթէ կայ ուրախութիւն, ապա այդ ամէնը միայն

զսպուած է, ոչ լիարժէք, քանի որ պոետին մատուցուած կեանքը լուրջ է. դա չի ենթադրում անմիտ գուցէ եւ միամիտ ծիծաղ:

Եթէ կեանքն աւելի դրամատիկ լիցքեր ունի, ապա ենթադրելի է, որ այդ ամէնը կապուած է իրականութեան ներքին հակասութիւններին՝ որպէս ան-ներդաշնութեան արտայայտութիւն, իսկ պոետի կամքը միտուած է այս ամէնը կարգի գցելու, ներդաշնութեան հունին հասնելու երագ-բաղձանքով, որ միայն համընդհանուր ջանքի, սիրոյ արտայայտութիւն պիտի լինի: Այդ դէպքում միայն առանձին հնչիւնները միասնական չուի տեսքով Նուագ կը ներդաշնեն, որ վաղուայ օրուայ մէջ կը վերածի Համանուագի:

Երանի է, թէ Նուագը

Մարդկանց կամօք մենակութեամբ չպատժուի

Ու հանդիպի այլ Նուագի,

Ներընդունի,

Ու սէր լինի միջեւ նրանց,-

Երանի է, այդ սիրունց հենց

Պիտի ծնուի Համանուագ:

Իհարկէ, բանաստեղծի համար ողջ տիեզերքից եկող արծագանգների ֆոնին դժուար կը լինէր կարծել, որ բանաստեղծի համար անլսելի պիտի մնար եւ *լռութիւնը*: Տիեզերքից եկող ձայները իրենց ներդաշնակութեամբ արդե՞ծք կը նպաստեն բանաստեղծի համար կարելու ներքին միտումի՝ *Լռութեան յարութեանը*: Ու մի պահ նոյնիսկ թում է՝ Լռութիւնն է դառնում առաջնային, մինչդեռ մարդիկ «ծակծկել են Լռութեան մարմինը՝ ինչպէս «մարմինն համբառնողի»: Նրանք չեն զգացել, ապա եւ գիտակցել ձայնի եւ լռութեան տարբերութիւնը, *չեն գիտակցել, որ ճշմարտութիւնը ծնում է Լռութեան մէջ*:

Վերջին հաշուով գրքոյկի առաջին մասի բաղձանքը մնում է համանուագի՝ բոլոր հնչիւնների, բոլոր ձայների ներդաշնակ կայացումը: Դա կը լինէր երանելի մի վիճակ: Եւ ձայների համադրման արդիւնքում ստեղծուած համանուագի իշխանութիւնն է ընդունելի բանաստեղծի համար:

Արուեստը բանաստեղծի համար միակ միջոցն է Աստծու եւ մարդու միջեւ գոյացող դատարկութիւնը լցնելու համար, դրանով միայն հնարաւոր է համակշռել համընդհանուր գոյութեան եւ անհատի էութեան ոլորտները:

Ներդաշնակութեանը հասնելու ներքին մղումը, որ աւելի ծաւալում է երագանքների, իղծերի ոլորտում, տեղի է տալիս իրողութիւնների առջեւ՝ դրամատիկ ու չընդմիջուող:

Սերմասպող բաժինը նախորդ յղացումների ընդհանուր մղումներից ընթերցողին տանում է անհատական տառապանքի ուղիով: Այստեղ արդէն երագանքները թէեւ առկայծում են, սակայն աւելի կարելուում են կեանքի դրամատիկ արձանագրումների ընթացքը: Բայց արձանագրել կեանքը, Տոնոյեանի համար նշանակում է կեանքի համար մաքառել՝ որպէս գոյու-

թեան նախապայման ունենալով սերունդների կայացման ընթացքը, որ ինքնանպատակ ու անհատի ցանկութեամբ պայմանաւորուած երեւոյթ չէ:

Բայց ինչպէս ժողովածուի, այնպէս էլ այս բաժնի համար առաջնային նշանակութիւն է ստանում գոյութեան համընդհանուր ծիրում անհատի մաքառման թեման: Դա անհատի իրատեսակ մենութիւնը յաղթահարելու ներքին մղումի արտայայտութիւն է: *Բայց սա ոչ այնքան հասարակական կեանքում, այլ փիզիքերական մենութեան մասին է, որտեղ մարդու գոյութեան ծիրում ոչինչ չկայ նրան ուսնկից:* Մարդը սեփական մաքառումների ուղիով է հասնելու իր ամբողջականութեանը՝ սեփական սերունդների գոյնթացն ապահովող տառապանքով: Բանաստեղծը ասելիքի համար ելակէտ ունի ինչպէս շատ որոշակի իրականութիւնը, այնպէս էլ տիեզերքը, նրա համար այս իմաստով սահմանափակումներ չկան՝ որպէս հասարակական կեանքում կայացող կամ մենութեան տառապանքը յաղթահարող անհատ:

Երեւոյթները ամբողջութեան մէջ ու վերելից դիտելու կարողութիւնը Տոնյեանի խօսքը հեռացնում են ասանդական պատկերներից: Սա ասանդական բանաստեղծութեան պատկերները չեն՝ հանդարտ ու չափաւոր, ռիթմիկ տոներով: *Այստեղ ռիթմը ներքին է, որ միտուած է համընդհանուր ներդաշնակութեանը՝ նախաստեղծ դաշնութիւնը պաշտպանելու ներքին մղումով:* Պոետական խօսքը ժամանակակից կեանքի կենդանի ոգին բանաստեղծի սրտով վերածնած իրողութիւնն է: Խօսքը ոչ թէ մարդկանց, արարածների, երկնային մարմինների՝ *միմեանց դեմ դրսեւորող գոյապայքարի մասին է, այլ այդ ամէնի ներդաշնութեան*, ամէն ոք, ամէն ինչ իր տեղն է ուրոնում, իր տեղն է գտնում տիեզերական սլացքի մէջ:

Նրան չի կարող բաւարարել կեանքի աննկատ ու անտարբեր վարքով ապրելու ցանկութիւնը:

...Իմ երկրի վրայ աշունն է դեղնել,
Սլանամ ես էլ,
Իմ կարօտներով ես էլ սլանամ,
Քանզի
Ո՛վ գիտէ՝ այդ սլացքի մէջ՝
Նախքան այրուելն ու վերջանալն իսպառ՝
Ես գուցէ զարնան կարօտով ճախրող
Չուն տեսնեմ յանկարծ...
Այդպէս է,
Որքան
Մօտենում ենք մեր իսկական տեղին,
Գեղեցկանում ենք
Այնքան ատելի:

Այս թեմաներին զուգահեռ առաջին գրքում կարելի էր տեղ ունի մարդու մենության թեման: Ինչ որ պահի, երբ կը մտնենայ վերջը, ամէն ինչ կը թուայ դատարկ ու անիմաստ, երբ մարդն այլեւս չի սպասի որեւէ մէկին, իսկ օգնութեան ճիշերը կը մնան անպատասխան՝ մեռնող թոշունի անյոյս ճիշի նման:

Քիչ դէպքերում է մարդու մէջ եղած ջանքը, հոգու կրակը փոխանցում տողերի մէջ նման կրքով ու ջերմութեամբ: Մեծ խարոյկ պիտի վառել, որպէսզի սեփական հոգուց ջերմութեան ալիքները հասնեն ընթերցողին: Դա լաւ է հասկանում Տոնոյեանը: Այդ ջանքերը պատկանում են յաջողութեամբ, երբ աշխարհից եկած ազդակները սեփական ներաշխարհում նոր գոյներ ու պատկերներ են դառնում, երբ բառի տարողութիւնը դառնում է ծանրակշիռ, երբ շտապողականութիւնը տեղի է տալիս հանդարտ ու ներսում միացող ցափ: Այս պարագայում փոխում է եւ ցափ բնոյթը՝ ոչ այնքան դրսից եկած, ոչ այնքան եղելութիւններից արտածուող ասելիք, որքան հոգուց բխող հառաչանք՝ տեսական ու չպարտադրող, տեսական ու ոչինչ չակնարկող, այլ միայն լուռ ապրող՝ որպէս ցափ շտեմարան:

Մերմաստղ ժողովածուն դարձաւ բանաստեղծի նոր աշխարհագրական տարածքի յայտնաբերման սկիզբը: Ակնյայտ էր, որ հեղինակը հեռանում էր ասանդական բանաստեղծութեան տարածաժամանակային չափումներից՝ առաջնութիւնը թողնելով անհատի ներաշխարհում դրանց օրգանական միասնութեանը, որոնք յարաբերակցում էին տիեզերական չափումներին:

ՄԱՅՐԱԿԱՆ ՍԷՐՆ ԸՆԴԱՐՁԱԿՈՒՄ Է ԵՐԿՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Տոնոյեանի «Մայրերու հրեշտակներ» գիրքը տարբերում է նախորդ գրքից՝ ոչ այնքան աշխարհը, որքան սեփական հոգու ծալքերը բացելու իմաստով:

Բայց քիչ է պատահում, որ արեւելահայերէնով գրողը ստեղծագործի եւ արեւմտահայերէնով կամ անցում կատարի հայերէնի այլ ոլորտ, որ այլ լեզուամտածողութեան արդիւնք է: Ի. դարասկզբի հայ նէոռոմանտիկները՝ Սիամանթօն, Վարուժանը, Մեծարենցը որքան էլ միասնական էին ասանդական, կոպիտ ռէալիզմն ու նատուրալիզմը յաղթահարելու մտադրութեամբ, բայց եւ այնպէս տարբերում էին երեւոյթները մատուցելու ձեւերով:

Մեծարենցը յիշեալ բանաստեղծներից տարբերում էր խօսքի բանաստեղծական երաժշտականութեամբ: Որքան էլ Մեծարենցի աշխարհում ուժեղ են բնապատկերները, ոչ պակաս ուժգին է երաժշտութիւնը, հարմոնիան: *Այդ պատկերները նաեւ երաժշտութիւնը առարկայացնող միջոցներ են:* Դա ասելի բնութեան երաժշտութիւնն է, քանի որ տիեզերքը չի կարող գոյութիւն ունենալ առանց երաժշտութեան: Պատահական էլ չի, որ Տոնոյեանը իր առաջին ժողովածուի մեծ մասը յատկացնում է հենց տիեզերքի ձայների քննութեանը: Մեր համոզմամբ՝ դա եւս պայմանաւորուած է Մեծարենցեան աշխարհի մոզական ելեւէջներով:

Բայց եթե առաջին ժողովածուն, այս իմաստով, ասելի մտքի արդիւնք է, ապա Մայրերու հրեշտակները սրբի արդիւնք է: Երաժշտութիւնը բանաստեղծը լսում է սրտով: Հետեւապէս այն ծնւում է բառի հետ ու դժուար է ասել, թէ դրանցից որն է կարեւոր գրողի համար: Երեւի երկուսն էլ, քանի որ դրանք մի մարմին են:

Այս տրամադրութիւնը սերտօրէն կապուած է եւ ընտրուած թեմայի հետ: «Մայրերու հրեշտակներ» վերնագիրը խօսում է հենց անշօշափելի, անըմբռնելի, «այնկողմնային աշխարհին» հաղորդակցուող էակների մասին, որոնք ընթերցողին հաղորդակից են դարձնում սովորական ժամանակից վեր գոյութիւն ունեցող երեւոյթներին կամ մարդկային հոգիների պատմութեանը: Ամբողջութեան մէջ ժողովածուն մայրերգութեան թեմայով է ամբողջանում: Բայց սա իրատեսակ մայրերգութիւն է, քանի որ այս թեման իր մէջ ներառում է գրեթէ ամէն ինչ: Այստեղ թեմայի արծարծման սահմաններ գրեթէ չկան, քանի որ հրեշտակները սահմաններ չեն ճանաչում, նրանց համար անյաղթահարելի ոչինչ չկայ, նրանք մեզ հաղորդակից են դարձնում բոլոր նրանց, ովքեր թանկ ու հարազատ են մեզ: Քանի որ բանաստեղծը մարդու, թէկուզ եւ հարազատ մարդու կեանքը կամ նրա ճակատագիրը չի վերժանում ընթերցողի համար, այլ հոգու պատմութիւն է ներկայացնում, ստացում է, որ տարածաժամանակային չափումները դառնում են միայն երաժշտութեանը յատուկ վերերկրային ու անշօշափելի: Սա արդէն նոր ոլորտ է, որտեղ միայն հրեշտակներն ու մարդկանց հոգիներն են դառնում մեզ՝ ներկաներիս գոյութիւնը տանելի դարձնող էակներ: Նրանք ընդլայնում են երկրի սահմանները՝ յանուն երկնային մայրական սիրոյ, որ չի տեղաւորում մեղաւոր երկրի սահմանների մէջ: Բայց մարդու համար այդքան էլ միանաշանակ չէ անպարագիծ սիրոյ ետեւից գնալը, քանի որ նա հարկադրուած է երկու ուղքով հողին կանգնած մնալ, բայց հոգով մնալ երկնքի հետ:

Մարդու հոգին նրան մշտապէս տանում է վեր՝ դէպի ճախրանք ու թոփչք, մինչդեռ մարմինը նրան պահում է մշտառկայ մահուան տենդի մէջ: Մարդիկ իրենց հոգիներին ապաւինելու, դրանով առաջնորդուելու, դրանով ապրելու փոխարէն մշտապէս ապաւինել են իրենցից դուրս գոյութիւն ունեցող ուժին: Փրկութիւնը սեփական ներաշխարհում գտնելու փոխարէն նրանք առյաւէտ մնացել են ամանդոյթի ուժին ենթակայ.

Հոգիները կ'ուսանեն լոկ ճախրանքներ ու թոփչք,

Մինչ մարմինները դանդաղ մահուան տենդը կը սորվին.

Արարածները ամէն մոլորեալ են, սակայն միշտ

Արարիչը կը հսկէ աշխարհական ամէն վիի: («Արարիչը»)

Սա բանաստեղծութեան վերջում դառնում է եզրայանգում, որ «ստուգում» է անցեալի դառը փորձով: Այստեղ է, որ մէկ անգամ եւս դժոխքով անցած մարդիկ շարունակում են ենթակայ մնալ ամանդոյթի ուժին:

Ու մարած են մոմերը, աղօթքները լռած են,
Շրթունքները լռած են, լուռ են հոգիք ու վանքեր,
Ծպտուած են ողբերը, ու երկինքն ալ է անձէն,
Բայց լռութեան մէջ դարձեալ Արարիչը կը հսկէ: («Արարիչը»)

Խօսքը մնում է անհատի՝ ներքին ալեբախումների ոլորտում:

Այստեղ չկայ բնութիւնը կամ իրականութիւնը, որից պիտի արտածուի ասելիքը, այն ծաալում է միայն քնարական հերոսի ներաշխահում: Բայց դրանք ոչ այնքան պատկերներ են, որքան երաժշտական ձայներ՝ հոգուց բխած: Ստացում է, որ քնարական հերոսը ոչ այնքան պատմում է կամ խօսում շրջապատի մասին, որքան խօսում եւ ունկնդրում է ձայները: *Գեղեցկութիւնը ընկալում է ոչ այնքան տեսողութեամբ, որքան լսողութեամբ:* Այս իմաստով Տոնոյեանի բանաստեղծութիւնը դառնում է մեր ժամանակի պոեզիային բնորոշ որակներից մէկը: Խօսքը պատկերի գեղեցկութեանը, բնապատկերին չի վերաբերում, ոչ էլ կեանքի գեղեցկութեանը, քանի որ ժամանակը դրա հնարատրութիւնը չի էլ ընձեռում: Չկայ բանաստեղծական այն գեղեցկութիւնը, որը պիտի հոգուն անդորրութիւն բերէր կամ շոյէր ընթերցողի տեսողութիւնը: *Այս իմաստով նիւթական աշխարհի բացառումը փոխյրացում է մտքի դիպուկութեամբ:* Ելակէտը ոչ թէ իրականութիւնից ազդակուող պատկերն է, այլ բանաստեղծի հոգում ծնուած միտքը, դրա դիպուկութիւնը: *Մտքի ճշգրտութիւնը ասելի կարելոր է, քան բանաստեղծական պատկերի ճշգրտութիւնը:* Սա արդի պոեզիային բնորոշ որակ է: Չի կարելի անտեսել եւ արձակը, որտեղ եւս առաջնային պլան է մղում խօսքը՝ որպէս ստեղծագործութեան առանցք: Առաւել կարելորը ասելիքն է, դրա դիպուկութիւնը, քան պատկերը, որ տրամադրութիւն է ստեղծում:

Սա իհարկէ, շատ բանով սահմանափակում է բանաստեղծութեան հարստութիւնը, բայց երեւոյթը փոխայատուցում է մտքի խտութեամբ, դիպուկ ձեակերպումներով, որ հարկադրում է մշտապէս խօսքը դարձնել ձգուած, ասելիքը՝ սուր: Գրողին չի հետաքրքրում պատկերների գեղեցկութիւնը, նրան հետաքրքրում է ասելիքը, իսկ *ասելիքը կեանքի ու մահուան փոխյարաբերութեան մշտապէս հարցն է, որ ծնում է մենութեան զգացողութիւնից:* Աշխարհի հետ կապող որել է բան չկայ եւ եթէ կայ, ապա դա մօր յիշատակն է, որ ամիշատում է ամէն բանաստեղծութիւն: Իսկ յիշատակը կապում է քնարական հերոսի էութեանը եւ դրանից դուրս այն գոյութիւն չունի: Մենութեան ցաւը ծանր բեռ է, որ չի թեթեւանում՝ անորոշութիւնից ծնուած: Նոյնիսկ նրանք, ովքեր լքեցին մեզ հարկադրանքով թէ Աստծու կամօք, ասելի ապահով էին ու երջանիկ, քան ներկան հերկող քնարական հերոսը, որ մենակ է ու անպաշտպան ժամանակի հոլովոյթում:

Այստեղ էլ ի յայտ է գալիս ժամանակակից պոեզիային բնորոշ մէկ այլ որակ: Ընդհանրապէս տարբերակում են գեղարուեստական ստեղծագործութեան երկու մեծ «տիպեր»: Մի դէպքում բանաստեղծն իրեն արտայայ-

տում է այնպես, ինչպես՝ ինքը իրականում կայ եւ երկրորդ՝ գրողն իրեն ներկայացնում է այնպես, ինչպես՝ կ'ուզենար ինքը լինել (ինչպիսին որ ինքը իրականում չի):

Մենք հակուած ենք կարծելու, որ արդի բանաստեղծութեան մէջ կարեւոր տեղ է գրաւում գրողի *ինչպիսին* լինելու հանգամանքը, քանի որ սա անելի մեծ հնարաւորութիւն է տալիս *ինքնապոիայ* լինել, մարդիկ տարբեր են իրենց ապրած կեանքով, մղումներով եւն.: Բայց մենք այն կարծիքին չենք, թէ բանաստեղծութիւնն ամբողջութեանը իր քողի տակ է առնում բանաստեղծի կեանքը: Այդ բանաստեղծութիւնը անելի շուտ արտայայտում է անհատական կեանքը, բայց ոչ ամբողջութեամբ: Նա խօսում, արտայայտում է թեմաների մասին, որոնք անելի «նպատակայարմար» են բանաստեղծին «բարենպաստ դիրքերից» ներկայացնելու իմաստով: Առաւել համարձակները հնարաւորինս մօտենում են թեմաների, որոնք վերցուած են «ոչ բարենպաստ» ոլորտներից: Այս կարգի պոեզիան անելի հակուած է զուտ անհատական կեանքի, անհատական ապրումների բացայայտմանը: Իհարկէ, մարդը անհատականութեան եւ միջավայրի սինթէզն է, եւ նա չի կարող առաջնորդուել բացարձակ անհատական որակներով, որոնք կտրուած են միջավայրից, սակայն բանաստեղծական ինքնատիպութեան մէջ անհատականութեան շերտը գերակայ նշանակութիւն ունի:

Տոնոյեանի *Մայրերու հրեշտակներ*² ժողովածուն իր ընտրուած թեմայով խիստ անհատական է, բայց եւ միաժամանակ հասարակական: Մօր անժամանակ մահը բանաստեղծի համար պարագծում է անհատական ապրումների սահմանը, այդքանով նրա խօսքը ստանում է խիստ ընդգծուած, ինքնատիպ երանգներ:

Կեանքի ու մահուան փոխյարաբերութեան մէջ մշտապէս մնում է կործանման ցաւը: Ներկան որեւէ կերպ չի ամոքում մարդուն, որ հարկադրուած է լքել Երկիրը: Տոնոյեանի բանաստեղծական աշխարհը այս իմաստով դառնում է երկշերտ կառոյց: Երկինքը այստեղ նոյնքան, գուցէ եւ անելի մեծ իրաւունքներ ու բովանդակութիւն ունի, քան մեղաւորները երկրի վրայ քայլելիս: Երկրի ու Երկնքի միջեւ եղած կապը բանաստեղծի համար թէական չի, այլ միանգամայն իրական: Ու քանի որ դա իրօք այդպէս է, ուրեմն ներկան պարագծող կեանքը ստանում է ազատութեան այնպիսի աստիճան, որով մարդը դառնում է երկնային ժամանակի բնակիչը: Նրա քնարական հերոսի համար վախը ոչ այնքան նիւթական աշխարհը լքելն է, այլ երկնքում սպասող չունենալը: Մանաւանդ որ դիմաւորողը երկնքում մայրն է լինելու:

Բայց... երանի,
Երանի պատրանքին
Ու անոր երանի,

² *Մայրերու հրեշտակներ*, Ապոլոն, Երեւան, 1997, 50 էջ:

Որուն կը ճանապարհեն

Ու կը դիմաւորեն նաեւ... («Ճանապարհողներ, դիմաւորողներ»)

Քանաստեղծական մտածողութեան սահմանի ընդլայնումը նաեւ հոգեբանութեան, յոյզերի, յոյսերի սահմանների ընդլայնում է: Այս պարագայում խօսքն անելի անհատական, չկրկնուող ապրումների մասին է, որ ասելիքը յագեցնում է դրամատիկական տրամադրութեամբ:

Բայց, իհարկէ, բանաստեղծական շարքը հենց սկզբից մտայնացուած է ոչ այնքան որպէս անհատական ցափ արտայայտութիւն, որքան ընդհանուր ցափ: Խօսքը հազարաւոր զոհերի ու որբացած մանուկների մասին է, որ անցան երկրային դժոխքի պարունակներով, բայց փրկուեցին մայրերի հրեշտակների ձեռամբ:

Բայց ի՞նչ է քնարական հերոսը կամ ինչպիսի՞ն է նրա բարոյական նկարագիրը: Երկնային էակներին, մայրական անաղարտ սիրուն հաղորդակցուող չի կարող ամնմաքուր հոգի ունենալ: Նրա սէրն ու յամառութիւնը՝ սեփական ուղիով ընթանալու մղումը նրան դարձնում են միջավայրից տարբեր ու երկնային ուժի հաւատաւոր:

«Նուր ու խաչ» բանաստեղծութիւնը կեղծիքի ու ոգու արիութեան մասին է: Աստիճանաբար, ծաւալում է սուտը, մինչդեռ թոււմ էր, թէ վատը հալուելու էր լափ մէջ, բայց հակառակն է: Կեղծիքին դէմ գնացողն իրեն վերապահուած նկարագիրն ու վարքը պահելու հետեւողական ձեռնարկմամբ, չկոտրուելու յամռութեամբ արժանանալու է Տիրոջ հովանուն: Բանաստեղծութեան մէջ նուան եւ խաչի պատկերները միասնաբար ստեղծում են եւ մեր ազգային նկարագրի, մշակոյթի բնորոշ երանգներ: Էլ ով կա աշխարհում ու նաեւ երկնքի ծիրում քնարական հերոսին հարազատ մարդ, եթե ոչ մայրը: Միայն նրան կարող է փոխանցել իր մտահոգութիւնը: Միակ ապաւէնը, որ երկնքում է:

Կ'երթամ, մայր իմ, կ'երթամ ճամփան,

Զաւակդ եմ քու՝ մոխիր-աչեր,

Նոնենիներ աջ կողմս կան,

Ու ձախ կողմս՝ խաչէր, խաչէր...

Ու սուտ ցաւը, սուտ ցան ինձի

Կը տապալէ տունկ մը որպէս,

Բայց դեռ կ'երթամ, ու եղիցի

Ճամփիս խաչ մը ու նուր մը կէզ:

Նոնենիներ աջ կողմս կան,

Ու ձախ կողմս՝ խաչէր, խաչէր.

Ես Տիրոջը կը սպասեմ՝ գայ,

Ինձի խչմար տայ իւր խաչէն: («Խաչ ու նուր»)

Քնարական հերոսը, որ անցնում է կեղծիքով լեցուն իրականությունը, յամառորէն փորձում է պահել ինքնությունը: Նրան չեն գրաւում հեշտ ու ապահով ապրելու ձեւերը: Տուեալ դէպքում քնարական հերոսի որոշակիութիւնը չի արտայայտում պատմահասարակական միջավայրի դրսեւորմամբ: Այդ որոշակիութիւնը անհատական անկրկնելի զգացողութիւնն է, որի սահմանները հնարաւորինս ընդլայնուած են: Բայց վերջանական արդիւնքում նա մնում է տառապող, ցաւող, արդարութիւնը պաշտպանող, սեփական ինքնութեան սահմանները պահող անհատ: Այս իմաստով բանաստեղծական այս շարքը չունի կեցութեան որոշակիութիւնը: Նրա ստեղծած բանաստեղծական դաշտը պարագծուած է խիստ որոշակի թեմայով: Չկայ մայրը ներկայում, բայց նա մշտապէս ներկայ է երկնքում, որին հասնելը պարզապէս ժամանակի հարց է: Քնարական հերոսը չի կապում ներկային, նա չի տեսնում աշխարհը՝ իր գոյների մէջ: Նա միայնակ է իր ստեղծած աշխարհում՝ իր մօր հետ, երկնային անշոշափելի տարածութեան մէջ: Եւ այստեղ արդէն քնարական հերոսն իր ապրումներով, վերերկրային դաշտը զգալու հետեւողական ջանքով միանգամայն իրական է:

Եթէ նախորդ գրքում բանաստեղծութիւնը կարող էր որոշակի դէպքի արդիւնքում ծնուել, ապա այս պարագայում խօսքը դէպքի մասին չէ, այլ ընդհանուր մեղամաղձոտ տրամադրութեան: Քնարական հերոսը իմաստաւորում է իր ապրումները, խոհերը, որոնք կապուած են մօր հետ: Եւ ինչպէս մայրական սէրն է անընդհատ ու չվերջացող, այնպէս էլ քնարական հերոսի սէրն է մօր հանդէպ անընդհատ ու չվերջացող: Հետեւապէս, մայրական թեմայի հետ կապուած բանաստեղծութիւնները ծնում են մշտապէս՝ ազդակուելով քնարական հերոսի ապրումներից կամ խոհերի արդիւնքում:

Եթէ մի ժամանակ մարդու փեղը բանաստեղծութեան մէջ բաւականին քիչ էր, ապա հիմա դժուար է ասել, թէ բանաստեղծութեան մէջ մարդուց բացի ինչ կայ:

Այս իրողութիւնը, որ ձեւաւորում է արդի բանաստեղծութեան դէմքը, իւրատեսակ կրկնութիւնն է 1960ականների՝ արեւմտահայ գրականութեան մէջ արդէն դիտուած երեւոյթի: Մնծուրին իր ժամանակագրութեան մէջ, խօսելով Չահրատի պոեզիայի մասին, դիտարկում է այս երեւոյթը: Բանաստեղծական այս սերնդին գրաւողը հենց մարդն է, ինչպիսին որ նա կայ: Այստեղ երեւակայութիւնը մի կողմ է դրուած: «Երեւակայութեան կոնակ կը դարձնեն: Երբ անձրեւը կը փեղայ Չահրատ իր փունը եւ հացի քիօն կը մորաբերէ»: Չահրատը Մեծ քաղաքին մէջ ժողովրդի, չունեւորի քերթողն է, «Ան իր պզտիկ թաղին քերթողն է»:

Բայց Մնծուրին դիտարկել է ոչ միայն բանաստեղծութեան ընդհանուր ուղղութիւնը, մարդը՝ որպէս ուսումնասիրութեան գերակայ առարկայ, դրանից բխող հետեւանքներով, այլեւ խօսում է դրա արտայայտման ձեւի

մասին, որ իրեն շատ է հարազատ. «...*Ինձի համար միակն է, քեզի հետ խօսելու պէս գրելը*»:³ Սա շատ կողմերով պայմանաւորում է ժամանակակից բանաստեղծութեան դէմքը: Բանաստեղծութիւնը բնութեան, պատկերներին, երեակայութեան համադրումներով եթէ չի դառնում անելորդ, ապա չի դառնում գլխաւոր: Սա վերաբերում է եւ արտայայտման ձեւին: Արտայայտման դասական ձեւերը, պաթօսը իր տեղը զիջում է սովորականին, առօրէականի դրամային, որ ինքնատիպ է ու ոչ անսովոր: Սա էլ հարկադրում է լեզուի գործածութեան առաւել պարզ, խօսակցականին մօտ արտայայտուելու ձեւ:

Քանի որ բանաստեղծը ոչ այնքան տրամադրութիւն է ստեղծում, որքան արտայայտում է իր ապրումներն ու ցաւը, եւ դրա մասին չի խօսում պաթօսով, հետեւապէս նրա խօսքը մօտենում է խօսակցականին: Բայց դրանք, այսպէս ասած, խիստ գործնական խօսակցութիւններ են, որ գեղեցիկ արտայայտուելու կարիքը չունեն, դրանք ճիշտ, դիպուկ արտայայտուելու կարիքը ունեն:

Միտքերնուն մէջ կ'արտասուին որբերը,
Միտքերնուն մէջ կ'ուրախնան,
Ու ամէն գիշեր
Անոնց կ'այցելեն իւրեանց մայրերու հրեշտակները՝
Անոնց եղբայրներուն ու քոյրերուն պէս,
Որ պիտի ծնուէին... («Մայրերու հրեշտակներ»)

Շարքը ունի մէկ այլ իւրայատկութիւն: Եթէ չկայ երեակայութեան ճախրանք, ապա կայ միանգամայն իրական համադրութիւն իրականութեան եւ երազի: Այսկողմնային աշխարհը մշտապէս կապուած է վերերկրային աշխարհի հետ: Առաջինը իրերի աշխարհն է, մարդիկ են իրենց տառապանքներով, ցաւերով ու մահուան հանդէպ վեհերոտ վախով: Երկրորդը՝ հրեշտակների, այս աշխարհը լքած մարդկանց, առաջին հերթին մայրերի աշխարհը, որոնք անասելի կորուստների, զրկանքների աշխարհից երկինք համբառնեցին եւ շարունակեցին հսկել իրենց զաւակներին:

Տոնոյեանը բանաստեղծութիւնները կառուցում է այդ երկու աշխարհների համադրումների ուղիով: Մայրերը երբեք չեն «մոռանում» աշխարհը՝ իրենց զաւակների ժամանակաւոր ապաստարանը: Երկնային հրեշտակի տեսք առած մայրերն իրենց զաւակի փոխարէն կարող են որպէս իրենց զաւակ ընդունել բոլոր խաչեալներին.

Ինձի պատանքին մէջ առան,
Յետոյ տարան,
Գիշերին մէջ խաչքարի մը տակ թաղեցին,
Իրենք դարձան հրեշտակներ՝

³ Յակոբ Մնձուրի, «Ժամանակագրութիւն, «Ձաիրատի՝ Մեծ քաղաքը», *Մարմարա օրաթերթ*, 9-10 Փետրուարի, 1961:

Սաւառնեցին դէպի երկինք,

Ու քիչ յետոյ

Վեր երկինքէն

Հողիս վրայ խաչքարերը անձրեւեցին... («Վիրաւոր եմ»)

Բանաստեղծութիւնները մէկ այլ ներքին իւրայատկութիւն ունեն: Գրողը խօսում է երեւոյթների, քնարական հերոսների կամ բանաստեղծութեան մէջ հանդէս եկող էակների մասին, բայց դրանք բոլորը պարզապէս զոհեր են՝ եւ նրանք, ովքեր լքել են մեզ, եւ նրանք, ովքեր պիտի լքեն: Մայրերն սպասում են իրենց զաւակներին, նրանք նոյնքան մենակ են ու անօգնական, որքան երկրում գտնուողները եւ միայն ուժ ու եռանդ, սէր ու կարօտ են ճառագում իրենց գրկում զաւակի ջերմութիւնն զգալու պահին: Նրանք ուրախ են միայն սեփական զաւակների ներկայութեամբ, որ փոխում է նրանց կեանքը անասելի սիրով ու ուրախութեան տազնապով:

Մատաղի խորհրդանշանը կարելի էր տեղ ունի բանաստեղծի երգերում: Գրողը այն դարձնում է միջոց ընդհանրացումների համար: Ժողովածուն ժամանակի տազնապների բեռն ունի: Առաջին հայեացքից միայն կարող է թուալ, թէ խօսքը անցեալի կորուստներին է վերաբերում: Քիչ չէ եւ տազնապը գալիքի հանդէպ, ինչը պայմանաւորուած է Ի. դարավերջի իրադարձութիւններով: Եւ այս տազնապալի սպասումների մէջ ինչպէս անցեալի, այնպէս էլ գալիք զոհաբերումների առաջ կանգնած են հայ մայրերը, քանզի

Մօտիկ է պահն ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԶՈՀԱԲԵՐՄԱՆ,

Զոհաբերման պահն անոնց, որ փոքր են ածու,

Ովքեր պիտի բախեն ԴՈՒՈՒՆ ու

Իրեանց օծուն մարմինները մատաղացու

Ուղեցոյց Խաչ Յեղին դարձուն: («Հայոց մայրերուն մատաղը»)

Կորուստների առջեւ նախ եւ առաջ կանգնած են հայոց մայրերը, թէեւ անմիջական կործանումների ալիքն իրենց վրայ վերցնում են որպէս մատաղացու հանդէս եկող նուիրեալները: Նրանք իրենց կեանքով Յեղի համար Ուղեցոյց խաչ են դառնալու: Ու այս ամէնի մէջ իրապէս հերոսականութիւն չկայ, կայ զոհաբերման պատգամ, երբ ապրելու մնացեալ ձեւերն այլեւ չեն գործում: Մնում են մայրերը՝ իրենց զաւակներով՝ թիկունքները մերկ պատմութեան աղէտների դիմաց: Իսկ նրանց ճանապարհին արդար է ու անկրկնելի: Նրանք օրինակ են եկող սերունդների համար:

Տոնոյեանն ընդլայնում է թեմայի շրջագիծը: Խօսքը մայրական սիրոյ մասին է, որ չվերջացող է, քանի որ խօսքը երկնային տարածքում տառապող, իրենց զաւակներին սպասող հոգիների՝ մայրերի մասին է: Սա անընդմէջ սէր է ներկայից՝ կեանքից յետոյ: Հետեւապէս, այդ զգացողութիւնն անմահ է: *Տոնոյեանն ընդլայնում է մայրական սիրոյ սահմանները մեր գրականութեան մէջ:*

Խօսելով մայրական վերերկրային սիրոյ մասին՝ անհասկանալի կը լինէր չխօսել եւ հայրական սիրոյ մասին, որ տրամագծօրէն «հակառակ» սէր է: Վերերկրային, անհասանելի սիրոյ կողքին հայրական սէրը զսպուած, չարծանագրուած, ինքն իրեն թաքցնող, ինքն իրեն չբացայայտող զգացում է: Դա ոչ այնքան թաքուն, որքան ներհուն սէր է, որ համբերող է՝ կեանքի չվերջացող կորուստների առջեւ լռութեամբ կանգնած:

Մայրական սիրոյ թեման համադրում է հայրենասիրութեան թեմային: Բայց կարելի է, որ դրա արծարծումն ասանդական իմաստատրման չի ենթարկուած այն իմաստով, որ զուրկ է հրապարակախօսութիւնից: Դա միայն զգացողութիւնն է, այլ պատմութեան իմաստատրում, առասպելի նորովի ընկալում, որ վեր է ժամանակից:

Լեռան խորհրդանիշը մեր գրականութեան մէջ առկայ է «սկզբից»: Իհարկէ, խօսքը Արարատի մասին է, բայց անուանումը չկայ, այլ կայ միայն առասպելական ժամանակներից դէպի ապագան գնացող լեռան ոգին: Դիմակայութիւնը սկզբից եւեթ լեռան յատկանիշն է, լեռը՝ որպէս զսպուած ուժերի, պայքարի ոգու արտայայտութիւն, անգամ վիրաւոր միտումն է դէպի ապագան: Այլ կերպ նրա գոյութիւնն անտեղի կը լինէր: Լեռը մնալու է դիմակայութեան յաւերժական խորհրդանիշ, որ իր մէջ ադամանդի պէս խտացնում է ժամանակը: Նա վկայում է ժողովրդի ոչ այնքան տարիքն ու մշակոյթը («Կուրծքին զմուռսուած Անի»), որքան նրա ոգին՝ դարերի արհաւիրքներին դիմադիր:

Կը մակարդէ մայրամուտ
Արիւնն անոր ծիրանի,
Մոմած գինի՝ սրտին մէջ,
Կուրծքին՝ զմուռսուած Անի.-
Մութ է, ընթացք մը առ վիհ:

Հեծեալ մըն էր ու հիմի
Շիրմաթումբ է ըսես ան
Ու երկնքին սրտին մէջ՝
Լողլողացող բիլ տապան.
Մութ է, ընթացք մը առ վիհ,
Չկայ շաւիղ, շառաւիղ,
Սակայն արիւնն առ շապիկ՝
Կ'ուզէ նորէն արշաւել: («Լեռը»)

Եթէ այդպէս է, ապա ազգի ոգին երբեք չի մեռնում, երկինք համաբարձուած հոգիները, որոնց համար չկան ժամանակ ու սահմաններ, որպէս «վանքին սպասատրներ» ճախրում են դէպի հեռուում միայն Աստուծոյ յոյսին մնացած մեր վանքերը: Ոչինչ չի մոռացում, քանի որ ոգին մշտապէս ներկայ է մեր անցեալի յիշատակների, վանքերի ու մշակութային կոթողների

վրայ: Առանց վանքերի ու մարդկային ոգու միասնության չկայ ո՛չ ներկայ եւ ո՛չ էլ առաւել եւս ապագայ:

Գոյութեան երթում միակ խարիսխը մնում է Հայաստան երկիրը: Իր ներունակ ուժով, որքան էլ այն նմանուի փակ դուռ ունեցող վանքի՝ ներսում եղողները դուրս չեն կարող գալ, իսկ դրսիները չեն կարող ներս գալ:

ԱՐԱՐՉԱԿԱՆ ԵՒ ՍՏԵՂԾԱՐԱՐ ԷՌԻԹԵԱՆ ՀԱԿԱՍՈՒԹԻՒՆԸ

Երկրից յետոյ (2002) ժողովածուն հնարատրինս հեռանում է անձնական թեմաների շրջագծից. կարելորդ հասարակական կեանքն է՝ փլուզուող մարդկային յարաբերութիւններով, բարոյական պարտութիւններով, որոնց հետեւանքներն աղէտալի են:

Բանաստեղծութեան սահմանները ընդլայնում են, քանի որ նախորդ ժողովածուների թեմաները բարձրաձայն ինքնախոստովանութիւններ են եւ ոչ թէ ընթերցողին յղուած ջանքեր: Այս իմաստով ժողովածուն կարելոր է, քանի որ բանաստեղծն *արձանագրում է ժամանակը՝* դրա բերած անվերջանալի կորուստներով: Մարդու գործունէութեան արդիւնքում խաթարուեցին աշխարհի դասական կարգն ու ապրելու ձեւերը, մարդը դարձաւ յարձակողական ու չար: Աշխարհը մի ժամանակ մարդ արարածի տունն էր, այժմ բարձիթողի ուժի գործադրմամբ սկսեց իշխել չարը: Եւ սա դիպուածի արդիւնք չէր: Դա ժամանակի մէջ կայացած կործանման ընթացք էր, որին լծուեցին նաեւ նրանք, ովքեր խօսքի ասպետներն էին: Գրականութիւնն աշխարհը բարի դարձնելու քարոզը մոռացաւ եւ լծուեց չարը հասկանալու գործին:

«Չարը գայթակղեց իր կառուցուածքի հետաքրքրութեամբ եւ ուժով, իսկ դէպի ծուլութիւն հակուած մարդկութիւնը ուժեղի կողմն անցաւ»:

Բարոյական անկումը դարձաւ համատարած, քանի որ մարդիկ մոռացան Աստծուն տրուած վերադարձի խօսքը: Աստծոյ աչքը ջուր կտրեց սպասելուց: Անհաւատները դարձան անխոցելի, իսկ հաւատացողները միշտ մնացին փորձութիւնների մէջ, որդիներն ու դուստրերը դարձան իրենց հայրերի ու մայրերի ճակատագրի կրողները:

Հոգու ճախրանքը մշտապէս մնաց մարմիններին գերի: Ու եթէ լաւագոյն բանաստեղծութիւնները փրկում էին անհատին, ապա վատերն այնուամենայն-և կարողացան կործանել աշխարհը: Բանաստեղծական խօսքի կործանումը միշտ է համընկնում աշխարհի կործանմանը:

Ժողովածուն բացող բանաստեղծութիւնը խօսում է նոր ժամանակների ամենամեծ բախումի՝ *մարդու արարչական էութեան եւ նրա ստեղծարար էութեան մշակութամարդաբանական առումով հետեւանքների հակասութեան մասին*: Եթէ մի ժամանակ «Իմ լաւ բանաստեղծութիւնները ինձ փրկում էին, // բայց վատերը կարողացան կործանել»: Եւ դա համընկաւ աշխարհի կործանման հետ: Եւ դա միշտ է եղել այդպէս: Մարդը կարող է ճիշտ

չհասկանալ ի յայտ եկած նոր ուժերի էությունը («Չարը գայթակղեց իր կառուցուածքի հետաքրքրութեամբ եւ ուժով») եւ դրանց ազդեցութեան հետեւանքները: Բայց այս ամէնի արդիւնքում մարդն ստիպուած է յատուցել սեփական արարքների համար:

Իսկ ի՞նչ է ելքը: Փրկօղակը ւանդական արժէքները վերագտնելու, դրանց վերադառնալու ջանքերն են (պատասխանատուութիւն, փոխօգնութիւն, մարդու, միջավայրի հանդէպ հոգատար վերաբերմունք են.): Այս ամէնը դրուել է առաջադիմութեան զոհասեղանին:

«Պատժաբաժին» շարքում մարդ արարածի բարոյական նկարագրի խնդիրն է. ներկայի մարդը դարձել է նրանց յետնորդը, ովքեր դաւաճանեցին Աստծու որդուն եւ մոռացան բոլոր նրանց, ովքեր լքեցին Յիսուսին: Բարոյական անկումը դարձաւ համատարած: Մարդը ւանդական, մարդասիրական արժէքները փոխարինեց գործապաշտական, եսասիրական պահանջներով: Բոլոր նրանք, ովքեր լքեցին այս աշխարհը, իրենց նկարագրով ու Տիրոջը նուիրուածութեամբ աւելին էին, քան ներկաները, որ մշտապէս դաւաճանելու են նախնիներին:

Նորօրեայ մարդը, որ դաւաճանեց նախնիներին, դարձաւ նկուն ու մերկ՝ զրկուած նախկին աստուածային որակներից: Տոնոյեանի քնարական հերոսը գիտակցում է այն ողբերգական կացութիւնը, որի մէջ յայտնուել է ինքը:

Մարդը կորցրեց երբեմնի աստուածային արարչական էությունը, որի համար արարումը աստուածային ջանքերի շարունակութիւնն էր, մինչդեռ ժամանակը մարդուն դարձրեց հլու-հնազանդ կատարող, որ «ոչինչ չաւելացրեց եղածին», նա միայն երբեմնի մարդկային էութեանը դառնալու մտայնութեամբ շարունակեց երազել, մի բան, որ «այդ երկրում» հակացուցուած էր՝ որպէս յանցանք: Այս ամէնի արդիւնքում մարդը կամքից անկախ երկրորդական դարձրեց հիմնարար արժէքները, դրանք փոխարինելով խիստ սովորական, կենցաղային միջոցներով, որ դարձան նպատակ: Այդ պարագայում դժուար էր արդէն թուլացած մարմինը պահել՝ որպէս հոգու կացարան:

Բայց սա չէ ողբերգականը, այլ այն, որ ապրուած կեանքը նորից կրկնելու հնարը չկայ, նրան հասու կեանքը, գոյատեւման փափագը կարճ էր ու անբովանդակ.

Ամէն բան է այս երկրում մօտեցել իր աւարտին՝
Եւ մարմնամերձ մեր կեանքը, եւ ուժացումը հոգու,
Ահա՛ դրուած քո գալթում իմ աննշմար միակ դին,
Եւ փշրանքներն այն՝ շուրջս, որ ես կերայ իմ կեանքում:
(«Փշրանքներ»)

Այսպէս՝ *սոցիալական* ժամանակից ծնուած մարդկային անկատարութիւնները զուցէ եւ պատասխանատուութեան այն բեռը չունեն, ինչ կապում

է բարոյական կործանումների հետ: Ամէն պարագայում մարդ արարածի նիւթապէս, ամէն գնով լաւ ապրելու մղումները ի վերջոյ նրան նետում են անդունդը, որտեղից վերադառնալու հնարը չկայ: Ամբողջ տիեզերքը իր գոյութեամբ աստուածային կամքի դրսեւորում է:

Հարցադրումները վերհասարակական են, Տոնոյեանին հետաքրքրում են հոգեւոր թեմաները, բայց դրանք ոչ թէ անմիջականօրէն վերցուած են Աստուածաշնչից, այլ դրանից արտածուող գաղափարների ու բարոյական ընկալումների շրջագծից:

Մարդը կորցրեց Աստծուն արժանի նկարագիրը, Տիրոջ մարմնով սնուելու փոխարէն նա կերաւ անարժանների կողմից մատուցուած հացը, ուստի եւ իր մարմինը չմնաց որպէս սոսկ «հոգու տուն»: Տիրոջ կողմից ընծայուած մարմինը չդիմացաւ ժամանակի բերած նիւթական աղէտների հեղեղին, ուստի եւ մեռաւ: Մարդուն նոր մարմին է պէտք, որ սրտանց քաւի իր մեղքերը՝ մարդավայել ապրելու համար. «Տէր, մէկ այլ մարմին փոր ինձ, ես սրտանց // Մեղքն իմ քաւել եմ ուզում, ուստի՝ թոյլ փոր՝ դեռ ապրեմ»:

Իհարկէ, այս թեմաների արծարծումները, որ բերում են մարդկային բարոյական նկարագրի կործանումները, դրանով չի ասարտում: Ընդհանուր հարցեր քննարկել, նշանակում է խօսել վերացականութեան մասին: Տոնոյեանի բանաստեղծութիւնը վերացական չէ: Թուացեալ վերացականութիւնը շատ որոշակի ժամանակից է սնուում: Սա ոչ թէ բնապատկերով կառուցուող բանաստեղծութիւն է՝ գիւղական կեանքի պատկերներով, այլ դաժան ժամանակի ընդերքից եկող քաղաքային պոեզիա:

Քաղաքային կեանքի ներքին տարածութիւնը, որ ձեւաւորում է Ի. դարավերջի եւ քսանմէկերորդ դարասկզբի հայ կեանքի ծանր կացութիւնը, դառնում է շարքը ձեւաւորող հիմնական տրամադրութիւն: Ճիշտ է՝ խորն են անբարոյական վարքի արմատները, ինչպէս ժամանակին «վախկոտ Պետրոսը» ուրացաւ Յիսուսին, այնպէս էլ ժամանակակիցներն են դաւաճանում մահացածներին ու այս ամէնի արդիւնքում պարզ է, որ դաւաճանողներին դաւաճանելու են նրանց յետնորդները («Պատժաբաժին»), այսուհանդերձ բանաստեղծը ձգտում է ստեղծել ժամանակի սոցիումի նկարագիրը, որտեղ «ներքեւում գտնուողները», այդ թում եւ քնարական հերոսը անհանդուրժող վարք ունեն, գիտակցում են իրենց «անկարելի կացութիւնը», բայց չեն ըմբոստանում այն իրողութեան դէմ, որ հաշմում է մարդուն («Յարմարուեցի այդպէս էլ կատարողի իմ դերին»):

Անհատի փառապանքը կապուած է սեփական անգործունակ վարքի գիտակցման հետ, որ ասելի ըմբոստանալու եւ միջավայրը վերածելուն կարող էր յաւակնել: Բայց մարդը չունի այդ հնարաւորութիւնը: Նա իր անհատական որակները, այն ինչ ունէր որպէս հարստութիւն, դրեց մի կողմ՝ վերեւների հացը ուտելու ակնկալիքը նրան տկար դարձրեց, իսկ վերեւներում գտնուողները («կուշտ բխկացող ու երջոյ») շարունակեցին քամել «դատար-

կածուծք երկրի» ուժերը: Արդիւնքում մարդը, որ կարող էր անելի տանելի դարձնել կեանքը, պարզապէս մեռաւ:

Դա մի իրականութիւն է, որտեղ մարդկային անհատական որակները, որոնք կարող էին գործել ի նպաստ մարդկային հոգեւոր ուժերի կայացման, արժեգրկուեցին՝ օրերի հանապազօր հացը ձեռք բերելու բնազդի կողքին.

Նշխարներս թողեցի՝ սրանց հացը ես կերա,
Ու կոկորդիս մատաղի աղը մորթուեց ու մնաց...

Մարդը մնաց օրերի հոգսերին հլու. նա չունէր դրանից հայեացքը վեր բարձրացնելու, երկինքը հայելու համարձակութիւնը կամ անգամ ցանկութիւնը, քանի որ առաւել հեշտ էր, գուցէ եւ ճիգ չէր պահանջում համընդհանուր հոսքին տրուելը. դիմադրութիւնը սպառուեց, վերջանականապէս «սրանց մարմնանիւթն ինձ գրաւեց»:

Բայց Տոնոյեանի քնարական հերոսը չի կորցնում վերածնուելու, մարդանալու յոյսը: *Անկումների ճանապարհը նրան վտիպ ու թոյլ դարձրեց, իսկ վերածնուելու յոյսը մնաց:*

Ամբողջ շարքից ստացուած զգացողութիւն-տպաւորութիւնը անհատի ողբերգութեան մասին է, որ ճշացող չէ եւ հառաչանքի է նման, մարդը, որ շատ մեծ մղումներ ու նաեւ երազանքներ ունէր, մնաց սովորական «հանրային ցածում», քանի որ այս ամէնի հիմքում նաեւ նուազող երկիրն է.

«Քանի որ հին գիրն իմ դատապարտեալ ու փոքր ածուն
Մաշում են՝ որպէս քարտէզ անճանաչ ու սոսկ... իղձերի»:

Ահա այս համընդհանուր նահանջի պայմաններում, երբ միջավայրը նաեւ անհատին կայանալու, իր հոգեւոր ուժերը դրսեւորելու հնարը չտուեց, նրան խարսխելով հանապազօրեայ հացին, վերջնարդիւնքում չձեւաւորուեց երկրի քաղաքացին, որի մղումները մշտապէս կենցաղային ոլորտից վեր էին լինելու: Դա սեփական վիճակը հասկացող, բայց այս ամէնի դէմ չըմբոստացող անհատն է, նա «բունտարը» չէ, որ կ'ապրի այս ամէնը հիմնայատակ ափրելու եւ դրա աներակների վրայ նորը կառուցելու մոլուցքով: Քնարական հերոսի մղումները բարոյականութեան ոլորտներում են: Նրա փրկութիւնը մնում է միայն անհատական մակարդակում: *Ոչ այնքան հասարակական կարգը փոխելու, որքան այդ միջավայրը բարոյապէս առողջացնելու միտումի անհնարիւնութիւնը նրան փանում է անհատական ուղիով:* Նրա փրկութիւնը մարդկային կոչումին հաւատարիմ մնալու նպատակի մէջ է: Նա սեփական յաղթանակը կը կարողանայ ապահովել միայն անհատական պլանով.

Ինձ մնում է լոկ՝ Ձիրքով Ստեղծումի հարազատ մնամ
Իմ Հօրենական Նմանողութեանն ու Չարչարանքին,
Որ կարողանամ մի անգամ կանգնել խաչին յանդիման
Ու հանապազօր հացի պաշարով բարձրանամ երկինք:

«Երկրապատան» շարքը գալիս է առաել առարկայական դարձնելու քաղաքային միջավայրի մղձաւանջը: Այստեղ խնդիրն արդէն ոչ այնքան սոցիումի շերտերը քննելն է կամ վերներին ներքեւիններից տարանջատելը, այլ երկրին պատուհասած աղէտը «արձանագրելը»: Ոչ պատահականօրէն բանաստեղծն իրեն դիտարկում է որպէս *վաւերագիր*:

1999ի Հոկտեմբերի 27ի ողբերգութիւնը երկիրը տասնամեակներով ետ շարտեց: Յաջորդ օրն իսկ գրուած «Դոֆին. Տիրասպանութիւն» բանաստեղծութիւնը ափսոսանքի, խորը հիասթափութեան արտայայտութիւն է: Այս ամէնը դիտարկում է որպէս «հաշուեյարդար»: Մանրախնդրութիւնը հարուածում է երկրի հիմքերին: Սեփական տունը սեփական ձեռքերով քանդելու մոլուցքը որեւէ տրամաբանութեան չի ենթարկուած: Ոչինչ չի մնում անել վիճակից դուրս գալու համար: Մնում է վերջին յոյսը՝ գուցէ մի օր բողբոջներ կ'ելնեն հենց Տիրոջ կամքով՝ ձիւների տակից, թէեւ «մեր արքան ընկաւ արնահեղ»:

Բանաստեղծի համար ցաւը համընդհանուր համակերպումն է, որ երկիրը հանդարտ տանում է անկման: Նման վարքագիծը ուղիղ գծով կործանում է երկիրը («Երկրապատան»)

Համընդհանուր նահանջի ներքին ողբերգութիւնը ժամանակաւորապէս յաղթահարում է անահատական ջանքի արդիւնքում: Բայց դա ոչ թէ լուծում է, այլ պարզապէս սեփական ինքնութեան փշրանքները պահելու միտում: Ծիծաղը՝ ոհմակային բնագրով ապրող իշխանական փաղանգի հանդէպ, ոչինչ չի տալիս, այնքան անյոյս է քաղաք-պետութեան միջավայրը փոխելու հնարաւորութիւնը:

Երկիրը քաղաք-պետութիւն է, որ իր ցինկէ դագաղի մէջ է առել բոլոր նրանց, ովքեր նորօրեայ բարքերը կրող ու դրանք գործադրողն են՝ շրջանառու դրամը տոկոսներ է քամում, փող դիզելու անթաքոյց եռքով, իսկ հեռուներում ոռնում է պատերազմը, որ մղում են իշխանութիւններից խոռվ տղերքը: *Ժամանակը կարող էր բովանդակութիւն ստանալ հենց խոռվեալ սերնդի ջանքերով, բայց ժամանակն արժէք-նպատակները փոխարինում է արժէք-միջոցներով*: Նախարարները երկրի տէրն էին լինելու, բայց թշուառ են ու ապիկար. անկարող են անցեալ տարուայ ձիւնն անգամ մաքրել:

Այստեղ էլ վերեւների եւ ներքեւի հակասութիւնը դառնում է բանաստեղծութեան կառուցման զսպանակը:

Համընդհանուր նահանջը՝ սեփական բարեկեցութիւնը նպատակ դարձնելը իվերջոյ համակում է եւ «ներքեւիններին»՝ նրանց, ովքեր հացի համար որոշում են լքել երկիրը:

«Հետզհետէ եղերեզ դարձող պամֆլետ հայ նոր գաղթական-Հին ընկերներիս» բանաստեղծութիւնը նոր գաղթականների մասին է: Հեզնանքը մեծ է ու հասցէական: Փոխուել են ժամանակները, փոխուել են եւ մարդիկ, օտար երկրում նրանց սերունդները կործանուելու են նախ բարոյապէս, քանի որ Արեւմուտքի մութը «միասեռական աստղեր» կը ցանի սերունդների

«կուշտ երկնակամարում», իսկ տանից հեռացած անառակ որդիները երբեք չեն վերադառնա՝ իրենց մեղքը քաելու եւ տունը շէնացնելու յոյսով: Հեռում մնացած ծեր հայրերը կը հաւատան, որ նրանք վերադառնալու են աշնանը կամ էլ եկող գարնանը: Իսկ հեռուներում թափառող անառակ որդիների կարօտին միայն մահը կը յաղթի:

Այս ամէնի արդիւնքում քաղաքը զրկում է *ներքին ուժից, հոգեւոր մղումները իրենց տեղը զիջում են ուսադիրների ու պաշտօնների հանդէսին*, նրանք սեփական բարեկեցութիւնն են ապահովում, սեփական շահը: «Առագաստ» սրճարան»ը դատարկուել է նախկին բովանդակութիւնից եւ խորհրդանշում է մեռնող քաղաքը: Վերեփնները ստանձնել են Աստծու դերը, իսկ ներքեւում գտնուողները յանձնուել են օրհացի բնագրին:

Ու եթէ չկայ քաղաքական ցինիզմին հակադրուող ներքեւի բունտարը, մնում է համակերպումը, որ գալիս է հեռուից: Յոյսը մնում են մանուկները, որոնց ճակատները համբոյրներով կնքում է «շրթունքները սրտին մօտիկ» պահած բանաստեղծը:

Բայց արդե՞ք Տոնոյեանը յոռետեսութեամբ է առաջնորդում: Նրան երբեք չի լքում յոյսը՝ իր ժողովրդի բարենպաստ երթի հանդէպ, քանի որ արարչագործութեան ոգին գալիս է վաղուց: Այսինքն՝ մարդը վերջնականապէս չի կորցրել աստուածային արարման շնորհը:

«Ծարան Ըստեղծումի առասպելի միջով

Կապում է մեր գեներն անդրժամանակեայ»:

Ահա այս հանճարի ընթացքը պայմանաւորուած է եւ մեր մշակոյթի՝ գրականութեան, պատմութեան ներքին եթէ ոչ տրամաբանութեամբ, այլ այդ ամէնը միմեանց կապող ճակատագրով: Դեռ վաղ է այս մարդկանց դամբանաճառ կարդալ, քանի որ նրանց ի վերուստ տրուած *տառապանքը* Աստծուն է հաճելի, ասել է թէ Աստուած բարեհաճ է նրանց հանդէպ, ովքեր *տառապանքների* միջով անցնել գիտեն, հետեւապէս եւ ապարշխարել:

Մեր պատումը դեռ կայ՝ անուղղելի անչար՝

Հանճարեղ մեր երթին որպէս հոգաբարձու,

Ու դեռ վանդ է, վանդ է ասել դամբանաճառ,

Քանզի մեր տառապանքն հաճելի է Աստծուն:

Ինչ տառապանքի մասին է խօսքը: Վ. Ֆրանկը համոզուած է, որ տառապանքից վախենալ պէտք չէ, միայն թէ այն իմաստ ունենայ⁴: Ինչ չափով մարդն իրեն նոյնացնում է գոյութիւն ունեցող իրերի վիճակի հետ, այդ չափով էլ նա վերացնում է այդ վիճակից իր հեռացուածութեան աստիճանը: Տառապանքը նպաստում է ինքնակատարելագործմանը, այն փրկում է մարդուն հոգեկան դատարկութիւնից: Տառապանքի ընդունակ մարդը

⁴ В. Франкл, *Человек в поисках смысла* (Մարդը մտքի որոնումներում), Մոսկուա, Прогресс, 1990, էջ 227:

վկայում է, որ ինքը հոգեպէս պատրաստ է մաքառման, նա չի համակերպուել իրողութեանը, հոգեպէս չի ընկճուել, քանի որ մարդը հոգեւոր իմաստով անկոտրում է: Միայն այս իմաստով է մեր տառապանքը աստուածահաճոյ: Պատմութեան ամենատարբեր շրջափուլերում ի յայտ եկած տառապանքը վկայել է հայի հոգեւոր արիութեան մասին՝ երբեք չհամակերպուելու ներքին մղումով:

Վերջանական արդիւնքում ժամանակի հասարակական կառուցուածքի տեղաբանութիւնը ստեղծում է ժամանակի բովանդակութիւնը՝ ձեւերի ու տարածութեան վկայութիւններով: Վերեններում տէրերն անտէրութեան են մատնել երկիրը, քաղաքական ցինիզմով պարտադրում են իրաւունք ու կարգ, ներքեւում եղողները յարմարուող, անդէմ հասարակութիւնն է, որ յոյսը դնում է ժամանակի վրայ, կը գան նորերը եւ երեւի կը կարգաւորեն ամէն ինչ:

«Բանաստեղծութեան Բարաբբան» շարքում երեւոյթների բարոյական իմաստաւորումն է դառնում առաջնային՝ որոշակիօրէն ձերբազատուելով հասարակական մարմնի ընկերային կառոյցի հոգեբանութիւնից: Շարքի վերնագիրն իսկ ինտրիգային է, միմեանց չհամադրուող բառերը ստեղծում են նոր իմաստ: Բանաստեղծութիւն արարող Աստծու որդին խաչուեց ամբոխի քմահաճոյքի, կենդանական բնազդների դրսեւորման արդիւնքում, իսկ աւազակ Բարաբբան ազատութիւն ստացաւ: Իրականում շարքը բանաստեղծութեան Բարաբբայի հայեացքով կերտուած աշխարհն է: Եւ այստեղ բարոյական կորուստները ահռելի են.

Խառնել են իրար երես ու աստառ,

Ո՛չ հոգի ունեն ու ոչ էլ ամօթ,

Սրանք արիւնն իմ կը խմեն, հաստատ,

Կամ էլ կը ջարդեն գլուխս քարով: («Մեղքը»)

Բայց անգամ նման կարգի «վերացական» թեմաների արծարծման ընթացքում կարելի է ժամանակակից քաղաքային կեանքի խորքերում ծնուած, հասունացած, հզօր ընթացք ձեռք բերած «քաղաքային դասը», որ իր հեղեղաջրի մէջ է առնում բոլոր նրանց, ովքեր անհատականութիւն են եւ կարող են ինքնուրոյն մտածելու փորձեր ձեռնարկել: Անդէմ ամբոխը քարով կը ջարդի նրանց գլուխները, ովքեր սեփական ճանապարհը գտնելու փորձ կ'անեն:

Այստեղ արդէն խօսքը հոգեւոր արժէքները ոտնձգութիւններից «հեռու պահող հերոսն» է՝ ոչ թէ *արարողը*, որ աստուածային որակի դրսեւորում է, այլ խօսք *ստեղծողը*, որ նոր ժամանակի բերած աճապարարն է ու հոգով անբարոյական լեզուազարր: Նրանց խղճին է ծանրացած մարդկանց հոգիները խեղելու գործը եւ երկրին ծառայելու յաւերժական երդումները:

Հրապարակում հոգիները ծախսածներն են, որ ապրելու, յարմարուելու տեղեր են գտել. նրանք են թելադրում բանաստեղծութեան Բարաբբային ընտրած հասարակութեան ճաշակը:

Համատարած բարոյական նահանջի ժամանակներում անհնարին կը լինէր գտնել նրանց, ովքեր գոնէ կը զօրէին մենակ չթողնել քնարական հերոսին՝ գոնէ վերջին պահին.

Ինչպէս ես գտնէի այնքան քոյրեր,
Ու եղբայրներ այնքան ինչպէս ես գտնէի,
Որ երբ մենութիւնն ինձ վարագուրէր,
Իմ վերջերգի համար երգչախումբ լինէին:

Ահա այսքան ծանր է նոր ժամանակների բերած «առաջընթացի» գինը, որ մարդուն ներառում է ոչ միայն հասարակական, այլև գոյաբանական խնդիրների ոլորտը:

Ո՞րն է ելլը: Ելքը արժէք-նպատակներին վերադառնալը կամ դրան միաձուլուելն է: «Գանձ մի դիզիր քո սեփական երկրում» (արքայական ուղերձներ) շարքը դրա վկայութիւնն է: Խօսքը բարձրագոյն բարոյական արժէքների մասին է: Բայց այստեղ խօսքը ոչ թէ աստուածային կարգի վերականգնման մասին է, այլ ազգային դարաւոր արժէքների, որոնք ժամանակի ընդերքում իրենց կենսագրութիւնն ունեն: Արժէք-միջոցները ստեղծում են ժամանակաւոր ու ժամանակի ժանգին ենթակայ առարկաներ: Եւ քանի որ դրանք բնոյթով աստուածային չեն, կարող են ոչնչանալ կամ գողացուել, արժէք նպատակները չեն վախենում ո՛չ ժամանակից, ո՛չ էլ մեծ ու փոքր գողերից, քանի որ դրանք մարդկանց տրուած են մէկ անգամ եւ ընդմիշտ:

Շարքում երկրի խորհրդանիշեր են, որ առարկայական են ու նաեւ վերացական: Դրանք «արքայական ուղերձներ» են, որ ասուել են «մէկ անգամ եւ ընդմիշտ»: Այս շարքը մէկ անգամ եւս խօսում է այն մասին, որ բանաստեղծն ասելիքը չի շրջանակում որեւէ բանաստեղծութեամբ: Այս խոհաքնարական երկերը միասնութեան մէջ են բացայայտում գրողի հայեացքի ուղղութիւնը կամ տրամադրութեան ամբողջականութիւնը: Դրանք առանձին «պատմութիւններ» են, որ միասնաբար ստեղծում են ասելիքի բովանդակութիւնն ու սահմանները:

«Լեռը» ժամանակների սկզբից ներկայ է, որ համբերում է եւ ճառագում, ոչ միայն մեր անցեալի դարաւոր պատմութեան վկան է, այլև ապագայի վկան, որ երկնային փառքի է արժանացնելու հոգետոր գանձերի շղթան՝ Գեղարդ, Անի, Գառնի, Զուարթնոց...

Շարքը երկիրը ձեւաւորող մարմնի «պատմութիւնն» է, որ ամբողջացնում է հոգետոր արժէքների համակարգը՝ որպէս *բարձրագոյն արժէք*: Դա գերագոյն նպատակ է, որին հարկ է ձգտել՝ *հայրենիք, կեանքի իմաստ, բարութիւն, արդարութիւն, ճշմարտութիւն, ազատութիւն*: Սրանք վերժամանակեայ բնոյթ ունեն: Տոնոյեանի քնարական հերոսը երկրնտրանքների

մէջ սրանց է ստորադասում այլ կարգի արժէքները, որոնք միջոցներ են, թէեւ ներկան դրանց կարող է նպատակ դարձնել՝ անձնական բարեկեցութիւն, մասնաւոր սեփականութիւն, կուտակման տենչ են:

Մարդու համար այնքան էլ հեշտ չէ ընտրութիւն կատարելը գերագոյն արժէքների եւ նպատակ դարձած միջոցների միջեւ: Այս երկընտրանքը Տոնոյեանի բանաստեղծութեան ներքին զսպանակներից է: Բայց քանի որ ընդհանուր վտանգի առջեւ կանգնած սոցիումը սովորաբար նախընտրում է հասարակական արժէքները, Տոնոյեանի քնարական հերոսի համար սալոացուցիչ ազդակ է բարձրագոյն արժէքներին առաջնութիւն տալը:

Այդ երեւոյթները բանաստեղծի համար նաեւ ճակատագրի իմաստաւորման ընթացք են: Վերջնարդիւնքում ասանդական հասարակութիւնը նախընտրում է հանրային դիրքորոշումը: Այդպիսին է ճշմարիտ երգը, հակառակ պարագայում հասարակութիւնը կարող է կործանուել:

Չի մեռնելու երգն իմ
ժառանգական,
Ինչպէս որ չի մեռնի
Մահուան յուշը անչար ժողովրդիս,
Ու բացում եմ հիմա ես բառ առ բառ հիւսուած
Կանխատեսի Երկս Անգիր,
Որ դեռ պիտի հնչի յամառ
Ու յարգալի,
Նա՛մ, որ պիտի դառնայ եւ համակիր
Երկրի Տիրոջն ու Արքային: (Երգը)

Ժառանգական երգը, տուեալ դէպքում նախնեաց ասանդների հաւատարիմ երգը խօսում է Լեռան, Գետի, Արքայի, Օրէնքի, Գերբի եւ այլնի մասին, որոնք անանց արժէքներ են: Պատահական չէ, որ դրանք արքայական ուղերձներ են՝ վերժամանակեայ, վերերկրային պահանջ-հրամաններ: Դրանք գոյութիւն ունեն միջոց-նպատակների բացառման արդիւնքում:

Գանձ մի՛ դիզիր քո սեփական երկրում,
Ոնց որ գողանաս ինքդ քեզանից,
Ազգը միշտ զէնք է քեզ համար կռում
Եռաթեւ նետից ու Թուր-Կէճակից: (Զէնքը)

Եթէ գանձ ես դիզում քո երկրում, նշանակում է գողանում ես երկրի ներուժը, մինչդեռ երկրի ընդերքից յառնում է դիմակայութեան բնազդը՝ Եռաթեւ նետի ու Թուր-Կէճակի խորհրդանիշ-պատկերով:

Այս շարքը «պետականութեան ներքին անատոմիան» է՝ ներկայից ազդակուող մտավախութիւններով:

Գիրքը լրացնող «Պատմութիւն» շարքը երեք գործ է՝ Ճերմակածի Մուշեղի, Արշակի փորձութեան ու Մուշեղ սպարապետի գլխատման մասին: Այս թեմաները եւս անանց արժէքների թում են:

Տոնոյեանը ընտրել է մեր պատմութեան մէջ դրուագներ, որոնք թէեւ բանաստեղծական չեն, բայց ներշնչող են՝ անկախ մեկնաբանութեան ուղղութիւնից: Բովրայի կարծիքով հենց այստեղից է (Արշակի մասին պատմութիւնը) սկսում հայի էպիկական ժամանակը, նրա ինքնագիտակցութիւնը, նրա արիութիւնը, ով համարձակվում է տէր կանգնել իր երկրին, նրա իրատունքին, նրա գոյութեանը: Արշակը կարող էր լինել մեր դիւցազնավէպի կենտրոնական դէմքը, բայց Արշակը չի, որին դաւեցին նախարարները: Բուզանդի այս կոնահումը մնում է օրի մէջ, նա արձանագրում է, իսկ հերոսականութիւնը գիտակցող մարդը խուսափում է դրանից, որպէսզի գտնի անելի յարմար թեկնածու, որ անելի յարմար է ու անպատասխանատու: Մեր պատմագրութեան մէջ արձանագրուած երեւելի դրուագը Տոնոյեանը մեկնաբանում է անսպասելի դիրքից, որը լաւագոյնս բացայայտում է Արշակի կործանման պատճառը:

Տոնոյեանը խորացնում է արքայի *մենութեան ողբերգականութիւնը*: Եւ դա ցուցադրելու համար փաստից կորզում է դրամատիկականի առաւելագոյն պաշարը: Հողը, որի համար արքան երեսուն տարի մաքառեց, դարձաւ Արշակի կործանման պատճառը: *Հողը մարտնեց արքայի իրական մտադրութիւնը կամ արքային*:

Այդ դրամատիկում խորացուած է եւ Մուշեղ Սպարապետի գլխատման պատմութեան մէջ, որտեղ դահճապետը նոր արքան է:

Այս շարքը կապում է նախորդին ներքին տրամաբանութեամբ: Երկրի կայացման ներքին օրգանական կառոյցը բարդագոյն մեխանիզմ է: Վկան՝ պատմութեան մէջ արձանագրուած փաստերը, որտեղ ներքին հակասութիւնները շատ են, յաճախ իրարամերժ ու անմեկնաբանելի, թէեւ բանաստեղծն անելի ուղղագիծ է:

«Հողս խառնէք մեր վիպասքին» շարքում «պոետական ուղերձներ» են: Հենց սկզբում «Պայման»ը մէկ անգամ եւս յիշեցնում է պոետի կոչումի մասին, որ երբեք սեփական իրատունքը չի զիջի նրանց, ովքեր «երկրից հեռակայ» պայման են դնում Խօսքի առաջ, իսկ Խօսքի տէրը պատրաստ չէ երգից առաջ մեռնել:

Բանաստեղծի ու ժողովրդի բախտի յարաբերակցութեան խնդիրը մեր գրականութեան մէջ լաւագոյնս արատայայտուած է Չարենցի ստեղծագործութեան մէջ: Բանաստեղծն արեան վերջին կաթիլով անգամ կանխագգում էր զալիքը, տեսնում էր ժողովրդի անկամ ընթացքը. օրերի հլու երթից դուրս գալու ներքին ճիչը իրականում ոչինչ էլ չէր փոխում ժողովրդի երթի մէջ: Մտահոգութիւնները, որ չեն փոխել իրենց բնոյթը, մնացել են որպէս բեռ՝ չթեթեացող ու թռիչքը կասեցնող:

Միակ որոշակին դարաւոր կասկածն է.

Ու մենք ճիշտ ենք անում, որ գնում ենք այսպէս՝

Երկրի բախտին հլու,

Երկրի բախտին խոնարհ:

Մեր հաւատը ինչի՞, ինչի՞ չի վերածուել

Սրի՛,

Վանքի՛,

Խօսքի՛

Ու կարմիրի որդան,

Մինչեւ եկել, եկել

Վեհերոտ ու վեհոտ

Մի խաչքար է դարձել ճամփին մեր որոնման:

Ահա՛ պարզած աջս՛

Որպէս արդար Խաչը,

Այդ ճամփան եմ օրհնում նշխար-հացի՛

Որպէս հին օրերի աղօթարար,

Որպէս Գրիգոր Նարեկացի:

Ժամանակը փոխուել է, չի փոխուել դարերի ճամփան բռնած ժողովուրդը: Նրա կեցուածքը պատմութեան մարտահրաւերների առաջ այնքան ինքնագլոր է ու ոչ նպատակամէտ: Արդիւնքում՝ ներքին կանչը, մղումն ու նպատակները չեն ձեւաւորուել որպէս Սուր, Վանք ու Խօսք: Ճանապարհին մնացել է որպէս մի վեհերոտ խաչքար՝ որպէս վկան մեր մաքառումների, որ ասես ոչ մի տեղ էլ չի տանում: Եւ այս երթը համընդհանուր, որ ոչինչ էլ չնախանշող է ու ոչ մի տեղ չտանող, ոչինչ չպարտադրող, բանաստեղծի համար մնում է միակ ընդունելին, իրականը, որ աշխարհին որեւէ պարտադրանք չի բերում, այլ ապրում է բնական կեանքով:

Մարդը ըստ երեւոյթին միակ արարածն է, որ գիտակցում է իր կեանքի *սահմանափակ* ընթացքը: Սա եւս կապում է գրքի ներքին տրամաբանութեանը: Մի դէպքում թերացում-բացթողումը գալիս է անհատից՝ «*Առանց այն էլ կեանքը մեր միշտ թողնում ենք անաւարտ*», միա կողմից քիչ չէ եւ միջավայրի անիջական գործակցութիւնը անհատի վրայ. «*Առանց այն էլ կեանքը միշտ մեզ անաւարտ է թողնում*»: Երկու դէպքում էլ խօսքը մարդու կեանքի անաւարտութեան, հետեւապէս դրա ժամանակաւոր բնոյթի մասին է, որտեղ քիչ չէ մարդու՝ օձի թոյնի ուժով ու ատելութեամբ լեցուն կեանքով ապրելու կենսաձեւը: Դեռ որքան ժամանակ պիտի հունցուի կալը՝ մարդուն արժանի նկարագրին հասնելու համար: Այդ կայացման ընթացքի մէջ քիչ չէ եւ ինքնահեգնանքը. «*Դեռ երկար//Իմ կալը//Կը թրծեն// Այն տէրը//Ու իր//Քերծէն*»:

Մարդու նկարագիրը ժամանակի ընթացքում փոխուեց եւ այն էլ ոչ դրական իմաստով: Փարաջանովի ֆիլմի («Նոան գոյնը») լէյտմոտիւր «*Կեանքը տանջանք է*» կապակցութիւնն է: Շեշտը դրուած է կեանքի՝ որպէս ինքնակայացող երեւոյթի վրայ՝ առանց մարդու անմիջական գործակցութեան, մարդը զոհ է եւ ոչ տէր: Տոնոյեանի բանաստեղծութեան մէջ շեշտադրում

է մարդու պատասխանատուութիւնը, մարդը զոհ չէ, այլ *յանցավոր*, նա իր արարքներով այդպիսին է դարձնում եւ կեանքը: Որքան մեծ է նրա պատասխանատուութիւնը, բայց որքան տարածուն է յանցաւոր անտարբերութիւնը գոյութեան երթի հանդէպ:

Ապրելը

Մահից մեզ ընծայ

Ու գուցէ

Վերջին

Յանցանք: (Վերջին յանցանք)

Փրկութիւնը քնարական հերոսի համար *ժողովրդի հոգեւոր գանձերի խորհուրդներին, դրա մարդասիրական ոգուն վերադառնալն է: Այն կ'ամոքի ինչպէս յանցաւոր աշխարհը, այնպէս էլ տեսական կը դարձնի մարդու վերջաւոր գոհութիւնը:*

Թէ արժան եմ,

Ու կարող եք՝

Հոգս խառնէք մեր վիպասքին:

Այս իմաստով *Տոնոյեանի պոեզիան դառնում է մի աշխարհ, որ ընդլայնում է գոյութեան տեսողութիւնը՝ շնորհիւ անանց արժէքների կամ հոգեւոր գանձերի:* Անկախ այն հանգամանքից, ինչ իրադրութիւն, ինչ ժամանակ ու մարդկանց է բերում իր բնաստեղծական աշխարհը, միեւնոյն է՝ հեղինակի համար որպէս պատուար մնում է հոգեւոր բարձունքը, որ ձեռք է բերուել սերունդների ջանքերով: Ու եթէ հասարակական կեանքի ճգնաժամային պահերին աւանդական նորմերը լուծում են, ինչը մեծացնում է մտահոգութիւնները, ապա այս հանգամանքը առաւել հետետողական է դարձնում գրողին՝ *հոգեւոր արժէքների ոգուն հաղորդակցուելու, դրանց միախառնուելու իմաստով:* Նա փորձում է համազգայ ժամանակը՝ ինչպէս անցեալից եկող, այնպէս էլ դէպի ապագան գնացող: Հոգեւոր գանձերին միախառնուելը նրա քնարական հերոսի համար պարզապէս փրկութիւն է, մանաւանդ այն պահին, երբ վխտում են նորօրեայ ոտանաւորչիւնները, ամէն ծաղրածու իրեն իրավիճակի տէրն է համարում, մինչդեռ բանաստեղծի Խօսքը աշխարհին էր փոխելու:

Տոնոյեանի պոեզիայում՝ որպէս ներքին ընդհանուր ուղղութեամբ ասացինք մարդու աստուածային, արարիչ ոգու եւ ստեղծագործ վարքի միջեւ եղած հակասութիւնն է առաջնային: Վերջին հաշուով, արժէք նպատակը գերակայ է արժէք միջոցների կողքին: Սրանք տեսանելի են ընդհանուր, փիլիսոփայական մակարդակում:

Սակայն հարցն ուղղագիծ չէ: Ժամանակակից մարդուն այդքան էլ հեշտ չէ ուղղորդել դէպի գերակայ արժէքները, երբ նրա ճառնպարհը լի է գայթակղութիւններով: Պարտականութեան ու մեղքի միջեւ յայտնուած մարդը անկարող է ծառայել միայն հոգուն, որ Աստծու բաժինն է, բայց տես որ մեծ

է եւ մարմնի իրատունքն ու դերը, որի տէրը անտէր սատանան է («<ՄԱ», «Չարքը»):

Իրականութեան մէջ հոգեւոր թելը պահող դասը եւս թաթախուած է մեղքի մէջ, բայց ով գիտէ, ջանքերի արդիւնքում գուցէ շատանան հաւատի ծառաները:

Այդ իրականութեան մէջ, որտեղ առաջնային չեն գլխաւոր, հոգեւոր արժէքները, կեանքը դառնում է անբովանդակ ու անմիտ, որ մարդուն հնարատրութիւն չընծեռեց դրսեւորելու իր կարողութիւնները: Միակ կանխատեսելի մահն է, որ վերջակէտում է երկրի վրայ մարդու գոյութիւնը:

Բանականութիւնը, որ մարդուն օգնել է կողմնորոշուել, դարձել է շատ կողմերով գոյընթացը կասեցնող ուժ: Կենդանիները գեղեցիկ են ու ամենայաղթ իրենց *բնազդային* ճգնումների մէջ, նրանք իրենց սիրոյ եւ թշնամութեան մէջ անկեղծ են ու անմիջական: Մարդը համոզուած է, որ ինքը աւելին է, քան կենդանական աշխարհը, քանի որ ինքը *բանական* է, հետեւաբար «ամենակարող»: Այս ընկալումը բազում արգելքներ առաջադրեց մարդուն: Մինչդեռ կենդանական աշխարհում բնազդները դարձան ճիշտ կողմնորոշիչներ («Բանականութիւն»):

Բայց կարող է մարդը առաջնորդուել բնազդներով: Դրա դրսեւորման օրինակները միայն կործանումներ են արձանագրել այդ իրականութեան մէջ («Ախպէրական խորհուրդ», «Մանթօ»): Երգիծանք կայ այդ իրականութեան հանդէպ («Պալատական ծաղրածուի ուղերձները»): Խօսքը պետական կառոյցների՝ օրէնսդիր իշխանութիւն ներթափանցած երեսփոխանների մասին է: Դրանց խորհրդանշում է ժողովրդական վէպի ամենանսեմ հերոսը՝ Վերգօն, որ հայոց բախտը մտքով հերկողն է, «սոխակ երգողն ու կերկոխը»: Այստեղ են եւ նորօրեայ կոզբաղիները, որ ժողովրդին դէմ են տուել պատին, որ մեծ-մեծ փրթում են ու սուս ու փուս ուտում, լերան-լերան խօսում, խօսք են տանում, բերում:

Ենթադրելի է, որ մի օր առաջնային պլան է գալու Դաւիթը եւ ասպարէզից դուրս կը քշի անարժաններին: Այս ամէնին ւելանում է եւ ներքեփինների անկամ վարքը՝ պորտէպորտ պարտքերում թաղուած, միայն համբերութեամբ հարուստ, որի չափը հասկանալը միայն զարմանք է յարուցում:

«Ձիւն գա գլխիդ» բանաստեղծութիւնը հակադրում է նախորդին: Այստեղ արդէն վերնախաւը չի, այլ հասարակ ժողովուրդը, որ այլեւս կորցրել է դիմադրելու, հակադրուելու վարքը: Արդիւնքում նա դարձել է պորտէպորտ պարտապան, որ նստել է թախտին ու սպասում է բախտին: Ինչ էլ գլխիդ բերեն, միեւնոյն է՝ տէր ես: Ոչ կողմ, ոչ էլ դէմ ես: Միայն համբերութիւն, որի չափը հասկանալը զարմանք է յարուցում:

Եթէ խօսքը մնալու է բնազդներին, ապա մարդու անցնելիք ուղին շատ է թեք՝ անկում տանող: Միակ ելքը մարդու ինքնակատարելագործումն է՝ Երկնքում կուտակած գանձն ւելացնելու, իր նմանին օգնելու, կեանքը

աւելի տանելի ու մարդկային դարձնելու, մարդասիրական մղումներով առաջնորդուելու մէջ:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Բոլոր ժամանակներում մարդկային արատներից մաքրուելը մարդու համար եղել է կարեւոր նպատակ: Բայց եսամոլութիւնը, կուտակման տենչը, այլատեսացութիւնը յաղթահարելը մնացել է միայն երազանք: Այնքան է մարմինը հիանդացել, որ նրա փրկութիւնը թում է՝ դարձել է անդարմանելի: Բանաստեղծը ստիպուած է գրելու ոչ միայն իր ժողովրդի, այլ ընդհանրապէս մարդու հիանդութեան պատմութիւնը եւ ոչ թէ նրա մաքառումների ու հերոսականութեան, թէեւ այդ ամէնի մէջ սեփական ցաւի զարկերն անընդհատ են՝ ծանր հետեանքներով:

Տոնոյեանի բանաստեղծութիւնն արդի հայ գրականութեան ինքնատիպ էջերից է:

THADEVOS DONOYAN:
A WORLD THAT ENLARGES/WIDENS THE LIMITS OF EXISTENCE (I)
(SUMMARY)

VACHAGAN GRIGORYAN
vachik_grigoryan@mail.ru

Thadevos Donoyan is one of the unique figures of 1990-2000 Armenian literature.

His poetry reflects the changes that have taken place in contemporary Armenian poetry. These changes include both the vector and the limits of what is being said. It is not interesting anymore to engulf the reader in "beautiful lies". Indeed, poetry has cast out the naturalist picture and the traditional poetic perception of time and space. Traditional poetry used to generate its poetic world through external scenes, and by giving meanings to phenomena which lied outside the poet. Contemporary poetry has freed itself from these and has the inner world as its axis. Both time and space are reinvented exclusively in the individual feelings and contemplations of the poet. They are as unique as the uniqueness and the only-ness of a man.

These new assessments, which are included in the inner spiritual and rational world of the poet, are of universal rather than of a daily nature. One can always feel in Donoyan's poetry the drama of man, who is found between heaven and earth. Man is always inclined towards heaven, but the earth always keeps him imprisoned within its gravitational space.

Both books, *Sermasdgh* (Star Sperm) and *Mayreru Hreshdagner* (Angels of Mothers) enlarge the limits of Armenian poetry. Besides, the interrelatedness of heaven and earth have always interested Donoyan. These complement each other and defend the balance in the universe. Donoyan's other book, called *Yergrits Hedo* (After the Earth), mostly depicts social life with its inner contradictions. Moral losses lead humans to catastrophic results. Unlike Donoyan's previous compilations, which were self-confessing, in *Yergrits Hedo* the poet registers time with its unending losses.

Eventually, the poet recommends that the way out is through efforts to return to traditional values (responsibility, mutual help, careful treatment of humans and their milieu, etc.).

ՕՏԱՐ ՅԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Մասն ԺԱ. – վրացերէն¹

ԱՐՄԷՆ ՄԻՔԵԱՅԷԼԵԱՆ

armen_michaelian@yahoo.com

ՆԱԽԱԲԱՆ

Ներկայ յօդուածով շարունակում ենք օտար լեզուների տառադարձութեան կանոնները լուսաբանող յօդուածաշարքը², որի սոյն՝ տասնմէկերորդ (վերջին) մասը, նուիրում ենք վրացերէնի յատուկ անուններին:

Ինչպէս շարքի նախորդ յօդուածներում, այստեղ եւս վերանայելու ենք գոյութիւն ունեցող իրավիճակը, փորձելու ենք գիտական հիմքերի վրայ դնել վրացերէնի տառադարձութիւնը եւ քննութեան ենթարկել դրա մի շարք նրբութիւններ: Մեր այս մօտեցումը բնականաբար չի ենթադրում վերջնական լուծում: Այն միեւնոյն ժամանակ նպատակ ունի մասնագէտ հասարակութեան ուշադրութիւնը սեւեռել խնդրի վրայ:

Յօդուածը չճանրաբեռնելու եւ միեւնոյն բանը մի քանի անգամ չկրկնելու համար՝ այս յօդուածի նախաբանն ու ամփոփումը նախորդների նման լինե-

¹ *Մ.Խ.*- Մեկնելով յօդուածին տրամաբանութենէն եւ հեղինակին ուղղագրական առաջարկներէն, ուսումնասիրութեան ուղղագրութիւնը կը պահենք հեղինակային վիճակով:

² Տե՛ս Արմէն Միքայէլեան, «Օտար յատուկ անունների տառադարձութեան սկզբունքները (Մասն Ա. – մերձատրարեւելեան լեզուներ)», *Հայկազեան հայագիտական հանդէս*, Խ:2020, էջ 341-64. նաեւ նոյնի՝ «Օտար յատուկ անունների տառադարձութեան սկզբունքները (Մասն Բ. – դասական լեզուներ, հին յունարեւելեան լատիներէն)», *Բազմավէպ*, ՃՀԸ(1-2):2020, էջ 304-36. նաեւ նոյնի՝ «Օտար յատուկ անունների տառադարձութեան սկզբունքները (Մասն Գ. – ֆրանսերէն)», *Հայկազեան հայագիտական հանդէս*, ԽԱ:2021, էջ 443-66. նաեւ նոյնի՝ «Օտար յատուկ անունների տառադարձութեան սկզբունքները (Մասն Դ. – անգլերէն)», *Հանդէս ամսօրեայ*, ՃԼԵ:2021, էջ 197-246. նաեւ նոյնի՝ «Օտար յատուկ անունների տառադարձութեան սկզբունքները (Մասն Ե. – գերմաներէն)», *Բազմավէպ*, ՃՁ(1-2):2022, էջ 277-303. նաեւ նոյնի՝ «Օտար յատուկ անունների տառադարձութեան սկզբունքները (Մասն Զ. – իտալերէն եւ սպաներէն)», *Բազմավէպ*, ՃՁ(3-4):2022, էջ 271-300. նաեւ նոյնի՝ «Օտար յատուկ անունների տառադարձութեան սկզբունքները (Մասն Է. – ռուսերէն, համեմատութեամբ սլաւոնական այլ լեզուների)», *Հայկազեան հայագիտական հանդէս*, ԽԲ(2):2022, էջ 169-98. նաեւ նոյնի՝ «Օտար յատուկ անունների տառադարձութեան սկզբունքները (Մասն Ը. – չինարէն)», *Բազմավէպ*, ՃՁԱ(1-2):2023, էջ 272-305. նաեւ նոյնի՝ «Օտար յատուկ անունների տառադարձութեան սկզբունքները (Մասն Թ. – ճապոներէն)», *Հայկազեան հայագիտական հանդէս*, 44/(1):2024, էջ 85-106. նաեւ նոյնի՝ «Օտար յատուկ անունների տառադարձութեան սկզբունքները (Մասն Ժ. – հնդկերէն լեզու եւ Հնդկաստան աշխարհ)», *Բազմավէպ*, ՃՁԲ(1-2):2024, էջ 361-405:

լու են հակիրճ: Այդուամենայնիւ, մեր ձեռնարկութեան տեսական գաղափարներին ծանօթանալու համար, ընթերցողին հրաւիրում ենք աչքի անցկացնել նախորդ (մասնաւորապէս՝ առաջին երեք) յօդուածների նախաբանները, տեսական մասերն ու ամփոփումները:

Թէեւ Վրաստանն ու վրացերէնը Հայաստանի ու հայոց լեզուի բազմադարեան հարեաններն են, վերջին դարում իրենց գործունէութիւնը ծաւալած՝ Հայաստանի *Տերմինաբանական կոմիտէ (Եզրաբանական յանձնաժողով)* կամ *Լեզուի պետական տեսչութիւն* անունը կրող զանազան մարմինները չեն անդրադարձել վրացերէնի *սկզբունքային* խնդիրներին, այն է՝ գիտական հիմքերի վրայ դնել վրացերէնի տառադարձութիւնը, կարգաւորել դրա կանոնները եւ մասնաւորապէս՝ ուսումնասիրել այդ լեզուի հնչիւնաբանութիւնը՝ գիտական հայկաբան տառադարձութիւն մշակելու նպատակով³: Նշուած մարմինների որոշումները միայն մէկ անգամ են յիշատակում վրացական (աշխարհագրական) անունները (բառավերջի «ի» տառը գրել չգրելու կապակցութեամբ):

Վրացական անունների տառադարձութեան հարցում՝ արեւելահայերէնին ասանդաբար առաջնորդել է վրացերէնի եւ արեւելահայերէնի հնչոյթների զարմանալի նմանութիւնը: Գալով արեւմտահայերէնին (կիլիկեան ժամանակներից ի վեր), այն անմիջական առնչութիւն չի ունեցել վրացերէնի հետ, եւ տառադարձութիւնը փոխ է առել նախ՝ դասական հայերէնից, իսկ յետագայում նաեւ՝ օտար լեզուներից (տաճկերէն, ֆրանսերէն...): Այսօր Սփիւռքում շարունակուած է նոյն մօտեցումը, եւ տառադարձումը կատարուած է առաւելապէս արեւելահայերէնի միջնորդութեամբ:

Հայերս ու հայերէնը (մասնաւորապէս արեւելահայերէնը) դարեր շարունակ սերտ եւ *անմիջական* յարաբերութիւնների մէջ ենք եղել վրացերէնի հետ՝ ընդհուպ մինչեւ խորհրդային ժամանակաշրջանը: 1920ականներից իրողութիւնը գնալով փոխուեց: Հայ-վրացական լեզուական անմիջական կապերը բաւական թուլացան (թէեւ երբեք չեն կտրուել), եւ հայաստանաբանակ հայերն ու վրաստանաբանակ վրացիները այնուհետեւ իրար հետ սկսեցին շփուել ռուսերէն⁴: (Արեւելահայերէնի տառադարձութեան գործում աճեց ռուսերէնի ազդեցութիւնը, որը տեղ-տեղ խեղաթիւրում էր վրացական անունների բնիկ հնչումը:

Թէեւ վրացերէնն աշխարհի մակարդակով սակաւախօս լեզու է եւ Վրաստանն էլ նուազ նշանակութեան երկիր, թէեւ վրացերէն տառադարձութեան պատմական ու աշխարհագրական շրջանակները բաւական սահմանափակ են՝ ամփոփուած Վրաստան երկրի (այն էլ նրա մի մասի) եւ նրա

³ *Տերմինաբանական եւ ուղղագրական տեղեկագրու (1956-2006)*, խմբ.՝ Յ.Խ. Բարսեղեան, «9-րդ հրաշալիք» հրատ., Երեւան 2006:

⁴ Տփղիսահայերի մեծ մասը գիտէր խօսել վրացերէն, սակայն նրանց կշիռը հայ-վրացական լեզուական յարաբերութիւններում գնալով թուլանում էր:

պատմութեան մէջ, սակայն դա չի նշանակում թէ վրացերէն անունները մենք կարող ենք անտեսել կամ այլ լեզուների միջոցով տառադարձել: Հայերէնի տառադարձութեան տեսակէտից՝ վրացերէնը խիստ կարեւոր լեզու է, եւ այդ լեզուն մեր յօդուածաշարքի մէջ անպայման պէտք է իր տեղն ունենար:

Վրացերէնը հայերէնին կարող է օգտակար լինել նաեւ կովկասեան գանազան լեզուներից կատարելիք տառադարձութեան համար: Իրօք, թէեւ ռուսերէնը (որն այսօր իշխում է Հիւսիսային Կովկասի ու նրա լեզուների վրայ) տառադարձութեան առաջին աղբիւրն է, չի կարող գոհացուցիչ պատասխան տալ, այնքանով որ այդ լեզուն չունի կովկասեան լեզուների բաղաձայնական հարուստ շտեմարանը: Առաւել՝ ռուսերէնն ինքը, մինչեւ Կովկասի վրայ իր անմիջական գերիշխանութեան հաստատումը, սեւծովեան աւազանում երբեմն իբրեւ միջնորդ է ունեցել տաճկերէնի տառադարձութիւնը, մի բան որ նոյնպէս շեղել է կովկասեան անունների ռուսերէն գրելաձեւը մայր լեզուների իսկական ձեւերից:

ՎՐԱՅԵՐԷՆԻ ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ ԴԺՈՒԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Վրացերէնի եւ հայերէնի հնչիւնային կազմը զարմանալիօրէն գրեթէ նոյնն է (ուրիշ ոչ մի այլ լեզուինը այդքան մօտ չէ (արեւելահայերէնին), եւ թում է թէ ինչ դժուարութիւն եւ կարիք կայ մի առանձին ուսումնասիրութեան: Սակայն Վրաստանի տեղանունների տառադարձութեան հարցը գուցէ եւ աւելի բարդ է, քան Հայաստանից հեռու գտնուող երկրների տեղանուններինը: Դժուարութիւնն այն է, որ Վրաստանը մեզ հարեան երկիր է եւ պատմութեան ընթացքում Վրաստանի տարածքի մի մասը եղել եւ է հայաբնակ եւ հայկական տեղանուններով լի: Միւս կողմից՝ Վրաստանում հանդիպում ենք նաեւ կովկասեան ժողովուրդների լեզուներով աւանդուած (մասնաւորապէս՝ ավիսազական), ինչպէս նաեւ թիրքական տեղանունների:

Ամէն լեզու, անունների երկուութեան դէպքերում, նախապատուութիւնը տալիս է ի՛ր լեզուի տարբերակին: Եթէ գոյութիւն ունեն ֆրանսերէն եւ անգլերէն զուգահեռ ձեւեր (Londres/London), ֆրանսերէնը բնական հակումով նախապատուութիւնը տալիս է ֆրանսական ձեւին (Londres), կամ եթէ կան գերմաներէն եւ ֆրանսերէն զուգահեռ անուններ (Frankreich/ France), գերմաներէնը նախապատուութիւնը տալիս է գերմանական ձեւին (Frankreich): Նոյնը եւ հայերէնն է. հայերէն *Տրապիզոն* եւ թուրքերէն Trabzon ձեւերից մենք «ընտրում ենք» «Տրապիզոն»ը (եւ ոչ թէ *Տրաբզոն* կամ *Թրաբզոն*): Եւ սա արում է ոչ թէ ազգայնապաշտ ինչ-ինչ նկատառումներից դրդուած, այլ լեզուների պարզ տրամաբանութիւնից. եթէ խօսում ես անգլերէն, գործածում ես *անգլերէն* բառեր ու անուններ եւ ասում ես Munich եւ ոչ թէ München, եթէ խօսում ես հայերէն, ասում ես *Թուրքիա* եւ ոչ թէ *Թիւրքիէ* (ինչպէս երբեմն ուզում են պարտադրել մեզ լեզուական

պարզ տրամաբանությունը չգիտակցող պաշտօնական որոշումները): Նմանապես, եթե ունեինք դարեդար ասանդուած Տփղիս անունը, հրամանագրի մի հարուածով իրատունք չունեինք այն փոխելու *Թբիլիսիի*, կամ *Կոստանդնուպոլիսը՝ Սկրամբուլ-Իսթամբուլի*: Նոյնը եւ ընդհակառակը. վրացերէն լեզուով Երեւանին դարեդար ասում են յԵՐԵՎԱՆ [erevan-i], եւ ոչ մի պատճառ չկայ այն փոխել դարձնելու յԵՐԵՎԱՆ [jerevan-i]:

Ուստի՝ Վրաստանի յատուկ անունների (մասնաւորաբար՝ տեղանունների) հարցում՝ լեզուական հարազատ տարրերը գերադասելու պարզ տրամաբանութիւնը մեզ յուշում է դրանց տառադարձութեան համար սահմանել հետեւեալ կարգը.

ա) Յատուկ անուն ունի հայերէն գրութեան երկար ասանդոյթ. այն կարող է լինել հայկական տեղանուն (հայերէն ստուգաբանութեամբ) կամ այլալեզու: Այդ դէպքում այն թողնում ենք ասանդակական գրութեամբ, նոյնիսկ եթէ առկայ է հնչիւնական կամ տառադարձական թերութիւն:

բ) Անունն ունի քարթուելական ստուգաբանութիւն (վրացերէն, եգերեբերէն, ճաներէն, սուաներէն, կամ՝ վրացերէնի մի բարբառով): Տառադարձում ենք գրական վրացերէնից:

գ) Անունն ակներեւաբար ունի կովկասեան մի լեզուի (բայց ոչ՝ վրացերէնի) ստուգաբանութիւն: Տառադարձութիւնը նախընտրում ենք հնարաւորինս մօտեցնել կովկասեան այդ լեզուին:

դ) Անունն ունի թիրքական ստուգաբանութիւն եւ միեւնոյն ժամանակ գոյութիւն չունի դրա ասանդակական վրացերէն ձեւը: Տառադարձում ենք թիրքական լեզուներից (տաճկերէն, ադրբեջաներէն⁵):

ե) Անունը ասանդուած է հին յունական աղբիւրներում (մինչեւ դրա վրացական/վրացերէն ձեւերի վկայութիւնը): Տառադարձում ենք հին յունարէնից:

զ) Անունը եւրոպական լեզուներով է կազմուած (ֆրանսերէն, անգլերէն, ռուսերէն...): Տառադարձութիւնը մօտեցնում ենք խնդրոյ առարկայ լեզուին:

Կրկնում ենք՝ այստեղ չկայ ազգային նախապատուութեան եւ ոչ մի նկատառում: Այն բխում է բոլոր լեզուների պարզ տրամաբանութիւնից եւ ամէն լեզուով մաքուր (ուստի եւ՝ հասկանալի) խօսելու ու գրելու ձգտումից: Տառադարձութիւնը, յիշեցնենք, ոչ այլ ինչ է, եթէ ոչ յարմարագրութիւն՝ ամէն լեզուով անունը յարմար գրելու եւ արտասանելու արուեստ:

ՀԱՅԵՐԷՆ ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ ՀՆՁԻՒՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Ինչպէս ամէն յօդուածում նշում ենք, հայերէնի հնչիւնաբանութիւնն ու ուղղագրութիւնը ունեն սկզբունքներ, որոնք անհրաժեշտ է կիրարկել իրաքանչիւր լեզուից կատարելիք տառադարձութեան ժամանակ: Յիշեցման

⁵ Սրանց համար տե՛ս՝ յօդուածաշարքիս Ա. մասը:

կարգով՝ ստորեւ ամփոփ ներկայացնում ենք հայերէն տառադարձութեան՝ մեր առաջին երեք յօդուածներում արծարծած սկզբունքները: Յօդուած չճանրաբեռնելու համար մանրամասները չենք կրկնում, եւ ընթերցողին հրաւիրում ենք ծանօթանալ այդ սկզբունքներին, առանց որոնց դժուար է ըմբռնել մեր տեսակէտերը:

Ա. Պայթական («բ-պ-փ», «գ-կ-ք», «դ-տ-թ») եւ պայթաշփական («ջ-ճ-չ», «ծ-ծ-ց») բաղաձայնների եռաստիճան կարգը հայկաբան տառադարձութեան ողնասիւններից առաջինն է: **Բ.** Տառադարձութիւններում «է»ն գրում ենք միայն բառավերջին, կամ այլուր՝ ձայնաւորից առաջ: «Ե»ը հայերէնի [e] հնչոյթն է եւ այն գրում ենք մնացած դիրքերում՝ բառամիջում թէ բառասկզբին (բաղաձայններից առաջ): Բառասկզբի «ե»ը պարտադիր չէ [յե] արտասանել. օտար անունների մեծ մասում այն գերադասելի է իր մաքուր հնչումով՝ [e] արտասանել: **Գ.** Օտար [o] հնչիւնը տառադարձութիւնների մէջ ամէնուր արտայայտում ենք մեսրոպեան «ո» տառով: Բառասկզբին, ինչպէս եւ «ե»ի պարագայում, պարտադիր չէ «ո»ն [վո] ընթերցել: Կիլիկեան ժամանակներից մուտք գործած կլոր «օ» տառը տառադարձութեան համար չէ: **Դ.** Բառամիջում եւ բառավերջին խուսափում ենք «ը» գրելուց: **Ե.** Օտար [v] (նաեւ [w]) հնչիւնը հայերէն արտայայտում ենք «վ, ւ, ու» տառերից մէկով, ըստ հայոց դասական ուղղագրութեան կանոնների: Բառասկզբում գրում ենք միմիայն «վ»: Ըստ հնարաւորութեան՝ օգտագործում ենք հայերէնի «աւ, եւ, իւ» երկբարբառները: Բառամիջում՝ բաղաձայնից յետոյ եւ ձայնաւորից առաջ, գերադասում ենք գրել (այնտեղ ուր դա թոյլ է տալիս ստուգաբանութիւնը) «ու»: **Զ.** Օտար «ia (ja), ie (je), ii (ji), io (jo), iu (ju)» համակցութիւնները արտայայտում ենք բառասկզբին «յա, յե, յի, յո, յու» կապակցութիւններով, բառամիջում՝ «իա, իե, ի (կրկնակ «իի»ն պարզում է), իո, իու» (եւ ոչ թէ մեր երկբարբառներով): Բառասկզբի «յ» տառի արտասանութիւնը անհրաժեշտաբար [h] չէ: Աւանդական անուններում այն [h] է հնչում, սակայն նոր տառադարձութիւնների մէջ այն պէտք է իր ձայնով՝ [j] արտասանենք: **Է.** Հայերէնի երկբարբառներն ու եռաբարբառներն են. «այ, ոյ, աւ (օ), եւ, իւ, եա, տ, եայ, եաւ (եօ), տյ»: Որեւէ տառադարձութեան ժամանակ կարելի է յարգել սրանց գրութեան կանոնները եւ չյօրինել նոր կապակցութիւններ: **Ը.** Նոր լեզուների տառադարձութիւնների մէջ օտար [r] հնչիւնը ամէնուր գրում ենք «ր», բացառութեամբ բառասկզբի, ուր գրում ենք «ռ»: «Ռ»ի գրութիւնը «ն»ից եւ «լ»ից առաջ պարտադիր չէ:

ՎՐԱՅԵՐԷՆԻ ՀՆՉՈՅԹՆԵՐՆ ՈՒ ՀՆՉԻԻՆՆԵՐԸ

Վրացերէնի հնչոյթները այնքան մօտ եւ նման են արեւելահայերէնի հնչոյթներին, որ դրանք արտայայտելու համար հարկ չկայ դիմելու *Հնչիւ-*

նաբանութեան միջազգային ընկերութեան⁶ այբուբենի նշանագրերին: Հնչոյթի կամ հնչիւնի⁷ նշանը ընդունուած է դնել անկիւնաւոր փակագծերի մէջ՝ [ա], [բ], [գ], իսկ տառ արտայայտելու համար նշանագիրը դնում ենք չակերտների մէջ՝ «ա», «բ», «գ» եւն.: Յիշեցնենք որ հնչիւն կամ հնչոյթ արտայայտելու դէպքում՝ [ե]ն եւ [ո]ն մաքուր ծայնաւոր հնչիւններ են (ինչպէս լատինական [e]ն եւ [o]ն), իսկ [յ]ն ունի ամէնուր կիսաձայն [յ] հնչում:

Արդի վրացերէնը «պաշտօնապէս» ունի 5 ձայնաւոր եւ 28 բաղաձայն, ընդամենը 33 հնչոյթ (եւ տառ): Արդի վրացերէնի համար քերականութիւնները չեն յիշատակում կիսաձայն հնչոյթներ:

Հայերէնն ունի 36 պարզ հնչոյթ (երկբարբառներն ու եռաբարբառները չհաշուած)՝ 6 ձայնաւոր, 1 կիսաձայն, 29 բաղաձայն: Ստորեւ անդրադառնում ենք վրացերէն տառադարձութեան գլխաւոր կանոններին ու նրբութիւններին:

ՎՐԱՅԵՐԷՆԻՑ ՏԱՌԱԴԱՐՁԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐ ԵՒ ՆՐԲՈՒԹԻՒՆՆԵՐ

ա) ձայնաւորներ եւ բաղաձայններ

Վրացերէնի եւ դասական հայերէնի (նաեւ արեւելահայերէնի) հնչոյթների սերտ նմանութեան շնորհիւ տառադարձութիւնը նախ եւ առաջ պէտք է հիմնուի հնչոյթային զուգահեռների վրայ: Վրացերէնի բոլոր ձայնաւորները ([ա ա], [ց ց], [օ օ], [օ օ], [օ օ], [օ օ]) առկայ են հայերէնում, իսկ բաղաձայններից միայն մէկն է բացակայ ([ց կ'ղ]): Թէեւ երկու լեզուների հնչիւնների արտաբերութեան միջեւ կան թեթեւակի տարբերութիւններ, իբրեւ հնչոյթ նրանք համազօր են, ուստի եւ դիրութեամբ մէկը մէկին տառադարձելի: Արտասանական տարբերութիւններից կարելի է նշել մասնաւորապէս, որ վրացերէնի «օ»ն հայերէնի [օ]ի եւ [օ]ի միջին դիրքում է, վրացերէնի «ց»ն աւելի շրթնաշրթնային է (հայերէնի [վ]ն շրթնատամային է):

Վրացերէն այբուբենը աշխարհի լաւագոյն այբուբեններից է. տառերի (նշանագրերի) եւ լեզուի հնչոյթների միջեւ առկայ է գրեթէ հարկւր տոկոսանոց ներդաշնակութիւն (ամէն հնչոյթ իր տառն ունի եւ ամէն տառ միայն մէկ հնչոյթ է արտայայտում): Եթէ հաշուի առնենք նաեւ այն հանգամանքը, որ վրացերէնը (աշխարհի շատ ու շատ լեզուների կողքին) ամէն տառի (նշանագրի) համար ունի միայն մէկ ձեւ (չկայ մեծատառ-փոքրատառ հա-

⁶ International Phonetic Association, *Հնչիւնաբանութեան միջազգային ընկերութիւն*, որի հնչական նշանագրերով է ընդունուած գրի առնել զանազան լեզուների հնչոյթները: Միջազգայնօրէն ընդունուած է կա՛մ ֆրանսերէն (API), կա՛մ անգլերէն (IPA) յապաւումը:

⁷ «Հնչոյթ» եւ «հնչիւն» եզրոյթների տարբերութիւնը քաջ յայտնի է լեզուաբանութեանը (Հ. Զ. Պետրոսեան, Ս. Ա. Գալստեան, Թ. Ա. Ղարաբաղլեան, *Լեզուաբանական բառարան*, Հայկական ՍՍՀ Գիտութիւնների Ակադեմիայի հրատ., Երեւան, 1975):

კაფიოქონი), აყა კიყვერენ აქიონენ აქი თხსასქთიყ კარენი ლ ხა-
მარენ ცრეჲ კასთარენა:

ჰასენიად არიასკიოდ ცრენ ლნჲ კიყვერენ აქიონენი ციორ თათერ
(აქნ ლ' ხსიქონენი) ლ ირანჲ ხაქენენ თათარბიოქონი:

ორინასენი ბაქსაორენი თათარბიოქონი. **ა (ა)** – აკვი ასკი,
აბულადე ასიოდ, აბაშიდე ასაქიბ, **ე (ე/ი)** – ელგუჯა სციფა,
ებრალიდე სერაქიბ, ელიაშივილი სქიქიქი, ენუქიდე სნიქიბ, **ო (ო)** –
ია ხა, ივანე ხასენ, ირავლი ირასკი (იქრენ არიქი ანბნასინი), **ო (ო)** –
ოთარი იქარ, ორჯონიკიდე ირენსიქიბ, ორბელადე ირქესად, **უ (უ)** –
ურუმადე ირიუად, უჩანეშივილი იცასქიქი, უსუფაშივილი ისიქიქი:

ორინასენი ცაქბაქსენი თათარბიოქონი. **ბ (ბ)** – ბაბუნაშივილი
ბარინაქიქი, ბარათაშივილი ბარაქაქიქი, ბერია ბერია, ბრეგვადე
ბრეციოდ, **ვ (ა)** – ვატარკაციშივილი ვასარკაქიქი, ვაპუნა ვა-
აქინა, ვარკადე ვარკად, **გ (გ)** – გალიაშივილი გაქიქიქი, გილიბე
ფიქიქი (იქრენ არიქი ანბნასინი), ფიროსმანაშივილი ფიროსმანაქიქი
(ანსქაქი ცაქი აყარსასკან სიოცაქსიოქონი), ფურცელადე ფიციქეს-
ად, **გ (გ)** – გაბელია გაქესქა, გალავტიონი გაქსქიქი, გია გია, გივი
გივი, გოჩა გოჩა, **კ (კ)** – კანკავა კანსასა, კახიბე კაქიბ, კეკელიბე
კესქიბ, კიკაბიბე კიქაქიბ, კოტე კოთი, **ქ (ქ)** – ქავთარადე ქაქარად,
ქანთარია ქანსარია, ქართველიშივილი ქარქიქიქი, ქეთევან ცხეს-
ასი, ქუთათელი ქიქაქესქი, **დ (დ)** – დადიანი დარქასქი, დათუნა დარქი-
სა, დარჩიაშივილი დარქიქიქი, დონდუა დინიქი, დუმბადე დინქად,
ტ (ტ) – ტაბიბე ტარქიბ, ტარიელი ტარქი, ტიციანი ტიქიქი, **თ (თ)** –
თამაზი თამადა, თამარი თამარი, თევლე თესქი, თინათინი თინასქი, **ძ
(ძ)** – ძაბახიბე ძაქაქიბ, ძიბიგური ძიბიციქი, ძნელადე ძნესად,
ძიბუაშივილი ძიბიქიქი, **წ (წ)** – წერეთელი წერქესქი, წულესკირი
წიქსქიქი, წულუკიბე წიქიქი, **ც (ც)** – ცაგარეშივილი ცაქარქიქი-
ქი, ცისკარიბე ცისკარქიბ, ცურტაველი ცირთასქი, ცხაკაია ცხასქი(ქი),
ჯ (ჯ) – ჯავახიშივილი ჯასაქიქი, ჯანაშია ჯანაქი, ჯაფარიბე ჯა-
ქარქიბ, ჯიქია ჯიქია, ჯულაშივილი ჯიქიქი, **ჭ (ჭ)** – გეგეჭკორი გე-
ქსქიქი, ჭავჭავადე ჭანასად, ჭიჭაფორისბე ჭინაქიქი, ჭიჭიკო ჭი-
ქსი, **ჩ (ჩ)** – ჩანაბიბე ჩანასქი, ჩიქობავა ჩიქიქი, ჩუბინაშივილი ჩიქი-
საქიქი, ჩხენკელი ჩხენსქი, **ც (ც)** – ზაზა ზაქა, ზვიადი ზიქი,
ზურაბი ზიქარ, ზამბახიბე ზამქაქიბ, **ს (ს)** – სანდრო სანქი,
სარაჯიშივილი სარაქიქი, სერგო სერგი, სოლომონი სოქონი (იქრენ
არიქი ანბნასინი), სოფიკო სიქიქი, სტურუა სიქიქი, სულაბერიბე
სიქარქიბ, სულიკო სიქიქი, **ჟ (ჟ)** – ჟვანია ქიქასქი, ჟორდანია ქი-
ქასქი, ჟენტი ქენსქი, **შ (შ)** – შალვა შაქი, შანიბე შანქი,
შევარდნადე შევარქსად, შოთა შოქა, შუშიაშივილი შიქიქი, **ღ (ღ)** –
ღარიბაშივილი ღარქიქი, ღლონტი ღქინსქი, ღლობერიბე ღიქიქი-

ბ, ხ (**ჰ**) – ხანძთელი ხასნძქელი, ხიზანაშვილი ხიქანსაშვილი, ხურცილავა ხიუცილასა, ხუციშვილი ხიუციშვილი, ვ (**ქ/ღ/ი**) – ვალიკო ქაქილი, ვაჟა ქაძა, ვასო ქასო, ვახუშტი ქაქილასი, ავაზაშვილი ასა-კაშვილი, შავერზაშვილი შასერკაშვილი, რ (**ნ/რ**) – რამაზი რასადა, რევაზი რასადა, რუსთაველი რიუსთასელი, რუსუდანი რიუსიოსანი, არსუკისძე არსილასიძე, ირემაშვილი ირესაშვილი, ლ (**ლ**) – ლალო ლაღი, ლამარა ლასარა, ლალიძე ლაღიძე, ლაშა ლაშა (ასიქსადაქრეს ასოიდაქრას-ნიუსასაძე` «ლიქს, ლიუსაიორ»), ლევანი ლესანი (იქრეს არიქი ასნძასანი), ლეონტი ლესონტი (იქრეს არიქი ასნძასანი), ლორთქიფანიძე ლორქიქიას-ნიძე, მ (**მ**) – მავა მასკა, მამია მასმიქა, მარგველაშვილი მარგოილასუშვილი, მახარაძე მასქარაძე, მელიქიშვილი მელიქიქიქი, მეტრეველი მესორეს-ელი, მიზანდარი მიქანოქარი, მოსე მოსე (იქრეს არიქი ასნძასანი), ნ (**ნ**) – ნათელა ნასქელა, ნიკოლოზი ნიქილიკი (იქრეს არიქი ასნძასანი), ნინო ნისნი, ნოდარი ნოქარი, ნუგზარი ნიუკარა, ჰ (**ჰ**) – ჰამლეტი ჰასმელსი, ჰაჯი ჰაჯი, ჰენრი ჰესერი («ჰ»-იქ სსოღ ქრასგასკან ასნისნეს ქკან. გიქიქისნი ისნეს ასკასაქი ხასარასკ ასნისნეს (ქანეს), ისკ ქანასმიქიონ (ქხაშვიად ქაქესი მქე) «ჰ» გრესქ ქი ხასნიქაიონ):

ქ) ქრასგრესნი «ყ» [ქ'ი] ქარადასენ

არესელასიქრესნიონ რნიქისარასქს რნიქონიონად ქ ასუ ხსნიქორ თანო-ქარბელ «ქ» (ყვარელი რქარეს, ტვიბული ნიქიქი, ყელა რესლ⁸): ასიქასიქ თანოქარბიქესანი ქრასქ ხასანსარას ადაქეს ეს სასეს ასარსესრესნი მიქი-გოქ ქიქს ანად ქანესრელ (ხმანთ. ყელა კასლ/იქლას` რესრი, ასრიგ): «არას-ესრესნელ არარასკან «ც» (ქასქ კან იქასქ) თანორ მნბ მასასაძე არითასასნიონ ქ [ქ], ირის ეს იქრეს [ბორიქ ხასმასათასქასანიონ ქ ქრასგრესნი «ყ»: არას-რასკან ასუ თანოქი ეს ხსნიქიქი [ბორიქ ხასმასათასქასანიონესნი ეს. ასარსეს-რესნი «ც» (ქასთინსათანო ხსქინსაგრიქესამძე` «გ») [ქ] კან [ქ'ი] არითასასნი-ქესამძე, თანსესრესნი «კ»` «კიქსთ» [ქ], აქიქრესქანსესრესნი «გ»` «კიქსთ» [ქ], ეს ქრასგრესნი «ყ» [ქ'ი]: <ასქესრესნი ქასთ ქარქანონსერიონ ასქს ქანასქს «ქ» ქ` იქლასამ, იქამიქ, იქესაღ...>

ქრასგრესნელ «ყ» ქ გრიონ ქანასქ ასქსთნელ (ოსთარ ქესკონსესრიქს) იორ ხასქესრეს-ნელ თანოქარბიონ ქ «ქ», ირისასკ` ყაბარდა ყაქაროქა, ყარაზიი ყარასქასქ,

⁸ ქიქიქასქიქას, ქრასგრესნი-ხასქესნი გრიბნასკან თანოქარბიქესნი, (სესრესნიესქ სსქ 27/05/2024ს): https://hy.wikipedia.org/wiki/%D5%8E%D5%AB%D6%84%D5%AB%D5%BA%D5%A5%D5%A4%D5%AB%D5%A1:%D5%8E%D6%80%D5%A1%D6%81%D5%A5%D6%80%D5%A5%D5%B6-%D5%B0%D5%A1%D5%B5%D5%A5%D6%80%D5%A5%D5%B6_%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%B6%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%BF%D5%A1%D5%BC%D5%A1%D5%A4%D5%A1%D6%80%D5%B1%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6 :

Օրինակներ. քլտասոսի Բուլթայիս, ავხაოდე Աქիսայիძე, ანანიაშვილი Ա-
նანիաշვილი, ასათიანი Աსაթიანი, კუცია Կուცი, սակայն՝ օտობი Յո-
բիძե (մանաանդ նկատի ունենալով Աստուածաշնչի Յո(վ)բ անունը),
օլլკորոմե Յուկուրիძե, օնვარաშვილი Յանուարաշვილი, օտելօանի Յուսե-
լիանի (սովետահայերենը գրում է՝ Իո-) [այս վերջինի մէջ նկատեցէ՛ք որ բա-
ռասկզբի «օ»ն գրում ենք «յ», իսկ բառամիջինը՝ «ի»]:

դ) «այա» կամ «այիա» գրութիւնը

Նախորդ կէտի տրամաբանական շարունակութիւնն է «օօ» [աիա] գրու-
թեան տառադարձութիւնը: Հայերէնում հնարաւոր է երկու տարբերակ՝
«այա» կամ «այիա»՝ վրացերէնի միասնական մէկի դիմաց: Մենք կը գերա-
դասէինք «այիա» գրութիւնը, որը համաշունչ է հնուց եկող լատինական
(հմմտ. TRAIANVS / Traianus Տրայիանոս¹¹, վրաց.՝ Երօօնց [տրաիանց]) եւ
հայկական (հմմտ. Գայիանէ, վրաց.՝ Գօօնց [գաիանց]) անունների տառա-
դարձութիւններին: Իսկապէս՝ եթէ համարում ենք որ վրացերէնի «օ»ն տա-
ռադարձում ենք «ի», ապա ունենում ենք «այիա» գրութիւն, եւ այնուհետեւ
այն ճշտում ենք հայերէնի ուղղագրութեան համաձայն («ա»ից յետոյ «յ»
ներմուծելով), ստանալով «այիա»:

Հարցը սակայն կարիք է զգում վրացագէտների (բայց նախ եւ առաջ՝
հայագէտների) միջամտութեանը:

Օրինակներ. Դաւիթայիա, Մեղեղօօ Շենգելայիա, Ենազօօ
Յիսակայիա, Զանօօ Բասիլայիա, Զաբարօօ Զաբարայիա, Գնցլօօօօ
Փանցուլայիա, Բիժօօ Զիտայիա, Զօօօ Բայիանէ, Կօօօնի Զայիանի,
ժամօօօօօ Մամայիաշուիլի, ժօօ Մայիա, ցնօօօօօօ Եսայիաշուիլի:

ե) վրացերէն «գ» տառի տառադարձումը

Թէեւ վրացերէնը չունի «ֆ» տառ (եւ հնչիւն) եւ օտար բոլոր «ֆ»երը տառ-
ադարձում է «փ», հայերէն տառադարձութեան մէջ մենք ճիշտ կ'անէինք ե-
թէ տարբերակէինք «փ»ն եւ «ֆ»ն: Վրացական անունները «փ»ով պէտք է
լինեն՝ Նօցօօ Սոփիկո (եւ ոչ թէ Սոֆիկո): Սակայն եթէ անունները եւրո-
պական կամ արեւելեան այլեայլ լեզուներից են, դրանք ճիշտ կը լինէր տա-
ռադարձել «ֆ»ով՝ Գլօօյի Տելիքս (Felix), Գրօօնօնօ Գերդինանդ
(Ferdinand) եւն.:

զ) ձայնաւորների յօրանջը

Վրացերէնը մեծ մասամբ չի խորշում ձայնաւորների յօրանջից, իսկ հա-
յերէնը խուսափում է «ա» եւ «ո» ձայնաւորներից յետոյ անմիջապէս մի այլ
ձայնաւոր գրել¹²: Վրացերէնը յաճախ ինքն է ջնջում ձայնաւորամէջ օտար
[հ] եւ [վ] հնչիւնները՝ Արտահան արօօնի [արտահանի], ազնաւոր
օնօնօ¹³ [ազնաւորի], Շահումեան Մօլմօնի [շաւումիանի], Իսահակ

¹¹ Տե՛ս՝ յօդուածաշարքի Բ. մասը (դասական լեզուներ):

¹² Ունենք եզակի բացառութիւններ՝ Գաղաղ, քառս...:

¹³ Միջին պարսկերէն ստուգաբանութիւն է:

ისაგვ [ჩსაასკ]: *Ըստ Վիքիպեդիայի վերոնշյալ յօդուածի՝ «Կրկնակի բաղաձայնների դէպքում տառադարձում է միայն մէկը, իսկ կրկնակի ձայնատարների դէպքում գրում են երկուսն էլ (ՅՄՐՋՅՅՆ Գուրջասան, Թոմաս Տիբասան)»¹⁴: Անշուշտ՝ սովետահայերենը (ինչպէս նաեւ Սփիւռքի այսօրուայ արեւմտահայերէնը) բոլորովին անտեսում է դասական հայերէնի ուղղագրութեան այս կէտը:*

Հայերէնում յորանջը գոցելու համար ունենք հետեւեալ հնարատրութիւնները. «յ» կիսաձայնը՝ նախընտրաբար յաջորդող «ի» կամ «ե» ձայնատրութից առաջ, ինչպէս նաեւ «հ» կամ «վ/ւ» բաղաձայնները՝ «աա, աո, աու/ուա, ոո, ոու» համակցութիւնների մէջ («հ»ն աւելի թոյլ է զգացնում միջամտութիւնը): Ձայնատրութի յորանջը գոցելը պարտադիր չէ, սակայն բազմաթիւ դէպքերում գերադասելի է: Օրինակներ. քշտասի Բութայիս, մասնաշրջանի Մայիսաշրջանի, Մասնաշրջանի Շայիշրջանի, Ընդհանրական Դպրոցի Տոմը Թոյիձէ, Բոլորը Չիկոյիձէ, միջազգային Միջազգային Զիբրայել¹⁵, Երկրագնդի Իկաթոյելի, Զաւարի Բահարուր, Տարածական Սահակաշրջանի, Յայտ Պատտա (բացառապէս պահպանել ենք աւանդական ձեւը, միջանկէպէ բաղաձայնը բաւական կը փոխէր արտասանութիւնը), Գործառն Գուրջ(վ/հ)ան (երկու հնարատրութիւն), Զաւարի Զատուշրջանի, Ընդհանրական Դպրոցի, Քաղաքի Զիւրուր¹⁶, Երկրագնդի Ամբրոսիոս, Երկրագնդի Բալանդատուրի, Երկրագնդի Կատուսիշրջանի, Ընդհանրական Լոմոսի:

է) «ն»ից եւ «լ»ից առաջ՝ «ո» թէ՛ «ր»

Այս կէտի մասին աւելի մանրամասն խօսել ենք դասական լեզուների կապակցութեամբ՝ մեր յօդուածաշարքի Բ. մասում: Մենք այն կարծիքին ենք, որ հայերէնը պէտք չունի այդպիսի մի բացառութեան: Ուստի «-ոն/-րն-» եւ «-ոլ/-րլ-» հնարաւոր համակցութիւններից մենք նախընտրում ենք երկրորդը՝ «ր»ով: Հարցի լուծումը նախ եւ առաջ հայագէտներինն է:

Օրինակներ. քշտասի Կուրնաձէ, Երկրագնդի Խորնարուզելի, Երկրագնդի Բեդիսմէրիշրջանի, Երկրագնդի Վարլամիշրջանի, Երկրագնդի Իսարիշրջանի: Բայց եթէ ստուգաբանութիւնը պահանջում է՝ Երկրագնդի Բառնարիշրջանի (կապ *Բառնարաս* անուան հետ), Երկրագնդի Թոնիկ (կապ՝ հայերէն *Թոնիկ* անուան եւ *թոն* բառի հետ):

ը) վրացական աշխարհագրական անունների «ի» վերջատրութիւնը

¹⁴ Տե՛ս՝ Վիքիպեդիա, «Վրացերէն-հայերէն գործնական տառադարձութիւն» (յղումը տե՛ս՝ վերը):

¹⁵ Թէեւ Զիբրայել անունը նոյն Գաբրիէլն է, մենք գերադասում ենք վերջատրութիւնը գրել «ել» («ե»ով):

¹⁶ Սովետահայ տառադարձութիւնը իրար է յաջորդում երեք ձայնատրութիւնի:

Սա վրացերէն տառադարձութեան միակ կէտն է, որը հայ եզրաբանական յանձնաժողովների ուշադրութեան առարկայ է դարձել: Ահա «Վրացական տեղանունների հայերէն տառադարձութեան մասին» այդ որոշումը¹⁷: Բացառութեամբ Թբիլիսի անուան, որի գրութեան վերաբերեալ կայ կառավարական առանձին որոշում, վրացական միւս տեղանունների համար պահպանել հայկական աւանդական գրութիւնը, այսինքն գրել առանց ի վերջնահնչիւնի, այն է Թբիլիսի, բայց Բաթում, Բորժում, Ախալքալաք, Թելաւ, Կարզախ, Մցխեթ¹⁸, Սուխում, Սուրամ, Քութայիս եւ այլն: Ծանօթութիւն. կանոնը չի տարածում ի-ով վերջացող վրացական այն տեղանունների վրայ, որոնք հայերէնում զուգաձեւութիւն չունեն եւ առանց ի վերջնահնչիւնի չեն գործածում, օրինակ՝ Գորի, Կախի եւ այլն¹⁹:

Տերմինաբանական եւ ուղղագրական տեղեկատուի հեղինակները հետեւեալ կերպ են մանրամասնում այս որոշումը իրենց «Տերմինաշինութեանը եւ տառադարձութեանը վերաբերող որոշումների մեկնաբանութիւններ»ի մէջ.

«Վրացական տեղանունների հայերէն տառադարձութեան մասին» որոշումը մասնաւորապէս վերաբերում է վրացական տեղանունների *ի* վերջնահնչիւնի գրութեանն ու արտասանութեանը: Ինչպէս յայտնի է, վրացերէնում գոյականներն ստանում են *ի* վերջաւորութիւնը²⁰: Այդ օրինաչափութեանը ենթարկում են նաեւ օտար բառերն ու անունները՝ *ցիրկի, կոմունիստի, Մոսկվայի*²¹, *էրևանի, Կարապետյանի, Նովիկովի* եւ այլն: Վրացական տեղանունների հայերէն աւանդական գրութեան մէջ միայն վրացերէնին յատուկ այդ վերջնահնչիւնը, որն, ի դէպ, վրացերէնի թեք հոլովաձեւերում էլ չի պահպանուում (*Ախալքալաքի, բայց Ախալքալաքմա, Ախալքալաքիս, Ախալքալաքը* եւ այլն), չի գրուել, որովհետեւ բանաւոր խօսքում չի էլ արտասանուել: Վրացերէնի մեխանիկական ընդօրինակումով հայերէնում մի ժամանակ տարածուած եւ այժմ էլ սխալմամբ գործածուող *Բորժումի, Քութայիսի, Սուրամի* ի մասնիկով ձեւերը խորթ են այդ անունների հայկական աւանդական տառադարձութեանը եւ, բացի այդ, անելորդ դժուարութիւն են առաջացնում նման ա-

¹⁷ Նախագիծը կազմել է Յովհաննէս Բարսեղեանը: Հաստատուել է տերմ. Կոմիտէի 1956 Սեպտեմբերի նիստում (*Տերմինաբանական եւ ուղղագրական տեղեկատու*, էջ 46):

¹⁸ Մցխեթը վրացերէն ոչ թէ [ի], այլ [ա] վերջաւորութիւն ունի՝ մცხეთა [մցխեթա]:

¹⁹ *Տերմինաբանական եւ ուղղագրական տեղեկատու*, էջ 46:

²⁰ «Ի» վերջաւորութիւնը ստանում են միայն *բաղաձայնայանգ* հիմքով գոյականները (եւ ածականները)՝ անուանական հոլովի մէջ գտնուելիս:

²¹ Ռուսաստանի մայրաքաղաքը վրացերէն «Մոսկովի» է (მოსკოვი), ոչ թէ «Մոսկ-տայի»:

նունների թեք հոլովածների գրութեան ու արտասանութեան մէջ, այն է *Քորժումիի, Քորժումիից, Քորժումիում* եւ այլն, փոխանակ *Քորժումի, Քորժումից, Քորժումում*: Նախկին տերմինաբանական կոմիտէի այս որոշումը սահմանում է վրացական տեղանունների համար պահպանել հայերէնի ասանդական գրութիւնը, այսինքն գրել առանց *ի* վերջնահնչիւնի *Քաթում, Քորժում, Ախալքալաք, Թելավ, Սուրամ, Կարգախ, Սուխում, Մցխեթ, Քութայխ* (եւ ոչ թէ *Քութախ*) եւ այլն, բացառութեամբ *Թքիլիսի* անունից, որի գրութիւնը հաստատուած է Վրաստանի կառավարութեան որոշմամբ: Կանոնը չի տարածուած իով վերջացող վրացական այն տեղանունների վրայ, որոնք հայերէնում զուգածնութիւն չունեն եւ առանց *ի* վերջնահնչիւնի չեն գործածուում, օրինակ *Գորի, Կախի, Փոթի* եւ այլն²²:

Պէտք է նկատել որ այս որոշումը ասանդական անուանածները վերահաստատելու ողջունելի ցանկութիւն է: Այն իդէպ կապ չունի, ինչպէս մեկնաբանում են *Տեղեկագրուի* հեղինակները, հայերէն լեզուի հնչիւնական «դժուարութեան» հետ (իբր «ի»ով ձեւերը «աւելորդ դժուարութիւն են առաջացնում նման անունների թեք հոլովածների գրութեան ու արտասանութեան մէջ»): Չէ՞ որ մնում են *Գորի, Կախի, Փոթի* եւ այլ անունները, եւ ի վերջոյ՝ հայերէնն ինքն ունի «ի»ով վերջացող անուններ՝ Արզնի, Պտղնի, Լօռի, Անի, Արփի...

Հարցը սակայն այդքան էլ յստակ չէ:

Նախ՝ ի՞նչ ասել է «տեղանուն». այն կարող է լինել բնակավայրի անուն (քաղաք, գիւղ), երկրամասի անուն (գաւառ, մարզ), սրբավայրի անուն (վանք, եկեղեցի), բնութեան զանազան դրսեւորումների անուններ (գետ, լիճ): Բոլորը նոյն կանոնի տա՛կ են գնալու: Տերմինաբանական կոմիտէն միայն բնակավայրերի անուններ է յիշատակում:

Անկեղծ ասած՝ Տերմինաբանական կոմիտէի 1956ի որոշումը շատ պարզունակ է եւ կիսատ: Կոմիտէն յիշատակել է միայն «տեղանուններ» եզրոյթը (այն էլ առանց ճշտելու դրա սահմանները), այնինչ «ի» վերջաւորութեան խնդիրը շօշափում է վրացական բոլոր յատուկ անուններին, քանի որ «ի»ով են վերջանում վրացերէնի հազարաւոր անուններ՝ անձնանուններ, տեղանուններ, կազմակերպութիւնների ու լրագրերի, հեռուստաալիքների եւ զանազան այլ տեսակի անուններ:

Առաջին հարցը (որը եւ շօշափել է Տերմինաբանական կոմիտէն) բնակավայրերի անուանումներն են: Սրանց համար ուրեմն պոչատում ենք «ի» վերջաւորութիւնը, բացառութեամբ երբ տեղանունները, կոմիտէի խօսքով՝ «*հայերէնում զուգածնութիւն չունեն եւ առանց ի վերջնահնչիւնի չեն գործածուում*»: Որոշումը յստակ չէ, քանի որ պարզ չէ թէ ո՞ր անունը կարող է զուգածնութիւն ունենալ, ո՞րը՝ ոչ. չէ՞ որ անխտիր բոլոր տեղանունները չեն,

²² *Տերմինաբանական եւ ուղղագրական տեղեկագրու*, էջ 27-28:

որ հայերէն արդէն գրուել կամ բանաւոր արտասանուել են շարունակաբար: Հարցն այն է, թէ վրացական տեղանուն հանդիպելիս ինչպէս պէտք է վարուի ապագայ տառադարձողը:

Մենք այն տպաւորութիւնն ունենք, որ բացառութիւնը վերաբերում է միաձայն արմատով կազմուած տեղանուններին՝ Գորի, Կախի են.: Այս պարագայում՝ տառադարձութիւնը պահպանում է «ի» վերջաւորութիւնը:

Հետեւաբար՝ բազմաձայն արմատներով կազմուած բնակավայրերի անունների վերջում «ի» չենք գրում. Զաթումի Բաթում, յէտաօսի Քութայիս, ռუსտաւի Ռուսթաւ, Ֆւջճիճի Զուգլիճի, յոնթլեւի Քոբուլթ, Նաթւրի Խաշուր, Սեճաւի Սենակ, Ֆեթաթոնի Զեստափոն, տելաւի Թելաւ, Օթւրգեւի Ուրուգեթ, ցարճաճի Գարդաբան, Նալթալաճի Ախալքալաք, յարեւի Քարեւ, Լանթիւթի Լանչիւթ, ճւթեւի Դուշեթ, Լաթոճի Լաթոճ, մարտուի Մարտուի, Զաթաւի Բադաբ, ճաթի Յաթի, յիթի Տիթի, յարեւի Կուրեւ:

Միաձայն արմատ ունեցող բնակավայրերի անուններում «ի»-ն պահպանում է. ցորի Գորի, ցոտի Փոթի²³, յանի Կասախ, Նոնի Խոնի, Նոնի Խոթի, յանի Վանի, Օնի Ունի: Այսպէս պէտք է ուրեմն տառադարձել նաեւ ճորի Շորի եւ յարի Զարի²⁴ անունները, քանի որ սրանց արմատները վրացերէնում միաձայն են (թէն երկձայն՝ հայերէնում):

Ինչ վերաբերում է այն անուններին, որոնք ոչ թէ վրացերէնից պէտք է տառադարձել, այլ ուրիշ լեզուներից, դրանց մասին տե՛ս ստորեւ:

թ) անձնանունների «ի» վերջաւորութիւնը

Տերմինաբանական կոմիտէն չի անդրադարձել անձնանունների «ի» վերջաւորութեանը:

Հին վրացերէնում յատուկ անուններին բնորոշ էր այն, որ չորս հոլով (ուղղական, անուանական, պատմողական, կոչական) չունէր հոլովական ոչ մի վերջաւորութիւն: Դրանցում յատուկ անունները հիմքի ձեւով են ներկայանում²⁵. ճաթի Դաթի, Օթոն Յակոն, Նոնաճ Սոնա, յանթաճ Վախթանգ, Օթոն Յովսէփ, Նոնա Սիմոն, Նոնա Սողոմոն, յանթաճ Նոնա, մարիաճ Մարիան:

Որոշ անունների «ի» վերջաւորութիւնը արմատական է. ցորցի [գիորգի], յանթի [ակակի], Նոնա [բասիլի], ցորցի [գիլի]: Դրանք գալիս են մասնաւորապէս յունարէն անունների «իոս/էոս» վերջաւորութիւնների վերջաւորումից²⁶: Այսպիսի անուններում, եթէ դրանք չենք հայացնում, պահպանում

²³ Թէն ունենք պատմական Փոթի անուանաձեւը, առանց «ի» վերջաւորութեան:

²⁴ Աւանդուած է նաեւ Սուրբ Խաչ հայերէն թարգմանութեամբ:

²⁵ Ակակի Շանիճէ, *Հին վրացերէնի քերականութիւն*, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1983, էջ 49:

²⁶ Այսպիսի անունները ռուսերէն ստացել են «-ий» վերջաւորութիւնը. Георгий, Акакий, Василий:

Եզրակացություն.– ա) անուանական հոլովի «ի» վերջաւորութեամբ անձ-նանունները պէտք է տառադարձել առանց «ի»ի (եւ եթէ կան զուգահեռ հայկական ձեւեր, նախընտրել հայկական ձեւերը), բ) արմատական «ի» վերջաւորութեամբ անձնանունների մէջ «ի»ն մնում է, գ) միւս ձայնաւորները արմատական են եւ մնում են:

«ի» վերջաւորութիւնը մնում է նաեւ ազգանունների տառադարձութեան ժամանակ. «-շուիլի, -իանի, -ելի, -աւորի» եւ այլ վերջաւորութիւններով: Օրինակները՝ տե՛ս ամէնուր՝ յօդուածիս զանազան տեղերում:

Ժ) այլ յատուկ անունների «ի» վերջաւորութիւնը

Տերմինաբանական կոմիտէի յիշեալ որոշման մէջ անդրադարձ չկայ նաեւ այդ նոյն անուններին, երբ սրանք ոչ թէ տեղանուն են, այլ յատուկ անունների այլ տարատեսակներ: Ինչպէս յայտնի է, տեղանունը կարող է վերածուել մի այլ յատուկ անունի. Երեւանը կարող լինել նաեւ առետրական կազմակերպութեան, հիւրանոցի, լրագրի կամ նոյնիսկ մարդու անուն: Այդպիսի դէպքերում, երբ յատուկ անունը այլեւս չի հանդիսանում տեղանուն, բառավերջի «ի» տառը սովորաբար պահպանում ենք, օրինակ՝ Ռուսթաւը տեղանուն է՝ քաղաք, բայց հեռուստաալիքի անունը «Ռուսթաւի 2²⁸» է (հրէտօձձ 2):

Օրինակներ. օձձօ Իմեղի (հեռուստաընկերութիւն), օձձօ Թելասի (ելեկտրական հոսանքի ընկերութիւն), Խօօօօ Սոլուակի (հիւրանոց, ի տարբերութիւն Սոլուակ թաղամասի), օձձօ Թամարիսի (կօշիկի մակնիշ, ի տարբերութիւն տեղանուան), օձձօ Գաջօ Մթաւարի գազերի (լրագիր), օձձօ Գաջօ Ձուելի քաղաքի (ձայնասփիւռ):

Սակայն ասանդաբար այդպէս չէր. «ի»ն կարող էր հանգիստ դուրս ընկնել: Հայերի եւ վրացիների կապերն այնքան սերտ էին եւ լեզուների փոխիմացութիւնը այնքան տարածուած, որ հայը շատ լաւ գիտակցում էր «ի»ի քերականական վերջաւորութիւն լինելը (ինչպէս այսօր դա գիտակցում է տփղիսահայը, որն ասում է «Թբիլիս», փոխանակ ասելու «Թբիլիսի»): «ի»ի աւելորդութիւնը գիտակցում էր նաեւ նրանով, որ հին վրացերէնում, անուանական հոլովից բացի, գոյութիւն ունէր նաեւ ուղղական հոլով, որի դէպքում բաղաձայնայանգ գոյականները «ի» վերջաւորութիւնը չունէին: Այդ գիտակցութեան հետեւանքն են *Գորգասալ, Յիւնիս, Ծղալ* եւ նման (առանց «ի» վերջաւորութեան) պատմական ձեւերը:

Եզրակացություն.– պարզութեան եւ միօրինակութեան համար գերադասելի կը լինէր վերացնել բոլոր ոչ արմատական «ի»երը՝ բոլոր յատուկ անունների մէջ, նոյնիսկ միավանկ արմատների դէպքում, օրինակ՝ Սոլուակ (փոխանակ՝ Սոլուակի, խօսքը հիւրանոցի մասին է), Թամարիս (փոխանակ՝ Թամարիսի) եւն.:

²⁸ Այստեղ «2» թիւը արտասանում ենք հայերէն՝ «երկու», եւ ոչ թէ վրացերէն՝ [որի] կամ [մերե] (սրա վերաբերեալ տե՛ս՝ ստորեւ):

Հարցը բաց է:

Ժա) անունների իմաստայից տարրերի թարգմանությունը

Ինչպես ամեն լեզուի պարագայում, վրացերենի համար ես մենք պնդում ենք, որ աղբյուր լեզուի իմաստայից տարրերը գերադասելի է թարգմանել: Վրաստանի գաւառներից մէկի սովետահայ տառադարձութիւնն է Քվեմո Քարթլի (ქვემო ქართლი), որը մեծ յաջողութեամբ եւ ճաշակով կարելի է թարգմանել Ստորին Վիրք (ծայրագոյն դէպքում՝ Ստորին Քարթլի): Նոյն անունը թարգմանուած է եգերերէն (մեգրելերէն)՝ օլձոլլեւն յարտլի [թուրքից քարթլի], աղբրեջաներէն՝ Aşağı Kartli: Արդ՝ ինչո՞ւ հայերէնը, որն ունի իր հազարամեայ ասանդոյթն ու իր պատմական անունները, չանի նոյնը:

Այլ օրինակներ. Յոձա յարտլի Ներքին Վիրք (եգերերէն (մեգրելերէն)՝ ձոնոնոլլեւն յարտլի [դինոխուլենի քարթլի]), Յեմո Տեմեթի Վերին Սուանք, յեմո Տեմեթի Ստորին Սուանք, նմանապէս՝ Յատրա Յորեմո Փոքր Խորենիա, Յատրա Յորեմո Փոքր Միտարբ, ձոձո Տեմա Մեծ Սմադա, ձոձո Յեմեթի Մեծ Ջանաւ, Յատրա Յեմեթի Փոքր Ջանաւ եւն.:

«24 Տատի» յրագրի անուան միջի «24» թիւը անհնար է չթարգմանել հայերէն, այսինքն՝ անհնար է թերթի անունը չարտասանել «**Քսանչորս** սա(հ)աթ»: Այլապէս, ո՞ր հայը կարող է գուշակել թէ հայերէն գրած «24 սա(հ)աթ»ի «24»ին վրացերէն ասում են [ոց-դադթիխ], ո՞ր հայը կարող է գուշակել թէ թերթի անունը վրացերէն ինչում է «Ոցդադթիսի սաաթի»:

Ժբ) ոչ վանկարար «ու»ի տառադարձումը

Հին վրացերէնում կար ոչ վանկարար «ու» (կիսաձայն [w]), որը նոր վրացերէնում վերածուել է [վ] ինչոյթի եւ այդպէս էլ գրուում է («Յ»): Ոչ վանկարար «ու»ն հանդիպում է միայն բաղաձայնից յետոյ եւ ձայնաւորից առաջ (ճիշտ ինչպէս նոր հայերէնի բաղաձայն «ու»ն): Մեր տառադարձումը պէտք է լինի միշտ «ու» ([վ] արտասանութեամբ):

Ուստի՝ հին վրացերէն ոչ վանկարար «ու»ն եւ նոր վրացերէն «վ»ն նոյն տառադարձութեան ենք ենթարկում՝ հայերէն բաղաձայն ինչոյ «ու»: Օրինակներ. **Գ**ւրամ/Գւրամ **Գ**ուարամ, **Դ**ւրամ/Դւրամ **Զ**ուարի, **Ն**ւան/Նւան **Ս**ուան, **Վ**րացեթի Արգուեթ:

Կան բացառութիւններ, երբ հին վրացերէնի ոչ վանկարար «ու»ն նոր վրացերէնում չի դարձել «վ», այլ մնացել է «ու» (ձայնաւոր արտասանութեամբ), օր.՝ **Լ**ւրանս **Լ**ուարսաբ:

Ժգ) հին տառերի տառադարձումը

Վրացերէնի արդի այբուբենից դուրս են մնում հին վրացերէնի մի քանի տառեր՝ «**Ք**, **օ**, **չ**, **Յ**, **Յ**» (տե՛ս՝ Յանելուած աղիւսակը): Նոր վրացերէնի տառադարձութեան համար սրանք նշանակութիւն չունեն, սակայն եթէ կարիք լինի տառադարձել հին վրացերէն որեւէ անուն (այս տառերով ուղղագրած), հայերէն կը տառադարձենք այսպէս.

- «Թ» արտասանութիւնը՝ [եյ]²⁹, տառադարձում ենք «ե/է»: Մի կողմից՝ հայերէնը մերժում է «եյ» երկբարբառը, եւ միայն այդ հանգամանքը արդէն բաւարար է տառադարձել պարզ «ե/է»: Բայց կայ եւ մի այլ հանգամանք: Հին վրացերէնում «Թ»ն գրում էր երբեմն այնտեղ, որտեղ սպասելի է պարզ [e] հնչիւն, օրինակ՝ ՅօնիլԹ (փոխ. Յօնիլե տեսայ), ՄեթամԹ (փոխ. Մեթամե կէր), ՄեթԹսա (փոխ. Մեթեսա թագաւորին), ԲեթԹնի (փոխ. Բեթենի մեր)³⁰: Անուանական հոլովի մէջ «եյ»ի եւ «ե»ի միացումը (յօ) սովորաբար տալիս է «Թ», «մեթեյ / մեթԹ», «ձեյ / ձեթ»³¹:

- «օ» = «յ», (բառավերջին խլացել է եւ նոր գրութեան մէջ ընկել), օր.՝ Գօնա [գգայ] (ճանապարհ), Կեյցանա [քունկ'ղանայ] (երկիր), Ըննա [ղաբայ] (վայր, ասան), Ելլեսիա [եկլեսիայ] (եկեղեցի):

- «շ» = «ուի» [վի, փ], համապատասխանում է ոչ վանկարար «շ» + «օ»։ Թորճ բորցուի (բլուր): Հանդիպում է նաեւ հին յունարէն «Υ»ի տեղը՝ ԵթճԹ [եգիպտոս] Αἴγυπτος եգիպտոս:

- «Յ» կատկային [ք]: Սա «ց»ի շնչեղ տարբերակն էր: Նոր վրացերէնը այս հնչիւնը պարունակող բառերը արտասանում է [խ]ով: Կարող ենք տառադարձել «ք», կամ անելի շուտ՝ «խ» (եթէ բառը ներկայ է նաեւ նոր վրացերէնում եւ ունի [խ]ով տարբերակ): Օրինակներ. Կլո խելի (ձեռք), Կորճ խորցի (միս, մարմին), Կնա խմայ (ձայն):

- «թ» [ո/ու] = «ո(վ)» (համապատասխանում է յունարէն ոմեգային), հագուադէպ կիրարկութիւն ունի՝ «թ...» «ո՛վ...» կոչական ձայնարկութեան մէջ, հին յունարէնից փոխառութիւններ՝ Թնա (Ովսաննա(յ)) եւն.:

Ժ) բաղաձայնների կուտակում

Վրացերէնը, ի տարբերութիւն հայերէնի, որի վանկերը չեն հանդուրժում բաղաձայնների կուտակում, խնդիր չունի մի քանի բաղաձայն միեւնոյն վանկի մէջ դնելուց: Պէտք է ընդգծել, որ այդպիսի բաղաձայնների մէջ [ը] հնչիւն չի նախատեսուում (վրացերէնը չի ճանաչում ո՛չ «ը» տառը, ո՛չ էլ [ը] հնչիւնը): Ծայրայեղ օրինակներից է «Յթրճճն» [վիրքքվնի] (կլայում եմ) բառը (իրար ետեւից եօթը բաղաձայն): Այդպիսի խճողումների դէպքում, բնականաբար, հայերէնը բաղաձայնների միջեւ անլացնում է գաղտնավանկ [ը]՝ ըստ հայերէնի ուղղախօսական կանոնների, օրինակ՝ [վը-վըրց-քըվնի] կամ [վը-վըրց-քըվնի]:

Թրճ(ց)լոճն մրգովանի (բլուրագիր տառատեսակ) բառը հայերէն արտասանում ենք [մըրգ-լո-վա-նի]: Նկատենք որ բառի ստուգաբանական «Յ» տառը արդէն իսկ վրացերէնում է ընկել:

Ժե) բառի շեշտը

²⁹ Արդի սուաներէնում այն արտայայտում է երկայն [ե՛] հնչիւնը:

³⁰ Շանիձէ, էջ 15-16:

³¹ Անդ, էջ 45-46:

Վրացերէնում շեշտը ձգտում է ընկնել վերջից երրորդ վանկի վրայ, ուստի՝ երկվանկ բառերի մէջ այն առաջին վանկի վրայ է (այն է՝ վերջից երկրորդ, քանի որ չկայ վերջից երրորդ վանկ), իսկ եռավանկ եւ ւաւելի բազմավանկ բառերի մէջ՝ վերջից երրորդ:

Այդուամենայնիւ, ինչպէս բոլոր լեզուների կապակցութեամբ ենք ընդգծում, օտար անունների շեշտը հայերէն տառադարձած գրութեան մէջ արտասանում ենք հայերէնի՝ կանոններով՝ յար եւ մշտապէս վերջին վանկի վրայ: Անթոյլատրելի է արտասանել օրինակ [թը-բի-լի՛-սի], պէտք է լինի [թը-բի-լի-սի՛], մանաւանդ որ այդ սխալ շեշտը ռուսերէնի ազդեցութեամբ է՝ վերջից երկրորդ վանկի վրայ: Վրացերէն արտասանութիւնն է [թբի՛-լի-սի]:

ժգ) կովկասեան լեզուներից եկող անունների տառադարձումը

Քանի որ վրացերէնը հարուստ է բաղաձայններով եւ նրա բաղաձայնական համակարգը շատ մօտ է (արեւելա)հայերէնին, վրացերէնը կարող է յարմար կամուրջ հանդիսանալ կովկասեան լեզուներից կատարելիք տառադարձութեան համար: Սակայն վրացերէնը կարող է միայն յուշել, բայց ոչ լինել որոշիչ: Հայերէնն այսօր հնարաւորութիւն չունի հաստատելու կովկասեան լեզուների տառադարձութեան մի համակարգ, եւ այդ պատճառով առայժմ բաւականանալու ենք վրացերէնի եւ ռուսերէնի համադրութեամբ:

Կովկասեան լեզուներից՝ տարածական հեռաւորութեամբ եւ մարդկային հարեանութեամբ մեզ ամենամօտ լեզուն ավիսագերէնն է, մանաւանդ որ Ափխազիայում մինչեւ այսօր բնակուում են հազարաւոր հայեր: Գոնէ Ափխազիայի անունները գերադասելի կը լինէր հենց ավիսագերէնից տառադարձել: Դրա համար առնուազն պէտք է կազմել կարելորագոյն անունների մի ցանկ:

Նոյնը եւ կովկասեան այլ լեզուներից եկող անունների մասին է:

Կովկասեան լեզուներում կան հնչիւններ որ չունի վրացերէնը (բայց ունի հայերէնը): Դրանցից մի քանիսի համար ժամանակին յօրինել են վրացական այբուբենի նշանագրեր (մի ժամանակ կովկասեան այլեւայլ լեզուներ վրացագիր են եղել): Օրինակ՝ «ֆ» [ֆ], «ջ» [ը] են.: Սրանք, սակայն, այսօր մեր տեսադաշտից դուրս են մնում:

ժէ) հայկական ասանդական անուանումներ

Ինչպէս նշեցինք վերը, հայկական ասանդական (տեղ)անունները ոչ թէ տառադարձում ենք վրացերէնից, այլ առնում ենք դրանց հայկական ձեւերը: Դա մասնաւորապէս վերաբերում է պատմական Հայաստանի տարածքում գտնուող տեղանուններին, ինչպէս նաեւ այսօրուայ Վրաստանի հայաբնակ բնակավայրերի հայկական ստուգաբանութեամբ տեղանուններին. օրինակ՝ չձօճօճօ [ջաւախտթի] Զաւախք, ճձօճձ [ասպինձա] Ասպին-

ջակ, մանցլոսի Մանգլիս (հնում՝ Մանգլեսց Փոր), ծոլնոսի Բոլնիս (հին ձեւը՝ Բոլնոփոր³²), նաեւ՝ քլարջետի [կլարջեթի] Կղարջե տն.:

Գոյութիւն ունեն նաեւ բազմաթիւ այլ անուններ, որոնք թէւ վրացական (կամ այլ օտարալեզու) են ստուգաբանութեամբ, բայց ունեն վաղուց հաստատուած հայկական ասանդական ձեւեր: Անհրաժեշտ է բնականաբար նախապատուութիւնը տալ հայկաբան ձեւերին. մցեյոտա [մցխեթա] Մցխեթ (հնում նաեւ Մծխեթ(ա)), քոլեբեյո [կոլխեթի] Կողբիս, շլաձարի [ալաբարի] Հալաբար, շալգոցե [ախալցիխէ] Ախալցխա, օրաքլո [իրակլի] կամ րեքքլե [երեկլէ] Հերակլ, մեհրգրմեղի [մխարգրմեղի] Երկայնաբազուկ, ցրոցոլո [գրիգոլի] Գրիգոր, մարգալիտա [մարգալիտա] Մարգարիտ, մոնջեյո [միխեթի] Միքայէ, շոմբաթի [սոմբատի] Սմբատ տն.:

Ժը թիրքական անուանումներ (տեղանուններ են.)

Վրաստանում այսօր կան նաեւ թիրքաբանակ գիւղեր, որոնց անունների համար չկան ո՛չ հայկական, ո՛չ էլ վրացական ասանդական անուանումներ: Սրանց տառադարձումը կատարում ենք ուստի թիրքական լեզուներից՝ ադրբեջաներէնից եւ թուրքերէնից³³. Տաճաբլո [սադախլո] Սադախլո, մշլաճլո [մնուլանլո] Մնուլանլո, մամշլո [մամուլո] Մա(հ)մուլո, արաջլո [արախլո] Արաբլո, շամլո [ամամլո] Համամլո, ցարաբլաձի [կ'ղարաբուլախի] Կարաբուլաղ, օսոլա [իախլա] Յայլա տն.:

Ժթ) յունական, արեւմտաեւրոպական եւ ռուսական անուանումներ

Եթէ տեղանունը ասանդուած է հին յունական աղբիւրներում (մինչեւ դրա վրացական/վրացերէն ձեւի վկայութիւնը), եւ եթէ այն հայերէնում ունի ասանդուած տառադարձութիւն, տառադարձում ենք հին յունարէնից (այսինքն՝ պահում ենք ասանդուած ձեւը). Սեբաստուպոլիս, Փասիս, Պիտիոնտ, Դիոսկուրիա, Կողբիս...

Եւրոպական լեզուներից (անգլերէն, ֆրանսերէն...) եւ ռուսերէնից փոխառեալ բառերով կազմած անուանումները (զանազան կազմակերպութիւնների, պարբերականների եւ այլ անուններ) նմանապէս պէտք է տալ այդ լեզուներին հարազատ տառադարձութեամբ³⁴:

ՄԻ ՔԱՆԻ ՄԱՍՆԱԽՈՐ ԴԷՊՔԵՐԻ ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹԻՒՆԸ

Վրաստանի մայրաքաղաքի անուանումը

Քաղաքի պատմական վրացական անունը «Տփիլիս» է (ժջոլոսի)՝ ծագած հին վրացերէն «տփիլ» (տաք, ջերմ) արմատից (ըստ առասպելի՝ տեղում տաք աղբիւրներ են եղել): Հայերս ի սկզբանէ իսկ հայացրել ենք անունը՝ [տրփիլիս] արտասանութեամբ (առաջին «ի»ի սղումով, ինչը սովորական

³² Աշխարհագրական անունների մէջ «փոր» նշանակում է «ծոր, ծորագաւառ, հովիտ»:

³³ Տե՛ս՝ յօդուածաշարքիս Ա. մասը:

³⁴ Տե՛ս՝ մեր յօդուածաշարքի համապատասխան լեզուները:

է հայերէնի համար): Անունը տառադարձուել է Տփղիս, քանի որ «ղ» տառը հնում հնչում էր թաւ [լ]:

Հայերէն [տրփլիս]ից³⁵ միջին պարսկերէնը որդեգրեց Թփլիս ձեւը («տ»ն՝ «թ», եւ վանկարար «ը»ի փոխարէն՝ «ի»): Նման փոխառութիւն եղաւ եւ հին յունարէն (Τιφλίς [տիփլիս]³⁶), որից էլ՝ լատիներէն (Tiphlis [տիփլիս]): Ակնյայտ է որ այս փոխառութիւնների սկզբնաղբիւրը հայերէնն է, եւ ոչ՝ անմիջապէս վրացերէնը:

Իր կարգին արաբերէնը, [փ>ֆ] սովորական փոխանցմամբ³⁷, պարսկերէն անուանաձեւը դարձրեց Թիֆլիս: Այդպէս վերջինս տարածուեց ամբողջ Արեւելքում, այդ թւում եւ խօսակցական հայերէնում: Հայերս, թողնելով մեր հարեան երկրի մայրաքաղաքի հայերէն հարազատ անունը, բանաւոր խօսքում, շատ ու շատ տեղանունների նման, որդեգրեցինք օտար նուաճողների հնչիւնափոխ անուանաձեւը³⁸: Նոր պարսկերէնը նոյնպէս ընդօրինակեց արաբական *Թիֆլիս* ձեւը՝ մի կողմ թողնելով նախկին *Թիփլիսը*:

Նոր ժամանակներում՝ եւրոպացիներն ու ռուսները նոյնպէս որդեգրեցին *Թիֆլիս* ձեւը:

Վրացիները շարունակում էին իրենց մայրաքաղաքը կոչել *Տփիլիս(ի)*: Դարերի ընթացքում, սակայն, հին վրացերէն «տփիլ» (ջերմ) բառը դարձաւ «թբիլ» (առանց նշանակութեան փոփոխութեան): Եւ ահա 1936ին, համատարած անուանափոխութիւնների շրջանում, համայնավար վրացիներն էլ որոշեցին որ **Տփիլիս(ի)**ն այսուհետեւ կոչուելու է **Թբիլիս(ի)**³⁹: Օտարներից շատերը հետեւեցին այս անուանափոխութեանը եւ այսպէս ծնուեց հայ ժողովրդի համար խորթ «Թբիլիսի» արուեստական ձեւը⁴⁰:

Այսօր արեւելահայերէնում պաշտօնապէս գրանցուած է *Թբիլիսի* ձեւը: Սակայն թէւ լրատուամիջոցները ամէն օր համատարած գործածում են

³⁵ Հին ժամանակներում պարսիկները (նաեւ յոյները) Կովկասն ու նրա ժողովուրդները յաճախ ճանաչում էին հայերի ու հայերէնի միջոցով:

³⁶ Նոր յունարէնը բնականաբար արտասանում է [տիֆլիս]:

³⁷ Արաբերէնը [փ] հնչիւն չի ճանաչում, դրանք դարձնում է [ֆ]:

³⁸ Գրաւոր հայերէնը (մասնատրապէս՝ գրաբար հայերէնը) երկար դարեր հարազատ մնաց Տփղիս ձեւին:

³⁹ Քանի որ վերջին «ի» տառը վրացերէնի անուանական հոլովի վերջաւորութիւնն է, ստուգաբանօրէն այն բառի արմատ չի կարելի համարել: Վրացահայերը, ինչպէս ասացինք, քաղաքն այսօր կոչում են Թբիլիս (առանց վերջին «ի»ի), հասկանալով որ «ի»ն սոսկ հոլովական վերջաւորութիւն է:

⁴⁰ Շատ լեզուներ շարունակում են գործածել իրենց ասանդակական ձեւերը, զանց առնելով «կառավարական որոշումը». եգերերէն (մեգրելերէն)՝ ქობულეთი [քարթի], ափխազերէն՝ Карт [քարթ], յունարէն՝ Τιφλίδα/Τυφλίδα, թուրքերէն՝ Tiflis, պարսկերէն՝ تیفلیس [թեֆլիս]...

Թբիլիսի, խօսակցական արեւելահայերէնը (ինչպէս նաեւ արեւմտահայերէնը) քաղաքը շարունակում են կոչել *Թիֆլիս*:

Խնդիր իսկապէս գոյութիւն ունի, մի կողմից՝ հայերէնի երկու ճիւղերը միաւորելու, միւս կողմից՝ արեւելահայերէնի խօսակցականն ու գրաւորը միասնականացնելու հոգածութեամբ: Երբ ժամանակին Հայաստանի եզրաքանական յանձնաժողովը քննում էր վրացերէն տեղանունների հարցը, որոշեց (միանգամայն իրաւացիօրէն) բոլոր տեղանունները այսուհետեւ գրել առանց «ի» վերջաւորութեան (Բաթում, Քութայիս են.), բացառութեամբ Թբիլիսի անուան, որի համար (կոմիտէի բառերն են) գոյութիւն ունի «կառավարական յատուկ որոշում»: Զարմանալի է՝ մի՞թէ 1936ի կառավարութիւնների որոշումներով եւ լեզուագիտական անբաւարար գիտելիքներով պէտք է վճռենք այսպիսի հարցերը: Մինչեւ այժմ հայագէտները չեն համարձակում ձեռք տալ «Թբիլիսի» անուանմանը, ամէն անգամ նշելով, որ դրա համար կայ «կառավարական յատուկ որոշում», առանց յիշատակելու, որ այդ «կառավարական»ը վերաբերում է օտար երկրների՝ Խորհրդային Միութեան (ասել է թէ՛ Ռուսաստանի) եւ Վրաստանի կառավարութիւններին, կառավարութիւններ, որ իրաւական ոչ մի ուժ չունեն այսօր (ոչ էլ երբեւէ ունեցել են) հայերէնի կանոններ սահմանելու հարցում: Հետեւաբար՝ այդ որոշումները ի սկզբանէ իսկ անվաւեր էին օտար յատուկ անունները հայերէն գրելու գործում:

Ինչպէս արդէն նշել ենք, ամէն լեզու ի՛նքն է որոշում թէ իր լեզուով այս կամ այն յատուկ անունը ինչպէս պէտք է գրուի ու հնչի, եւ ուրիշ ոչ մի լեզու իրաւական ոչ մի ուժ չունի նրա վրայ բռնանալու:

Մենք առաջարկում ենք, գրականի եւ խօսակցականի երկուութիւնը կարգաւորելու, ինչպէս նաեւ հայերէնի երկու ճիւղերի միջեւ միօրինակութիւն մտցնելու նպատակով, վերականգնել քաղաքի հայկական պատմական անունը՝ «Տփղիս» գրութեամբ, եւ [տըփլիս] արտասանութեամբ: Այս ձեւը ե՛ւ յարգանք է մեր ասանդութեանը, ե՛ւ դիրին՝ խօսակցական [թիֆլիս]ից [տըփլիս]ին անցնելու համար: Այսպիսով՝ գրական եւ խօսակցական ձեւերը կը միաւորուեն, եւ արեւմտահայերէնն ու արեւելահայերէնը կը ստանան կրկին նոյն ձեւը:

Այլեայլ տեղանուններ եւ ցեղանուններ

Արժէ նաեւ խորհել Վրաստանի զանազան այլ տեղանունների կամ երկրանունների տառադարձութեան մասին: Յայտնի է որ Քութայիս քաղաքի անունը ժամանակին եղել է Քութաթիս, Փոթի քաղաքինը՝ Փոյթ են.: Երբ սահմանում ենք այսօրուայ պաշտօնական ձեւերը, պէտք է մշտապէս աչքի առաջ ունենանք պատմական ձեւերը, որպէսզի ի սկզբանէ եւ մէկընդմիջտ ճիշտ ընտրութիւն կատարենք, այլ ոչ թէ հապճեպ մի տառադարձութիւն, եւ մի քանի տասնեակ տարի յետոյ կրկին կանգնենք խնդրի առջեւ:

Վրաստանի արեւմտեան գաւառներից ամենախոշորը հայերէն պատմականօրէն կոչուել է Եգր, Եգերք, Եգերաց աշխարհ, վրացերէն՝ ეგრ-ობო

[եգր-իսի]: Այս երկրամասի անուան վրայ է առաջացել «մ-եգր-ել» (վրաց.՝ მ-ეგრ-ელი) ցեղանունը: Այս յօդուածի մէջ մենք որդեգրել ենք հայերէն «եգերացի, եգերերէն» ձեւերը: Ինդիրը սպասում է վրացագէտների (եւ առաջին կարգին՝ հայագէտների) որոշմանը:

Ափխազ ցեղանունը եւ Ափխազիա (Ափխազք) երկրանունը թէ՛ ամանդական հայերէն, թէ՛ վրացերէն տառադարձութեամբ («აფხაზეთი») «փ»ով է: «Բ»ով տարբերակը (աբխազ) եւրոպական լեզուների եւ ռուսերէնի աւելի ուշ գրութիւնն է (Abkhaz, Абхаз): Գերադասելի է ամանդական «ափխազ» ձեւը⁴¹:

«Աճարա/Աճարիա» երկրամասի անունը նոյնպէս գերադասելի է գրել «ճ»ով (ինչպէս վրացերէն է՝ აჭარა), եւ ոչ թէ «ջ»ով, որը թուրքերէն (Açara), այնուհետեւ՝ ռուսերէն (Аджария) տարբերակն է: Գերադասելի է Աճարա, քան թէ Աճարիա:

Սրայիհի անունն ու հայրանունը հայերէն

Ծնունդով վրացի եւ իր գործունէութեամբ ռուս-սովետական գործիչ Զուրաշուիլիի անունը վրացերէն ԾԵՆԵԾ [իոսեք] է, ռուսերէն՝ Иосиф [իոսիֆ]: Աստուածաշնչեան այս անուան հայերէն տարբերակն է Յովսէփ: Անգլերէն Ստալինին անուանել են Joseph [ջոզըֆ], ֆրանսերէն՝ Joseph [ժոզեֆ], գերմաներէն՝ Josef [յոզեֆ], ասել է թէ՛ ամէն ազգ անունը յարմարել է իր լեզուի ամանդութեանը: Նոյնիսկ ուկրայիներէն՝ ասում են Иосип [յոսիպ], իսկ արաբերէն՝ يوسف [յուսուֆ]: Յունարէն ձեւը բնականաբար Լոսիֆ է (նոր յունարէն՝ [իոսիֆ] արտասանութեամբ), բայց սա բուն յունական ձեւն է, ոչ թէ ռուսերէնից կատարած տառադարձութիւն⁴²:

Ինդիրն այն չէ, թէ Ստալինը աւելի վրացի՞ էր, վրաց քաղաքական գործիչ, թէ՞ ռուս-սովետական, որպէսզի որոշենք թէ ո՞ր լեզուից պէտք է կատարենք անուան տառադարձութիւնը: Ինքնավստահութիւն եւ անկախ մտածելակերպ ունեցող լեզուները գերադասում են իրենց ամանդական ձեւերը: Ուստի մենք խորհուրդ ենք տալիս այդ մարդու անունը միասնական հայերէն լեզուով գրել Յովսէփ (եւ ոչ թէ Իոսիֆ՝ ռուսերէնից, կամ Ժոզեֆ՝ ֆրանսերէնից փոխառեալ):

Հայրանունը վրացերէն «ձցնաճօճօ» [բեսարիոն-ի] է, հայերէն՝ Բեսարիոն, յունարէն «Βησσαρίων»ի տառադարձութիւնը⁴³: Ուստի ռուսական «Իոսիֆ Վիսարիոնովիչ»ը բոլորովին սխալ ձեւ է հայերէնի համար: Վերջին հաշուով՝ մենք «Զուրաշուիլի»ն վրացերէնից ենք տառադարձում («դ»ով, եւ ոչ թէ ռուսական «գ»ով), եւ լիովին տրամաբանական է, որ անունն ու հայ-

⁴¹ Ափխազներն իրենց եւ իրենց երկիրը կոչում են ацсуаа [ափսուաա]/Ацсны [ափսնը], ինչը նոյնպէս խօսում է «փ»ի օգտին:

⁴² Իսկապէս ռուսերէնն է փոխ առել անուան յունարէն ձեւը:

⁴³ Ռուսերէն Виссарион ձեւը յունարէնի նոր յունական արտասանութեան հետեւանք է:

րանունը նոյնպէս ռուսերէնից չտառադարձենք: Լաւագոյն ձեւն ուրեմն կը լինի Յովսէփ Բեսարիոնի (որդի) Ջուղաշուփի (Ստալին):

Կովկասեան մի քանի կարեւոր լեզուների անուանումները

Կարեւոր է ճշտել եւ վերջնական ու ստոյգ տառադարձութեան ենթարկել Այս եւ Անդր Կովկասի կարեւոր (համեմատաբար խոշոր) լեզուների անուանումները: Ահա դրանցից մի քանիսը (երբեմն մեր տառադարձութեամբ).

Քարթուելական լեզուներ. վրացերէն, եգերերէն (մեգրելերէն), սուաներէն, ճաներէն:

Արեւմտակովկասեան լեզուներ. ափխազերէն, աղ(ա)ղերէն, կաբարդերէն (չարքասերէն):

Արեւելակովկասեան լեզուներ. խունձերէն (աւարերէն), դարգուերէն, լաւերէն, լեզգիերէն, թաբասարաներէն, նախճերէն կամ չաչաներէն⁴⁴, դալդայերէն (ինգուշերէն):

Այս լեզուների անուանումները ճշտելու համար անհրաժեշտ է մի կողմից օգտուել հայոց *Աշխարհացոյցի* (որը կովկասեան ցեղերի մասին բաւական նիւթ է տալիս) եւ պատմական մեր այլ աղբիւրներից, միւս կողմից՝ պարզել ամէն ժողովրդի անունը իր մայրենի լեզուով եւ հարեան ժողովուրդների՝ նրան տուած ասանդական անուններով: Խնդիրը դիւրին չէ, բայց պէտք է միանգամընդմիջտ լուծում գտնել:

ՎԵՐՋԱԲԱՆ

Ամփոփելով մեր այս յօդուածաշարքը, կը ցանկանայիմք ի մի բերել օտար յատուկ անունների տառադարձութեան մեր հիմնարար գաղափարներն ու սկզբունքները:

Նախ եւ առաջ՝ պէտք է զանազանել ուղղագրութիւն եւ տառադարձութիւն հասկացութիւնները: Ուղղագրութիւնը վաղուց ի վեր իբրեւ «բնիկ» ընկալուող հայերէն բառերի գրութիւնն է, տառադարձութիւնը՝ օտար անունների եւ անցողական (ոչ յարատեւ) բառերի գրութիւնը:

Հայերէնի տառադարձութիւնը բարդ ու բազմաշերտ խնդիր է: Այն ոչ այլ ինչ է, քան «յարմարագրութիւն», այն է՝ որեւէ օտար բառ հայերէն տառերով յարմար եւ միակերպ գրելու արուեստ: Դա պէտք է լինի միայն գրական հայերէն հնչիւններով եւ չունենայ հայի համար անարտասանելի հնչում: Հայերէն տառադարձութիւնը պէտք է ընդհանուր սկզբունքներ ունենայ արեւելահայերէնի ու արեւմտահայերէնի համար: Պէտք է նաեւ ընդունել գրաւոր լեզուի գերակայութիւնը բանաւորի նկատմամբ:

⁴⁴ Աւելի վաղ գրականութեան մէջ հանդիպում ենք «չաչան» տարբերակին («չեչեն»ի փոխարէն): Կայ նաեւ ՌՅՏԾԾԾ (Չաչանիձէ) ազգանուն: Այս ձեւերը մտորել են տալիս թէ արդեօք ւելի ստոյգ չէ՞ «ա»ով տարբերակը (տաճկերէնի բաց [ա]>[ե] անցումով՝ տե՛ս՝ յօդուածաշարքիս Ա. մասը):

Անկախ այս կամ այն աղբիւր-լեզուի, հայերէնի տառադարձութիւնը պէտք է առաջնորդի հետեւեալ սկզբունքներով.-

ա) Եթէ հնարաւոր է օտար յատուկ անունը թարգմանաբար ներկայացնել հայերէն, պէտք է թարգմանենք. օր.՝ Սպիտակ տուն, Համայնքների պալատ, Միացեալ ազգերի կազմակերպութիւն, Կարմիր խաչ, առանց ընկնելու, բնականաբար, ստուգաբանական ծայրայեղութիւնների մէջ:

բ) Եթէ գոյութիւն ունի ասանդական (աստուածաշնչեան կամ այլ) տառադարձութիւն, առնում ենք ասանդական ձեւը (նոյնիսկ եթէ առկայ է տառադարձական «սխալ»). օր.՝ Պետրոս, Պօղոս, Յովսէփ, Աթէնք, Կիլիկիա, Լիբանան, Իտալիա, Դամասկոս, Եգիպտոս, Կիպրոս, Յունաստան, Սպանիա (ոչ թէ Իսպանիա), Ափրիկէ (ոչ թէ Աֆրիկա)...

գ) Եթէ անունը նոր կամ նորագոյն փոխառութիւն է, եւ սակայն արեւմտահայերէնն ու արեւելահայերէնը միեւնոյն գրութիւնն ունեն, առնում ենք այդ միասնական ձեւը (նոյնիսկ եթէ առկայ է տառադարձական «սխալ»). օր.՝ Փարիզ, Վենետիկ, Չինաստան, Ամերիկա, Լեհաստան...

դ) Պատմական դէմքերի անձնանունների վերաբերեալ երկու մօտեցում կարող է լինել. ա) յարգել այդ անունների՝ արդէն իրողութիւն դարձած (թէ՛ եւ, արդի աչքերով նայած՝ «սխալ» տառադարձութեամբ) գրութիւնը, այսինքն՝ չճեափոխել նրանց անունները, գրել այնպէս ինչպէս իրենք են ժամանակին գրել իրենց անունները. օր.՝ Այտընեան, Թէքէեան, Թէրլեմէզեան, Մէնէվիշեան... բ) անձնանունները սրբագրել համաձայն մեր նոր կանոնների. ասենք՝ Այտնեան, Թէքէեան, Թերլեմէզեան, Մենևիշեան:

ե) Եթէ անունը նոր կամ նորագոյն փոխառութիւն է եւ դրա դիմաց չունենք ասանդական միաձեւ տառադարձութիւն (փոխարէնը ունենք կա՛մ ասանդական երկու կամ ամբի ձեւ, կա՛մ՝ արեւմտահայերէն եւ արեւելահայերէն երկգրութիւն), կատարում ենք նոր տառադարձութիւն, հիմնուած մեսրոպեան ուղղագրութեան վրայ եւ համաձայն մեր յօդուածաշարքում արձարձած կանոնների:

զ) Որեւէ տառադարձութեան ժամանակ կարելի է յարգել հայերէնի հնչիւնական համակարգը եւ ուղղագրութեան կանոնները, այն է՝ չներմուծել նոր հնչիւններ, չյօրինել նոր տառակապակցութիւններ, չներմուծել հայերէն բառերի ուղղագրութեանը խորթ մի այլ ուղղագրութիւն: Տառադարձած օտար յատուկ անունը պէտք է առաւելագոյնս նման հնչի հայերէն բառերին եւ իր ուղղագրութեամբ չտարբերուի հայերէն բառերի ուղղագրութիւնից:

է) Շեշտադրութիւնը բոլոր անունների մէջ (անկախ թէ օտար լեզուում բառը ինչ շեշտադրութիւն ունի) պէտք է լինի հայկականը, այն է՝ վերջահար, բացառութեամբ բնականաբար [ը] ձայնաւոր պարունակող վանկի, որի դէպքում շեշտը վերջընթեր ձայնաւորի վրայ է:

Հայերէնի տառադարձութիւնը դարերի ընթացքում ունեցել է երեք համակարգ, երեք սկզբունք՝ մեսրոպեան (կամ հայկաբան), կիլիկեան (այսօր երբեմն կոչում են նաեւ արեւմտահայ, սփիւռքահայ) եւ սովետահայ (խոր-

հրդային, կոչում են նաեւ արեղեանական, հայաստանեան): Մենք սկզբուն-
քօրէն դէմ ենք ե՛ւ սովետահայ, ե՛ւ կիլիկեան տառադարձութիւններին:
Դրանք մի կողմից՝ օտար լեզուների ազդեցութեան, միւս կողմից՝ մեսրոպ-
եան կանոնները զանց առնելու հետեւանք են: Օտար լեզուներին յարմար-
ուելու փորձերը կերպարանափոխում են հայերէնը եւ ոտնակոխ են անում
մայրենին ամրապնդելու ու միասնական լեզու շինելու ջանքերը:

Մենք կ'առաջարկէինք սկզբունքային հետեւեալ մօտեցումները, որոնք
կարող են օրէնք դառնալ բոլոր լեզուների տառադարձութեան համար:

ա) Ամենավերին աստիճանին կանգնած են հայերէնի դասական ուղ-
ղագրութիւնն ու ուղղախօսութիւնը: Ինչպէս հայոց լեզուի իւրաքանչիւր
բառ, այնպէս էլ օտար որեւիցէ անուն կամ փոխառեալ նոր բառ պէտք է են-
թարկուի հայոց լեզուի գերդաստանի ընդհանուր կանոններին: Օտար բա-
ռերը չեն կարող այլ գրութիւն կամ արտասանութիւն ունենալ, քան հայերէն
բառերը: Այլապէս նրանք վաղ թէ ուշ դուրս են մղուելու լեզուից: Դրանով
մենք ընդգծում ենք օտար անունների տառադարձութեան ասպարէզում
հայոց լեզուի գերակայութիւնը որեւէ օտար լեզուի նկատմամբ: Օտար ա-
նունները պէտք է հնազանդուեն հայերէնի հնչական եւ ուղղագրական օ-
րէնքներին, օտար անունները իրատունք չունեն հայերէնում օրէնքներ թե-
լադրելու:

բ) Վերից երկրորդ աստիճանին կանգնած են տառադարձութեան կա-
նոնները: Ինչպէս ամէն լեզու, հայերէնն էլ ունի տառադարձութեան ի՛ր օ-
րէնքները եւ օրինազանց բառերին կա՛մ բնաւ տեղ չի տալիս իր լեզում,
կա՛մ ժամանակի ընթացքում յղկում է նրանց տեսքը:

գ) Երրորդ աստիճանին կանգնած է ստուգաբանութիւնը: Օտար անուն-
ները տարբեր լեզուների են պատկանում եւ յաճախ մէկից միւսին անցնում:
Անհրաժեշտ է յստակ պատկերացնել, թէ այս կամ այն անունը ինչ լեզուից
պէտք է տառադարձել: Ճշմարտութիւնը գտնելու համար մշտապէս պէտք է
երթուդարձ անել զանազան լեզուներից սերած բառերի ու անունների մի-
ջեւ:

դ) Օտար լեզուի գրութիւնը կարեւոր գործօն է, առանց որի որեւէ տառա-
դարձութիւն թերի է: Գրութիւնը յաճախ մատնանշում է ստուգաբանութիւնը,
ճշտում կիրթ արտասանութիւնը, եւ հնչիւնները համախմբում մի հնչոյթի
ներքոյ:

ե) Տառադարձութեան հիմքում, սակայն՝ ստորին աստիճանին, ընկած է
օտար լեզուի գրական հնչումը: Սա սկզբնակէտն է որեւէ տառադարձու-
թեան: Այնուամենայնիւ, վերին աստիճանին հասնելու եւ հայեցի անուն
դառնալու համար, օտար արտասանութիւնը պէտք է անցնի միւս աստի-
ճանների բովերով, թրծուի եւ հայանայ՝ մինչեւ կարողանայ ընկալելի լինել
հայերէն լեզուի ընտանիքի անդամների համար:

Պէտք է նորէն ընդգծել, որ մեր յօդուածաշարքում մենք չենք տուել տա-
ռադարձութեան մի վերջնական համակարգ եւ այն մէկընդմիշտ աւանդել

հասարակութեանը: Մենք համոզուած ենք որ տառադարձութեան խնդիրը մի մարդու գործ չէ, այն անհատական լուծում չի կարող ունենալ: Խնդրին պէտք է մօտենալ հանրովին, եւ Հայաստանի (անշուշտ նաեւ Սփիւռքի) պետական ու գիտական հաստատութիւնների գործակցութիւնը անխտիր անհրաժեշտ է: Լեզուաբանների, հայագետների ու տարբեր գիտութիւնների մասնագետների համատեղ ջանքերով ենք միայն մշակելու եւ որդեգրելու ազգովին ընդունելի տառադարձութեան սկզբունքները:

Միայն այս ճանապարհով դրանք ընդունելի կը լինեն լայն հասարակութեանը: Այլապէս, բազմապիսի տառադարձութիւնը նպաստելու է լեզուի հեղինակութեան անկմանը, նրա նկատմամբ անտարբերութեան աճին եւ վերջին հաշուով՝ ազգային պառակտմանը: Առանց հեղինակաւոր կառոյցների՝ բոլոր առաջարկութիւնները յօդս են ցնդելու, եւ տարբեր հեղինակներ շարունակելու են կիրարկել այլազան ու իրարամերժ տառադարձութիւններ:

Մշակուած, գիտականօրէն հիմնաւորուած եւ համատեղ աշխատանքով ընդունած սկզբունքներն ու կանոնները անհրաժեշտ է այնուհետեւ հրապարակել եւ յանձնել լեզուի վերահսկողութեան պետական մարմիններին ու լեզուի տեսչութիւններին, ինչպէս նաեւ բոլոր այն հիմնարկութիւններին (տեղեկատուական, լրագրական, ուսումնական, քարտէզագրական եւ այլ), որոնք իրենց առօրեայ գործունէութեան մէջ առնչուում են տառադարձման հարցերին: Յետագայ գիտական եւ ուսումնական (նախ եւ առաջ՝ դպրոցական) տպագիր գրականութիւնը պարտաւոր է լինելու յարգել մշակուած կանոնները:

Յուսով ենք՝ հեռու չեն այն օրերը, երբ Հայաստանում ի յայտ կը գան *հայկաբան* մասնագետներ, որոնք եւ իրենց գիտելիքը ի սպաս կը դնեն տառադարձութեան եւ մեր լեզուի համաձուլման կարեւոր գործին:

Մեր դատողութիւնները մենք առաւել եւս նրանց ենք ուղղում:

ՅԱԻԵԼՈՒԱԾ – ԱՂԻԻՍԱԿ ՎՐԱՅԵՐԷՆ ՀՆԶԻՒՆՆԵՐԻ
ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ

Վրացերէն տառերը	Տառի անունը	Հայերէն տառադարձութիւնը
ა	ան	ա
ბ	բան	բ
გ	գան	գ
დ	դոն	դ
ე	են	ե/է
ვ	վին	վ/ւ/ու
ზ	զեն	զ

Վրացերէն տառերը	Տառի անունը	Հայերէն տառադարձութիւնը
ⴁ *	հէ	ե/է (= [եյ])
ⴂ	թան	թ
ⴃ	ին	ի, յ
ⴄ	կան	կ
ⴅ	լաս	լ
ⴆ	ման	մ
ⴇ	նար	ն
ⴈ *	յէ	յ
ⴉ	ոն	ո
ⴊ	պար	պ
ⴋ	ժան	ժ
ⴌ	րաէ	ր/ռ
ⴍ	սան	ս
ⴎ	տար	տ
ⴏ *	ւիէ	= Յ+օ (ուի)
ⴐ	ուն	ու
ⴑ	փար	փ
ⴒ	քան	ք
ⴓ	ղան	ղ
ⴔ	կ'ղար	կ, ղ (= արաբ. ق)
ⴕ	շին	շ
ⴖ	չին	չ
ⴗ	ցան	ց
ⴘ	ծիլ	ծ
ⴙ	ծիլ	ծ
ⴚ	ճար	ճ
ⴛ	խան	խ
ⴜ *	ք'ղար (խար)	ք, խ (= շնչեղ զ)
ⴝ	ջան	ջ
ⴞ	հաէ	հ
ⴟ *	ոհ (ոնէ)	ո/ով

* ԺԹ. դարի վերջից ի վեր այբուբենի մէջ չեն:

THE PRINCIPLES OF TRANSLITERATING (TRANSCRIBING) FOREIGN PROPER
NAMES INTO ARMENIAN
PART XI – GEORGIAN LANGUAGE
(SUMMARY)

ARMEN MICHAELIAN
armen_michaelian@yahoo.com

The article is the last in the series that deals with the transliteration (transcription) of foreign proper names into Armenian (the way to transcribe foreign names in Armenian characters). The references of the previous articles are:

1) The Principles of Transliterating Foreign Proper Names into Armenian, Part I – Middle Eastern Languages [in Armenian], *Haigazian Armenological Review*, 40:2020, pp. 341-64.

2) The Principles of Transliterating Foreign Proper Names into Armenian, Part II – Classical Languages (Ancient Greek and Latin) [in Armenian], *Bazmavep*, CLXXVIII(1-2):2020, pp. 304-36.

3) The Principles of Transliterating Foreign Proper Names into Armenian, Part III – French Language [in Armenian], *Haigazian Armenological Review*, 41:2021, pp. 443-66.

4) The Principles of Transliterating (Transcribing) Foreign Proper Names into Armenian, Part IV – English Language [in Armenian], *Handes Amsorya*, CXXXV:2021, pp. 197-246.

5) The Principles of Transliterating (Transcribing) Foreign Proper Names into Armenian, Part V – German Language [in Armenian], *Bazmavep*, CLXXX(1-2):2022, pp. 277-303.

6) The Principles of Transliterating (Transcribing) Foreign Proper Names into Armenian, Part VI – Italian and Spanish Languages [in Armenian], *Bazmavep*, CLXXX(3-4):2022, pp. 271-300.

7) The Principles of Transliterating (Transcribing) Foreign Proper Names into Armenian, Part VII – Russian (Compared to Other Slav(on)ic Languages) [in Armenian], *Haigazian Armenological Review*, 42/2:2022, pp. 169-98.

8) The Principles of Transliterating (Transcribing) Foreign Proper Names into Armenian, Part VIII – Chinese Language [in Armenian], *Bazmavep*, CLXXXI(1-2):2023, pp. 272-305.

9) The Principles of Transliterating (Transcribing) Foreign Proper Names into Armenian, Part IX – Japanese Language [in Armenian], *Haigazian Armenological Review*, 44/1:2024, pp. 85-106.

10) The Principles of Transliterating (Transcribing) Foreign Proper Names into Armenian, Part X – Hindi Language and the Indian Sub-Continent [in Armenian], *Bazmavep*, CLXXXII(1-2):2024, pp. 361-405.

The present part of the series is devoted to the transliteration (transcription) of names from the Georgian language. The principle of transliteration is based (as in the whole series) on classical Armenian spelling, definitely ruling out the “Soviet” transliteration on one side and the “Cilician” one on the other. After a reminder of the phonological and orthographic principles of Armenian transliteration mentioned in the first articles of the series, the author scrutinizes the most problematic sounds and

phonemes of the Georgian language and confirms or proposes (based on numerous examples) a coherent and principled transliteration for each of them.

ԳՈՅԱԿԱՆԻ ԱՌԿԱՅԱՑՄԱՆ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԷՆՈՒՄ. ՈՐՈՇԵԱԼՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՆՈՐՈՇՈՒԹԵԱՆ ԵՆԹԱԿԱՐԳԵՐ

ԵՌԻՐԻ ԱԻԵՏԻՍԵԱՆ
yuavetisyan@mail.ru

ՄՈՒՏՔ

Գոյականի առկայացման քերականական կարգի իմաստային առումները եւ քերականական արտայայտութեան ձեւերը որոշակի փոփոխութիւնների են ենթարկուել հայոց լեզուի պատմական զարգացման ընթացքում: Այդ իսկ պատճառով հայերէնի քերականութեան ուսումնասիրութիւններում, դրանք յաճախ են դարձել քննութեան ու քննարկումների առարկայ: Հարցին քիչ թէ շատ հանգամանօրէն անդրադարձել են Մանուկ Աբեղեանը, Հրաչեայ Աճառեանը, Սերգէյ Աբրահամեանը, Գէորգ Զահուկեանը, Մանուկ Ասատրեանը, Յակոբ Չոլաքեանը, Արմենակ Եղիայեանը՝ եւ ուրիշներ: Հարցի ամէնից հետեւողական ուսումնասիրութիւնը, նիւթի դասակարգումն ու նկարագրութիւնը կատարել է Հրանտ Պետրոսեանը: Կատարուած է մեծ ծաւալի աշխատանք, արուել է շատ մանրակրկիտ ու հանգամանալից քննութիւն²: Սակայն մեր համոզմամբ՝ դասակարգման առանձին կէտեր եւ սկզբունքներ այսօր կարիք ունեն վերանայման եւ վերաձեւակերպման: Գիտական այդ կարիքի բաւարարմանն է ուղղուած սոյն ուսումնասիրութիւնը:

ՏԵՍԱԿԷՏ ԵՒ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Առկայացման քերականական կարգի իմաստային կողմն այն է, որ ցոյց է տալիս առարկայի տարրորոշուած յարաբերութիւնը խօսողութեան մասնակիցների (հաղորդակցողների) հետ կամ այդպիսի յարաբերութեան բացակայութիւնը: Առկայացումը հայերէնում իրացում է հիմնականում յօդերի միջոցով, այսինքն՝ քերականական ցուցիչները յօդերն են՝ **ս, դ, ն/ը, մի**: Դրանք, բացառութեամբ **մի**ի, առաջացել են համապատասխան դերանուն-

¹ Մ. Աբեղեան, *Երկեր, հրք. 2*, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1974. նաեւ՝ Ս. Աբրահամեան, *Ժամանակակից հայերէնի քերականութիւն*, «Լոյս» հրատ., Երեւան, 1975. նաեւ՝ Հ. Աճառեան, *Լիակատար քերականութիւն հայոց լեզուի, հ. II*, Երեւան, 1954. նաեւ՝ Ա. Եղիայեան, *Արեւմտահայերէնի ուղղագրական, ուղղախօսական, ոճաբանական ուղեցոյց*, Պէյրութ, 2022. նաեւ՝ Գ. Զահուկեան, *Ժամանակակից հայերէնի տեսութեան հիմունքները*, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1974. նաեւ՝ Յ. Չոլաքեան, *Գործնական արեւմտահայերէն*, Անթիլիաս, 2018:

² Հ. Պետրոսեան, *Ակնարկներ հայերէնի պատմական ձեւաբանութեան (յօդային կարգ)*, Երեւանի համալսարանի հրատ., Երեւան, 1976:

ներից՝ *ս<ես-այս-սա, դ<դու-այդ-դա, ն<նա-այն*: Այդ իսկ պատճառով մենք սրանց կոչում ենք նաեւ **դերանուանական յօդեր**:

Յօդերը, դրուելով գոյականների, ինչպէս նաեւ գոյականաբար գործածուած այլ բառերի վրայ, նրանց բառային-բառական իմաստը քերականօրէն առարկայացնում, տարբերակում, մասնատրում, տարրորոշում, այսինքն՝ առկայացնում են: Այս կարգը երբեմն կոչում են նաեւ **տարրորոշման կարգ**, իսկ յօդերը՝ **առկայացնող** կամ **տարրորոշիչ յօդեր**:

Մասնագիտական գրականութեան մէջ սկզբնապէս տարբերակուել են յօդերի **անուանական (ը/ն)** եւ **դերանուանական** տեսակներ (**ս, դ, ը/ն**)՝ ըստ գոյականի եւ դերանուան հետ կամ դրանց փոխարէն գործածութեան սկզբունքների: Եւ ըստ այդմ՝ առաջինները ներկայացուած են գոյականի, իսկ երկրորդները՝ դերանուան համակարգերում³: Արեղեանը այսպիսի տարբերակում չի կատարում. դրանք նկարագրում է առանձնաբար՝ ըստ իմաստի առանձնացնելով յօդերի չորս տեսակ՝ *ցուցական, դիմորոշ, սպացական, որոշեալ (որոշող ն յօդ)*⁴:

Յօդերը գրեթէ նոյն կերպ են պատկերուել ու նկարագրուել յետագայ քերականութիւններում: Նոր ժամանակներում այս սկզբունքի հետեւողական պաշտպաններից Ալեքսանդր Մարգարեանը իր նախորդների հետեւողութեամբ առանձնացնելով անուանական եւ դերանուանական յօդեր տեսակները՝ առաջինները (**ը** եւ **ն** յօդերը) քննում է որպէս առանձին քերականական կարգի արտայայտման միջոցներ՝ «Գոյականի որոշեալ եւ անորոշ առման քերականական կարգը» խորագրի տակ, իսկ երկրորդները (**ս, դ, մասամբ՝ ը/ն**) պատկերում եւ նկարագրում է՝ որպէս դերանուանական յօդեր, քանի որ վերջիններս, ըստ նրա, «պահպանում են իրենց սերտ կապը դերանուան հետ» եւ գործածում են որոշ (անձնական, ցուցական) դերանունների փոխարէն⁵: Սկզբնապէս գրեթէ նոյն կերպ է հարցը ներկայացրել նաեւ Աբրահամեանը⁶: Հարցի ուսումնասիրութեան պատմութեան եւ տեսութեան մէջ յեղաշրջում կատարեց Զահուկեանը: Իսնդիրը դիտարկելով կառուցուածքային լեզուաբանութեան դիրքերից՝ նա յօդերը առանձնացրեց դերանուններից եւ քննարկեց միայն գոյական խօսքի մասի համակարգում՝ որպէս նրա քերականական կարգերից մէկի՝ առկայացման ձեւային ար-

³ Ա. Այտընեան, *Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի*, Երեւանի համալսարանի հրատ., Երեւան, 1987, էջ 22 («Անուան յօդը»), 185-193 («Յօդերու գործածութիւնը»), 204-206 («Դերանունական յօդեր»): Նաեւ՝ Ս. Պալասանեան, *Քերականութիւն մայրենի լեզուի*, Տպարան Մ. Վարդանեանի եւ ընկ., Թիֆլիս, 1884, էջ 36-39 («Գոյական անունների յօդը»), էջ 67-68 («Դիմորոշ կամ դերանուանական յօդեր»):

⁴ Արեղեան, էջ 800-2:

⁵ Ա. Մարգարեան, *Հայոց լեզուի քերականութիւն. ձեւաբանութիւն*, ԵՊՀ հրատ., Երեւան, 2004, էջ 318-23:

⁶ Աբրահամեան, էջ 41:

տայայտութեան միջոցներ: Այսինքն՝ գոյականի քերականական կարգերի կառուցումը Զահուկեանը յայտարարում է մի նոր կարգ՝ **առկայացման կարգը**: Ըստ որում, լեզուաբանը այս կարգի մէջ առանձնացնում է երկու ենթակարգեր՝ **որոշեալութեան** եւ **ցուցաստացականութեան**: Առաջինը արտայայտութեան ծիրում բնորոշում է **ը** եւ **ն** յօդերի առկայութեամբ եւ դրանց հետ կապուած **Օ/ը, Օ/ն** հակադրութիւններով (մարդ-մարդը, տղայ-տղան): Երկրորդ ենթակարգը արտայայտութեան առումով բնորոշում է **ս, դ**, մասամբ նաեւ **ը** եւ **ն** յօդերի առկայութեամբ, որոնք, ըստ լեզուաբանի, «բովանդակութեան պլանում արտայայտում են ցուցա-ստացական, բուն ցուցական եւ դիմորոշ իմաստներ»: Այս տեսակէտը տարածում գտաւ եւ տարբեր զարգացումներով արտացոլուեց յետագայ քերականութիւններում⁷: Աբրահամեանը, նախընտրելի համարելով **առկայացման** կամ **տարորոշման** կարգ անուանումը, դրանում առանձնացնում է չորս ենթակարգեր, որոնք համարում է առկայացման կարգի քերականական իմաստի դրսեւորումներ՝ ա) որոշեալութիւն, բ) ստացականութիւն, գ) դիմորոշութիւն, դ) ցուցականութիւն: Անորոշութիւնը լեզուաբանը քննարկում է միայն որոշեալութեան հետ ունեցած ձեւային եւ բովանդակային հակադրութեան մէջ⁸: Այս մօտեցմամբ, սակայն, որոշեալութիւնը՝ որպէս ենթակարգ, հակադրում է միայն անորոշութեանը եւ համարժէք է դիտում միւս ենթակարգերին՝ առանձին-առանձին վերցրած: Մինչդէռ անորոշութեան ենթակարգը, մեր կարծիքով, իր քերականական իմաստով (անորոշութիւն կամ տարորոշուածութեան բացակայութիւն) եւ իր քերականական ձեւով (զրօ ձեւ կամ **մի** յօդ) հաւասարապէս հակադրում է որոշեալութեանը, որը իմաստային առումով (որոշեալութիւն, տարորոշուածութիւն) իր մէջ է առնում միւս ենթակարգերը կամ յօդային առումները:

Մանուէլ Ասատրեանը, առանձնացնելով առկայացումը՝ որպէս գոյականին յատուկ քերականական կարգ, «Առկայացման (որոշեալի եւ անորոշի) քերականական կարգը» վերնագրի տակ ըստ էութեան տալիս է յօդերի գործառական նկարագրութիւնը, ներկայացնում է դրանց գործառոյթները (ցուցական, ստացական, դիմորոշ, որոշիչ յօդերի եւ **մի** անորոշ յօդի գործառոյթները)⁹: *Հայերէնագիտական բառարանի* հեղինակ Պետրոսեանը, ով տարիներ շարունակ զբաղուել է հայերէնի առկայացման կարգի ուսումնասիրութեամբ, կատարում է շատ հետաքրքիր դիտարկում: Կարգը նա անուանում է **առկայացման** եւ **անառկայացման** կարգ, որում առանձնացնում է հինգ ենթակարգեր՝ *ցուցական, դիմորոշ, ստացական, որոշեալ, ա-*

⁷ Զահուկեան, *ժամանակակից հայերէնի*, էջ 208-13:

⁸ *ժամանակակից հայոց լեզու. ձեւաբանութիւն, հրդ. 2*, Երեւանի համալսարանի հրատ., Երեւան, 1974, էջ 106-22:

⁹ Մ. Ասատրեան, *ժամանակակից հայոց լեզու. ձեւաբանութիւն*, Երեւանի համալսարանի հրատ., Երեւան, 1983, էջ 96-110:

նորոշ¹⁰: Այս բաժանման մէջ, սակայն, կարծում ենք, կայ կառուցուածքային եւ բովանդակային որոշ անհամապատասխանութիւն: Եթէ Պետրոսեանը **անառկայացում** եզրը գործածում է **անորոշ առման** վերաբերեալ, ապա դրանով նա այդ առումը հակադրում է միւս բոլորին՝ միասին վերցրած, որոնք այս տրամաբանութեամբ պէտք է հակադրուէին վերջինիս՝ որպէս **առկայացման կարգի** դրսեւորումներ: Մինչդեռ անորոշ առումը **նախ**՝ ձեւային (**զրօ** կամ **մի** յօդ) եւ բովանդակային (առկայացման բացակայութիւնը՝ չառկայացումը) հակադրութիւն ունի միւս բոլոր առումների հետ առանձին-առանձին: Բացի այդ, առկայացման բացակայութիւնը կամ չառկայացումը նոյնպէս տարրորշման, այսինքն՝ առկայացման դրսեւորում է եւ պէտք է հակադրուի միւսներին «հաւասարի իրաւունքով»: Ինքը՝ հեղինակը, **անորոշի** եւ **որոշեալի կարգը** համարում է «**առկայացման** կարգի ամենաբնորոշ իմաստաւորումները» (*ընդգծումը - Եռ. Ա.*): Հետեւապէս այս դէպքում միանգամայն աւելորդ է դառնում **անառկայացում** եզրի ներմուծումը՝ որպէս անորոշ առման անուանում: Եւ պատահական չէ, որ հեղինակը այդ իւրօրինակ եզրը գործածում է միայն մէկ անգամ, այն էլ բառայօրուածը անուանելիս: Այսպիսով, կարծում ենք՝ ե՛ւ կառուցուածքային, ե՛ւ բովանդակային առումներով առաւել համոզիչ է **առկայացում (առկայացման կարգ)** եզրի գործածութիւնը, որը իր մէջ առնում է երկու առումները կամ ենթակարգերը:

Հայոց լեզուի ակադեմիական հրատարակութեան հեղինակները որոշեալութիւնը վերագրում են յօդերի բոլոր տեսակներին. «*Կարելի է նաեւ այդ կարգի ընդհանուր իմաստը համարել որոշեալութիւնը, - կարդում ենք գրքում, - քանի որ **ս, դ** յօդերն իրենց արտայայտած ստացականութեամբ, ցուցականութեամբ, դիմորոշութեամբ որոշեալութիւն են հաղորդում բառին, իսկ **ը(ն)** յօդի որոշեալութիւնն ինքնին հասկանալի է»¹¹: Միանգամայն համոզիչ համարելով այս դիտարկումը՝ յաւելենք միայն, որ առկայացման կարգի իմաստային դաշտը, ըստ էութեան, չի սահմանափակուում միայն որոշեալութեամբ: Այն ներառում է նաեւ անորոշութիւնը, որը իր ե՛ւ իմաստային իւրայատկութեամբ (ցոյց է տալիս տարրորոշուած յարաբերութեան բացակայութիւնը՝ չառկայացումը), ե՛ւ արտայայտութեան ձեւով (**զրօ ձեւ** կամ **մի** անորոշ յօդ) ըստ էութեան հակադրում է որոշեալութեանը: Ունենք քերականական ձեւի եւ քերականական իմաստի յստակ արտայայտուած հակադրութեամբ երկու եզր, այնպէս, ինչպէս թուի քերականական կարգում՝ եզակիի եւ յօգնակիի հակադրութիւնը: Դա հիմք է տալիս առկայացման քերականական կարգում առանձնացնելու երկու ենթակարգեր՝ **որոշեալութեան ենթակարգ** եւ **անորոշութեան ենթակարգ**. դրանցից իւրաքանչիւրը*

¹⁰ Հ. Պետրոսեան, *Հայերէնագիտական բառարան*, «Հայաստան» հրատ., Երեւան, 1987, էջ 50-56:

¹¹ *Ժամանակակից հայոց լեզու. ձեւաբանութիւն, հրք. 2*, էջ 106-7:

քերականական նոյն կարգի կառուցուածքային դրսեւորումներից է: Մենք առաջարկում ենք առաջնորդուել առկայացման կարգի ըմբռնման եւ նկարագրութեան այս սկզբունքով:

1. ՈՐՈՇԵԱԼՈՒԹԵԱՆ ԵՆԹԱԿԱՐԳ: Իրենց դերանուանական նշանակութեամբ պայմանաւորուած՝ յօդերը տարրորշուած առարկան ցոյց են տալիս տարբեր կերպ, հետեւապէս բաժանուում են տարբեր խմբերի՝ **ստացական, ցուցական, դիմորոշ, որոշիչ:**

Ստացական յօդ: Ստացականութեան նշանակութեամբ ժամանակակից հայերէնում կարող են գործածուել **ս** եւ **դ** յօդերը: Դրուելով գոյականի կամ այլ խօսքի մասի վրայ՝ ցոյց են տալիս առաջին կամ երկրորդ դէմքի պատկանելութիւն (խօսքս, տունս, գործերդ, ասածներդ): Երկրորդաբար արտայայտում են նաեւ որոշեալ առման իմաստ. **գլխարկս** նշանակում է *իմ գլխարկը*, **գլխարկդ՝ քո գլխարկը**. ստացական յօդ կրող բառը որոշարկուած է, որոշեալ է:

Ստացական յօդերը կարող են փոխարինել ստացական համարուող դերանուններին՝ **հարցս-իմ հարցը, հարցդ-քո հարցը**: Սրանք հոմանիշ քերականական ձեւեր են. ստացական դերանունը ընդգծում է առարկայի պատկանելութիւնը: Գրական արեւելահայերէնում ընդունելի է կա՛մ յօդով, կա՛մ դերանունով տարբերակը. կրկնակի ստացականութիւնը (իմ հարցս, քո գիրքդ) գրական արեւելահայերէնին յատուկ չէ:

Արեւմտահայերէնում ընդունուում է նաեւ կրկնակի ստացական կազմութիւնը, ինչպէս՝ «Ափ մը մոխի՛ր, աճիւնիս հետ, Հայրենի տուն Ափ մը մոխի՛ր **քու մոխիքդ** ո՛վ պիտի բերէ, **Քու յիշատակէ՛դ, քու ցաւէ՛դ, քու անցեալէ՛դ**, Ափ մը մոխի՛ր...**իմ սրտիս** վրան ցանելու...» (Սիւսանթօ), «Իսկ ես կանգնած Սրտատրուփ՝ **Քու նայուածքիդ** կը սպասէի» (Ա. Նազգաշեան): Արեւմտահայերէնում կանոնական է համարում նաեւ ստացական դերանունան հետ կապի՝ յօդով գործածութիւնը. «Ուրախ եմ, որ ինձի Հայաստանով մեծցուցիք, հպարտ եմ, որ արմատներըս ճիւղաւորուած են **իմ մէջս**» (Ա. Նազգաշեան), «Ոչ, դուն **իմ մասիս** մի՛ մտածեր» (Վ. Աւագեան), «Ինչքանով յանձնուիս անոր, **քու վրադ** իշխանութիւն կը ստանայ» («Ժամանակ»): Այս կազմութիւնը գալիս է գրաբարից («Ի **մարմինդ քո** բուսցի փուշ եւ տատասկ» (Փաւստոս Բուզանդ)) եւ լայն տարածում ունէր նաեւ միջին հայերէնում («**Աչերս իմ** սակաւ հայի») (Ֆրիկ), «Հիանդ եմ **քո սիրուդ, Քո մէջքդ** է քան զուր բարակ, **քո ծըծերդ** ի մէջ բարունակ» (Քուլակ), «**Շրթունքդ է քո լար**», «**Քո մէջքդ** է բարակ» (Աղթամարցի)), որը գործածուում էր միւս ձեւերին՝ միայն ստացական յօդով («**Աչօքդ, ունովդ** անես, զիմ տխմար խելքս կու տանիս» (Քուլակ)) եւ կամ միայն դերանունով («...նա **իր** յերկարութենովս զսրտինկու հասցնէ» (Ասար Սեբաստացի), «Հարք եւ եղբարք **իմ** պատուական» (Մինաս Թոխաթեցի)) կազմութիւններին զուգահեռ: Հետեւաբար՝ ե՛ւ գրաբարում, ե՛ւ միջին հայերէնում սովորական էին ստացական յօդով, ստացական դերանունով եւ կրկնակի ստացականով կազմութիւնները:

րը: Բոլոր այդ երեք ձեւերն էլ անցան արեւմտայերէնին, իսկ արեւելահայ գրականին՝ միայն առաջին երկուսը:

Երկու գրականներում էլ ստացական յօդ կարող են ստանալ՝

ա) բոլոր այն գոյականները (յատուկ թէ հասարակ, եզակի թէ յոգնակի՝ անկախ հոլովից), որոնց ցոյց տուած առարկան կարող է պատկանել մէկին (իմ գիրքը, քո տետրը, մեր տունը), իսկ, օրինակ, **արեւ, լուսին, երկրագունդ, մոլորակ** եւ նման գոյականները, որոնց անուանած առարկաները չեն կարող պատկանել մէկին, ստացական յօդ կարող են ստանալ փոխաբերական իմաստով գործածուելիս գեղարուեստական գրականութեան մէջ, դարձուածքներում եւ այլուր (**արեւ** խաւարեց, ապրի **արեւոյ**, դաւանանքս անսահման է, որքան **տիեզերքս**),

բ) փոխանուն ածականները (**Փոքրոյ** որտե՞ղ է սովորում, **Մեծովս** կը հպարտանամ), թուականները (**Յիսուս** արդեն լրացել է, **Երկուքոյ** ալ պիտի երթաք),

գ) անորոշ, յարակատար, ենթակայական դերբայները (Պիտի փոփոխե՛ս **մարդասիրելոյ**, **Չիմացածոյ** բաներից մի՛ խօսիր, **Ընթերցողոյ** սպասում է քո յաջորդ գրքին, **Գիտցածոյ** բաւարար չէ),

դ) մի շարք դերանուններ (**Ի՞նչոյ** է ցաւում, **Ո՞րտեղոյ** մնասուեց, **Ոչնչովոյ** մի՛ հպարտացիր, **Ամէն ինչիցոյ** մի քիչ բեր, Այս յաղթանակը **ո՞րերորդոյ** է: **Ոչ մէկուոյ** կը վստահեմ),

ե) մի քանի կապեր (**Հետոյ** կը գամ, **Վրադ** ասք կայ, **Մօ՛տս** նստիր, **Մէջս** հաւատ չի մնացել, **Դէ՛մդ** նայիր, **Քովս** եկուր),

զ) ինքնանուանողաբար գործածուող իրաքանչիւր լեզուական միաւոր (Եթէներ-**դ** թո՛ղ, միացի՛ր մեր թիմին, Այդ ինչու-**դ** մտահոգիչ է, Այդ X-**դ** ի՞նչ կը նշանակէ, Ոչ-**ս** չի նշանակում, որ ամէն ինչ բացառում եմ):

Յարադիր բարդութիւնները սովորաբար յօդն ընդունում են երկրորդ բաղադրիչի վրայ՝ *տուն ու տեղս, ազգ ու տակոյ, քիթ ու բերանդ, մէկն ու մէկդ, ձեռ ու ոտս, ուշք ու միտքդ*:

Ոմանք ստացականութեան իմաստ են տեսնում նաեւ **ն/ը** յօդի մէջ, բայց դա, մեր կարծիքով, այդ յօդի համար տիպական չէ, քանի որ վերջինս այդ իմաստը դրսեւորում է կա՛մ միայն ձեւերի հակադրութեան մէջ՝ *գիրքս (իմ գիրքը)/գիրքդ (քո գիրքը)/գիրքը (նրա գիրքը)*, կա՛մ երբ դրում է այնպիսի գոյականների վրայ, որոնք արտայայտում են մասի եւ ամբողջի յարաբերութիւն (Տուն է վերադառնում. **գործը** (=իր գործը) ասարտեց) կամ անկախ յօդից՝ ինքնին ստացական իմաստ ունեն. նրանց նշանակած առարկաները կամ անձերը իրականութեան մէջ ունեն իրենց կրողը, պատկանում են ինչ-որ մէկին (Վրդովուեց, **ձեռքը** խփեց սեղանին, Նա **նոտքը** վնասել է, Ճանաչում եմ նրան. **հայրը** մեզ մօտ է աշխատում): Դրանցում «**ը/ն** յօդն ունեցող բաների ստացական իմաստը չի բխում յօդից. դա բանի ներքին ստացա-

կան իմաստը է, որի երրորդ դեմքի վրայ որոշակիացումը տրամաբանօրէն բխում է տեքստից՝ պայմանաւորուած **ս, դ** յօդերի բացակայութեամբ»¹²:

Յոգնակի ստացականութիւնը կազմում է **ս, դ** յօդերով եւ **ն** մասնիկով: Արեւելահայերէնում ունի կազմութեան հետեւեալ իւրայատկութիւնները. Յոգնակի ստացական են կազմում ա) գերազանցապէս միավանկ գոյականները (բացի գրաբարեան **ն** վերջնամասնիկ ունեցող գոյականներից)՝ **աչք-ներ-ս** լոյս, **ծեռք-ներ-ս** չի բռնում, **խօսք-ներ-դ** մէկ էք արել, բ) անորոշ, երբեմն էլ յարակատար դերբայը՝ **խօսել-ներ-դ** դադարեցրէք, **ասած-ներ-ս** կը յիշես, **պատմած-ներ-դ** չեմ մոռանայ, գ) նաեւ այն գոյականները, որոնք ցոյց են տալիս այնպիսի առարկայ, որից մարդը մէկ հատ ունի տուեալ դէպքում կամ սովորաբար մէկն է ունենում՝ **գլուխ-ներ-դ** բարձր պահէք, **լեզու-ներ-դ** ձե՛զ քաշէք, **անուն-ներ-դ** չլսեմ, **բերան-ներ-դ** փակ կը պահէք:

Հարցը ուսումնասիրողներից Դաւիթ Գիլգատեանը քերականական այս փաստը հակուած է համարելու գրական հայերէնի եզակիութեան դասի մէջ ստեղծուած թուի մասնաւոր իմաստային-քերականական դրսեւորում, որը անուանում է **առանձնական եզակիութեան քերականական իմաստ**, իսկ այդ իմաստն ունեցող համապատասխան ձեւը՝ **առանձնական եզակի թիւ**՝ որպէս եզակի թուի տարբերակ: Նա ելնում քերականական այդ ձեւի հետեւեալ ոչ կանոնական ինքնատիպ յատկանիշերից՝ **ա.** հնչիւնափոխութեան ենթակայ հնչիւն(ներ)ի անհնչիւնափոխ գործածութիւն (սիրտներս, տուններդ, դուռներդ, միտքներս), **բ.** ստացական յօդի առկայութիւն, **գ.** միավանկ բառերի համար անսովոր **ներ** յոգնակերտ ստանալը, **դ.** բառածեփ՝ ենթակայի պաշտօնում բայ-ստորոգեալի հետ եզակի թուով համաձայնելը («տուններիդ **շինուի**», «սիրտներս նեղուած **է**», «գիրքներս **մնաց** լսարանում»)՝¹³:

Մենք գործածել ենք **յոգնակի ստացականութիւն** (ստացական յոգնակի) եզրոյթը՝ հաշուի առնելով քերականական այդ իրականութեան ձեւաւորումը (կազմում է **ներով**), յոգնակիութեան իմաստը՝ **ստաց.+յոգն. (սիրտներս - մեր սիրտը/մեր սրտերը, խօսքներդ - ձեր խօսքը/ձեր խօսքերը, գլուխներս - մեր գլուխները)** եւ իհարկէ ամանդոյթը¹⁴:

Յոգնակի ստացականութիւնը շատ տարածուած է արեւմտահայերէնում եւ կազմութեան մէջ ըստ էութեան որեւէ սահմանափակում չունի. արեւմտահայերէնում ստացական յոգնակիի ձեւեր կարող են ունենալ ե՛ւ միավանկ, ե՛ւ բազմավանկ բառերը: Տարբեր է նաեւ կազմութեան սկզբունքը. **«Մեր, ձեր, իրենց ստացական դերանուններուն փոխարէն (մեր տունը,**

¹² Ժամանակակից հայոց լեզու. ձեւաբանութիւն, հրր. 2, էջ 115:

¹³ Դ. Գիլգատեան, Գրական արեւելահայերէնի քերականութեան հիմունքներ, Գլոբալ համալսարանի հրատ., Երեւան, 2016, էջ 63-64:

¹⁴ Ժամանակակից հայոց լեզու. ձեւաբանութիւն, հրր. 2, էջ 118-19:

ծեր տունը, իրենց տունը) գոյականը ստացական կ'ըլլայ **նիս, նիդ, նին** մասնիկներով,- գրում է Չոլաքեանը,- որոնք կրնան հոլովուիլ հետեւեալ կերպ՝ պարտէզնիս, պարտէզնուս, պարտէզնէս, պարտէզնովս. կրկնակ յոգնակներ՝ պարտէզներնիս, պարտէզներնուս, պարտէզներնէս, պարտէզներնովս: Նոյն յարացոյցով նաեւ **նիդ եւ նին**: Այդընեան լաւ կը համարէ կրկնակի յոգնակներու փոխարէն ըսել մեր պարտէզները, ձեր պարտէզները, իրենց պարտէզները: Միավանկ բառերու պարագային գոյականը կը դրուի միշտ յոգնակի, թէեւ թէ՛ եզակի եւ թէ՛ յոգնակի իմաստ կ'արտայայտէ՝ հայրերնիս, հայրերնուս, հայրերնէս, գործիականը ունի այլ կառոյց՝ հայրերովս»¹⁵: Այս ձեւերը, ինչպէս ասուեց, յաճախակի գործածութիւն ունեն նաեւ արդի գրական արեւմտահայերէնում, ինչպէս՝ «Ո՛վ լեռներ, **գլուխնիդ** բարձր բռնեցէք, Լիճե՛ր, գեղեցկագոյն մեղեդիներ հնչեցուցէ՛ք» (Վեհ. Թեքեան), «Որքան ալ **գլուխներնիդ** զարնէք պատեպատ, Վիճակուած է բոլորիդ ընդգրկումն անխուսափելի» (Վարան), «Քաշուեցանք ճամբուն մէկ կողմը, **վիզերնիս** ծոած, **աչքերնիս՝** գեպին՝ ինչպէս գիւղին բոլոր անհամարձակ պզգրիկները» (Չոլաքեան), «Կեանքի կորուստներ, **տուններնիս-տեղերնին** ձգած մարդիկ...» (Անուշ Նազգաշեան):

ՅՈՒՑԱԿԱՆ ՅՕԴ

Ժամանակակից հայերէնում ցուցականութեան իմաստ ունի **ս** յօդը: Գործածուած է **այս** դերանունան նշանակութեամբ. ցոյց է տալիս ժամանակի կամ որեւէ բանի մօտ՝ մերձ լինելը խօսողին: Գրաբարում յօդային առումների մէջ գերակշռող է եղել ցուցականութիւնը՝ **եկեղեցիս-այս եկեղեցին, եկեղեցիդ-այդ եկեղեցին, եկեղեցին-այն եկեղեցին**: Միջին հայերէնի նոյնիսկ ուշ շրջանում պահպանուած է այդ յօդերի ցուցական նշանակութիւնը. յօդերի հետ միաժամանակ գործածուած են նաեւ համապատասխան դերանունները, ինչպէս գրաբարում էր («Աստուած երբ գաշխարի**ս** արար» (Քուրան), «Եւ այնպէս հատնի **այդ** տաքութիւն**դ**, որպէս եւ ճրագին եղն հատնի», «**այս** աշխատանագ**ս** պակսելուն», «Եւ **այս** պատճառի**ս** համար մարդն հանապազկենդանի չի մնալ եւ **այս** մահու**ս** բժշկապետքն բնութեան մահու ասեն» (Ասար Սեբաստացի))¹⁶: Աւելի ուշ արդէն՝ վաղ աշխարհաբարի շրջանում, ցուցականութիւնը սահմանափակուած է գրեթէ միայն **ս** յօդի կիրառութիւններում:

Ժամանակակից հայերէնում ցուցական յօդ ստանում են հիմնականում ժամանականիշ գոյականները՝ **օր, գիշեր, վայրկեան, դար, ժամ, ժամանակ, ամառ, ձմեռ**, ինչպէս նաեւ **մարդ, աշխարհ, վերջին, տեղ, քաղաք** եւ նման մի շարք բառեր. **Ձմեռս մեկնելու ենք Եգիպտոս: Վերջերս նա քիչ**

¹⁵ Չոլաքեան, *Գործնական արեւմտահայերէն*, 2018, էջ 31:

¹⁶ *Միջին հայերէնի ուղեցոյց-քրեստոմափիա*, Երեւանի համալսարանի հրատ., Երեւան, 2019, էջ 201-318:

է այցելում ծնողներին: Տեսայ հնազգեպին եւ նկարչին. **վերջինս** շատ յուզուած էր: **Մարդս** երկու անգամ է մեռնում կեանքում. մէկ՝ երբ ֆիզիկապէս է մեռնում, մէկ էլ՝ երբ դադարում են նրան յիշել: **Տեղիս** բնակչութիւնը գնալով նուազում է: Մենք **բառիս** բուն իմաստով առիծի նման զինուորներ ունենք: **Օրերս** հանդիպեցանք: **Ամառս** զուր պիտի անցնի:

Յուցական յօդի եւ ցուցական դերանունան համատեղ գործածութիւնը (**Այս վերջերս** շատ քիչ եմ քեզ տեսնում) յանձնարարելի չէ:

Ս յօդի իմաստը ակնյայտօրէն խամրել է, այդ պատճառով էլ խօսքից դուրս շփոթում է ստացական յօդի հետ: Օրինակ՝ «Հոգեկան **աշխարհս** տակնուվրայ է լինում»: =Իմ հոգեկան աշխարհը: / «**Աշխարհս** մէ փանջարայ է»: =Այս աշխարհը: Բայց՝ «**Օրս** (=իմ օրը/այս օրը) լիքն է տագնապներով»:

ԴԻՄՈՐՈՇ ՅՕԴ

Ձեւաւորում է **ս, դ** յօդերով: Դրուելով գոյականների վրայ՝ դրանք արտայայտում են Ա. կամ Բ. դէմքի քերականական իմաստ: **Ս** յօդը ցոյց է տալիս խօսողի, իսկ **դ** յօդը՝ խօսակցի դիրքում գիտակցուող կամ գտնուող առարկայ: Այս յօդերի դիմային նշանակութիւնը նկատելի աւելացաւ ուշ միջին հայերէնում («Վախեմ՝ սիրոյ տէր լինիս, լուս պակա՛ս տաս **աստընուորիս**». Քուչակ, «Երբ որ եփէք զհերիսան Հայր մեր յերկինս ով որ ասէ ինձ **դարիպիս** կեր տաք արժան...») (Մինաս Թոխաթեցի)¹⁷:

Պէտք է ասել, որ արդի հայերէնում սրանց դիմային նշանակութիւնը թուլացել է, քանի որ յաճախ այդ նշանակութիւնը ընդգծելու համար գործածում ենք համապատասխան դերանունների հետ՝ *ուսանողս>ես՝ ուսանողս, ուսանողդ>դու՝ ուսանողդ*:

Դրում են՝

* անձնանիշ կամ իբրեւ անձ վերցուած գոյականների եւ անձ ցոյց տուող միքանի դերանունների վրայ (Եւ մի՛ ընդհարուիր, տէ՛ր, այդքան խստութեամբ՝ Մեծդ փոքրիս հետ, **լոյսդ՝ ստուերիս**, Տէրերի **տէրդ՝** երկրային **տիրմիս**, Մենք **ամէնքս** հիւր ենք կեանքում, **Մէկդ** չմտաճողուց, **Ոչ մէկիդ** չեմ ուզում տեսնել),

* ենթակայական եւ յարակատար դերբայների վրայ (Մեղայ ոչնչից կեանք **ստեղծողիդ**, ստուգիւ մեղայ, Մի՛ գանահարիր արդէն **ընկածիս**, մեղաւոր եմ ես),

* յատկանիշ ցոյց տուող բառերի (ածական, դերանուն եւն.) վրայ (Մեղայ **պարտականս** անկենդան մահուան, **ծաղրելիս** մեղայ, Մեղայ ես **մեծիդ**, Ընդունիր դու այս փոքրը **տկարիցս** եւ շնորհիր մեծը **հզօրիդ** կողմից, Մեղայ **անպատկառս՝** բարձրութեանդ հանդէպ, **տաղտկալիս** մեղայ, Եւ նոյն բարբառով կը ցնծանք **բոլորս**):

¹⁷ Նոյն, էջ 285, 318:

Դիմորոշ յօդը երբեմն շփոթում է ստացական յօդի հետ: Երբեմն շարայարութիւնից դուրս առանձին նախադասութեան մէջ նոյնիսկ հնարաւոր չի լինում որոշել՝ դիմորոշութեա՞ն հետ գործ ունենք, թե՛ ստացականութեան, ինչպէս, օրինակ՝ **Շինարարներիդ լաւ աշխատանքի մասին յաճախ եմ լսել, Հաւաքի մասնակիցները արագ շրջապատեցին աշխատակիցներին**: Անորոշութիւնից խուսափելու համար այսպիսի դէպքերում պէտք է գործածել համապատասխան դերանունը՝ **Ձեր՝ շինարարներիդ** (*//Քո շինարարների*) լաւ աշխատանքի մասին յաճախ եմ լսել, Հաւաքի մասնակիցները արագ շրջապատեցին **մեզ՝ աշխատակիցներին** (*//մեր աշխատակիցներին*): Երբ դիմորոշ յօդ ունեցող բառը նախադասութեան մէջ կատարում է ենթակայի պաշտօն, ապա նրա դիմորոշ լինելը հասկացում է ստորոգեալի դէմքով՝ **Ուսուցիչս պարտաւոր էի դա անել** (դիմորոշ յօդ) / **Ուսուցիչս պարտաւոր էր դա անել** (ստացական յօդ):

Դիմորոշ յօդի գործածութիւնը յատուկ է բարձր ոճին. խօսքին հաղորդում է պաշտօնականութիւն, որոշ վերամբարձութիւն, հանդիսաւորութիւն, նաեւ բանաստեղծականութիւն: Դա ամէլի է ընդգծում, երբ գործածում է միայն դիմորոշ յօդը՝ առանց համապատասխան դերանունի: Խօսքին վերամբարձութիւն է հաղորդում նաեւ **դ** յօդով կոչականի գործածութիւնը՝ գրաբարի ազդեցութեամբ՝ **Սիրելի՛դ իմ, դու մաքուր ես որպէս արեգակը, Աստուած անքնին, Ամենակարո՛ղդ, ամէնքի համար եւ ամէն բանում բովանդակապէս**:

ՈՐՈՇԻՉ ՅՕԴ

Որոշեալութեան քերականական իմաստն արտայայտում է **ը** եւ **ն** յօդերով, որոնք, դրուելով գոյականի կամ գոյականաբար առնուած բառի վրայ, ցոյց են տալիս առարկայի որոշակի, յայտնի, ծանօթ լինելը հաղորդակցողներին: Ծագումնաբանօրէն **ըն** յաջորդում է **ն**ին: Ըն առաջացել է վերջնայանգում գաղտնավանկ **ըի** զարգացումով («Կոել, կոփել **զդուռ(ըն)** Երուանդայ արքայի») «Հայերէնի մէջ,- գրում է Աճառեանը,- **ըն** յանգով բառերն անշեշտ հնչման պատճառով կորցնում են իրենց վերջին (**ն**) ձայնը, այսպէս՝ ձուկն>ձուկը>ձուկ, եօթն>եօթը>եօթ: Սրա համեմատ էլ բաղաձայնայանգ բառերը իրենց ձայրի որոշիչ **ն** յօդը դարձրին (**ը**)»¹⁸:

Կարծիք կայ, որ «**ն** որոշեալ յօդի... ձեւաբանական տարբերակը՝ **ը** յօդը», **ն**ի հետ միասին գործածուել է «միջին հայերէնի կազմաւորման շրջանում»¹⁹, ասել է թե՛ առնուազն 12րդ դարից սկսած: Բայց մեր դիտարկումները ցոյց են տալիս, որ այս պնդումը այնքան էլ հիմնաւոր չէ: Կարծիքը պաշտպանողների բերած բնագրային օրինակներում անգամ այդ միտքը

¹⁸ Աճառեան, *Լիակատար քերականութիւն հայոց լեզուի, հրդ. II*, էջ 987:

¹⁹ Միջին հայերէնի ուղեցոյց-քրեստոմափիա, էջ 92-93:

հաստատող փաստեր չեն արձանագրում²⁰: Ըստ այդ բնագրերի լեզուական նիւթի՝ «**ըն** յանգով բառեր»ը գրութեամբ արտացոլուած են ոչ թէ միջին հայերէնի «կազմաւորման շրջանի», այլ ուշ միջնադարի՝ 16րդ դարի հեղինակների, մասնաւորապէս՝ Նահապետ Քուչակի տաղերում (զլարիպին *ղափրըն* գիտենաս, *Ըզբարըն* սնարք առնես, *Ջաղեկըն* այլ գիրկս առնեմ, Ծոցուդ *լոյսըն* դուրս ծագէ, որ *գեփինըն* կուտ չուտէի, *Մարիկըն* վաղուց մեռել²¹), որը վկայում է քերականական այս իրողութեան՝ ուշ միջնադարի մատենագրութեան մէջ առաջ գալու մասին: Իսկ ինչ վերաբերում է **ը** յօդի՝ որպէս առանձին քերականական ցուցիչի գործածութեանը, ապա դա ակնյայտօրէն աւելի նոր ժամանակների երեւոյթ է, որի մասին խօսուում է նաեւ մասնագիտական այլ աղբիւրներում. «*Միջին հայերէնում ն որոշիչ յօդը*, - կարդում ենք Զահուկեանի խմբագրած աշխատութիւններից մէկում, - *չունի իր դիրքային տարբերակը՝ ը, որ աւելի նոր ժամանակների ծնունդ է եւ զարգացել է միայն աշխարհաբարում՝ հնչիւնական որոշ օրէնքների գործողութեան հետեւանքով*»²²:

Գրաբարում առման ցուցիչ էր նաեւ **զ** նախդիրը: Կիրառման ոլորտը շատ սահմանափակ էր. գործածուում էր միայն որոշեալ հայցականի դէպքում՝ որպէս նախդիր («*երբեմնի [Ձ] նախդրի ձեւաբանական ուրոյն գուգորդման հետեւանք էր*»): Անորոշ առման դէպքում գրաբարի հայցական հոլովը **զ** նախդիր չէր առնում, ինչը վկայում է, որ այն որոշեալ առման ցուցիչ է: Սակայն երբ **ն** յօդը ընդլայնեց իր գործածութեան ոլորտը եւ առման ցուցիչ դարձաւ նաեւ հայցականում, **զն** կալմաց-կամաց զիջեց իր դիրքերը: Դեռեւս գրաբարում որոշեալ հայցականում **զ** յօդը սկսում է ընկնել²³: Այն գրաբարից անցել է նաեւ միջին հայերէնին եւ կենսունակ էր միջին հայերէնի նաեւ ուշ շրջանում: **Ձ** նախդիր/յօդը պահպանուել է նաեւ **կը** ճիւղի միջանի բարբառներում՝ Մշոյ, Տիգրանակերտի եւն.: Փոխանցուել է նաեւ արեւմտահայերէնին եւ մասամբ գործածական էր արեւմտահայերէնի գրականացման շրջանում, բայց յետագայում դադարեց որոշեալ առման ցուցիչ լինելուց եւ հանդիպում է առանձին դերանունների գրաբարեան եւ գրաբարածէ կազմութիւններում՝ **զոր**, **զով**, **զինք(ը)**, **զայն**, **զիս**, երբեմն՝ քարացած գրաբարածեւերում՝ **զոր օրինակ**: 20րդ դարի սկզբներին եւ նոյնիսկ փոքր-ինչ աւելի ուշ արեւմտահայերէնում լայն կիսաութիւն ունէին **մենք**, **դուն**, **դուք**, **այս**, **այդ**, դերանունների գրաբարածէ հայցականները՝ **զմեզ**, **զքեզ**, **զձեզ**, **զայս**, **զայդ**: Այդ ձեւերը քիչ բացառութիւններով յետագայում դուրս մղուեցին գրական լեզուից: Այս միտումը նկատի ունէր Աճառեանը,

²⁰ Նոյն, էջ 201-82:

²¹ Նոյն, էջ 282-91:

²² *Ակնարկներ միջին գրական հայերէնի պատմութեան, հիւր. Բ.*, խմբ.՝ Գ. Զահուկեան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ7, Երեւան, 1975, էջ 79:

²³ Հ. Պետրոսեան, *Ակնարկներ հայերէնի պատմական ձեւաբանութեան*, «Հայաստան» հրատ., Երեւան, 1976, էջ 17-18:

երբ տակաւին անցեալ դարի քառասունականներին գրում էր, որ նշուած դերանունների գրաբարեան զուգածեւերը հնացած են եւ «կէս դար առաջ» միայն «գրաբարեան հեղինակներ»ի կողմից օգտագործուող²⁴:

Իմաստային տարբերութիւններ չունեն **ըն** եւ **նն**. նոյն յօդի դիրքային տարբերակներ են. ձայնաւորով վերջացողները ստանում են **ն** յօդը (Մեր **ուղին** անյայտ է), բաղաձայնով վերջացողները՝ **ը** (**Գարունը** այնքա՛ն ծաղիկ է վառել, **Արամը** ընկերս է): Եթէ յաջորդող բառը սկսուած է ձայնաւորով, բառը կարող է ստանալ **ն** յօդը (**խօսքերն** անգոր են այդ մեծ վիշտը փարատելու համար, Քանի իմ **հողն** ինձ չէք տուել, Ձեզ ելուզակ պիտի ասեմ):

Արեւմտահայ դասական գրականութեան մէջ լեզուի նորմաւորման շրջանում **հ**, **յ** հնչիւններով, իսկ երբեմն նաեւ բաղաձայնով սկսուող բառերից առաջ **ն** յօդի գործածութիւնը սովորական էր, ինչպէս՝ «Ձոր կը տանէր մօրն՝ վարդին հետ իր շրթանց», «Երգեց գարունն հասակին...» (Դ. Վարուժան), «Յոյզով մ'անհուն, անպատմելի Գրած տողերն քառեակին» (Մ. Մեծարենց): **Ն** յօդի այսպիսի կիրառութիւնները յետագայում դուրս մղուեցին գրական լեզուից:

Ձայնաւորով սկսուող բառից առաջ **ը** կամ **ն** յօդի գործածութիւնը ունի ոճական-արտայայտչական արժէք: **Ը**ի գործածութիւնը ենթադրում է արտասանական որոշակի դադար, որը իր հերթին շեշտում է յօդով միաւորի արտասանական-իմաստային ինքնուրոյնութիւնը եւ կարեւորութիւնը (Այդ **հարցը** այսօրուան նիստի քննարկման առարկայ մի՛ դարձրէք): Նոյն դիրքում **ն**ի գործածութիւնը ենթադրում է խօսքի աւելի արագ տեմպ (Այդ **հարցն** այսօրուայ նիստի քննարկման առարկայ մի՛ դարձրէք): Դրանցից մէկը կամ միւրը գեղարուեստական տեքստում գործածուած է նաեւ խօսքի կշռոյթը պահպանելու համար. հմմտ.՝ **Կուժն առայ** (*//Կուժը առայ*) ելայ, գնացի սարը, Ճամփին ինձ հանդիպեց իմ ֆիդան եսարը, Փղոսկրէ անիւներով Հեռանում է **բախտն** (*//բախտը*) օրէցօր, Մթնում է **դէմքն** (*//դէմքը*) արեգակի, Խամրում է **հաւը** ոսկեցու:

Որոշիչ յօդ են առնում ոչ միայն գոյականները, այլեւ առարկայի յատկանիշ ցոյց տուող բոլոր այն բառերը, որոնք գործածուած են գոյականաբար, ինչպէս՝ *մեծը, մեծերը, հաճելին, բարին, տասնհինգը, երրորդը, խօսելը, նստածը, արտագրողը, բոլորը, այդքանը, որը* են.:

Ժամանակակից գրական արեւելահայերէնում որոշիչ յօդ չեն ստանում սեռական-տրականով յատկացուցիչը (գրքի էջը, վարդերի բոլորը) եւ որոշիչը (սարի ծաղիկ, խմելու ջուր), բացառական, գործիական, ներգոյական հոլովները. **քաղաքիցը, քաղաքովը, քաղաքումը** բարբառային ձեւեր են:

Ինչպէս նկատուել է լեզուաբանութեան մէջ, ժամանակակից հայերէնում որոշիչ յօդի գործածութիւնը ունի որոշակի առանձնապատկութիւններ.

²⁴ Աճառեան, *Լիակատար քերականութիւն հայոց լեզուի*, հ. II, էջ 80:

1. Կարող է արտայայտել ոչ թե տուեալ որոշակի առարկան, այլ առարկայի հասկացական նշանակութիւնը. ցոյց է տալիս տուեալ հասկացութիւնն ընդհանրապէս (ինչպէս անորոշ առման դէպքում է)՝ **Մարդը մի քիչ պէտք է ամօթ ունենայ:**

2. Կարող է արտայայտել ոչ միայն իրականում ծանօթ, յայտնի առարկայ (անձ), այլ պարզապէս խօսքում նախապէս յիշատակուած առարկայ, մի առարկայ որը միջնորդաւորուած է յայտնի՝ խօսքով, արարքով, ինչ-որ յատկանիշով՝ **Նկարհչը ցուցադրեց իր նոր նկարներից մի քանիսը. վերջին նկարը մի առանձնայատուկ խորհուրդ ունէր:**

3. Յօդը կարող է փոխարինել գոյականին. դրուելով ոչ գոյական խօսքի մասերի վրայ՝ նրանց հաղորդում է գոյականի յատկանիշեր՝ **Բարին միայն հեքիաթներում է յաղթում:**

4. Առանձին դէպքերում, երբ դրում է յատկապէս նիւթ ցոյց տուող գոյականների վրայ՝ ցոյց է տալիս ծաւալային ամբողջութիւն, առարկան իր ամբողջ ծաւալով, հմմտ.՝ **Ալիւր թափուեց եւ Ալիւրը թափուեց, Գինի խմեց եւ Գինին խմեց:**

5. Կարող է փոխել դարձուածքի իմաստը. հմմտ.՝ **հացը կտրել (1. հիւրասիրուել, 2. զրկել)/հաց կտրել (հիւրասիրուել), աչքի ընկնել (առանձնանալ, աւելի փեսանելի դառնալ)/աչքին ընկնել (երեւալ), սիրտ առնել (համարձակուել)/սիրտը առնել (մխիթարել), անուն հանել (յայտնի դառնալ)/անունը հանել (անուանարկել):**

Որոշիչ յօդերի գործածութիւնը շատ հետաքրքիր առանձնայատկութիւններ ունի արեւմտահայերէնում: Հայերէնի դասական քերականութիւնը արձանագրում է, որ ենթակայի պաշտօնում արեւմտահայերէնի ուղղական-ենթական հանրածանօթ անձնանունների դէպքում սովորաբար յօդ չի ստանում («Ենթակայի պաշտօնով՝ պատմական կամ պաշտօնական անձերու յատուկ անունները յօդ չեն առներ»²⁵)՝ **Մաշտոց հայոց գիրերու ստեղծողն է, Հայկ հեռացաւ Բաբելոնէն (բայց՝ Հայկը իմ բարեկամս է):** Այս երեւոյթը արեւմտահայերէնին է անցել գրաբարից՝ գրաբար-միջին հայերէն-արեւմտահայերէն փոխանցմամբ: Արդի արեւմտահայերէնի լեզուական նիւթի ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս սակայն, որ սա օրինաչափական երեւոյթ չէ արեւմտահայերէնի համար: Յատուկ անձնանունների անյօդ գործածութիւնը խօսակցական լեզուի ազդեցութեամբ կարծես սկսում է նահանջել (օրինակ՝ «Հիմա պատկերացուցէք, **Սասունցի Դաւիթը** խեղճ պառաւի մը արտին մէջ լոր կ'որսայ, դուն դասարան նստեր ես» (Չղաքեան)): Այս երեւոյթը, սակայն, արեւմտահայ քերականագէտը ընդունելի սովորական չի համարում. «...Շատ սովորական է մեր թերթերուն մէջ հանդիպիլ սապիսի կիրարկութեան. «**Փութինը** Թրամփին առաջադրած է...», - սապէս

²⁵ Եղիայեան, էջ 721:

գրողը կարծես Պուրճ Համուտի փողոցներուն մէջ ամէն օր գնդիկ կը խաղայ Փուֆինին հետ, այնքան մտերմութիւն ու ջերմութիւն կը բուրէ ոճը»²⁶:

Երբ նոյն նախադասութեան մէջ առկայ է խնդրի պաշտօնով մէկ ուրիշ անձնանուն, ուղղական-ենթական կարող է յօդ չստանալ՝ «**Յակոբ(ը)** բանախօսութիւնս չհանեցաւ»:

Աշխարհագրական յատուկ անունները գործածուած են թէ՛ յօդով, թէ՛ առանց յօդի՝ «**Բարիզ** աշխարհի քաղաքն է, **Լոնտոն** աշխարհի ոստանն է» (Գ. Օտեան), «**Պոլիսը** ստեղծեց իր գրական աշխարհն ու յատուկ լեզուն» (Գ. Պըլտեան):

Արեւմտահայերէնում որոշիչ յօդ սկզբունքօրէն կարող են ստանալ հոլովական բոլոր ձեւերը՝ **պայտին ժամացոյցը** (յատկացուցիչ-յատկացեալ), **պայտի ժամացոյց** (որոշիչ-որոշեալ), **պայտի ժամացոյցը** (յատկացուցիչ-յատկացեալ/որոշիչ-որոշեալ), **Մանկիկը քեզի կը ժպտէր մօրը գիրկէն**, **Մարդս ինք միայն կրնայ շինել իր Աստուծուն նրկիրուած տաճարը**, **իր մէջքովը, իր ձեռքերովը, իր խելքովը**²⁷: Բնագրային այլ օրինակներ՝ «Մեղա՛յ Հայուն **Վատութեանը** համար, մեղա՛յ Հայուն **փերեզակութեանը** համար, մեղա՛յ Հայուն **կարճամտութեանը** համար» (Շ. Շահնուր), «Բայց շրթունքները կը պրկէ, ացքին **ծայրովը** ինծի կը նայի, յետոյ խմիչքին» (Ա. Արծրունի), «...քիմքի բուրմունք խլրտացող **հոտերովը** կեանքին» (Ս. Սանան): Այդպէս էր նաեւ միջին հայերէնում՝ «Քրիստոսի դատաստանին **արինակովն** պարտի թագաւորն **գիր** իրաւունքն տանել ըղորդ» (Սմբատ Սպարապետ, 13րդ դար), «Յէն քաղցրածայն գուսանուն **ն**, Ջբերանդ լիզել տաս շներուն **ն**» (Յովհաննէս Թլկուրանցի, 14-15րդ դարեր), «...նա տուն **ն** տաքնայ եւ իր նուրբ գոլոշով **ն** զտան **ն** զօր **ն** տաքցնէ, որ ամէն տուն **ն** տաք լինի», «...որ ի ծննդեն **ն** բերել կու սկսնու», «...տան զառոջութիւն զանծին **ն** օգնականութեամբ **ն** Ասուծոյ» (Ասար Սեբաստացի, 16րդ դար)²⁸:

Հայերէնի քերականութեան մէջ նշում է, որ արեւմտահայերէնում որոշիչ եւ յատկացուցիչ սեռականների համար յօդառութիւնը քերականական տարբերակիչ յատկանիշ է. յատկացուցիչ սեռականը պարտադիր յօդ է ստանում (ինքնաշարժներուն երթեւեկը, գիւղին ճամբաները, խրտուիլակները արտերուն). առանց յօդի գործածուելիս դառնում է որոշիչ (ինքնաշարժներու երթեւեկ, գիւղի ճամբաներ, խրտուիլակներ արտերու): Ըստ որում, ինչպէս ցոյց են տալիս օրինակները, յատկացուցիչ սեռականը պահանջում է որոշեալ առումով յատկացեալ: Այսօր այս երեւոյթը մասնակի փոփոխութեան է ենթարկուել. ինչպէս վկայում են բնագրային օրինակնե-

²⁶ Նոյն:

²⁷ Աւելի մանրամասն տե՛ս՝ Ե. Աւետիսեան, *Արեւելահայերէնի եւ արեւմտահայերէնի զուգարակական քերականութիւն*, «Ջանգակ» հրատ., Երեւան, 2007, էջ 48-53. նաեւ՝ Եղիայեան, էջ 721-23, 757-59:

²⁸ *Միջին հայերէնի ուղեցոյց-քրեսպոմապիա*, էջ 201-318:

րը, յատկացուցիչ սեռականի համար սովորական է նաեւ անյօդ գործածութիւնը, ինչպէս՝ «Ստիպուեցայ ճամբուս վրայ ցանցնել, **վերադարձի յոյսը** պահպանելով» (Մ. Երամեան), «Յատնաբերելու **սրբութիւններու** ծայրագոյն **միտոնը**» (Ս. Սանան), «Բայց կ'ըսեմ կարելոր բան մը, որ հայ մարդը, հայ **մարդու շնորհը** երբեք չի պակսիր», «Դուք զարմանալով պիտի համոզուիք, թէ հայկական «խաւար» **բառի պատմութիւնը** ո՛չ թէ մթութեան եւ տրտմութեան պատմութիւն է, այլ՝ լոյսի եւ սիրոյ» (*Ակոս*), «Իբրեւ անձնազոհներ՝ դուք **հայրենիքի ազատութիւնը** գերագոյն նպատակ դարծուցիք» (*Ազգակ*):

«...Սեռական հոլով աշխարհագրական յատուկ անունները կը կիրարկուին նախընտրաբար առանց յօդի՝ **Արարապի** գագաթը, **Սարդարապատի** հերոսամարտը, **Նեղոսի** ջուրերը...: Խորթ է **Արարապին** գագաթը եւ այլն»²⁹: Բացառական հոլովով աշխարհագրական յատուկ անունները գործածուում են միայն որոշիչ յօդով (Ամերիկայէն անդին, Ֆրանսայէն կու գայ, Լիբանանէն անցանք), իսկ գործիականով աշխարհագրական յատուկ անունները որոշիչ յօդ չեն առնում (կը հպարտանամ Հայաստանով)³⁰:

Արեւելահայերէնում 19րդ դարի վերջերից սկսած, այսինքն՝ կարգաւորման շրջանում արդէն, բացառական, գործիական եւ ներգոյական հոլովների՝ որոշիչ յօդով ձեւերը աստիճանաբար սկսեցին դուրս մղուել մշակուող գրական լեզուից. *տանիցը, գիւղիցը, գործիքովը, մտքովը, քաղաքումը, անտառումը* եւ նման ձեւերը արդի արեւելահայերէնում, ինչպէս ասուեց, բարբառային-խօսակցական են:

Տարակարծութիւններ կան **ը** եւ **ն** յօդերի գործածութեան յաճախականութեան վերաբերեալ: Ճիշտ է, **ն** յօդի գործածութեան ոլորտը տեսականօրէն ւելի լայն է, քան **ը** յօդինը, քանի որ դուրս է ձայնաւորայանգ բոլոր բառերի վրայ (**Երեխան** լաց է լինում, **Գինին** թափուեց), այլեւ կարող է դրուել բաղաձայնայանգ բառերի վրայ՝ ձայնաւորով սկսուող բառերից առաջ (**Գիրքն** ընկաւ սեղանից, **Խօսքն** ասարտեց), սակայն խօսքային միջավայրում գործածական մեծ յաճախականութիւն ունի **ը** յօդը. խօսքաշարում՝ բաղաձայնով սկսուող բառերից առաջ, որոնք անհամամետ մեծ թիւ են կազմում, **ն** յօդի գործածութիւնը ըստ էութեան բացառուում է, որի հետեւանքով գործնականում էապէս նուազում է նրա գործածականութիւնը: Ի դէպ, քանի որ արեւելահայերէնի համեմատութեամբ արեւմտահայերէն խօսքի տեմպը ւելի դանդաղ է, ուստի ձայնաւորից առաջ **ը** յօդի գործածութիւնը արեւմտահայերէնում համեմատաբար յաճախակի է:

Ենթակայի պաշտօնում որոշիչ յօդ չի առնում **Աստուած** բառը (Յիսուս Քրիստոս, Հայր Աստուած). «**Աստուած** ամենակարող է», «**Աստուած** ձեզ պահապան»:

²⁹ Եղիայեան, էջ 723:

³⁰ Նոյն:

2. ԱՆՈՐՈՇՈՒԹԵԱՆ ԵՆԹԱԿԱՐԳ

Յոյց է տալիս չտարորոշուած առարկայ: Իրականում, որպէս այդպիսին՝ իր ձեւային եւ բովանդակային յատկանիշերով անորոշ առումը հակադրուում է ոչ միայն որոշեալութեանը, այլեւ քերականական առկայացման միւս առումներին: Իմաստային տեսակէտից այն դրսեւորուում է իբրեւ առկայացման բացակայութիւն, այսինքն՝ ստացականութեան, դիմորոշութեան, ցուցականութեան եւ որոշեալութեան չգոյութիւն: Ունի նաեւ ձեւային հակադրութիւն. կազմուում է կա՛մ **զրօ** ձեւով (**Չ**), կա՛մ **մի** (արեւմտահայերէնում՝ **մը**) անորոշ յօդով: Այդ իսկ պատճառով միանգամայն տրամաբանական է այն որպէս առման առանձին ենթակարգ ընդունելը: Ներկայանում է երկու տարբերակով՝ 1. **ընդհանուր անորոշ առում**. կազմուում է **զրօ** վերջաւորութեամբ, այսինքն՝ առանց առկայացուցիչ յօդի, 2. **մասնական անորոշ առում**. կազմուում է **մի** մասնիկով, որը գործածուում է **մի** անորոշ յօդի արժէքով եւ շեշտուում է առարկայի անորոշութիւնը՝ **Մի միահոն աղջիկ փեսայ...., Որպէս անմիտ զրոյց մեզ պատմել են մի օր....**:

«Արեւելահայերէնում գոյականի անորոշ առման իմաստը,- գրում է Զահուկեանը,- **մի** մասնիկի միջոցով շեշտուում է (ինչպէս նաեւ **ինչ-որ, որեւէ, ինչ-ինչ** եւ նման բառերով). զարգացել է ետգրաբարեան հայերէնում **մի** քանակական թուականի հիմքի վրայ: Անորոշ առումը հակադրուում է որոշեալ առմանը **զրօ** ձեւոյթով, բայց անորոշութիւնը կարող է ուժեղացուել **մի** բառով, որ ձեւականօրէն փարբերակուելով **մէկ** թուականից՝ փաստօրէն ստացել է անորոշ յօդի արժէք. այլ կերպ ասած՝ հայերէնում սկսել է զարգանալ անորոշութեան վերլուծական արտայայտութիւնը»³¹: **Մի** անորոշ յօդը **մի/մէկ** թուականից տարբերակելու խնդիր է դնում նաեւ Մարգարեանը. «Թուականից սերող եւ գոյականների հետ լայնաբար գործածուող **մի**-ն ոչ թէ անորոշ դերանուն է, այլ յօդ է, որը պէտք է փարբերել նաեւ առանձնաբար գործածուող **մի/մէկ** քանակական թուականից»³² եւ ուրիշներ:

Հայերէնի գիտական քերականութեան մէջ **մին** ի սկզբանէ առաւելապէս համարուել է անորոշ յօդ: «Որոշեալ կամ որոշիչ յօդէն ի զատ,- գրում է Այտընեանը,- ըսինք, կայ նաեւ Անորոշ յօդ ալ, որ է **մի** կամ **մը**. որուն պաշտօնն է անուան ընդհանուր միտքը մասնաւորի ամփոփել՝ առանց ո՛րն ըլլալը որոշելու»³³: **Մին**՝ որպէս անորոշ յօդ, մասնաւորեցնող այդ նշանակութեամբ է բնութագրուում նաեւ Պալասանեանը. «Անորոշ յօդն է **մի**,- գրում է նա,- որ գործ է ածուում այն ժամանակ՝ երբ հարկ է առարկայի վրայ եղած ընդհանուր հասկացողութիւնը մասնաւորի ամփոփել»³⁴:

³¹ Գ. Զահուկեան, Հայոց լեզուի զարգացումը եւ կառուցուածքը, «Միտք» հրատ., Երեւան, 1969, էջ 187:

³² Մարգարեան, էջ 305:

³³ Այտընեան, էջ 24:

³⁴ Պալասանեան, էջ 37:

Կայ նաեւ կարծիք, որ **մին** արեւելահայերէնում յօդ չէ, այլ դերանուն է՝ միաժամանակ թուականի իմաստով, քանի որ յոգնակիի հետ չի գործածուում եւ յոգնակիում կարող է փոխարինուել **ինչ-որ, ինչ-ինչ** դերանուններով, **մի երկու, մի քանի, մի շարք, շատ, բազմաթիւ** եւ այլ անորոշ արտայայտութիւններով կամ ցանկացած թուականով: «**Մի թուականը**, - գրում է Աբեղեանը, - երբ առանց շեշտելու դրում է **անյօդ անուան վրայ, աշխարհաբարի քերականները, հեփեւելով ուրիշ լեզուների քերականներին, դնում են յաճախ իբրեւ **անորոշ յօդ**, որ իբր թէ այլեւս թուական չլինէր եւ թուի գաղափար ցոյց չտար, այլ միայն անձի կամ իրի ընդհանուր, տարտամ գաղափար, ինչպէս մի անորոշ ածական: Սակայն այդ սխալ է. **մի բառն ամէն դէպքում եւս թուական է, լինի շեշտուած, թէ անշեշտ, եւ մասնաւորում է անուան թիւը, որոշելով առարկայի մէկ լինելը**»³⁵:**

Մի անորոշ յօդի նշանակութիւնը ւելի շեշտուեց, երբ միջին հայերէնում թուականական նոյն իմաստի համար սկսեց գործածուել **մէկ** թուականը: Միջին հայերէնում գործածական են **միի՝** գրաբարին, արեւմտահայերէնին ու արեւելահայերէնին յատուկ դիրքային եւ, այսպէս կոչուած, ձեւային տարբերակները, որոնք, իդէպ, երբեմն հանդիպում են նաեւ միեւնոյն հեղինակի գործերում («ու երկրին տեսո՞ւմ առնում մէկ **մի**», «եւ թագաւոր **մըն** է՝ յոր կարէ դեկան շինել» (Սմբատ Սպարապետ, 13րդ դար), «Դարպաս **մի** կայր», «Կղմինդր աղիւս **մ՛այլ** ի յորմէն», «Վարպետ **մ՛եկաւս**» (Ֆրիկ, 13րդ դար) են.)³⁶: Աշխարհաբարին բնորոշ ձեւերը միջին հայերէնի վաղ շրջանում հազուադէպ են հանդիպում. դրանք ւելի յաճախադէպ են ուշ միջնադարի՝ աշխարհաբարին մօտ լեզուով շարադրուած մատենագրութեան մէջ: Յետագայում **մը** ձեւը իր հնչիւնափոխուած միւս տարբերակներով (**մըն, մ՛**) անցաւ արեւմտահայերէնին՝ վերջադաս գործածութեամբ (գիրք **մը**, տուն **մը**, մարդ **մըն** ալ, ցաւ **մ՛**անսահման), իսկ գրաբարեան **մին** փոխանցուեց արեւելահայերէնին՝ նախադաս կիրառութեամբ (մի մարդ, մի գիրք, մի նկար):

Մի/ՄԸ յօդը երկու գրականներում էլ դրում է բոլոր հոլովածների վրայ (Արտագրել եմ Մատենադարանի հնատիպ **մի գրքից**: Հազար աշխատող ունեմ. ամէն մէկը **մի հարցով** դիմում է, **Բաներ մը** ըսած էի: **Գրութեամբ մը** յայտնած եմ անոր: **Բարեկամէ մը** ստացած եմ):

Մին արեւելահայերէնում պահպանել է իր նիւթական իմաստը (գործածուում է նաեւ **մէկ** թուականի նշանակութեամբ՝ **Մի օրը բաւական էր** են.): Շարադրանքում յաճախ, երբ յստակ չի ընդգծուում անորոշութիւնը, այն

³⁵ Մ. Աբեղեան, *Հայոց լեզուի տեսութիւն*, «Միտք» հրատ., Երեւան, 1965, էջ 526. Նաեւ՝ Աբրահամեան, էջ 111. նաեւ՝ Ե. Աւետիսեան, Յ. Զաքարեան, *Ձեւաբանութիւն*, «Զանգակ» հրատ., Երեւան, 2015, էջ 146-47. նաեւ՝ Յ. Բարսեղեան, Փ. Մէլ-թիխանեան, *Հայոց լեզու. դասագիրք 7-րդ դասարանի համար*, «Աստղիկ» հրատ., Երեւան, 2016, էջ 71 են.:

³⁶ *Միջին հայերէնի ուղեցոյց-քրեստոմափիս*, էջ 92-93:

ընկալում է ե՛ր որպէս թուական, ե՛ր որպէս անորոշ դերանուն, ինչպէս՝ «**Մի** (=մէկ//հինչ-որ) տող մոռացել եմ»: Այնուամենայնիւ, ժամանակակից հայերէնում որոշ դէպքերում **մի** թուականը հնարաւոր է տարբերակել **մի** անորոշ յօդից: Այսպէս՝

* եթէ **մի**ի լրացեալը որոշիչ յօդով է (Մի **տողը** մոռացել եմ, Մի **ծեռքը** ծափ չի տայ), ուրեմն **մին** տուեալ դէպքում ոչ թէ դերանուն է, այլ թուական (հմմտ.՝ *Աշնան մի օր հանդիպեցի նրան: // Աշնան մի օրը ծմռան մի շաքարն է*),

* **մին**՝ որպէս թուական, սովորաբար շեշտ է կրում, իսկ որպէս յօդ՝ արտասանում է շատ թոյլ շեշտով կամ անշեշտ (հմմտ.՝ *Մի մեքենայ գնեցի: // Մի՛ մեքենայ գնեցի, Բախսր եմ ունեցել մի անգամ հանդիպելու նրան: // Բախսր եմ ունեցել մի՛ անգամ հանդիպելու նրան*),

* շարահիւսական որոշակի կառոյցներում կարող են տարբերակուել՝ շարադասութեամբ, օրինակ՝ պայմանաւորուած օժանդակ բայի դիրքով (հմմտ.՝ *Մի անգամ եմ հանդիպել նրան (թւ.) // Մի անգամ հանդիպել եմ նրան (թւ./յօդ), Մի հարցով եմ դիմել նրան (թւ.) // Մի հարցով դիմել եմ նրան (թւ./յօդ)*), սահմանափակման վերաբերականների զուգահեռ գործածութեամբ (*Լա հետաքրքրուած էր միայն (սոսկ, գէթ, միմիայն) մի հարցով (թւ.)*) եւն.:

Ժամանակակից հայերէնում **մին**՝ որպէս բազմիմաստ բառ եւ տարարժէք խօսքի մաս, ունի նաեւ այլ կիրառութիւններ՝

* կամային վերաբերականի նշանակութեամբ կարող է դրուել բայերի դրական հրամայականի եւ ըղձական եղանակի ձեւերի վրայ. բնորոշ է խօսակցական լեզուին (*Մի հարցնող լինի՛*՝ ի՞նչ գործ ունէք այստեղ, *Մի կարդայ՛* տեսնեմ ոնց ես կարդում),

* քանակական թուականների վրայ դրուելով՝ արտայայտում է մօտաւորութեան իմաստ (*Մի հարիր անգամ տեսած կը լինես, Մի քսան-երեսուն* հոգի կը լինէին): **Մի** թուականը/յօդը համանուն է արգելական հրամայականի **մի** քերականական մասնիկին (**մի՛** խօսիր, **մի՛** գնա):

Արեւմտահայերէնում **մին** յօդ է. չունի թուականական նշանակութիւն: Գործածում է հնչիւնափոխուած տարբերակով՝ **մը** (**մ՛**)<**մի**. վերջահար է. դրում է լրացեալից յետոյ (մարդ **մը**, մարդեր **մը**, հատ **մըն** ալ, կեանք **մ՛**անհուն. *Քեզմէ գիրք մը փոխ առի՛*)՝ ի տարբերութիւն արեւելահայերէնի նախահար դիրքի: Ունի շատ յաճախակի կիրառութիւն, հարուստ է ոճական-արտայայտչական հնարաւորութիւններով: Դրում է ինչպէս գոյականների եւ փոխանուն բառերի, այնպէս էլ այլ խօսքի մասերի վրայ («Լամակա **շուտ մը** գրեմ, հիմա գործիս պիտի վազեմ», «**Կամացուկ մը** դուրս կ'ելլէ տունէն»): Ի տարբերութիւն սակայն արեւելահայերէնի՝ **մըն** լրացեալից չի կարող միջարկուել որեւէ այլ լրացումով (հմմտ.՝ «**Մի** հետաքրքիր եւ անսովոր **իրավիճակում** յայտնուեցի» / «<ետաքրքիր եւ անսովոր **իրավիճակի մը** մէջ յայտնուեցայ»):

ԱՄՓՈՓՈՒՄ

Առկայացման քերականական կարգի տեսութեան քննութիւնը բերում է այն համոզման, որ հայերէնում քերականական այդ կարգի ձեւախմաստային եւ կառուցուածքային նկարագրութիւնը տակաւին կարիք ունի հետազօտութեան ու վերաձեւակերպումների: Կարգի ընդունուած կամ առաջարկուող ներկառուցուածքային բաժանումներում երբեմն ուղղակիօրէն իրար են հակադրում մի կողմից՝ որոշեալութիւնը, միւս կողմից՝ ստացականութիւնը, ցուցականութիւնը եւ դիմորոշութիւնը: Մինչդեռ որոշեալութիւնը յատուկ է յօդային բոլոր առումներին. յօդերի բոլոր տեսակներն էլ, դրուելով համապատասխան բառերի վրայ, ցոյց են տալիս առարկայի տարրորոշուածութիւն, տարբերակուածութիւն, որոշեալութիւն: Այսինքն՝ որոշեալութեան քերականական իմաստը բնորոշ է յօդերի բոլոր տեսակներին՝ բացառութեամբ **մի/մը** անորոշ յօդի: Ասել է թէ՛ առկայացման քերականական կարգում իմաստային հակադրութեան մէջ են մի կողմից՝ անորոշութիւնը (առկայացման բացակայութիւնը), միւս կողմից՝ որոշեալութիւնը (առկայացման առկայութիւնը)՝ իր բոլոր դրսեւորումներով: Ըստ որի էլ՝ քննուող կարգում պէտք է առանձնացուեն երկու ենթակարգեր՝ **որոշեալութեան ենթակարգ**, որի ձեւային ցուցիչներն են ստացական (**ս, դ**, մասամբ՝ **ն/ը**), դիմորոշ (**ս, դ**) եւ որոշիչ յօդերը (**ն/ը**), եւ **անորոշութեան ենթակարգ**, որի ձեւային ցուցիչներն են **զրօ ձեւը** (ընդհանուր անորոշ առում) եւ **մի/մը** անորոշ յօդը (մասնական անորոշ առում):

Առկայացման քերականական կարգը սոյն յօդուածում ներկայացուած է այս մօտեցմամբ: Բուն յօդերի նկարագրութիւնը իրականացուել է զուգահրական քննութեամբ՝ արեւելահայերէնի եւ արեւմտահայերէնի առանձնաշատկութիւնների համադրումով:

THE GRAMMATICAL CATEGORY OF NOUN DETERMINATION IN
MODERN ARMENIAN: SUBCATEGORIES OF DEFINITION AND INDEFINITION
(SUMMARY)

YURI AVETISYAN
yuavetisyan@mail.ru

The semantic aspects of the grammatical category of occurrence and the forms of grammatical expression have often undergone changes during the historical development of the Armenian language. That is why they have often become the subject of examination and discussion in Armenian grammars. The question was addressed more or less thoroughly by M. Abeghyan, H. Acharyan, S. Abrahamyan, G. Jahukyan, M. Asatryan, H. Petrosyan, H. Cholakyan, A. Yeghiayan and others. A large amount of work has been done, a very detailed and thorough examination has been made. However, we believe that certain classification points and principles need to be reviewed and reformulated today. This study is aimed at that goal.

In the accepted or proposed intrastructural divisions of the grammatical category of determination, definiteness, on the one hand, and receptivity, enumerability, and addressability, on the other hand, are sometimes directly opposed to each other. Meanwhile, determination is specific to all aspects of the joint. All types of joints, placed on the corresponding words, show the differentiation of the subject. In other words, the grammatical meaning of definiteness is characteristic of all other types of articles, except for one indefinite article. That is to say, in the grammatical category of determination, on the one hand, uncertainty (absence of definition) and, on the other hand, certainty (existence of definition) with all its manifestations are in semantic opposition. According to this, two subcategories should be distinguished in the category under examination: the subcategory of definiteness, the form indicators of which are accusative (s, d, partly n/h), adverbial (s, d) and determinative articles (n/h), and the subcategory of uncertainty, whose formal indicators are zero form (general indefinite) and one indefinite article (partial indefinite).

The grammatical category of occurrence is presented in this article with this approach. The description of the joints itself was carried out by comparative examination, combining the characteristics of Eastern Armenian and Western Armenian.

Key words - grammatical category, grammatical meaning, grammatical form, determination, suborder of definiteness, suborder of indefiniteness, articles, accusative, individual, demonstrative, Eastern Armenian, Western Armenian.

ՊԵՏԱԿԱՆ ԱՇԽՆՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԿՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ 1990-1995ԻՆ

ԼԻԼԻԹ ԶԱՔԱՐԵԱՆ
lilitzakaryan66@gmail.com

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

1990-95 շրջանը Հայաստանի անկախացման եւ պետականության վերականգնման ժամանակաշրջան էր: 1988 Փետրուարին սկիզբ առած դարաբաղեան շարժման արդիւնքում հայ հասարակութեան գիտակցութեան մէջ սկսեց ձեւաւորուել անկախութեան գաղափարը, երկու տարուայ ընթացքում հասարակութեան մեծ մասը ընդունեց դրա անհրաժեշտութիւնը եւ պայքար սկսեց անկախութեան համար: 1990ին այդ պայքարը հրապարակներում եւ փողոցներում անցկացուող ցոյցերից տեղափոխուեց խորհրդարան՝ ՀԽՍՀ գերագոյն խորհրդի դահլիճ: Շարժումն առաջնորդեց «Ղարաբաղ» կոմիտէի՝ ծնած Հայոց համազգային շարժումը՝ ՀՀՇՆ, որը եւ շուտով, խախտելով Կոմունիստական կուսակցութեան 70ամեայ մենատիրութիւնը, ընտրութիւնների միջոցով մտաւ խորհրդարան: Անկախութեան վերաբերեալ ծրագրեր դեռ 1987ից ինքնահրատ *Անկախութիւն* թերթի միջոցով տարածում էր ԱԻՄը², բայց հասարակութեան լայն շրջանակներին դրանք անձանօթ էին: Բացի այդ, հայ հասարակութիւնը այդ ժամանակ դեռեւս պատրաստ չէր ընդունելու անկախութեան գաղափարը: 1988-90՝ այդպիսի ծրագրեր սկսեցին ներկայացնել ՀՀՇՆ եւ արագ առաջացող հասարակական-քաղաքական այլ կազմակերպութիւններ, որոնք դրանք տարածում էին իրենց ինքնահրատ պարբերականների եւ հանրապետական ԶԼՄներով: Բայց դրանք ընդամէնը նոր ձեւաւորուող կազմակերպութիւնների ծրագրային դրոյթներն էին: ԽՍՀՄ փլուզումը մօտ չէր թւում եւ յոյս չկար, որ Հայաստանը մօտ ապագայում կ'անկախանայ: Տոյցերում, հաւաքներում, հիմնարկների ձեռնարկութիւնների պաշտօնէութեանց ժողովներում քննարկուում էր միայն անկախութեան գնալու կամ չգնալու հարցը,

¹ Ղարաբաղ կոմիտէն, ձեւաւորուել է 1987-88ին: 1988 Մարտին հրապարակուեց կոմիտէի առաջին կազմը՝ Իգոր Մուրադեան, Վաչէ Սարուխանեան, Վազգէն Մանուկեան, Համբարձում Գալստեան, Սամսոն Ղազարեան, Աշոտ Մանուկարեան, Գագիկ Սաֆարեան, Զօրի Բալայեան, Սիլվա Կապուտիկեան: Ղարաբաղ կոմիտէի սկզբնական նպատակն էր՝ ԽՍՀՄ իշխանութիւնների ուշադրութիւնը հրափրել Լեռնային Ղարաբաղը Հայաստանին վերամիատրելու հայ ժողովրդի պահանջին:

² Ազգային ինքնորոշում միատրումը (ԱԻՄ) ստեղծուեց 1987ին Պարոյր Հայրիկեանի խորհրդային աքսորից հայրենիք վերադառնալուց յետոյ: Այն իր հրատարակուող *Անկախութիւն* եւ *Հայրենիք* պարբերականների միջոցով աշխատանք էր ծաւալում հայ հասարակութեան մէջ անկախութեան գաղափարը արմատաւորելու ուղղութեամբ:

բայց ինչպիսի՞ պետութիւն պէտք է ստեղծուէր, ինչ կառուցուածքով՝ չէր քննարկուում: Այդ քննարկումը գերագոյն խորհրդում ծաւալուեց 1990ի կէսին՝ անկախութեան հռչակագրի մշակման եւ ընդունման ընթացքում:

Մինչ նոր սահմանադրութեան ընդունումը, որոշուեց փոփոխութիւններ կատարել 1978ին ընդունուած ՀԽՍՀ սահմանադրութեան մէջ (որն ըստ էութեան ԽՍՀՄ սահմանադրութեան կրկնօրինակն էր), միաժամանակ՝ պահպանել ՀԽՍՀ կառավարման մարմինները: Սկսուեց անկախ պետութեան խորհդանիշերի ձեւաւորման գործընթացը:

Պետականաշինութիւնը նոր թափ ստացաւ 1991 Սեպտեմբերի 21ի անկախութեան հանրաքուէից յետոյ: Նոյն տարուան Հոկտեմբերին պետութեան կառոյցի մէջ էական փոփոխութիւն կատարուեց՝ հիմնուեց ՀՀ նախագահի պաշտօնը: ՀՀ ԳԽն ստիպուած եղաւ իր լիազօրութիւնների մի մասը զիջել նախագահին: Սահմանադրութեան բացակայութեան պայմաններում իշխանութեան թելերի միջեւ երբեմն պայքար էր գնում, որն ունէր թէ՛ առարկայական, թէ՛ ենթակայական պատճառներ: Հակասութիւններ կային նաեւ հանրապետութեան իշխանութեան բարձրագոյն մարմինների եւ տեղական կառավարման մարմինների՝ ժողովրդական պատգամաւորների տեղական խորհուրդների միջեւ: Եթէ այդ ամէնին գումարենք 1988ի ւերիչ երկրաշարժի հետեւանքով գոյացած աղէտի գօտին իր ուրոյն հիմնախնդիրներով, հայ-ադրբեջանական հակամարտութեան հետեւանքով անընդհատ առաջացող նոր խնդիրները (Ադրբեջանում կազմակերպուած հայկական ջարդերի հետեւանքով հազարաւոր փախստականների փախուստը Հայաստան, ՀՀ շրջափակումները, վառելիք-ուժանիւթի ճգնաժամը), պարզ կը դառնայ, որ պետականաշինութիւնն ընթանում էր ծայրայեղ դժուարին պայմաններում: Սկզբում տարերայնօրէն, այնուհետեւ կանոնակարգուած սկսուեց հայոց բանակի ձեւաւորումը: Սկսուեց սեփականաշնորհման գործընթացը: 1991-95՝ ընկերային-տնտեսական ճգնաժամը, արդիւնաբերութեան փլուզումը, ահռելի չափերի գործազրկութիւնը ընկերային բեւեռացում առաջացրին: Բնականաբար այդ ամէնը յանգեցրեց երկրում քաղաքական պայքարի սրմանը, քաղաքական նոր կուսակցութիւնների առաջացմանը, դրանց առճակատմանը: Քաղաքական ուժերի միջեւ հակասութիւնները սրոււմ էին յատկապէս ազգային խնդիրների, Ղարաբաղի հարցի, պատերազմի եւ խաղաղութեան հարցերի շուրջ: Այդ պայմաններում ընթացաւ սահմանադրութեան նախագծի մշակումը եւ հանրապետութեան ապագայ դրոյթի ընտրութիւնը, որն աւարտուեց 1995 Յուլիսի 5ին՝ ՀՀ սահմանադրութեան ընդունումով: Դրանով սկսուեց պետականաշինութեան նոր փուլ:

Յօդուածում պետականաշինութեան խնդիրները ներկայացուած են ՀՀ Ա. խորհդարանի՝ գերագոյն խորհդի պատգամաւորների մօտեցմամբ եւ արժեւորմամբ: Յօդուածը ներկայացնում է պետականաշինութեան նկատմամբ պատգամաւորների հայեացքների, մօտեցումների շարժընթացը:

Յօդուածի համար հիմք են ծառայել ՀՀ ազգային ժողովի արխիւային փաստաթղթերը, քաղաքական գործիչների աշխատութիւններ ու յօդուածներ, թեմային վերաբերուող սակաւաթիւ գրականութիւնը:

ՊԵՏԱԿԱՆ ԱՇԽՆՈՒԹԵԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ԳԽՈՒՄ

Պետութեան կառուցաւորումը կամ պետականաշինութիւնը բարդ գործընթաց է: Այն առաւել բարդ է այն ժողովուրդների համար, որոնք դարեր շարունակ զրկուած են եղել դրանից: Պատմական Հայաստանում Բագրատունեաց հարստութեան անկումով հայերը կորցրեցին պետականութիւնը 1045ին, Կիլիկիայում՝ 1375ին: Հայ ժողովուրդը կանգնեց պետութիւնը վերականգնելու փաստի առջեւ³ 1918ին եւ բարդագոյն պայմաններում իրականացրեց դա, արարուեց Հայաստանի առաջին հանրապետութիւնը, որը թէպէտ գոյատեւեց ընդամենը 2 տարի, բայց հիմքեր ստեղծեց ԽՍՀՄ կազմում Հայկական խորհրդային հանրապետութեան գոյութեան համար: Խորհրդային Հայաստանը թէպէտ անկախ չէր, բայց 70 տարիների ընթացքում նպաստաւոր պայմաններ ստեղծուեցին տնտեսութեան զարգացման համար, Հայաստանը դարձաւ արդիւնաբերական երկիր, հնարաւորութիւն ստացաւ զարգացնել ազգային մշակոյթը, ունենալ բարձր որակի կրթական համակարգ, պահպանուել որպէս ազգային օջախ համայն հայութեան համար: Դրա հետ մէկտեղ այն անկախ չէր եւ այդ ամէնն ունէր խորհրդային իշխանութիւնների կողմից գծած որոշակի սահմաններ, ինչ վերաբերում էր ազգային խնդիրներին, դրանք խորհրդային խօսոյթից դուրս էին եւ փոխարինուել էին «ինտերնացիոնալիզմի գաղափարախօսութեամբ»:

1988ին դարաբաղեան շարժումը նպաստեց ազգային ինքնագիտակցութեան աճին, ազգային երազանքների զարթօնքին: Դրա հետ մէկտեղ 1988ին Ադրբեջանում Սումգայիթով սկսուած հայկական ջարդերը հայ հասարակութեանը դարձեալ յիշեցրեցին պատմութեան դառը դասերը եւ հայ ազգայնական գաղափարախօսութեան ուժեղացման պատճառ հանդիսացան: Հայ հասարակութեան մէջ ԽՍՀՄից անկախացման հայտ ձեւաւորուեց այն ժամանակ, երբ պարզ դարձաւ, որ «վերակառուցուող» ԽՍՀՄում հայ ազգն ապահով չի, ազգային հիմնախնդիրները ոչ միայն չեն ողջունում, այլեւ հետապնդում են⁴: Կարելի է ասել, որ հասարակական գիտակ-

³ Չնայած անկախութիւնը նուիրական երազանք էր, բայց Արեւելեան Հայաստանում Մեծ Եղեռնից յետոյ արեւմտահայերի զանգուածային ներգաղթի պայմաններում, առաջին աշխարհամարտի հետեւանքով ստեղծուած անկանխատեսելի պայմաններում Ռուսաստանից անկախանալը հայերի համար այդքան էլ ցանկալի չէր: Այդուհանդերձ, 1918ին ստեղծուեց Հայաստանի Հանրապետութիւնը:

⁴ Այդ մասին աւելի մանրամասն տես՝ «Անկախութեան օրակարգի ձեւաւորումը Անկախութեան հրապարակում եւ Գերագոյն խորհրդում» յօդուածում (*Հայկազեան հայագիտական հանդէս*, 43/2:2023 [https://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Haigazean/43\(2\).pdf](https://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Haigazean/43(2).pdf)):

ցութիւնը բաւականին լուրջ փոխակերպում ապրեց եւ ընդունեց անկախութեան գաղափարը, իսկ ՀԽՍՀ խորհրդարան մտած նոր քաղաքական ուժերը այն ամրագրեցին քաղաքական օրակարգում եւ սկիզբ առաւ պետականաշինութեան գործընթացը: Հայաստանը պէտք է միջանի փոխակերպումների միջով անցնէր՝ դաշնակցային պետութեան հանրապետութիւնից դառնար միասնական պետութիւն, խորհրդային միջազգայնական գաղափարախօսութիւնից անցում կատարէր ազգային գաղափարախօսութեան, պլանային տնտեսութիւնից՝ շուկայական տնտեսվարման, միակուսակցութիւնից՝ բազմակուսակցական համակարգի եւն.: Այդ պայմաններում հարց առաջացաւ՝ իսկ ինչից սկսել:

Ամէն ինչ սկսուեց Անկախութեան հռչակագրի բնագրի մշակումից, որովհետեւ այդ փաստաթղթում պէտք է երեւար անցնելիք ուղին: Սկսուեցին Հռչակագրի բնագրի մշակումն ու քննարկումները, որոնք նաեւ քննարկումներ էին ստեղծուելիք պետութեան ձեւի եւ բովանդակութեան վերաբերեալ:

Անկախութեան հռչակագիրը մշակող յանձնաժողովը 3 տարբերակ ներկայացրեց ԳԽ քննարկմանը⁵: Երկրորդ եւ երրորդ տարբերակները տարբերում էին նախաբանով եւ այդ պատճառով համարակալուած էին 2ա եւ 2բ, առաջինն էականօրէն տարբերում էր այդ երկուսից: Պատգամաւորները կանգնեցին բարդ խնդիրների առջեւ, նրանք պէտք է կողմնորոշուէին հայեցակարգային հետեւեալ հարցերում՝ ինչի համար է ընդունում Հռչակագիրը, ինչը պիտի հաստատուի Հռչակագրով: Խօսքը գնում էր հետեւեալի մասին՝ արդեօք նորաստեղծ պետութիւնը 1918-20ի Հայաստանի Հանրապետութեան իրաւայաջորդն է թէ՛ ազգային ինքնորոշման իրաւունքի հիման վրայ ստեղծուող բոլորովին նոր պետութիւն: Կարելի էր նաեւ, թէ ինչպէ՛ս հռչակել անկախութիւնը՝ միանգամից յայտարարել անկախութիւն եւ սկսել բանակցութիւններ ԽՍՀՄ ղեկավարութեան հետ, թէ՛ ընդունել, որ Հայաստանը կիսանկախ պետութիւն է, ԽՍՀՄ կազմում մնալով աստիճանաբար ընդլայնել այդ անկախութեան սահմանները եւ քաղաքական իրավիճակից ելնելով, ինչ-որ մի յարմար պահի հռչակել անկախութիւն: Յաջորդ հարցը, հետեւեալն էր՝ այն ժամանակաւոր, թէ՛ լրջագոյն փաստաթուղթ է, որում պէտք է արտացոլուեն ապագայ անկախ Հայաստանի, որպէս պետութեան, հայեցակարգային հիմնադրոյթները եւ որի հիման վրայ պէտք է մշակուի ապագայ սահմանադրութիւնը: Եւ վերջապէս կարելի էր, որ որոշակիօրէն երեւայ վերաբերմունքը միութեանական նորացուող պայմանագրի նկատմամբ, որն առաջ էր մղում ԽՍՀՄ ղեկավարութիւնը: Պէտք է ասել, որ ԽՍՀՄում սկսուել էր «*սուվերէնութեան շքերթ*», այսինքն ԽՍՀՄ

⁵ Տարբեր քաղաքական ուժերի կողմից ներկայացուած տարբերակների թիւը հասել էր մէկ տասնեակի, բայց քանի որ դրանք որոշակի ընդհանրութիւններ ունէին՝ որոշները միատրուեցին (էդիկ Մինասեան, *Հայաստանի երրորդ հանրապետութեան պայմութիւն*, ԵՊՀ հրատ., Երեւան, 2013, էջ 113):

բոլոր հանրապետությունները իրենց հռչակում էին ինքնիշխան, անգամ՝ Ռուսաստանը եւ Բելառուսիան, որոնք ամենաբար միութիւնը պահպանելու կողմնակիցներ էին: Սկսուել էր հռչակագրերի ընդունման գործընթացը: Բայց այն ժամանակուայ մօտեցմամբ ինքնիշխանութիւնն ու անկախութիւնը 2 տարբեր հասկացութիւններ էին: Դա վառ կերպով երեւաց նաեւ Հայաստանի գերագոյն խորհրդի նախագահի ընտրութեան ընթացքում 2 ամենաշատ ձայներ շահած թեկնածուների ելոյթներում՝ Վլադիմիր Մովսիսեանի, որը ԽՍՀՄ կազմում Հայաստանի ինքնիշխանութեան ընդլայնման կողմնակից էր, եւ Լեւոն Տէր Պետրոսեանի, ով հանդէս եկաւ Հայաստանի անկախութեան օգտին: Տէր Պետրոսեանի ՀԽՍՀ ԳԽ նախագահի պաշտօնում ընտրուելն ազդարարեց, որ հայոց խորհրդարանը ընտրում է երկրորդ ուղին:

Յաջորդ հարցը հետեւեալն էր՝ Հռչակագիրը միայն քաղաքական փաստաթուղթ է թէ՞ դրանում պէտք է արտայայտուած լինեն նաեւ յետագայ քաղաքականութեան տնտեսական եւ հոգեւոր տեսանկիւնները: Իհարկէ հասկանալի էր, որ եթէ հանրապետութիւնը գնում էր անկախութեան, ուրեմն տնտեսական, ֆինասավարկային, մշակութային, գիտակրթական ասպարէզներում էլ է անկախ քաղաքականութիւն վարելու, բայց քանի որ պատգամաւորներից շատերը ուզում էին, որ այն դառնայ ապագայ սահմանադրութեան հիմքը, կարեւորում էին, որ այդ ոլորտների հայեցակարգային հիմնադրոյթները հռչակուեն Հռչակագրում:

Կարեւորագոյն հարցերից էր Հայ Դատի նկատմամբ վերաբերմունքը: Այն պէտք է արտացոլուէր Հռչակագրում որպէս համայն հայութեան մեծագոյն ցաւ եւ հիմնախնդիրներից մէկը, թէ՞ ոչ: Պատգամաւորների մեծ մասը ընդունում էր Հայ Դատը որպէս հայութեան լրջագոյն հիմնախնդիր: Խիստ պատկերաւոր է Հայ Դատը գնահատել քաղաքական գործընթացների ղեկավարներից Վազգէն Մանուկեանը, ով դրա մէջ տեսնում էր ինչպէս նեղ ըմբռնում, այնպէս էլ համընդհանուր. *«Նեղ ըմբռնումը կապուած է Օսմանեան կայսրութիւնում հայերի ցեղասպանութեան հետ, երբ մեր նախապապերին վտարեցին իրենց փարածքներից, շարերին պարզապէս բնաջնջեցին, իսկ միւսները ցրուեցին աշխարհով մէկ: Բնական է, ժողովրդի մէջ պայրմական արդարութեան պահանջ, կորցրածը վերադարձնելու եւ անգամ վրիժառութեան անհրաժեշտութիւն առաջացաւ: Այդ զգացմունքները, ինչպէս բաց վէրք, մշտապէս ապրում էին ժողովրդի հոգում: Միաժամանակ հայերի մէջ միշտ եղել է պեպականութեան եւ հայրենիքի երբեմնի հզօրութեան վերականգնման, իբրեւ համաշխարհային ուժեղ ազգ պայրմական թարերարեմ վերադառնալու երազանքը: Հենց այդպէս եմ ես ընկալում Հայ Դատի համընդհանուր իմաստը, որը ամէլի լաւ է անուանենք «հայկական*

երազանք»⁶: ՀՀՇն ներկայացնող պատգամաւորների մի մասը Տէր Պետրոսեանի ղեկավարութեամբ, դէմ էր Հռչակագրում Յեղասպանութեան հարցը որեւէ կերպ արժարծելուն⁷: Շատերը կարծում էին, որ այդ խնդիրը պէտք չէ արտացոլուի Հռչակագրում, զգուշանալով հարեան ցեղասպան պետութիւնից՝ Թուրքիայից: Բանախօսներից մէկը պատկերաւոր ներկայացնելով զգուշաւորութեան կողմակիցներին, նշում էր, որ նրանք վախեցնում են թուրքերով, «որ թուրքերը մեզ կ'ուտեն...»⁸: Պատգամաւորների մեծամասնութեան ճնշմամբ վերջնական տարբերակում ընդգրկուեց նաեւ Յեղասպանութեան յիշատակումը: Այդ բանավէճն յետագայում էլ ԳԽում տարբեր օրինագծերի քննարկման ժամանակ ծագում էր: 2 հիմնական մօտեցում կար.

Առաջին մօտեցման կողմակիցները գտնում էին, որ ՀՀՇն պէտք է մի կողմ թողնի «անցեալի պատմական բեռը» եւ գնայ առաջ: Դառնայ անկախ պետութիւն, հզօրանայ: Ազգային գաղափարախօսութիւնը պէտք է իր տեղը զիջի պետական գաղափարախօսութեանը: Միայն այդ դէպքում կարող է ՀՀՇն որպէս պետութիւն յաջողել: Նպատակը պէտք է լինի ժողովրդավարութեան զարգացումը: Այդ գաղափարի հետեւողական առաջ մղողը Տէր Պետրոսեանն էր, ով բազմիցս իր ելոյթներում նշում էր, որ «ազգային գաղափարախօսութիւն» հասկացութիւնը «կեղծ քաղաքական կարեգորիա է, որովհետեւ ժողովրդավարութեան պայմաններում ...անհնար է ողջ ազգին համախմբել մէկ միասնական գաղափարախօսութեան շուրջ»⁹: Երկրորդ մօտեցման կողմակիցների կարծիքով հայ ժողովուրդն ուներ իր առանձնայատկութիւնները եւ պետականաշինութիւնը պէտք է ընթանար դրանց հաշուառմամբ: Գտնում էին, որ չի կարելի առաջ գնալ առանց ազգային կուտակուած խնդիրները լուծելու, չի կարելի հաշուի չնստել այն փաստի հետ, որ պատմական այդ հիմնախնդիրների հետեանքով գոյութիւն ունի հայկական սփիւռք, որը նոյնպէս պէտք է մասնակցի պետականաշինութեանը: Գաղափարի առաջ մղողը Վազգէն Մանուկեանն էր, որ 1990ից առաջ էր քաշել հայերի «համաշխարհային ազգ» լինելու գաղափարը: Նա դա համարում էր ազգային ռոմանտիզմ, որը գնահատում էր որպէս դրական երեւոյթ, ի տարբերութիւն քաղաքական ռոմանտիզմի, որը կարող է կործանարար լինել: Ըստ նրա «Ազգային ռոմանտիզմի հիմնա-

⁶ Վազգէն Մանուկեան, *Հայկական երազանքը գոյարեւման փակուղում: Ելոյթների եւ յօդուածների ժողովածու*, «Վ. Ի. Վ. այսօր եւ վաղը» հրատ., Երեւան, 2002, էջ 165: <https://vazgenmanukyan.am/wp-content/uploads/2021/12/Armenian-Dream-in-the-Deadlock-of-Survival.pdf>

⁷ Մինասեան, էջ 115:

⁸ Մասնաւորապէս այդ միտքը հնչեցրեց Ռաֆայէլ Համբարձումեանը, ով «Ազգային միասնութեան ուխտի» ղեկավարն էր (լուծարուել է 2013ին): ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.54, էջ 34:

⁹ ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.365, էջ 217:

կան աղբիւրներն են Կոտեալ ժողովրդի պատմութիւնը, մշակոյթը, ներկայ պահի յաջողութիւնները կամ զրկանքները: Քարոզիչներն են գրողները, արուեստագէտները, պատմաբանները, քաղաքական, զինուորական գործիչները: Ազգային ռոմանտիզմի հիմքի վրայ են առաջանում այս կամ այն ազգային գաղափարախօսութիւնները, դրա վրայ է հիմնուած հայրենասիրութիւնը, դա է հիմնականում թելադրում ազգային նպատակները»¹⁰:

Քննարկում էին նաեւ ստեղծուելիք պետութեան կառուցուածքին վերաբերող որոշ հարցեր, օրինակ՝ զինուած ուժերը պէտք է ենթարկուեն ԳԽԽ թէ՛ կառավարութեանը, ինչպիսի՛ն պէտք է լինի ժողովրդական պատգամաւորների տեղական խորհուրդների նկատմամբ վերաբերմունքը են.: Հասկանալու համար այդ քննարկումների էութիւնը, արժէ մի փոքր կանգ առնել ստեղծուած իրավիճակի նկարագրութեան վրայ:

Այդ ժամանակ Հայաստանը դեռեւս ԽՍՀՄ 15 հանրապետութիւններից մէկն էր, բայց առաջին անգամ Խորհրդային Հայաստանի խորհրդարանը ձեւաւորուել էր ոչ թէ «վերելից» իշխող կոմունիստական վերնախաւի թելադրանքով, այլ, արցախեան շարժման շնորհիւ անցկացուած առաջին ազատ ընտրութիւնների միջոցով՝ «ներքեւից»: Կոմունիստներին ընդդիմադիր խորհրդարանականների մի մասը վերածնուող ազգային գաղափարախօսութեան կրողն էր, միւս մասը՝ ազատական: Առայժմս դրանք միաւորուած էին կոմունիստների դէմ եւ հանդէս էին գալիս միասնական ճակատով: ԳԽՆ ընկալում էր որպէս դրական փոփոխութիւնների ապահովող, նոր քաղաքական ուժերի կայացման թատերաբեմ, ազգային իղծերի արտայայտիչ: Իշխանութեան միւս թելերը՝ գործադիրն ու դատականը, որոնք ձեւաւորուած էին խորհրդային իշխանութիւնների կողմից, անբարեյոյս էին համարում: Այդ պատճառով ԳԽՆ համարում էր բարձրագոյն իշխանութիւն եւ փորձում էր ամէն ինչ պահել իր հսկողութեան տակ, այդ թում նաեւ՝ զինուած ուժերը:

Քննարկման ընթացքում ընթանում էր նաեւ պետականութեան վերաբերեալ գիտելիքների լրացման գործընթաց: Աւելի տեղեկացուած պատգամաւորները «լուսաւորում էին» միւսներին, բացատրում ինչ քաղաքիչներ է ներառում պետութիւն հասկացութիւնը, ինչ պէտք է հասկանալ պետութեան տարածք ասելով են.¹¹:

Բանավէճ ծաւալուեց պետութեան անուանման շուրջ՝ Հայաստանի Հանրապետութիւն թէ՛ ինչպէս խորհրդային տարիներին էր կոչում՝ Հայկական հանրապետութիւն: Պատգամաւորներից ոմանք կարծում էին, որ առաջինի դէպքում *ֆիքսում* է տարածքը եւ Հայաստանը սահմանափակում է 29,000 քառ. կմ.ում¹², երկրորդի դէպքում արտայայտում է այն միտքը, որ

¹⁰ Մանուկեան, էջ 165:

¹¹ ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.2, էջ 6:

¹² ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.2, էջ 9:

այն հայ էթնոսի պետութիւնն է: Հռչակագրի տարբերակներում գրուած էր, որ ՀՀ տարածքը կազմելու է ՀԽՍՀն եւ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզը: Պատգամաւորներից ոմանք կարծում էին, որ պէտք չի որոշակի նշել, քանի որ համոզուած էին, որ պետութեան տարածքը կարող է մեծանալ: Առաջարկ կար կոչել Արեւելեան Հայաստանի Հանրապետութիւն, ինչը, ըստ այդ անուանման կողմնակիցների, կը նպաստէր, որ իրաւապէս (*de facto*) ճանաչուէր Արեւմտեան Հայաստանի գոյութիւնը: Եւ եթէ կոչուէր Արեւելեան Հայաստան, պէտք էր յիշել, որ դրա մէջ մտնում էին նաեւ Լեռնային Ղարաբաղը, Նախիջեւանը եւ Ղարսի մարզը¹³:

Քննարկումն իրականացում էր խիստ յուզական մթնոլորտում, ինչն աւելի խտացաւ, երբ խորհրդարանում ընթերցուեց ամենայն հայոց կաթողիկոս Վազգէն Առաջինի, նամակը, որով իր օրհնութիւնն ու աղօթքն էր յղում «վերածնուող մեր հայրենի հարազատ պետութեանը»¹⁴: Աթէիստական խորհրդային հանրապետութեան պայմաններում դա տեղի էր ունենում առաջին անգամ:

Հռչակագրի բոլոր կէտերը առանձին քուէարկուեցին եւ այն ընդունուեց 1990 Օգոստոսի 23ին, որոշ յօդուածների շտկումներից յետոյ Օգոստոսի 24ին ներկայացուեց վերջնական տարբերակը, որին կողմ քուէարկեց 194 պատգամաւոր (դէմ չկար, 2 հոգի ձեռնպահ էր)¹⁵:

Հայաստանի անկախութեան մասին Հռչակագրում¹⁶ անկախութիւնը կապուեց ոչ միայն մարդու իրաւունքների համընդհանուր հռչակագրի, միջազգային իրաւունքի հանրաճանաչ նորմերի, ազգերի ազատ ինքնորոշման իրաւունքի, այլեւ համայն հայութեան իղծերի իրականացման եւ պատմական արդարութեան վերականգնման հետ: Նախաբանում ընդգծուեց, որ այն հիմնում է 1989 Դեկտեմբերի 1ի «Հայկական ԽՍՀ եւ Լեռնային Ղարաբաղի վերամիաւորման մասին» Հայկական ԽՍՀ ԳԽ եւ Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի որոշման վրայ: Այն հռչակում էր 1918 Մայիսի 28ին ստեղծուած ՀՀ ժողովրդավարական ասանդոյթները շարունակելու համար¹⁷: Դրա հետ մէկտեղ խնդիր էր դրում ստեղծել ժողովրդավարական, իրաւական հասարակարգ:

¹³ ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.2էջ 10:

¹⁴ ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.54, էջ 104:

¹⁵ ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.65, էջ 30:

¹⁶ Հռչակագրի ամբողջական բնագիրը տես՝

<http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=2602&lang=arm> :

¹⁷ ԽՍՀՄ փլուզման հետ մէկտեղ ազգային գաղափարախօսութիւնը բարձրացաւ բոլոր նախկին հանրապետութիւններում. դա 70 տարուայ ազգամիջեան խնդիրները անտեսելու, դրանք ամբողջատիրական բազմազգ պետութեան վարչահրամայական մեթոդներով կասեցնելու արդիւնքն էր: Միգուցէ հայերն առաջիններից էին ԽՍՀՄում, որ դրանք բարձրացրեցին, բայց դա չի նշանակում, որ եթէ հայերը դա չանէին, միւս ազգերը չէին բարձրացնելու իրենց յուզող խնդիրները:

Հոչակագիրը դարձաւ ոչ միայն անկախացման գործընթացը ազդարարող փաստաթուղթ, այլ նաեւ հայեցակարգային ծրագիր, որով յետագայում չափուելու եւ գնահատուելու էր ամէն ինչ:

Հոչակագրի ընդունումից յետոյ սկսուեց պետութեան կառուցաւորումը: Պառլամենտն անուանուեց Գերագոյն խորհուրդ (ԳԽ), կառավարութիւնը՝ մինիստրների խորհուրդը՝ նախարարների խորհուրդ: ԳԽն երկրի բարձրագոյն օրէնսդիր մարմինն էր: Ընդունուեցին պետութեան խորհրդանիշերը: Միանգամից խոշորագոյն փոփոխութիւնների գնալը շատ դժուար էր, այդ պատճառով Խորհրդային Հայաստանի պետական կառավարման կառուցուածքը ձեւի առումով առժամանակ պահպանուեց:

ԱՆԿԱԽԱՅՈՂ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՕՐԷՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ, ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՁԵԻԱԻՈՐՈՒՄԸ

Անկախութեան հոչակագրի քննարկման ընթացքում եւ ընդունումից յետոյ ԳԽի օրակարգը հարստացուեց պետականաշինութեան բազմաթիւ հարցերով: Քննարկուեցին մի շարք օրինագծեր՝ իրաւապահ մարմինների եւ զինուած ուժերի ապաքաղաքականացման, ՀՀ պետական սեփականութեան, ՀՀ ժողովրդական վերահսկողութեան կոմիտէն վերացնելու, սահմանադրական յանձնաժողով կազմելու մասին եւն.:

Հետեւողական աշխատանք էր տարւում ԳԽ աշխատանքը կատարելագործելու ուղղութեամբ: Քննարկուեցին ԳԽ կանոնադրութիւնը, ԳԽ մշտական յանձնաժողովների կանոնադրութիւնը, ԳԽ մշտական եւ յատուկ յանձնաժողովների համալրման մասին նախագծերը: Սկսուեց անկախացող հանրապետութեան տօնացանկի հաստատման գործընթացը¹⁸:

Պետականաշինութեան առաջին փուլում հակասութիւններ ծագեցին խորհրդարանի եւ կառավարութեան միջեւ. ԳԽի ղեկավարութիւնը չէր վստահում խորհրդային իշխանութեան պայմաններում ձեւաւորուած կառավարութեանը: 1990 Օգոստոսի 13ին այդ կազմը վարչապետ Վլադիմիր Մարգարեանցի գլխաւորութեամբ վայր դրեց իր լիազօրութիւնները եւ վարչապետ նշանակուեց Վազգէն Մանուկեանը, ով Ղարաբաղ կոմիտէի համահիմնադիրն էր, ՀՀ առաջին ծրագրի հեղինակը: Մանուկեանը դարձաւ Խորհրդային Հայաստանի վերջին եւ ՀՀ առաջին վարչապետը: Դրանից յետոյ օրէնսդիր եւ գործադիր մարմինների յարաբերութիւնները ժամանակաւորապէս կարգաւորուեցին:

1990 Սեպտեմբերի 18ին ԳԽն որոշում ընդունեց ՀՀ կառավարութեան կառուցուածքի վերաբերեալ, որի համաձայն կազմուեցին աշխատանքի եւ

¹⁸ Մինչեւ տօնացանկի հաստատումը ՀՀ ԳԽ 1990 Հոկտեմբերի 30ի նիստին ժամանակաւորապէս որոշուեց չնշել Նոյեմբերի 7ը՝ Հոկտեմբերեան յեղափոխութեան յաղթանակի օրը, որպէս տօն եւ շքերթ չկազմակերպել: Սկսուել էր խորհրդային խորհրդանիշերի տապալման գործընթացը:

ընկերային ապահովության, առողջապահության, արդարադատության առևտրի, փոխադրության, արտաքին գործերի, արտաքին տնտեսական կապերի, գիտատնտեսության, թեթև արդյունաբերության, հաղորդակցության, կրթության, հացամթերքների, մշակույթի, ներքին գործերի, շինարարության, սննդի արդյունաբերության, ֆինանսների նախարարությունները¹⁹: Նախարարությունների այդպիսի ծառայուն կազմը արտացոլում էր Խորհրդային Հայաստանի կարիքները, որը ԽՍՀՄ կազմում էր: Անկախ հանրապետության համար դրանց թիվը բավական շատ էր, բայց միանգամից փոփոխությունների գնալը դժուար էր, այդ պատճառով այն պահպանուեց: Այդ ցանկում չկար պաշտպանության նախարարությունը, որը հայ-ադրբեջանական հակամարտության օրէցօր սրուող պայմաններում խիստ անհրաժեշտություն էր: Բայց քանի դեռ Հայաստանը ԽՍՀՄ կազմում էր, նորընտիր ղեկավարությունը խուսափում էր ռազմապաշտպանական ոլորտում կտրուկ քայլերից: Աւելի վճռական քայլերի կողմնակից վարչապետ Մանուկեանը 1990 Օգոստոսի 21ին ստորագրեց թիւ 411 հրամանագիրը՝ «ՀԽՍՀ ներքին գործերի նախարարությանն առընթեր յատուկ ստորաբաժանումներ ստեղծելու մասին»: Ստորաբաժանումը ձեւաւորուելու էր կամաւորութեան սկզբունքով:

Թէպէտ ՀՀ իշխանութիւնները նախընտրում էին զգուշաւոր քաղաքականութիւն վարել ԽՍՀՄից անկախանալու ճանապարհին, սակայն երբեմն յարաբերութիւնների սրումից խուսափել չէր յաջողում: Այսպէս, ՀՀ ԳԽում 1990 Նոյեմբերի 13ին Վանօ Սիրադեղեանը²⁰ իր ելոյթում ընդգծեց, որ Հայաստանում գոյութիւն ունի 2 կազմակերպութիւն, որոնք ղեկավարում են դրսից՝ ՀԿԿ կենտկոմը եւ ՊԱԿը (պետական անվտանգութեան կոմիտէ), «որը ոչ մի անունով չի ենթարկուում այսօր Հայաստանի պառլամենտին, կառավարութեանը, Հայաստանին առհասարակ, եւ յայտնի չէ այդ կազմակերպութեան ... ընդերքներում ինչ է կատարում, ու՛մ համար են աշխատում այդ կազմակերպութիւնները եւ ու՛մ դէմ են աշխատում»²¹: Կրքերի բորբոքման պատճառը Հայաստանի Կոմունիստական կուսակցութեան համագումարն էր, որտեղ քննադատուել էր անկախացման գործընթացը: Այդ ելոյթից յետոյ ստեղծուեց ՊԱԿի գործունէութիւնը ուսումնասիրող յանձնաժողով (նախագահ՝ Աշոտ Մանուչարեան):

Պետականաշինութեան համար լուրջ սպառնալիք էր երկրի ներքին անդորրի խախտումը: Օգտուելով խորհրդային իշխանութեան թուլացումից եւ նոր իշխանութիւնների անփորձութիւնից աշխուժացել էին քրէական տար-

¹⁹ ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.17, էջ 59-60:

²⁰ Այդ ժամանակ Սիրադեղեանը ՀՀ ԳԽ պատգամաւոր էր, ՀՀՇ անդամ, յետոյ՝ նախագահ, յետագայում եղել է ՀՀ ներքին գործերի նախարար, Երեսնի քաղաքապետ:

²¹ ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.89, էջ 92:

րերը: Քաղաքների փողոցները հանգիստ չէին, քաղաքացիների համար անվտանգության խնդիր կար եւ անհրաժեշտ էր շատ արագ կարգ ու կանոն հաստատել: Յարձակումներ էին տեղի ունենում խորհրդային բանակի զորամասերի վրայ, ինչը մեծ ռիսկեր էր պարունակում, քանի որ կարող էր առիթ հանդիսանալ Մոսկուայի համար Հայաստան զորք մտցնելու եւ անկախության գործընթացները կասեցնելու համար: 1990 Յունուարից մինչեւ Սեպտեմբեր տեղի էր ունեցել 151 յարձակում՝ զէնքի բռնագրամամբ, որի ընթացքում 99 մարդ վիրավորուել էր, 19ը սպանուել²²: 1990 Օգոստոսի 29ին ՀՀ ԳԽ որոշմամբ ՀՀ ողջ տարածքում արտակարգ դրության մտցուել²³: Որոշումը թէպէտ եւ ցատու էր, քանի որ որոշ չափով տուժեցին որոշ ֆիդայական ջոկատներ²⁴, սակայն պետականաշինության այդ փուլում անխուսափելի էր: Վարչապետի հրամանագրի 1990 Հոկտեմբերի 18ի որոշմամբ նոյնիսկ թոյլատրուելց զէնք կրել ԳԽ նախագահության անդամներին, խորհրդարանի պաշտպանության եւ ներքին գործերի հարցերի յանձնաժողովի անդամներին²⁵:

Ընթացու նաեւ «պետական բառապաշարի» եւ տեղանունների «հայացման» գործընթաց: 1990 Նոյեմբերի 5ին կառավարության որոշմամբ ՀՀ սահմանադրության եւ միւս օրէնսդրական ակտերի հայերէն գրոյթներում «մինիստր», «մինիստրութիւն», «Մինիստրների խորհուրդ» բառերն ու բառակապակցութիւնները փոխարինուելցին «նախարար», «նախարարութիւն», «Նախարարների խորհուրդ» բառերով ու բառակապակցութիւններով²⁶: «Ժողովրդական դեպուտատ» արտայայտութիւնը փոխարինուելց «պատգամաւոր» բառով:

Թէպէտ օրէնսդիր իշխանութեան մէջ թափ էր ստեղծում ՀՀԸն, սակայն կոմունիստները որոշ տեղերում դեռ պահում էին իրենց ազդեցութիւնը եւ դա մտահոգում էր նոր իշխանութիւններին: 1990 Նոյեմբերի 5ին ԳԽն որոշեց ՀՀ պետական մարմինները եւ պետական ձեռնարկութիւնները, հիմնարկները, կազմակերպութիւնները, ուսումնական հաստատութիւնները եւ գինուորական ստորաբաժանումները ապաքաղաքականացնել, դադարեցուելց այդ մարմիններում կուսակցական եւ հասարակական-քաղաքական կազմակերպութիւնների գործունէութիւնը²⁷:

²² ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ. 90, էջ 127:

²³ ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ. 15, էջ 321:

²⁴ Մինչ այդ հայրենիքի պաշտպանության համար ստեղծուած ֆիդայական ջոկատներին կոչ էր արուել մտնել ՀՀ ԳԽ ենթակայութեան տակ, սակայն ոմանք (օրինակ, ՀԱԲը՝ Հայոց ազգային բանակ կազմատրումը) չենթարկուելցին, փորձեցին հակառակուել, ինչը դրանց վերացման պատճառ դարձաւ:

²⁵ ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.1, էջ 42:

²⁶ ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.19, էջ 78:

²⁷ ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.19, էջ 79:

Պետականաշինության համար կարելի էր նոր քաղաքական համա-
կարգի փոխակերպումը բազմակուսակցականի, իսկ ժողովրդավարու-
թեան համար՝ քաղաքացիական հասարակության ձեւաւորումը: 1990
Դեկտեմբերի 12ին քննարկուեց «Կուսակցութիւնների, հասարակական-
քաղաքական կազմակերպութիւնների մասին» ՀՀ օրէնքի նախագիծը²⁸:
Կուսակցութիւնների եւ հասարակական կազմակերպութիւնների թիւը շատ
արագ սկսեց աճել: Գիտում առաջարկութիւն եղաւ մինչեւ իրավիճակի կա-
յունացումը արգելել կուսակցութիւնների գործունէութիւնը, սակայն ԳԽն
չընդունեց դա: ԳԽի ներսում ընթանում էր կուսակցական խմբակների եւ
պատգամաւորական խմբերի ձեւաւորում:

ԳԽն 1990 Նոյեմբերի 5ին, «Հայաստանի անկախութեան մասին» հռչա-
կագրին համապատասխան, որոշուեց ՀՀ նոր սահմանադրութեան մշակ-
ման համար ստեղծել սահմանադրական յանձնաժողով, որի նախագահը
դարձաւ ԳԽ նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանը²⁹: Այդ պաշտօնում առա-
ջադրուել էին նաեւ «անկախականներ» Պարոյր Հայրիկեանը եւ Աշոտ Նա-
ասարդեանը³⁰: ԱԻՄի ծրագրային փաստաթղթերում վաղուց դրուած էր
սահմանադիր ժողովի պահանջը: Այդ է պատճառը, որ անկախացման տա-
րիներին ԱԻՄը անընդհատ եւ ապարդիւն փորձում էր այդ գաղափարը ար-
մատաւորել հասարակական գիտակցութեան մէջ: Հայրիկեանը, գտնում
էր, որ սահմանադրութեան ընդունումը խիստ անհրաժեշտ է, բայց ոչ
պատգամաւորների կազմով, ւեւլացնելով՝ «...այդ Սահմանադրութիւնը
մենք չպէտք է հաստատենք, այլ պէտք է յարուց մարմին, որը պէտք է
հնարաւորինս անկախ լինի ամէն տեսակի ճնշումներից»³¹: Նասասարդ-
եանը կարելի էր խնդիր էր համարում քաղաքական անկախութեան ա-
պահովումը: Եւ դա պէտք է արտայայտուէր բանակի ստեղծմամբ: «Մենք
պէտք է ունենանք բանակ առաջին իսկ օրերին, ոչ թէ ներքին գործերին
կից...: Պէտք է ազգայնացուի պետական անվտանգութեան կոմիտէն, կազ-
մալուծուի, նորը ստեղծուի: Ներքին գործերի նախարարութիւնը պէտք է
ազգայնացուի»³²: Իշխող ուժի՝ ՀՀԾի, ղեկավարները ւեւլի զգուշ քաղաքա-
կանութեան կողմնակից էին եւ դէմ էին այդպիսի շտապողականութեանը:

Սահմանադրական յանձնաժողովի կազմում ընդգրկուել էին պատգա-
մաւորներ, իրաւագիտութեան ոլորտի ճանաչուած մասնագէտներ, յայտնի
մտաւորականներ: Պետական շինարարութեան հարցեր քննարկուեցին

²⁸ ՀԱԱ, ֆ. 207, ց.62, գ.20, էջ 128:

²⁹ ՀԱԱ, ֆ.207, ց. 62, գ.19, էջեր 80-82:

³⁰ Երկուսն էլ Խորհրդային տարիներին գործող ընդհատակեայ Ազգային միացեալ
կուսակցութեան անդամներ էին, խորհրդային այլախոհներ, երկար տարիներ ի-
րենց հայեացքների համար անցկացրած խորհրդային աքսորավայրերում:

³¹ ՀԱԱ, ֆ. 207, ց.62, գ. 96, էջ 13:

³² Նոյն, էջ 20:

նաեւ ԳԽ 1990 Դեկտեմբերի 4ի նիստում՝ անկախ պետականութեան յանձնաժողովը ստեղծելիս:

ԳԽ 1990 Դեկտեմբերի 10ի որոշման համաձայն «Մինչեւ Հայաստանի Հանրապետութեան սահմանադրութեան ընդունումը դադարեցուեց գործող սահմանադրութեան այն դրոյթների գործողութիւնը, որոնք հակասում էին «Հայաստանի անկախութեան մասին» հռչակագրի հիման վրայ Հայաստանի Հանրապետութեան Գերագոյն խորհրդի կողմից ընդունուած օրէնքներին»³³: Այսինքն, եթէ նշելու լինենք փաստաթղթերի աստիճանակարգը, ապա ամենավերելում Անկախութեան հռչակագիրն էր, յետոյ դրա հիմամբ ընդունուած օրէնքները, յետոյ նոր սահմանադրութիւնը, ինչը, իհարկէ, հակասում էր սահմանադրութեան, որպէս պետութեան հիմնական օրէնքի, տրամաբանութեանը:

Հետեւելով ժողովրդավարական պետութեան սկզբունքներին մեծ ուշադրութիւն էր յատկացում հաշուետուութեան գործիքակազմի ներդրմանը եւ ԳԽն ներկայացուցչական ժողովրդավարութեան օրինակ էր: ԳԽ մշտական յանձնաժողովների նախագահները պարտադիր հաշուետուութիւններ էին ներկայացնում յանձնաժողովների կողմից կատարուած աշխատանքների մասին: Հաշուետուութիւնները լուրջ քննարկում եւ գնահատում էին ԳԽ նիստերում:

Եթէ ԳԽ առաջին նստաշրջանում պետականաշինութեան համար ամենակարեւորն Անկախութեան հռչակագիրն էր, ապա երկրորդում՝ անկախութեան հանրաքուէի նախապատրաստելը: Կարելորում էր քրէական եւ քաղաքացիական օրէնսդրութեան արմատական վերամշակումը, փոփոխութիւններ ոստիկանութեան, դատախազութեան եւ դատական համակարգում՝ այսինքն Յրդ իշխանութեան բարեփոխումը: Քաղաքական նպատակների իրականացման համար լուրջ հիմք պէտք է հանդիսանային սպասուելիք տնտեսական ձեռքբերումները: 1991 Յունուարի 29ին ընդունուեց «Գիւղացիական եւ գիւղացիական կոլեկտիւ տնտեսութիւնների մասին» ՀՀ օրէնքը, նորացուեց ՀՀ հողային օրէնսգիրքը, որոնցով սկիզբ դրուեց հողի սեփականաշնորհման գործընթացին:

Հողի սեփականաշնորհման գործընթացը սկսուել էր, սակայն գիւղխորհրդների որոշ նախագահներ խոչընդոտում էին (ինչպէս յետոյ պարզուեց՝ ոչ միշտ անհիմնաւոր), այդ էր պատճառը, որ կարելորում էր նաեւ տեղական խորհուրդների համակարգի բարեփոխումը: Սեփականաշնորհման գործընթացում շտապողականութիւնը յետագայում բացասական հետեւանքներ ունեցաւ³⁴: Այդ ժամանակ յետխորհրդային երկրներին Արեւմուտ-

³³ ՀԱԱ , ֆ.207, ց.62, գ.20, էջ 144:

³⁴ Օրինակ՝ փոշիացուեց հանրապետութեան արդիւնաբերական ներուժը, շատ ձեռնարկութիւններ սեփականաշնորհումից յետոյ փակուեցին, իսկ դրանց գոյքը վա-

քի կողմից առաջարկուել էր «Վաշինգտոնեան կոնսենսուս» տնտեսութեան ազատականացման ծրագիրը, որը համարում էր համաշխարհային եւ հաշուի չէր առնում պետութիւնների զարգացման տարբեր մակարդակները: Մանուկեանը, լինելով արագ սեփականաշնորհման կողմնակից, այնուամենայնիւ նշում էր, որ «*տնտեսութեան ազատականացման այն մոդէլը, որ առաջարկում են մեզ Արեւմուտքի որոշ շրջանակներ, հնարաւոր է բարի մտադրութիւններով, հաշուի չեն առնում ո՛չ տեխնիկապէս զարգացած ձեռնարկութիւնների գոյութեան փաստը երկրում, ո՛չ բարձր որակաւորում ունեցող հարիւր հազարաւոր մասնագէտներին, ո՛չ մեր ժողովրդի մտածելակերպը, ո՛չ էլ նրա բնական յաւակնութիւնները: Այդ նախագծերի իրականացումը կը յանգեցնի նրան, որ Հայաստանում 1,5 մլն մարդ կը մնայ, որոնք հիմնականում կը զբաղուեն մանր առեւտրով, արհեստներով, լրիկ աճեցնելով ու կօշիկ կարելով*»³⁵: Իրականում յետագայում հենց այդպէս էլ եղաւ: Փոշիացուեց հզօր արդիւնաբերական ներուժը, ինչը բանուորա-ճարտարագիտական աշխատուժի գաղթի պատճառ հանդիսացաւ:

1991 Փետրուարի 26ին ընդունուեց ՀՀ օրէնքը «Հասարակական-քաղաքական կազմակերպութիւնների մասին», իսկ Ապրիլի 2ին այդ օրէնքի կիրարկման կարգը, ինչի կապակցութեամբ ԳԻՄ փոխնախագահ Բաբկէն Արարքեցեանը շնորհաւորեց բոլորին նշելով, որ «...*փաստօրէն առաջին անգամ, մեր հանրապետութիւնում, յամենայն դէպս վերջին 70 տարուայ ընթացքում ստեղծուեց բազմակուսակցական համակարգ*»³⁶: Այդ օրէնքի ընդունումից յետոյ ՀՀ արդարադատութեան նախարարութիւնը գրանցեց 20 քաղաքական կուսակցութիւն, որոնց թւում էին Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը (ՀՅԴ), Հայաստանի Հանրապետական Կուսակցութիւնը (ՀՀԿ), Հայոց Համազգային Շարժում Կուսակցութիւնը (ՀՀՇ), Ազգային Ինքնորոշում Միաւորումը (ԱԻՄ), Հայաստանի Կոմունիստական Կուսակցութիւնը (ՀԿԿ), Սահմանադրական Իրաւունք Միութիւնը (ՄԻՄ) եւ.: 1995ին արդէն գրանցուել էր 49 կուսակցութիւն: Յետագայում դրանց թիւը շարունակեց աճել³⁷:

ճառուեց: Դա նաեւ առեւտի գործազրկութեան եւ որակեալ կադրերի հանրապետութիւնից արտահոսքի պատճառ հանդիսացաւ:

³⁵ Մանուկեան, էջ 169:

³⁶ ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.99, էջ 15:

³⁷ Կուսակցութիւնները դիտւում էին, որպէս իշխանութեան հասնելու օրինական միջոց, ընկերային այս կամ այն խափ պահանջների ձեւակերպող ու արտայայտող, իսկ ընդդիմադիր կուսակցութիւնները՝ նաեւ իշխանութեան վերահսկողութեան գործիքակազմ եւ քաղաքական այլընտրանքի առաջադրող: 1990ականների առաջին կէսին առաւել մեծ ազդեցութիւն ունէին ազատական եւ ազգային գաղափարախօսութեամբ կուսակցութիւնները, կոմունիստների եւ պահպանողականների ազդեցութիւնը այդ շրջանում թոյլ էր:

ԽՍՀՄ 9 հանրապետություններում 1991 Մարտի 17ին անցկացրած հանրաքույնում դրանց բնակչության մեծ մասը քուլարկել էր միութենական պետությունը պահպանելու օգտին: Ռուսաստանի դեմոկրատական շարժումը ժամանակաորապես անկում էր ապրում: Այդ պայմաններում աշխուժացել էին յետադիմական ուժերը: Ապրիլին խորհրդադադրեջանական ուժերը յարձակուեցին Գետաշէնի, Շահումեանի, Արցախի վրայ, տեղահանելով հայ բնակչութանը: Բանակի ստեղծումը լուրջ օրակարգային խնդիր էր դարձել:

Հայաստանում անկախութեան հանրաքույն անցկացուեց 1991 Սեպտեմբերի 21ին եւ ընտրողների աւելի քան 94%ը քուլարկեց անկախութեան օգտին³⁸: 1991 Դեկտեմբերին ԽՍՀՄ դադարումով վերացուեց բռնի ուժով Հայաստանին միութենական պայմանագիրը ստորագրելու հարկադրանքի վտանգը: Նոյն տարուան Սեպտեմբերի 2ին Ստեփանակերտում Լեռնային Ղարաբաղի մարզային եւ Շահումեանի շրջանային եւ տեղական խորհուրդների պատգամաւորների մասնակցութեամբ համատեղ նստաշրջանը հռչակեց հայկական երկրորդ հանրապետութեան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան ծնունդը:

1990-92՝ ընդունուեցին ՀՀ պետական խորհրդանիշերը: 1990 Օգոստոսի 24ին որպէս պետական դրօշ հաստատուեց Եռագոյնը՝ 1918ի Հայաստանի առաջին հանրապետութեան դրօշը: Եռագոյնն արդէն հարազատացել էր 1988-90՝ ցոյցերի շնորհիւ եւ դրա ընդունումը խնդիր չառաջացրեց: Այն բարձրացուեց ԳԽ շէնքի եւ կառավարական տան վրայ Օգոստոսի 25ին: Ընդ որում դա արուեց Հայաստանի առաջին հանրապետութեան օրհներգի՝ «Մեր հայրենիք»ի, հնչիւնների տակ, որը դեռեւս չէր հաստատուել որպէս Երրորդ հանրապետութեան օրհներգ: Դա տեղի ունեցաւ 1991 Յուլիսի 1ին³⁹: Բայց զինանշանի շուրջ ԳԽում լուրջ բանավէճ ծաւալուեց: Զինանշանի ընտրութեան մրցոյթում ներկայացուած բոլոր տարբերակներում պատկերուած էին Մասիսն ու Սիսը, որոնք հայ ժողովրդի համար սոսկ լեռներ չեն, այլ պատմական յիշողութեան խտացուած մարմնաւորում, ազգային ինքնութեան կարեւոր խորհրդանիշեր: Պատահական չէ, որ դրանք պատկերուած էին նոյնիսկ Խորհրդային Հայաստանի զինանշանին: Բացի դրանից տեղեկատուութիւն էին պարունակում հայկական արքայատոհմերի կամ խորհրդանշանների վերաբերեալ:

Թէժ անցաւ նաեւ դրամի անուան հետ կապուած քննարկումը: Շատ տարբերակներ էին առաջարկուել՝ դահեկան, ստակ, պոլիկ, մանրադրամ,

³⁸ Հանրաքույնի նախապատրաստման եւ անցկացման մասին աւելի մանրամասն տե՛ս՝ «Անկախութեան օրակարգի ձեւաւորումը Անկախութեան հրապարակում եւ Գերագոյն խորհրդում» յօդուածում (*Հայկազեան հայագիտական հանդէս*, 43/2:2023 [https://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Haigazean/43\(2\).pdf](https://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Haigazean/43(2).pdf)) :

³⁹ Աւելի մանրամասն այդ մասին տե՛ս՝ Մինասեան, էջ 136:

ի բար, ի մի են.: Տիգրան Սարգսեանը, տնտեսական հարցերով յանձնաժողովի անունից, առաջարկեց անուանել դրամ եւ լումայ⁴⁰: Դարձեալ երկար քննարկումներից յետոյ դա հաստատուեց 1992ին:

Պետական խորհրդանիշերի հարցը ամբողջացաւ 1994 Փետրուարին, երբ Աշոտ Նաասարդեանի կողմից մտցուեց օրակարգ որպէս հրատապ հարց: Բանակը, ներքին ուժերը, օդանաւային ընկերութիւնը չունէին խորհրդանիշեր, նոյնիսկ երբեմն օգտագործում էին խորհրդային խորհրդանիշերը: Գին «Ազգային խորհրդանիշերի եւ տարբերանշանների համալիր համակարգի ստեղծման մասին» որոշում ընդունեց⁴¹: Դրանում ասում էր, որ ելնելով ՀՀ անկախութեան հռչակման մասին ՀՀ ԳԽ 1991 Սեպտեմբերի 23ի որոշումից՝ զինուած ուժերում, ռազմականացուած մարմիններում եւ պետական այլ կառոյցներում ազգային խորհրդանիշերի եւ տարբերանշանների համալիր համակարգ ստեղծելու նպատակով, ՀՀ ԳԽ նախագահութեանը յանձնարարուեց ստեղծել ԳԽի պատգամաւորներից, կառավարութեան համապատասխան մարմինների ու գերատեսչութիւնների ներկայացուցիչներից, զինուորականներից եւ այլ մասնագէտներից 20 հոգուց կազմուած ժամանակաւոր յանձնաժողով, որը պէտք է մրցութային կարգով հաստատուած համալիր տարբերակները ներկայացնէր ԳԽի հաստատմանը:

ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ՁԵՒԱԻՈՐՄԱՆԸ ԵՒ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՒՈՂ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ՀՀ ԳԽՈՒՄ

Պետականաշինութեան կարեւորագոյն խնդիրը ազգային բանակի կազմաւորումն էր: Արտաքին վերահաս վտանգի հետ մէկտեղ, ինչպէս վերը նշուեց, հանրապետութեան տարածքում տարերայնօրէն սկսեցին ձեւաւորուել զինուած խմբեր: 1990ի ամռանը Գորիսում, Սինիքի ջրկատները ժողովրդական ինքնապաշտպանութեան խորհուրդ ստեղծեցին: Արդէն այդ ժամանակ էր կոչ արուած միաւորել այդ ջրկատները եւ դրանց հիմքի վրայ ստեղծել հայոց բանակ:

Խորհրդային բանակում ազգամիջեան բախումներ էին սկսուել եւ պարզ էր, որ հայ երիտասարդների համար այն անվտանգ չի: Հայաստանը ընդունել էր Անկախութեան հռչակագիրը, բայց դեռ ԽՍՀՄ կազմում էր, հետեապէս հայ երիտասարդները զորակոչուած էին խորհրդային բանակ: Ինչպէս վերը նշուեց, վարչապետի 1990 Օգոստոսի 21ի հրամանագրով զինուած ջրկատները օրինականացնելու համար, մտցուեցին ներքին գործերի նախարարութեան կազմի մէջ:

⁴⁰ ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.190, էջ 203:

⁴¹ ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.348, էջ 41:

Սեպտեմբերին սկսուեց Յատուկ գնդի ձեւաւորումը⁴², որի մասին ԳԽում խօսեց Վազգէն Սարգսեանը⁴³: Նա հաստատեց, որ դա շատ դժուար էր, որովհետեւ ոչ ոք այդ փորձը չուներ: Բնական էր, որ ֆիդայական ջոկատներում կոտող զինեալների մի մասը չէր ուզում մտնել յատուկ գունդ, բայց դա յաղթահարուեց: Յետոյ դիմումներ եղան յատուկ գնդում ներգրաւուելու համար, եւ դրանք այնքան շատ էին, որ ստիպուած եղան սահամանափակել մինչեւ 5000 հոգի, առաւել եւս, որ կարող էին ապահովել միայն 2500-3000 հոգու հանդերձանքը: Մանուկեանը ողջոյնի խօսքում ասաց. «Այժմ մենք ունենք մեր հանրապետութիւնը: Այն դեռ լրիւ անկախ չէ: Բայց մենք քայլում ենք այդ ուղղութեամբ եւ կը հասնենք քաղաքական, տնտեսական անկախութեան: Մենք կ'ունենանք հզօր պետութիւն, հզօր բանակ, հզօր տնտեսութիւն եւ կը վերադարձնենք մեր նախնիների փայլը»⁴⁴: Յատուկ գնդի կազմում ընդգրկուեցին Արարատի, Գորիսի, Վարդենիսի, Իջեանի, Մեղրու եւ այլ շրջանների 26 ինքնապաշտպանական վաշտերը⁴⁵:

1990 Հոկտեմբերի 17ի ԳԽ որոշմամբ ՀՀում կասեցուեց «Ընդհանուր զինապարտութեան մասին» ԽՍՀՄ 1967 Հոկտեմբերի 12ի օրէնքի գործադրութիւնը⁴⁶: Որոշուեց ՀՀ քաղաքացիների զօրակոչը կազմակերպել ՀՀ

⁴² Յատուկ գնդի ստեղծումը ատենի վարչապետ Մանուկեանը այսպէս է նկարագրել իր գրքում՝ «Հայաստանը դեռեւս ԽՍՀՄ կազմում էր, հանրապետութիւնում ձեւաւորուել էին անկառավարելի զինուած ջոկատներ, առկայ էին նաեւ ինքնապաշտպանութեան խնդիրներ, հանրապետութիւնը բանակի կարիք ուներ, ուստի ՀՀ վարչապետի 21.08.1990թ. թիւ 411 եւ 13.09.1990թ. թիւ 420 որոշումներով ստեղծուեց յատուկ գունդը, որը յեղաշարժում հայոց բանակին հիմք ծառայեց: 1991թ. Մայիսի 4ի թիւ 325 որոշմամբ ստեղծուեց ՀՀ նախարարների խորհրդին առընթեր պաշտպանութեան կոմիտէն» (Մանուկեան, էջ 70. նաեւ՝ <https://vazgenmanukyan.am/wp-content/uploads/2021/12/Armenian-Dream-in-the-Deadlock-of-Survival.pdf>):

⁴³ Վազգէն Սարգսեանը գրող էր, հրապարակախօս, ՀՀՇ շարժման գործուն մասնակիցներից, ինչի շնորհիւ 1990ին ընտրուեց Հայաստանի խորհրդարանի պատգամատուր: Նա եղել է ԳԽ պաշտպանութեան եւ ներքին գործերի մշտական յանձնաժողովի նախագահ, այնուհետեւ պաշտպանութեան նախարար նշանակուեց:

⁴⁴

<https://www.civilnet.am/news/188695/%D5%B0%D5%A1%D5%B5%D5%AF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%A2%D5%A1%D5%B6%D5%A1%D5%AF%D5%AB-%D5%BD%D5%BF%D5%A5%D5%B2%D5%AE%D5%B8%D6%82%D5%B4%D5%A8-%D6%87-%D5%BA%D5%A1%D5%B7%D5%BF%D5%BA%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%A2%D5%B8%D5%AC%D5%B8%D6%80-%D5%B6%D5%A1%D5%AD%D5%A1%D6%80%D5%A1%D6%80%D5%B6%D5%A5%D6%80%D5%A8-1918-2019/> :

⁴⁵ Մինասեան, էջ 142:

⁴⁶ ՀԱԱ, ֆ.207, ց. 62, գ.18, էջ 109:

տարածքում: ՀՀ տարածքից դուրս կարող էին մեկնել միայն այդպիսի ցանկություն ունեցող երիտասարդները:

ԽՍՀՄ նախագահ Միխայիլ Գորբաչովի 1990 Յուլիսի 25ի հրամանագրով անօրինական զինուորական խմբաւորումները պետք է ցրուէին 15 օրում: Մտավախութիւն կար, որ կենտրոնական իշխանութիւնները կարող են միջամտել: Մոսկուայի հետ բանակցութիւնների շնորհիւ հրամանագրի գործողութեան ժամկէտը երկարաձգուեց 3 ամսով: Բանակցութիւնների արդիւնքում ՀՀ իշխանութիւնները պարտաւորուեցին Մոսկուայի առջեւ արձատապէս վերափոխել Հայաստանի ներքին գործերի նախարարութիւնը եւ ոստիկանութիւնը: Ոստիկանութիւնը պէտք է համալրուէր աշխարհագորի առողջ ուժերով: Բոլոր աշխատատեղերը խմբաւորում, մասնաւորապէս արդիւնաբերական ձեռնարկութիւններում, պէտք էր ստեղծուէին բանուորական ջոկատներ, որոնք պէտք է ապահովէին գործարանի, ձեռնարկութիւնների անվտանգութիւնը: Ինչպէս տեսնում ենք՝ ՀՀ ղեկավարութիւնը փորձում էր անկախութեան ուղի դուրս գալ օգտագործելով «խորհրդային խաղի կանոնները»: Յաջորդ փուլը, ինչպէս վերը նշուեց, ջոկատների համախմբումն էր ԳԽի շուրջ:

1990 Հոկտեմբերի 21ին վարչապետ Մանուկեանը ՀՀ ԳԽում ներկայացրեց մշակուած բանակաշինութեան հետեւեալ ծրագիրը.

1. Զինուած տարանջատուած ջոկատների համախմբում, կարգուկանոնի ստեղծում:
2. Նրանց բաշխում ներքին գործերի նախարարութեան, քաղաքացիական պաշտպանութեան համակարգերի, ԴՕՍԱԱՖի⁴⁷ կառոյցներում, խորհրդային բանակի զօրաջոկատներում, քանի որ ԳԽ որոշման համաձայն հայ երիտասարդները պէտք է ծառայէին միայն Հայաստանում: Այդ քայլով ապահովում էր «զինեալ միաւորումներին պետական կառուցուածքների մէջ ներգրաւելը»⁴⁸:
3. Պաշտպանութեան կոմիտէի ստեղծում:
4. Արտասահմանի հայազգի *բիզնէսմէն*ների հետ համագործակցութիւն ֆինանսական միջոցներով ապագայ բանակը ապահովելու համար, քանի որ բանակաշինութիւնը մեծ ծախսերի հետ էր կապուած:

Հայերը չէին ցանկանում ծառայել Հայաստանում տեղակայուած խորհրդային ճրդ բանակի զօրքերում: Որոշակի դեր խաղաց դրանում նաեւ ազգային կուսակցութիւնների դիրքորոշումը: ԱԻՍ նախագահ Հայրիկեանը

⁴⁷ ԽՍՀՄում գործող բանակին, օդուժին եւ նաւատորմին աջակցող կամաւոր ընկերութիւն. անուանումը ստացել է ռուսերէն յապաւումից՝ *ДОСААФ, Добровольная обществу содействия армии, авиации и флоту*:

⁴⁸ Մանուկեան, էջ 72. նաեւ՝ <https://vazgenmanukyan.am/wp-content/uploads/2021/12/Armenian-Dream-in-the-Deadlock-of-Survival.pdf> :

անբարոյականութիւն անուանեց խորհրդային զօրքերում ծառայութեան կազմակերպումը: Դէմ էին դրան նաեւ ՀՀԿն եւ ՀՅԴն⁴⁹:

Գիտում այդ հարցի առթիւ ելոյթ ունեցավ Տէր Պետրոսեանը: Ուկրաինան ազգայնացրել էր իր երկրում գնտուող խորհրդային բանակը, դրա ընկերային եւ տնտեսական հարցերը վերցնելով իր վրայ, ադրբեջանցիներն իւրացրեցին իրենց երկրում տեղակայուած խորհրդային 4րդ բանակի սպառազինութիւնները, իսկ ՀՀն համաձայնեց 7րդ բանակի իր տարածքում ներկայութեանը: Դրանում պէտք է ծառայէին նաեւ հայ զինուորներ, բայց դա համարում էր Ռուսաստանի Դաշնութեան (ՌԴ) բանակ: Պէտք է պայմանագրով դա կարգաւորուէր: Պայմանաւորուածութիւն կար, որ ստեղծուող ազգային զօրագունդը սպառազինութեան մասով նախկին ԽՍՀՄից կը ստանայ այնքան, որքան կը ստանայ Ադրբեջանը:

Սարգսեանը խօսելով բանակի մասին 1992ի սկզբին նշում էր, որ այն աւելի արագ է ստեղծում, քան ընդունում են համապատասխան օրէնքները: Բանակաշինութեան վերաբերուող օրէնքների նախագծերը ետ էին տրուել ոչ-հայեցի եզրոյթների պատճառով: Սարգսեանը անդրադարձաւ նաեւ այդ հարցին. «Առանց աղաղակի ենք անում: Դա ճիշդ է: Եւ օրէնքները հետք են ընկել, եւ ես ձեզ կը խնդրէի օրէնքները հասնեն բանակի ստեղծմանը: Ներկայացուած փաստաթուղթը ես կը խնդրէի խորհրդարանից, որպէսզի ընդունի, որովհետեւ այդ նոյն հայեցի մտածելակերպը մենք էլ ունենք: Մի ժամանակ ես էլ զբաղւում էի գրականութեամբ եւ կարծեմ վարդգրող չէի: Բայց երբեմն շահերն աւելի կարեւոր են, քան ասենք ցանկութիւնները: Հիմա ես կը խնդրէի օրէնքն ընդունուի այնպէս, ինչպէս որ կայ, քանի որ բազմաթիւ նրբութիւններ կան: Բայց հասկացէք սպաները, որ պիտի գան Հայաստան, գալու են ոչ թէ Հաբեշտանից կամ Թուրքիայից ..., այլ ... նոյն ԷՍԷՆԳէ⁵⁰ի երկրներից: Եւ որպէսզի այդ բալանսը պահպանուի, ամենաառաջին հերթին անհրաժեշտ է անցումը լինի սահուն, անհրաժեշտ է, որ դա պահպանուի...»⁵¹: Նա նշեց նաեւ, որ խորհրդային երկրի կազմալուծման հետ մէկտեղ տեղի է ունենում թալան, որը պէտք է վճռականօրէն կասեցուի: «Կազարմանների քարերն են հանում, փանում, մարտագլխիկների միջից վառօղը փանում են Թուրքիա: Տեսքով բոլորովին նոր մեքենաներից հանուած են աստիճանները: Անդրկովկասի օկրուգային հակաօդային ուժերի հրամանատարի հրամանով հոթիոները իջեցուած են եւ մեր օդային սահմանը պաշտպանուած չէ»: Նա տեղեկութիւններ ունէր, որ Արթիկի եւ Ստեփանաւանի զօրամասերը պէտք է դուրս բերուէին ՀՀից, իսկ

⁴⁹ ՀՀԸ ղեկավարութիւնը զգուշաւոր քաղաքականութեան կողմնակից էր, ուզում էր պատրանք ստեղծել, որ ենթարկւում է Մոսկուային թելադրած խաղի կանոններին:

⁵⁰ Նկատի ունէր ԱՊՀն (ռուսերէն ՇՊԳ յապաւամից՝ содружество независимых государств), այսինքն՝ անկախ պետութիւնների համագործակցութիւն, որը ստեղծուեց ԽՍՀՄ փլուզումից յետոյ:

⁵¹ ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.183, էջ 96:

այնտեղ հիմնականում հռթիռներ էին: Նշեց, որ դա պետք է կանխել: Արծուաշէն գիւղից հանուել էր խորհրդային 7րդ բանակի այն դասակը, որը պետք է այդ գիւղը պաշտպանէր: Ռազմավարական զենքը հանում էր ՀՀից, ոչնչացում էին գաղտնի փաստաթղթերը: Սարգսեանը դիմելով խորհրդարանին քաղաքական որոշում էր ակնկալում: Նա ուզում էր, որ խորհրդարանը թոյլ տայ դիմելու վճռական քայլերի, որ զենքը ՀՀից չհանուի: Դիմելով խորհրդարանին, նա նշեց՝ «ամէն ինչի մէջ քաղաքական խաղեր չփնտրէք եւ էսօր չափազանց պատասխանատու պահ է, կարողանանք ճիշտ քաղաքական որոշում ընդունել: Ես համաձայն չեմ այս կողմնորոշմանը, որը կոչում է ռուսական կողմնորոշում: ...ռուսական կողմնորոշումը մեզ խանգարում է եւ նրանք մեզ յանձնառ խաբելու են, խաբել են միշտ եւ հիմա էլ խաբելու են, ու իվերջոյ դատարկ տաշտակն է մնալով»⁵²: Տէր Պետրոսեանը ճիշտ չէր համարում ռուսաստանեան 7րդ բանակի ազգայնացումը, ինչպէս առաջարկում էր ԱԺՄ⁵³ն, սակայն գտնում էր, որ օրէնսդրական յենք է պետք, որ սպառնազինութիւնը երկրից դուրս չտարուի: Բայց մինչեւ այդ յենքը ստեղծուէր պետութիւնը արդէն վտանգուած էր:

Անհանգիստ վիճակ էր նաեւ Թուրքիայի հետ սահմաններում: Ձեռակախօրէն այնտեղ էին տեղակայուած ինչպէս նախկինում խորհրդային, այժմ արդէն ՌԴ սահմանապահ զօրքերը: Սակայն այդ զօրքերում տիրող անիշխանութեան մթնոլորտում իրականում սահմանը յուսալիօրէն պաշտպանուած չէր: Գիտում այդ հարցը պարբերաբար բարձրացում էր: Մասնաւորապէս Նաւասարդեանը 1992 Ապրիլի 13ի նիստում ահազանգում էր «...ԱՊՀի, Ռուսաստանի սահմանապահ զօրքերի կողմից Հայաստանի Հանրապետութեան Թուրքիայի հետ ունեցած սահմանը գործնականօրէն չի հսկում եւ չի պաշտպանում: Մուտքն ու ելքը երկկողմանիօրէն ազատ է տարբեր երկրների հետախուզական եւ դիւերսիոն խմբերի համար: Համոզուած ենք, որ ներկայումս Հայաստանում, ազատօրէն գործում են տարբեր երկրների հետախուզութիւնների գործակալներ: ...Հայաստանից տարբերաբար դուրս են հանում կամ տեղում ոչնչացում դեռ հոչակագրով Հայաստանի սեփականութիւն հանդիսացող ծանր ու թեթեւ զենքերի, զինամթերքների խոշոր քանակութիւններ»⁵⁴:

Այդ խառը ժամանակահատուածում Ապրիլի 8ի լոյս 9ին Բալախովիտի զինապահեստներում խոշոր պայթիւն էր տեղի ունեցել եւ մեծ քանակութեամբ զենք էր ոչնչացուել: Նաւասարդեանը տարակուսում էր, որ անկա-

⁵² ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.184, էջ 92:

⁵³ Ազգային ժողովրդավարական միութիւնը (ԱԺՄ) հիմնադրել էին Վազգէն Մանուկեանն ու ՀՀԻց դուրս եկած նրա համախոհները, 1991ին: 1991 Սեպտեմբերի 26ին, Մանուկեանը սուր հակասութիւններ ունենալով ՀՀԸ ղեկավարութեան հետ հրաժարական էր տուել վարչապետի պաշտօնից: Կուսակցութիւնը պաշտօնապէս գրանցուեց 1992 Մարտի 19ին:

⁵⁴ ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.194, էջ 176:

խութեան հռչակումից յետոյ անցել է 2 տարի, բայց դեռ չկայ ՀՀ «*նազմա-քաղաքական եւ նազմական դոկտրինա եւ նրան համապատասխան Հայաստանի Հանրապետութեան զինուած ուժեր, պետական կանոնաւոր բանակ, սահմանապահ զօրք, հետախուզութիւն...*»⁵⁵: Ճիշտ է, 1992 Յունուարի 28ին կառավարութիւնն ընդունել էր «ՀՀ պաշտպանութեան նախարարութեան մասին» որոշումը⁵⁶, բայց համակարգի ձեւաւորումը իրօք ուշանում էր:

Փաստօրէն 1990-92՝ քննարկումները ընթանում էին հետեւեալ հարցերի շուրջ.- ստեղծել բանակ թէ՛ ոչ, եթէ այո, ապա ո՞ր պահին ստեղծել այն եւ ի՞նչ ճանապարհով: Սկզբնական փուլում իրօք այդ հարցերն էին էական, բայց յետագայում ԳԽում երբեւիցէ չքննարկուեցին հետեւեալ հարցերը.- ինչպիսի բանակ է պէտք ՀՀին, ո՞րն է լայն առումով ՀՀի պաշտպանութեան վարդապետութիւնը: Մինչդեռ այնպիսի շրջապատում, ինչպիսին ունէր եւ ունի ՀՀն, այդ հարցերը խիստ այժմէական են: Անհատ պատգամաւորներ (օրինակ, Աշոտ Նաւասարդեանը) բարձրացրել են պաշտպանութեան վարդապետութեան վերաբերող հարցեր, բայց պատգամաւորների մեծ մասը դեռ չէր հասունացել բանակաշինութեան, երկրի պաշտպանութեան վերաբերեալ այդ խորութեամբ հարցերի քննարկմանը:

ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐ ՊԵՏՈՒԹԵԱՆ ԿԱՌՈՒՅՈՒԱԾՔՈՒՄ՝ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՕՆԻ ՀԻՄՆՈՒՄԸ: ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԵՒ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՁԵՒԻ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԳԽՈՒՄ

1991ից հայ-ադրբեջանական հակամարտութիւնը գնալով սրում էր եւ պատգամաւորներին թւում էր, որ անհրաժեշտութիւն կայ ունենալու մի ղեկավար մարմին, որը անընդհատ փոփոխուող իրավիճակում կը կողմնորոշուէր եւ որոշում ընդունէլու պատասխանատուութիւն կը վերցնէր: Հրատապ լուծում պահանջող հարցեր էին ծագում նաեւ ներքին քաղաքականութեան ոլորտում: 1991 Մայիսի 23ի ԳԽ նիստում քննարկուեց ՀՀ նախագահի պաշտօն ստեղծելու հարցը: Ձեկուցումով հանդէս եկաւ, Մանուկեանը, որ տեղեակ պահեց, որ 1991 Մայիսին Հայաստան են եկել աշխարհի խոշորագոյն հայ 250 *քիզնէսմէններ*: Մայիսի 25ին մեծ միջոցառում պէտք է լինէր, որտեղ կը քննարկուէին համազգային հարցեր, այնպիսի կառոյցների ստեղծման հարցը, որ «*աշխարհով սփռուած մեր ազգը կարողանայ հանդէս գալ որպէս մի ամբողջութիւն իր կառոյցների մէջ*»⁵⁷: Մանուկեանը ինչեցրեց այն միտքը, որ հանրապետութեան կառուցուածքը չի համապատասխանում երկրի համար առկայ մարտահրաւերներին, որ «խճճուած յարաբերութիւններ են» ԳԽի եւ նախարարների խորհրդի միջեւ, մինչդեռ եր-

⁵⁵ Նոյն :

⁵⁶ Աւելի մանրամասն այդ մասին տես՝ Մինասեան, էջ 143-45:

⁵⁷ ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.110, էջ 16:

կիրը գործուն կառավարման կարիք ունի: Իսուեց կառավարութեան կառուցուածքային փոփոխութիւնների անհրաժեշտութեան մասին, նոր նախարարութիւնների մասին:

1991 Յունիսի սկզբի նիստին դարձեալ քննարկուեց ներքին քաղաքական իրավիճակը: Վերլուծելով պետութեան 10 ամսուայ փորձը, պատգամաւորների մի մասը եկել էր եզրակացութեան, որ թերացումների պատճառը չգոյութիւն է գերագոյն իշխանութեան մարմնի, որը զբաղուի քաղաքականութեան մշակմամբ եւ դրա արագ իրագործմամբ: Նախագահի պաշտօնի հիմնման կողմնակիցները գտնում էին, որ ԳԻՍՆ չի կարող գործուն արձագանգել իրադարձութիւններին եւ արագ որոշումներ ընդունել: Լայն լիազօրութիւններ էին տրուել կառավարութեանը, որը հնարաւորութիւն տուեց արագ արձագանգել օրուայ պահանջներին, բայց դա դարձեալ հակասութիւններ առաջացրեց խորհրդարանի եւ կառավարութեան միջեւ: Պարզ չէր նաեւ ում են հաշուետու տեղական խորհուրդները՝ ԳԻՍԻՆ թէ՛ կառավարութեան:

Գտնում քննարկումների ընթացքում եղան բազմաթիւ առաջարկներ.

- Անմիջապէս անցնել նախագահի ընտրութեանը (ընդ որում ընտրութեան 2 ճանապարհ էր առաջարկում՝ ԳԻՍԻ կողմից կամ հանրաքուէով)
- Ընդլայնել ԳԻ նախագահի իրաւասութիւնները
- Ընդլայնել ԳԻ նախագահութեան իրաւասութիւնները
- Ստեղծել պետական խորհուրդ եւն.:

Սահմանադրական յանձնաժողովը ուսումնասիրելով այդ առաջարկութիւնները եզրակացրել էր, որ պէտք է արագացնել ՀՀ սահմանադրութեան ընդունումը եւ դրա միջոցով բարձրացնել պետական կառավարման մեքենայի արդիւնաւէտութիւնը: Որպէս ժամանակաւոր միջոց, յանձնաժողովը առաջարկում էր կատարել նախագահի ընտրութիւն: Իսկ կառուցուածքը արդէն կ'որոշուէր սահմանադրութեամբ: Դիտարկուում էր, որ նախագահի պաշտօնի հիմնումը կ'ազատէր ԳԻՍՆ առօրեայ հարցեր լուծելուց եւ հնարաւորութիւն կը տար առաւել արդիւնաւէտ աշխատել եւ կենտրոնանալ օրինաստեղծ գործունէութեան վրայ:

1991 Յունիսի 25ին ԳԻՍՆ որոշեց հիմնել հանրապետութեան նախագահի պաշտօնը: Եթէ Անկախութեան հռչակագրում նշում էր, որ հայ ժողովրդի անունից կարող է հանդէս գալ միայն ԳԻՍՆ, ապա 1991 Օգոստոսի 1ին ընդունուած «ՀՀ նախագահի մասին» օրէնքում նշում էր, որ նա ներկայացնում է ՀՀ երկրի ներսում եւ միջազգային յարաբերութիւններում, այսինքն ստացում էր որ նոյնպէս հանդէս է գալիս ժողովրդի անունից: ԳԻՍՆ իր լիազօրութիւնների մի մասը զիջեց ՀՀ նախագահին: 1991 Հոկտեմբերի 16ին ՀՀ առաջին նախագահ ընտրուեց Լեւոն Տէր Պետրոսեանը:

Նախագահի պաշտօնի հիմնումով փաստօրէն ՀՀ-ում մտցուեց նախագահական կառավարման ձեւը: Սակայն օրէցօր սրուող ներքաղաքական հակասութիւնները դրանով ոչ միայն չմեղմուեցին այլեւ առաւել սրուեցին:

ԳԽՆ անընդհատ բախում էր այն խնդրին, որ իր լիազորությունների մի մասը զիջելով նախագահին, կորցրել էր քաղաքական կեանքի վրայ իր նախկին ազդեցությունը: ԳԽում ընդդիմութեան լուրջ ուժեր կային եւ դրանք չէին ցանկանում հաշտուել այդ իրավիճակի հետ:

1993 Փետրուարին ԳԽ քննարկումների ժամանակ առաջարկում էր.

1. ՀՀ ներքին եւ արտաքին քաղաքականութեան հիմնական ուղղությունները որոշի խորհրդարանը, ոչ թէ նախագահը:
2. ԳԽ նախագահութեան ներկայացմամբ ընտրել Գերագոյն դատարանի նախագահին նրա տեղակալին, գլխաւոր դատախազին, Գերագոյն դատարանի նախագահութեան կազմը:
3. ԳԽՆ հաստատի զինուած ուժերի բարձրագոյն հրամանատարութեան կազմը:
4. Նախագահը միայն կառավարութեան որոշմամբ կարող է նշանակել դիւանագիտական ներկայացուցիչներին:
5. Կառավարութիւնը ձեւաւորուի ԳԽ կողմից:

Այդ առաջարկներով պատգամաւորները (ՀՅԴ, ԱԺՄ, ՌԱԿ) խորհրդարանական հանրապետութեան հայտ էին ներկայացնում⁵⁸:

Պատգամաւորները դժգոհում էին, որ ԳԽՆ զրկուել է իր վերահսկողութեան գործառոյթից, խախտուած է ԳԽ-կառավարութիւն կապը: Նախագահին մեղադրում էին, որ հաշուի չի նստում ընդդիմութեան հետ: Նախագահն էլ իր հերթին սպառնում էր ցրել խորհրդարանը: Հակասութիւնների պատճառը Ղարաբաղի հարցն էր: 1993ին Քարվաճառի (Քելբաջարի) ազատագրման հետեւանքով ՀՀՆ միջազգային լուրջ ճնշումների էր ենթարկուում: Նախագահը հակուած էր գնալ զիջումների: Նա ընդունում էր, որ այն պատմականօրէն հայկական տարածք է, բայց միջազգային իրաւունքի տեսանկիւնից համարում է Ադրբեջանի տարածք: Նշում էր, որ պէտք չէ գնալ արկածախնդրութեան, որովհետեւ երկրորդ համաշխարհայինից յետոյ ոչ մի պետութիւն չի կարող գրաւել այլ պետութեան տարածքներ: Նշում էր, որ եթէ դրա հետ հաշուի չնստենք, «դա կը դառնայ մեր կործանման սկիզբը»⁵⁹: Նա մտավախութիւն էր յայտնում, որ Քելբաջարը չյանձնելու դէպքում պատերազմը կը շարունակուի եւ անյայտ է ինչպէս կ'աւարտուի: Առաջարկում էր ստեղծել Կիպրոսի տարբերակ՝ միջազգային հանրութեան համար ամրագրել ԼՂ սահմանները, ամրապնդուել միջազգային խաղաքարար ուժերով, 10-20 տարի բանակցութիւններից յետոյ միգուցէ հնարաւոր կը լինի հասնել նպատակին: Ընդդիմութիւնը համաձայն չէր ազատագրուած տարածքները ետ վերադարձնելուն:

Հակասութիւններ երեւացին նաեւ «ՀՀ քաղաքացիութեան մասին» օրէնքի քննարկման ժամանակ: Դարձեալ բանավէճ եղաւ ԳԽում՝ ազգային

⁵⁸ ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.271, էջ 30:

⁵⁹ ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.300, էջ 135:

Եւ պետականութեան հայեցակարգերի միջեւ: Այդ ժամանակ բաւական աշխուժ էր ԳԽ ԱԺՄ խմբակցութիւնը⁶⁰, որի կարծիքը արտայայտեց Տիգրան Սարգսեանը: Բարձրացուեց ազգային կառոյցների ձեւաւորման խնդիրը: Նա նշեց, որ ազգային հայեցակարգի դէպքում քաղաքական կենտրոնը, որը որոշում է ազգի ճակատագիրը, ներկայացուած է ոչ թէ պետական իշխանութեան մարմիններով, այլ համազգային կառավարման մարմիններով: Պետականութեան ըմբռնումի դէպքում քաղաքական կենտրոնը հանդէս է գալիս օրէնսդրութեամբ սահմանուած պետական մարմիններով⁶¹: Կարեւորում էր երկքաղաքացիութիւնը: Հայ լինելը դրսում պէտք է «տնտեսապէս շահաւէտ լինի»: Արտասահմանի հայերը պէտք է կարողանային հեշտացուած ճանապարհով սեփականութիւն ձեռք բերել ՀՀ-ում: Նրանց կարծիքով դա ձեռնատու էր նաեւ ՀՀ քաղաքացիներին, քանի որ հարկային քաղաքականութեան միջոցով գանձուած միջոցները պետական բիջէի միջոցով կ'ուղղուէին ՀՀ քաղաքացիների ընկերային պահանջների բաւարարմանը:

Տէր Պետրոսեանը կտրականապէս դէմ էր այդ գաղափարներին, նոյնիսկ համարելով դրանք ֆաշիստական: Նրա կարծիքով «ազգային գաղափարախօսութիւն» հասկացութիւնը կեղծ քաղաքական *կայտեգորհա* է, որովհետեւ *«ժողովրդավարութեան պայմաններում... անհնար է ողջ ազգին համախմբել մէկ միասնական գաղափարախօսութեան շուրջ: Դրա վերջը ֆաշիզմն է: Միշտ էլ կը լինեն մարդիկ կամ մարդկանց խմբեր, եւ դա նրանց լիակատար իրաւունքն է, որոնք երբեւիցէ չեն ընդունի այդ գաղափարախօսութիւնը: Գաղափարախօսութեան մենապիտրութիւնը հնարաւոր է միայն բռնապետութեան պայմաններում...»*⁶²: Ընդդիմութիւնը խիստ բացասական դիրքորոշում էր գրաւել նախագահի *ինստիտուտի* նկատմամբ եւ այդ տրամադրուածութիւնը յատկապէս ուժեղացաւ սահմանադրութեան գրոյթը քննարկելու շրջանում:

Այսպիսով, 1992-93ի ընթացքում երկրում պետութեան կառավարման համակարգի անկատարութեան հետ կապուած լուրջ խնդիրներ էին ծագել: ՀՀ քաղաքական դաշտը 1990ականներին անընդհատ ձեւափոխումների մէջ էր, այն կայուն վիճակում չէր, հետեւապէս քաղաքական հակասութիւնները ոչ միայն անխուսափելի էին, այլեւ խիստ անկանխատեսելի, երբեմն՝ պայթումավտանգ: Հակասութիւնները յատկապէս սրում էին այն շրջանում, երբ պատերազմական դաշտում թշնամին յարաբերական յաջողու-

⁶⁰ Խմբակցութիւնը պաշտպանում էր Մանուկեանի ստեղծած հայերի «համաշխարհային ազգ» լինելու գաղափարը եւ առաջարկում պետութեան քաղաքականութիւնը մշակելիս հաշուի նստել դրա հետ:

⁶¹ ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.292, էջ 7:

⁶² ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.365, էջ 9:

թիւներ էին արձանագրում: Բանավէճն ընթանում էր հետեւեալ հարցերի շուրջ.

1. Ինչպիսին պէտք է լինի հայկական պետութիւնը
2. Ինչ ճանապարհով պէտք է մշակուի եւ ընդունուի սահմանադրութիւնը
3. Ինչպիսին պէտք է լինի Արցախի ճակատագիրը եւ ինչպիսին պէտք է լինի խաղաղութեան գինը
4. Ինչ տնտեսական բարեփոխումներ պէտք է իրականացուեն, ինչ արագութեամբ եւ ինչպէս
5. Ինչպիսին պէտք է լինի ՀՀ արատաքին կողմորոշումը:

Ընդ որում շատ հարցերի պատասխանը մեծապէս կախուած էր սահմանադրութեան մշակման ուղուց: Սահմանադրութեան մշակման եւ ընդունման վերաբերեալ կային հետեւեալ հիմնական տարբերակները.-

- Սահմանադրութիւնը պէտք է մշակի եւ ընդունի Սահմանադիր ժողովը:
- Սահմանադրութիւնը պէտք է մշակի ԳԽ ստեղծած սահմանադրական յանձնաժողովը եւ ընդունի ԳԽն՝ ձայների 2/3ով:
- Սահմանադրութիւնը պէտք է մշակի սահմանադրական յանձնաժողովը, իսկ ընդունուի հանրքուէի միջոցով:

Առաջին տարբերակի ամենաջերմ եւ հետեւողական պաշտպանը Հայրիկեանն էր: Նա յիշեցնում էր, որ առաջարկում էր, որ նախագահը ընտրուի մէկ տարով եւ մէկ տարի յետոյ սահմանադիր ժողովը ընդունի սահմանադրութիւնը: Բայց պատգամաւորները չընդունեցին դա, իսկ այժմ 141 ստորագրութիւն էր հաւաքուել եւ 6 կուսակցութիւններ՝ ԱԺՄ, ՍԻՄ, ՀԿ, ՀՅԴ, Քրիստոնեայ ժողովրդական միութիւն եւ ԱԻՄ, միաւորուել էին եւ պահանջում էին սահմանադիր ժողովի գումարում⁶³:

Ինչո՞վ էին հիմնաւորում այդ մօտեցումը ընդդիմադիրները: ԳԽն ընտրուել էր 1990ին, երբ բոլոր ընդդիմադիր ուժերը (ազատականները, ազգայնականները, պահպանողականները եւ դրանց միջանկեալ ուղղութիւնների հետեւորդները) միաւորուած էին կոմունիստների դէմ եւ սկզբնապէս ԳԽում կար 2 մեծ խմբաւորում՝ կոմունիստական եւ ՀՀՇական: Բայց ԽՍՀՄ փլուզումից յետոյ⁶⁴ Կոմունիստական կուսակցութիւնը այլեւս վճռորոշ դեր չունէր եւ ի տարբերութիւն, օրինակ ՌԴի, իր ազդեցութիւնը ՀՀում չպահպանեց: Աւելին՝ շուտով այն տրոհուեց միքանի կուսակցութիւնների: Այնպէս որ 1991-92ի քաղաքական դաշտի պատկերը արամատապէս այլ էր: Եւ դա պարզորոշ երեւում էր ԳԽում ստեղծուած խմբակցութիւններից եւ պատգամաւորական խմբերից: Եւ Կոմկուսից, եւ ՀՀՇից դուրս էին եկել պատգա-

⁶³ ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.271, էջ 144:

⁶⁴ Փիաստացիօրէն ԽՍՀՄի գոյութիւնը դադարեց 1991 Դեկտեմբերի 8ին, երեք հանրապետութիւնների՝ Բելառուսի (ԲԽՍՀ), Ռուսաստանի (ՌԽՖՍՀ) եւ Ուկրաինայի (ՈւՍՍՀ) ղեկավարների, Մինսկի մօտակայքում գտնուող Բելովեժսկ բնակավայրում ստորագրած համաձայնագրի արդիւնքում:

մատրոներ, որոնք տարբեր կուսակցությունների ներկայացուցիչներ էին եւ ըստ դրա ներկայացնում էին տարբեր խմբակցություններ: Սահմանադիր ժողովը որպէս նորընտիր մարմին անելի ճիշտ կ'արտայայտէր ուժերի նոր յարաբերակցութիւնը եւ կը նպաստէր պետութեան ճիշտ մոդէլի ընտրութեանը:

1993-95ի քաղաքական առճակատման պատճառով ԳԽՆ պարբերաբար դառնում էր անգործունակ՝ հարցերի քննարկումը անվերջ ձգձգում էր, ինչը բերում էր պետութեան համար խիստ կարեւոր ոլորտներում իրական բացերի, չէր ապահովում անհրաժեշտ մեծամասնութիւնը՝ կարեւորագոյն օրինագծերի ընդունման ժամանակ: Հիմնուելով ստեղծուած իրավիճակի վրայ, իշխող կուսակցութեան՝ ՀՀԾի ղեկավարները գտնում էին, որ սահմանադրութիւնը պէտք է մշակի ԳԽ սահմանադրական յանձնաժողովը, քննարկուի ԳԽում, բայց ընդունուի հանրաքուէի միջոցով:

ՀՀն պէտք է լինի նախագահական հանրապետութիւն՝ թէ՛ խորհրդարանական: Սա յաջորդ ամենաքննարկուող հարցերից էր: Երկու ամենամեծ կշիռ ունեցող կողմերը նժարի տարբեր կողմերում էին: ՀՀԾն նախագահականի կողմակից էր, ԱԺՄն, ՀՅԴն՝ խորհրդարանականի: Նրանց կարծիքով դա «Ներքին քաղաքականութեան մէջ շանս կը տայ խուսափել թայֆալականութիւնից, ու գտնում եմ, այժմեան պրեզիդենտական կառավարման համակարգը դա թայֆալական համակարգ է, դա կուսակցական համակարգ չի»⁶⁵: Իվերջոյ խորհրդարանական մոդէլը պաշտպանեցին 6 ընդդիմադիր կուսակցութիւններ, ընդունելով այն միաձայն, այդ պատճառով սահմանադրութեան այդ նախագիծը ստացաւ 'ճեակի նախագիծ' անուանումը: Յայտնի սահմանադրագէտ Վլադիմիր Նազարեանը 1994 Յունիսի 13ին ներկայացնելով այդ նախագիծը նշում էր, որ այն կառուցուած է ազգային առանձնայատկութիւնների եւ համամարդկային արժէքների համադրմամբ: Հաշուի առնելով, որ ՀՀն յետբռնատիրական երկիր է, նախագծի պաշտպանները եկել էին այն եզրակացութեան, որ այդպիսի երկրներում այլ շղարշի տակ շատ յաճախ ձեւատրում են նոր բռնատիրութիւններ: Ուսումնասիրել էին Գերմանիան՝ Հիտլերից յետոյ, Իտալիան՝ Մուսոլինիից յետոյ, Սպանիան՝ Ֆրանկոյից յետոյ, յետպատերազմեան Ճապոնը: Նրանց կարծիքով խորհրդարանական հանրապետութիւնը կարող էր պաշտպանել դրանից⁶⁶: Կային նաեւ միջանկեալ կարծիքներ:

Իվերջոյ՝ 1994ին քննարկման ներկայացուեց 2 հիմնական տարբերակ՝ Սահմանադրական յանձնաժողովինը եւ ճեակինը: Մասնագէտները գնահատելով այդ տարբերակները նշում էին, որ երկուսում էլ թերի են ներդրուած իշխանութեան թելերի հաւասարակշռման գործիքակազմերը: Փորձ էր արում գտնել այդ երկու տարբերակների միջինը: Շատերը

⁶⁵ ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.272, էջ 67:

⁶⁶ ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.374, էջ 172:

սկզբունքորէն դէմ չլինելով Սահմանադիր ժողովի գաղափարին, այդ ժամանակահատուածում, երբ ժողովուրդը 2 ցրտաշունչ ու շատ դժուար ձմեռներ էր անցկացրել՝ գազի եւ էլեկտրաուժանիութի պակասի պայմաններում, առաջացել էր ընկերային բեռեռացում, աճել էր աղքատութիւնը, կար ամենաանհրաժեշտ սննդամթերքի պակաս եւ այդ ամէնի հետեւանքով երկրում համընդհանուր հիասթափութիւն էր տիրում, գտնում էին, որ հնարաւոր չի լինի կազմակերպել Սահմանադիր ժողովի ընտրութիւններ եւ փորձում էին այլ տարբերակներ գտնել: 1994ին կրքերն այնքան էին բորբոքուել, որ պատգամաւորները խօսում էին «սահմանադրական փակուղու»⁶⁷ մասին, որի ելքը իշխանութեան եւ ընդդիմութեան միջեւ քաղաքական փոխզիջումն էր միայն:

սրբի կամաք **զէզին չար եւ զջորհին] եւ վէցկի վեր կալաք: Ով խափանէ :ՅԺԸ: հայրապետաց նգոված է»¹⁶:**

Մահկանաբերոցի իշխանի աթաբէկ, ամիրսպասալար տիտղոսները նշող երկրորդ յուշակոթողը Հաղպատի եկեղեցու փոքր գաւթի հսկայ խաչքարն է, որ կանգնեցրել է վանքի առաջնորդ Յովհաննէս Խաչէնեցին: Յիշատակագրութեան համաձայն՝ վերջինս **ամենափրկիչ գեղեցկատեսիլ** խաչքարը կանգնեցրել է ի պատիւ ժամանակի ամենանշանաւոր իշխան աթաբէկ, ամիրսպասալար Սաղունի արեւշատութեան եւ օգնութեան համար՝ **ի իշխանութեան եւ տէրութեան** Սուրբ ուխտիս: Կոթողը թուագրում է **ՉԻԲ** (1273): Այս կապակցութեամբ ուշագրաւ դիտողութիւն է արել վիմագրագէտ Կարո Ղաֆաղարեանը յաւելելով՝ «Սաղունը...միայն Հաղբաւաւանքի տէրը չէր, այլ նրա հիմնական կալուածքը Մահկանաբերոյն էր եւ բարձր պաշտօն ունէր վրաց արքունիքում»¹⁷: Գիտնականի հաւաստմամբ՝ այս արձանագրութեամբ ընդգծում է իշխանի միայն հովանաւոր վերաբերմունքը Հաղպատի վերաբերեալ¹⁸: Նոյն կոթողի թիկունքին փորագրուած վաւերագրի տեղեկութեամբ, վերոնշեալ Տէր Յովհաննէսը՝ յաւելում է, որ այդ ժամանակ կառուցել է գաւիթը, գրատունը եւ նոր սրահը, նաեւ ինչ-որ փոքրիկ լճակ-ջրամբար, կազմել է տունը Ուրթաձորոյ Ս. Նշանի պահարանը եւ գնել է Բուլա գիւղը՝ նուիրաբերով Հաղբաւաւանքի Ս. Նշան եկեղեցուն՝ պարոն Սաղունի արեւշատութեան համար. «:ՉԻԲ: (1273) Շնորհաւք ՍԲ. Երրորդութեան եւ ողորմութեամբ Սբ. Նշանիս, ես տէր Յովաննէս նուաստ ծառա ծառայից ԱՅ, շինեցի զգաւիթս եւ զգրատունս եւ զսրահս նորին, ածի զպաղապոս զլիճն եւ երու կազմել մեծածախս պահարանս Ուրթաձորո Սբ. Նշանին, գնեցի զգեղն Բաւլա եւ ընծատեցի ՍԲ Նշանիս՝ վասն արեւշատութե պարոն Սաղունին եւ զաւակաց իւրոց եւ Սարգիս վարդապետին եւ ամենայն արդիւնաւորաց: Եւ սահմանեցի ծառագարդարին երից արարացն Բ սպիտակ տաց երէցն»¹⁹:

¹⁶ Դիւան հայ վիմագրութեան, պրկ. IV, կազմ. Ս.Գ. Բարխուդարեան, Հայկ. ՍՍՀ ԳԱ, Երեւան, 1973, էջ 13: Ստորեւ կ'անդրադառնանք այդ բնագրին: Աւագեանի վերծանութիւնը մի փոքր տարբերում է նախորդից, որը եւ նշում ենք. «Չէ... տէրանց մերոց խոշաքին եւ աթաբակ Սաղունին մեք՝ Նորապագ մեծ եւ փոքր ամէն մեր սրբոր կամաք զէզին չար եւ զջեւէկի վեր կալաք», Ս. Ա. Աւագեան, Վիմական արձանագրութիւնների բառաքննութիւն, Հայկ. ՍՍՀ ԳԱ, Երեւան, 1978, էջ 279: Նորադրուի ՉԷ (1258) բնագրի եւ նրա թուականի մասին աւելի մանրամասն տես՝ Ռ. Գասպարեան, «Քարաշամբի Ս. Գեորգ եկեղեցին եւ նրա արձանագրութիւնը», *Էջմիածին*, Թ:2022, էջ 84-86:

¹⁷ Կարո Ղաֆաղարեան, *Հաղբաւ*, Հայկ. ՍՍՌ ԳԱ, Երեւան, 1963, էջ 49:

¹⁸ Նոյն:

¹⁹ Նոյն, էջ 213: Մի փոքր անհասկանալի է բնագրի սահմանման վերջին բառակապակցութիւնը «սահմանեցի ծառագարդարին երից արարացն Բ սպիտակ տաց ե-

Աթաբակ պատուով իշխանը յիշատակում է նաեւ Իջեանի տարածաշրջանի Առաքելոց վանքի Տամուրքի գիւղատեղիի, փոքրիկ եկեղեցու մօտ ընկած խաչքարի ուշագրաւ բնագրում. «*Ի թվին :2ԻԲ: (1273) յիշխանութին ԱՄասէր աթաբակ պարոն Սադունին*»²⁰:

Այդ բարձրագոյն տիտղոսով իշխանը յիշում է եւս Դեղձուտի վանքում գրուած Տաւնապատճառի յիշատակարանում, որի ստացողն է «*կրպսեր եւ յեպրին սպասօրս բանին Սարգիս*»²¹. «*..Ես յորժամ էին դեգերեալ առ ոյս կենդանի վիմիս Առաքել վարդապետի ի գօտիս Մահկանաբերդո, ի պարոնութեան աթապակ Սադունին... ի թվին Հայոց ՉԻԳ (1274)*»²²: Նոյն վանքի գլխաւոր եկեղեցու մուտքին կից, հիւսիսային կողմում գտնուող պատուանդանի վրայի թեւաւոր խաչքարի ճակատի բնագիրը յիշատակում է՝ աշխարհակալութեան Աբաղա խանի եւ ամիրսպասալար, աթաբէկ Սադունի իշխանութեան ժամանակ՝ Կիլիկիայից եկած Առաքելը կառուցել է **(շինեցաք)** եկեղեցին, գաւիթը, կանգնեցրել Ս. Նշանս Աստուածընկալ՝ ի նեղ ժամանակի դառն աշխատութեամբ՝ Հաղբատի տէր արքեպիսկոպոս Յովանէսի²³ օրօք. «*Յաշխարհակալութեան Աբաղա դանին եւ յիշխանութեամիրսպասալար աթաբակ Սադունին, եւ Առաքելս նուաստ սպասաւոր բանին ...յերկրէն Կիլիկո եւ գաւառէն Տարսոնի*»²⁴:

Իշխանն աթաբէկ տիտղոսով յիշում է նաեւ Մակարավանքի գլխաւոր եկեղեցու արտաքուստ արեւմտեան պատի 7 տողանոց բնագրում: Վիմագիրն իրագեկում է, որ Դաւիթը՝ Տաշրէլի որդին, կատարել է նուիրատուութիւն վանական հաստատութեանը, շէշտելով իր երախտիքը, որ սնուել եւ մեծացել էր հզօր իշխան Սադունի տանը. «*Ես Դաւիթ, որդի Տաշրէլի, սնեալ ի տան մեծ եւ հզաւր իշխանին՝ աթաբակ Սադունին, ետու ընծա*»²⁵:

Նշեալ պատուանդանով իշխանը յիշատակում է նաեւ Իջեանի շրջանի Գետաշէն գիւղից մօտ 3 կմ. արեւմուտք գտնուող Առաքելոց վանքի յուշարձանախմբի եկեղեցու բարաւորի բնագրում, ուր քահանայ Գրիգորը յայտնում է, որ կառուցել է եկեղեցին իշխանութեան աթաբէկ Սադունի օ-

րէցն», ովքե՛ր են երից արանցն հոգետր անձերը, որ պէտք է 2 սպիտակ տային երէց հոգետրականներին:

²⁰ Դիւան, պրակ, VI, էջ 218:

²¹ Հայերէն ձեռագրերի յիշարակարաններ, ԺԳ. դար, կազմ.՝ Ա. Մաթեոսեան, Հայկ. ՍՍՀ ԳԱ, Երեւան, 1984, էջ 496:

²² Նոյն:

²³ Հաւանական է «արքեպիսկոպոս Հաղբատա տր Յովանէսն» Յովանէս Արմանեցին է՝ Դիւան, պրակ, VI, էջ 82, 112:

²⁴ Նոյն, էջ 112:

²⁵ Նոյն, էջ 165: Աւագեանի մեկնաբանութեամբ՝ այս արձանագրութիւնը միակն է վանական համալիրում, որտեղ յիշատակուած է Սադունի անունը, այն էլ՝ անուղղակի: Ուստի գիտնականը ենթադրում է, որ Մակարավանքը չի հովանաւորուել Սադուն Բ.ի կողմից (նոյն, էջ 166):

րօք. «Ի թվին :2ԻԵ (1276) եւ յիշխանութե աթապակ Սադունին, ես Գրիգոր քահանա շինեցի զեկեղեցի»²⁶:

Բարձրագոյն այդ տիտղոսով իշխանը յիշատակում է նաեւ Նոյեմբերեանի տարածաշրջանի Ջուխտազեղցի մատուռի թեաւոր խաչի բնագրում. «Թվին :2ԻԵ (1276) յիշխանութե աթապակ Սադունին, ես Հասան, թոռն Ակնհակաղնեցի»²⁷:

Սադուն Բ.ի բարձրագոյն նշեալ տիտղոսները յիշատակում են նաեւ Այրարատեան աշխարհում, մասնաւորապէս Վանստանի վանական միաբանութեան յիշատակագրերում: Եկեղեցու յիշատակագրերից առաջինի համաձայն՝ Սադուն Բ.ը յայտնում է, որ Վանստանի Աստուածածին վանքին, «Ի թվին :2ԻԵ: (1278)» երկու ջրաղացատեղի է նուիրել՝ երկու առուով ու մարգով՝ ինչը, հաւանական է, նախկինում տրուած է եղել ոմն Հողորսինին. «Ես աթապակ եւ ամիրսպասալար Սադունս Կովի :Բ: ջրաղացատեղ յերիցաքաշին :Բ: առուով եւ մարգն, գոր ես Հողորսին էի Կուել. Հաւորսին, որ երբ անի ԱԾածնին էրեպ: Ի թվին :2ԻԵ: (1278) յառաջնութեան Գրիգոր վարդապետիս»²⁸:

Եկեղեցու երկրորդ ուշագրաւ բնագրից տեղեկանում ենք, որ Գրիգոր վարդապետը, աթաբէկ, ամիրսպասալար Սադունի իշխանութեան օրօք եղել է առաջնորդ Խոր Վիրապի եւ Վանստանի: Վերջինս 1283ին սալարկել է Վանստանի Աստուածածին եկեղեցին, ինչը նախկինում՝ «բնէ չէր սալած», կատարելով բաւականին մեծաքանակ նուիրատուութիւններ, այդ իսկ պատճառով՝ վանքի սպասաւորները պարտաւորուել են տարուայ մէջ մատուցել 8 պատարագ Յայտնութեան տօնին, որից երկուսը վանաւոր համար. «Յիշխանութեան Կրանս հայոց եւ վրաց աթապակ եւ ամիրսպասալար Սադունին, շնորհին ԱՅ, ես Գրիգոր վարդապետ, առաջնորդ Վիրապին եւ սուրբ ուխտիս Վանըստանայ սալեցի զեկեղեցիս, որ բնէ չէր սալած. Արարի այլ արդինս ընծայից եւ սպասաւորք խոստացան ի Կրանս :Ը: այր պատարագ, :Բ: ինձ, :Բ: Կրք Վարդանա, :Բ: Թամզկանն, ի թվիս :ՉԼԲ: (1283) ի Կրանի յայտնութեան»²⁹:

Հնավայրի եկեղեցու շինաքարի մի բեկորի վրայ փորագրուած է նաեւ «սպասալար» եզրոյթը, որ ակներեաբար, պէտք է վերաբերուի Մահկանաբերդցի իշխանի տիտղոսաշարին: Եկեղեցու մերձակայքում մի այլ շի-

²⁶ Նոյն, էջ 209:

²⁷ Դիան հայ վիմագրութեան, պրակ, IX, կազմ.՝ Ս. Բարխուդարեան, Կ. Ղաֆադարեան, Ս. Սաղումեան, ՀՀ ԳԱԱ հրատ., Երեւան, 2012, էջ 485: Զարմանալի է, որ բնագրում զանց է առնուած Մահկանաբերդցու «ամիրսպասալար» պատիւը, գուցէ նաեւ՝ Հասանի Ակնեցի (Վերին Խաչեն, Հաթերք=Արցախ) պապի անունը:

²⁸ Աշխարհիբէկ Քալանթար, Հայաստան քարէ դարից միջնադար, Երեւան, 2007, էջ 60:

²⁹ Նոյն:

նաքարի բեկորի վրայ փորագրուած է առանձին նախադասութեան սկզբնամասի հատուած՝ «ամիրսպասալար, աթաբէկութեան Սադունի»³⁰:

Հայագէտ Գարեգին Յովսէփեան կաթողիկոսի մի յիշատակութեան համաձայն՝ Աղշոց Ս. Ստեփանոս վանքի մի բնագրում յիշատակուող **Խարասլանը**, նոյնը պէտք է լինի - իրաացի հաւաստմամբ - մի այլ վիմագրում յիշուող Արծրունի Սադուն Բ.ի քարտուղար **Ղարասլանի** հետ, որը միաբանելով սուրբ ուխտին նուիրաբերել է 20 դահեկան. «Յառաջնորդութե Գր(իգոր - Ռ.Գ.) վ(ար)դ(ապետՌԳ..)ին, ես՝ Ղարասլան, քարտուղար **աթաբակ Սադունին** միաբանեցա սբ ուխտիս եւ էտու :ի: դիկ»³¹: Նոյն վանքի մի այլ արձանագրութիւնում հայագէտը նկատում է, որ փորագրող գրչի կողմից նկատուող թերութիւնը պէտք է յաւելագրուէր Մահկանաբերոցի իշխանի անունով: Հայագէտի իրաացի դիտարկմամբ բնագիրը փորագրուել է որոշակի շարահիւսական անհարթութեամբ: Հաւանական է, ըստ բնագրի՝ Մահկանաբերոցին վանական կալուածքի ոռոգման համար անխափան ջուր է նուիրել. «Յաշխարհակալութիւն Արղուն դանին եւ ի թագաւորութե Դաւթի եւ հայրապետութե տր Յովանիսի եւ ի տերութե տեղոյս պարոն Աշոտոյ, ես Ղազար Ածաւոր տէր Աագս բերաք զջուրս եւ կանկնեցաք զխաչս եւ տնկեցաք զայգին Յովայն զոր ամիր սպասալար (հաւանաբար, խօսքը Սադունի մասին է - Ռ.Գ.) նուվէր ետ էկեղեցոյ զջուրս անխափան ի բան պահէ կապարողք գրէլոցս արինին յԱյ եւ ով որ զայգին եկեղեցոյս եւ ի ջրէս հանէ յերից ժողովոյ նզովել եղիցի»³²:

Վիմագրերում նկատելի է նաեւ ուշագրաւ մի իրողութիւն. անգամ 1273, 1279 եւ 1280ին բնագիր-վաւերագրերում Մահկանաբերոցի իշխանը յիշատակուած է առանց տիտղոս-եզրոյթի: Այն արձանագրում է Դեբէդ գետի ափին կանգնեցուած խաչքարի, Հաղպատի փոքր գաւթի 1280 եւ Աթոռիկ գիւղատեղիի խաչքարի վաւերագրերում. «Կաման ԱՅ, **յիշխանութեան պարոն Սադունին**, ի տրութեան Տր Ովանիսի, ես Յոհանէս քահանա եւ եղբարք իմ Յունան, Դաւիթ, Մխիթար կանգնեցաք զխաչս եւ զկարմուջս ի հիմնաց, զիմ գնած էգին եւ զարտն իմ խաչիս հէրենիք տվի: ՉԻԲ: (1273)», «Կաման ԱՅ, **ի տրութեան պարոն Սադունին** եւ ի հայրապետութեան Տր Յովանիսի անյախթ գիտնականի: ...Թվիս **ՉԻԸ** (1279)», «Ի թվիս **ՉԻԹ**

³⁰ Նոյն, էջ 63, 64:

³¹ «Քննական տեղեկագիր պրօֆ. Ն. Ադոնցի, ի մասին Տ. Գարեգին Արքեպ. Յովսէփեանի, 'Հոգետր կեղրոններ եւ Գլածորի բարձր դպրոցը՝ ուումնասիրութեան», Միոն, Ժ:1936: Յովսէփեանը խնդրոյ առարկայ բնագրի մասին գրում է՝ «Ղարասլանի արձանագրութիւնը պէտք է դնել 1279-1284 թթ.»:

³² Նոյն, էջ 405: Զարմանալի է, որ բնագիրը փաստում է՝ «ի տրութեան տեղոյս պարոն Աշոտոյ», այսինքն, տեղի իշխանատէրը Աշոտն է, բայց վանական համալիրին «զջուրս անխափան» նուիրել է Սադուն Բ.ը: Ամենայն հաւանականութեամբ (ամիր)սպասալար Սադունը գերիշխան է եւ ուշագրաւ է իշխանի աթաբէկութիւնը շեշտուած է վրաց Դաւիթ Վահրամուլի օրօք:

(1280) *իշխանութեան տեղոյս Սաղունին, եւ Պածած, որդի Լիպարոյի եւ ամուսին իմ Դուդա, յազգէն Մամիկոնենց»*³³: Այս բնագրիր-վաւերագրերն, ինչպէս նկատում ենք, արձանագրում են, որ Մահկանաբերդցի իշխանը 1273ին արդէն յիշատակում է որպէս երկրի աթաբէկ, ամիրսպասալար: Հետեաբար կարելի է հետեւեցնել, որ իշխանն այդ ժամանակաշրջանում դարձել էր «Գիւրջիստանի վիլայէթի» աթաբէկ, ամիրսպասալարը:

«Գիւրջիստանի վիլայէթի» աթաբէկ, ամիրսպասալար տիտղոսով Աբուլէթի որդի Իւանէն յիշատակում է պատմական Կողբափոր գաւառի կենտրոն՝ Կողբ կամ Կողբաքար աւանի Բարանա-Կողբ³⁴ հնավայրի վրացերէն արձանագրութեան մէջ: Բնագիրը հաստատում է, թէ իշխան Իւանէ Աբուլէթը պատմական Դմանիս աւանում, չորս ամսում կառուցել է բերդ-ամրոց՝ Դիմիտրէ (Դեմետրէ) Բ. Անձնուրացի թագաւորութեան օրօք. «*Ես՝ Իւանէ Աբուլէթի որդիս՝ աթաբէկս եւ ամիրսպասալարս, Դմանիսը վերցրի եւ բերդ կառուցեցի եւ կիրը հեփս բերի: Այս երկիրը երկար ժամանակ աներ ու ահարկու էր. չորս ամսում սոյն բերդը կառուցեցի՝ Դիմիտրէ արքայի թագաւորութեան օրօք»*³⁵: Վաւերագիր-յիշատակագրութիւնն անթուակիր է եւ Պարոյր Մուրադեանի հաւաստմամբ՝ վրացերէն յիշատակագիրը փորագրուել է «1272 թ. կամ ամենաուշը՝ մինչեւ 1273 թ. կէսերը՝ Դիմիտրէի թագաւորութիւն սրանալու եւ Սաղունի՝ աթաբէկ եւ ամիրսպասալար դառնալու ընթացքում»³⁶: Գիտնականի մեկնաբանութեամբ՝ Իւանէ Աբուլէթն աթաբէկ, ամիրսպասալար պատիւին կարող էր արժանանալ Զաքարիա Շահնշահեանի եւ նրա հօր՝ Շահնշահի մահից՝ (1261) յետոյ³⁷:

Չհակառակուելով գիտնականին, նկատենք, որ ըստ *Վրաց ժամանակագրութեան* եւ *Քարթլիս ցիւովրեբա* ռուսերէն լիակատար երկի, 1261/62/63ին վրացական զօրաբանակի ռազմական հրամանատարը՝ **[ամիր] սպասալարը Սարգիս** Զաղել-Յիխիսցվարելին է եւ ոչ թէ Իւանէ Աբուլէթը. «*Կանչեց թագաւոր Դաւիթը (Դաւիթ Ե/Է.) հայոց աղբիւրներում Վահրամուլ - Ռ. Գ.*³⁸ *Սարգիս Զաղել-Յիխիսցվարելուն, որ Սամցխէի սպասալարի պարիւ ունէր, եւ խանի դէմ ըմբոստանալ համոզեց»*³⁹, «*Դաւիթ թագաւորը կանչեց մեսիսերին, շաւշ-կղարջեցիներին եւ իրեն հաւաքարիմ ... ով կար.*

³³ Ղաֆադարեան, *Հաղբար*, էջ 197. նաեւ՝ *Դիւան, պրակ, IX*, էջ 184, 243, 244:

³⁴ Նոյեմբերեանի շրջկենտրոնից ոչ-հեռու, Բարանա տեղանքում (Մուրադեան, *Հայաստանի վրացերէն արձանագրութիւնները*, ԵՊՀ հրատ., Երեւան, 1977, էջ 223):

³⁵ Նոյն, էջ 229:

³⁶ Նոյն, էջ 231:

³⁷ «*Պարզ է, որ Իւանէ Աբուլէթի որդին աթաբէկ եւ ամիրսպասալար կարող էր դառնալ Զաքարիայի եւ նրա հօր՝ Շահնշահի մահից՝ յետոյ 1261...*» (նոյն, էջ 232):

³⁸ Միքայէլ Չամչեան, *Հայոց պարմութիւն, հ, Գ*, ԵՊՀ հրատ., Երեւան, 1984, էջ 223:

³⁹ *Վրաց ժամանակագրութիւն*, էջ 111:

ժողովեց սակաւաթիւ մարդիկ՝ ութ հազար զինուոր եւ **գորապետ** նշանակեց **Սարգիս Զաղելուն**»⁴⁰, որը մասնակցել է նաեւ Թերէք գետի ճակատամարտին: Նշուած ժամանակում աթաբէկ-գործակալի մասին տարեգիրը ցաւօք տեղեկութիւն չի յայտնում: Բարանա-Կողբ վաւերագրի աթաբէկ, ամիրսպասալար Իւանէ Աբուլէթը, հաւանաբար, շատ կարճ ժամանակով եղել է աթաբէկ, ամիրսպասալար եւ այդ պատիւը միանշանակօրէն նրան շնորհել է՝ բնագրում երկիցս յիշատակուած թագաւոր Դեմետրէ Բ.ը (Անձնուրաց): Ըստ գիտնականի՝ Բարանա-Կողբի բնագիր-յիշատակագիրը չէր կարող փորագրուել 1272ից առաջ, երբ տակաւին պատանի էր Դեմետրէ Բ.ը եւ Տարսայիճ Օրբէլեանը «...սպա բազում ջանիւ եւ օժանդակութեամբ նստուցանէ յաթոռն հօր իւրոյ թագաւոր Վրաց ի 721 թուականին»⁴¹: Սակայն, ինչպէս կարելի է ենթադրել վրացական սկզբնաղբիւրից՝ վրաց աւագանիներն Դեմետրէ Բ.ին տանելով Հորդա՝ 1270/71/72ին⁴², թագաւոր օծելու նպատակով՝ արարողութեան աւարտից յետոյ վերադառնալով Տփղիս, հաւանական է, նորընծայ թագաւորն Իւանէ Աբուլէթին շնորհել է վիլայէթի բարձրագոյն գործավարութեան պատիւները, այլապէս վերջինս, ակներեւաբար, չէր կարող դառնալ երկրի աթաբէկ, ամիրսպասալար: Այս իրողութեան մասին լուծում են թէ՛ վրացական, եւ թէ՛ հայկական աղբիւրները: Ենթադրելի է նաեւ, որ Իւանէ Աբուլէթն այդ ընթացքում, «չորս ամսով»⁴³, ինչպէս յայտնում է Բարանա-Կողբի վրացերէն վիմագիր բնագիրը, եղել է երկրի աթաբէկ, ամիրսպասալար, որից յետոյ 1271/72ին Սադուն Բ.ը գուցէ ուժի զօրեղութեամբ կամ իլխանական արքունիքի միջնորդութեամբ դարձել է վիլայէթի աթաբէկ, ամիրսպասալարը. «Ողջ թագաւորութիւնը տուեց նրան (Դեմետրէ Բ.ին - Ռ.Գ.), բացի Սարգիս Զաղելու [երկրից]: **Շեքը ուղարկեց** (խանը՝ Աբաղան - Ռ.Գ.) **Սադունին**, որին Դիմիտրէ թագաւորը **աթաբէկութիւն պարգեւեց**»⁴⁴:

⁴⁰ Նոյն, էջ 112:

⁴¹ Ստեփանոս Օրբէլեան, *Պատմութիւն տանն Սիսական*, տպ. Աղանեսան, Թիֆլիս, 1910, էջ 425: Արձանագրութեան երեւան գալու ժամանակը որոնելի է 1272-84ին (Պ. Մուրադեան, *Հայաստանի վրացերէն արձանագրութիւնները*, էջ 223):

⁴² Н. А. Бердзенишвили, Д. Дондуа, К. Думбадзе, Г. А. Мелишвили, Ш. А. Месхиа, *История Грузии, (После смерти Улу Давида (1272 г.) на престол Восточной Грузии вступил его малолетний сын Димитрий Самопожертвовател* (Ուլու Դաւթի մահից յետոյ (1272) Արեւելեան Վրաստանի թագաւորական գահին նստեց նրա մանկահասակ որդին՝ Դիմիտրի Անձնուրացը), Թբիլիսի, 1962, էջ 410. նաեւ՝ «Դեմետրէ թագաւորէ Վրաց ՉԻԱ (1272)» (*Մանր ժամանակագրութիւններ XIII-XVIII դդ, հրր. I*, կազմ.՝ Վազգէն Յակոբեան, Հայկ. ՍՍՌ ԳԱ, Երեւան, 1951, էջ 42:

⁴³ Մուրադեան, *Հայաստանի վրացերէն արձանագրութիւնները*, էջ 229:

⁴⁴ Վրաց ժամանակագրութիւն, էջ 140:

Ինչպես վերը նկատեցինք Սադուն Բ.ի աթաբեկ, ամիրսպասալար պատին առաջին անգամ ընդգծում է Հաղպատի փոքր գաթի 1273ի երկու վիմագիր աղբիւրներում: Այդ բարձրագոյն տիտղոսներով իշխանը յայտնի է նաեւ նոյն թուականին Գետկայ վանքում՝ գրիչ Մխիթարի կողմից գրուած ժողովածուի յիշատակարանից. «Յամի Եւթնհարիւրերորդի քաներորդի երկրորդի (1273) թուականութեանս Հաոց... հով[ու]էր...աթոռակալ Լուսաւորչին մերոյ տէր Յակոբ...ի տիեզերակալութեան Ապաղա [ղայ]նին, եւ յիշխանութեան մերո աշխարհիս, յաթաբեկութեան Սադունին, եւ ի տէրութեան տեղոյս Ճարին»⁴⁵:

Աթաբեկութեան գործավարութեան մասին ուշագրաւ դիտողութիւն է արել Յովսէփեանը: Ըստ նրա՝ աթաբեկը «Հայաստանի իշխանների գլուխն էր եւ ներկայացուցիչը՝ մոնղոլ խաների եւ վրաց թագաւորի առաջ»⁴⁶: Իրաւացի է նա, քանի որ աթաբեկ գործավարը ոչ միայն Հայաստանի, այլեւ ողջ «Գիւղջիստանի վիլայէթի» իշխանաւորների գլուխն էր:

Համոզիչ եւ ընդունելի է նաեւ Մուրադեանի ուշագրաւ եզրայանգումը, թէ թէեւ աթաբեկութեան պատիւը շնորհում էր արտաքրուստ վրաց թագաւորի կամքով, սակայն իրականում, կատարում էր մոնղոլների համաձայնութեամբ կամ նրանց թելադրանքով⁴⁷: Այս իրողութիւնը հաստատապէս աղերսում է պատմիչ Ստեփանոս Օրբէլեանի վկայութիւնից, երբ վրաց թագաւոր Դեմետրէ Բ.ը, Հորդայից վերադառնալով, հաւանաբար 1284/85ին աթաբեկութեան պատիւ է շնորհում Տարսայիճ Օրբէլեանին⁴⁸՝ պատմիչի հօրեղբօրը. «Ապա դարձաւ Դեմետրէ մեծաւ խնդութեամբ եւ ամենայն ազաւորք, եւ մեծամեծք Վրաց եւ Հայոց ընդ նմա: Եւ եկեալ ի Շարուր՝ գնաց նմա ընդ առաջ Տարսայիճն մեծամեծ պաւորով եւ արքունա-

⁴⁵ Հայերէն ձեռագիր յիշատակարաններ ԺԳ., էջ 435:

⁴⁶ Գ. Յովսէփեան, «Մոմիկ սարկաւագ», Նիւթեր եւ ուսումնասիրութիւններ հայ արուեստի պատմութեան, հփր. Բ, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1987, էջ 221: Ա. Աբրահամեանը նկատում է, որ Աթաբեկ թուրքական փոխառութիւնը հայերէնում հանդէս է եկել նախ որպէս հասարակ, ապա՝ նաեւ յատուկ անուն: Նրա հաստատմամբ՝ բառի ստուգաբանական իմաստն է «բէկի հայր», «թագաւորի հայր», մեզանում կիրառական է եղել «փոխարքայ», սելջուկեան եւ մոնղոլ-թաթարական տիրապետութեան շրջաններից՝ «անկախ իշխան» իմաստներով (Ա.Ա. Աբրահամեան, «Բնագիտական դիտարկումներ, Ստեփանոս Օրբէլեանի պատմական երկում», Պատմաբանասիրական հանդէս, 3:1985, էջ 64: Անկախ իշխանները, հաւանաբար տէրունի իշխաններն էին՝ Սմբատ Օրբէլեանը, Հասան Զալալ Դոլան, Սարգիս Զաղելի, որոնք աթաբեկութեան պատիւ չեն ունեցել:

⁴⁷ Մուրադեան, Հայաստանի վրացերէն արձանագրութիւնները, էջ 233:

⁴⁸ Աթաբեկ տիտղոսով Տարսայիճ Օրբէլեանը յիշատակում է Գնդեվանքի եկեղեցու հետեւեալ բնագրում, որ զարմանալիօրէն թուագրված է 1281. «Շնորհիւն ԱՅ, եւ ողորմութիւն պարոն Աթաբակ Տարսայիճիս, եւ Աբաս ու այլ եղբարքս, կանգնեցաք զխաչս ի բարեխաւսութեան Մարկոսի եւ Վարդայ, Միրայ թվ :ՉԼ: (1281)» (Դիւան հայ, պրակ, III, կազմ.՝ Ս. Գ. Բարխուդարեան, Երեւան, 1967, էջ 26:

կան ընծայիք մեծարեաց զթագաւորն: Եւ նա առեալ տարաւ ընդ իր զնա յերկիրն Աւագեան՝ յԱյրարաւր. եւ բազում թախանձանօք բռնազբօսեաց զնա, եւ եղ Աթաբէկ ի վրայ ամենայն տէրութեան իւրոյ մինչեւ ի Տփղիս եւ յԱնի եւ ի Կարս»⁴⁹:

Սակայն զարմանալիօրէն Արծրունի Սադուն Բ.ի անունը եւ նրա գործունէութեան սկիզբը, վրացական աղբիւրի հաւաստմամբ՝ շօշափում եւ հոլովում է 1249/50ին, երբ մահացել էր ամիրսպասաւար, աթաբէկ Աւագ (Սարգիս) Զաքարեանը, ինչը խիստ առարկելի է: Թէեւ վրացական յիշատակութիւնը ծաւալուն է, սակայն անհրաժեշտութիւն է զգացում այն նշել ամբողջական, որպէսզի ընդգծուի պատմական առանձին իրողութիւնների առկայութիւնը, որոնք շարադրուել են նկարագրական եղանակով եւ ընդգրկում են քսան եւ ւեցի տարիների պատմական իրողութիւններ.

Այնտեղից [Ուլոյի հետ] եկաւ (վրաց թագաւոր Դաւիթը - Ռ.Գ.) [նրա] ամառանոցը⁵⁰, որտեղից թագաւորին ուղարկեց Վրաստան (Քարթլի), որ թագաւորը պատրաստ լինի Եգիպտոս արշաւելու, որ է Մսերք: Մտաւ (Դաւիթը - Ռ.Գ.) անցաւ Իւանէ աթաբէկի որդի Աւագ աթաբէկի երկիրը, իսկ այդ ժամանակ վախճանուած էր Աւագը եւ չունէր արու զաւակ, այլ միայն Խուաշագ անունով մի աղջիկ: Թագաւորը արտասուելով զնաց Բջնի: Տեսաւ Աւագի կնոջը՝ Ռաճի Էրիսթաւ Կախաբերիձէների աղջկան, Գուանցա անունով, գեղեցկատես: Սիրահարուեց նրան եւ քիչ անց նրան կնութեան ու թագուի դարձնելու տարաւ: Բերեց իր թագաւորութիւն: Իսկ Աւագի աղջկան թողեց հայրական տիրոյթում եւ յանձնարարեց նրան Մահկանաբերդցի Սադունին, որ իմաստուն ու խելօք մարդ էր, բարեխոհ, բարետես, ուժով յուժ զօրեղ, նշանաւոր, ընտիր ըմբիշ, վարպետ նետաձիգ⁵¹:

Վաւերագրի համաձայն՝ Ուլօն⁵², Հուլաւեան գերդաստանի հիմնադիր Հուլաւ(զ/դ)ու իլխանն (1256-1264/5) է, որը վերը նկատեցինք, Անդրկովկաս է եկել հաստատապէս 1256ին եւ իրատեսօրէն որեւէ կապ չէր կարող ունենալ 1249/50ին⁵³ մահացած Աւագ Զաքարեանի յուղարկաւորման հետ: Երկրորդ՝ Հուլաւուի արշաւանքն Ասորիք, որի մասին ակնարկում է տարե-

⁴⁹ Օրբէլեան, էջ 426:

⁵⁰ Վրաց տարեգիրը նկատի ունի Մուղանի դաշտավայրը, *Վրաց ժամանակագրութիւն*, էջ 109-10:

⁵¹ *Վրաց ժամանակագրութիւն*, էջ 109-10:

⁵² «Ուլոն նոյն Հուլաւու կամ Հուլագու խանն է», նոյն, էջ 199:

⁵³ Կիրակոս Գանձակեցի, *Պատմութեան Հայոց*, աշխ.՝ Կ. Ա. Մելիք.Օհանջանեան, Հայկ. ՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1961, «ՈՂԸ (1249) մեռաւ իշխանաց իշխան Աւագ եւ թաղեցաւ ի Պղնձահանքն ի գերեզմանի հօր իւրոյ», էջ 321. Նաեւ՝ Օրբէլեան, «676 թուին էառ զԱթաբէկութիւնն որդին Իւանէի Աւագն, կեցեալ իշխանութեանն ամս 23», էջ 398:

գիրը, տեղի է ունեցել 1258-60ին, երբ հայկական եւ վրացական աղբիւրների հաւաստմամբ, թագաւոր Ուլու Դաւիթը⁵⁴, (վրաց պատմագրութեան համաձայն՝ երկու Դաւիթները)⁵⁵ մոնղոլների ծանր հարկերի պատճառով, այդ ժամանակ ապստամբել էին⁵⁶, թէեւ տարեգիրը յայտնում է, որ Ուլու Դաւիթը իր զօրաբանակով մասնակցել է Եփրատ գետի մօտ տեղի ունեցած դժուարին ճակատամարտին. «Դաւիթ թագաւորը իր բանակով քաջաբար նախադարձակ էր լինում»⁵⁷: Նոյնիսկ, ըստ տարեգրի, վրացական զօրաբանակը մասնակցել է, հաւանաբար, Մուֆարդին-Նփրկերտ ամրոցի գրաման, թէեւ վերջինս քաղաքի անունը չի նշում. «Ուզում եմ (խանը - Ռ. Գ.), որպէսզի արշաւենք եւ շրջապատենք այս քաղաքն (հաւանական է Մուֆարդին քաղաք - Ռ. Գ.) ու շների պէս սկսենք հաչել ու կաղկանծել»⁵⁸:

Յիշատակման յաջորդ տեղեկութիւնը վերաբերում է թագաւոր Դաւիթ սիրահարուելուն՝ այրի իշխանուհի Գոնցային եւ վերջիններիս ամուսնութեանը. ակներեւաբար այն տեղի է ունեցել անլի ուշ՝ 1257/58/59ին:

Վրացական աղբիւրի վերջին տեղեկութեամբ, ամենայն հաւանականութեամբ, ակնարկում է Մահկանաբերոցի իշխանի՝ Աւագեան աւատական տան հեջուր-խնամակալ, սենեկապան, վերահսկիչ-կառավարչի (արարողապետ) մասին. «Իսկ Աւագի աղջկան թողեց⁵⁹ հայրական տիրոջ թում եւ յանձնարարեց նրան Մահկանաբերոցի Սադունին»⁶⁰:

⁵⁴ Գանձակեցի, էջ 389-90. նաեւ՝ Վրաց ժամանակագրութիւն, էջ 111:

⁵⁵ Վրաց ժամանակագրութիւն, էջ 203 (68):

⁵⁶ «Իսկ թագաւորն վրաց Դաւիթ՝ որդի Լաշային, որ կայր ի հնազանդութեան թաթաին, նեղացաւ, ծանձրացաւ ի բազում հարկապահանջութեանցն, որ նեղէին զնա եւ զամենայն իշխանսն, եւ զամենայն աշխարհս անհնարին ծանրութեամբ, զոր ոչ կարային բառնալ: Եթող նա զքաղաք իւր, զՏփխիս, եւ զաթոռ, եւ զամենայն ինչ, զոր ունէր, եւ փախեաւ ի խորին Ափխազք, եւ յամուրսն Սուանեթոյ» (Գանձակեցի, էջ 389):

⁵⁷ Վրաց ժամանակագրութիւն, էջ 108:

⁵⁸ Նոյն. էջ 109: Մուֆարդին-Նփրկերտ ամրոցի գրամանը, մասնակել է նաեւ Ելիկում Օրբէլեանը, որը դեղակորուս է եղել Աւագ Զաքարեանի հրամանով. «Ապա յեւր ամաց ինչ գնաց Թաթարն. եւ փարաւ ընդ իւր զօրսն Վրաց եւ զԱւագն եւ զՇահանշահ. ընդ որոց եւ գնաց Ելիկումն ի վերայ քաղաքին Մարտիրոսաց որ Նփրկերտ կոչի... եւ Անդէն հիւանդանայ Ելիկումն խստագոյն ցաւօք, եւ որպէս ասեն, դեղակոր լինի ի բժշկաց ի հրամանէ Աւագին» (Օրբէլեան, էջ 404): Զաքարեանը 10 տարի առաջ մահացած էր եւ չէր կարող մասնակել արշաւանքին:

⁵⁹ Ամիրսպասալար, աթաբէկ Աւագ Զաքարեանի միակ դուստր Խոշաքը (վրաց. Խուաշագ) մանկահասակ չէ: Վերջինիս անունը հոլովում է 1236ին, երբ մոնղոլները ներխուժել էին Հայաստան. «Իսկ իշխանն մեծ՝ որդի Իւանէի, որ Աւագն կոչէին... Իսկ նորա կամեցեալ շահել զմիտս նոցա, փայ զդուստր իւր նոցա եւ ինչս բազումս, զի թերեւս թուլասցին ի պաշարմանէն» (Գանձակեցի, էջ 254-55):

⁶⁰ Վրաց ժամանակագրութիւն, էջ 110: Այն նկարագրական եղանակով կրկնում են մի շարք յղումներում եւս, ինչպէս 129 էջի յիշատակութիւնում է «...[Սադունը] նրա

Հարց է՝ Մահկանաբերդի իշխանը ե՞րբ կարող էր լինել Աւագեան աւատական տան հեջուբ-խնամակալ, սենեկապան, վերահսկիչ-կառավարիչը:

Մատենագիր եւ վիմագիր սկզբնաղբիւրների վկայութեամբ նկատելի է, որ իշխանապետ Աւագ Զաքարեանի մահուանից յետոյ Հայաստանում ընկերաքաղաքական որոշակի փոփոխութիւններ են տեղի ունեցել: Ժամանակի պատմիչ Կիրակոս Գանձակեցու վկայութեամբ՝ Հայաստանի իշխանավարումն Աւագեան տնից սկզբում անցել է Շահնշահեան տանը, իսկ, այնուհետեւ, որոշ ժամանակ անց, վերստին վերադարձուել է՝ շնորհուելով աթաբէկ Աւագի այրիացած կնոջը՝ **Գոնցա Կախաբերիձէներին**.. «Ետուն զիշխանութիւն նորա Զաքարէի, որդւոյն Շահնշահի, հորեղբոր որդւոյ Աւագին, զի Աւագն որդի ոչ ունէր, բայց միայն դուստր մի երեխա: ..Եւ ապա հանեալ ի Զաքարէէ ետուն կնոջ Աւագին, որում անուն էր Գոնցա»⁶¹: Պատմական այդ իրողութիւնը նկատուած է վիմական սկզբնաղբիւրներում եւս, եւ հարկ է ներկայացնել դրանք հաստատող միքանի օրինակով:

Յովհաննավանքի ժամատան **ՈՂԹ** (1250) վիմագիր բնագրում երեւան է գալիս երկրամասի ընկերաքաղաքական որոշակի փոփոխութիւն: Տէրութեան իշխանապետը Շահնշահ Ա Զաքարեանն է. «Յամի ՈՂԹ ի **տէրութեան Շահնշահի, որդոյ Մեծին Զաքարիայի**»⁶²: Պատմական այս իրողութիւնը հաստատուած է նաեւ նոյն հնավայրի Կաթողիկէ եկեղեցու անթուակիր վաւերագիրը. «Անուամբն ԱՅ եւ **իշխանութենն Շահնշահի** [մանդատ]որդայսուցէսի եւ յառաջնորդութե Սարգսի միայնաւորի»⁶³: Շահնշահ Ա. Զաքարեանի գերակայ իշխանավարումն արձանագրում է նաեւ Բջնիի Ս. Աստուածածին եկեղեցու 1251ին փորագրուած վաւերագիրը, որն իրատեսութեւն հաստատում է վերջինիս իշխանութեան գերակայութիւնը Հայաստանում 1250ականների սկզբին. «Հայոց 2 (1251) ..**իշխանութեան Մեծին Շահնշահի**»⁶⁴: Պատմական նշեալ ընկերաքաղաքական իրողութիւնը հաստատուած է նաեւ Հաղբատի 1257ի բնագրով, որտեղ Շահնշահ Ա.ի իշխանավարմանը գահակից է նաեւ աւագ որդի՝ Զաքարէն. «Ի թուիս Հայոց :22: **Ի տէրութեան մեծին Շահնշահի եւ Զաքարիայի շինեցա**»⁶⁵:

Այս իրողութիւններից երկու տարի անց, Նոր Գետիկի (Գօշավանքի) Ս. Աստուածածին եկեղեցու 1260ի ինը տողանոց բնագրով, պարզուած է՝ Ար-

կնոջ՝ Աւագի դուստր Խուաշագի սենեկապետն էր [էջիբը]», եւ 140 էջի յիշատակման մէջ՝ «Ու [Սաղունը] սկսեց խնամակալ լինել ..., որովհետեւ [թագաւորը] նրա տէր Աւագ աթաբէկի աղջկա [մասին հոգալ] յանձնարարեց Սաղունին, իսկ Խուաշազը էջիբութիւն տուեց նրան»:

⁶¹ Գանձակեցի, էջ 321:

⁶² Ղաֆադարեան, էջ 103:

⁶³ Նոյն, էջ 96:

⁶⁴ Հ. Եղիազարեան, «Բջնիի վանքը եւ Բջնի գիւղի միւս յուշարձանները», էջմիածին, Թ-Ժ:1963, էջ 46:

⁶⁵ Ղաֆադարեան, Հաղբատ, էջ 217:

մանեցին, որ ամբողջ թեմի թեմակալ եպիսկոպոսն էր⁶⁶, Գետկայ վանքի վարդապետ, պատմագիր Գանձակեցու խնդրանքով վերացրել է գիւղի՝ եպիսկոպոսական աթոռին տրուող հարկը՝ **Գոնցա** խաթունի **իշխանութեան օրօք**. «Աստօով ես տր Յովանէս Արմանեցի ազատ գերցի զԳեպկայ ժողովուրդս ի հարկէ, որ տային յաթոնն, **իշխանութե Գոնցա խաթունին**, ի խնդրո Կիրակոս վարդապետին...գրեցաւ :**ՉԹ**: թիւ»⁶⁷: Այսինքն, 1260ին երեւան է գալիս պատմական այն ընկերաքաղաքական իրավիճակը, որ Աւագեան երկրամասի իշխանութիւնն **անցել էր Գոնցա խաթունին**: Հաւանական է, այն ժամանակ, երբ վերջինս ամուսնացել էր վրաց թագաւոր Դաիթ Վահրամուլի հետ: Այս իրողութիւնը, մի փոքր աւելի վաղ, հաստատում է նաեւ *Մանր ժամանակագրութեան* վկայութիւնը. «Յայսմ ամի մեռանի Աւագն, որդի Իւանէի, անորդի, եւ թողու դուստր մի Խոշաք անուն, եւ սուգ անհնարին պատեաց, զերկիրս մեր, եւ **կին նորա Գոնցայն առնէ զպէրութիւն աշխարհիս, ՌՄՄԱ (1251)**»⁶⁸:

Սակայն, ինչպէս նկատեցինք, Նորատուսի Ս. Աստուածածին եկեղեցու 1258ի բնագիրը նոյնպէս արձանագրում է Աւագեան երկրամասի ընկերաքաղաքական փոփոխութեան մասին: Վաւերագրի հաւաստմամբ, Աւագեան երկրամասի տէրերն են աթաբէկ Աւագի դուստր Խոշաքը եւ աթաբէկ Սաղունը (Սաղուն Բ.ը – Ռ.Գ.). «Թւին :**ՉԷ**: (1258) **իշխանութեան աստուածաւիառ փէրանց մերոց Խոշաքին եւ աթաբակ Սաղունին**»⁶⁹:

Նկատելի է, որ Նորատուսի խնդրոյ առարկայ բնագիրն անուղակիօրէն խօսում է պատմական խիստ կարեւոր իրողութեան մասին, ինչը ցանկալի է մեկնաբանել:

Նորատուսի վաւերագրում, Արծրունի Սաղուն Բ.ը հանդէս է գալիս աթաբէկ պատնով: Այդ առիթով Ս. Աւագեանը յայտնում է, որ Մահկանաբերոցի իշխանաց իշխան Արծրունի Սաղուն Բ.ն աթաբէկութեան պատիւը ստացել է **ստուգապէս 1270ին** վրաց թագաւորի կողմից⁷⁰:

⁶⁶ «Յովհանէս Արմանեցին, որ եւ Հաղարծնին էր առաջնորդ, եւ ձեռնադրեցաւ եպիսկոպոս յեթնհարիւր հինգ թուականին: Սա շինեաց ի Հաղարծնին զսեղանապրունն երեւելի՝ սրբապաշ վիմօք, եւ ապա գնաց ի մեծ աթոռն Հաղբապո» (Գանձակեցի, էջ 223):

⁶⁷ Նոյն:

⁶⁸ *Մանր ժամանակագրութիւններ*, էջ 42: Ինչպէս երեւում է իշխանուի Գոնցան ամուսնու մահից երկու տարի յետոյ դարձել է երկրամասի իշխանապետը:

⁶⁹ *Դիւան, պրկ. IV*, էջ 13: Աւագեանի վերձանութիւնը մի փոքր տարբերում է նախորդից. «ՉԷ... փէրանց մերոց Խոշաքին եւ աթաբակ Սաղունին մէք՝ Նորատուսց մեծ եւ փոքր ամէն մեր սրբոյի կամաւք զէզին չար եւ զքեւէկի վեր կալաք» (Աւագեան, էջ 279: Սակայն ՉԷ տարբերի չի համապատասխանում Խոշաքի եւ աթաբէկ Սաղունի տիրապետութեան ժամանակներին:

⁷⁰ Աւագեան, *Վիմական արձանագրութիւնների*, էջ 279: Այդ կարծիքը գիտնականը կրկնում է քանիցս՝ *Դիւան, VI պրակ.*, էջ 166:

Չհակադրուելով գիտնականին՝ նկատենք, որ 1270ին Ձագավանքում տեղի ունեցած եկեղեցական յայտնի ժողովի յիշատակարանի համաձայն, այն գումարուել է «ի թուխ հայոց **ՉԺԹ** (1270)», **արաց ամսի**⁷¹ ԺԵ կամ ԺԷ, «ի քանի սրբոյն Գրիգորի, յաշխարհակալութեան Ապաղա դանին (1265-1282), կամաք եւ հրամանաւ Խոշաքին⁷², եւ իշխանաց մերոց մեծին Պռաւշայ եւ Սադոնին եւ Սմբարայ»⁷³: Ուշադրութեան արժանի է այն հանգամանքը, որ ժողովի գումարման ժամանակ, ակներեաբար, իշխան **Սադունը** չի ունեցել աթաբէկ, ամիրսպասալար պատիւները, ուստի յիշատակագրի իրազեկմամբ՝ վերջինս իշխանական դիրքով, որոշակի աստիճանական տարբերութեամբ, հաւանական է զիջել է «մեծին Պռաւշայ»՝ Խաղբակեան իշխանին⁷⁴: Այսինքն, իշխանը 1270ին «Գիւրջիստանի վիլայէթում» բարձր դիրք չէր զբաղեցնում: Բնականաբար, եթէ իշխանն ունենար գործակալական այդ բարձր տիտղոսները, ապա վաւերագրում անվերապահօրէն կը նշուէր: Վերջինս այդ պատիւներին կարող էր արժանանալ, ամենայն հաւանականութեամբ, Բարանա-Կողբ վաւերագրում աթաբէկ, ամիրսպասալար տիտղոսներով հանդէս եկած Իւանէ Աբուլթեփց յետոյ՝ 1271/72ին: Չպէտք է մոռանալ նաեւ, որ 1270ին մահանում է Գէորգի Լաւայի որդի թագաւոր Դաւիթ Վահրամուլը, որից յետոյ, ինչպէս վրաց տա-

⁷¹ Արաց ամիսն ըստ Հ. Բաղալեանի հաւաստմամբ՝ Յովհաննէս Վանական Իմաստաւերի մօտ հանդիպում է «արանց տառադարձութեամբ» եւ ստուգաբանում է. «Եւ Արանց ի յանել ձեան զլերինս եւ զբլուրս, ասեն արանց է այս ճանապարհ եւ ոչ կանանց. Արի մարդոց է այս եւ ոչ թուլից եւ վարաց»: Գիտնականի յաւելմամբ՝ «Յովհաննէս Իմաստաւերը իր Պատճէն տոմարի աշխատութիւնում արաց ամիսը նոյնպէս գործ է ածում արանց ձեւով. «Ձմեռնամուր այսպէս. Կալ ԺԱ (11) եւ զնսահանցն քորար արանց ամսոյ»: Արացը տեսում է Յունուարի ծից մինչեւ Փետրուարի 6ը: (Հ. Ս. Բաղալեան, *Օրացոյցի պատմութիւն*, Արմֆան, Երեւան, 1940, էջ 97, 98): Աւելի մանրամասն տե՛ս՝ Լ. Խաչիկեան, «Յաղագս տարեմտին ի Վանական վարդապետէ ասացեալ», *Մարտենադարանի գիւրական նիւթերի ժողովածու*, 1:1941, էջ 160. նաեւ՝ Ա. Աբրահամեան, *Յովհաննէս Իմաստաւերի մարտենագրութիւնը*, Պետական համալսարան, Երեւան 1956, էջ 206:

⁷² Ամիրսպասալար, աթաբէկ Աւագ (Սարգիս) Ջաքարեանի միակ ժառանգորուտը:

⁷³ Գարեգին վարդապետ, «Ձագավանից ժողովը», *Շողակայթ*, 1913, էջ 22: Նշեալ ժողովի մասին վկայում է նաեւ Մխիթար Այրիվանեցի. «Ի Ղանութեան Ապաղային եւ ի կաթողիկոսութեան քեանն Յակոբայ արարին ժողով ի Հաղբար եւ ի Ձագավանս» (Մխիթար Այրիվանեցի, *Պատմութիւն հայոց*, կազմ.՝ Մկրտիչ Էմին, Մոսկուա, 1860, էջ 68):

⁷⁴ Թէ՛եւ նկատելի է, որ «Մեկնութիւն Դանիէլի Վարդանայ Արեւելցոյ. հեղ.՝ Վարդան Արեւելցի, վայր՝ Խոր Վիրապ» յիշատակարանում Պոռ խաղբակեանի անունը Վարդան Արեւելցին նշում է վերջում. «...ողորմութիւն եւ թողութիւն մեղաց, եւ ամենայն երախտաւոր պատրոնացն Սադունին, Սմբարա, Քրդին, Պռաւշայ» (*Հայերէն ձեռագիր յիշատակարաններ ԺԳ. դար*, էջ 356, 366):

րեզիդենտ է նշում. «Ապա հաաքուեցին Վրաստանի բոլոր դիդեբուլներն ու արքայազն Դիմիտրիին տարան Հորդա»⁷⁵: Ասել է, թե թագաւոր Դաւթի մահուանից յետոյ, մի որոշ ժամանակ անց, վրաց արքունիքի աւագանիները, բնականաբար, նոր մեկնել են Հորդա՝ արքայազն Դեմետրիին թագադրելու նպատակով: Եթէ ընդունելի համարենք այն պարագան, որ 1270ի վերջին Դեմետրէ Բ.ը թագաւոր օծուելով՝ աթաբէկ եւ ամիրսպասաւար պատիւները շնորհել է Աբուլթթի որդի Իանէին, ապա պէտք է ենթադրել, որ որոշ ժամանակ՝ մէկ կամ երկու տարի յետոյ, վերջինիցս միանշանակօրէն այդ գործաւարութիւններն անցել են Մահկանաբերդցի Արծրունի Սադուն Բ.ին: Այսպիսով, 1271/72ին Արծրունի Սադուն Բ.ը որոշապէս դարձել է «Գիւրջիստանի վիլայէթի» աթաբէկ, ամիրսպասաւար:

ԵՐՐԲ ԵՒ ՈՐ ԺԱՄԱՆԱԿ ԿԱՐՈՂ ԷՐ ԻՇԽԱՆՈՒՀԻ ԽՈՇԱՔԸ ԼԻՆԷՐ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՐԿՐԱՄԱՍԻ ՏԷՐ-ԻՇԽԱՆԱԻՈՐԸ

Այժմ հարկ է պարզել խնդրոյ առարկայ վաւերագրի խիստ կարեւոր հետեւեալ իրողութիւնը. ԵՐՐԲ եւ ո՛ր ժամանակ կարող էր իշխանուի Խոշաքը լինել հայրական երկրամասի տէր-իշխանաւորը, քանի որ Գօշաւանքի վերոնշեալ 1260ի բնագրի համաձայն՝ երկրամասի իշխանաւորը մայրն էր՝ Գոնցա խաթունը:

Յայտնի է, որ 1258-60ին Վրաստանում, հայկական եւ վրացական աղբիւրների վկայութեամբ՝ մոնղոլների ծանր հարկերի պատճառով, ապստամբութիւն է բռնկուում: Գանձակեցու վկայութեամբ, վրաց թագաւոր Դաւիթը տագնապով թողնում է Տփլիսը, թագուի Գոնցային եւ նորածին որդուն՝ Դեմետրիին, տանելով իր հետ միայն Գէորգի⁷⁶ անունով աւագ տղային՝ պատսպարուելով հեռաւոր խորին Ափխազք՝ ամուր Սուանէթում⁷⁷: Ապստամբութեան մասին իլխան Հուլաւուն տեղեկանալով՝ պատժիչ զորաբանակ է ուղարկում Արղուն ոստիկանի (Արղուն Օյրիդին⁷⁸) հրամանատարութեամբ, որն ըստ վրացական աղբիւրի, բաւականին մեծաքանակ էր՝ քսան հազար. «Եկաւ Արղունը քսան հազար զօրքով, կրրեց անցաւ Գանձակը ու Սոմխիթը եւ հասաւ Թփղիս»⁷⁹: Ինչպէս հայկական, այնպէս էլ վրացական աղբիւրները շեշտում են, որ Արղունին չի յաջողուել գերել վրաց թագաւորին, սակայն սաստկապէս աւերել է վրաց թագաւորների Գեւաթ գերեզմանոցը եւ Ածղորի կաթողիկոսարանը⁸⁰, շրջակայ երկրամասերը: Սակայն սակաւաթիւ հեծեալ ժողովրդական ուժեր, յանկարծակի

⁷⁵ Վրաց ժամանակագրութիւն, էջ 140:

⁷⁶ Օս Ալթունից ծնուած, Վրաց ժամանակագրութիւն, էջ 109:

⁷⁷ Գանձակեցի, էջ 389. նաեւ՝ Վրաց ժամանակագրութիւն, էջ 111:

⁷⁸ Վրաց ժամանակագրութիւն, էջ 112:

⁷⁹ Նոյն:

⁸⁰ Գանձակեցի, էջ 390:

գրոհել են Արղունի հրոսակների վրայ՝ նշանակալից կորուստների մատնելով, որի պատճառով Արղունը վարանել է այլևս «**համարձակ մտանել խուզել զվայրսն**»⁸¹: Արղունքում Արղունն իվերջոյ գերեվարել է թագուհի Գոնցային, նրա դուստր Խոշաքին, նորածին որդուն՝ Դեմետրէին, Շահնշահ Ա. Զաքարեանին եւ Արցախի տիրակալ Հասան Զալալ Դոլային⁸²: Թագուհի Գոնցան եւ Հասան Զալալ Դոլան իրենց մահկանացուն են կնքում Հորդայում, իսկ միաները՝ «...*յորոց բազում գանձս առեալ, հազի գերծան ի մահուանէ*»⁸³: Հետեւաբար, Խոշաք Զաքարեանը հայրական կալուածքի օրինական տէր միայն կարող էր լինել մոնղոլական գերութիւնից վերադառնալուց յետոյ, ակներեաբար, 1264/65ին, կամ մի փոքր ատելի շուտ (յայտնի չէ, թէ իշխանուիին երբ է վերադարձել գերութիւնից)⁸⁴:

Համաձայն *Մանր ժամանակագրութեան* վկայութեան, իշխանուի Խոշաքը 1269ին ամուսնացել է իլխանութեան առաջին վեզիր, պարսիկ խոջա Շամս ադ Դին Մուհամմէդ Զուվէյնու հետ. «*Սահիպն գխոշաքն էառ ՉԺԸ (1269) թվին*»⁸⁵: Վերջինս իլխանութեան մէջ իր վարած պաշտօնի անունով կոչւում էր Սահիբ Դիւան⁸⁶: Այդ պաշտօնին նա նշանակուել էր իլխան

⁸¹ Նոյն:

⁸² Նոյն:

⁸³ Նոյն:

⁸⁴ Թէեւ Գանձակեցին Զաքարէ Շահնշահեանի մահը տարբերուով չի նշում, սակայն հայրը՝ Շահնշահ Ա.ը, որ արդէն գերութիւնից պէտք է վերադարձած լինէր՝ լսելով որդու մահուան «*զգոյժն հայր նորա Շահնշահ ի գիւղն Օծուն... ի փրփմութենէն մեռա*» (նոյն, էջ 393): Ակներեաբար, Շահնշահ Ա.ի վերադարձը կապուում է աղբսուելով Մրենի 1261ի գիւղաքաղաքի վաճառման հետ (Ս. Ա.Օրծեռու, “Надписи Мрена,” *Հայագիտական հետազոտութիւններ, պրակ, Ա*, Երեւան, 1974, էջ 41): Հաւանական է նաեւ Խոշաքի վերադարձն առնչուում է Երեւանի «հողով ջրով» 1264ի բնագրի վաճառքի հետ (Կ. Ղաֆաղարեան, *Երեւան. միջնադարեան յուշարձաններ*, Հայկ. ՍՍՀ ԳԱ, Երեւան, 1975, էջ 137): Սակայն Սիւնեաց պատմիչը հօրեղբօր որդու մահը Թերեզ գետի ճակատամարտում նշում է 1261ին. «*Իսկ եղբորորդին սոցա Բուրթէլն գնաց ընդ զօրս Հուլաոյին ի պարտերազմի ընդ Բերքայ դանին ի դաշտն Խազրաց որ այժմ Խփչախք կոչին, եւ առ մեծ գեպովն զոր Թերզ (Տէրեկ) կոչեն, սպանանի ի պարտերազմին յ710 թուին (1261)*» (Օրբէլեան, էջ 416): Ակադ. Յակոբ Մանանդեանը Թ(Տ)երեկ գետի ճակատամարտը նշում է 1263 Յունուարին (Յ. Մանանդեան, *Երկեր, Գ*, Հայկ. ՍՍՀ ԳԱ, Երեւան, 1977, էջ 252): Անշուշտ նկատելի է պատմական ինչ-որ հակասութիւն նշեալ յիշատակութիւններում, բայց իվերջոյ իշխանուի Խոշաքը պէտք է գերութիւնից վերադարձած լինի 1260ականների սկզբում, ոչ ուշ քան՝ 1262-64/65ը, թէեւ մատենավիմագիր ոչ մի յիշատակութիւն չկայ:

⁸⁵ *Մանր ժամանակագրութիւններ*, էջ 44:

⁸⁶ Рашид ад-Дин, *Сборник летоисеѣ т. III*, Մոսկուա-Լենինկրատ, 1946 էջ 61. նաեւ՝ Մանանդեան, էջ 277): «Սահիբ Դիւան» (պահլ. devan, պարսկ. divan) Արքունի ատեան, դահլիճ, դիւանատուն (Ստ. Մալխասեան, *Հայերէն բացատրական բառարան, հիփր. Ա*, Հայկ. ՍՍՌ պետական հրատ., Երեւան, 1944, էջ 525):

Հուլիանի կողմից 1262ին⁸⁷, եւ այդ բարձր դիրքում է եղել նաեւ Աբաղայի (1265-82), Թագուդար-Ահմադ (1282-84) իլխանների օրօք:

Վերը նկատեցինք, որ 1270ին Ձագավանքում գումարուած եկեղեցական ժողովը ղեկավարել էր Խոշաք Չաքարեանը: Սակայն վրացական աղբիւրի յիշատակմամբ, վերջինս ամուսնու՝ Սահիբ Դիւանի հետ, ակնբերաբար, 1271 կամ 1272ին մեկնել է Թփիսիս, որտեղ ամուսնուն «թագաւորները պարգեւել», շնորհում են Կարս քաղաքը: Պէտք է նկատել, որ վրաց անանուն տարեգիրը չի նշում անշարժ գոյքի շնորհման ընկերաքաղաքական խիստ կարեւոր շարժառիթը. «Եւ Աւագ աթաբէկի մեծ սահիբդիւանը, որ [Աւագի] աղջկան՝ Խոաշագին ի կնույթեան բերեց... Եւ [սահիբդիւանը] գնեց բազմաթիւ երկրներ, իսկ թագաւորները պարգեւեցին Կարսը, նստեց Կարսում եւ զայն բազմաթիւ երկրները ախալցիխեցիներին: Իսկ Ախալցիխեցու աղջկան կնույթեան բերեց»⁸⁸: Այսպիսով, վրացական աղբիւրի անուղղակի վկայութեամբ, նկատելի է, որ Խոշաք Չաքարեանը 1271/72ի դուրս է եկել իր հայրական կալուածքից, եւ մինչեւ ամուսնու կառավանքը՝ 1284 Հոկտեմբեր, ապրել է Հորդայում կամ Պարսկաստանում⁸⁹: Ուստի, ինչպէս իրաւացիօրէն նկատել է Հայկազ ժամկոչեանը⁹⁰, Աւագեան աւատական կալուածքի ղեկավարումը յանձնուել է հեջուր, խնամակալ-կառավարիչների: Ամենայն հաւանականութեամբ, այդ տարիներից սկսած Մահկանաբերդցի իշխանն եղել է Աւագեան աւատական տան հեջուր-արարողապետ-սենեկապանը մինչեւ իր կեանքի վերջը՝ 1284⁹¹: Վրաց տարեգրի հետեւեալ արտայայտութիւնը, ուր ասում է, թէ «Այս սահիբդիւանը հզօրացել էր Ուլո խանի կողմից, եւ Սահունն էլ՝ նրանից»⁹², մեր կարծիքով այդ տեղեկութիւնը պէտք է վերաբերի Մահկանաբերդցի իշխանի գործունէութեան այն ժամանակաշրջանին, երբ վերջինս 1271/72ին դարձել էր Աւագեան տան հեջուր-կառավարիչը, ինչը նախադրեալ է հանդիսացել իշխանի հարստացմանը:

«Դիւան» դահլիճ, ատեան, «մատենադարան», «դիւանապետ, դիւանադպիր» (Հր. Աճառեան, *Հայերէն արմատական բառարան, հոյր. Ա.*, ԵՊՀ հրատ., Երեւան, 1971, էջ 671): «Սահիբ Դիւան» արաբերէնից թարգմանաբար նշանակում է «Արքունիքի տէր», այսինքն՝ արքունապետ:

⁸⁷ Նոյն. նաեւ՝ Հ. Գ. ժամկոչեան, «Անի քաղաքի 13րդ դարի երկու արձանագրութեան մասին», Վ. Մ. Մոլատովի անուան Երեւանի պետ. համալսարան, *Գիտական աշխատութիւններ*, 47:1955, էջ 92:

⁸⁸ Վրաց ժամանակագրութիւն, էջ 142:

⁸⁹ Համաձայն Սահիբ Դիւանի կտակի նշում՝ «Եթէ որդիս Աթաբէկը եւ նրա մայր Խոշաք խաթունը ցանկանան ուղեւորուել հայրենիք, ապա նրանց թող թոյլատրուի այր» (Рашид ад-Дин, էջ 115-16):

⁹⁰ ժամկոչեան, էջ 97:

⁹¹ Գ. Յովսէփեան, *Նիւթեր*, էջ 221: Իշխանի մահուան թուականը հայագետինն է:

⁹² Վրաց ժամանակագրութիւն, էջ 142:

Ուշագրաւ է, որ Սիւնեաց պատմիչը Մահկանաբերոցի Արծրունի Սադուն Բ.ի իշխանական կալուածքը ներկայացնում է ոչ աշխարհագրական տարածքով. «Եւ էր ընդ նոսա թագաւորն Դեմեպրէ, զոր սիրեաց Արղունն, եւ ետր նմա զամենայն **աշխարհս Հայոց՝** զպրունն Աագեան եւ զպրունն Շահանշահեան եւ զԳագեցին եւ **զորդիսն Սադունն աթաբէկին**»⁹³: Ըստ Ստեփանոս Օրբէլեանի՝ նշեալ վկայութեան, դէպքը կատարուած պէտք է լինի 1285ին, քանի որ պատմիչն ընդգծում է «զորդիսն Սադունն աթաբէկին», այսինքն՝ Արծրունի Սադուն Բ.ը վախճանուած է, ողջ չէ, եւ իշխանապետութիւնը ստանձնել էին վերջինիս որդիները: Վրացական աղբիւրի վկայութեամբ, հաւանական է, 1270ականների առաջին կէսին Մահկանաբերոցի իշխանը տիրացել է Վրաստանում մի շարք բնակավայրերի, ինչպիսիք են Դմանիսը, Թելան ու Բելաքանը⁹⁴:

Վրաստանի պատմութիւն դասագրքի հեղինակները հաստատում են, թէ Մահկանաբերոցի Սադուն Արծրունին ձեռք է բերել «ինը տարուայ թարխանութիւն» եւ ազատուել բոլոր տեսակի հարկերից: Վերջինս չնչին գումարով վրացական աւատատէրերից գնել է բազմաթիւ հողեր եւ նրա մօտ հեռաւոր շրջաններից եկել են գիւղացիական հոծ խմբեր, որի պատճառով վրաց աւատատէրերը լցուել են դիսակալութեամբ ու չարութեամբ, սակայն ոչ թագաւորը եւ ոչ էլ նրանք անկարող են եղել որեւէ ձեռով միջամտելու. «Սադունը վրաց ֆէոդալներից էժանագին գնել է մարդկանցից դատարկուած ու արժեզրկուած կալուածքները: Հեռաւոր շրջաններից նրա մօտ են եկել գործազուրկ գիւղացիները: Այդ պատճառով վրաց ֆէոդալները դիսակալութեամբ էին տրամադրուել Սադունի դէմ: Բայց թագաւորը եւ ֆէոդալները անկարող էին ժամհշխանին ոչինչ անել, որովհետեւ նա խանի վստահելի անձն էր»⁹⁵: Զարմանալի է յիշեալ վկայութեան փաստագրումը, երբ *Քարթլիս ցիտվերբայի* լիակատար ռուսերէն օրինակում եւ հայերէն զոյգ թարգմանութիւններում նման յիշատակութիւն բացակայում է:

Մատենագրական տեղեկութիւններից ելնելով՝ կարելի է ասել, ակնբեւաբար, Սադուն Բ.ի կալուածքները անելի ընդարձակ եղել են Վրաստանում եւ, գուցէ այդ է պատճառը, որ Սիւնեաց պատմիչը վերջինիս հողային տարածքը բնորոշում է «**զորդիսն Սադունն աթաբէկին**» անորոշ արտայայտութեամբ, ինչը համոզիչ եւ ընդունելի չէ, քանի որ Արծրունի Սադուն Բ.ը «Գիւրջիստանի վիլայէթի» ամիրսպասալար, աթաբէկն է:

⁹³ Օրբէլեան, էջ 426: Նշեալ տեղեկութիւնը յայտնում է նաեւ վրացական աղբիւրը. «Տեսնելով Դիմիպրէին, խանը գթաց... ողջ թագաւորութիւնը տուեց նրան, բացի Սարգիս Զաղելու [երկրից]» (Վրաց ժամանակագրութիւն, էջ 140):

⁹⁴ «Բայց այնուամենայնիւ Սադունի ձեռքում էր [թագաւորը], որովհետեւ խանը Սադունին յուժ զօրեղացրեց: Դիմիպրէ թագաւորի իրաւասութիւնից հանեց Թելան ու Բելաքանը» Վրաց ժամանակագրութիւն, էջ 142:

⁹⁵ Н. А. Бердзмишвили, В. Д. Дондуа, *История Грузии* (Վրաստանի պատմութիւն) 1, Թբիլիսի, 1946, էջ 245:

Ամփոփելով՝ Մահկանաբերդցի Արծրունի Սադուն Բ.ը 1256/57ին պատմիչ Գրիգոր Ակնեցու վկայությամբ՝ Հորդայում մոնղոլական աագանու եւ իլխան Հուլաուի ներկայությամբ ըմբշամարտում գետնել է մեծ խան Մանգուի անպարտելի ըմբշին եւ արժանացել նրա գովասանքին, մեծարանքին ու պատիւներին⁹⁶: Այնուհետեւ 1258/60ին մասնակցել է Հուլաուի կողմից կազմակերպուած ասորական արշաւանքին, հաւանաբար, Պոսոջ Խաղբակեանի գլխաւորութեամբ⁹⁷: Արշաւանքի ընթացքում իշխանը դարձել է գրաւած Սասուն գաւառի ղեկավարը⁹⁸: 1261/62ին նա Հորդայում «Թագաւորի ու խանի զրոյցի ժամանակ»⁹⁹ թարգմանչի դեր է կատարել: 1271/72ին դարձել է «Գիւրջիստանի վիլայէթի» աթաբէկ, ամիրսպասալար: Այս նոյն թուականներին նա ստանձնել է Աւագեան աւատական տան հեջուբ-սենեկապետ-արարողապետութիւնը: Աթաբէկ ամիրսպասալար Արծրունի Սադուն Բ.ն մահացել է 1284ին եւ թաղուել Հաղպատի Ս. Նշան եկեղեցու ժամատանը «Այս է հանգիստ Սաթունին»¹⁰⁰:

THE ATABEK, AMIRSPASALAR TITLES OF SADUN II OF MAHKANABERD
ACCORDING TO EPIGRAPHIC SOURCES
(SUMMARY)

RUBEN GASPARYAN

rug52@mail.ru; arevikgapoyan@mail.ru

Sadun II Artsruni Mahkanaberdti, a figure from the 13th century, stands out as one of the prominent individuals of the late Armenian authoritarian regime. He earned recognition and honors due to his remarkable victory over a giant Mongol wrestler in the presence of Ilkhan Hulavu and the entire Mongolian Council of Elders, likely in 1256/57. According to the historian Kirakos Gandzaketsu, the prince took part in the Assyrian campaign of 1258/60. In 1261/62, he was a "trial interlocutor" serving as a translator during the trial concerning the rebellion of Georgian king David E., whom he exonerated. By 1271/72, the prince ascended to the position of atabek, amirspasalar of the "Vilayet of Georgia". Concurrently, he undertook the role of hejhub-manager of the Avagyan feud, likely holding this position until his death in 1284, and was buried in the renowned monastery of Haghpat.

⁹⁶ Այդ մասին մենք նախկինում գրել ենք եւ սոյն աշխատանքում չենք նշում («Սադուն Բ. Արծրունի իշխանի գործունէութիւնը վիմագիր եւ մատենագիր աղբիւրների մեկնաբանութեամբ», *Հանդէս ամսօրեայ*, 1-12:2018, էջ 379-401):

⁹⁷ Գանձակեցի, էջ 385:

⁹⁸ Նոյն, էջ 386:

⁹⁹ *Վրաց ժամանակագրութիւն*, էջ 121:

¹⁰⁰ Ղաֆաղարեան, *Հաղպատ*, էջ 189. նաեւ՝ *Դիան, 9րդ սրակ*, էջ 176:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԾՈՑԻ ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՄԻՋԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՊԵՐ.

ՈՒՍԿԵՐ ՈՒ ՀՆԱՐԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԻԼԷՆ ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆ
mnatsakanyanvilen@gmail.com

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Դարեր շարունակ Հայաստանն ու հայ ժողովուրդը կապուած են եղել արաբական աշխարհի հետ ինչպէս պատմականօրէն, այնպէս էլ զգալի կերպով տնտեսապէս: Չնայած դրան՝ Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից եւ «երկաթ վարագոյրի» առաջացումից յետոյ Հայաստանը մեծապէս կորցրեց Մերձաւոր Արեւելքի հետ ձեւաւորուած կապերը՝ անկախ աշխարհագրական հարեանութեան շարունակուող եւ այնտեղ ձեւաւորուած հայօճախների իրողութիւններից:

Հայաստանի Հանրապետութեան (<<)՝ արաբական աշխարհի հետ անկախ սերտ տնտեսական փոխգործակցութեան առումով շահեկան է Ծոցի երկրների համագործակցութեան խորհրդի (ԾԵՀԿ)¹ հետ համագործակցութեան առկայ վիճակի եւ հեռանկարների դիտարկումը: ԾԵՀԿի ներուժն ու հնարաւորութիւնները կապուած են մի շարք հանգամանքների հետ.

1) ԾԵՀԿ երկրների ՀՆԱԻ² տեսակարար կշիռը Մերձաւոր Արեւելքի երկրների ընդհանուր ծաւալում 2022ին կազմել է 43,5%, իսկ ընդհանուր արաբական աշխարհում՝ 61,7%³: Սա նշանակում է, որ ԾԵՀԿ երկրները առաջատար դեր են խաղում ինչպէս Մերձաւոր Արեւելքի, այնպէս էլ արաբական աշխարհի տնտեսութիւնում: Նրանք զգալիօրէն նպաստում են այս տարածաշրջանի տնտեսական գործունէութեանը, ինչը նրանց դարձնում է առանցքային դերակատարներ թէ՛ տնտեսական աճի եւ թէ՛ տարածաշրջանում կայունութեան ապահովման գործում:

¹ Պարսից ծոցի համագործակցութեան խորհուրդը (Gulf Cooperation Council, GCC) տարածաշրջանային տնտեսական կազմակերպութիւն է, որը հիմնադրել են Պարսից ծոցի 6 արաբական պետութիւններ 1981 Մայիսի 25ին Աբու Դաբիում անցկացրող խորհրդաժողովի ժամանակ: Խորհուրդը ընդգրկում է Սաուդեան Արաբիան, Արաբական Միացեալ Էմիրութիւնները (ԱՄԷ), Քուէյթը, Կատարը, Բահրէյնը եւ Օմանը:


² ՀՆԱՆ՝ համախառն ներքին արդիւնքը, որոշակի ժամանակահատուածում (հիմնականում մէկ ֆինանսական տարում) տուեալ երկրում արտադրուած պատրաստի ապրանքների եւ ծառայութիւնների շուկայական արժէքն է:

³ Հաշուարկուել է հեղինակի կողմից՝ Համաշխարհային բանկի (ՀԲ) տուեալների շտեմարանի հիմամբ, URL: <https://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.CD> (մատչում՝ 15.07.2024):

2) ԾԵՀԽ երկրների տնտեսությունների աճը նոյնպես զգալի է. 2000-ին համաշխարհային ՀՆԱում այս երկրների մասնաբաժինը եղել է 1,1%, իսկ 2022-ին այն հասել է 2,2%-ի⁴: Նոյն միտումը առկա է եղել նաև տարածաշրջանի համապատկերում. Մերձատր Արևելքի երկրների շրջանում նոյն ժամանակահատուածում այս երկրների կշիռը աճել է 40,9%ով, իսկ արաբական աշխարհում՝ 33,9%ով⁵: Դրանով իսկ Ծոցի երկրների տնտեսությունները վերջին երկու տասնամեակների ընթացքում զգալիորեն անելացրել են իրենց ներդրումը համաշխարհային տնտեսության մեջ՝ դառնալով անելի ազդեցիկ՝ համաշխարհային ասպարեզում:

3) ԾԵՀԽ երկրների ՀՆԱ աճը 1966-ից իվեր միշտ գերազանցել է համաշխարհային ՀՆԱ-ի միջին աճը (Գծ. 1), ինչպես նաև տարածաշրջանի երկրների մէկ շնչին ընկնող ՀՆԱ-ի միջին աճը 2023-ին՝ 1980-ի համեմատ աճել է 22,5%ով՝ կազմելով 66,867,17 դոլար⁶: Սա նշանակում է, որ ԾԵՀԽ երկրների տնտեսությունները 1966-ից իվեր տնտեսական հիմնական ցուցանիշերով անփոփոխ գերազանցում են համաշխարհային միջին ցուցանիշերը:

Գծապատկեր 1.- ԾԵՀԽ-ի եւ աշխարհի միջին տնտեսական աճը՝ 1966-2022⁷



4) Բնակչության առումով ԾԵՀԽ երկրների կշիռը 1980-ի դրությամբ համաշխարհային բնակչության մեջ կազմել է 0,3%, իսկ 2023-ին՝ 0,7%, արաբական աշխարհում այս կշիռը նոյն ժամանակահատուածում 8,5%-ից աճել է 12,6%-ի, իսկ Մերձատր Արևելքի եւ Հիսիսային Ափրիկէի տարածաշր-

⁴ Հաշուարկուել է հեղինակի կողմից ՀԲի տուեալների շտեմարանի հիմամբ, URL: <https://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.CD> (մատչում՝ 20.07.2024):

⁵ Հաշուարկուել է հեղինակի կողմից ՀԲի տուեալների շտեմարանի հիմամբ, URL: <https://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.CD> (մատչում՝ 05.08.2024):

⁶ Հաշուարկուել է հեղինակի կողմից ՀԲի տուեալների շտեմարանի հիմամբ, URL: <https://data.worldbank.org/indicator/NY.GDP.PCAP.CD> (մատչում՝ 10.08.2024):

⁷ Հաշուարկուել է հեղինակի կողմից ՀԲի տուեալների շտեմարանի հիմամբ, URL: <https://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.KD.ZG> (մատչում՝ 25.07.2024):

ջանում՝ 7,7%-ից 11,9%⁸: Տարածաշրջանի բնակչության աճը 2023ին՝ 1980ի համեմատ եղել է 4,2 անգամ՝ կազմելով 59,6 միլիոն մարդ: Ընդ որում 2015ին ներգաղթեալների միջին մասնաբաժինը բնակչության մէջ կազմել է 60,3% (ԱՄԷում ամենաբարձր ցուցանիշը՝ 88,4%)⁹, ինչը նշանակում է, որ բնակչության զգալի աճը, որը հիմնականում պայմանաւորուած է ներգաղթով, նոր աղբիւրներ է ստեղծում տարածաշրջանի համար: Մեծ թուով սպառողների աւելացումը աւելացնում է նաեւ պահանջարկը, միւս կողմից էլ բարձր կրթութեամբ ներգաղթեալների առկայութիւնը աւելացնում է հմուտ աշխատուժի ներգրաման հնարաւորութիւնները:

5) Միջին եւ բարձր արհեստագիտական արտադրութեան մասնաբաժինը տնտեսութեան մէջ աճել է՝ 2000ի 16,2%-ից 2020ի 38,2%¹⁰: Սա ցոյց է տալիս արտադրութեան ոլորտում աւելի մեծ նորարարութեան, արդիւնաւետութեան եւ արժէքի ստեղծմանն ուղղուած վերափոխումները: Սա արտացոլում է տարածաշրջանի առաջընթացը աւելի բարդ եւ բարձր եկամտաբերութեամբ ոլորտների զարգացման գործում:

6) Վառելիքի արտահանման մասնաբաժինը ընդհանուր արտահանման մէջ 2000ից մինչեւ 2021ը նուազել է 9,7 տոկոսով¹¹, ինչը ցոյց է տալիս, որ տարածաշրջանը շեշտակիօրէն նուազեցնում է իր կախուածութիւնը վառելիքի արտահանումից եւ նաֆթի եկամուտներից, որոնք պատմականօրէն եղել են նրա տնտեսութեան աճի հիմնական աղբիւրները: Այս ոլորտներում նուազումը ենթադրում է յաջող վերադասաւորում դէպի տնտեսութեան այլազանում՝ այլ ոլորտների եւ եկամտի աղբիւրների զարգացման հաշուին: Այլազայում այս միտումը կարող է յանգեցնել աւելի կայուն տնտեսութեան կառուցման, որը պակաս խոցելի է նաֆթի համաշխարհային գների տատանումներից: Այս այլազանումը կարող է նաեւ նոր հնարաւորութիւններ բացել նորարարութեան, ներդրումների եւ աշխատատեղերի ստեղծման համար տարբեր՝ ոչ-նաֆթային ոլորտներում:

7) Տարածաշրջանի տարածքով անցնում են կարեւոր տնտեսական եւ դիրքային երթուղիներ, որոնք կապում են Ասիան եւ Եւրոպան. դրանցից որպէս հիմնական արժէ առանձնացնել Չինաստանի «Մէկ գօտի, մէկ ճանապարհ» նախաձեռնութիւնը¹² եւ Հնդկաստան-Մերձաւոր Արեւելք-Եւրո-

⁸ Հաշուարկուել է հեղինակի կողմից ՀԲի տուեալների շտեմարանի հիմամբ, URL: <https://data.worldbank.org/indicator/NY.GDP.PCAP.CD> (մատչում՝ 13.09.2024):

⁹ Հաշուարկուել է հեղինակի կողմից ՀԲի տուեալների շտեմարանի հիմամբ, URL: <https://data.worldbank.org/indicator/SP.POP.TOTL> (մատչում՝ 20.07.2024):

¹⁰ Հաշուարկուել է հեղինակի կողմից ՀԲի տուեալների շտեմարանի հիմամբ, URL: <https://data.worldbank.org/indicator/NV.IND.TOTL.ZS> (մատչում՝ 22.07.2024):

¹¹ Հաշուարկուել է հեղինակի կողմից ՀԲի տուեալների շտեմարանի հիմամբ, URL: <https://data.worldbank.org/indicator/TX.VAL.FUEL.ZS.UN> (մատչում՝ 25.07.2024):

¹² «Մէկ գօտի, մէկ ճանապարհ» նախաձեռնութիւնը Չինաստանի կառավարութեան կողմից 2013ին ընդունուած աւելի քան 150 երկրներում եւ միջազգային կազմա-

պա տնտեսական միջանցքը¹³: Տարածաշրջանի մասնակցությունն այս նախաձեռնություններին ուժեղացնում է նրա աշխարհաքաղաքական նշանակությունը եւ կարող է յանգեցնել ներդրումների աւելացման, ենթակառուցների զարգացման եւ տնտեսական աճի¹⁴: Սա կարող է յանգեցնել աւելի դինամիկ տնտեսական քաղաքականութեան, տարածաշրջանային աւելի ուժեղ համագործակցութեան եւ տնտեսութեան յետագայ այլազանման՝ ուժեղացնելով տարածաշրջանի դերը, որին սահմանակից է նաեւ ՀՀն:

Այս տնտեսական ցուցանիշերը վկայում են Ծոցի տարածաշրջանի տնտեսական ներուժի զգալի աճի մասին: Աճող բնակչությունն ու բարեկեցութեան մակարդակի բարձրացումը բարենպաստ պայմաններ են ստեղծում սպառողական պահանջարկի մեծացման համար, ինչը ՀՀի համար նոր հնարաւորություններ է բացում իրացման շուկայում: ԾԵՀԽի տնտեսութեան աշխուժ աճի եւ նրա տնտեսութեան կառուցումաձքի փոփոխութեան պայմաններում ՀՀն կարող է բարենպաստ պայմաններ ակնկալել իր ապրանքների եւ ծառայութիւնների արտահանման համար: Աւելին, Ծոցի երկրներն աշխուժօրէն զարգացնում են ենթակառուցները եւ ճանապարհային երթուղիները, ինչը լրացուցիչ հնարաւորություններ է ստեղծում հայկական ընկերությունների համար ապրանքների տեղափոխման եւ տարածման ուղորտում: ՀՀն կարող է օգտուել տարածաշրջանի ենթակառուցային նախագծերից, ինչպիսիք են նոր նաւահանգիստները, երկաթուղային եւ ինքնաշարժային երթուղիները, ինչը կը հեշտացնի մուտքը ԾԵՀԽ երկրների շուկաներ: Բացի այդ, Ծոցի երկրները ձգտում են այլազանել իրենց տնտեսությունները, ինչը ներուժ է ստեղծում տարբեր ուղորտներում ներդրումների եւ համատեղ նախագծերի իրականացման համար, ինչպիսիք են բարձր արհեստագիտութիւնները, գիւղատնտեսութիւնը, զբօսաշրջութիւնը եւ մշակոյթը: Այս համագործակցութիւնը կարող է փոխշահաւէտ լինել՝ նպաստելով երկու կողմերի աճին եւ զարգացմանը:

կերպութիւններում ենթակառուցների զարգացման ներդրումներ կատարելու համաշխարհային ռազմավարութիւն է: Նախաձեռնութիւնը կազմուած է քաղաքաշինական վեց ցամաքային միջանցքներից, որոնք կապուած են ճանապարհային, երկաթուղային, ուժանիւթի եւ թուային ենթակառուցներով, ու ծովային մետաքսի ճանապարհից, որը կապուած է նաւահանգիստների զարգացման միջոցով:

¹³ Հնդկաստան-Մերձատր Արեւելք-Եւրոպա տնտեսական միջանցքի նպատակն է խթանել տնտեսական զարգացումը Ասիայի, Պարսից ծոցի եւ Եւրոպայի միջեւ կապի եւ տնտեսական համարկման աճման միջոցով: Այն Հնդկաստանից Եւրոպա երթուղի է ԱՄԷի, Սաուդեան Արաբիայի, Իսրայէլի եւ Յունաստանի միջով:

¹⁴ Abdullah Baabood, «The Geopolitics of Economic Development in the Middle East», Carnegie Middle East Center, 2024, URL:

<https://carnegieendowment.org/research/2024/03/the-geopolitics-of-economic-development-in-the-middle-east?lang=en> (մատչում՝ 20.08.2024):

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՇՓՈՒՄՆԵՐԻ ՈՒԺԳՆՈՒԹԻՒՆԸ

Երկու երկրների միջև տնտեսական համագործակցության խորը ընկալման համար կարևոր է սկսել նրանց արտաքին քաղաքական փոխգործակցության մակարդակի վերլուծությունից: Այս փոխգործակցության առանցքային երեսակներից մեկը պաշտոնական այցերն են, որոնք ծառայում են որպես յարաբերությունների զարգացմամբ շահագրգռածության եւ դրա առաջնահերթության ցուցիչ: Այս առումով խօսում է աղիսակ 1ում ներկայացրած պաշտոնական այցերի վիճակագրությունը:

Աղիսակ 1.- ՀՀ եւ ԾԵՀԽ փոխադարձ պաշտոնական այցեր¹⁵¹⁶			
Երկիր	Այցի մակարդակ	ՀՀ-ից	Դէպի ՀՀ
Բահրեյն	Առաջնային (Նախագահ, վարչապետ, ԱԳՆ ղեկավար, ԱԺ նախագահ)	3	0
	Երկրորդային	0	0
Քուեյթ	Առաջնային (Նախագահ, վարչապետ, ԱԳՆ ղեկավար, ԱԺ նախագահ)	4	1
	Երկրորդային	2	6
Օման	Առաջնային (Նախագահ, վարչապետ, ԱԳՆ ղեկավար, ԱԺ նախագահ)	0	0
	Երկրորդային	0	0
Կատար	Առաջնային (Նախագահ, վարչապետ, ԱԳՆ ղեկավար, ԱԺ նախագահ)	8	0
	Երկրորդային	5	1
Սաուդեան Արաբիա	Առաջնային (Նախագահ, վարչապետ, ԱԳՆ ղեկավար, ԱԺ նախագահ)	2	0
	Երկրորդային	0	0
ԱՄԷ	Առաջնային (Նախագահ, վարչապետ, ԱԳՆ ղեկավար, ԱԺ նախագահ)	19	6
	Երկրորդային	3	3


Աղիսակում ներկայացրած տուեալների համաձայն, ԾԵՀԽ երկրներ բոլոր պաշտոնական այցերի 49%ը բաժին է ընկնում ՀՀ-ի եւ ԱՄԷ-ի միջև փոխայցելություններին: Աւելին, այս բոլոր այցերից 70%ը կազմում են հայ

¹⁵ ՀՀ ԱԳՆ պաշտոնական կայք, Երկկողմ յարաբերություններ, URL: <https://www.mfa.am/hy/bilateral-relations/> (մատչում՝ 10.08.2024):

¹⁶ Սոնա Տոնիկեան եւ Էլիզ Գեորգեան, «ՀՀ-Ծոցի արաբական երկիրներու միջպետական յարաբերություններ», *Ծոցի արաբական երկիրներու հայերը գիտաժողովի նիսեր (6-7 Դեկտեմբեր 2022)/Armenians of the Gulf Arab States, Proceedings of the Conference (6-7 December 2022)*, հրատ. Հայկական Սփիւռքի ուսումնասիրության կեդրոն, «Հայկական Սփիւռք Ը.» մատենաշար, կազմ. եւ խմբ.՝ Անդրանիկ Տազեւեան, Haigazian University Press, Պէյրուզ, 2024, էջ 323-40:

պաշտօնեաների այցերը ԱՄԷ: Հայկական այցերի նման գերակշռութիւնը կարող է վկայել ԱՄԷի հետ տնտեսական եւ քաղաքական կապերի ընդլայնման գործում ՀՀ ռազմավարական հետաքրքրութեան մասին: Միեւնոյն ժամանակ, հայ պաշտօնատարների յաճախակի այցելութիւնները կարող են վկայել, որ ՀՀն դիտարկում է ԱՄԷն որպէս իր արտաքին տնտեսական քաղաքականութեան առանցքային գործընկեր: Երկու երկրների միջեւ արտաքին քաղաքական հաղորդակցութեան պատկերը սերտօրէն կապուած է տնտեսական աշխուժութեան հետ: Յաճախակի պաշտօնական այցերը հարթակ են ստեղծում գործարար կապերի հաստատման, համատեղ նախագծերի քննարկման եւ համաձայնագրերի կնքման, որոնք իրենց հերթին նպաստում են տնտեսական համագործակցութեան խորացմանը: Փոխայցելութիւնները կարող են նաեւ նպաստել շուկաների առաւել խորը միասնականացմանը, ներդրումների ներգրամանը եւ համատեղ տնտեսական նախաձեռնութիւնների իրականացմանը: Այսպիսով, պաշտօնական այցերում աշխուժութիւնը կարելի է ցուցանիչ է ոչ միայն երկրների միջեւ յարաբերութիւնների ներկայ վիճակի գնահատման, այլեւ տնտեսական համագործակցութեան ապագայ ուղղութիւնների կանխատեսման համար:

Գծապատկեր 2. ՀՀ արտահանումը ԾԵՀԽ, ըստ երկրների՝ 1995-2023¹⁷



ՀՀ ԵՒ ԾԵՀԽ ԵՐԿՐՆԵՐԻ ԱՊՐԱՆՔԱՇՐՋԱՆԱՌՈՒԹԻՒՆԸ


ԾԵՀԽ երկրների հետ ՀՀ արտաքին առևտրային յարաբերութիւնների զարգացման իմաստով կարելի է դիտարկել նաեւ արտաքին առևտրաշրջանառութիւնը՝ ներմուծման եւ արտահանման շարժերի տեսքով:

¹⁷ ՀՀ վիճակագրական կոմիտէ (ՀՀՎԿ), URL. <https://armstat.am/am/?nid=586> (մատչում՝ 10.08.2024):

1995-2023՝ ԱՄԷն Պարսից ծոցի երկրների շարքում ՀՀի արտահանման հիմնական գործընկերն էր (Գծ. 2): Այս յարաբերություններն ընդգծում են ԱՄԷի կենտրոնական դերը ԾԵՀԽի հետ ՀՀի առետուրում:

ՀՀ ներմուծման տուալները վերլուծելիս ակնյայտ է դառնում, որ ԱՄԷից բացի այլ ԾԵՀԽ երկրներից ներմուծման մասնաբաժինը համեմատաբար փոքր է (Գծ. 3):

Գծապատկեր 3. ՀՀ ներմուծումը ԾԵՀԽ, ըստ վաճառող երկրների՝ 1995-2023¹⁸



Այս միտումը պահպանում է նաեւ ըստ ծագման երկրի ներմուծման տուեալների մէջ, որտեղ ԱՄԷն կրկին առանձնանում է որպէս գերակշռող առետուրային գործընկեր (Գծ. 4):


Սա վկայում է, որ ԾԵՀԽ եւ ոչ միայն երկրներից ՀՀ եկող ապրանքների զգալի մասը, հաւանաբար, մատակարարում է ԱՄԷի միջոցով, ինչն ընդգծում է ԱՄԷի՝ որպէս առետուրի միջնորդի առանցքային դերը ՀՀի համար:

ԱՄԷի՝ որպէս առետուրային միջնորդի էական դերը լրացուցիչ ընդգծում է նաեւ 2003-23ի միջնորդական առետուրի ցուցանիշով¹⁹: Մասնաւորապէս, 2023ի միջնորդական առետուրի գործակիցը կազմել է 746%, ինչը վկայում է, որ ԱՄԷն ՀՀ է արտահանել գրեթէ 7,5 անգամ աւելի շատ ապրանքներ, որոնք չեն արտադրուել իր տարածքում (Գծ. 5): Այս ցուցանիշը 2017ից իվեր ցոյց է տալիս կայուն աճի միտում, ինչը արտացոլում է հայկական առետուրի


¹⁸ ՀՀՎԿ, URL. <https://armstat.am/am/?nid=586> (մատչում՝ 11.08.2024):
¹⁹ Միջնորդաւորումաձ առետուրի արժէքը որոշելու համար օգտագործում ենք սոյն առետուրի ներմուծման գործակիցը: Այս գործակիցը հաասար է առետուրային երկրով եւ ծագման երկրով հաշուարումաձ ներմուծման տարբերութեան եւ ծագման երկրով հաշուարկաձ ներմուծման յարաբերակցութեանը՝ արտայայտումաձ տոկոսով:

աճող կախումաճութիւնը ԱՄԷից՝ որպէս Պարսից ծոցի աւելի լայն տարածաշրջանի ապրանքների ներմուծման միջնորդ:

Գծապատկեր 4. ՀՀ ներմուծումը ԾԵՀԽ, ըստ ծագման երկրների՝ 2003-23²⁰



Գծապատկեր 5. ՀՀ-ԱՄԷ միջնորդաւորուած առեւտրի գործակից՝ 2003-23²¹



ԱՄԷ ԵՒ ՀՀ ԵՐԿԿՈՂՄ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ


ՀՀ եւ ԾԵՀԽ փոխգործակցութեան վերլուծութեան համար արժէ դիտարկել ԱՄԷի հետ տնտեսական յարաբերութիւնների հեռանկարը:

²⁰ ՀՀՎԿ, URL. <https://armstat.am/am/?nid=586> (մատչում՝ 11.08.2024):


²¹ Հաշուարկուած է հեղինակի կողմից ՀՀՎԿ տուեալների հիմամբ, URL. <https://armstat.am/am/?nid=586> (մատչում՝ 12.08.2024):

Երկու երկրների միջև ապրանքաշրջանառութիւնը բացարձակ արտայայտութեամբ 2012-23ի ընթացքում աճել է աւելի քան 40 անգամ՝ ՀՀ ընդհանուր առետրաշրջանառութեան մէջ կազմելով 17,63% (Գձա. 6):

Գծապատկեր 6. ՀՀ՝ ԱՄԷի հետ առետրաշրջանառութիւնը՝ 2012-23²²



Գծապատկեր 7. ՀՀ արտահանումը դէպի ԱՄԷ՝ 2012-23²³




Ապրանքաշրջանառութեան հիմնական շարժիչ ուժը հանդիսացել է արտահանումը. նոյն ժամանակահատուածում արտահանումը բացարձակ

²² Հաշուարկուած է հեղինակի կողմից ՀՀՎԿ տուեալների հիմամբ, URL: <https://armstat.am/am/?nid=586> (մատչում՝ 15.08.2024):

²³ Հաշուարկուած է հեղինակի կողմից ՀՀՎԿ տուեալների հիմամբ, URL: <https://armstat.am/am/?nid=586> (մատչում՝ 15.08.2024):

արտայայտությամբ աճել է շուրջ 236 անգամ՝ 2023ին կազմելով ՀՀի ամբողջ արտահանման 25,92%ը (Գժ. 7), այն ժամանակ երբ ԱՄԷից ներմուծումը բացարձակ արտայայտությամբ աճել է 2,5 անգամ՝ կազմելով ՀՀ ընդհանուր ներմուծման 0,93%ը (Գժ. 8):

Գծապատկեր 8. ՀՀ ներմուծումը ԱՄԷից՝ 2012-23²⁴



Այժմ դիտարկենք արտահանման եւ ներմուծման կառույցները 2016ից՝ 2023: 2022ի եւ 2023ի ապրանքային կառույցը կը դիտարկուի առանձին, քանի որ տեղի են ունեցել զգալի փոփոխություններ՝ Ռուսաստանի նկատմամբ կիրառուած տնտեսական պատժամիջոցների ազդեցութեան պատճառով:

2022ի արտահանման գծով հիմնական ապրանքային խումբ է դարձել է ԱՏԳ ԱԱ²⁵ 71 ապրանքախումբը²⁶. այս խմբով արտահանումը կազմել է ընդ-


²⁴ Հաշուարկուած է հեղինակի կողմից ՀՀՎԿ տուեալների հիմամբ, URL: <https://armstat.am/am/?nid=586> (մատչում՝ 15.08.2024):

²⁵ Եվրասիական տնտեսական միութեան արտաքին տնտեսական գործունէութեան ապրանքային անուանացանկը (ԱՏԳ ԱԱ) մաքսային մարմինների եւ արտաքին տնտեսական գործունէութեան մասնակիցների կողմից մաքսային գործառնութիւններ իրականացնելու նպատակով օգտագործուող ապրանքների դասակարգիչ է: Այն ընդունուել է Մաքսային միութեան յանձնաժողովի կողմից՝ Ռուսաստանի Դաշնային մաքսային ծառայութեան աջակցութեամբ:

²⁶ 71 ապրանքախումբ՝ «Մարգարիտ» բնական կամ աճեցրած, թանկարժէք կամ կիսաթանկարժէք քարեր, թանկարժէք մետաղներ, մետաղներ՝ երեսապատուած թանկարժէք մետաղներով, եւ դրանցից պատրաստուած արտադրատեսակներ, ոչ թանկարժէք նիւթերից պատրաստուած զարդեր, մետաղադրամներ»:

հանուր արտահանման 93,4%-ը, չնայած նրան, որ 2016-21ին գերիշխում էին 16-24 ապրանքային խմբերը²⁷ (Գծ. 9):

Գծապատկեր 9. ՀՀ արտահանումը ԱՄԷ՝ 2016-23, ապրանքային կառույց²⁸



Այս պատկերը յուշում է, որ 2022ին զգալիորեն աշխուժացել է վերարտահանման ուղղութիւնը, ինչը մեծապէս շեղել է տնտեսական զարգացման հեռանկարը ՀՀ տնտեսութեան համար իրական ներուժ ունեցող 16-24 ապրանքային խմբերի ուղղութեամբ աշխատանքներից:

ԱՏԳ ԱԱ 4-նիշանով կողերով դիտարկումը ցոյց է տալիս, որ նոյնիսկ 71 ապրանքային խմբի ներսում բացակայում է այլազանումը՝ մեծապէս կենտրոնացուած լինելով երկու ենթախմբերի վրայ (Աղիւսակ 2):

Աղիւսակ 2.- ԱՏԳ ԱԱ 71 ապրանքախմբով արտահանման կառույցը, ըստ 4-նիշ կողերի (2022²⁹)		
ԱՏԳ ԱԱ 4-նիշ կող	Ընդհանուր արտահանման մէջ մասնաբաժին	Արտահանման արժէք
7102	36,74 %	195,863,300 ԱՄՆ դոլար
7108	48,01 %	255,939,900 ԱՄՆ դոլար
7113	8,58 %	45,714,500 ԱՄՆ դոլար

²⁷ 16-24 ապրանքային խմբեր՝ «պատրաստի սննդամթերք, ալկոհոլային եւ ոչ-ալկոհոլային խմիչքներ եւ քացախ, ծխախոտ եւ դրա փոխարինիչներ»:


²⁸ Հաշուարկուած է հեղինակի կողմից ՀՀ Պետական եկամուտների կոմիտէի (ՀՀՊԵԿ) տուեալների հիմամբ, URL.

<https://www.src.am/am/customStatisticsPage?id=128> (մատչում՝ 17.09.2024):

²⁹ Հաշուարկուած է հեղինակի կողմից ՀՀՊԵԿ տուեալների հիմամբ, URL. <https://www.src.am/am/customStatisticsPage?id=128> (մատչում՝ 20.08.2024):

Այս իրավիճակը բնորոշ է նաև ԾԵՀԽ մնացած երկրներ արտահանմանը, որտեղ կրկին ապրանքային հոսքերը զգալի միատարր են (Գձ.ներ 10-14, Աղիսակ 3):

Գծապատկեր 10. ՀՀ արտահանումը Բահրեյն՝ 2016-23, ապրանքային կառույց³⁰



Աղիսակ 3. ԾԵՀԽ մնացած երկրներ արտահանման կառույցը (2022³¹)		
Երկիր	ԱՏԳ ԱԱ 4-նիշ կոդ	Արտահանման մէջ մասնաբաժին
Բահրեյն	0810 ³²	48,7 %
	1601 ³³	19,6 %
	9701 ³⁴	7,1 %
Կատար	0104 ³⁵	80,1 %
	0810	6,2 %
	7610 ³⁶	39,4%
	1806 ³⁷	16,3%

³⁰ Հաշուարկուած է հեղինակի կողմից ՀՀՊԵԿ տուեալների հիմամբ, URL. <https://www.src.am/am/customStatisticsPage?id=128> (մատչում՝ 17.09.2024):

³¹ Հաշուարկուած է հեղինակի կողմից ՀՀՊԵԿ տուեալների հիմամբ, URL. <https://www.src.am/am/customStatisticsPage?id=128> (մատչում՝ 20.08.2024):

³² 0810 ապրանքախումբ՝ «այլ մրգեր, թարմ՝ ելակ, ազնուամորի, մոշ, թուֆ, սեւ, սպիտակ կամ կարմիր հաղարջ եւ փշահաղարջ, լոռամիրգ, հապալաս եւ Vaccinium ցեղի այլ հատապտուղներ, կիոի, դուրիան, խուրմա»:

³³ 1601 ապրանքախումբ՝ «Երշիկեղէն եւ այլն»:

³⁴ 9701 ապրանքախումբ՝ «նկարներ, գծանկարներ եւ պաստելներ՝ ամբողջութեամբ ձեռքով արուած»:


³⁵ 0104 ապրանքախումբ՝ «կենդանի ոչխարներ եւ այծեր»:

³⁶ 7610 ապրանքախումբ՝ «ալիմինէ մետաղական կոնստրուկցիաներ»:


³⁷ 1806 ապրանքախումբ՝ «շոկոլադ եւ կակաօ պարունակող այլ պատրաստի սննդամթերք»:

Սառուղեան	6302 ³⁸	13,1%
Քուէլթ	0104	93,9 %
Օման	4401 ³⁹	43,4 %
	0810	37,6 %
	6104 ⁴⁰	17,9 %

Գծապատկեր 11.- ՀՀ արտահանումը Քուէլթ՝ 2016-23, ապրանքային կառոյց⁴¹



Գծապատկեր 12.- ՀՀ արտահանումը Կատար՝ 2016-23, ապրանքային կառոյց⁴²



³⁸ 6302 ապրանքախումբ՝ «սպիտակեղէն՝ անկողնային, սեղանի, զուգարանի եւ խոհանոցի»:


³⁹ 4401 ապրանքախումբ՝ «վառելափայտ՝ գերանների, ճիւղերի կամ համանման տեսակների տեսքով, փայտ՝ տաշեղների տեսքով, թեփ եւ փայտի թափօններ եւ ջարդօն»:

⁴⁰ 6104 ապրանքախումբ՝ «կոստիւմներ, զգեստներ, կիսաշրջազգեստներ, կիսաշրջազգեստ-տաբատներ, տաբատներ»:

⁴¹ Հաշուարկուած է հեղինակի կողմից ՀՀՊԵԿ տուեալների հիմամբ, URL. <https://www.src.am/am/customStatisticsPage?id=128> (մատչում՝ 17.09.2024):


⁴² Հաշուարկուած է հեղինակի կողմից ՀՀՊԵԿ տուեալների հիմամբ, URL. <https://www.src.am/am/customStatisticsPage?id=128> (մատչում՝ 17.09.2024):

Գծապատկեր 13.- ՀՀ արտահանումը Ս. Արաբիա՝ 2016-23, ապրանքային կառույց⁴³



Ինչ վերաբերում է ԱՄԷից ՀՀ ներմուծմանը, ինչպես արդեն ներկայացուել էր վերելում, վերջինիս մասնաբաժինը ՀՀ ներմուծման մեջ չի գերազանցում 1%ը: Կառույցի իմաստով պետք է նշել, որ 2022ին ներմուծման մեջ 49,6%ը բաժին է հասել 71 ապրանքախմբին, իսկ 13%ը՝ 16-24 ապրանքախմբերին (Գծ. 15):

Գծապատկեր 14.- ՀՀ արտահանումը Օման՝ 2016-23, ապրանքային կառույց⁴⁴




Ներմուծման վերլուծությունը ցույց է տալիս արտահանման պես կենտրոնացումը Օմանի արտահանման բարձր աստիճան, եւ ինչը առանձնակի հետաքրքիր է,

⁴³ Հաշուարկուած է հեղինակի կողմից ՀՀՊԵԿ տուեալների հիմամբ, URL: <https://www.src.am/am/customStatisticsPage?id=128> (մատչում՝ 17.09.2024):

⁴⁴ Հաշուարկուած է հեղինակի կողմից ՀՀՊԵԿ տուեալների հիմամբ, URL: <https://www.src.am/am/customStatisticsPage?id=128> (մատչում՝ 17.09.2024):

արտահանման հետ նոյնական ապրանքային կառույց: Սա կարող է վկայել այն մասին, որ երկու երկրներն էլ ունեն նմանատիպ արտադրական եւ սպառողական յատկություններ: Այս համընկնումը կարող է նաեւ վկայել որոշակի ապրանքների փոխադարձ մասնագիտացման մասին, ինչը նպաստում է երկրների միջեւ աւելի կայուն եւ փոխշահաւէտ առեւտրային յարաբերությունների զարգացմանը: Այնուամենայնիւ, արժէ հաշուի առնել այս իրողութեան բացասական հետեւանքները. մրցակցութեան աճ (ապրանքների նմանութիւնը կարող է յանգեցնել երկրների միջեւ այդ ապրանքների արտադրութեան եւ վաճառքի մրցակցութեան աճին, ինչը կարող է նուազեցնել շահութաբերութիւնը եւ դժուարութիւններ ստեղծել արտադրողների համար) եւ աւելացուած արժէքի նուազում (նմանատիպ ապրանքների փոխանակումը կարող է նշանակել, որ երկրները զգալի արժէք չեն աւելացնում արտադրական գործընթացում: Սա կարող է նուազեցնել աշխատատեղերի ստեղծման եւ տնտեսական բարելաման ներուժը արժէքի աւելացման միջոցով):

Գծապատկեր 15. ՀՀ ներմուծումը ԱՄԷից՝ 2016-23, ապրանքային կառույց⁴⁵



Կենտրոնացուածութեան բարձր մակարդակ են արձանագրում նաեւ ՇԵՀ-ի մնացած երկրներից ներմուծումները (Գծ.ներ 16-20, Աղիսակ 4):


2023ը առանձնացաւ 25-27 ապրանքախմբերի⁴⁶ շեշտակի աճով. 2023ին այն 2 անգամ աւելի էր 2022ի համեմատ, ընդհանուր առմամբ կազմելով 590,000 ԱՄՆ դոլար: Միաժամանակ՝ աւելի է ամրապնդուել 71 ապ-

⁴⁵ Հաշուարկուած է հեղինակի կողմից ՀՀՊԵԿ տուեալների հիմամբ, URL: <https://www.src.am/am/customStatisticsPage?id=128> (մատչում՝ 17.09.2024):


⁴⁶ 25-27 ապրանքախմբեր՝ «հանքային արտադրանք»:

րանքախմբի մասնաբաժինը՝ հասնելով 94,3 տոկոսի: Այս ապրանքախմբի միայն երեք 4-նիշ կողերին միասին բաժին է հասել 91,4% արտահանում (7108 (58,6%), 7113 (18,5%), 7102 (14,3%)): Այս երեք 4-նիշ կողերի ապրանքախմբերի աճը 2003-22ի յարաբերակցությամբ եղել է համապատասխանաբար 5; 8,9 եւ 1,6 անգամ: Այս իրողությունը ցոյց է տալիս վերարտահանման բացասական ազդեցությունը եւ է՛լ ավելի մեծ կենտրոնացում 71 ապրանքային խմբի վրայ:

Գծապատկեր 16. ՀՀ ներմուծումը Բահրեյնից՝ 2016-23, ապրանքային կառույց⁴⁷



Գծապատկեր 17. ՀՀ ներմուծումը Քուեյթից՝ 2016-23, ապրանքային կառույց⁴⁸




ԾեՀԽ մնացած երկրների դեպքում, բացի Բահրեյնից, որի պարագայում զգալի ընդլայնուել է արտահանման ապրանքային շրջանակը թե՛ արտահանման ծավալների, թե՛ արտահանման կառույցի իմաստով, 2023ին ակնառու փոփոխություններ տեղի չեն ունեցել. արտահանումը դեպի այս

⁴⁷ Հաշուարկուած է հեղինակի կողմից ՀՀՊԵԿ տուեալների հիմամբ, URL: <https://www.src.am/am/customStatisticsPage?id=128> (մատչում՝ 17.09.2024):

⁴⁸ Հաշուարկուած է հեղինակի կողմից ՀՀՊԵԿ տուեալների հիմամբ, URL: <https://www.src.am/am/customStatisticsPage?id=128> (մատչում՝ 17.09.2024):

երկրներ շարունակել է լինել բարձր կենտրոնացում: Ս. Արաբիայի դեպքում ալյումինի արտադրության արտահանման բացարձակ ծավալների նուազմանը զուգահեռ եղել է արժեքային աճ, ինչը պայմանավորում է եղել ալյումինի համաշխարհային գների աճով⁴⁹: Արտահանման ծավալների նուազումը կարող է պայմանավորում լինել ապրանքների նեղ տեսականու վրայ չափազանց մեծ կենտրոնացմամբ: Եթե արտահանումը կենտրոնացած է փոքր քանակությամբ ապրանքների վրայ, ապա այդ ապրանքների պահանջարկի կամ գների ցանկացած տատանում կարող է էական ազդեցություն ունենալ արտահանման ընդհանուր ծավալի եւ եկամուտների վրայ: Այս իրավիճակը կարող է սահմանափակել աճի եւ այլազանման հնարավորությունները՝ ռիսկեր ստեղծելով արտահանման գործունեության կայունության եւ զարգացման համար:


Գծապատկեր 18. ՀՀ ներմուծումը Կատարից՝ 2016-23, ապրանքային կառույց⁵⁰



Ընդհանուր առմամբ, 2023ի ՀՀ արտահանման մեջ 7108 ապրանքային խմբի մասնաբաժինը կազմել է 21,15% (այս ուղղության մեջ ԱՄԷ մասնաբաժինը՝ 71,8%), 7113 ապրանքային խմբինը՝ 5,82% (ԱՄԷի մասնաբաժինը՝ 82,2%), իսկ 7102 ապրանքային խմբինը՝ 6,92% (ԱՄԷի մասնաբաժինը՝ 53,6%)⁵¹: Այս կենտրոնացումը մատնանշում է ՀՀ կախումային առևտրային գործընկերների եւ ապրանքների նեղ շրջանակից, ինչը կարող է բարձրացնել տնտեսության խոցելիությունն այդ երկրների պահանջարկի կամ քաղաքականության փոփոխությունների հետեւանքով: Այս իրավիճակն ընդգծում է արտահանման ուղղությունների այլազանման եւ արտահանումը ապրանքների տեսականու ընդլայնման անհրաժեշտությունը՝

⁴⁹ Aluminum, Market price, Yahoo Finance, URL: <https://finance.yahoo.com/sectors/basic-materials/aluminum/> (մատչում՝ 20.08.2024):
⁵⁰ Հաշուարկում է հեղինակի կողմից ՀՀՊԵԿ տուեալների հիմամբ, URL: <https://www.src.am/am/customStatisticsPage?id=128> (մատչում՝ 17.09.2024):
⁵¹ Հաշուարկում է հեղինակի կողմից ՀՀՊԵԿ տուեալների հիմամբ, URL: <https://www.src.am/am/customStatisticsPage?id=128> (մատչում՝ 23.08.2024):

տնտեսության կայունությունը բարձրացնելու եւ համաշխարհային շուկաներում տատանումների հետ կապուած ռիսկերը նուազեցնելու համար: **Գծապատկեր 19.** ՀՀ ներմուծումը Ս. Արաբիայից՝ 2016-23, ապրանքային կառոյց⁵²



Աղիասակ 4. ԾԵՀԵ մնացած երկրներից ներմուծման կառոյցը (2022 ⁵³)		
Երկիր	ԱՏԳ ԱԱ 4-նիշ կոդ	Արտահանման մէջ մասնաբաժին
Բահրէյն	2826 ⁵⁴	77,7 %
	3303 ⁵⁵	16,9 %
Կատար	3901 ⁵⁶	99,7 %
Սաուդեան Արաբիա	3901	53,7 %
	3902 ⁵⁷	46,2 %
Քուէյթ	7010 ⁵⁸	97,2 %
Օման	3907 ⁵⁹	63,3 %
	0810	37,6 %
	6802 ⁶⁰	29,1 %

⁵² Հաշուարկուած է հեղինակի կողմից ՀՀՊԵԿ տուեալների հիմամբ, URL. <https://www.src.am/am/customStatisticsPage?id=128> (մատչում՝ 17.09.2024):

⁵³ Հաշուարկուած է հեղինակի կողմից ՀՀՊԵԿ տուեալների հիմամբ, URL. <https://www.src.am/am/customStatisticsPage?id=128> (մատչում՝ 22.08.2024):


⁵⁴ 2826 ապրանքախումբ՝ «Ֆտորիդներ [ֆտոր քիմիական տարրի եւ այլ տարրի առաջացրած քիմիական միացութիւն], ֆտորոսիլիկատներ, ֆտորալիմինատներ եւ ֆտորի այլ կոմպլեքս աղեր»:

⁵⁵ 3303 ապրանքախումբ՝ «կոսմետիկ միջոցներ, դիմայարդարման միջոցներ եւ մաշկի խնամքի միջոցներ»:

⁵⁶ 3901 ապրանքախումբ՝ «էթիլէնի [C2H4, թոյլ հոտով անգոյն գազ] պոլիմէրներ [պոլիմէրները մեծ մոլեկուլային զանգում ունեցող քիմիական միացութիւններ են՝ բաղկացած բազմաթիւ անգամ կրկնուող ատոմական խմբերից] սկզբնական ձեւերով»:

⁵⁷ 3902 ապրանքախումբ՝ «պրոպիլէնի [C3H6 քիմիական բանաձեւով չլազեցած ածխաջրածին] կամ այլ օլեֆինների պոլիմէրներ սկզբնական ձեւերով»:

Գծապատկեր 20. ՀՀ ներմուծումը Օմանից՝ 2016-23, ապրանքային կառույց⁶¹



Ներմուծման ապրանքային կառույցի գծով կարող ենք նշել աելի տարբերակում ապատկեր. այստեղ կրկին առկայ է 71 ապրանքախմբի գերակշռությունը, բայց ոչ այնպիսի ծառայի՝ ինչպիսին արտահանման դեպքում է:

Բացի նիւթական ապրանքների արտահանումից կարելի է դիտարկել նաեւ ծառայությունների արտահանումը, որոնց շրջանակում առանձին կարելի է տեղ է գրադեցնում զբոսաշրջությունը: Հայաստանի եւ ԾԵՀԵ երկրների միջեւ զբոսաշրջության ոլորտը անհաասարաչափ է զարգացած: Այս ոլորտում հիմնական գործընկերը ԱՄԷն է, մինչդեռ ԾԵՀԵի այլ երկրների հետ ուղղակի կանոնաւոր օդանաւային հաղորդակցություն չկայ, բացառութեամբ Դոհա թռիչքների, որոնք տարանցիկ բնոյթ են կրում:

Երեւանից ԱՄԷ կանոնաւոր օդանաւային չուերթ է իրականացում երեք Էմիրությունների՝ Դուբայի, Շարժայի եւ Աբու Դաբիի հետ: Օրական հինգ չուերթ կայ՝ 2ը Աբու Դաբի, 2ը Դուբայ, 1ը Շարժա: Ուղեւորների հիմնական հոսքը ՀՀ քաղաքացիներն են կամ ՀՀում բնակուող օտարերկրացիները: ՀՀ միգրացիոն ծառայութեան տուեալներով՝ երկիրը ԱՄԷի քաղաքացիների համար յայտնի զբոսաշրջային ուղղութիւն չէ: Սակայն հարկ է նշել, որ պաշտօնական վիճակագրութիւնը հաշուի չի առնում ԱՄԷից ժամանած օտարերկրեայ քաղաքացիների թիւը, իսկ հաշուի առնելով, որ ԱՄԷի

⁵⁸ 7010 ապրանքախումբ՝ «շէր, սրուակներ, սափորներ, կաթսաներ, եւ այլ ապակեայ տարաներ [այն, ինչի մեջ պահում կամ փոխադրում է ապրանքը]»:
⁵⁹ 3907 ապրանքախումբ՝ «Պոլիացետալներ, այլ պարզ պոլիեսթերներ եւ էպօքսիդային խեժեր սկզբնական ձեւերով»:
⁶⁰ 6802 ապրանքախումբ՝ «Քար՝ մշակուած (բացի թերթաքարից) յուշարձանների կամ շինարարութեան համար, եւ դրանից արտադրատեսակներ»:
⁶¹ Հաշուարկուած է հեղինակի կողմից ՀՀՊԵԿ տուեալների հիմամբ, URL: <https://www.src.am/am/customStatisticsPage?id=128> (մատչում՝ 17.09.2024):

ընակչության 88.4%-ը օտարահպատակներ են⁶², նրանց մասնաբաժինը զբոսաշրջային հոսքում նոյնպես զգալի է: Հարկ է նաեւ նշել, որ Դուբայը եւ Դոհան այլընտրանք են դարձել տարանցիկ չուերթերի համար՝ դուրս մղելով Մոսկուային, ինչը կապուած է ՌԴի դէմ պատժամիջոցների հետ:

2023ին մեկնարկել են եղանակային չուերթերը դէպի Սաուդեան Արաբիա (շաբաթական 3 չուերթ)⁶³, սակայն 2024ին չուերթերը չեղարկուել են: Պատճառները՝ անբաւարար պահանջարկն էին, զբոսաշրջական շուկայի բացակայութիւնը, որը կենտրոնացած էր այդ երկրների շուկայի կարիքների վրայ, նաեւ՝ բանակցային սխալները եւ այդ երկրներում մշակութային եւ քիզնէսի առանձնայատկութիւնները հաշուի չառնելը: 2024 Դեկտեմբերից կը գործարկուեն եղանակային չարտըրային չուերթեր դէպի Օման⁶⁴:

ՀՀ եւ ԾԵՀԽ երկրների միջեւ զբոսաշրջային կապերի զարգացումը բնութագրուում է ԱՄԷի հետ համագործակցութեան գերակշռութեամբ: Զբոսաշրջային հոսքի վրայ ազդող հիմնական գործօնը տարանցիկ երթուղիների սահմանափակումներն ու առանձնայատկութիւններն են, ինչպէս նաեւ ՀՀի կողմից ոչ բաւարար գովազդային եւ շուկայավարման գործունէութիւնը: Իրավիճակը բարելաւելու համար անհրաժեշտ է աշխուժացնել շուկայավարման գործունէութիւնը, բանակցութիւններ վարելիս հաշուի առնել մշակութային առանձնայատկութիւնները եւ զարգացնել ուղղակի օդային հաղորդակցութիւնը ԾԵՀԽ այլ երկրների հետ:

ԾԵՀԽ ԵՐԿՐՆԵՐ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԽԹԱՆՄԱՆԸ ՈՒՂՂՈՒԱԾ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Հայաստանը պետական մակարդակով տնտեսական համաձայնագրեր ունի ԱՄԷի, Քուէյթի եւ Կատարի հետ, սակայն տնտեսական ոլորտում համանման պաշտօնական համաձայնագրեր չունի ԾԵՀԽ այլ երկրների հետ: Դէպի այդ երկրներ արտահանումն ընդլայնելու համար պետական երաշխիքներն ու նման համաձայնագրերը անհրաժեշտ են՝ ելնելով տարածաշրջանի մշակութային եւ քաղաքական առանձնայատկութիւններից:

ԱՄԷի հետ ՀՀն ունի մի շարք տնտեսական համաձայնագրեր (ՀՀ եւ ԱՄԷի միջեւ քաղաքացիական եւ տնտեսական գործերով փաստաթղթերի յանձնման ապացոյցների ձեռք բերման դատական որոշումների ճանաչման եւ կատարման մասին համաձայնագիր, ՀՀ եւ ԱՄԷ կառավարութիւնների միջեւ առետրատնտեսական եւ արհեստագիտական համագործակ-

⁶² World Bank Data, URL:

<https://data.worldbank.org/indicator/SM.POP.TOTL.ZS?locations=AE> (մատչում՝ 13.09.2024):

⁶³ Saudi Arabia's Flynas airline launches Yerevan-Riyadh flights, Armenpress, <https://armenpress.am/en/article/1113850> (մատչում՝ 13.09.2024):

⁶⁴ Առաջին անգամ ուղիղ չուերթ կ'իրականացուի Երեւանից դէպի Օման, Արմէնպրէսս, <https://armenpress.am/hy/article/1200039>, (մատչում՝ 18.09.2024):

ցութեան մասին համաձայնագիր, ՀՀ գիւղատնտեսութեան նախարարութեան եւ ԱՄԷի շրջակայ միջավայրի եւ ջրային աշբիւրների նախարարութեան միջեւ գիւղատնտեսութեան բնագաւառում համագործակցութեան մասին համաձայնագիր), ինչպէս նաեւ 2024 Մայիսի 21ին ստորագրուել է ՀՀ եւ ԱՄԷի կառավարութիւնների միջեւ Արու Դաբիում կայացած առեւտրատնտեսական եւ արհեստագիտական համագործակցութեան համատեղ յանձնաժողովի նիստի արձանագրութիւնը: Միւս կողմից 2019ից գործում է ՀՀ եւ ԱՄԷ կառավարութիւնների միջեւ առեւտրատնտեսական եւ արհեստագիտական գործակցութեան համատեղ յանձնաժողով, որի շրջանակներում պարբերաբար կառավարական հանդիպումներ է անցկացնում: Սա վկայում է տնտեսական յարաբերութիւնների զարգացման մասին:

Ի տարբերութիւն ԱՄԷի հետ համաձայնագրերի Քուէյթի (ՀՀ եւ Քուէյթի Պետութեան կառավարութիւնների միջեւ գիւղատնտեսութեան բնագաւառում համագործակցութեան մասին համաձայնագիր, ՀՀ եւ Քուէյթի պետութեան կառավարութիւնների միջեւ տնտեսական եւ արհեստագիտական համագործակցութեան մասին համաձայնագիր, ՀՀ եւ Քուէյթի Պետութեան կառավարութիւնների միջեւ գիւղատնտեսութեան բնագաւառում 2015-17ի համագործակցութեան գործնական ծրագիր) եւ Կատարի (Համաձայնագիր ՀՀ եւ Կատարի Պետութեան կառավարութիւնների միջեւ առեւտրատնտեսական համագործակցութեան վերաբերեալ, Համաձայնագիր ՀՀ եւ Կատարի Պետութեան կառավարութիւնների միջեւ գիւղատնտեսութեան բնագաւառում համագործակցութեան մասին) դէպքում համաձայնագրերը հիմնականում կենտրոնացած են գիւղատնտեսական արտադրանքի վրայ, ինչը սահմանափակում է ՀՀ արտահանման այլազանումը այդ շուկաներում: Քուէյթի դէպքում 2011ից գործում է Տնտեսական եւ արհեստագիտական համագործակցութեան հայ-քուէյթյան միջկառավարական յանձնաժողով: Առ այսօր տեղի է ունեցել յանձնաժողովի ընդամէնը երկու նիստ:

ԾԵՀԽ մակարդակով դիւանագիտական քննարկումները սկսուել են միայն 2023ին⁶⁵, սակայն դեռեւ ոչ մի էական տնտեսական բանակցութիւն չի անցկացուել: Ինչպէս արդէն նշուեց, կառավարութեան համաձայնագրերը վճռորոշ դեր են խաղում ԾԵՀԽ հետ ՀՀ առեւտրի ընդլայնման գործում՝ հաշուի առնելով տարածաշրջանի իւրայատուկ մշակութային եւ քաղաքական *դինամիկան*, հետեւապէս պէտք է աշխուժացնել ԾԵՀԽ մնացած երկրների հետ համաձայնագրերի կնքման գործընթացը, սկսի արդէն կնքուած համաձայնագրերի շրջանակում ընդլայնել դրանց գործունէութեան դաշտը:

⁶⁵ The meeting of the Minister of Foreign Affairs of Armenia with the GCC Secretary General, MFA official website, https://www.mfa.am/en/press-releases/2023/11/18/mirzoyan_albudaiwi/12347 (մատչում 13.09.2024):

ՀՀ ԵՒ ԾԵՀԽ ԵՐԿՐՆԵՐԻ ԱՌԵԻՏՐԱՇՐՋԱՆԱՌՈՒԹԵԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Հիմնուելով ՀՀ եւ ԾԵՀԽ երկրների առեւտրաշրջանառութեան ներկայ վիճակի վերլուծութեան վրայ կարելի է առանձնացնել այն հիմնական ապրանքային ուղղութիւնները, որոնք ունեն զարգացման ներուժ՝ հաշուի առնելով իւրաքանչիւր երկրի առանձնայատկութիւններն ու կարիքները:

ՀՀ-ից Բահրէյն արտահանման ամենաբարձր ներուժ ունեցող ապրանքները ներառում են թարմ լոլիկը, թանկարժէք մետաղական զարդերը եւ չմշակուած ալիւմինէ փայլաթիթերը (Գժ. 21):

Դրանց թում թարմ լոլիկը այս պահին ունի հնարաւոր ներուժի եւ առկայ արտահանման ծաւալների ամենամեծ տարբերութիւնը՝ հնարաւորութիւն տալով յաւելելու 19,000 ԱՄՆ դոլարի արտահանման աճի⁶⁶: Միեւնոյն ժամանակ, կենդանի ոչխարների եւ այծերի, ինչպէս նաեւ հատապտուղների ապրանքային խմբերի արտահանման փաստացի մակարդակը զգալի գերազանցում է այս ապրանքների իրատեսական եւ հիմնաւորուած արտահանման ծաւալները, ինչը վկայում է արտահանման ծաւալների աւելացման համար առկայ հնարաւորութիւնների օգտագործման անարդիւնաւէտութեան մասին:

ՀՀ-ից Կատար արտահանման ամենաբարձր ներուժ ունեցող արտադրանքը չմշակուած ոսկին եւ տարբեր թանկարժէք մետաղական զարդերն են (Գժ. 22):

Ապրանքախմբերից ներուժի եւ առկայ արտահանման ամենամեծ տարբերութիւնը առկայ է հենց չմշակուած ոսկու ուղղութեամբ, ինչը յաւելելու 1,3 միլիոն դոլարի արտահանման հնարաւորութիւն է ստեղծում: Կենդանի ոչխարների եւ այծերի արտահանումը, ինչպէս Բահրէյնի դէպքում, զգալի գերազանցում է դրա հիմնաւորուած ծաւալները:


ՀՀ-ից Քուէթ արտահանման ամենաբարձր ներուժով ապրանքները տարբեր թանկարժէք մետաղական զարդերը եւ թարմ լոլիկն են (Գժ. 23): Դրանց թում տարբեր թանկարժէք մետաղական զարդերը ունեն ամենանշանակալի բացը արտահանման հնարաւորութեան եւ առկայ արտահանման մէջ, ինչը ընդգծում է լրացուցիչ 593,000 ԱՄՆ դոլարի արտահանման կարելիութիւնը: Այս դէպքում նոյնպէս նոյնական իրավիճակ է 0104 ապրանքախմբի մասով:

Այս երկրի դէպքում ամենամեծ հնարաւորութիւնը տալիս է ֆերոմոլիբդէնի արտահանումը՝ յաւելելու 45,000 դոլարի արտահանման տեսքով:


ՀՀ-ն զգալի արտահանման ներուժ ունի դէպի ԱՄԷ՝ յատկապէս բարձրարժէք արտադրանքի որոշակի ոլորտներում (Գծապատկեր 25):

⁶⁶ Յաւելելու աճի հնարաւորութիւնների հաշուարկը իրականացնում է Միջազգային առեւտրի կենտրոնի հետազօտական թիմը՝ գնահատելով առկայ արտահանման ուղղութիւնները եւ հնարաւոր առկայ աղբիւրները:

Գծապատկեր 21. ՀՀ-ից Բահրեյն արտահանման ներուժի քարտեզ⁶⁷



Գծապատկեր 22. ՀՀ-ից Կատար արտահանման ներուժի քարտեզ⁶⁸




⁶⁷ International Trade Centre, Export Potential Map, URL: <https://exportpotential.intracen.org/en/> (մասշտաբ՝ 24.08.2024):


⁶⁸ International Trade Centre, Export Potential Map, URL: <https://exportpotential.intracen.org/en/> (մասշտաբ՝ 24.08.2024):

ՀՀ-ից Օման արտահանման ամենաբարձր ներուժ ունեցող արտադրանքը ներառում է ֆերոնոլիթը եւ թարմ լոլիկը (Գծ. 24):

Գծապատկեր 23. ՀՀ-ից Բուեյթ արտահանման ներուժի քարտեզ⁶⁹



Գծապատկեր 24. ՀՀ-ից Օման արտահանման ներուժի քարտեզ⁷⁰




Ամենամեծ ներուժ ունեցող ապրանքների թումն են չմշակուած ոսկին, թանկարժեք մետաղներից պատրաստուած զարդերը եւ վերամշակուած ա-

⁶⁹ International Trade Centre, Export Potential Map, URL: <https://exportpotential.intracen.org/en/> (մատչում՝ 24.08.2024):

⁷⁰ International Trade Centre, Export Potential Map, URL: <https://exportpotential.intracen.org/en/> (մատչում՝ 24.08.2024):

դամանդները: Թանկարժեք մետաղներից պատրաստուած ոսկերչական իրերի ուղղությամբ ունի յաւելեալ 20 միլիոն դոլարի արտահանման հնարաւորութիւն: Սա ընդգծում է ՀՀ-ի համար ԱՄԷի շքեղ ապրանքների շուկայում իր դիրքերն ամրապնդելու առանցքային հնարաւորութիւնը, որտեղ բարձրորակ ապրանքների պահանջարկը շարունակում է բարձր մնալ: Բացի շքեղ ապրանքներից, ՀՀ-ն այլ ոլորտներում ունի զգալի չիրացուած արտահանման ներուժ: Օրինակ՝ խաղողի գինու թորումից ստացուած սպիրտային խմիչքները 18 մլն դոլար արժողութեամբ լրացուցիչ արտահանման հնարաւորութիւն ունեն, ինչը վկայում է ԱՄԷ-ում հայկական ակոհոլային խմիչքների զարգացման հեռանկարների մասին: Գիւղատնտեսութեան ոլորտը նոյնպէս հնարաւորութիւններ է պարունակում. թարմ լոլիկի դէպքում առկայ է 7,2 միլիոն դոլարի չիրացուած արտահանման ներուժ: Բացի այդ, շոկոլատն ու կակաօն, - յատկապէս 2 կգ կամ անելի քիչ քանակութեամբ փաթեթաւորուած տարբերակում - ունեն 1,7 մլն ԱՄՆ դոլարի չիրացուած ներուժ, ինչը խօսում է այն մասին, որ ՀՀ-ն կարող է ընդլայնել իր ներկայութիւնը ԱՄԷի հրուշակեղէնի շուկայում: Ընդհակառակը, տուեալները ցոյց են տալիս, որ ՀՀ-ից մշակուած ադամանդների ընթացիկ արտահանումը գերազանցում է շուկայի հիմնաւորուած պահանջարկը: Սա խօսում է այն մասին, որ չնայած ՀՀ-ն յաջողութեամբ մուտք է գործել ԱՄԷի ադամանդի շուկայ, հնարաւոր է՝ անհրաժեշտ վերանայել սեփական ռազմավարութիւնը՝ գերյազգեցումից խուսափելու եւ արտահանումը կայուն շուկայական հնարաւորութիւններին համապատասխանեցնելու համար:

Գծապատկեր 25. ՀՀ-ից ԱՄԷ արտահանման ներուժի քարտէզ⁷¹



⁷¹ International Trade Centre, Export Potential Map, URL: <https://exportpotential.intracen.org/en/> (մասշտաբ՝ 24.08.2024):


Այսպիսով կենտրոնանալով շքեղ ապրանքների վրայ, ինչպիսիք՝ զարդերը, եւ ընդլայնելով իր ներկայութիւնը այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են ոգելից խմիչքները, թարմ արտադրանքը եւ հրուշակեղէնը, ՀՀ-ն կարող է զգալիօրէն աւելացնել իր արտահանման եկամուտները՝ 2022ի նկատմամբ մինչեւ 10%ի չափով: Այս ռազմավարութիւնը ոչ միայն կ'ամրապնդի ՀՀ տնտեսական կապերը ԱՄԷի հետ, այլեւ կը նպաստի նրա արտահանման ապրանքային կառոյցի այլազանմանը, ինչը էական գործօն է տնտեսական կայունութեան եւ աճի պահպանման համար: Սակայն անհրաժեշտ է զգուշատր մօտեցում այնպիսի ոլորտներում, ինչպիսիք է ադամանդի առետուրը, որտեղ ընթացիկ արտահանումն արդէն գերազանցում է շուկայական ներուժը, որպէսզի երաշխաւորուի, որ ՀՀ արտահանման գործունէութիւնը երկարաժամկէտ հեռանկարում կը լինի շահաւէտ եւ կայուն:

Հաշուի առնելով Ս. Արաբիայի՝ որպէս ԾԵՀԽ խոշորագոյն տնտեսութեան կարգավիճակը եւ նրա առանցքային դերը տարածաշրջանի տնտեսական քաղաքականութեան ձեւաւորման գործում, ՀՀ արտահանման ռազմավարութիւնը պէտք է յատուկ ուշադրութիւն դարձնի այդ շուկային: Ս. Արաբիայի զգալի տնտեսական ազդեցութիւնը եւ տարածաշրջանում առաջնորդի ռազմավարական դիրքը այն դարձնում են կարեւոր գործընկեր ցանկացած երկրի համար, որը ձգտում է հաստատել կամ ընդլայնել իր տնտեսական ներկայութիւնը Մերձատր Արեւելքում: Լինելով ԾԵՀԽի ամենախոշոր տնտեսութիւնը՝ Ս. Արաբիան առաջարկում է լայն եւ բազմազան շուկայ, որը բնութագրում է բարձր գնողունակութեամբ, աճող միջին խաւի առկայութեամբ եւ ներմուծուող ապրանքների մեծ պահանջարկով, յատկապէս այն ոլորտներում, որտեղ ՀՀ-ն ցոյց է տուել մրցակցային առաւելութիւններ: Թագաւորութեան շարունակական տնտեսական այլազանման ջանքերը, որոնք ամրապնդում են նրա Vision 2030 նախաձեռնութեամբ⁷², լրացուցիչ հնարաւորութիւններ են ընձեռում ՀՀ-ին ներկայութիւն ապահովելու այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են շքեղ ապրանքները, գիւղատնտեսական արտադրանքը եւ բարձր արհեստագիտական արտադրութիւնը: Այս ոլորտները համապատասխանում են Ս. Արաբիայի շուկայի նոր կարիքներին եւ հեռանկարներին: Աւելին, Ս. Արաբիայի առաջնորդութիւնը տարածաշրջանի տնտեսական քաղաքականութեան մշակման գործում է՛լ աւելի է ընդգծում Թագաւորութեան հետ տնտեսական կապերի խորացման կարեւորութիւնը: Ամրապնդելով Ս. Արաբիայի հետ առեւտրային յարաբերութիւնները՝ ՀՀ-ն կարող է աւելի շահաւէտ մուտք ունենալ ոչ միայն Ս. Արաբ-

⁷² Սաուդեան տեսլական 2030ը Սաուդեան Արաբիայի Թագաւորութեան կողմից մեկնարկած կառավարական ծրագիր է, որի նպատակն է հասնել տնտեսական, ընկերային եւ մշակութային բազմազանման մեծացման նպատակին՝ սաուդեան թագաժառանգ եւ վարչապետ Մուհամմադ իբն Սալման ալ Սաուդի տեսլականին համապատասխան: Այն առաջին անգամ յայտարարուել է 2016 Ապրիլի 25ին Սաուդեան Արաբիայի կառավարութեան կողմից:

իայի շուկայ, այլեւ ամբողջ լայն ԾԵՀԽ տարածաշրջան: Այս ռազմավարական մօտեցումը թույլ կը տայ ՀՀ-ին միանալ ԾԵՀԽ շրջանակներում փոխկապակցուած տնտեսական ցանցերին՝ ուժեղացնելով իր արտահանման ներուժը միջանի անդամ պետութիւններում: Այս գործօնների լոյսի ներքոյ Ս. Արաբիայի նկատմամբ արտահանման նպատակային ռազմավարութիւնը ոչ միայն կը մեծացնի ՀՀ առեւտրի ծաւալները, այլեւ կը բարձրացնի նրա աշխարհաքաղաքական նշանակութիւնը տարածաշրջանում: Օգտագործելով Ս. Արաբիայի տնտեսական վիճակի եւ տարածաշրջանային ազդեցութեան ընձեռած հնարաւորութիւնները՝ ՀՀ-ն կարող է դիրքաւորուել որպէս Մերձատր Արեւելքում կարեւոր տնտեսական դերակատար՝ հնարաւորութիւն ստեղծելով ապահովել կայուն տնտեսական աճ եւ այլազանել սեփական արտահանման ուղղութիւնները:

Գծապատկեր 26. ՀՀ-ից Սաուդեան Արաբիա արտահանման ներուժի քարտէզ⁷³



ՀՀ-ից Ս. Արաբիա արտահանման ամենամեծ ներուժով ապրանքները ներառում են թարմ իշխանը, կենդանի ոչխարները եւ չմշակուած ոսկին (Գծ. 26):

Դրանց թումը թարմ իշխանը ներկայացնում է ամենաէական հնարաւորութիւնը՝ 331,000 ԱՄՆ դոլարի չիրացուած արտահանման ներուժով: Նոյնպէս, կենդանի ոչխարներն ունեն 279,000 ԱՄՆ դոլարի ներուժ, իսկ չմշակուած ոսկին կարող է բերել լրացուցիչ 230,000 ԱՄՆ դոլարի արտահանում: Զգալի ներուժ ունեցող այլ ապրանքներ ներառում են թարմ լոլիկը՝ 127,000 ԱՄՆ դոլարի ներուժով, չմշակուած ալիւմինէ փայլաթիթեղը՝

⁷³ International Trade Centre, Export Potential Map, URL: <https://exportpotential.intracen.org/en/> (մասշտաբ՝ 24.08.2024):

105,000 ԱՄՆ դոլարով, եւ թարմ ծիրանը եւ դեղձը՝ 55,000 ԱՄՆ դոլարով: Բացի այդ, անասնաբուժական բժշկութեան պատուաստանիւթերն ունեն 16,000 ԱՄՆ դոլարի արտահանման ներուժ:

Կարեւոր է նշել, որ այս ապրանքատեսակները դեռեւս չեն արտահանուել ՀՀ-ից Ս. Արաբիա, ինչը զգալի հնարաւորութիւն է հայկական *բիզնէսի* համար նոր շուկաներ մուտք գործելու համար: Սա ոչ միայն կ'այլազանի ՀՀ արտահանման կառոյցը դէպի Ս. Արաբիա, այլեւ կը նուազեցնի երկրի կախուածութիւնը ասանդական շուկաներից, ինչպիսին է Ռուսաստանը: Օրինակ, թարմ ծիրանի եւ դեղձի արտահանումը Ս. Արաբիա կարող էր յատկապէս շահաւէտ լինել ՀՀ գիւղատնտեսութեան ոլորտի համար, որը մեծապէս կախուած է ռուսական շուկայից:

Միւս կողմից, հարկ է նշել, որ շուկոլադի եւ կակաոյի արտադրանքի արտահանումը արդէն գերազանցել է իր ներուժը. չնայած այս տեսականու արտահանման հաւանական արժէքը գնահատում է 25,000 ԱՄՆ դոլար, իրական արտահանումը հասել է 113,000 ԱՄՆ դոլարի: Սա վկայում է շուկայի յաջող ներթափանցման մասին, բայց նաեւ ենթադրում է, որ ապագայ ջանքերը պէտք է կենտրոնանան արտահանման հաւասարակշռման վրայ՝ շուկայի կայուն պահանջարկին համապատասխանելու համար:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԱԻՈՐՈՒՄ ԵՒ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ

ԾԵՀԽ երկրներ արտահանումը վերլուծելիս պարզ է դառնում, որ ամբողջ տարածաշրջանում պահանջարկ ունեցող ապրանքների տեսակները բաւականին նման են: Այս ընդհանրութիւնը ենթադրում է, որ ՀՀ-ն կարող է ամբողջական արտահանման ռազմավարութիւն մշակել որչ ԾԵՀԽ-ի համար, քանի որ մի երկրում յաջողութեան հնարաւորութիւն ունեցող արտադրանքը, ամենայն հաւանականութեամբ, շուկայ կը գտնի միւս երկրներում:

Աւելին, ԾԵՀԽում կարգաւորող միջավայրը որոշակի առաւելութիւններ է առաջարկում արտահանողներին: Երբ հայկական արտադրանքը համապատասխանում է ԾԵՀԽ-ի մէկ երկրում արտօնագրման կամ թոյլտուութեան անհրաժեշտ պահանջներին, այն յաճախ աւելի հեշտ հասանելիութիւն է ստանում ամբողջ տարածաշրջանին: Դա պայմանաւորուած է տնտեսական համաձայնագրերով եւ ԾԵՀԽում ներդաշնակեցում արտահանչներով, որոնք հեշտացնում են դաշինքի շրջանակներում միջանի երկրներ արտահանման գործընթացը: Արդիւնքում, հայկական ձեռնարկութիւնները կարող են օգտագործել այս միասնական պահանջները ԾԵՀԽ շուկայ աւելի արդիւնաւէտ մուտք գործելու համար՝ կրճատելով իրաքանչիւր երկրի համար առանձին կանոնների պահպանման հետ կապուած ժամանակը եւ ծախսերը:

Այնուամենայնիւ, չնայած այս առաւելութիւններին, կան զգալի խնդիրներ, որոնք կարող են խանգարել հայկական արտահանման աճին դէպի ԾԵՀԽ երկրներ: Հիմնական խոչընդոտներից է ԾԵՀԽ շուկայում բաւակա-

նին մեծ մրցակցութիւնը: Տարածաշրջանի շատ երկրներ արդէն լաւ ձեւաւորուած առեւտրային յարաբերութիւններ ունեն համաշխարհային այլ մատակարարների հետ, ինչը դժուարացնում է հայկական արտադրանքի մուտքը այս շուկայ: ՀՀ արտահանողները պէտք է ոչ միայն համապատասխանեն, այլեւ յաճախ գերազանցեն առկայ մատակարարների որակն ու գնային առաջարկները՝ շուկայի մասնաբաժին ձեռք բերելու համար:

Ճանապարհային ենթակառոյցի հետ կապուած խնդիրները նոյնպէս էական խոչընդոտ են հանդիսանում: ԾԵՀԽ երկրների եւ ՀՀի միջեւ հեռաւորութիւնը յաւելեալ ճանապարհային ծախսերի պատճառ է, ինչը պակասեցնում է հայկական արտադրանքի մրցունակութիւնը: Միւս կողմից մեծ հեռաւորութեան հանգամանքը յաւելեալ ծանրաբեռնուածութիւն է ստեղծում արդիւնաւէտ կառավարման իմաստով, երբ կարելի է նշանակութիւն ունի արտադրանքի որակի պահպանումը եւ ժամանակին առաքումը: Այս հանգամանքը նոյնպէս կարող է մեծացնել կանխատեսուող ծախսերը՝ նըւազեցնելով հայկական արտադրանքի մրցունակութիւնը ԾԵՀԽ շուկայում:

Բացի այդ, չնայած ԾԵՀԽի վերահսկողական կարգաւորումները ներդաշնակեցուած են, դրանք շատ խիստ են. հայ արտահանողները պէտք է երաշխաւորեն իրենց արտադրանքի համապատասխանումը ԾԵՀԽ երկրների կողմից պահանջուող որակի եւ անվտանգութեան բարձր չափանիշերին: Սա կարող է պահանջել լրացուցիչ ներդրումներ արտադրական գործընթացներում, որոնք կարող են ժամանակատար եւ ծախսատար լինել:

Մշակութային տարբերութիւնները եւ շուկայական նախասիրութիւնները եւս պէտք է հաշուի առնուեն հայ արտահանողների կողմից: ԾԵՀԽ երկրների շուկաներն ունեն յատուկ սպառողական ճաշակներ եւ ակնկալիքներ, որոնք կարող են տարբերուել ՀՀի ասանդական շուկաներից: Յաջողութեան համար կարելի է ապրանքների եւ շուկայավարման ռազմավարութիւնների յարմարեցումը տեղական նախասիրութիւններին: Այս պահանջի չկատարումը կարող է յանգեցնել հայկական արտադրանքի սահմանափակ տարածմանը, նոյնիսկ եթէ դրանք համապատասխանում են արհեստագիտական եւ այլ պահանջներին:

ՀՀ ԵՒ ԾԵՀԽ ԵՐԿՐՆԵՐԻ ՄԻՋԵՒ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ

ՀՀ եւ ԾԵՀԽ երկրների միջեւ երկկողմ յարաբերութիւնների յաջորդ կարելի է բաղադրիչը ներդրումներն են: Ներդրումային հոսքերը առանցքային դեր են խաղում տնտեսական կապերի ամրապնդման գործում՝ նպաստելով ոչ միայն ապրանքաշրջանառութեան ակտիւացմանը, այլեւ ենթակառոյցների, արտադրական միջոցների եւ մարդկային դրամագլխի զարգացմանը: ՀՀի համար ԾԵՀԽ երկրներից օտարերկրեայ ներդրումների ներգրաւումը կարող է հզօր խթան հանդիսանալ տնտեսական աճի եւ տնտեսութեան այլազանեցման համար: Այս տարածաշրջանից ներդրումները կարող են նպաստել այնպիսի առանցքային ոլորտների զարգացմանը, ինչպի-

սիք են տեղեկատուական արհեստագիտությունները, գիւղատնտեսութիւնը, գքօսաշրջութիւնը եւ բարձր անվաճուած արժէք ունեցող ապրանքների արտադրութիւնը: Իր հերթին, հայկական տնտեսութիւնը, ունենալով բարձր որակաւորում ունեցող աշխատուժ եւ Եւրոպայի եւ Ասիայի միջեւ առեւտրային ուղիների խաչմերուկում գտնուող աշխարհագրական դիրք, կարող է ԾԵՀԽ երկրներին առաջարկել ներդրումների գրաւիչ հնարաւորութիւններ, ներառեալ նոր շուկաների հասանելիութիւնը եւ սեփական տնտեսութիւնների այլազանեցման հնարաւորութիւնը:

ԾԵՀԽ երկրներից օտարերկրեայ ուղղակի ներդրումների (ՕՈւՆ) ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ դրանք հիմնականում եկել են ԱՄԷից. եթէ 1988-97ին ԱՄԷից օտարերկրեայ ուղղակի ներդրումների զուտ հոսքը կազմել է ՀՀ եկող ամբողջ հոսքի 2,39 տոկոսը, ապա 2023ին այն հասել է 39,84 տոկոսի (100,77 միլիոն ԱՄՆ դոլար) (Գժ. 27):


ԱՄԷ ներդրումների հետ կապուած պէտք է ընդգծել, որ վերջինիս խոշոր ներդրումային ծրագրերից է Masdar ընկերութեան հետ համատեղ իրականացուող AYG-1 Solar Photovoltaic plant⁷⁴: 2021ի Նոյեմբերին Masdarը համաձայնագիր է ստորագրել ՀՀ կառավարութեան հետ Արագածոտնի մարզում՝ Թալինի եւ Դաշտաղէմի միջեւ, 200 ՄՎտ հզօրութեամբ արեւային ֆոտովոլտային (PV) էլեկտրակայանի մշակման վերաբերեալ: Սա լինելու է արեւային ուժանիւթի խոշորագոյն նախագիծը ՀՀում (այն հնարաւորութիւն է ունենալու ելեկտրութիւն կապահովել անելի քան 280,000 տուն), ընդգրկելով անելի քան 500 հա ոչ գիւղատնտեսական հողեր եւ ստեղծելով բազմաթիւ աշխատատեղեր: Masdar ընկերութեանն է պատկանում ընկերութեան 85%ը, իսկ ՀՀ ազգային շահերի հիմնադրամին (ANIF)՝ 15%ը: Ծրագիրն աջակցում է ՀՀի՝ վերականգնուող ուժանիւթի աղբիւրների անվաճման եւ ներմուծուող նախքից եւ զագից կախումաւորութեան նուազեցման նպատակին, օգտագործելով երկրի արեւային ուժանիւթի զգալի ներուժը: Այս պահին մի կողմից ընթանում են ծրագրի շրջակայ միջավայրի վրայ ազդեցութեան գնահատման գործընթացը⁷⁵, միւս կողմից ծրագրի համաֆինանսաւորողների ընտրութեան գործընթացը⁷⁶:

⁷⁴ AYG-1 Solar Photovoltaic plant, URL: <https://masdar.ae/en/renewables/our-projects/ayg-1-solar-photovoltaic-plant> (մատչում՝ 06.08.2024):

⁷⁵ Մօտենում է աւարտին «Այգ-1» արեւային կայանի կառուցման հետ կապուած ՇՄԱԳ գործընթացը, B24 լրատուական, 13 Ապրիլի 2023, <https://b24.am/business/358011.html>, (մատչում՝ 18.09.2024):

⁷⁶ «Այգ-1» արեւային կայանի կառուցման ծրագրի ֆինանսաւորմամբ հետաքրքրուած կառույցների ներկայացուցիչներն այցելել են Հայաստան, Հետք լրատուական, 10 Յուլիսի 2023, <https://www.hetq.am/hy/article/157962> (մատչում՝ 18.09.2024):

Գծապատկեր 27. ԱՄԷից օտարերկրեայ ուղղակի ներդրումների զուտ հոսքը ՀՀ ընդհանուր ՕՈւՆի մէջ, տոկոսով՝ 1988-2023⁷⁷



2023ին ԱՄԷից ՀՀում ներդրումների առիծի բաժինը ապահովված յաջորդ նախագիծը Fly Arna նախագիծն էր, որը ստեղծուել էր 2021ի Յուլիսին ԱՄԷում տեղակայուած Air Arabiaի եւ ՀՀ ազգային շահերի հիմնադրամի կողմից, որը պէտք է դառնար ՀՀի առաջատար ներքին օդանաւային ընկերութիւնը: Իւրաքանչիւր գործընկեր ձեռնարկութիւնում ներդրել է 4,4 մլրդ դրամ (11 մլն ԱՄՆ դոլար):

Չնայած 15 ինքնաթիռներից բաղկացած կազմի նախնական ծրագրերին, Fly Arnaն վարձել է ընդամենը երկու ինքնաթիռ. մէկ ինքնաթիռ հանուել է ՀՀ քաղաքացիական օդանաւերի գրանցամատեանից եւ տեղափոխուել է Հնդկաստան: Յունուարի 16ին Fly Arnaն դադարեցրել է բոլոր թռիչքները «գործառնական փոփոխութիւնների» պատճառով⁷⁸:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

ՀՀ բաց ու փոքր տնտեսութեան համար, չափազանց կարեւոր է այլազանել արտահանումը թէ՛ ապրանքախմբով, թէ՛ գործընկեր երկրներով: Դա պայմանաւորուած է առեւտրի դրական մնացորդի պահպանման անհրաժեշտութեամբ, ինչը տնտեսական կայունութեան եւ աճի հիմնական գործօնն է: ՀՀ արտահանման ներկայ կառոյցը բնութագրուում է ապրանք-

⁷⁷ Հաշուարկուած է հեղինակի կողմից ՀՀ Կենտրոնական բանկի տուեալների հիմամբ, URL. <https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx> (մատչում՝ 23.08.2024):

⁷⁸ Gayane Saribekian, «Armenia’s ‘National Airline’ Loses Operating License», March 19, 2024, Azatutyun, <https://www.azatutyun.am/a/32869066.html> (մատչում՝ 06.08.2024):

ների նեղ շրջանակի վրայ բարձր կենտրոնացմամբ եւ ԾԵՀԽի հետ գործակցութեան առումով, մասնատրապէս ԱՄԷից կախումառութեամբ: Այս կենտրոնացումները որոշակի ռիսկեր է պարունակում, յատկապէս համաշխարհային տնտեսական անկայունութեան պայմաններում, երբ որոշակի ապրանքների կամ քաղաքական գործօնների պահանջարկի փոփոխութիւնները կարող են կտրուկ նուազեցնել արտահանման ծաւալները, բացասաբար ազդել առեւտրային հաշուեկշռի վրայ: Բացի այդ, ՀՀ արտահանման ներկայ կառոյցը թոյլ կողմնորոշուած է բարձր անելացում արժէքով արտադրանքի վրայ, ինչը սահմանափակում է երկրի տնտեսութեան աճի եւ զարգացման ներուժը: Կայուն տնտեսական զարգացման համար անհրաժեշտ է անելացնել անելացում արժէքով արտադրանքի մասնաբաժինը ընդհանուր արտահանման մէջ, ինչը թոյլ կը տայ ՀՀ-ին պակաս խոցելի դառնալ արտաքին տնտեսական եւ քաղաքական ցնցումների նկատմամբ: ԾԵՀԽի պետութիւնների հետ ՀՀ առեւտրային յարաբերութիւններն ընդհանուր առմամբ նոյնպէս թոյլ զարգացած են եւ հիմնականում կենտրոնացած են ԱՄԷի վրայ. ընդ որում այդ գործակցութիւնն ընդգրկում է ապրանքների շատ նեղ շրջանակ: Այս իրավիճակը սահմանափակում է առեւտրային կապերի ընդլայնման եւ արտահանման անելի հաւասարակշռուած եւ կայուն կառոյցի ստեղծման հնարաւորութիւնները:

Չնայած ԾԵՀԽ երկրներում ապրանքների պահանջարկի նմանութիւնը ռազմավարական առաւելութիւն է տալիս արտահանման միասնական մօտեցում մշակելու համար, հայ արտահանողները բախում են մի շարք խնդիրների, որոնք պէտք է լուծուեն այդ շուկայ ամբողջութեամբ մուտք գործելու համար: Կոշտ մրցակցութեան յաղթահարումը, ճանապարհային ենթակառոյցների բարձր ծախսերի կառավարումը, խիստ կանոնակարգերի կիրառումը, տեղական սպառողների նախասիրութիւններին յարմարուելը յաջողութեան կարեւորագոյն գործօններ են: Արդիւնաւետութեան յաղթահարելով այս խոչընդոտները՝ ՀՀ-ն կարող է ուժեղացնել իր արտահանման ներկայութիւնը ԾԵՀԽում՝ նպաստելով այնտեղ իր տնտեսական կապերի ամրապնդմանը եւ արտահանման շուկաների այլազանեցմանը:

Հաշուի առնելով ՀՀ եւ ԾԵՀԽ գործակցութեան խորհրդի երկրների տնտեսական կապերը եւ ներդրումային հոսքերի ներկայ ծաւալը, կարելի է առանձնացնել 5 հիմնական ռազմավարական ուղղութիւն, որոնց իրագործումը անհրաժեշտ է ՀՀ ներկայութիւնը այս շուկայում ընդլայնելու համար:

1) Մուտք գործել շուկայ եւ ընդլայնել ապրանքային ներկայացումները. ՀՀ-ն պէտք է օգտագործի իր արտադրանքի ուժեղ կողմերը եւ տարածաշրջանում զարգացող շուկաների հնարաւորութիւնները: Ուշադրութեան կենտրոնում պէտք է լինեն բարձր ներուժով արտադրանքները՝ թարմ իշխանը, կենդանի ոչխարները, հում ոսկին..., նաեւ՝ արտահանման զգալի չիրացուած ներուժ ունեցող այլ ապրանքներ (թարմ լոլիկ, ծիրան...): Պարզելով եւ թիրախաւորելով այն ոլորտները, որտեղ ՀՀ-ն ունի մրցակ-

ցային առաելութիւններ, ինչպիսիք են վերականգնող ուժանիւթը եւ գիւղատնտեսական արտադրանքները, երկիրը կարող է արդիւնաւետօրէն դիրքաւորուել ԾԵՀԽ շուկայում: Շուկայ մուտքը հեշտացնելու համար ՀՀն պէտք է ռազմավարական գործընկերութիւն հաստատի ԾԵՀԽ երկրներում տեղական ներկայացուցչութիւնների եւ բիզնէսների հետ: Նման քաղաքականութիւնը կարող է բարելաւել շուկայի հասանելիութիւնը, նուազեցնել ռիսկերը եւ հնարաւորութիւն ստեղծել օգտագործելու տեղական փորձը: Գործընկերութիւնը նաեւ կ'օգնի ՀՀ *բիզնէսներին* կողմնորոշուել տեղի շուկայի բարձր շարժընթացներում եւ կարգաւորող միջավայրում:

2) Համապատասխանել կարգաւորումների շրջանակին. ԾԵՀԽում կարգաւորող միջավայրը ստեղծում է ե՛ւ հնարաւորութիւններ, ե՛ւ մարտահրաւերներ: ՀՀն պէտք է օգտագործի տարածաշրջանի միասնական կարգաւորիչ շրջանակը՝ պարզեցնելու արտահանման գործընթացները եւ մուտք գործելու ԾԵՀԽի բազմաթիւ շուկաներ վկայագրերի կամ արտօնագրերի մէկ փաթեթի միջոցով: ՀՀ արտադրանքի ԾԵՀԽ երկրների որակի եւ անվտանգութեան խիստ չափանիշերին համապատասխանութեան ապահովումը կարեւոր նշանակութիւն կ'ունենայ շուկայ յաջող մուտքի եւ արտահանման կայուն աճի համար: ՀՀ արտահանողները պէտք է տեղեակ լինեն ԾԵՀԽ իւրաքանչիւր երկրում յատուկ կարգաւորող պահանջներին՝ համապատասխանութեան խնդիրներից խուսափելու համար:

3) Կազմակերպել արդիւնաւետ տեղափոխման ուղիներ եւ ստեղծել կայուն մատակարարման շղթաներ. Արդիւնաւետ ճանապարհային ենթակառուցների, մատակարարման շղթայի կառավարումը կարեւոր նշանակութիւն ունեն ԾԵՀԽ երկրներ արտահանման ծախսերն ու բարդութիւնը նուազեցնելու համար: ՀՀն պէտք է կենտրոնանայ-մշակի յուսալի ճանապարհային լուծումներ՝ կառավարելու բարձր փոխադրութեան ծախսերը եւ ապահովելու ապրանքների ժամանակին առաքումը: Շրջանում պահեստների կամ բաշխման կենտրոնների ստեղծումը կարող է բարելաւել մատակարարման շղթայի արդիւնաւետութիւնը, նուազեցնել արտահանման ծախսերը: Հնարաւոր ռիսկերի եւ մատակարարման շղթայի խափանումների լուծումը եւս կարեւոր կը լինի արտահանման կայունութիւն ունենալու համար: Ռիսկերի կառավարման ռազմավարութիւնների իրականացումը, ենթակառուցային ծառայութիւններ մատուցողների հետ գործընկերութեան ձեւաւորումը կարող է օգնել մեղմել այս մարտահրաւերները:

4) Ներգրաւել ներդրումներ եւ խորացնել երկկողմ յարաբերութիւնները. Երկկողմ առեւտուրը եւ ներդրումային հոսքերը խթանելու համար ՀՀն պէտք է աշխուժօրէն ներկայացնի ԾԵՀԽ երկրների ներդրողներին իր ներդրումային հնարաւորութիւնները այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են վերականգնող ուժանիւթը, արհեստագիտութիւնները եւ գիւղատնտեսութիւնը: ՀՀում ներդրումների առաելութիւնների ցուցադրումը, ներառեալ հարկային արտօնութիւնները եւ պարզեցուած ներդրումային գործընթաց-

ները, կարող են դրամագլուխ ներգրաւել ԾԵՀԽ երկրներից եւ խթանել տնտեսական կապերը: ԾԵՀԽ երկրների հետ տնտեսական յարաբերութիւնների ամրապնդումը դիւանագիտական ներգրաւուածութեան եւ գործարար համաժողովների միջոցով աւելի կը բարելաւի ՀՀ առետորի եւ ներդրումային հեռանկարները: ՀՀում ԾԵՀԽ երկրներից ընկերութիւնների ստեղծմանն աջակցելը համատեղ ձեռնարկութիւնների կամ ուղղակի ներդրումների միջոցով կը նպաստի տնտեսական աճին եւ այլազանեցմանը:

5) Լուծել շուկայական եւ գործառնական խնդիրները. ՀՀ բիզնէսները պէտք է դիմագրաւեն մրցակցային ճնշումներին եւ յարմարուն ԾԵՀԽ սպառողների նախասիրութիւններին: Վաճառքի եզակի առաջարկների մշակումը, տեղական ճաշակին եւ մշակութային նորմերին համապատասխանող ապրանքների ու շուկայավարման ռազմավարութիւնների ձեւաւորումը կը լինի շուկայում կայուն դիրքի ապահովման եւ մրցակցութեան յաղթահարման բանալի: Ֆինանսական կայունութիւնը եւ գործառնական արդիւնաւետութիւնը նոյնպէս կարեւոր նշանակութիւն ունեն: ՀՀ արտահանողները պէտք է ապահովեն անհրաժեշտ ֆինանսական արբիւրների կայուն առկայութիւնը, արդիւնաւետօրէն կառավարեն ֆինանսական ռիսկերը՝ շուկայում գործունէութիւնը պահպանելու եւ ապահովելու հնարաւոր աճը:

Այս գործողութիւնների համապարփակ իրականացումը կարող է ապահովել ՀՀ բիզնէսի աւելի լայն եւ կայուն ներկայութիւնը ԾԵՀԽում:

ECONOMIC RELATIONS BETWEEN ARMENIA AND THE ARAB GULF STATES:
RISKS AND OPPORTUNITIES
(SUMMARY)

VILEN MNATSAKIANIAN
mnatsakanyanvilen@gmail.com

Cooperation between Armenia and the Arab world has deep historical roots, but nowadays a significant part of the potential of this relationship has not yet been realized. The research is aimed at finding out the current level of existing relations in terms of both trade turnover and investment attraction.

First of all, the author emphasizes the high level of concentration in existing relationships: on the one hand, it is expressed by the significant dominant role of the United Arab Emirates in the relations, on the other hand, by the sale of one or two products in the commodity structure of the trade turnover.

Summarizing, the author states that Armenia's complex approach to cooperation with the GCC countries should include strategic product positioning, compliance with regulatory requirements, logistics optimization and investment attraction. By effectively addressing these issues, Armenia can strengthen its economic ties with the GCC, support its economic diversification goals, and achieve long-term growth in the region. This multifaceted strategy, based on advanced international experience and scientific principles, will allow Armenia to benefit from the opportunities provided by the GCC market and secure a prominent role in the economic landscape of the region.

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

ՄՕՐՈՒՍ (ՄԱՐԳԱՐ) ՍՏԵՓԱՆԻ ՀԱՍՐԱԹԵԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԵԼՈՅԹՆԵՐԸ ԲԷՅՐՈՒԹԻ ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ (1965-66)

ՎԱՐՈՒԺԱՆ ՊՕՂՈՍԵԱՆ
varuzhan.poghosyan@bk.ru

Մօրուս (Մարգար) Ստեփանի Հասրաթեանը (1903-1979) յայտնի պատմաբան եւ բանասէր էր, Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութեան գիտութեան վաստակաւոր գործիչ (1961), Հայաստանի գիտութիւնների ակադեմիայի թղթակից անդամ (1963):

Նա ծնուել է Զանգեզուրի գաւառում, ուսումը ստացել Բաքում: Ի սկզբանէ յեղափոխական գործիչ էր, ուստի 1918-20ին այդ քաղաքում մասնակցել է Հիւսիսային Կովկասի յեղափոխական շարժումներին: Իսկ հայրենիք վերադառնալուց յետոյ, 1920ին, եռանդուն մասնակցել է նաեւ զանգեզուրեան յեղափոխական շարժումներին:

Հասրաթեանը 1922-24՝ սովորել է Երեւանի պետական համալսարանի պատմա-բանասիրական բաժնում, իսկ ուսումն աւարտելուց յետոյ գործուղուել Լենինգրադ կրթութիւնն թեկնածուականում շարունակելու համար, որտեղ Նիկողայոս Մառի եւ Յովսէփ Օրբելու ղեկավարութեամբ խորացել է հայագիտութեան ասպարէզում: 1932ին վերադարձել է Երեւան, 1933-35՝ եղել Պատմութեան ու նիւթական կուլտուրայի ինստիտուտի տնօրէնի տեղակալ, 1934-36՝ յեղափոխութեան թանգարանի տնօրէն, իսկ 1937ին նշանակուել է Երեւանի Մատենադարանի տնօրէն: Սակայն նրան՝ արդէն ձերբակալուած բանաստեղծ Եղիշէ Չարենցի մօտ ընկերոջը, 1938ին կալանաւորել են հակայեղափոխական, հակախորհրդային գործունէութիւն ծաւալելու եւ տրոցկիստական ազգայնական խմբին յարելու մեղադրանքով: Այդուհանդերձ, շուրջ երեք տարի անց նա բանտից ազատ է արձակուել¹: Նրա ազատման գործում կարեւոր դեր է կատարել նրա մօտ ընկերը՝ պատմաբան Բորիս Պիոտրովսկին: Հասրաթեանը եղել է սերտ բարեկամական յարաբերութիւնների մէջ ոչ միայն նրա ու Չարենցի, այլեւ Ակսէլ Բակունցի, Աւետիք Իսահակեանի, Դերենիկ Դեմիրճեանի, Մարտիրոս Սարեանի հետ:

Հասրաթեանը 1940ից զբաղուել է գիտահետազօտական աշխատանքներով՝ ճարտարապետութեան, հնագիտութեան, բանասիրութեան եւ հայ ժողովրդի հին ու միջին դարերի պատմութեան ուսումնասիրութեան աս-

¹ Ա. Դոլլիսանեան, *Մօրուս Հասրաթեան. ինքնութեան եւ ժառանգութեան վաւերագիրը*, Երեւան, 2022, էջ 44-46:

պարէզներում: 1940-41՝ աշխատել է պատմական յուշարձանների պահպանության կոմիտեում, 1942-46՝ գրականության ինստիտուտում եւ միաժամանակ վարել Հայաստանի նորաստեղծ գիտութիւնների ակադեմիայի հասարակագիտական բաժանմունքի գիտական քարտուղարի պաշտօնը: 1947ից նա տասը տարի եղել է Գիտութիւնների ակադեմիայի պատմության ինստիտուտի աշխատակիցը, իսկ 1964-75՝ Հայաստանի պատմության թանգարանի տնօրէնը: Նրա ղեկավարութեամբ թանգարանը միջազգային ճանաչում է ստացել, քանզի հայկական մշակոյթը ցուցահանդէսներով ներկայացուել է տարբեր երկրներում, այդ թւում՝ Փարիզում:

Հասրաթեանը գրել է մեծ թուով գիտական աշխատութիւններ, որոնք բարձր մակարդակ ունեն: Նրա գրչին են պատկանում Հայաստանի պատմությանը, հնագիտութեանը, բանասիրութեանը նուիրուած շուրջ քսան աշխատութիւններ², որոնց մեծ մասը տարբեր լեզուներով տպագրուել է թէ՛ խորհրդային եւ թէ՛ եւրոպական երկրներում: Նա նաեւ հայերէն է թարգմանել Սայեաթ-Նովայի հայերէն խաղերը, կազմել, խմբագրել եւ ծանօթագրութիւններով հրատարակել է նրա ստեղծագործութիւնների ժողովածուները³: Կատարել է նաեւ թարգմանութիւններ⁴:

1965ին Հասրաթեանը հրաւիրուել է Հայկազեան քոլէջում դասաւանդելու համար: Նա Բէյրութում դասաւանդել է Մարտի 10ից եւ մնացել այնտեղ մէկուկէս տարի: Վ. Պարսամեանը նշում է, որ նա «իր կենդանի ու հմայիչ խօսքով լիբանանահայութեանը ծանօթացրեց Մայր հայրենիքի աննախընթաց վերելքին, գիտութեան ու մշակոյթի ծագմանը, նպաստեց երիտասարդ հայազէտների պատրաստմանը, հայրենիք-սփիւռք գիտական կապերի ամրապնդմանը»⁵:

Ստորեւ ներկայացնում ենք Մօրուս Հասրաթեանի գրած երկու հետաքրքիր փաստաթղթեր Բէյրութում իր գործունէութեան մասին:

² Տե՛ս օրինակ՝ Մ. Հասրաթեան, *Հայաստանի յուշարձանները*, Բէյրութ, 1975. նաեւ նոյնի՝ *Պալմա-հնագիտական ուսումնասիրութիւններ*, հրատ. Երեւան, 1985. նաեւ նոյնի՝ *Թուրքիայի պալմութեան ուրուագծեր*, հրատ. Երեւան, 1986 (Ս. Ֆ. Օրեշկովայի եւ Ե. Ա. Պետրոսեանի հեղինակակցութեամբ). նաեւ նոյնի՝ *Յօդուածների ժողովածու*, հրատ. Երեւան, 1995. նաեւ նոյնի՝ *Յուշաբեկորներ, արձակ էջեր, եւ...*, հրատ. ԿԼՆՀ, թիւ 10, տպ. United Printers & Traders, Պէյրութ, 2007:

³ Սայեաթ-Նովա, *խաղերի ժողովածու: Հայերէն, վրացերէն եւ ադրբեջաներէն խաղեր*, Հայպետհրատ, Երեւան, 1945. նաեւ՝ *Սայեաթ-Նովա, Հայերէն, վրացերէն եւ ադրբեջաներէն խաղերի ժողովածու*, հայպետհրատ, Երեւան, 1959, (վերատպուել է 1963ին). նաեւ՝ *Վրաց գրականութեան ընտիր էջեր*, հրատ. Երեւան, 1961:

⁴ Տե՛ս օրինակ՝ *Վրացական պոեզիա*, հրատ. Երեւան, 1983:

⁵ Վ. Պարսամեան, *Մօրուս Հասրաթեանի 80ամեակի առիթով (Մօրուս Հասրաթեան. նշանատր սիւնեցին, ականատր պալմաբանն ու բանասէրը)*, Երեւան, 2017, էջ 72:

ԵՐԿՈՒ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ⁶



Նստած, ձախէն աջ՝ Հասրաթեան, հայրենի հանրաճանաչ ամունքող
Սուրէն Քոչարեան եւ վեր. Տիգրան Խրոյրեան

Ձեր առաջին հարցերին կարող եմ լրիւ պատասխանել, որ արդէն երեք ամիս է, ինչ գտնուում եմ Բէյրութում, Հայկազեան քոլէճի հայագիտական ամբիոնի հրաւերով, քոլէճում կարողալու հայ արուեստի եւ հայոց պատմութեան կուրսը: Առաջին անգամն է, որ գալիս եմ արտասահման: Տարրական կրթութիւնս ստացել եմ Հայաստանում, միջնակարգ կրթութիւնս՝ Բաքուի ռուսական դպրոցում, բարձրագոյնը 40 տարի առաջ, Երեւանի հայկական նորաստեղծ Համալսարանի պատմաֆիլոլոգիական (պատմաբանասիրական - Վ.Պ.) ֆակուլտետում, իսկ ասպիրանտական շրջանը անցել եմ Լենինգրադում, աշակերտելով յայտնի արեւելագէտներ Նիկոլայ Մառին եւ Յովսէփ Օրբելուն: 35 տարի է, ինչ դասախօս եմ Երեւանի բարձրագոյն հաստատութիւններում. ամանդում եմ հայագիտական առարկաներ եւ Հին Արեւելքի պատմութիւն: Այժմ Հայաստանի պատմութեան թանգարանի տնօրէնն եմ:

Արդէն բաւականին տարիքս եւ շատ զբաղուած լինելս պատճառ չդարձան հրաժարուելու այդ հրաւերից, որովհետեւ երկու հանգամանքներ ասելի զօրաւոր գտնուեցան: Առաջինը՝ իմ բազմահազար ազգակիցների գոյութիւ-

⁶ Փաստաթուղթը պահուում է Հայաստանի ազգային արխիւում, ֆ. 1109 (Մ. Հասրաթեան), ց. 1, գ. 221, էջ 1-6:

նը Լիբանանում, մասնատրապէս Բէյրութում, երկրորդը՝ պատմական Փիւնիկիայի հազարամեակների մշակութային շերտեր ունեցող հողի վրայ գոյատեւող չքնաղ Լիբանանը:

Բայց եւ Լիբանանը սիրում եւ անոր կեանքով հետաքրքրում եմ ոչ որպէս շարքային մի արեւելագէտ-հնագէտ, այլ՝ որպէս հայ, լեցուած երախտագիտութեան զգացումով, որովհետեւ այստեղ հարազատի հիւրընկալ ապաստանն է գտել հայրենի հողից բռնի վտարուած ազգակիցներիս մի մեծ բազմութիւն. քաղաքացիական լիակատար իրաւունքներով՝ ազգային, կրօնական, մշակութային: Այլ կերպ էլ չէր կարող լինել արաբական առաջաւոր մի երկրում, որ ունի հազարամեակների մշակոյթ, ազատասէր ու միշտ վեր ձգտող, կրօնական բազմազան համայնքներով եղբայրաբար ապրող շինարար ժողովուրդ՝ խաղաղասէր կառավարութեամբ, որի - երկրին համապատասխան - սիմբոլիկ զինանշանն է հազարամեայ մշտադալար մայրին: Բնական է. այսպիսի մի երկրում հիւրընկալուած ոչ արաբները, մասնատրապէս հայ գաղութը, իր քրտինքով, մտային կարողութիւններով, իր հինատուրց շինարար ոգով պէտք է որ պարտք չմնայ իր երկրորդ հայրենիքին, ցուցաբերելով իր հարազատութիւնը եւ սրբութեամբ կատարելով իր քաղաքացիական պարտականութիւնը:

Հայերի եւ Լիբանանի ու Սիւրիոյ ժողովուրդների ծանօթութիւնն ու բարեկամութիւնը նոր չէ, այլ ունի հազարամեակների անցեալ: Փոխադարձ ազդեցութիւնները, մշակութային եւ այլ շփումները նոյնիսկ արեւակցական խաչածեւումները ծագել են խորունկ դարերէն սկսած, տակաւին 15-14րդ դարերէն, երբ հեթիթները շարժուեցին հարաւ եւ ընդհարուեցին նոր թագաւորութեան Եգիպտոսի հետ՝ Սիւրիա փինիկեան հողում: Հեթիթներին ենթարկուած հայ-արմէնները զգալի թիւ էին կազմում անոնց բանակում: Հայկական կարճատեւ կայսրութեան ժամանակ, Տիգրան Բ.ը 15-17 տարով (83-66 թթ.) միայն իշխեց նաեւ Սիւրիային ու Փունիկիային եւ հելլենիստական հզօր Անտիոքը դարձաւ անոր երրորդ մայրաքաղաքը: Հայաստանը անհամեմատ ցածր մակարդակի վրայ էր, ուստի հայկական հին ու նոր քաղաքների բնակչութիւնը, բռնի թէ կամաւոր, համալրում էր Սիւրիայի, Փիւնիկիայի եւ Կապպադոկիայի յոյն եւ սեմական բնակիչներով: Այս երկրների մշակութային ազդեցութիւնը Հայաստանի վերայ շարունակուեց մինչեւ քրիստոնէութեան Տրդ. դարը: Փունիկիային պարտական են նաեւ հայերը իրենց հինատուրց այբուբենով, որը վերջին հաշուով փունիկեանի թողն է, իսկ 21-22 դար առաջ հայերը գրում էին արամեական լեզուով ու տառերով, ապա՝ յունարէն:

Միջերկրականի գեղատեսիլ ափերին ձգուող կանաչ լեռներին յենուած այս մշտապէս փոքրիկ երկիրը մեծ գործեր է կատարել, որոնց արժէքն ու յիշատակը տասնապատիկ աւելի մեծ է, քան երկրի ու բնակչութեան քանակը (այս լուզունգը պէտք է այժմ էլ դառնայ լիբանանցուն ուղեկցողը): Յիշենք հերոսական Կարթա-հաշթան (Կարթագէնը) իր բարձր ազդիկուտութայով

(երկրագործութեամբ - Վ.Պ.), տեքնիկ զարգացմամբ, հերոսուհիներով ու Հաննիբալով⁷. յիշենք մեծ ծովագնացութիւնն ու առաջին մեծ նաւաշինութիւնը, շուրջափրիկեան ճանապարհը, առաջին այբուբենը, որ մայրն է շատ-շատերի, յիշենք բայթիկ սաթի, անագի, ապակու, ներկերի, ապխտած ձկան, գինիի, յետագայում մետաքսի տարածումը աշխարհով մէկ: Հեքիաթային Եգիպտոսի ու Միջագետքի ծովային ու ցամաքային հետաւոր ուղիները անցնում էին այս երկրով. Գեբալն (աքքադացիները քաղաքն անուանում էին Գուբլ, Աստուածաշնչում այն յիշատակում է Գեբալ անունով - Վ.Պ.) ու Ծուրը (հաւանաբար Տիւրոս՝ Սուր, քաղաքի մասին է խօսքը - Վ.Պ.), Սայիդան (ծանօթ նաեւ Սիդոն անունով - Վ.Պ.), Արադն (Լաթաքիոյ հանդիպակաց Արուատ կղզին - Վ.Պ.) ու Բերիթը (Բէյրութի հին անունը - Վ.Պ.) եւ այլ ծովափնեայ քաղաք-պետութիւնները, մինչեւ Ուգարիթ, Բեքա դաշտի հետ շատ «հիւրեր» է տեսած. տուժելով ու մշակութային շերտերով հարստանալով: Այդ տեսակէտէն որոշ նմանութիւն ունի Լիբանանը, պատմական Հայաստանի հետ: Պատահական չէ, որ նոյն թուականին (66/65) հիմքը դրուեցաւ Հռոմի հզօրութիւնն արտայայտող հսկայ Բաալբէկի եւ հայկական հելլենիստական մինիատիւր Գառնիի տաճարներուն:

Երկու դարերէ աւելի (652--869) Հայաստանը եւս անցաւ արաբական աշխարհաձաւալի ոլորտին մէջ եւ գործուն մասնակցութիւն ունեցաւ Արեւելքի նոր քաղաքակրթութեան ընդհանուր շինարարութեան գործում: Հայերը յաճախ հակում էին արաբական խալիֆների կողմը: Բնակչութեան մեծաքանակ դրացիութիւնը՝ երկուստեք, մարդաբանական շեշտուած նմանութիւն է ստեղծել, մանաւանդ հայ-լիբանանեան կերպարների միջեւ: Հայ աղանդաւորական զօրաւոր շարժումները 8-9րդ դարերում համակել էր Մերձաւոր Արեւելքը: Բիւզանդիայէն ու Հայաստանում հալածուած մեծաքանակ հայ աղանդաւոր Պապիկեաններ ու Թոնդրակեաններ անցան արաբական խալիֆաթի կողմը, ստեղծեցին ուժեղ ռազմական համայնքներ եւ պայքար ծաւալեցին Բիւզանդիայի դէմ: Վերջում պարտութիւն կրելով, իջան հարաւ ու երկար ժամանակ պահպանեցին հին զորաստրական (զրադաշտական) ու մեսալիան էլեմենտներ (տարրեր - Վ.Պ.) ունեցող իրենց աղանդը՝ միաստուածութիւնը, որպէս ճշմարտութիւն, որպէս հաւասարութեան ու ազատութեան սիմբոլ, ուղիղ ընթացքով դէպի Աստուած ընթանալու, առանց հոգեւոր միջնորդ պաշտօնեայի: Կինը իրաւահաւասար էր, այլ մարդը՝ ռազմիկ: Այս բազմահազար հայ աղանդաւորներին մուսուլման իշխանաւորները հովանաւորում եւ սիրաշահում էին որպէս ռազմա-

⁷ Հաննիբալը (մ.թ.ա. 247--183) հին աշխարհի կարկեթոնի մեծագոյն զօրավարներից ու պետական գործիչներից մէկը, հռոմէական հանրապետութեան երդուեալ թշնամին: Մ.թ.ա. 189ին ժամանել է Հայաստան՝ Արտաշէս Ա. թագաւորի մօտ եւ նրա պատուէրով նախագծել է ու հիմնել Արտաշատ քաղաքը:

կան ուժ: Սրանց ժառանգներն արդե՛ք արդի դուրուզները⁸ չեն, հազար տարի առաջ Ջրիս անունով իրենց ամրոցի քիչ աղաւաղուած անունը կրելով:

Բիւզանդական կայսրերը այդ հայ աղանդաւորների մի այլ մեծ համայնք, տասնեակ հազարների հասնող, բռնութեամբ փոխադրեցին Բալկաններ, կրկին որպէս ռազմական ուժ: Սակայն սրանք եւս ամուր մնացին իրենց աղանդին, իրենց «բանալի ճշմարտութեան» սուրբ գրքով, իրենց կոչելով կատարեալներ (այստեղից էլ katarներ), տարածելով իրենց ուսմունքը եւ շատ համակիրներ ունենալով սլաւոն աշխարհում, նոյնիսկ Կիւեան Ռուսիայում, արմատը հանդիսանալով Եւրոպայի միջնադարեան աղանդաւորական մեծ շարժումների:

Հայ-լիբանանեան փոխազդեցութիւններն աւելի զարգացան 11-15րդ դարերում՝ Կիլիկեան հայ թագաւորութեան եւ խաչակիրների ու մամուլների հիմնած իշխանութիւնների ժամանակներում: Բաւական է ասել, որ վաղ միջնադարէն սկսած Ուրֆա-Եդեսսան, Անտիոք-Անթակիան, Ամիդա-Դիարբեքիրը յետագայում՝ Ալեքսանդրետա-Իսկէնդէրունը, Մարդինն ու Հալէպը, թերեւս նաեւ Տրիպոլիսը ունեցել են մեծաքանակ հայ բնակիչներ: Եթէ լիբանանեան ծովափնեայ քաղաքները դժուարութեամբ, բայց նուաճում էին հզօր պետութիւնների կողմից, ապա լեռնային Լիբանանը միշտ կարողանում էր հիմնականում պահպանել իր ներքին անկախութիւնը: 1516ին Սիրիան նուաճող հզօր Թիւրքիան երեք դար չկարողացաւ լրիւ նուաճել լեռնային Լիբանանը: Այն-Դարայի ճակատամարտը (1711) դրա լաւագոյն ապացոյցն է: Այս ժամանակներում մեծ քանակութեամբ հալածական հայեր Կիլիկիայէն ու Հիւսիսային Միջագետքէն ապաստան էին գտնում Լիբանանի լեռներում: Վերջապէս Սիրիան ու Լիբանանը դարձան ամենամեծ ապաստարանը 1915ին եւ յետագայում հալածական բազմահազար հայերի համար, փրկուած թուրքական մեծ ջարդերից ու հալածանքներից: Իր հայրենիքում ամէն ինչ կորցրած հայկական այդ մեծ բազմութիւնները, հիւրընկալ արաբական աշխարհում գտան իրենց ընձեռած մարդավայել կեանքի պայմանները ու երկու տասնամեակում յառնեցին փինիկի նման: Այս ամէնը միայն խորացրել է իմ հայրենակիցների երախտապարտութեան զգացումը:

Ինչպէ՛ս գտայ Լիբանանը: Այնպէս, ինչպէս պատկերացնում էի, մի քիչ էլ աւելի. տեսնելով շինարարական բուռն թափը եւ մշակութային կեանքի արագ վերելքը: Բէյրութը զարգանում է հեքիաթային արագութեամբ, ինչպէս իմ հարազատ Երեւանը: Որպէս մանկավարժ եւ հնագէտ-պատմաբան, ինձ նախ եւ առաջ հետաքրքրում էր դպրոցական կեանքը եւ բարձրագոյն

⁸ Դրուզներ.- Արաբ, միաստուածեան, արաբախօս համայնք, որոնք հաւատում են հոգու վերամարմնաւորման եւ յափտենականութեան: Նրանց կրօնքը ունի քրիստոնէական, իսլամական, զրադաշտական եւ այլ բաղադրիչներ:

ուսման դրուածքը, ինչպէս նաեւ թանգարանային ու հնագիտութեան դրուածքը: Լիբանանը, Հայաստանի նման (դեռ շատ աւելի), կարելի է համարել անտանիք, բացօթեայ թանգարան: Բէյրութի թանգարանային շէնքը, իր հին եգիպտական ոճով, հիանալի է, ըստ ամենայնի: Տուցադրուած էքսպոնատները (ցուցանմուշները - Վ.Պ.) թանկագին են ու բացառիկ: Հնագիտական աշխատանքներին յատկացում է մեծ ուշադրութիւն: Գովելի է յատկապէս պատմական յուշարձանների ռեստավրացիոն (վերականգնումի - Վ.Պ.) աշխատանքը: Ուսումնական գործը գտնուում է բարձր մակարդակի վերայ: Գիւղերը, համապատասխան իրենց լանդշաֆթին – գեղեցիկ շէնքերով, հիանալի ներդաշնակութիւն են կազմում աւելի գեղեցիկ բնութեան հետ: Լիբանանը իրօք, իր հեռանկարով Ասիոյ Ջուիցերիան կարելի է համարել: Ահա ի՞նչ է բերում երկրին խաղաղ շինարարութիւնը:

Որպէս բարեացակամ օտարական ի՞նչ թերութիւններ նկատեցի: Անշուշտ, դրսից եկած ուշադիր մարդը, առաջին հերթին նկատում է եւ թերութիւնները, սակայն միշտ ենթադրելով, թէ տեղի ուշիմ բնակիչները եւ ղեկավարները չեն նկատում այդ, մինչդեռ մեծ մասամբ իրենք են օդային հայեացքով նայում, չկարողանալով թափանցել առաջնակարգ ու երկրորդական պրոբլեմների խորքը, յաճախ նկատելով, ասենք, քաղաքի շինարարութեան կոսմոթիք (գեղագիտական - Վ.Պ.) պակասութիւնները: Բայց եւ այնպէս չի կարելի չնկատել, որ Բէյրութի նման արագ աճող ու բարգաւաճող քաղաքի մէջ պողոտաներում պակասում են աղբարկղերը շինարարութեան ընթացքում, հողի սղութեան պատճառով, պակաս ուշադրութիւն է յատկացում կանաչապատման տարածութիւններին ու հանգստեան շատ կանաչ վայրեր ունենալու պահանջին (ծովափը, մօտակայ ամառանոցային բարձունքները բաւական չեն դորա համար), որ մանաւանդ օտարների ու կարիքաւորների համար փոխադրութեան հնարաւորութիւնները բարդ են: Թաքսիներն ու սերվիսները անշատ չեն իրարից տարբերանշանով, չունեն վազքի գնացուցանակ եւ վարորդները յաճախ չարաշահում են: Փոստարկղները շատ քիչ են քաղաքում: Որ քաղաքը արագ մեծանում է, իսկ փողոցների անուններն ու թուահամարները իրենց դերին շատ քիչ են ծառայում. հին թաղերի անուններն են գերիշխում, որոնց ծանօթ են հին բնակիչները:

Իմ նախնական տպաւորութիւնն այն է, որ քաղաքաշինութեան արագ ընթացքում անհատական շահագրգռութիւնը հնարաւորութիւն չի ընձեռում Արեւելքին ու Լիբանանին համապատասխանող ճարտարապետական ոճ ստեղծելուն: Միթէ՞ օտարները եւ երիտասարդ սերունդը պէտք է տեսնեն ու զգան երկրի ու քաղաքի անցեալի նկարագիրը միքանի շէնքերով ու Բէյթ-էդ-Դինով⁹: Արդի երիտասարդ սերունդը եւ շատ նորոյթներ տեսնելու

⁹ Փոքր ասան՝ Լեոնայիրանանի Շուֆի շրջանում, ծովի մակերսից 860 մ. Բարձրութեամբ: Նշանաւոր է իր պալատով, որը կառուցել է էմիր Բեշիր Բ. Շիհապին, 1788ին եւ այնտեղ տեղափոխել իր կառավարչական նստավայրը 1811ին:

անյայգ աչք ունեցող թիրիստը ավստում ու զայրանում են, երբ տեսնում են Բաալբէկն ու Բէյթ-Մերին հին կերպարանքից զրկուած, որ կատարուել է վաղուց, յօգուտ նորեկ իշխողի շահերի, հնի թշնամի նոր գաղափարախօսութեան ժխտական ոգու եւ ւերման զգացումի: Մեր արդի սերունդն էլ նոյնպիսի պատասխանատուութեանն ու քննադատութեանն է ենթարկուելու գալիք սերունդների կողմից, որ այսօրը պատմութիւն չենք համարել եւ հոգատար չենք եղել մեզ ժառանգութիւն հասած մօտիկ անցեալի լաւին ու իր ժամանակի բնորոշին:

Որպէս հնագէտ, ես հիացած եմ այն հոգատարութեամբ, որը ցուցաբերում է Լիբանանի կառավարութիւնը հին յուշարձանների պեղման ու ռեստավրացիոն աշխատանքների բնագաւառում:

ՀԱՄԱՌՑ ՀԱՇՈՒԵՏՈՒՌՈՒԹԻՒՆ ԲԷՅՐՈՒԹՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԻՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ¹⁰

Սիւիտքահայ գլխաւոր կենտրոն Բէյրութի հայկական կազմակերպութիւնների եւ Հայկազեան քոլէջի պահանջով. Հայաստանի կառավարութիւնը գործուղեց ինձ Բէյրութ՝ մանկավարժական աշխատանքի՝ մէկ տարի ժամանակով: Ես մնացի (իրենց, եւ մեր դեսպանատան պահանջով) մօտ մէկ եւ կէս տարի: Բէյրութ հասայ Մարտի 7ի երեկոյեան եւ աշխատանքի անցայ 1965 Մարտի 10ից, որը տեւեց մինչեւ 1966 Յուլիսի 10ը: Բէյրութից դուրս եկայ Յուլիսի 22ին:

Դասաւանդում էի ոչ միայն Հայկազեան քոլէճում այլեւ՝ նոր կազմակերպուած Հիւսիսեան հայագիտական բարձրագոյն դասընթացներում:

Երկու տեղում էլ ասանդում էի հայոց պատմութիւն, հայ արուեստի պատմութիւն, հայկական հնագիտութիւն եւ ընդհանրապէս հայագիտութիւն:

Միաժամանակ քաղաքի եւ շրջակայքի գերազանցօրէն հայ մտաւորականութեան համար կարդում էի բաց դասախօսութիւններ շաբաթական մէկ օր (Չորեքշաբթի) երեկոյեան ժ. 8ից մինչեւ 10ը: Ամէն անգամ ներկայ էին լինում 350-400 մարդ: Ըստ որում առաջին անգամ մէկ դահլիճի մէջ հաւաքում էին հայկական բոլոր քաղաքական եւ կրօնական կազմակերպութիւնների եւ համայնքների ներկայացուցիչներ: Թեմաները գլխաւորապէս հայոց պատմութեան շուրջ էին: Իհարկէ, այդ ամէնը, սկզբից մինչեւ վերջ յաջողում էր պայքարով. տեղական իշխանութիւնները յարուցում էին ամէն կարգի դժուարութիւններ: Միաժամանակ Սովետական Հայաստանի, հայոց պատմութեան, հայկական հարցի եւ օրուայ քաղաքական եւ մշակու-

¹⁰ ՀԱԱ, ֆ. 1109 (Մ. Հարաթեան), ց. 1, գ. 221, էջ 7-8:

թային հարցերի շուրջը կարդացել են մօտ 70 դասախօսություն եւ ունեցել մի այդքան էլ՝ ելոյթներ, զանազան ակումբների դահլիճներում, դպրոցներում, ժողովներում, հայկական գիւղերում (Սիրիայի եւ Լիբանանի), ինչպէս նաեւ Տրիպոլի, Հալէպ, Լաթաքիա քաղաքներում: Մասնակցել են Սայեաթ-Նովայի արաբերէն հրատարակութեանը, խմբագրել հայագիտական ժողովածուներ:

Մ. Հասրաթեան

19/12-1966 թ.

Քաղ. Երեւան

MORUS HASRATIAN, A VISITING PROFESSOR AT
HAIGAZIAN UNIVERSITY IN 1965-1966
(SUMMARY)

VARUZHAN POGHOSYAN
varuzhan.poghosyan@bk.ru

Professor Morus Hasratian (1903-1979), a renowned philologist, archeologist and historian, was a prominent figure in Soviet Armenia. He was the director of the History Museum of Armenia for several years and held high-level administrative positions both in educational and academic institutes.

In an unprecedented step in Lebanese Armenian history, professor Hasratian was invited to Haigazian University (College then) as a visiting professor to teach Armenian history, Armenian archeology, and Armenian art history. He taught both at Haigazian and the newly founded AGBU Yervant Husisian Armenological Center. Besides, he gave weekly evening lectures on Armenian history and culture. Dr. Hasratian was the first scholar to be invited to Lebanon for such a long period. It followed the Cold War meltdown and helped in reducing rivalry between the contesting Lebanese Armenian parties.

Professor Hasratian was originally invited as a visiting professor for a year. However, due to the success he encountered, he was asked to extend his stay for a third semester. This was endorsed by the Soviet embassy in Beirut.


The paper briefly outlines his biography and educational endeavors in Beirut. It includes as well two unpublished documents which Hasratian wrote, which have been preserved in the Armenian National Archive. One is a report he submitted to the Soviet authorities about his stay and cultural activities in Beirut. The other seems to be the introductory part of probably one of his first public lectures in Beirut, where he introduces himself and the reasons which made him undertake this educational mission to Haigazian and his feelings about and perceptions of Lebanon.

ԱՆԴՐԱՆԻԿ ԾԱՌՈՒԿԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ՆԻԿՈՂՈՍ ՍԱՐԱՖԵԱՆԻՆ (1947-1958)

ԱՐԹՒՐ ՇԵՆԵԱՆ
arthurshenian@gmail.com

ՄՈՒՏՔ

Սփիւռքահայ գրող, խմբագիր եւ հրապարակախօս Անդրանիկ Ծառուկեանի (Կիրին, 1913 – Փարիզ, 89) ստորեւ հրատարակուող նամակները, ուղղրած՝ ֆրանսահայ բանաստեղծ Նիկողոս Սարաֆեանին (Վառնա, 1902 – Փարիզ, 72), կ'ընդգրկեն 1947-58 երկարող ժամանակահատուածը եւ պատուհան կը բանան դէպի 20րդ դարակէսի հայկական Սփիւռքի գրական ու մտաւոր աշխարհը:



Թիով տասնչորս՝ անոնք եզակի պատկերացում կու տան ո՛չ միայն Ծառուկեանի՝ որպէս գրող-խմբագրի մտադրոյթին, գրական մտահոգութիւններուն, խմբագրական աշխատելաճին ու խառնուածքի գիծերուն, այլ նաեւ Սփիւռքի միջգրական ու միջկուսակցական հոլովոյթին մասին, որով կը յատկանշուի տուեալ ժամանակաշրջանը:

Նամակները քաղուած են Ծառուկեանի արխիւէն, որ այժմ կը պահուի Անթիլիասի մեծի տանն Կիրիկիոյ կաթողիկոսութեան արխիւատան մէջ եւ ուր պահ տրուած են նոյնինքն գրողին կողակիցին՝ Սոնա Խտըշեան-Ծառուկեանի եւ դստեր՝ Նայիրի Ծառուկեանի կողմէ:

Արխիւը մշակուած է ՀՀ Ազգային արխիւի ատենի գլխաւոր արխիւագէտ Վերգինէ Խաչատրեանի կողմէ: Ան կը բաղկանայ 270 թղթածրարներէ եւ կ'ընդգրկէ հետեւեալ նիւթերը.

1. Անդրանիկ Ծառուկեանի ձեռագիրերը
 - ա. վէպեր, յօդուածներ, բանաստեղծութիւններ
2. Նամականի

- ա. ուղարկած նամակներ*
- բ. ստացած նամակներ*
- 3. Կենսագրական նիւթեր
 - ա. նիւթեր իր մասին (գրախօսականներ, յօդուածներ)*
- 4. Հաւաքած նիւթեր
 - ա. Հայկական Հարցին մասին*
 - բ. Միլանի գաղթօճախին մասին*
 - գ. Ռուբէն Սեւակի մասին*
 - դ. Գրիգոր Զօհրապի մասին*
 - ե. հաւաքած նամակագրութիւններ*
 - զ. խառն նիւթեր*
 - է. Նայիրի ամսագիրեր*
- 5. Լուսանկարներ:

Արդ, ուղարկուած նամակներն ու ստացուած նամակները քանակական միակշիռ պատկեր չեն պարզեր: Ստացուած նամակները իրենց քանակով մեծապէս կը գերազանցեն ուղարկուած նամակները: Այս երեւոյթին հիմնական պատճառը այն է, որ Ծառուկեան սովորութիւն չունէր պահելու իր հասցեագրած նամակներուն պատճէնները, այն համոզումով, որ «եթէ կարելու է, հասցեատէրը կը պահէ», ինչպէս կը վկայէ դուստրը՝ Նայիրին: Ուստի սա ենթադրել կու տայ մեզի, որ Ծառուկեանէն բազմաթիւ նամակներ կը շարունակեն մնալ անհատական արխիւներու, գրողական ֆոնտերու կամ տարբեր հաւաքածոներու մէջ:

Խնդրոյ առարկայ նամակները ընդգրկուած են կաթողիկոսութեան արխիւատան 55րդ հաւաքածոյի առաջին ցուցակին 27րդ թղթածրարին մէջ: Գրուած են՝

- ա) *Նայիրի ամսագիրի նամակաթուղթին վրայ (Ա., Բ., Գ., Ե., Զ. Է. ԺԱ., ԺԲ., ԺԳ. նամակներ),*
- բ) Սուրիոյ եւ Լիբանանի Գրողներու միութեան նամակաթուղթին վրայ (Ժ. նամակ),
- գ) *Նայիրի շաբաթաթերթի նամակաթուղթին վրայ (ԺԴ. նամակ),*
- դ) *A4 ձեւաչափի սովորական թուղթի վրայ (Դ., Ը., Թ. նամակներ):*

Ձեռագիրերը մեզի տրամադրելուն եւ մեր հարցումներուն պատասխանելուն համար շնորհակալութիւն կը յայտնենք արխիւատան տեսուչ հոգշ. Տ. Վիգէն վրդ. Տալլըրճեանին, ինչպէս նաեւ բանասէր Գոհար Արթենեանին՝ ձեռագիրերու վերծանման աշխատանքին մասնակցելուն համար:

Լեզուական կամ կէտադրական որեւէ միջամտութիւն չենք կատարած՝ բնագիրին հաւատարիմ մնալու նպատակով, բացի քանի մը յաւելումներէ, որոնք ներառուած են անկիւնաւոր փակագիծերու մէջ:

Ա.

Հալէպ, 21 Յունուար 1947

Սիրելի Սարաֆեան,

Թէեւ առիթ չէ եղած որ խօսքով կամ գրով յարաբերինք իրարու հետ, բայց կը կարծեմ թէ մեծ ձեռակերպութիւններ անհրաժեշտ չեն երկու գրողներու միջեւ, հաստատելու համար մտաւորական կապ մը: Չեմ գիտեր, առիթ ունեցա՞՞ծ էք հետեւելու այս կողմերու գրական շարժումներուն, եւ թէ անոնս բան մը կ'ըսէ՞ ձեզի: Որովհետեւ, ցարդ Ֆրանսայի հետ բաղձալի կապը չենք կրցած հաստատել: Հալէպի մէջ կը հրատարակուի Արեւելք¹ օրաթերթը, կուսակցական ուղղութեամբ: Խմբագրապետը² ես եմ թէեւ, բայց անուանական դեր մը միայն կը կատարեմ, որովհետեւ լրագրութիւնը սըրտիս չի խօսիր: Արեւելքը³ ինծի համար, պարտականութիւն մըն է անելի, քան թէ սիրուած աշխատանք մը: Սակայն ունիմ Նայիրի³, գրական ամսագիր մը, որուն որոշած եմ ասկէ ետք տալ ամբողջ ճիգս: Վերջին թիւը դրկեցի ձեզի, «Յառաջ»⁴ հասցէով: Արտատպած եմ ձեր մէկ գրութիւնը՝ «Մշուշը»⁵: Արդ, պիտի խնդրեմ ձեզմէ, որ բարի ըլլաք աշխատակցիլ Նայիրիին, մասնատրաբար իմացական եւ դատողական բնոյթ կրող էջերով: Ստեղծագործական լայն էջերու համար, հանդէսին ծաւալը թոյլատու չէ: Անցողակի ըսեմ, թէ հակառակ կուսակցական ըլլալու⁶ – Դաշնակցական – Նայիրին յաջողած եմ ընել ազատ խորհող եւ արտայայտող բեմ մը՝ որ գիտէ յարգել ուրիշներուն կարծիքը: Վերջերս բոլորովին անտեղի ու անարդար պայքար մը շղթայագերծուեցաւ այս կողմերու «յառաջդիմական» մամուլին կողմէ, Նայիրիի դէմ, Օշականի⁷ մէկ յօդուածին⁸ առիթով: Չեմ կարծեր թէ կրցաք հետեւիլ բոլոր գրուածքներուն, եւ լա՛ւ որ չկրցաք: Որովհետեւ, Մեսրոպի լե-

¹ Արեւելք.- Հայ յեղափոխական դաշնակցութեան Սուրիոյ պաշտօնաթերթ, լոյս տեսած է Հալէպ, 1946էն 1963:

² Թէեւ պաշտօնաթերթին մէջ ընդհանրապէս չեն նշուիր խմբագիրներու անուններ, բայց ստոյգ է, որ Ծառուկեան երկար չէ մնացած իր պաշտօնին վրայ:

³ Նայիրի.- ազգային-գրական շաբաթաթերթ, հիմնադիր-խմբագիր՝ Անդրանիկ Ծառուկեան: Լոյս տեսած է 1941-42 (Հալէպ, պարբերաթերթ), 1945-49 (Հալէպ, ամսաթերթ), 1951-83 (Պէյրուզ, 1951ին՝ ամսաթերթ, 1952էն՝ շաբաթաթերթ, ունեցած է ընդհատում մը՝ 1975-77):

⁴ Յառաջ.- ընկերային, քաղաքական ու գրական օրաթերթ (սկիզբը՝ ՀՅԴ պաշտօնաթերթ, յետագային՝ անկախ), լոյս տեսած է Փարիզ 1925-2009 (ընդհատուած է 1940էն 1945): Խմբագիրներ՝ Շաարշ Միսաքեան (հիմնադիր), Արփիկ Միսաքեան:

⁵ Ն. Սարաֆեան, «Մշուշը», Նայիրի, Յունիս-Սեպտեմբեր, Ժ-ԺԲ:1946, էջ 586-89:

⁶ Ծառուկեան կանուխէն մտած է ՀՅԴ շարքերը եւ անկէ հեռացած 1956ին:

⁷ Յակոբ Օշական (1883-1948).- արեւմտահայ գրող, գրաքննադատ:

⁸ Յ. Օշական, «Հայրենի բերքը (քառասնամեայ վաստակին ուժով)», Նայիրի, Փետրուար, Զ:1946, էջ 278-81: Պայքարին տուն տուողը՝ այս յօդուածին մէջ հաստատանեան գրականութեան մասին Օշականի գնահատականներն էին:

զուն, ամբողջ երկու ամիս, վերածուեցաւ անճանաչելի եւ տզե՛ղ բանի մը, անելի եւս տզեղ ոգիի մը որպէս արտայայտութիւն: Յամենայնդէպս, այդ բոլորը ուրիշ պատմութիւն է արդէն: Հարցեր կան, որոնց լուծումը անելի ժամանակէն կախում ունի, քան թէ մեր իմաստութենէն:

Միշտ համակրած եմ ձեր լուրջ դատումներուն եւ տոկուն գրականութեան: Եղբայրօրէն կը խնդրեմ, որ կապուիք Նայիրիի եւ փութացնէք ձեռագիրեր, ձեր յարմար դատած նիւթին շուրջ: Չմոռնաք նաեւ լուսանկար մը եւ «Իշխանուհի[ն]»էն⁹ ետք ձեր լոյս ընծայած գործերէն մէկական օրինակ: Եթէ հետաքրքիր էք այս կողմերու շարժումի [մէկ անընթ. բառ], կրնամ գիրքեր դրկել, ըստ ձեր նախասիրութեան: Սիրով՝ Ա. Ծառուկեան

Բ.

Հալէպ, 18 Ապրիլ 1947

Սիրելի՛ Սարաֆեան,

Առի նամակդ եւ ձեռագիրը – «Չունինք ընտրութեան իրաւունք»¹⁰: Այս վերջինը տպուեցաւ արդէն Նայիրիի ներկայ (Ապրիլ) թիւով, նոյնութեամբ, պատուոյ տեղը: Թերթը եւ ուրիշ կապոց մը գրքեր, կը ստանաք հաւանօրէն քիչ մը ուշ, որովհետեւ յանձնեցի սովորական թղթատարին: Մինչ այդ, կը խնդրեմ որ նկատի ունենաք հետեւեալ կէտերը:

I. Կ'ընդունիմ վճարումի դրութիւնը: Բարի եղէք միայն յայտնել ձեր պահանջը, եւ կրնամ իսկոյն գումարը փոխանցել տեղդ գտնուող առետրականի մը խողովակով: Աւելորդ է յիշեցնել, թէ իր հարստութեամբը չէ որ կը փայլի Նայիրի: Փոխարէն՝ ունի անսահման պատրաստակամութիւն, նիւթապէս օժանդակելու արժանատու եղբայրակիցի մը: Այնպէս որ, սիրելի Սարաֆեան, ձեր աշխատակցութիւնը, կրնաք վստահ ըլլալ թէ կը վարձատրուի կարելի փութօրէն: Մինչ այդ, օգային թղթատարով փութացուցէք քանի մը յօդուած եւ նշանակեցէք ձեր պահանջը: Այդ առաջին գումարը, ինչ ալ ըլլայ՝ կը ստանաք ըստ ձեր պահանջին: Կը խնդրեմ միայն, որ յապաղումի չ'ենթարկուին ձեր առաքումները: Նոյն ձեւով նաեւ գրքերու համար:

II. Ձեր մէկ լուսանկարը: Բալուեանէն¹¹ անելնալիքը շատ սրտիս չի խօսիր: Մանաւանդ որ նախապաշարուած եմ այդ մարդուն դէմ եւ ինծի այնպէս կու գայ թէ գրական իր գործունէութիւնը զերծ չէ անձնական հաշիւներէ եւ նկատումներէ: Այսուհանդերձ, այդ մէկը... ուրիշ պատմութիւն է: Իմ ուզածըս այն է, որ անտիպ լուսանկար մը ունենամ ձեզմէ եւ տպագրեմ Նայիրիի մէջ: Այսքան:

⁹ Ն. Սարաֆեան, *Իշխանուհին*, Փարիզ, 1934, 108 էջ:

¹⁰ Ն. Սարաֆեան, «Չունինք ընտրութեան իրաւունք», *Նայիրի*, Ապրիլ, 3:1947, էջ 154–57:

¹¹ Հրանդ Բալուեան (1904–67).- արեւմտահայ գրող, *Չուարթնոց* գրական ամսագրի գլխաւոր խմբագիր:

III. Այստեղ ըջօրէն կը մտածենք «Գաղութահայ գրողներու համագումար»¹² մը կազմելու մասին: Ի՞նչ է ձեր կարծիքը եւ ա) ո՞ր պէտք է գումարել, բ) որո՞նք պէտք է կանչել, եւն.: Այս մասին կ'ուզէիք անպայման ունենալ նաեւ ձեր կարծիքը, յայտնելով նաեւ, որ չենք ուզեր 20 հոգիէն աւելի ունենալ, որպէսզի Բաբելոնի չվերածուի, եւ, մանաւանդ, արժանաւորութիւնը չըկորսնցնէ:

Ապասելով ձեր արագ պատասխանին եւ առաքումներուն՝

Սիրով՝

Ա. Ծառուկեան

Գ.

Հալէպ, 17 Մայիս 1947

Սիրելի՛ Սարաֆեան,

Նամակ, ձեռագիր եւ նկար ստացայ առջի օր: Մայիսի թիւը լոյս տեսած էր արդէն: Կը տպուին Յունիսի թիւով¹³: Չեմ գիտեր թէ որ սմետղով խլորդն [է] որ «գգուշացուցեր» է քեզ թէ կրնայ խոստացուած վճարումը չկատարուիլ, բայց կը մտածեմ թէ ձեր միջավայրը բաւական լորճուած ըլլալու է եւ մտաւորականութիւն կոչուած խմբակը բաւական այլասերած՝ որպէսզի անոնցմէ մէկն ու միւսը կարենայ մտածել թէ հայ գրող մը կրնայ ուրիշ հայ գրողի մը իրաւունքը իրացնել: Կը ցաւիմ, եւ, ի սրտէ: Այս մասին այսքան: Ներփակ կը ստանաս 1500 ֆր.: Փոխան 1200ի: Նկարին ետեւն է: Ջուրի մէջ դիր ու պիտի պատահի... հրաշքը, առանց վնասելու նկարին: Այս միջոցը կարելի եղաւ այս անգամ: Յաջորդ անգամ, կը յուսամ աւելի «պարկեշտ» ձեւով փոխադրել: Աշխատակցութիւնը՝ ըրէ այնպէս ինչպէս կ'ուզես: Յայտնեմ միայն, թէ անկախ աշխատակցութենէդ, ամէն ամիս 1000 ֆր. պիտի դրկեմ հասցէիդ, պարզ իբրեւ եղբայրական օգնութիւն: Խոստովանիմ, թէ բոլորովին մաքուր ակէ չի գար այս որոշումս եւ որոշ դեր մը ունի[ն] նաեւ անձանօթ խլորդները... նախանձիլ տալու չարախինդ գոհունակութեամբ:

(անստորագիր)

¹² Գաղութահայ գրողներու համագումարը կայացած է 18–20 Սեպտեմբեր 1948ին, Լիբանանի Պեքաայի շրջանի Շթորա գիւղին մէջ: Նպատակն էր ստեղծել «Գրողներու ընդհանուր միութիւն մը, որ իրարու կապէ Սփիւռքի գրագէտները, գաղութ գաղութ», ինչպէս նաեւ «ամուր հիմերու վրայ դրուած հրապարակչական մը, լուսատու կեդրոնի մը մէջ» (Նայիրի, Յուլիս 1947, թիւ 2., էջ 376), ինչը չ'իրականանար: Այս մասին յանելեալ տեղեկութիւններու համար տես՝ Սեւան Տէյրմենճեան, «Անդրանիկ Ծառուկեանի զեկոյցը՝ սովետահայ գրականութեան մասին», Հայկազեան հայագիտական հանդէս, ԻԳ:2003, էջ 499–515. նաեւ նոյնի՝ «Գաղութահայ գրողներու համագումարը եւ Ծառուկեան», Գարուն, 10:2002, էջ 78–85:

¹³ Նշեալ ձեռագիրը Սարաֆեանի «Ողբը» գրութիւնն է, Նայիրի, Յունիս, 5:1947, էջ 246–50:

Սիրելի՛ Սարաֆեան,

Երէկ ստացայ նամակդ: Կը պատասխանեմ իսկոյն: Ետ ուզած ձեռագիրըդ, դժբախտաբար արդէն սկսած էր շարուիլ: Ոչի՛նչ: Ծերերէն քաշուելու պատճառ չունիս, որովհետև արդէն անոնք... չեն կարդար մեր գրածները: Ծեր են ոչ միայն տարիքով, այլեւ հոգիով: Ձեռն կարդար: Ուրեմն, անցնինք:

ա) Ներփակ՝ 1000 ֆր.: Ասիկա իմ առաջին փորձս է՝ առանց ապահովագրելու: Ուրիշներ կ'ընեն եղեր եւ անվնաս տեղ կը հասնի եղեր: Որով, շատ կը խնդրեմ, ստացածիդ պէս երկտող մը փութացուր օդային փոստով եւ նոյն օրն իսկ ճամբայ կը հանեմ երկրորդը: Ձեր այս գեղարուեստական դրամանիշներէն 3 հատ գնած եմ արդէն եւ անհամբեր եմ օր առաջ հասցընելու քեզի: Նկարի ետեւ դնելը երկար բարակ աշխատանք է: Եթէ այս ձեւը յաջողի, կրնամ արագ-արագ առաքել: Դիւրագագացութեան խնդիր հանել ատելորդ է: Ու յետոյ, ո՛վ ըսաւ թէ «ամսական կապել» մըն է ասիկա: Պարզապէս ձեռագիրերդ է, որ կը վճարուին, եւ, իբրեւ խմբագիր, կարծեմ իրաւունքիս մէջն եմ ես ճշդելու անոնց համար ըլլալիք վճարումին քանակը: Այս մասին այսքան եւ այս մասին թող ասիկա վերջին յիշատակութիւնը ըլլայ մեր միջեւ:

բ) «Վէնսէնի անտառը»¹⁴ դրկէ ինծի, առանց ուրիշին բաժին հանելու ասկէ իբրեւ հատուած կամ նախաճաշակ: Քանի որ գրքի մը 30 էջն է կ'ըսես, կրնամ 2 թիով տալ Նայիրիի մէջ: Մանաւանդ որ սիրելի պիտի ըլլայ ինծի համար ու այլապէս արժէքաւոր՝ քու ներաշխարհդ տալուն: Կրնամ նաեւ հաճելի անակնկալ մը ընել քեզի, քանի մը հարիւր օրինակ առանձին գրքքոյկով տպելու միայն ու միայն քեզի համար, քանի որ Նայիրին անձանօթ է Ֆրանսայի մէջ (3-4 օրինակ միայն կը դրկենք, այն ալ բարեկամներու): Որով՝ թէ բաղձանքդ իրագործուած կ'ըլլայ (առանձին գրքով հրատարակել) եւ թէ օգտուած կ'ըլլայ Նայիրին: Այս կողմի հայերը կը կարդան Նայիրիի մէջ, ձերինները կը կարդան իբրեւ գիրք եւ դուն նիւթապէս կ'օգտուիս առանց որեւէ ծախս ըրած ըլլալու եւ, մանաւանդ, առանց արժանապատուութեանդ վնաս մը հասած տեսնելու: Գիրքերուդ տպագրութեան իբրեւ ծախս, կամ հաշուին – Նայիրիի մէջ տպուած ըլլալէն քեզի գալիք հեղինակի իրաւունքը: Այս մասին ալ այսքան: Որով՝ կը սպասեմ անհամբեր:

¹⁴ Ն. Սարաֆեան, *Վէնսէնի անտառը*, խմբ.՝ Գրիգոր Պըլլտեան, L'imprimerie de la Manutention a Mayenne, Փարիզ, 1988, 280 էջ: Առաջին անգամ տպուած է *Նայիրիի* 1947 Սեպտ.-Նոյեմբեր (Գ. տարի, թիւ 8-9-10) եւ Դեկտ.-Յունուար (Գ. տարի, թիւ 11-12) թիւերուն մէջ, յաջորդաբար էջ 443-71 եւ 557-69: Պըլլտեանի խմբագրութեամբ լոյս տեսած հատորին մէջ կից կը գտնենք նաեւ այլ գրութիւններ:

զ) Թէ Մինասը¹⁵ ինչ գրած է քեզի՝ չեմ գիտեր: Իմ պահարանս բաց վիճակով իրեն յանձնած էի, որ փօստին տայ եւ ապահովագրէ: Նկարին ետեւ դնելու գիտը իր ճարտարութիւնն է: Հետեւաբար՝ որեւէ պատասխանատուութիւն չեմ վերցնէր: Մինասը եռանդուն եւ աշխատող տղայ է, բայց ունի թերութիւն մը: Դրամը շատ կը սիրէ: Նոյնիսկ անելի, քան գրականութիւնը: Տարեցոյցն ալ դրամի համար է: Երանելի մը գտած է, որ կը վճարէ իրեն խմբագրութեան համար: Եթէ դրամ ստանաս՝ բան մը դրկէ: Այս ալ այսպէս:

դ) Գրական համագումարը՝ պիտի կայանայ անպայման: Կրնաք վստահ ըլլալ, թէ անհրաժեշտ լրջութիւնը կը դնենք գործին մէջ: Շուտով՝ անելի մանրամասն կը գրեմ այս մասին: Մինչ այդ՝ բարի եղիր յայտնել Միսաքեանին¹⁶ թէ խոստացած նամակը դեռ չեմ ստացած: Այդ յաւիտենական երիտասարդին չի վայելէր այսքան դանդաղ ըլլալ: Կը սպասեմ, որ գրէ: Անհրաժեշտ է, որ իրեն հետ աշխատիք համոզել Չօպանեանն¹⁷ ալ որ դրական կեցուածք ունենայ համագումարին հանդէպ: Դեռ չստացանք իր պատասխանը: Չօպանեանը աղուոր խորհրդանիշ մըն է ու մեղք պիտի ըլլայ՝ եթէ որեւէ նկատումով դուրս մնայ: Ամերիկայէն՝ Ջարեան¹⁸, Համաստեղ¹⁹ եւ Արամ Հայկազ²⁰ պատասխանեցին դրապէս: Մնաց միայն Բ. Նուրիկեանը²¹: Եգիպտոսէն՝ պատասխանած են առանց բացառութեան: Հոս նոյնպէս: Հոսկէ՝ դուն, Միսաքեանը եւ Նարդունին²²: Դեռ կը մնան Չօպանեան, Պէշիկթաշլեան²³ եւ Թօփալեան²⁴: Պէտք է յիշեցնել եւ մղել՝ որ գրեն եւ համամտութիւն յայտնեն: Ի վերջոյ համագումարը կշիռ մը պիտի ունենայ եւ լուրջ առաջադրութիւններով գործի անցնի: Մեղքը իրենց վզին՝ եթէ մեծակշիռ գործերու մէջ մանրավաճառի հաշիւ դնեն:

ե) Հրանդ Բալուեանը ինձմէ նեղուած է անարդար կերպով: Մէկէ անելի անձերու նամակներ գրած է՝ իմ մասիս քնքոյշ արտայայտութիւններով:

¹⁵ Մինաս Թէօլթօլեան (1913–97).- սփիւռքահայ գրականագէտ, ուսուցիչ, խմբագիր, հրապարակագիր:

¹⁶ Շաւարշ Միսաքեան (1884–1957).- Փարիզի *Յոռաջ* օրաթերթի խմբագիր, հրապարակագիր, դաշնակցական գործիչ:

¹⁷ Արշակ Չօպանեան (1872–1954).- արեւմտահայ գրագէտ, գրաքննադատ, բանասէր, *Ծաղիկ* եւ *Անահիպ* հանդէսներու խմբագիր:

¹⁸ Կոստան Ջարեան (1885–1969).- բուն անունով՝ Կոստանդին Եղիազարեան, բանաստեղծ, արձակագիր, գրականագէտ:

¹⁹ Համաստեղ (1895–1966).- բուն անունով՝ Համբարձում Կելենեան, սփիւռքահայ արձակագիր:

²⁰ Արամ Հայկազ (1900–86).- բուն անունով՝ Արամ Չեքեմեան, ամերիկահայ արձակագիր:

²¹ Բենիամին Նուրիկեան (1894–1988).- ամերիկահայ արձակագիր:

²² Շաւարշ Նարդունի (1898–1968).- բուն անունով՝ Ասքանազ Այվազեան, ֆրանսահայ արձակագիր, հրապարակագիր:

²³ Նշան Պէշիկթաշլեան (1898–1972).- ֆրանսահայ երգիծագիր:

²⁴ Բիւզանդ Թօփալեան (1902–70).- ֆրանսահայ բանաստեղծ, խմբագիր, նկարիչ:

Խնդիրը հետեւեալն է. Բալուեանը (գրած եմ ես) շատ լաւ խմբագիր մըն է, բայց շատ գէշ քննադատ մը: Հրաշալի հրատարակութիւններ գիտէ ընել, բայց ողբալի հասկացողութիւն ունի գրականութեան մասին: Այս բաները գրել կարծեմ ոճիր մը չէր, երբ ինք, դժբախտութիւնը ունեցած է գրելու, թէ Համաստեղ շատ վատ կը մնայ, քան... Կաքաւեանը²⁵, թէ Չարենց²⁶ պարզապէս գրական agitateur²⁷ մըն է եւն., եւն.: Ու ամէնէն աններելին՝ վարկաբեկել փորձած է Շուշանեանը²⁸, անոր մահէն ետքն ալ եւ այդ մահը ծանուցանելու առիթով: Այս բոլորը համակրելի չէ որ դարձուցած են զինք: Ուրիշ որեւէ մէկու պիտի չուզէի գրել այս մասին, բայց կը գրեմ քեզի, վստահ՝ թէ կ'ըմբռնես: Ո՞ր կը մնայ մտաւորական պարկեշտութիւնը, ո՞ր կը մնայ պարզ պարկեշտութիւնը ինքը, եթէ մեր անհատական հաշիւները պիտի մտցնենք նաեւ գրականութեան մէջ եւ առաջ երթանք մահու նոյիրագործըւած յիշատակներ իսկ սեւցնելու աստիճան: Աւելորդ է ըսել, թէ ո՛չ գրական, ոչ գաղափարական եւ ոչ ալ անձնական որեւէ խնդիր չեմ ունեցած եւ չունիմ իրեն հետ: Ո՛չ երկտող մը գրած եմ, եւ ո՛չ ալ ստացած իրմէ: Պարզապէս հայ գրողի վրդովման յայտնած եմ, ուրիշ գրողներու հանդէպ եղած անիրաւութեանց առիթով: Բայց Բալուեան շատ գէշ մտածել կու տայ իր մասին, երբ այստեղէն documentներ²⁹ կը հաւաքէ իմ մասին: Սիմոնեան³⁰ անունով մէկու մը գրեր է, որ գտնէ ու իրեն դրկէ 1935ին լոյս տեսած մէկ գիրքս՝ Մոխրամանը³¹: Հակադաշնակցական թերթեր յաճախ կը շահագործեն այդ գիրքը (անշուշտ խեղաթիւրելով): Բալուեան զոհն է այդ թերթերուն: Գիրքը ատենին մեծ աղմուկ հանեց եւ կսկցկն. խնդիր ստեղծեց: Ես ճեմարանի³² աշակերտ էի եւ... վտարուեցայ: Վերջին տարին: Տնօրէնը Շանթն³³ էր: Արդար չէր իր վերաբերումը ինձի հանդէպ: Խորունկ ցնցում մը կրեցի եւ ի վերջոյ Մոխրամանին մէջ քանի մը պարսաւի էջեր դրի Շանթին դէմ: Եւ ո-

²⁵ Վահրամ Կաքաւեան (1903–73).- հայ ֆրանսագիր հեղինակ, ֆրանսական գրականութեան մէջ ծանօթ եղած է Վիքթոր Կարտոն անունով:

²⁶ Եղիշէ Չարենց (1897–1937).- բուն անունով՝ Եղիշէ Սողոմոնեան, բանաստեղծ, արձակագիր, թարգմանիչ, հրատարակիչ:

²⁷ Անկարգութիւն եւ խառնակութիւն հրահրող (ֆրանսերէն):

²⁸ Վազգէն Շուշանեան (1903–41).- ասպանի անունով՝ Օնիկ Շուշանեան, ֆրանսահայ արձակագիր, հասարակական գործիչ:

²⁹ Փաստաթուղթ (անգլերէն):

³⁰ Սիմոն Սիմոնեան (1914–86).- սփիւռքահայ գրագէտ, *Սփիւռք* շաբաթաթերթի հիմնադիր-խմբագիր, Պէյրոսի «Սեան» տպագրատան ու հրատարակչատան հիմնադիր:

³¹ Ա. Ծառուկեան, *Մոխրաման*, տպ. Անահիտ, Պէյրոս, 1935, 82 էջ:

³² Հայ ճեմարան, հիմնուած է 1930ին Պէյրոս, Լեւոն Շանթի եւ Նիկոլ Աղբալեանի կողմէ: 1950էն մինչեւ օրս կը գործէ Համազգայինի սկիզբը՝ Նշան Փալանճեան ապա՝ Մելանքթոն եւ Հայկ Արսլանեան ճեմարան անունով:

³³ Լեւոն Շանթ (1869–1951).- բուն անունով՝ Լեւոն Սեղբոսեան, արեւմտահայ գրող, թատերագիր, մանկավարժ, պետական ու հասարակական գործիչ:

րովհետեւ գիրքը ատենին հաւաքուեցաւ եւ անգտանելի է այսօր, ուզողը ուզած բովանդակութիւնը կուտայ անոր: Դեռ վերջերս, Ռամկավար թերթ մը (Զարթօնք)³⁴ բաց նամակով մը ինծի կ'ուղղէր հետեւեալ տողերը. – Եթէ քաջ ես, արտօնութիւն տուր, որպէսզի արտատպենք «Մոխրամանը եւ թող յայտնի ըլլայ... Դաշնակցութեան դէմ գրածներդ»: Անմիջապէս տուի արտօնութիւնը, եւ մարդիկ հրաժարեցան տպելէ, անշուշտ երբ գիրքը ձեռք յաջողեցան անցնել եւ տեսնել, թէ գաղափարական գետնի վրայ որեւէ հակասութիւն պիտի չկրնան գտնել անցեալին ու ներկային միջեւ: Իսեղճ Բալուեանը ինքն ալ ինկած է միեւնոյն սխալին մէջ: Ափսո՛ս, որ գիրքը չունիմ: Այլապէս՝ կրնայի օրինակ մը ես նուիրել իրեն: Վերջին հաշուով այնքան ալ գէշ գիրք մը չէր ու կարդալը յոգնութիւն պիտի չըլլար: Բայց կարեւորը գիրքը չէ, անշուշտ, այլ Բալուեանի... գրական հետաքրքրութիւնը: Թէ ինչու այսքան երկար գրեցի այս մասին, զարմանաս գուցէ: Իսկ ես չեմ զարմանար նամակիս այսքան երկարելուն: Տարիներէ ի վեր, չեմ յիշեր այսքան երկար գրած ըլլալ որեւէ մէկուն (ատենին ... աղջկան³⁵ մը գրելու յիմարութիւնը ունէի): Եթէ ցերեկ ըլլար ու ես ըլլայի գրասեղանիս առջեւ, հաւանօրէն լայն տողերով ու երկու էջով վերջանար ըսելիքս: Բայց հիմա գիշեր է, զարհուրելի տաք մը կ'ընէ ու ժամը 2ին դեռ քնանալու յոյսը չունիմ: Ահա թէ ինչու շատախօսելը ամէնէն բնական բանը [կը] թուի:

զ) Եթէ ատենը մէկ «Գրական նամականի»ի պէս բան մը դրկես Նայիրիին, կարծեմ գէշ չըլլար: Փարիզի գրողներու մասին մեծ հետաքրքրութիւն կայ այստեղ: Ձեզի համար շատ սովորական թուող բաները հոս կրնան հաճոյքով կարդացուիլ: Թէ ո՞վ ինչպէս կ'ապրի, ի՞նչ կ'ընէ, ի՞նչ կը հրատարակէ, են., են.: Առանց մասնաւոր խորացումի, տեղեկատուութեան ձեւով եւ ծածկանունով՝ կրնաս գրել կարծեմ: Ու յետոյ, շատ մեծ ծառայութիւն մը կ'ընես՝ եթէ նկարներ դրկես: Գրագէտ դէմքերու, նկարիչներու, քանդակագործներու են.: Նայիրիի արտաքին յարդարանքին ալ հոգ կը տանիմ եւ նկարները միշտ փայլ կուտան:

է) Վերջացնելէ առաջ կրկին յիշեցնեմ, որպէսզի իսկոյն պատասխանես: Դրամին հասնիլը կ'ուզեմ օր առաջ գիտնալ, որպէսզի միւս երկուքն ալ ըրկեմ յաջորդաբար:

ը) Եթէ մոռցած բան մը ունենամ, յետ գրութեամբ կը շարունակեմ առտուն, նամակս փօստ դրկելէ առաջ:

Սիրով՝
Ա. Ծառուկեան

Ստացած եմ 1500 \$-ը. Ծառուկեանէն

³⁴ *Զարթօնք*.- ՌԱԿ Լիբանանի պաշտօնաթերթ, լոյս կը տեսնէ 1937էն:

³⁵ Հաւանաբար կ'ակնարկէ արծակագիր, խմբագիր եւ հրապարակախօս Սիրան Սեզային (1903–73), բուն անունով՝ Սիրան Զարիֆեան–Քիփէլեան, որուն հետ մըտերմիկ յարաբերութիւններ ունեցած էր ատենին:

1000
2500
2000
4500
2000
6500

Ե.

Հալէպ, 24 Յուլիս 1947

Սիրելի Սարաֆեան,

Բազմաթիւ մաշեցնող ու լարուած ճիգ պահանջող աշխատանքներ պատճառ եղան որ 8-10 օր ուշացնեմ նամակս: Այժմ, շատ անելի... զբաղած եմ: Ու եթէ այս երկտողը կը գրեմ, պարզապէս պարունակեալը – 2000 ֆր. – հաստատելու համար է:

Երանի ձեզի....

Հաւանօրէն միեւնոյն մաղթանքը դուք կ'ընէք մեզի, ենթադրելով, թէ ուղտի կարաւաններով ընթացող այս Արեւելքին մէջ լայն ժամանակ ունինք, մինչդեռ դուք հեփհեփ կեանքի մը մէջ կը... Երանի ձեզի...

«Վէնսէնի անտառը» կը սպասեմ անհամբեր: Միւսը՝ Պաթօսը³⁶ ցրուել տուի (3 էջ շարուած էր): Ձեռագրի կը սպասեմ:

Սիրով՝ ԱՆ

Զ.

Հալէպ, 4 Օգոստ. 1947

Սիրելի՛ Սարաֆեան,

Երէկ ստացայ «անտառը»³⁷: Նախորդ օրը... հեռագրած էի որ փութացնես: Ոչի՛նչ: Եթէ իզուր անցաւ հեռագիրս, զոնէ յաւելեալ փաստ մը եղաւ, թէ որքան անհամբերութեամբ կը սպասէի: Ու հիմա, որ կարդացած եմ ձեռագիրդ ամբողջութեամբ, կրնամ վկայել, տաք ու հարազատ զեղումով – Ապրի՛ս: (Այս բառը լաւ չփախաւ անշուշտ՝ պզտիկէն մեծի մը, բայց... խմբագիրները այդ ազատութիւնը կուտան իրենք իրենց): Նոր ներաշխարհ մըն է, արդիական շունչով, ոճով, արդիական մարդու մը ներաշխարհը: Մե՛ր ժամանակի մարդոց, մե՛ր ներաշխարհը: Հինը՝ ... չեմ սիրեր այն չափով, ինչ չափով որ կ'աստուածացնեն: Այս մէկը սակայն՝ արդի մարդուն հոգին է: Գլուխգործոց մը: Անսահմանօրէն ուրախ եմ, որ ինձի տրուեցաւ զայն առաջին անգամ կարդալու հաճոյքին հետ, նաեւ, առաջին անգամ տպելու պատիւը: Դժբախտաբար – անելի ճիշդը բարեբախտաբար – այս թիւին (Օգոստ.) չի հասնիր: Պիտի չդնեմ նաեւ Սեպտեմբերին, բայց պիտի ծանու-

³⁶ Խօսքը Սարաֆեանի «Pathosի մը շուրջ» խորագրով գրութեան մասին է, *Նայիրի*, Օգոստոս, 7:1947, էջ 421–29:

³⁷ Նկատի ունի «Վէնսէնի անտառը»:

ցանձեմ եւ ծրագրած բացառիկ թիւս («Անտառ»ին համար) միացեալ ձեւով (Նոյեմբ.-Դեկտ.) պիտի բովանդակէ «Վէնսէնի անտառը», ամբողջութեամբ: Այդ թիւը պիտի ունենայ 130-40 էջ եւ 40 էջը՝ քեզի վերապահուած է: Իսկ այս երկու թիւերուն համար՝ շարուած ու կրկին ցրուած ձեռագիրը կուտամ:

Անցեալ շաբաթ 2000 ֆր. ներփակեցի: Յուսամ ցարդ ստացած կ'ըլլաս: Ինդրեմ՝ իսկոյն պատասխանէ: Դրամին կորուստէն աւելի՝ սպասումդ եւ ձեռնունայն մնալու վիճակդ է որ անհանգիստ կ'ընէ զիս: Այսօր, ուրիշ 2000 ֆր. եւս փոխանցեցի հոս, բարեկամի մը, որ հող վճարել պիտի տայ քեզի: Այս մէկը եթէ օրին ստանաս (ըստ իրեն Օգստ. 15ին), լաւագոյն ձեւը կ'ըլլայ, եւ յետայսու այդ ճամբով կը դրկեմ, թէեւ հարիւրին 20 աւելի կ'արժէ ֆրանքը:

Այսօր՝ այսքան: Գրէ ինձի, երբ տրամադիր ըլլաս: Մանաւանդ առողջական վիճակիդ մասին: Եթէ ըսեմ, թէ... կարօտցած եմ քեզ, երբեք մի գարմանար: Անշուշտ մէկը պէտք է կարենայ բացատրել չճանչցած ու չտեսած մարդիկ կարօտնալու այս վիճակը:

Սիրով՝ Ան.

Է.

Հալէպ, 20 Նոյմբ. 1947

Սիրելի՛ Սարաֆեան,

Երկու շաբաթէ իվեր հասած եմ տեղս եւ արդէն իսկ խառնուած տափակ այլ յոգնեցնող առօրեայիս: Ճամբորդութեանս ընթացքին, միշտ միտքս էիր եւ շատ յաճախ մտածեցի գրել քեզի: Բայց միշտ, գրելիքս շատ էր, եւ պայմանները հազիւ թոյլ կուտային բացիկ մը մրոտելու: Նախընտրեցի չգրել, քան թէ պայմանադրական ձեակերպութեան մը վերածուած տեսնել այնքան ջերմ զգացումի մը արտայայտութիւնը: Նոյնիսկ հիմա, գողցուած ժամանակ մըն է առիթը այս երկտողին:

Ճամբորդութենէս գոհ եմ: Առաջին անգամն էր որ Եւրոպան կը տեսնէի ու բնականաբար աւելի շփոթ ու խառնակ տպաւորութիւններու կոյտ մը կայ մէջս, քան թէ որոշ ու յստակ պատկերներու շարք մը: Յամենայնդէպս, չեմ զղջար ըրած զոհողութեանս համար, նոյնիսկ, վերադարձէս ետք, տպարանիս Արշակաւանային վիճակը տեսնելէ ետք... Նայիրին սկսած ենք տպել եւ հիմա «Վէնսէն»ի փորձերուն վրան եմ: Նոր տառերով կը շարուի, եւ շատ գեղեցիկ բան մը դուրս պիտի գայ, մանաւանդ որ այս թիւին թուղթն ալ ընտիր է: Կ'աշխատիմ սրբագրութիւնները այնպէս ընել, որ սխալ չսպորդի: Բայց... գիտես թէ այս մանր ու հատիկ հատիկ տառերը որքան սահուն են եւ դաւադիր:

Հոռմ այցելեցի Ջարեանի աղջկան³⁸: Ինք չկար: Կար... մայրը³⁹: Աղջիկը ամուսնոյն հետ գացած էր Նափօլի, Ջարեանը նաևն առնելու: Տես դիպուածին խաղերը: Յաջորդ օրը Ջարեան Հոռմ պիտի հասնէր եւ նոյն օրը, առաւօտ կանուխ, ես ստիպուած էի ... օղանաւ նստիլ: Բայց իր տիկինը (նախկինը) խորապէս տպաւորեց զիս: Ազնուականութեան բացառիկ տիպար մըն է, սիրելի՛ Սարաֆեան: Երեւակայէ, որ իր մարդը մեկնած է ուրիշ կնոջ⁴⁰ մը հետ եւ անոր հետ կը վերադառնայ, եւ ինք, լքուած կինը, մօր մը պէս հոգածու է Ջարեանին հանդէպ ու ամէն կերպ կը ջանայ որ «բանի մը պէտք չունենայ եւ հանգիստ ընէ»: Ի դէպ, Ջարեան ծանր գործողութեան մը ենթարկուած է եւ շատ դիպրաբեկ առողջութիւն մը ունի:

Դեռ ուրիշ շատ բան կ'ուզէի գրել քեզի, սիրելի Սարաֆեան, բայց ափսոս, որ ժամանակս կարճ է: Ըսեմ այսքանը միայն, թէ այս ճամբորդութեանը ընթացքին հանդիպած անձերուս մէջ ամէնէն քաղցր եւ անխառն յիշատակը քեզմէ է որ կը պահեմ: Կը ցափմ միայն, որ չափազանց կարճ եղաւ մեր հանդիպումը: Բոլոր գեղեցիկ բաներուն ճակատագիրը կարճ տեսելն է երեւի:

Յարգալիր բարեւներ՝ տիկնոջ⁴¹ եւ օրիորդին⁴²:

Ջերմ սիրով՝

Ա. Ծառուկեան

Յ. Գ.

Ներքիակ՝ 2000 ֆր.: Իսկոյն պատասխանէ, որպէսզի մինչեւ Նոր Տարի ուրիշ ալ դրկեմ: Ան.

Ը.

Հալէպ, 25 Դեկտ. 1947

Սիրելի՛ Սարաֆեան,

Փնտռած խաղաղ պահս կ'ուշանայ, խաղաղօրէն կարենալ գրելու համար քեզի: Ու կը տեսնեմ – տխրութեամբ – թէ օրացոյցին թերթիկները կը հատնին: Ու ես կ'ուզեմ, որ այս նամակս հասնի քեզի Նոր-Տարիին: Արդ, աւանդութիւն մը յարգած ըլլալու համար՝ «Շնորհաւոր Նոր-Տարի» – եւ – «Բարի Կաղա՛նդ» կ'աւելցնէինք մեր տղայ օրերուն:

Կեանքս նորէն մտաւ իր «բնական» հունին մէջ: Այսինքն, անվերջ տագնապ, ջղագրգիռ վիճակ եւ սրտմաշոյք: Կ'երթանք, կուզանք, կը վիճինք, կը

³⁸ Նուարդ Ջարեան (1917–2005).- քանդակագործուի:

³⁹ Թագուի Շահնազարեան (1887–1962).- դաշնակահարուի, Ջարեանի առաջին կինը:

⁴⁰ Ֆրենսիս Պրուքս-Ջարեան (1900–63).- ամերիկացի նկարչուի, Ջարեանի երկրորդ կինը:

⁴¹ Սարաֆեանի կինը՝ Բրաբիոն Սարաֆեան (շնորհակալութիւն՝ պատմաբան, բանասէր Վարդան Մատթէոսեանին՝ անունը յուշելուն համար):

⁴² Բանաստեղծին որդեգիրը՝ Անահիտ Սարաֆեան-Պաստրմաճեան:

մաշինք եւ... կը ձանձրանանք իվերջոյ: Առջի օր քեզ... երազս տեսայ: Տարօրինակ է, բայց այսպէս է: Տարտամ էր, ինչպէս կ'ըլլան երագները, բայց որոշ մէկ բան կար, որ մեր տունն էիր ու մայրիկս իմ բացակայութեանս քեզ ընդունած էր իբրեւ... Հայաստանէն փախստական մը...⁴³

«Նայիրի»ի բացառիկը լոյս տեսաւ: Կը ստանաս սովորական փօստով: Երկրորդ օրինակ մըն ալ: Չմոռնամ՝ թէ վէպդ⁴⁴ ստացայ... Հռոմի մէջ: Դեռ չեմ ասարտած ընթերցումը, կը խոստովանիմ ամօթով: Ահաւասիկ կարգ մը էական խնդիրներ.

ա) Յառաջիկայ շաբաթ, Նոր-Տարիին, Պէյրութի մէջ հաւաքոյթ ունինք՝ Համագումարի շուրջ: Կը յուսամ, թէ գործնական եւ վերջնական որոշումներ կուտանք: Մինչ այդ, կազմած ենք հետեւեալ ծրագիրը. Սուրիա-Լիբանանէն խումբ մը գրողներ, որոշած ենք արտասահմանէն գալիք գրողներուն մէկական ուսումնասիրութիւն նուիրել եւ հրատարակել պրակներով՝ մինչեւ Համագումար: Քու մասիդ պիտի գրէ Եդ. Պոյաճեանը⁴⁵, Պէշիկթաշեանի մասին՝ Թէօլէօլեանը, Նարդունիի մասին՝ հաւանօրէն Արմէն Անոյշը⁴⁶, Համաստեղի մասին՝ Կարօ Սասունի⁴⁷, Ջարեանի մասին՝ ես, եւն., եւն.: Պըրակները պիտի ըլլան իւրաքանչիւրը 32 էջ եւ ուսումնասիրուած հեղինակներուն լուսանկարովն ու կենսագրութեամբը⁴⁸: Ես ստանձնած եմ, իբրեւ գըրողներու միութեան քարտուղար, հաւաքել նիւթերը: Արդ, կենսագրական տեղեկութիւններ, ինչպէս եւ անտիպ ու մասնատր առնուած լուսանկար մը, բարի եղիր փութացնել հասցէիս, որպէսզի հասցնեմ Պոյաճեանին:

բ) Իմ կողմէ բարի եղիր տեսնել Արամ Անտոնեանը⁴⁹ եւ խնդրէ իրմէ՝ որ

⁴³ Առաջին էջի ձախ լուսանցքին գրուած է՝ «Սպանալուդ պէս՝ երկրորդ մը: Մէջինին համար:

Կորուստին վախը չէ, այլ, օրին ձեռքդ անցած ջրլլալու վախը», իսկ քիչ մը վար՝ «Անտոնեանին հետ ծրագրած էինք բացառիկ թիւ մը նուիրել Պ. Դուրեանին: Շարքաւ նիւթեր ունի: Խօսէ իրեն եւ ջանացէք միասին աղոտոր բան մը ընելը»:

⁵⁴ Զապէլ Եսայեան, «Պատուիրակութեան նախագահը եւ ճաշի հրաւեր մը», Նոր ակօս, 5 Նոյեմբեր 1924, էջ 241-46 (ծանօթագրութիւնը՝ էջ 241). «Գարամանասերները», Նոր ակօս, 12 Նոյեմբեր 1924, էջ 265-270:

⁵⁵ Եսայեան, Նամակներ, էջ 369:

⁵⁶ Նոյն, էջ 216:

Եսայեան յայտնած է Դարբինեանին, թէ մտադիր էր գրել Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադիրներէն Ռոստոմի (Ստեփան Զօրեան, 1867-1919) մասին, որուն արդէն անդրադարձած էր 1920ին յուշագրական կարճ ակնարկով մը⁵⁷, «այն կերպով, որ սկսայ գրել «Նաւասարդ»ի մէջ «Արտաշէս Յարութիւնեանի» մասին: Ասիկա պիտի ըլլայ աւելի հոգեբանական վերլուծում մը, քան թէ կենսագրութիւն»: Ա. Յարութիւնեանի մասին հոգեբանական վերլուծում գրելու ծրագիրը իրականացած չէ, բայց գրագիտուիին վերաբերումը ուշադրութեան արժանի է գաղափարական վերիվայրումներու այդ շրջանին, երբ արդէն կուսակցութեան հետ կապերը անվերադարձ խզելու եզրին կը գրնուէր. «Ես անսահման հիացում ունեցած եմ Ռոստոմի մասին, եւ իմ հիացումիս ընդմէջէն է, որ կը տեսնեմ իր բարոյական կերպարանքը: Վստահ եմ, որ խոր զգացումով յաջողած եմ գինքը տեսնել որոշ բոպէներու իր բարձրագոյն իսկութեան մէջ: Եթէ յաջողիմ արտայայտել ինչ որ կը ցանկամ, գրուածքս կրնայ դառնալ շահեկան»⁵⁸:

Պելճիքահայ հանրային գործիչ Մաքսուտ Միհրդատեանց (1874-1956) Յունիս 1919ին մաս կազմած էր Հայ Ազատական Ազգային Միութեան գործադիր մարմնին⁵⁹ եւ Ռամկավար Ազատական Կուսակցութեան Պրիւքսէլի ակումբի նախագահն էր մինչեւ կուսակցութենէն վիճայարոյց հրաժարումը 1926ին⁶⁰: 1921ին ընտրուած էր Պելճիքայի Հայկական Յանձնախումբի նախագահ⁶¹: Այդ հանգամանքով 1922ին ծանօթացած էր Եսայեանի հետ, ծանօթութիւն՝ որ խորացած էր յաջորդ տարիներուն:

Գրագէտ Յ. Ճ. Սիրունիի (1890-1973) նամակը գրուած է *Նաւասարդ* պարբերաթերթի առաջին տարեշրջանի ամարտին: Անիկա կը պարունակէ ընդհանուր հաշուետուութիւն մը անոր գործունէութեան եւ անդրադարձ մը՝ ռումանահայ մտաւորական աղքատիկ մթնոլորտին: Սիրունի աշխատակցութեան հրաւիրած է Եսայեանը, բայց այս հրաւերին արձագանգը չկայ պարբերականի էջերուն մէջ, զոր Եսայեան «դաշնակցական» պիտա-

⁵⁷ Զատիլ Եսայեան, «Ռոստոմ (յիշողութիւններ եւ տպատրոպութիւններ)», *Վերածնունդ*, 24 Յունուար 1920, էջ 35-37. 31 Յունուար 1920, էջ 32-36:

⁵⁸ «Մեր աշխատակիցներու նամակները», *Հայրենիք* ամսագիր, Նոյեմբեր-Դեկտեմբեր 1962, էջ 6:

⁵⁹ «Հայ Ազգային Ազատական Միութեան կազմաւորումը», *Հայաստան*, 23 Օգոստոս 1919: Հիմնադիր հաւաքոյթին Միհրդատեանցի խօսած ճառը տե՛ս՝ [Անվերնագիր], *Հայաստան*, 30 Օգոստոս 1919:

⁶⁰ «Նշանակալից հրաժարական մը», *Երեւան*, 29 Օգոստոս 1926. նաեւ՝ Տ. Թ., «Տեսակցութիւն մը քաղ. Մ. Միհրդատեանցի հետ», *Երեւան*, 3 Սեպտեմբեր 1926. նաեւ՝ Մ. Պրիւքսէլի ռամկավար ազատական ակումբը», *Ապագայ*, 18 Սեպտեմբեր 1926. նաեւ՝ Մ. Միհրդատեանց, «Պատասխան մը «Ապագայ»ին», *Երեւան*, 15 Հոկտեմբեր 1926:

⁶¹ «Պելճիքայի հայկ. նոր յանձնախումբ», *Ապագայ*, 16 Ապրիլ 1921:

կած է, ինչպէս կը տեսնենք *Նաասարդի* շիջումէն ետք՝ 1927ին Հայաստան լոյս տեսած անոր յօդուածին հետեւեալ պարբերութեան մէջ.

Դաշնակցական մամուլը ունեցաւ իր գրական բաժինը եւ հրատարակեց պարբերականներ ինչպէս «Հայրենիք» Ամերիկայի մէջ եւ «Նաասարդ» Ռումանիոյ մէջ: Պարզ բան էր, որ այդ հրատարակութիւններուն մէջ մշակուած գրականութիւնը սերտօրէն պիտի հետեւէր կուսակցութեան ուղղեգծին [sic] եւ միւս կողմանէ անգիտակցաբար պիտի արտայայտէր այն անյատակ յուսահատութիւնը, որ «ընելիք չունեցող» եւ անզօր կարողութեան հասած մարդոց հոգեբանութեան խորքը կը կազմէ: Այդ ձգտումի գրողները կանգնած են կարծես «կորուսեալ դրախտ»-ի առաջ: Կտրուած կենդանի եւ ներկայ կեանքէն, անոնք լաւագոյն պարագային կ'ապաստանեն [sic] յիշողութեանց գրականութեան մէջ: Ոչ միայն բացարձակապէս խզուած են բնիկ հայկական կեանքէն, այլ եւ չեն կարող ոեւէ ներշնչում քաղել իրենց ներկայ միջավայրէն, ոչ իսկ գաղութահայ կեանքէն, իրենց առօրեայէն: Այն երիտասարդութիւնը, որ խմբուեցաւ այդ թերթերուն շուրջ, մեծամտութենէ եւ սնապարծութենէ փքած՝ իրար գովելու (փոխադարձ ծառայութիւն) կերպեր հնարեց միայն իբր գործունէութիւն: Կանխահաս ծերութեան մատնուած, այդ շարքի գրողները կամովին սահմանաքարեր դնելով իրենց մտածումին առաջ, ինքզինք կը բանտարկեն անցեալին մէջ⁶²:

1925-30ին Զապէլ Եսայեան ամբողջացուցած է իր գաղափարական շրջադարձը մաս կազմելով *Երեւան* եռօրեայ, ապա երկօրեայ թերթի խմբագրութեան⁶³: Գեղամ Ֆենէրճեան գրած է. «*Այնպէս իր դիրքը շարքի հանգստաբազուէր չէր: Երեւան եւ այն արեւները լոյս տեսած նման թերթեր մեր այսօրուան յառաջդիմական թերթերուն պէս կրօնա-բարոյական օրկաններ չէին: Մարտունակ էին եւ պայքարի ծարափ: Իրենց եռանդը սահման չունէր: Իրենց ներքերը, ներսը եւ դուրսը արձակուած, ստոյգ եւ ապահով նշանառութեան մը փորձերը չէին: Ներսը՝ գծութիւնները անպակաս էին, մրցակցութիւնները սուր եւ անխնայ: Հանրածանօթ գրող Զապէլ Եսայեանը, արդէն յիսնամեայ, հանրային կեանքի մեծ փորձառութեան փորձացած, աւելի հասուն եւ աւելի տեղեակ քան իր շրջապատը, այնպէս դատապարտուած էր դառնալու յաճախ սնուցի բայց երբեմն անողոք խաղերու առարկան»⁶⁴:*

⁶² Զապէլ Եսայեան, «Գաղութահայ գրականութիւն», *Նորք*, 1, 1927, էջ 223:

⁶³ Սկզբնապէս, շրջաբերական մը յայտնած է, թէ «Երեւան» լոյս պիտի տեսնէր Հոկտեմբեր 1925ին, Եսայեանի խմբագրութեամբ («Նոր թերթ մը Փարիզի մէջ», *Հայրենիք*, 20 Հոկտեմբեր 1925):

⁶⁴ Գեղամ Ֆենէրճեան, «Նամականի Զապէլ Եսայեանի կամ ճամբորդական օրագիր», *Նայիրի*, 30 Նոյեմբեր 1979, էջ

Ստորագրած է գրական ու գեղարուեստական, քաղաքական եւ քա-
րոզչական բնոյթի յօդուածներ, լայնօրէն դրսեւորելով իր կողմնորոշումը
դէպի Խորհրդային Հայաստան, ուր ճամբորդած է 1926-27ին: *Երեւանի* մէջ
օրը օրին հրատարակուած ուղեւորական նոթերը, ինչ-ինչ փոփոխու-
թիւններով, ամփոփուած են *Պրոմէթէոս ազատագրուած* (1928) հատորին
մէջ:

Այս շրջանին կը պատկանին իրեն ուղղուած վերջին նամակները: Այս-
պէս, Դեկտեմբեր 1925ին, վիպասան ու թատերագիր Շիրվանզադէ (1858-
1935), որ 1921-25ին Փարիզ ապրած է եւ կը նախապատրաստուէր Հայաս-
տան մեկնելու, անոր յղած է նամակ մը հիանդութեան առիթով: Խորհր-
դահայ վանեցի գրողներու սերունդին պատկանող երկրորդական անուն-
ներէն մէկը՝ Վէսպէր (Մարտիրոս Դաբաղեան, 1893-1977), նաեւ թղթակ-
ցած է Եսայեանի հետ, գլխաւորաբար *Երեւանի* իր աշխատակցութեան եւ
գիրքերու սպառումին վերաբերեալ, հաղորդելով նաեւ լուրեր Շիրվանզա-
դէի Կովկաս վերադարձին մասին⁶⁵:

Վենետիկի Մխիթարեան միաբան Հ. Սիմոն Երեմեանի (1871-1938)
երկկողմանի լռութիւնը խզած է Մարտ 1926ի իր նամակով⁶⁶, որուն շար-
ժառիթը իտալական ֆաշական պաշտօնաթերթ *Իլ փոփոյօ ր'Իթալիայի*
մէկ յօդուածն էր խորհրդային հայազգի դիւանագէտ Լեւ Կարախանի մա-
սին: Երեմեան յիշեցուցած է իր դերը *Աւերակներու մէջ* հատորը «վար-
ձատրելու ժիւրիներուն գլուխը»: Եսայեանի գլուխ գործոցը Հայոց Հրա-
տարակչական Ընկերութեան միակ հրատարակութիւնը եղած է 1911ին:
Կարճատեւ այս ձեռնարկին անհրաժեշտութիւնը փաստարկելով, *Ազատա-
մարտի* մէկ խմբագրականը (Մարտ 1910), յոյս յայտնած է, թէ պիտի ըլլայ
«սահմանադրական կեանքի այն մնայուն ու րեւական գործերէն, որ
թրքահայ գրողները պիտի կրնան տրուած ըլլալ թէ՛ մեր հասարակութեան
լուսատրոյթեան նպատակին, թէ՛ հայ մտաւորականութեան գնահատ-
մանն ու բեղմնատրման նպատակին»⁶⁷: Շաբաթ մը ետք, 3 Ապրիլին, Բե-
րայի Երիտասարդաց Միութեան ակումբին մէջ տեղի ունեցած առաջին
խորհրդակցութիւնը⁶⁸: Ընկերութեան կազմութիւնը իրագործուած է Յու-
նիս-Յուլիսին: Ընդհանուր ժողովը ունեցած է չորս նիստեր. կանոնագրի

⁶⁵ Վէսպէր, «Եղերերգ (ոչ վիատութեան)», *Երեւան*, 1 Յունուար 1927:

⁶⁶ Նամակը, որոշ վրիպակներով, տե՛ս՝ Հ. Վահան Օհանեան, «Նամակներ եւ ու-
ղերձներ Հայաստանի տարբեր դիւաններէ», *Բազմավէպ*, 3-4:2022, էջ 111:

⁶⁷ «Հրատարակչական ընկերութեան մը պահանջքը թրքական կեանքին համար»,
Ազատամարտ, 14/27 Մարտ 1910:

⁶⁸ «Կարեւոր», *Ժամանակ*, 20 Մարտ/2 Ապրիլ 1910. նաեւ՝ «Ժողովներ եւ ակումբ-
ներ», Թէոդիկ, *Ամէնուն փարեցոյցը*, Ե. տարի, տպագր. Վ. եւ Հ. Տէր-Ներսէսեան,
Կ. Պոլիս, 1911, էջ 411:

վաերացում (Ա. եւ Բ. նիստեր, 19 եւ 26 Յունիս)⁶⁹, վարչական խորհուրդի ընտրությունը, որուն ընթացքին յայտարարուած է, թէ անդամներու թիւը բարձրացած է 140ի (Գ. նիստ, 3 Յուլիս)⁷⁰, եւ մարմիններու կազմութիւն (10 Յուլիս). Երեմեան ընդտրուած է խմբագրական մարմնի անդամ, իսկ Եսայեան, որ այդ պահուն Փարիզ կը գտնուէր՝ փոխանդամ⁷¹: Կ'ենթադրենք, որ Երեմեանի «վարձատրելու ժիրիներ»ու ակնարկութիւնը խմբագրական մարմնին կը վերաբերի: Արդարեւ, 19 Մարտ 1911ին, խմբագրական եւ վարչական մարմինները՝ խառն նիստէ մը ետք, «նկատի առին Տիկին Ջապէլ Եսայեանի որկած մէկ գործը, ինչպէս նաեւ մրցանակի համար որկուած կարգ մը թարգմանական գրուածներ», ու խմբագրական մարմնի անդամները իրենց միջեւ բաժնած էին գործերը՝ 15 օրուան ընթացքին որոշում տալու, թէ որո՞նք պիտի ըլլային հրատարակուելիք գործերը⁷²: Խմբագրական մարմինը ժողով գումարած է 9 Ապրիլին⁷³, որուն մասին յաւելեալ տեղեկագրութիւն կատարուած չէ, իսկ 20 Ապրիլին կը հրաւիրէր տպագրիչները իրենց առաջարկները ներկայացնելու՝ «Հայոց հրատարակչականին առաջին հրատարակութիւնը –13էն 15 ֆորմանոց հատոր մը–» տպագրելու առնչութեամբ⁷⁴: Աւելի ուշ, *Կոչնակ* կը տեղեկագրէր, ա-

⁶⁹ Ա. նիստին մասին, տե՛ս՝ ««Հայոց Հրատարակչական»ին առաջին ընդհանուր ժողովը», *Ազատամարտ*, 8/21 Յունիս 1910. նաեւ՝ Գրասէր, «Այժմէութեան մը շուրջը», *Ժամանակ*, 8/21 Յունիս 1910: Այս ժողովին ընթացքին, Արշակ Կոստանի առաջարկով, սկզբնական «Թրքահայ Հրատարակչական Ընկերութիւն» անունը վերածուած է «Հայոց Հրատարակչական Ընկերութեան»: Երկրորդ նիստին մասին, տե՛ս՝ «Հայոց Հրատարակչական Ընկերութեան ընդհանուր ժողովի Բ. նիստը», *Ազատամարտ*, 15/28 Յունիս 1910: Եգիպտահայ քանի մը ունետրներու նախաձեռնութեամբ, երկրորդ հրատարակչական մը առաջին ժողովը գումարուած է 23 Յունիսին, որ սկզբնապէս մրցակից նկատուած է Թրքահայ Հրատարակչական Ընկերութեան (Գրասէր, «Միութեան գիծ», *Ժամանակ*, 11/24 Յունիս 1910), բայց երկրորդ նիստին (30 Յունիս) որոշուած է, որ «Եգիպտահայ Հրատարակչականը իրեն նպատակ ունենայ ժողովրդային դաստիարակութեան նուիրուած գրքեր տպագրել տալու» («Եգիպտահայ Հրատարակչականը», *Ժամանակ*, 18 Յունիս/1 Յուլիս 1910): Տե՛ս՝ նաեւ «Հրատարակչականները», *Կոչնակ*, 23 Յուլիս 1910, էջ 717-718:

⁷⁰ «Հայոց Հրատարակչական Ընկերութեան ընդհանուր ժողովին Գ. նիստը», *Ազատամարտ*, 22 Յունիս/5 Յուլիս 1910:

⁷¹ «Հայոց Հրատարակչական Ընկերութեան ընդհանուր ժողովին Դ. նիստը»՝ *Ազատամարտ*, 29 Յունիս/12 Յուլիս 1910: Այս նիստին յայտարարուած է, թէ Եգիպտահայ Հրատարակչականը պիտի զբաղի դասագիրքերու հրատարակութեամբ:

⁷² «Հայոց Հրատարակչական Ընկ.», *Ազատամարտ*, 9/22 Մարտ 1911:

⁷³ «Հ. Հրատարակչական Ընկերութիւնը», *Ազատամարտ*, 27/9 Ապրիլ 1911:

⁷⁴ «Պաշտօնական ծանուցում Հայոց Հրատարակչական Ընկերութեան», *Ազատամարտ*, 7/20 Ապրիլ եւ 10/23 Ապրիլ 1911. նաեւ՝ «Տպագրիչներուն», *Ժամանակ*, 14/27 Ապրիլ 1911:

մենայն հաւանականութեամբ պոլսահայ մամուլէն քաղելով, թէ «Պոլսոյ հրապարակչականը որոշեր է իբր առաջին հրապարակութիւն հրապարակ հանել Տիկին Ջապէլ Եսայեանի մէկ գործը, «Աւերակներու [sic] մէջ»⁷⁵:

Սակայն, ընկերութեան գործունէութիւնը ակնկալուած հետեւանքները ունեցած չէ: *Կոչնակի* լուրէն երկու շաբաթ ետք, ամերիկահայ *Արագած* շաբաթաթերթի առաջին թիւին մէջ լոյս տեսած թղթակցութիւն մը կը յայտնէր, թէ ընկերութիւնը «դժբաղդաբար շատ վտիտ արդիւնք մը տուած է, միակ գիրք մը պիտի կրնայ հրատարակել առ այժմ»⁷⁶: Անոր «դանդաղութեան ու կէս մեղելութեան շարժառիթը», ըստ Արտաշէս Յարութիւնեանի, ներքին պայքարն էր, որ մասամբ հակակուսակցական բնոյթ ունէր⁷⁷: Սակայն, անոր գործունէութիւնը արդէն դատապարտուած էր ամլութեան: Օգոստոս 1912ին կատարուած են ընտրութիւններ, որոնց ընթացքին Եսայեան ընտրուած է Հրատարակչականի խմբագրական մարմնի անդամ, իսկ Երեմեան՝ փոխանդամ⁷⁸, սակայն Յուլիս 1913ին յայտարարուած է, թէ «Հայոց Հրատարակչական Ընկերութիւնը, որ փարիէ մը ի վեր արդէն հոգեաբար էր... իր հոգին աւանդեց վերջապէս»⁷⁹:

Գրող եւ թարգմանիչ Կարէն Միքայէլեանի (1885-1942) նամակը, գրուած՝ Ֆրեզնոյի մէջ, որոշ տեղեկութիւններ կը պարունակէ ՀՕԿի (Գր. Վարդանեան, Կ. Միքայէլեան) եւ Պետական Կարմիր Խաչի (նախագահը՝ Սպանդար Կամսարական) միացեալ պատուիրակութեան երոպական եւ ամերիկեան շրջագայութեան մասին, որ տեսած է տարի մը: Արդարեւ, պատուիրակութիւնը Հայաստանէն Երոպա մեկնած էր Սեպտեմբեր 1925ին⁸⁰ եւ Փարիզ հասած՝ 15 Նոյեմբերին⁸¹: Քանի մը ամիս Երոպայի տարբեր համայնքներու մէջ շրջագայելէ ետք, պատուիրակութիւնը Ամերիկա մեկնած է 3 Ապրիլ 1926ին⁸²: Այցելութիւնը տեսած է հինգ ամիս (17 Ապրիլ-17 Սեպտեմբեր)⁸³:

⁷⁵ «Օրոտան լուրեր», *Կոչնակ*, 6 Մայիս 1911, էջ 448:

⁷⁶ Լեւոն Աշոտ, «Խապրիկներ երկրէն», *Արագած*, 25 Մայիս 1911, էջ 16:

⁷⁷ Արտաշէս Յարութիւնեան, «Հայոց հրատարակչականը», *Արագած*, 28 Սեպտեմբեր 1911, էջ 292-293:

⁷⁸ Շանթարգել, «Հայ հորիզոնէն», *Շանթ*, 15/28 Օգոստոս 1912, էջ 68:

⁷⁹ Շանթարգել, «Հայ հորիզոնէն», *Շանթ*, 1/14 Յուլիս 1913, էջ 299:

⁸⁰ «Հայաստանէն պատուիրակութիւն», *Երեւան*, 4 Հոկտեմբեր 1925:

⁸¹ «Ժամանում», *Երեւան*, 15 Նոյեմբեր 1925:

⁸² Տե՛ս՝ «Տեսակցութիւն մը ՀՕԿի պատուիրակութեան հետ», *Երեւան*, 4 Ապրիլ 1926. նաեւ՝ «Բարի ճանապարհ» (խմբագրական), *Երեւան*, 4 Ապրիլ 1926:

⁸³ Կարէն Միքայէլեան, «Ամերիկահայ տպարարութիւններ», *Երեւան*, 29 Սեպտեմբեր 1926:

Բանաստեղծ Գուրգեն Մահարի (1903-1969), որուն Եսայեան հանդիպած էր Երեւանի մէջ⁸⁴, իր նամակով անդրադարձած է տարածայնութեան մը, ըստ որուն *Դրօշակ* հրատարակած էր բանաստեղծութիւններ Ե-դիշէ Չարենցէն ու իրմէ, «սիրաշահող տողեր»ով հանդերձ⁸⁵: Չարենց յատկապէս եւ Մահարի նուազ չափով դաշնակցական պաշտօնաթերթի ուշադրութեան առարկայ եղած էին նախորդ վեց ամիսներուն, թէեւ անոր հակաբոլշեփկեան կեցուածքը բնորոշուած էր ժխտական դիրքորոշումով Չարենցի եւ ընդհանրապէս խորհրդահայ «պրոլետարական» գրականութեան հանդէպ: Այսպէս, Յունուար 1927ին գրուած թղթակցութիւն մը տեղեկագրած է Դեկտեմբերի վերջերուն կայացած «Հոկտեմբեր» եւ «Նոյեմբեր» հակառակորդ միութիւններու համերաշխական համագումարին մասին եւ պնդած, որ «*մի Չարենց կայ, որին երկինք են բարձրացնում, բայց վերջ ի վերջոյ, եթէ առարկայօրէն դատելու լինենք, միջակ մի գրող է*», որ համեմատելի չէր Վահան Տէրեանի, Յովհաննէս Թումանեանի կամ Աւետիք Իսահակեանի հետ. «*Եւ այդ անապայտում Վանանդեցիները, Ալազաններն ու Մահարիներն են աղմկում*»⁸⁶: Այս շրջագիծին մէջ, *Դրօշակի* մէջ անգոյ հրապարակումը եւ դրական վերաբերմունքի արժանանալու կեղծ լուրը քաղաքական սադրանք մըն էր երկու գրողներուն դէմ: Նա-մակը գրուելէ շուրջ երկու շաբաթ ետք, Մահարի վտարուած է պրոլետարական գրողներու կազմակերպութենէն, երբ անոր վարչութեան *Ֆրակց-իան* որոշած է, որ ան «բացայայտ գլորուել է հակայեղափոխութեան գաղափարական դիրքերը», ինչպէս 5 Յուլիս 1927ին Նայիրի Չարեան հաղորդած է ՌԱՊՊի (Պրոլետարական Գրողներու Ռուսաստանեան Ընկերակցութիւն) քարտուղար Ա. Սելինովսկիին: Նոյն նամակին մէջ, Չարեան չէ վարանած յիշելէ Մահարիի «մեղքերը», որոնց շարքին շինծու բանաստեղծութիւնը, «որը ծաղրում է Մարքսին եւ Լենինին, եւ արտայայտում է թունտ *պեսիմիզմ սոցիալիզմի* շինարարութեան նկատմամբ» եւ որ

⁸⁴ Զապէլ Եսայեան, *Պրոմէթէոս ազգաբազրուած (ճամբորդական նօթեր)*, հրատ. ՀՕԿի Ամերիկեայի Շրջանի Կեդրոնական Վարչութեան, մատենաշար թիւ 1, տպ. Թագուր Իսաչիկեան, Մարտէլ, 1928, էջ 332:

⁸⁵ Տե՛ս՝ Գուրգեն Մահարի, *Երկերի լիակազար ժողովածու 15 հատորով, հատոր 14(1)*, «Անտարես», Երեւան, 2018, էջ 35-36 (խորհրդահայ ժամանակակից ուղղագրութեամբ): Նամակը 2019ին հրապարակուած է առցանց՝ բնագրի 1922ի ուղղագրութեամբ եւ կարգ մը թիւրընթերցումներով (Լիլիթ Աազեան, «Մահարու անտիպ նամակը Զապէլ Եսայեանին՝ «նոր մարդուն» փնտռելու մասին», *Մեդիամաքս*, 26 Յունուար 2019, <https://mediamax.am/am/news/pahoc/32017/>):

⁸⁶ Զեմս, «Պրոլետխայտառակութիւն», *Դրօշակ*, Ապրիլ 1927, էջ 126-127. նաեւ՝ Վահայ, «Նոր կենցաղը», *Դրօշակ*, Նոյեմբեր-Դեկտեմբեր 1926, էջ 341-42. նաեւ՝ Ծիծեռնակ, ««Դաշնակցութիւնը դրանն է...»», *Դրօշակ*, Նոյեմբեր-Դեկտեմբեր 1926, էջ 344-346. նաեւ՝ Ս. Երկիրեան, «Պրոլետգրականութիւն», *Դրօշակ*, Մայիս 1927, էջ 133:

«տպագրուել է արտասահմանեան դաշնակցական (հակայեղափոխական) «Դրօշակ» թերթում՝ Մահարիի ստորագրութեամբ», ստանձնելով, գրականագէտ Գրիգոր Աճեմեանի խօսքով, «ընկերոջ անձնական հարցի վերաբերեալ զեկուցող-դատախազի դերը»⁸⁷:

Վերջապէս, Եսայեանի նամակը Յուլիա Փուշմանին եզակի, սակայն խօսուն նմուշ մըն է անոնց երկարամեայ բարեկամութեան: Նամակի եզրափակիչ տողերուն մէջ ոգեկոչուած Սկիտարը մարմին պիտի առնէր քանի մը տարի ետք, Եսայեանի *Միլիհարի պարտէզները* ինքնակենսագրական գործով⁸⁸:

Պատճէներու թղթածրարը, որմէ քաղուած են այս նամակները, կը ներկայացնէ Փուշմանի հաւաքածոյին մէկ մասը, ինչպէս կը պարզեն ա-նոր կցուած երեք յօդուածներու լուսապատճէները, որոնցմէ ամենէն կարեւորը Չուգասզեանի հրապարակումն է⁸⁹: Բոլոր նամակները լոյս տեսած են խորհրդային ուղղագրութեամբ, ինչ որ միակ ընդունուած ձեւն էր այդ օրերուն: Այդ հրապարակումին մէջ ընդգրկուած եւ Եսայեանին յղուած եօթը նամակ եւ Յուլիա Փուշմանին ուղղուած նամակը կը վերատպուին բնագրային հարազատութեամբ եւ աւելի մանրամասն ծանօթագրութեամբ (տե՛ս՝ Ա., Գ., Դ., Է., Ը., Թ., եւ ԺԲ. նամակներ եւ Յաւելուած):

Չուգասզեան վկայած է, թէ Փուշմանի հաւաքածոն այբբենական կարգով դասաւորուած ու էջակալուած էր, իսկ վերջին թիւը 240 էր. «*Եղբայր Փուշմանների մօտ ծանօթանալով այս հազուագիւտ հաւաքածոյին, պարզուեց, սակայն, որ ներկայումս այսպէղ պահպանուած են միայն 129 նամակներ, իսկ թէ ինչ են եղել միւսները՝ յայտնի չէ*»⁹⁰: Երուանդ Չա-վուշեանի

⁸⁷ Գրիգոր Աճեմեան, *Մահարիական. յօդուածներ, քանակէճեր*, «Անտարես», Երեւան 2018, էջ 36:

⁸⁸ 2016ին, նամակը հրապարակուած է համացանցին մէջ՝ «Նամակ Ջուլիա [sic] Փուշմանին» խորագրով, խորհրդային ուղղագրութեամբ եւ կարգ մը ծանօթագրութիւններով: Ունի շարք մը թերութիւններ (https://hy.wikisource.org/wiki/Նամակ_Ջուլիա_Փուշմանին): Աղբիւրը նշուած չէ. չենք բացատր, որ նախապէս լոյս տեսած ըլլայ մամուլին մէջ:

⁸⁹ Միա երկու լուսապատճէները նուիրատուութեան լուրեր են («Փուշմանի նամականին», *Հայրենիքի ծայն*, 4 Ապրիլ 1973 եւ «Յովսէփի Փուշմանի նամակների հաւաքածուն», *Լրաբեր*, 19 Մայիս 1973):

⁹⁰ Չուգասզեան, «Նորայայտ նամակներ», էջ 147: 1986ին Բ. Չուգասզեանի որդին՝ արուեստաբան Լեւոն Չուգասզեան, գրած է թէ «Փուշմանի այս բացառիկ հաւաքածուի մի մասը բարեբարար պահպանում է Հայաստանի գրականութեան եւ արուեստի թանգարանում, իսկ մնացած նշխարները հայրենադարձուելու իրենց հերթին են սպասում նկարչի որդիների՝ ծերունագարդ Արսէն եւ Արմանդ Փուշմանների մօտ Նիւ Եորքում» (Լեւոն Չուգասզեան, «Նկարչութեան բանաստեղծը»՝ Յովսէփի Փուշման», *Սովետական գրականութիւն*, Նոյեմբեր 1986, էջ 129. հմմտ.՝ նոյն, «Յովսէփի Փուշմանը եւ գրողները», *Հայրենիքի ծայն*, 2 Սեպտեմբեր 1987):

եւ Կարէն Միքայէլեանի նամակներուն բնագրերը չկան ԳԱԹի Փուշմանի եւ Եսայեանի ֆոնտերուն մէջ⁹¹: Հետեւաբար, կրնանք ենթադրել, որ անոնց պատճենները թերեւս մնացորդը ըլլան հաւաքածոյի ցարդ անյայտացած մասին:

Ա.- ԱՐՏԱՇԷՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ⁹²

Մայկարա 12/25 Դեկտ[եմբեր] 1907

Ազնիւ բարեկամուհիս,

Ամօթապարտ եւ զոջահար եմ ձեզի գրած ըլլալուս նախորդ նամակս⁹³: Իրաւունք չունէի զձեզ վիրաւորելու: Դժբաղդաբար, բնաւ մտքէս չէր կրնար անցնիլ թէ՛ դուք կրնայիք զգածուիլ այն մտածումով որ՝ ձեր վեր-ջընթեր նամակին ոճը տպաւորած ըլլար զիս որեւէ ձախորդ եղանակով: Կը խնդրեմ, ազնիւ բարեկամուհիս, հեռացուցէք ձեր մտքէն այդպիսի կասկած մը: Ձեր նամակները խիստ թանկագին են ինծի համար ամէն անգամ, եւ եթէ թող տայիք որ անելի համարձակ ըլլայի, չպիտի վարանէի յայտարարելու թէ՛ զանոնք անելի յաճախ չկարենալ կարդալու հոգն ունիմ մանաւանդ: Խնդիրն այն է թէ՛ տրուած ըլլալով իմ ընդհանրապէս վերապահոտ, չափազանց դիւրագգած եւ հիւանդագին, զգուշաւոր բնաւորութիւնս, յաճախ կը վախնամ աններելի շատախօսութիւններէ, անզգոյշ վերաբերումներէ, եւ կը կասկածիմ թէ մի գուցէ ձեզի հանդէպ անհաճոյ ու ծանծրացուցիչ ընթացքի մը մէջ գտնուիմ, ինքնամոռացման թափի մը մէջ: Ահա՛ այդ է պատճառը որ երբեմն կը մղուիմ, անզիտակցօրէն, իմ կողմէս (իբր թէ) խանգարուած բարեկամական ներդաշնակութիւնը կանոնաւորելու, եւ ասիկա այնպիսի վերապահոտ ու ձախորդ խօսքերով, այնպիսի անճահ ընթացքով մը, ինչպէս տեսաք, որք անելի պէտք ունին ձերինին նման բարեկամական անկեղծ ներողամտութեան, քան արժանի են փոխարինուելու ցրտութեամբ կամ հեզանքով: Ուստի եւ, կը խնդրեմ, ներեցէ՛ք ինծի: Վասնզի եթէ կայ մէկը՝ որուն հանդէպ ներելի չէին իմ այդ զգուշութիւններս, կասկածներս, վերապահումներս, այդ միակ անձը դուք էք, դուք՝ որ ամէն անգամ իմ հետս վարուած էք այնքան ներողամտօրէն: Այս անգամ ալ, ձեր տողերուն ընդմէջէն, լիովին զգացի ու վայելեցի այն խորին ու սիրալի անկեղծութիւնը, այն անշահախնդիր ջերմ բարեացակամութիւնը, որով կը ջանայիք իմ տկարութիւններուս մէջ սրտապնդել զիս, վանելու համար դելը՝ որմէ հալածական եմ: Ձեր խօսքերը տպաւորիչ էին, իբր թէ զանոնք լսէի ձեր շրթունքներէն իսկ արտաբերուած: Շնորհա-պարտ

⁹¹ Շնորհակալ ենք բանասիրական գիտութիւններու թեկնածու Արծուի Բախչինեանին, որ մեր ունեցած պատճեններուն եւ ԳԱԹի մէջ պահուած բնագիրներուն ստուգումը կատարեց ընդառաջելով մեր խնդրանքին:

⁹² ԳԱԹ, Յովսէփի Փուշմանի ֆոնտ (ՅՓՖ), թ. 54:

⁹³ Նամակը պահպանուած չէ:

եմ ու երախտամոռաց չեմ կրնար ըլլալ, իսկ երբ «Կեղծ Հանճար-ներ»ուն⁹⁴ մասին ձեր ըրած կարգադրությունը կը յայտնէք ինձի, պարզապէս կը շուարեցնէք զիս: Ի՞նչպէս կրնայի հատուցանել այդ բոլորը, որք փառքի թանկագին տիտղոսներ են իմ անարժանատրութեանս համար: Որքա՛ն կը հպարտանամ խորհելով թէ՛ այդ գեղեցիկ գրքին, «Կեղծ Հանճարներ»ուն ստեղծագործութեան մէջ, անուղղակի դեր մը ունեցած եմ: Եւ հիմա որքա՛ն անհամբեր եմ, այն հատորը ձեռքերուս մէջ ունենալու, զայն փայփայելու, զայն թղթատելու, անով պարծենալու համար:

Այսօր շատ չխօսիմ ձեզի իմ *découragement*ներուս⁹⁵ վրայ: Միայն թէ՛ թոյլ տուէք որ բացատրեմ. *découragement*է՛ անելի՛ դժուարահաճութիւն է իմս: Պարզապէս չեմ հանիր գրածներուս. տղայական ու անկատար կը գտնեմ զանոնք: Ապա թէ ոչ՝ աշխատելու ջանքը չէր որ բոլորովին պիտի պակսեր ինձի: Յետոյ, հաւատալով հանդերձ անկեղծութեանն ուրիշներու այն վկայութեան՝ թէ գրածներս բոլորովին անընթեռնելի բաներ չեն, նորէն կը մնամ ես ինքզինքիս միակ բացարձակ դատաւորը, անգույթ, խստաբա-րոյ, աններող դատաւոր մը, որ պահանջատիրութիւններով լեցուն է: Անցնի՛նք:

Չէիք ուզած մանրամասնօրէն խօսիլ ձեր ֆռանսերէն [sic] հատորին վրայ⁹⁶: Յետոյ նաեւ, եթէ պատշաճ նկատած ըլլայիք, ի հարկէ անելի երկարօրէն գրած կ'ըլլայիք ինձի ձեր գրական աշխատութիւններուն մասին: «Բիւզանդիոն»էն⁹⁷ ու «Մամուլ»էն⁹⁸ ուրիշ թերթ չտեսնելով գրեթէ, («Մասիս»ը⁹⁹ ցանցառօրէն) *au courant*¹⁰⁰ չեմ մեր գրական շարժումին: Բայց մեծ հաճոյքով կարդացի T[h]alassoի¹⁰¹ հատորին ձեր գրախօսականը, «Մամուլ»ին մէջ¹⁰²: Ձեր խորհրդածութիւնները մեր արեւելագէտներու (?) մա-

⁹⁴ Զապէլ Եսայեանի «Կեղծ հանճարներ» վէպը 1905-1907ին, ընդմիջումներով, լոյս տեսած է *Արեւելեան մամուլ* մէջ, ուր անաւարտ մնացած է: Ամբողջութիւնը լոյս տեսած է 1910ին:

⁹⁵ Յուսահատութիւններուս (ֆրանս.):

⁹⁶ Եսայեան իր ֆրանսերէն գրութիւնները հատորով լոյս ընծայելու ծրագիրը իրականացուցած չէ:

⁹⁷ *Բիւզանդիոն* (1896-1918), պոլսահայ օրաթերթ: Հիմնադիր ու խմբագիր՝ Բիւզանդ Քէչեան:

⁹⁸ *Արեւելեան մամուլ* (1871-1909), զմիտնիստիկ շաբաթաթերթ: Հիմնադիր-խմբագիր՝ Մատթէոս Մամուրեան (1871-1901), այնուհետեւ՝ Հրանդ Մամուրեան (1901-9):

⁹⁹ *Մասիս* (1852-1908), պոլսահայ օրաթերթ, 1884-1908ին՝ շաբաթաթերթ: Հիմնադիր-խմբագիր՝ Կարապետ Իփիւճեան (1852-84):

¹⁰⁰ Տեղեակ (ֆրանսերէն):

¹⁰¹ Ատուֆ Թալասօ (1858-1919), արեւելեան ծագումով ֆրանսացի գրագէտ, հեղինակ՝ բազմաթիւ արեւելագիտական աշխատութիւններու:

¹⁰² Զապէլ Եսայեան, «Նօթեր ֆրանսական գրականութենէն», *Արեւելեան Մամուլ*, 28 Նոյեմբեր 1907, էջ 1192-98:

սին, խիստ ուշագրաւ էին ու գեղեցիկ¹⁰³: Պոլսահայ բովանդակ գրակա-նութիւնը ի՞նչ է հիմա,- անդարմանելի թութակաբանութիւն մը եւ ձեւա-պաշտութիւն մը: Անտոնեաններ¹⁰⁴, Պարսամեաններ¹⁰⁵, Ենովք Արմէն-ներ¹⁰⁶ չե՞ն որ կը վարեն (!) գրական կեանքը:

Կը յուսամ թէ այս անգամ կրցայ դարմանել նախորդ նամակիս ծախորդ տպաւորութիւնը: Եւ եթէ ձեզի անմիջապէս կը գրեմ, ասիկա ըսել կ[']ուզէ պարզապէս՝ թէ հեռի գծեզ կարդալէ ծանծրացած ըլլալէ, մանա-ւանդ կը խնդրեմ որ յաճախ յիշէք զիս, ի մտի ունենալով թէ՛ ձեր հեռաւոր բարեկամին գրելով, ամէն անգամ երախտապարտ ըրած կ'ըլլաք զինքը:

Հա՞րկ է ըսել թէ մեր տնեցիներուն¹⁰⁷ միշտ կը խօսիմ ձեր վրայ[,] թէ անոնք հետաքրքրութեամբ ու պարբերաբար ինծի կը հարցնեն «Տիկին»ին մասին: Միայն թէ, պէտք է խոստովանիմ որ, ձեր վերջին նամակը չկար-դացի իրենց, իր խիստ մտերմական հանգամանքին եւ մանաւանդ ուղղա-կի ինէ բոխած եւ ինծի համար իրաւամբ քիչ մը նուաստացուցիչ պատ-ճառներէ թելադրուած ըլլալուն հետեւանքով:

Հիմա անհամբերութեամբ պիտի սպասեմ ձեր նամակին, խնդրելով որ ձեր կարգին ինքզինքնիդ բռնադատուած չզգաք որեւէ եղանակով, եւ գրէք ինծի ձեր լաւագոյն տրամադրութեան մէջ, երբ ունենաք զայն:

Ձերդ անձնուէր եւ երախտապարտ
ԱՐՏԱՇԵՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Բ.- ԵՐՈՒԱՆԴ ՉԱՎՈՒՇԵԱՆ¹⁰⁸

5 սեպտեմբեր] 1908 թ. Հիսար

Ազնիւ Տիկին Չապէլ Եսայեան

Բարիզ

Տիկին՝ն

¹⁰³ «Ի՞նչ կ'ընեն մեր արեւելագէտները, արեւելեան լեզուներու հմուտները եւ բա-նաստեղծները. իրենց ասպարդին եւ ամուլ գիտութիւնը հազիւ թէ քարին քանի մը անօգուտ դասագիրք կը հրատարակէ եւ կամ արդէն բացուած եւ հազար անգամ անցուած շափողներու մէջ ուրք կոխելու համարձակութիւնը կուտայ» (անդ, էջ 1198):

¹⁰⁴ Արամ Անտոնեան (1875-1951), լրագրող, խմբագիր ու արձակագիր:

¹⁰⁵ Մերուժան Պարսամեան (1883-1948), բանաստեղծ:

¹⁰⁶ Ենովք Արմէն (1883-1968), գրադատ ու խմբագիր: 1907ին Մասիսի խմբագիրն էր:

¹⁰⁷ Յարութիւնեանի ընտանիքին անդամներն էին ծնողները, եղբայրը՝ Վահան, եւ քոյրը՝ Վերգինէ:

¹⁰⁸ Նամակը կը կրէ 108 թիւը:

Մինչեւ այսօր շնորհաւորութեան շատ մը նամակներ առի¹⁰⁹, անոնցմէ ամենէն աւելի ձեր նամակը զիս ուրախացուց: Իրա՛ւ է, կիները շատ մեծ ազդեցութիւն ունին մեր վրայ: Մանաւանդ ձեզ նման ազնիւ հոգի եւ կրող ունեցող կիները: Շատ շնորհակալ եմ իմ մասիս ձեր ցոյց տուած համակրանքին համար:

Գրած էք որ, արտասահմանէն թափած խել մը աղտոտ մարդիկ, ինքզինքնին ջերմ հայրենասէրներ ցոյց տալով, ժողովուրդը խաբել կ[']ուզէ եւ կը հարցնէ՞՞ թէ ինչո՞ւ լուրջ աշխատանք մը չենք կազմակերպեր այդ պոռոտախօսներուն դէմ:

Այդ մասին անհոգ եղէք. եթէ անոնք իրականապէս ժողովուրդին վնասելու չափ առաջ տանին իրենց լրբութիւնը, այն ատեն կը տեսնուինք իրենց հետ: Պոլսոյ ներկայ ազատ վիճակը շատ նպաստաւոր է այժմ շառլաթաններու համար:

Գօշեանի մասին տեղեկութիւն ուզած էք¹¹⁰: Ինքը հիմա առողջ ու հանգիստ է Ատաբազար իր ծնողացը քով: Եգիպտական կառավարութիւնը ծանօթ դատավարութենէ վերջ, աքսորելու պատրուակին տակ զինքը թուրք կառավարութեան յանձնեց¹¹¹: Շատ գէշ պիտի ըլլար իր վիճակը, եթէ վերջին դէպքերը վրայ չհասնէին: Մեզի հետ բանտէն ելաւ եւ քանի մը օր Պոլիս մնալէ վերջ, Ատաբազար գնաց քիչ մը հանգիստ ընելու, որուն շատ պէտք ունէր:

¹⁰⁹ Կ'ակնարկովի Օսմանեան յեղափոխութենէն ետք տրուած համաներումին (12 Յուլիս 1908), որուն հետեանքով Չափուշեան ազատ արձակուած էր՝ այլ բանտարկեալներու շարքին («Բանտարկեալներն արձակուած», *Բիզանդիոն*, 16/29 Յուլիս 1908):

¹¹⁰ Զարեհ Գոշեան (?-1915), վերակազմեալ հնչակեան գործիչ: Հաստատուելով Ատաբազար, 1910ին մաս կազմած է տեղւոյն Կեդրոնական վարժարանի խնամակալութեան: Նահատակուած է Մեծ Եղեռնին:

¹¹¹ Զ. Գոշեան Եգիպտոս ապրած է համիտեան տարիներուն: Ամբաստանուած էր Արփիար Արփիարեանի սպանութեան (Փետրուար 1908) մասնակցութեամբ: 6 Յունիս 1908ին, Գահիրէի եղեռնադատ ատեանը Պետրոս Հիանեանը մահուան դատապարտած էր իբրեւ մարդասպան (զխատուած է 20 Օգոստոսին), իսկ Գոշեան՝ անպարտ արձակած, բայց «*երկու ժամ յետոյ դարձեալ ձերբակալուելով աքսորուած է եգիպտական հողէն, ոստիկանական հրամանատարին եւ ներքին գործոց նախարարին կարգադրութեամբը*» («Զարեհ Քօշեան», *Լուսաբեր*, 13 Յունիս 1908): Սակայն, Յունաստան ղրկուելու տեղ, զինք փոխադրող նալը հասած էր Իզմիր եւ օսմանեան իշխանութիւնները Գոշեանը ձերբակալած էին: Եգիպտական *Փրոկրէ* ֆրանսերէն թերթը կիսապաշտօնական ձեւով յայտնած է, թէ «*եգիպտական ոստիկանութիւնը պիտի շարունակէ թուրք ոստիկանութեան յանձնել այն հայերը որ այս երկրին խաղաղութիւնը վրդովեն եւ հարուստ հայերէն սպառնալիքով դրամ պահանջեն*» («Ներքին», *Լուսաբեր*, 9 Յուլիս 1908. նաեւ՝ «Գոշեանի խնդիրը», *Լուսաբեր*, 25 Յուլիս 1908): Տե՛ս նաեւ՝ Վահան Թէ-քէեան, «Գոշեանի պարագան», *Լուսաբեր*, 11 Յուլիս 1908:

Չափազանց ուրախ պիտի ըլլամ երբ Պոլիս վերադառնաք¹¹² եւ ան-ձամբ տեսակցինք: Ձեր գաւառ երթալու մտադրութիւնը հիմնաւի կը գտնեմ. ձեզ նման կարող ու զարգացած կին մը ինչե՛ր չի կրնար ընել մեր խեղճ ժողովուրդին բարօրութեանը համար: Ես ձեզ լաւ կը ճանչնամ. Լեւ-տնը¹¹³ ինձ շատ խօսած էր ձեր անզուգական նկարագրի մասին: Ո՞ր է ինքը. մինչեւ հիմա իրմէ նամակ առած չեմ. Մուշեղին¹¹⁴ գրած էր. անկէ իր հասցէն առի եւ նամակ մը գրեցի. կը յուսամ քիչ օրէն պատասխանը կլ[']առնեմ: Լսածիս նայելով փախստականի վիճակ մը ունի եղեր հոտ¹¹⁵, այն ատեն լաւ կլ[']ընէ եթէ Պոլիս գայ. ես ալ հոս արդէն պէտք ունիմ ան-կեղծ բարեկամներու աջակցութեան¹¹⁶: Ազնիւ Տիկին, չէք կրնար երես-կայել իմ ներկայ վիճակս. բանտին մէջ հազար անգամ անելի հանգիստ էի, կրնամ ըսել. ամէն օր նոր, նոր ցաւալի լուրեր կլ[']ինամամ: Բարեկամ-ներս, որոնց վրայ կատարեալ վստահութիւն ունէի, իրարմէ բաժնուած, մէ-կը մէկ տեսակ կը գրէ, միւսը ուրիշ տեսակ: Ասկէ գատ՝ խել մը ինձի միայն անունով ծանօթ անձեր, Պոլիս եկած, յանուն մեր կուսակցութեան կը խօսին եւ կը գործեն. առանձին կարելի չէ անոնց դէմ մաքառիլ: Լեւտնի պէս մէկ քանի բարեկամներ պէտք է քովս ունենամ. այն ատեն վստահ եղէք որ, յաղթանակը մեր կողմը պիտի ըլլայ եւ անամօթ ու անխիղճ զրպար-տիչներու դիմակները պիտի վար առնենք իրենց ազգադաւ արարքները խայտառակելու համար ժողովրդեան առջեւ:

Չափազանց ուրախ պիտի ըլլամ, եթէ մինչեւ ձեր Պոլիս գալը, ինձի ուրիշ նամակներ ալ գրէք:

Խորին յարգանքներով
Ձերդ
Ե. ՉԱՎՈՒՇԵԱՆ

Հասցէս
Yervant Tchavoushian
poste restante anglaise
Galata

¹¹² Չապէլ Եսայեան Պոլիս ժամանած է 12 Սեպտեմբեր 1908ին (տե՛ս՝ Տիգրան Եսայեանին ուղղուած 16 Սեպտեմբեր 1908ի նամակը՝ Եսայեան, *Նամակներ*, էջ 69):

¹¹³ Լեւոն Լարենց (Քրիշճեան, 1875-1915), խմբագիր, հանրային գործիչ եւ թարգմանիչ, Մեծ Եղեռնի զոհերէն:

¹¹⁴ Մուշեղ եպս. Սերոբեան (1869-1951), յետոյ արքեպիսկոպոս (կարգաթող՝ 1922ին): Վերակազմեալ հնչակեան, ապա՝ ռամկավար գործիչ: 1906-10ին՝ Ատա-նայի առաջնորդ:

¹¹⁵ Լարենց 1907-8ին Աղեքսանդրիա գտնուած է: Արփիարեանի սպանութենէն ետք, անցած է Աթէնք, իսկ այնուհետեւ՝ Պոլիս:

¹¹⁶ Լարենց վերադարձած է Պոլիս Սեպտեմբերի կէսերուն (Լեւոն Քրիշճեան, «Յայտարարութիւն», *Քիզանդիոն*, 4/17 Սեպտեմբեր 1908):

Գ.- ԴԱՆՈՒՇ ՇԱՀՎԵՐԴԵԱՆ¹¹⁷

25 փետրարի 1922

Մեծարգոյ
Տիկ. Եսայեան

Նախ ներողութիւն եմ խնդրում, որ ձեր նամակին չկարողացայ անմիջապէս պատասխանել: Ապա յայտնում եմ ձեզ, որ նամակները արդէն ուղարկած եմ վստահելի անձնաւորութեան միջոցով: Պ. Անդրէասեանի¹¹⁸ նամակը ուղարկել եմ պ. Թումանեանին¹¹⁹: Ինչ վերաբերում է պ. Թումանեանի առողջութեանը, պիտի ասեմ որ դժբախտաբար նա դեռ հիւանդ անկողնում պառկած է, դրութիւնը վտանգաւոր չէ, բայց ծանր է¹²⁰: Եթէ նոր լուր ստանամ պ. Թումանեանի առողջութեան մասին, անմիջապէս կ'այայտնեմ ձեզ:

Յարգանքներով
Դ. ՇԱՀՎԵՐԴԵՎ

Դ.- ՇԱՀԱՆ Ռ. ՊԵՐՊԵՐԵԱՆ¹²¹

[Կ. Պոլիս], 24 Մարտ 1922

Սիրելի Տիկին Եսայեան

«Բարձրավանք»ի¹²² ընկերներս պաշտօն տուին ինձի խնդրելու Ձեզմէ Ձեր աշխատակցութիւնը մեր ամսագրին: Գիտէք թէ որքա՛ն սիրով կը կատարեմ այդ յանձնարարութիւնը: Նոյնպէս կը յուսամ որ կ'զգաք թէ ամենքս ալ որքան թանկագին կը համարենք Ձեր բերելիք բաժինը «Բարձրավանք»ի գործին¹²³:

Ներեցէք որ այսօր ատելի չգրեմ: Սպասելով ձեր լուրերուն:

Մնամ Ձերդ սիրով
Շ. Ռ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

¹¹⁷ ԳԱԹ, ՅՓՖ, թ. 60: Գրուած է «Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութիւն Տնտեսական Ներկայացուցչութիւն / République Socialiste Soviétique d'Arménie Mission Économique» նամակաթուղթի վրայ: Հասցէ՝ Constantinople, Galata, Sigorta Han, Téléphone: Pera 1421.- Télégr. SOVARMIS:

¹¹⁸ Ինքնութիւնը կարելի չէրաւ պարզել:

¹¹⁹ Յովհաննէս Թումանեան (1869-1923), բանաստեղծ, հանրային գործիչ:

¹²⁰ Հաւանաբար Եսայեան կարդացած էր հետեւեալ լատինական լուրը. «Յովհաննէս Թումանեան, Հ.Օ.Կ.ի նախագահը, ծանր հիւանդ է, կը գրէ Թիֆլիսի *Նոր Կեանքը*» («Հայկական կեանք», *Ճակատամարտ*, 21 Յունուար 1922):

¹²¹ ԳԱԹ, ՅՓՖ, թ. 69:

¹²² *Բարձրավանք*, գրական ամսագիր: Հրատարակուած է 1922ին, Կ. Պոլսոյ մէջ: Խմբագիրներ՝ Յակոբ Օշական, Կոստան Զարեան, Վահան Թէքէեան, Շահան Ռ. Պէրպէրեան եւ Գեղամ Գաւաթեան:

¹²³ Ձ. Եսայեան աշխատակցած չէ *Բարձրավանք*ին:

Ե.- ԼԵՒՈՆ ՇԱՆԹ¹²⁴

Սիրելի՛ տիկին,

Խորապես շնորհակալ եմ ձեր սիրալիկ նամակին եւ անչափ ուրախ ձեր ժպտուն ու դրական տրամադրութենէն: Ես ալ բարեբախտաբար մուրող չեմ եղած եւ հիմա ալ չեմ, տնտեսական անապահովութեան կարծես տեսակ մը վարժուեցանք ամէնքս ալ. հայրենիքի ցաւերուն դէմ դրեր ենք փիլիսոփայութիւնը, իսկ գրիչը ձեռքէս վար ձգելու միտք չունիմ. եթէ նոյնիսկ ստիպուիմ խանութպան դառնալու կը գրէի ճամբուն, կը գրեմ եւ հիմա. ինչ ըսել կ'ուզէ, ուրիշ կը լինի մարդու տրամադրութիւնն ու աշխատանքը, երբ վաղուան հոգը չի ճնշէ ուսին. բայց այդ շռայլութիւնը չէ տրուած հայ արուեստագէտին, ան ալ իր քսորուած օրերուն մասնաւորապէս:

Առայժմ Փարիզ գալու հաւանականութիւն չունիմ. գուցէ մէկ-երկու ամիսէն հարկադրուիմ անցնելու Պոլիս, թէեւ ամենեւին հրապոյր չունի ինծի համար այդ միջավայրը: Պոլսէն ստացայ տոմսակ մը, որով ինծի թղթակից անդամ կ'ընտրեն Արուեստի տան¹²⁵, նամակ-հրաւիր մըն ալ Փարիզէն, ուր կար ձեր ստորագրութիւնը: Թերթերէն գիտեմ Արուեստի տան գոյութիւնն ու դասախօսութիւնները, բայց պարզ չէ ինծի ո՛չ իր նպատակը եւ ո՛չ ծրագիրը. ժողովրդական համալսարանի նման բան մը կը թուի, այն ատեն ի՞նչ է լինելու Փարիզի ճիւղի դերը, եւ ի՞նչ է մասնաւորապէս թղթակից անդամի պարտականութիւնը, քանի որ իրաւունքներու մասին կարծեմ խօսիլն ալ ւսելորդ է:

Իմ ու Ջաւոյի¹²⁶ յարգանքն ու բարեւները ձեզի:

ԼԵՒՈՆ ՇԱՆԹ

1922 մայիս 8

Մոնպելիէ

¹²⁴ ԳԱԹ, ՅՓՖ, թ. 61:

¹²⁵ Հայ Արուեստի Տունը հիմնուած է Պոլսոյ մէջ, 11 Ղեկտեմբեր 1921ին, նպատակ ունենալով «*հետքամբել հայ արուեստի զարգացման՝ համախմբելով հայ գրականութեան եւ գեղարուեստին բոլոր ճշմարիտ ուժերը եւ սրտեղծելով որոնումներու միջավայր մը*» («Հայ Արուեստի Տան հիմնադիր ժողովը», *Ճակատամարտ*, 13 Ղեկտեմբեր 1921): Կեդրոնական Խորհուրդի ատենապետն էր Վահան Թէքէտանը, իսկ ատենադպիրը՝ Յ. Ճ. Սիրունին: Կազմակերպական աշխատանքը ասորտած է երկու ամիս ետք («Հայ Արուեստի Տունը հայ ժողովուրդին», *Ճակատամարտ*, 10 Փետրուար 1922):

¹²⁶ Ջաւո (Ջաւահիր) Ներսիսեան-Շանթ (1882-1945), հանրային գործիչ, Լեւոն Շանթի կինը:

Ազնի Տիկին Զապէլ Եսայեան,

Անակնկալ մը պիտի ըլլայ Ձեզի համար սոյն նամակս: Ողբերգական եղաւ մեր վերադարձը դէպի Գահիրե ուր հասած օրս իսկ կրտսեր եղբօրս¹²⁸ յուղարկաւորութեանը մասնակից եղայ՝ անսահման տառապանքով մը սահմռկած... Յետոյ միօրինակ ու դանդաղ օրերը սահեցան, հազալ սկսայ, եւ այնպէս շարունակուեցաւ, մինչեւ որ դժնդակ հիւանդութիւնը (թոքախտ) անկողնարկ ըրաւ ինձ ամիսներով, երկարատեւ եւ անյոյս ամիսներով:

Հիմայ կրնամ ըսել, գոնէ ես ինքս, թէ վտանգը անցուցի, եթէ նորանոր վերիվայրումներ չի մատնեն ինձ ահաւոր յուսալքումին:

Կը պատրաստուիմ Զուիցերիա, Լէյզին, մեկնելու: Հոն պիտի մնամ առնուազն երեք ամիս, կամ անելի, ինչ որ կախում պիտի ունենայ վիճակէս:

Մահուան ժպիտը աչքերուս հանդիպեցաւ խորհրդաւոր միջոցներու խաւարին ընդմէջէն եւ կեանքիս յարութիւնը կ'երագնէ, որովհետեւ կը սիրեմ երիտասարդութեանս արեւը: Երանի թէ բոլորովին փրկուէի այս այնքան դժնդակ յուսահատութենէն որ հոգիս անդունդէ անդունդ կը նետէ անողորձօրէն:

Կը յուսամ որ դուք շատ հանգիստ էք: Ձեր առանձնութեան արգաւանդ արշալոյսները կ'ողջունեն: Որքա՞ն գեղեցիկ էր «Հոգիս արքորեալ»ը, ո-րուն հետեւեցայ մտքիս բոլոր հաճոյքովը¹²⁹: Իրապէս արքորեալներ ենք բոլորս. մենք բոլորս որ Տառապանքին եւ Արուեստին զաւակներն եղանք, մենք բոլորս որ անծանօթ ենք միշտ մեր կեանքին ու մահուան հաղորդականութեանը մէջ՝ ուր երագի մը ստուերը կը փնտռենք ի զուր:

Բարեկամներս խորհեցան ի մի հաւաքել հիւանդութեանս ամիսներուն եւ անկէ առաջ գրած ոտանաւորներս, եւ այսպէս կազմուեցաւ «Արեւի ու Մահուան Երգեր»ը¹³⁰ որ մօտ օրէն լոյս կը տեսնէ¹³¹: Ես այն ժամանակ արդէն Լէյզին հասած կ'ըլլամ¹³² բայց դուք պիտի ստանաք օրինակ մը՝ իբրեւ խոնարհ ընծան բանաստեղծի մը սրտէն:

¹²⁷ ԳԱԹ, ՅՓՖ, թ. 41: Նամակի վերի լուսանցքին վրայ նշուած է՝ «Պատասխանումով 18 Օգոստ[ոսիս]»:

¹²⁸ Մօտաւոր թուականը եւ եղբօր ինքնութիւնը չենք կրցած ճշդել:

¹²⁹ Զապէլ Եսայեանի *Հոգիս արքորեալ* վէպը սկզբնապէս լոյս տեսած է մաս առ մաս Վիեննայի *Արեգ* ամսագրին մէջ (Զապէլ Եսայեան, «Հոգիս արքորեալ», *Ա-րեգ*, Մարտ, Ապրիլ եւ Մայիս 1922):

¹³⁰ Արսէն Երկաթ, *Արեւի ու մահուան երգեր*, Գահիրե, [ա. տ.], 1922:

¹³¹ Տե՛ս՝ «Նոր հրատարակութիւն», *Արեւ*, 5 եւ 9 Յունիս 1922:

¹³² Երկու շաբաթ ետք, *Արեւ* հրատարակած է գիրքին յայտարարութիւնը եւ տեղեկագրած. «Կը լսենք թէ երիտասարդ հեղինակը քանի մը օր առաջ «Հունգարիա» նաւով Զուիցերիա մեկնած է իր խանգարուած առողջութիւնը վերականգնելու»

Կրնա՞մ արդեօք խնդրել Ձեզմէ որպէսզի գրախօսական մը գրէք այս հատորիս մասին եթէ միայն ասիկա սիրելի թուի Ձեզի, եթէ միայն Ձեր հզօր միտքը գեղեցկութեան ժպիտ մը տեսնէ հոն:

Պիտի խնդրէի որ Ձեր գրախօսականը երեւէր «Ազգ-Պահակ»ի¹³³ մէջ, Ամերիկահայերուն համար մասնատրապէս, անոնց որոնք արդար քննադատութեան մը շունչին կը սպասեն միշտ՝ զգալու եւ տեսնելու համար համասփիտ գեղեցկութիւնը կեանքի ու մահուան արեւներուն:

Վստահ եմ որ պիտի չի մերժէք խնդրանքս որուն համար կանխայայտ շնորհակալութիւններս կը յայտնեմ:

Իբրեւ սրտակից քրոջ մը՝ կը համարձակիմ Ձեզի յայտնելու որ նոր հատորիս հատոյթովն է որ դարմանել պիտի տամ հիւանդութիւնս որ սպառին տարագիրի կեանքս Արեւի ու Մահուան միջեւ...

Ուրախ պիտի ըլլայի, անհունօրէն ու սրտազեղօրէն ուրախ եթէ երբեմն գրէիք ինձի, եթէ երբեմն Ձեր աքսորեալ հոգիին կանչը հասնէր իմ աքսորեալ հոգիիս:

Հասցէս կու տամ վարը եւ կը խնդրեմ որ բարի ըլլաք սրտապնդելու ինձ Ձեր մտքին եւ սրտին խանդաղատանքովն որուն քաղցրութիւնովը միշտ թաթաւուն են Ձեր բոլոր գրուածքները:

Մինակս կ'ըլլամ Ջուիցերիա: Հոս կը թողում Ծաղիկս ու Բերկրիկս¹³⁴, անոնց համար պիտի ապրիմ, անոնց համար կը սիրեմ վիշտը որուն հրապոյրը պիտի գտնէք «Արեւի ու Մահուան Երգեր»ուն մէջ:

Եղբայրական ջերմագին բարեւներով՝

ԱՐՍԷՆ ԵՐԿԱԹ

Նոր հասցէս՝
Arsène Yergath Chamlian
Sanatorium “Les Chamois”¹³⁵
Leysin
(Suisse)

համար: Առողջութիւն կը մաղթենք համակրելի հեղինակին» («Լոյս տեսաս», Արեւ, 19 Յունիս 1922):

¹³³ *Ազգ-Պահակ* (1921-1922), ամերիկահայ օրաթերթ (1923էն՝ *Պայքար*), որ ծնունդ առած է Ռամկավար Ազատական Կուսակցութեան հիմնադրութեան (Հոկտեմբեր 1921) յաջորդած *Ազգ* (հայ ռամկավար) եւ *Պահակ* (վերակազմեալ հնչակեան) թերթերու միացումէն: 1922ին, Եսայեան աշխատակցած էր *Ազգ-Պահակ*-ին, լոյս ընծայելով *Արգելքը* վէպը: Մեզի յայտնի չէ, թէ գրախօսած է Արսէն Երկաթի հատորը:

¹³⁴ Ծաղիկ Ճէրիտեան՝ Արսէն Երկաթի կինը, նկարչուհի: Բերկրուհի՝ անոնց դուստրը:

¹³⁵ Հիւանդանոցը պանդոկ մըն էր, որ վերածուած էր հիւանդանոցի, 95 անկողիններով (A. Rollier, “Tuberculosis Finds Cure in the Leysin Heliotherapy Clinics”, *The Modern Hospital*, September 1923, էջ 257):

Է.-ՎԱՐԴԱՆ ՄԱԽՈՒՏԵԱՆ¹³⁶

Յարգելի Տիկին

Ստացայ Ձեր նամակը – շնորհակալ եմ: Երբ Ձեր վերջին հրատարակությունը «Հոգիս աքսորեալ» ինձ հասաւ¹³⁷ առաջին հետաքրքրութիւնս եղաւ տեսնել թէ հայ տիկին մը ո՞ր աստիճանի գիտակ է իւր մայրենի լեզուին եւ ի՞նչ են այն հոգեկան տրամադրութիւնք որք զինքը մղած են գրել, ինչպէ՞ս ըմբռնած է նիւթը եւ անոր արտայայտման միջոցներու գործածութիւնը – զի ամէն ինչ որ վսեմ զգացումէ մը կը բղխի գեղարուեստ է ինձ համար եւ արտայայտութեան միջոցը երկրորդական ըստ իս:

Գեղարուեստականի մը գործը դատել կրնալու համար բաւ է տեսնալ նկարչին մէկ գործը միայն, կարդալ գրքի մը մէկ էջը, լսել երաժշտութեան մը քանի մը երգ-հանգը [sic]՝ զգալու համար թէ ո՞վ է գեղարուեստականը, եւ ես Ձեր գրքոյկի առաջին տողերը միայն կարդալուս դրած էի զՁեզ՝ արդէն գրողներու նոյն շարքին, որոց գրիչը technique բոլոր սրբութեանց գիտակ, բարձր զգացումներէ ծնած վսեմ գաղափարներու հլուօրէն կը հպատակի: Չեմ զարմանար, երբ կըսէք թէ «գեղարուեստի աշխարհին մէջ նկարչութիւնը Ձեզ ամենէն մերձաւորը եւ ընտանին կը թուի»: Կոչուած գեղարուեստական մը պարտի ունենալ գեղարուեստի բոլոր ճիւղերու նախազգացումը, *ճաշակ* (ինչ տգեղ բառ է): Ես տեսած չեմ *նկարիչ* մը որ երաժշտութեան եւ բանաստեղծութեան անընդունակ ըլլայ – գործը թերի է: Այս ճշմարտութեան ապացոյց մ'է Ձեր «Հոգիս աքսորեալ»ը, ուր Դուք նկարչի մը իւր ասպարէզին մէջ ունեցած յուսախափութիւնք [sic] այնչա՛փ կենդանի կերպով կըրցած էք երեւակայել եւ պատկերացնել: Հոն ոչ թէ «յանդգնութիւն», ինչպէս Դուք կըսէք, այլ գեղարուեստական առողջ հոգեբանութիւն եւ բնատուր ծիրք գտայ:

Խնդրեմ ընդունիլ, յարգելի Տիկին, շնորհակալութեանցս եւ խորին յարգանացս հաւաստին

ՎԱՐԴԱՆ ՄԱԽՈՒՏԵԱՆ

Nice 24 յունիս 1922

¹³⁶ ԳԱԹ, ՅՓՖ, թ. 55:

¹³⁷ Զապէլ Եսայեան, *Հոգիս աքսորեալ*, տպ. Մխիթարեան, Վիեննա, 1922: Տե՛ս՝ «Ստացուած հրատարակութիւններ», *Ապագայ*, 10 Յունիս 1922:

Մանչեսթր, 20 Սեպտեմբեր] 1922
Համեստ[ա]փ[այլ] Տիկին

Ձ[ապէլ] Եսայեան

Փարիզ

Տիկին,

Ստացայ Ձեր 9 Սեպտեմբեր] թուակիր նամակը: Բայց այս վերջին օրերուն հանդիսատես եղանք այնպիսի սարսափելի աշխարհաւեր դէպքերու, որ հնար չեղաւ իսկոյն պատասխանել¹³⁹:

Հայ ժողովուրդի արդէն ցանցառ դարձած շարքերն տակաւ կ'նօսրանան եւ [կը] կոտորակուին եւ գերմարդկային ջանք ու ճիգ պէտք է պաղարհին մնալու համար:

Քրիստոնեայ, քաղաքակիրթ, արդարութեան համար կոռուղ եւ մարդասէր Եւրոպան ես վաղուց թաղած էի: Բայց ամէն անոնք, որոնք դեռ բարոյապէս սնանկ եւրոպացիին վրայ յոյսեր ունէին ահա կրնան այժմ գոնէ համոզուիլ տեսնելով Չմիտնիոյ առջեւ եւրոպական մեծ տէրութեանց խաղացած քօմէտին¹⁴⁰...:

Այ այս վերջին Չմիտնիոյ ողբերգութիւնը եկաւ կնիքը դնել բարոյապէս սնանկ Եւրոպայի գերեզմանին:

Արիւն ցանեցին, արիւն պիտի հնձեն:

Ձեր փափաքը մասնաւոր նկատողութեան առի: Հայ Գողգոթան 2 հատոր 968 էջ [եւ] 134 նկար պատրաստ է: Ա. հատորը տպագրուած է 430 էջ եւ 70 նկարով¹⁴¹. Հոկտեմբերի առաջին օրերուն ի վաճառ կ'ելլէ¹⁴²:

Թէպէտ վաճառման ամբողջ գործը եւ արդիւնքը մասնաւոր յանձնախումբի մը միջոցաւ հայ որբերուն նուիրուած ըլլալու¹⁴³ ոչ ոքի նուէր չպիտի տրուի, բայց Ձեզ բացառաբար մէկ հատ կը նուիրեմ. պայմանով որ ոչ ոքի չըսէք, զի ուրիշներ ալ պիտի ուզեն եւ *անհնար է* գոհացում տամ:

Արդէն առաջին հատորին մէջ պիտի գտնէք Ձեր փնտռած դրուագներն ու նկարները: Հայ թշուառ ժողովուրդը խրախուսեցէք որ չի բարոյալքուի, եթէ բարոյալքուի ու անձնավստահութիւնը ցեղին գոյութեան կորսնցնէ

¹³⁸ ԳԱԹ, ՅՓՖ, թ. 67: Գրուած է Մանչեսթրի Հայոց Առաջնորդարանի նամակաթուղթին վրայ (հասցէ՝ 229, Upper Brook Street: Հեռանայն՝ 1074-Rusholme):

¹³⁹ Կ'ակնարկէ Չմիտնիոյ աղէտին (9-22 Սեպտեմբեր 1922):

¹⁴⁰ Կատակերգութիւն (Ֆր.): Կ'ակնարկէ դաշնակից նաւերու ներկայութեան Չմիտնիոյ նաաահանգիստին, որոնք սկզբնապէս չեն յօժարած քարափին վրայ կուտակուած հայ եւ յոյն բնակչութիւնը փրկել:

¹⁴¹ Գրիգորիս Ծ. վարդ. Պալաքեան, *Հայ Գողգոթա. դրուագներ հայ մարտիրոսութենէն. Պերլինէն դէպի Ջօր, 1914-1920*, Ա. հատոր, Մխիթարեան տպարան, Վիեննա, 1922: Բ. հատորը լոյս տեսած է յետմահու (Փարիզ, 1959):

¹⁴² Ծանուցումը տես՝ *Արեգ*, Հոկտեմբեր 1922, էջ 644:

¹⁴³ Տե՛ս՝ Պալաքեան, *Հայ Գողգոթա*, էջ 425:

ահա այն ատեն հայ ժողովուրդը պիտի սրբուի ազգերու պատմութենէն. ծանր օրեր կ'անցնինք: Ձեր գրագէտի հզօր գրչով քաջալերութեան ցօղ մը կարեցուցէք հայ յուսահատ եւ այրած հոգիներուն մէջ:

Բարեկամական ողջունի
Գ. ՎՐԴ. ՊԱԼԱՔԵԱՆ

Թ.- ՓԱՆՈՍ ԹԵՐԼԵՄԷՋԵԱՆ¹⁴⁴

31 Jan[uary] 1923¹⁴⁵
New York

Սիրելի տիկին Եսայան [sic],

Պոլսում, իր ժամանակին, Քո խրկած «Հոգիս Աքսորեայ» գրքոյկը ստացեր եմ: Այդ նուրբ, հոգեբանական գործի վրայ հիացեր եմ, եւ մի քանի գրագէտների ալ տուեր եմ կարդալու: Անկեղծօրէն երախտապարտ եմ որ ինձ այդպէս նուէր մ'ըրած էիք:

Երբէք չկարծես որ Քեզ մոռցած էի. կը հետեւիմ՝ որքան հնար է՝ Քո գրական եւ քաղաքական գործունէութեան: Լսեցի որ սկանտինաւեան երկիրներ պիտի չունես հայ դատի համար պրօպականտա ընելու, յաջողութիւն. բայց հաւատացած եմ որ ուժերիդ 100ին 90ը գրականութեան կուտաս: Ներիր որ այսպէս ուշ կը գրեմ:

Ինձ ալ աշնան հովերը դեղնած տերեւի մը պէս այստեղ ձգեցին¹⁴⁶: Ա Բ Գիմէն պիտի սկսինք կեանքը, երբ ձեռու[ը]նիս կը դողայ եւ ծերացած ենք: Անհուն անորոշութիւն մ'առջես, ստիպ[ողա]բար լեզու սովորելու եւ աշխատելու պիտի սկսիմ:

Համբոյրներս ձեռներիդ

Փ. ԹԵՐԼԵՄԷՋԵԱՆ

Հասցէս՝ - New York
129 E. 26 St.

Ժ.- ՅՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՍԷՔԵԱՆ¹⁴⁷

Նիս, Hotel de la Paix, Nice,
7 Փետր[վար] 1924

Սիրելի տիկին

Շատ եմ ցաւում որ պատեհութիւն չունեցայ Ձեզ ատելի երկար տեսնելու Փարիզում, ինչ որ շատ փափագում էի:

¹⁴⁴ ԳԱԹ, ՅՓՖ, թ. 47: Գրուած է Հայաստանի կոչնակի նամակաթուղթին վրայ (The Gotchnag / An Armenian Weekly / 287 Fourth Ave., New York):

¹⁴⁵ Նամակի առաջին հրապարակումին մէջ, անգլերէն այս թուագրումը կարդացուած է հայերէն՝ 31 Յունիս 1923 (Չուգասգեան, «Նորայայտ նամակներ», էջ 154):

¹⁴⁶ Թէրլէմէզեան Նիս Եորք ժամանած էր 4 Յունուար 1923ին («Ժամանում», Հայաստանի կոչնակ, 20 Յունուար 1923, էջ 84):

¹⁴⁷ ԳԱԹ, ՅՓՖ, թ. 58: Վերի ձախ լուսանցքին վրայ գրուած է «18 Փետրվար», որ վստահաբար Եսայեանի պատասխանի թուականն է:

Թէհրանից ստացած եւ Օմար Խայեամի¹⁴⁸ քառեակները, որից մի օրինակ Յովսէփ Միրզայեանը¹⁴⁹ նուիրել է Ձեզ. այսօրայ փօստով ուղարկում եւ Ձեզ¹⁵⁰:

Նոյնպէս Պ. Սիմոն Յակոբեանը¹⁵¹ յանձնարարել է ինձ, ուղարկել Ձեզ 400 ֆրանկ, որ այսօր մանդայով¹⁵² ուղարկում եմ, խնդրելով, որ բարեհաճէք ստացումը յայտնել ինձ:

Եկայ այստեղ մի քիչ ազատելու հիւսիսային օդից¹⁵³. Եւ իրաւ իրաշալի օդ է այստեղ. բայց կեանքի ժխորը չափազանց մեծ է աշխատել կարենալու համար:

Արտագին բարեւներով եւ յարգանքով՝

Յ. ՄԱՍԷՇԵԱՆ

ԺԱ.- ՄԱՔՍՈՒՏ ՄԻՆՐԴԱՏԵԱՆՑ¹⁵⁴

Պրիւսէլ, 1 Փետրուար 1925

Սիրելի Տիկին Զապէլ Եսայեան,

Գործի բարդութիւններ ու ընտանեկան եւ ընկերային բռնաւոր պարտականութիւններ միանալով ջղային գրգռութեան զիս անկարող դարձուցին գոհացում տալու հոգիիս ամենաջերմ բաղձանքներուն որոնց առաջինն էր ձեզի գրել: Բայց չէ՞ մի որ գրելու համար խաղաղ միտք մը հարկաւոր է ու այդ է որ կը պակսէր: Դուք վերջին մէկ անգամուն գրած էիք թէ 2-3 օրով Պրիւսէլ պիտի գաք – իսկ ես կը յուսայի Յունուար 3ին Ալրշակլ

¹⁴⁸ Օմար Խայեամ (1048-1131), պարսիկ բանաստեղծ եւ փիլիսոփայ:

¹⁴⁹ Յովսէփ Միրզայեան (1868-1935), իրանահայ հանրային գործիչ եւ թարգմանիչ: Հ. Յ. Դաշնակցութեան նախկին անդամ: Եղած է Իրանի խորհրդարանի պատգամաւոր:

¹⁵⁰ Օմար Խայեամ, *Բարբա Թաիեր եւ զանազան*, թարգմ. Յովսէփ Միրզայեան, Թեհրան, 1923: Նոյն տարին, Լեւոն Մեսրոպ հրատարակած էր քառեակներու իր թարգմանութիւնը, յայտնելով, թէ Թեհրանի մէջ տեսած էր Միրզայեանի թարգմանութիւնը. «Դժբախտաբար, եթէ չեմ սխալիր, Միրզայեանց դեռ հրատարակութեան փուլած չէ այդ թարգմանութիւնը, որուն մէջէն քանի մը հատերը կարդացած է ինձի» (Լեւոն Մեսրոպ, *Օմար Խայեամ. կեանքը եւ գործը եւ իր քառեակները պարսկերէն բնագրէն թարգմանուած*, տպ. Ներսէս, Փարիզ 1923, էջ 37):

¹⁵¹ Սիմոն Յակոբեան (1880-1942), գրականագէտ: Հ. Յ. Դաշնակցութեան նախկին անդամ: Հրատարակած է *Արեգ* հանդէսը (1922-24) Վիեննայի եւ Պերլինի մէջ: 1924ին ներգաղթած է Խորհրդային Հայաստան, ուր ստալինեան բռնութիւններուն զոհ դարձած է:

¹⁵² Վճարման թղթատարական հրահանգ (ֆրանս. mandat):

¹⁵³ Մասէիեան Պարսկաստանի դեսպանն էր Գերմանիոյ մէջ (1912-1927):

¹⁵⁴ ԳԱԹ, ՅՓՖ, թ. 59: Գրուած է սեփական նամակաթուղթի վրայ (M. MIHRTADIANTZ / Ingénieur des Arts et Manufactures (E.C.P.) / Constructeur de Bétons Armés):

Չ[օպանեան]ի¹⁵⁵ յօբելեանին ներկայ գտնուիլ¹⁵⁶: Չը յարմարեցաւ: (Այստեղ գրական երեկոյթ մը տեղի ունեցաւ ուր Մալեզեան¹⁵⁷ վերջին քա-ռորդ դարու հայ գրականութեան վրայ ճառելով՝ իր մասին միայն խօսեցաւ եւ իր ոտանաւորները արտասանել տուաւ ու այդ առթիւ Չ[օպանեան]էն ալ մի քանի կտորները արտասանուեցան. ես ալ խօսք առի յիշեցնելով քաղաքակիրթ ժողովուրդի մը յարգանքի պարտքը դէպ ի իր ազգային գործիչները, բայց Մալեզեան իր նկարագրականին մէջ չյիշեց իմ միջամտութիւնս¹⁵⁸. արդիւնք մը յառաջ եկաւ ու պիտի գայ:)

«Տեղերը կը բռնուին» գրած էիք: «Բռնուած են» կրնայիք գրել: Ատիկա գիտցայ Բաշալեանին¹⁵⁹ հոս գալէն ի վեր. Ներսէսեան բերաւ ծխախոտի նմոյշներ եւ սա տեղեկութիւնը թէ՛ ծխախոտի արտահանումը ազատ է, կը բաւէ դիմել արտադրութեան ընկերակցութեան կեդրոնին որ պետական չէ: Ն[երսէսեան] պատրաստուած է մեկնիլ Մոսկուա եւ Կովկաս: Այժմ Նիս գացած է կամ պիտի երթայ հօրը մօտ¹⁶⁰: Պ[արոն] Մանդինեան զիս յուսախաբ ըրաւ քիչ մը¹⁶¹:

Յովսէփի Միանասարեան անունով մէկը անցաւ ասկէ փոփոխ Պեղին երթալու համար եւ ինձ դիմեց. վստահելի մարդ է արդէօ՞ք¹⁶²:

Սիրայիր զգացումներով
Մ. ՄԻՀՐԴԱՏԵԱՆՑ

Հապճեպ

¹⁵⁵ Արշակ Չօպանեան (1872-1954), ֆրանսահայ գրագէտ եւ հանրային գործիչ:

¹⁵⁶ Չօպանեանի փարիզեան յօբելեանը տեղի ունեցած է 3 Յունուար 1925ին, «Կա-ւօ» սրահին մէջ («Ա. Չօպանեանի յօբելեանի հանդէսը», *Ապագայ*, 10 Յունուար 1925):

¹⁵⁷ Վահան Մալեզեան (1871-1966), բանաստեղծ եւ հանրային գործիչ:

¹⁵⁸ Յօբելեանը տեղի ունեցած է 28 Դեկտեմբեր 1924ին, Պրիքսէլի Հայ Ակումբին մէջ, իբրեւ գրական երեկոյի մը երկրորդ մասը՝ յայտագրէ դուրս («Պելճիքահայ կեանքը», *Ապագայ*, 3 Յունուար 1925):

¹⁵⁹ Լեւոն Բաշալեան (1878-1943), արձակագիր եւ հանրային գործիչ:

¹⁶⁰ Խօսքը թերեւ վաճառական, Լոնտոնի եւ Փարիզի պարսկական նախկին հիւ-պատոս Ներսէս խան Ներսէսեանի (1863-?) մէկ որդիին մասին է:

¹⁶¹ Ակնարկութիւնը թերեւ 1927ին Փարիզի 16րդ թաղամասը ապրող վաճառական Վլատիմիր Մանտէնեանի մասին է (*Ֆրանսահայ տարեգիրք*, տպարան Մասիս, Փարիզ, 1927, էջ 329):

¹⁶² Ինքնութիւնը անյայտ է:

Սիրելի տիկին] Ձապել,

Վե՛րջապէս ստացայ երկտող մը Ձեզմէ՛¹⁶⁴: Ճիշտ էք գուշակեր. շատ էի նեղացած: Բայց տուեր էք արդէն Ձեր արդարացումը,- հայ գրողին վիճակը, որմէ ամէն մէկս կը տառապինք մեր չափովը եւ որ մարդս ի՛սկապէս կը վերածէ երբեմն գրի մեքենաներու: Այդ գրի մեքենան երբեմն ես ալ կը դառնամ, այնպէս որ դիւրաւ կ'ըմբռնեմ Ձեր հոգեկան վիճակն ու տառապանքը՝ երբ Ձեր հոգին իր ժամերուն տէրը չէ:

Կը յուսամ թէ այս անգամուան խոստումնիդ այլեւս կոչուած է կատարուելու: Կը սպասեմ մեծ անձկութեամբ Ձեր այնքան թանկագին աշխատակցութեան¹⁶⁵:

«Նաւասարդ»ի¹⁶⁶ առաջին տարին փակուեցաւ. բայց գիտնաք հոգեկան եւ ֆիզիքական ի՛նչ վատնում պէտք եղաւ տարին բոլորելու համար. չեմ գիտեր թէ ստացա՞ք բոլոր թիւերը. ամէն պարագայի մէջ ես դրկած եմ բոլորն ալ: Իմացուցէք որը չունիք:

Հիմա տպագրութեան յանձնած եմ բ. շրջանի ա. թիւը: Ուշացաւ այս թիւին տպագրութիւնը՝ որովհետեւ ռումէն տպարանը ուր լոյս կը տեսնէ ձուլել տուաւ նոր գիր: Այս տարի շատերը խոստացած են աշխատակցիլ: Տեսնենք: Սա հաւաստեմ Ձեզ միշտ տեղն է կորովս, եւ միտք ալ չունիմ յուսահատելու՝ ինչ ալ ըլլան ճամբուս վրայ դիզուած դժուարութիւնները: Ու այդ դժուարութիւններէն շատ կան, հաւատացէք, գաղղութի մը մէջ մանաւանդ՝ ուր հողէն ուժ ձծելու սիրտը չկայ մարդուս քով: Եւ անելուցէք նաեւ սա որ ձեռնարկը կ'ըլլայ անհատական համեստ ուժերով՝ առանց դուրսէն ակնկալութիւններու, կամ կուսակցութեան մը բարոյական ու նիւթական հովանիին, ինչպէս է պարագան այս պահուս լոյս տեսնող գրեթէ մեր բոլոր պարբերականներուն:

Եթէ ունիք վէպ մը «Նաւասարդ»ին տալու՝ կրնանք առանձին հատորով ալ տպել, ինչպէս «Արեգ»ը¹⁶⁷ կ'ընէր: «Նաւասարդ»ը կը յուսամ թէ ի վիճակի պիտի ըլլայ շահ մը ձգելու իր աշխատակիցներուն: Յետոյ ձեզ ըսած էի

¹⁶³ ԳԱԹ, ՅՓՖ, թ. 71:

¹⁶⁴ Եսայեան նամակ գրած էր Սիրունիին 1923ի կէսերուն (Վաչէ, «Արձագանգ», Նաւասարդ, Ա. պրակ, Սեպտեմբեր 1923, էջ 30):

¹⁶⁵ Եսայեան Նաւասարդին աշխատակցած չէ:

¹⁶⁶ Նաւասարդ, գրկան պարբերաթերթ: Լոյս տեսած է Պուքրեշի մէջ, 1923-26ին, Յ. Ճ. Սիրունիի խմբագրութեամբ:

¹⁶⁷ Արեգ, գրական-գիտական ամսագիր (1924ին՝ երկշաբաթաթերթ): Լոյս տեսած է Վիեննայի մէջ, 1922-24ին, Սիմոն Յակոբեանի խմբագրութեամբ:

Արտաշէս Յարութիւնեանի¹⁶⁸ մասին Ամերիկայի մէջ Ձեր սկսած յօդուածաշարքին՝ որ կէս մնաց¹⁶⁹: Չէ՞ք ուզեր շարունակել «Նաւասարդ»ին մէջ: Ամէն պարագայի մէջ կը հաւատամ թէ յուսախաբ չէք ըներ զիս այս անգամ:

Գալով ինձի՝ բախտը զիս առայժմ Պուքրէշ կը պահէ: Ստիպուած եմ մնալ հոս մինչեւ կնոջս պարագաներուն Պոլիս կարենալ դառնալը: Յետոյ կ'ուզեմ Փարիզ անցնիլ¹⁷⁰, ուր երկուքուկէս տարիէ ի վեր կը գտնուին մայրս ու եղբայրս¹⁷¹:

Հոս կեանք չկայ մտաւորականի մը համար: Միակ առաւելութիւնը զոր այս շրջանը ունի՝ չգոյութիւնն է կուսակցական ամուլ պայքարներուն կամ տեղական սին վէճերուն: Մեր դրացի Պուկարիային ճիշտ հակառակը: Այնպէս որ ջիղերը կը կազդուրուին գոնէ հոս մարդուն:

Վերջերս ձգեցի «Նոր Արշալոյս»¹⁷² թերթին մէջ ունեցած պզտիկ աշխատանքս, որ հեռու էր հոգեկան կամ նիւթական միսիթարութիւն տալէ ինձի. պարզապէս լուր խմբողի կամ փորձ նայողի մը գրաստային աշխատանքը: Առայժմ համեստ գործ մը ունիմ գրասենեակի մը մէջ, որ «Նաւասարդ»ով զբաղելու առիթ կու տայ ինձի: Կ'աշխատակցիմ նաեւ «Հայրենիք» ամսագրին¹⁷³: Չեմ գիտեր թէ տեսնելու առիթը ունիք: Հոն հրատարակեցի Մեծարենցի¹⁷⁴, Վարուժանի¹⁷⁵, Զարդարեանի¹⁷⁶ մասին, ինչպէս նաեւ պատմեցի «Ազատամարտ»ի սերունդը¹⁷⁷: Չեմ գիտեր թէ պիտի կարենա՞մ շարունակել: Պիտճէնին շատ կարճեցուցած են այժմ:

¹⁶⁸ Արտաշէս Յարութիւնեան (1874-1915), արեւմտահայ գրադատ եւ բանաստեղծ, Մեծ Եղեռնի զոհերէն:

¹⁶⁹ Զապէլ Եսայեան, «Արտաշէս Յարութիւնեան», *Նաւասարդ*, Յուլիս 1922, էջ 387-93 եւ Օգոստոս 1922, էջ 451-456:

¹⁷⁰ Սիրունի Պուքրէշ ապրած է մինչեւ կեանքին վերջը, բացառելով 1944-55ին Սիպերիոյ մէջ աքսորի տարիները:

¹⁷¹ Գրիգոր Ճօլօլեան (1896-1975), լուսանկարիչ:

¹⁷² *Նոր արշալոյս*, ռումանահայ եօթօրեայ: Լոյս տեսած է Պուքրէշի մէջ, 1922-33ին: Պատասխանատու տնօրէն եւ խմբագիր՝ Պարոյր Լեւոնեան:

¹⁷³ *Հայրենիք*, ամերիկահայ գրական ու քաղաքական ամսագիր (1922-70, 1968-70ին՝ եռամսեայ): Լոյս տեսած է Պոստընի մէջ, Ռուբէն Դարբինեանի (1922-68) եւ Մինաս Թէօլեօլեանի (1968-70) խմբագրութեամբ:

¹⁷⁴ Յ. Ճ. Սիրունի, «Գիծեր Միսաք Մեծարենցի կեանքէն», *Հայրենիք ամսագիր*, Օգոստոս 1923, էջ 57-68:

¹⁷⁵ Յ. Ճ. Սիրունի, «Գիծեր Դանիէլ Վարուժանի կեանքէն», *Հայրենիք ամսագիր*, Նոյեմբեր 1923, էջ 33-52:

¹⁷⁶ Յ. Ճ. Սիրունի, «Ռուբէն Զարդարեան», *Հայրենիք ամսագիր*, Յունուար 1925, էջ 28-43:

¹⁷⁷ Յ. Ճ. Սիրունի, «"Ազատամարտ"ի սերունդը», *Հայրենիք ամսագիր*, Յունուար-Մայիս, Յուլիս-Հոկտեմբեր 1924:

Հնո գրական շրջանակ ալ չկայ: Օտեանը¹⁷⁸ մեկնեցաւ Սուրիա¹⁷⁹: Փակագծի մէջ: Տիկ. Անայիս¹⁸⁰ ալ հոս էր: «Հայ կին»ին¹⁸¹ դրկած թղթակցութիւններէն կը կոահեմ որ կատողած ըլլալու է «Նաւասարդ»ի մէջ գրուած մէկ հատուածիս առթիւ, ուր կ'ըսէի թէ Ջապէլ Եսայեանէն եւ քիչ մըն ալ Սիպիլէն¹⁸² զատ ուրիշ կին գրագէտ չունինք¹⁸³: Միտքէս իսկ չանցաւ ինքը. բայց կ'երեւայ թէ շատ ազդուեր է, ինչպէս գուշակեցի «Հայ կին»ին մէջ «Մառցի» ստորագրութեամբ իր գրածներէն¹⁸⁴:

Հոս է նաեւ Գօլանճեանը¹⁸⁵: Երբ Գօլանճեան կ'ըսեմ հասկցէք մէկը որուն կը պակսի հաւասարակշռութիւնը, եւ զոր ամէնը զբօսանքի նիւթ կ'ընեն:

Կ'աւարտեմ նամակս՝ սպասելով Ձեր պատասխանին, որ կը յուսամ չուշանար:

Սիրալիր բարեւներով՝
Յ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ

¹⁷⁸ Երուանդ Օտեան (1869-1926), երգիծագիր, վիպագիր եւ թարգմանիչ:

¹⁷⁹ Օտեանին նուիրուած ողջերթ մը տեղի ունեցած է 27 Յունուար 1924ին, Հայ Արուեստի Տան Պուքրէշի անդամներուն եւ Նաւասարդ ու Նոր արշալոյս թերթերու խմբագրութիւններուն մասնակցութեամբ (Վաչէ, «Արձագանգ», Նաւասարդ, Դ. պրակ, 1923-1924, էջ 130):

¹⁸⁰ Անայիս (Եսիիմէ Աետիսեան, 1872-1950), բանաստեղծուհի:

¹⁸¹ Հայ կին, կնոջական հանդէս: Լոյս տեսած է Կ. Պոլսոյ մէջ, 1919-33ին: Պատասխանատու տնօրէնուհի եւ խմբագիր՝ Հայկանուշ Մառք:

¹⁸² Սիպիլ (Ջապէլ Ասատուր, 1863-1934), բանաստեղծուհի:

¹⁸³ Յ. Ճ. Սիրունի, «Տերվիշին պատմածները», Նաւասարդ, Ա. հատոր, Զ. պրակ, 1924, էջ 165-170:

¹⁸⁴ Հաւանաբար կ'ակնարկէ հետեւեալ պարբերութեան.

«Քանի որ հայ գրականութեան մասին կը խօսինք, ըսեմ ձեզի թէ բան մը զիս շար կը զարմացնէ: Ինչո՞ւ արդեօք գրականութեամբ զբաղող կարգ մը պարոններ առիթը չեն փախցնէր պախարակելու համար հայ գրագիրուհիները, քիչ բացառութեամբ, ինչո՞ւ կը փնտրեն անոնց մօտ այն կապարելութիւնները որոնք ունենայէ շար ու շար հեռու ենք իրենք:

Եթէ կիններուն մէջ չկան ժողովրդային, կոմսուհի Նօայլներ, Մարսէլ Դինայիրներ, միթէ այրերուն մէջ չկա՞ն Իբօլիթ Դէներ, Անաթօլ Ֆրանսներ, Քիսամաքէտներ» (Մառցի, «Պուքրէշէն նամակ», Հայ կին, 1 Սեպտեմբեր 1924, էջ 1815). նաեւ՝ Մառցի, «Պուքրէշէն նամակ», Հայ կին, 1-16 Դեկտեմբեր 1924, էջ 1909:

¹⁸⁵ Երուանդ Գօլանճեան (1880-1957), արեւմտահայ բանաստեղծ:

ԺԳ.- ՇԻՐՎԱՆՁԱԴԷ¹⁸⁶

17 Դեկտեմբեր] 25 թ. Պարիզ

Սիրելի տիկին Ջ. Եսայեան,

Լսել եմ հիանդ էք: Իրատունք չունիք: Ձեր կեանքը մեզ հարկատու է, այսինքն՝ ազգին: Պահպանեցէք նրան, ապա թէ ոչ – կը լինիք ոճրագործ: Առողջուպին, շուտափոյթ եւ դէպի գործ...

Միշտ յարգող եւ պատուող

ՇԻՐՎԱՆՁԱԴԷ

ԺԴ.- Հ. ՍԻՄԵՈՆ ԵՐԵՄԵԱՆ¹⁸⁷

Asolo 15-3-1926

Ազնիւ Տիկին Ջ. Եսայեան

Մեր ցեղին պատիւ կը համարիմ այս ներփակ գրութիւնը. Խարախանեանի¹⁸⁸ մասին կը գրէ Մուսոլինի¹⁸⁹ վարչապետին հիմնած “Il Popolo d’Italia” օրագիրը¹⁹⁰, որ է պաշտօնական օրկանը ֆաշիստ կառավարութեան: Անշուշտ նպաստատու չէ, ըլլալով մոլեգին հակառակ գոմունիզմի, սակայն ամբողջ յօդուածը Խարախանեանի դիւանագիտական կարողութիւնը դրուատելով, փառքին լուսապսակը հայ ցեղիս ճակտին զարդն կ’ըլլայ: Գուցէ Խ[որհրդային] Հ[այաստանի] մեր երկրին վարիչներուն անծանօթ ըլլայ այս, եւ ատոր համար Ձեր հասցէին զայն կը յղեմ[.] ուր որ անկ է իմացուցէք:

Ես Ձեր երկերն վաղուց է որ չեմ տեսած, ոչ մէկ գիրք ինծի յղած էք իմ «Ազգային Դէմքեր» յաջորդ հատորներու համար¹⁹¹, եւ ոչ իսկ Ձեր «Ատանայի» կոտորածներու մասին գրած հատորն¹⁹², զոր վարձատրելու ժխրիներուն¹⁹³ գլուխն եղած եմ ժամանակին, եւ 10 օրինակ գնած եմ եւ տարա-

¹⁸⁶ ԳԱԹ, ՅՓՖ, թ. 62:

¹⁸⁷ ԳԱԹ, ՅՓՖ, թ. 40:

¹⁸⁸ Լեւոն Կարախան(եան) (Lev Karakhan, 1889-1937), հայագի բոլշեւիկ գործիչ: 1923-26ին Խորհրդային Միութեան դեսպանն էր Չինաստանի մէջ: Գնդակահարուած է ստալինեան մաքրագործումներուն ընթացքին:

¹⁸⁹ Պենիթօ Մուսոլինի (1883-1945), իտալացի քաղաքական գործիչ եւ լրագրող: *Il Popolo d’Italia*ի համահիմնադիր ու հրատարակիչ (1914-22): Իտալիոյ մենատէր (1922-43):

¹⁹⁰ *Il Popolo d’Italia*, իտալական օրաթերթ (1914-43): Ա. աշխարհամարտէն ետք, ֆաշական շարժման բանբերը եղած է:

¹⁹¹ Հ. Սիմեոն Երեմեան, *Ազգային դէմքեր*, Ա.-Ժ. հայրոր, տպ. Ս. Ղազար, Վենետիկ, 1913-1933: Զապէլ Եսայեան ներառնուած չէ այս նամակէն ետք լոյս տեսած Երեմեանի իններորդ (1931) եւ տասներորդ (1933) հատորներուն մէջ:

¹⁹² Զապէլ Եսայեան, *Աւերակներու մէջ*, Կ. Պոլիս, 1911:

¹⁹³ Դատակազմներուն (ֆրանսերէն):

ծած իմ բարեկամներու: Լսած եմ որ «Երեւան»ի¹⁹⁴ մէջ կը գրէք, բայց այդ թերթն ալ ինձի չի գար: Բաշինջախեանի¹⁹⁵ [sic] նկարչի մասին «Նոր փիւնիկ»ի¹⁹⁶ մէջ խօսած ատեն, գնահատական տողեր ունէի Ձեր նկարչագեղ ոճի մասին, անշուշտ զայն կարդացիք¹⁹⁷: - Կը կրկնեմ, Խարախանեանի մասին այս յօդուածը կ'արժէ թարգմանել եւ հրատարակել¹⁹⁸:

Ներեցէք որ ազատութիւն առի այսքան մտերմօրէն գրելու. յարգանքի բարեններով

Ձերդ
Հ. Ս. ԵՐԵՄԵԱՆ

Հասցէս P. S. Eremian Villa Ararat Asolo (Treviso) Italia

ԺԵ.- ՎԷՍՊԵՐ¹⁹⁹

Թիֆլիս, 31 Մարտ 926

Մեծարելի՛

Բարեկամուհիդ իմ տիկին Ջապէլ,

Թէեւ Ձեզմէ նամակ չեմ սպասեր, բայց երկու շաբաթ առաջ «Մարտակոչ»ի²⁰⁰ հասցէով դրկուած միայն 6 օրինակ «Երեւան»ը ստացայ: Շա՛տ շնորհակալութիւն: -

Մեծագոյն հաճոյքով կարդացի: -

Կը սպասեմ ուրիշ նո՛ր թիւերու: -

Եթէ ժամանակ եւ սիրտ կ'ունենաք՝ պատասխանեցէք ամիսներ առաջ Ձեզի գրածս նամակին: Գոնէ՛ գրականութեան վերաբերեալ կէտերուն: -

¹⁹⁴ *Երեւան*, ֆրանսահայ եօթեայ, խորհրդահայ ուղղակի հովանաւորութեամբ: Լոյս տեսած է Փարիզի մէջ, 1925-30ին:

¹⁹⁵ Գէորգ Բաշինջաղեան (1857-1925), նկարիչ, հայ իրապաշտ բնանկարչութեան հիմնադիր:

¹⁹⁶ *Նոր փիւնիկ*, լիբանանահայ եօթեայ, Հ. Յ. Դաշնակցութեան պաշտօնաթերթ: Լոյս տեսած է Պէյրութի մէջ, 1925-26ին:

¹⁹⁷ Տե՛ս՝ յօդուածաշարքին առաջին մասը՝ Ատրուշան, «Ազգային դէմքեր. Գէորգ Բաշինջաղեան», *Նոր փիւնիկ*, 16 Յունուար 1926 (յաջորդ մասերը լոյս տեսած են 20 եւ 23 Յունուար 1926ին): Վերատպումին մէջ, հեղինակը ընդլայնած է Եսայեանին նուիրած տողերը (Հ. Սիմոն Երեմեան, *Ազգային դէմքեր*, իններորդ շարք, տպ. Ս. Ղազար, Վենետիկ, 1931, էջ 363-364):

¹⁹⁸ Յօդուածը լոյս տեսած չէ *Երեւանի* մէջ:

¹⁹⁹ ԳԱԹ, ՅՓՖ, թ. 40: Նամակը գրուած է դասական ուղղագրութեամբ:

²⁰⁰ *Մարտակոչ*, Ռուսաստանի սոցիալ դեմոկրատ բանտարական կուսակցութեան (բոլշեփկ) Անդրկովկասեան երկրամասային կոմիտէի օրաթերթ: Լոյս տեսած է Թիֆլիս, 1923-27ին:

Շիրվանզադէն եկաւ²⁰¹: Խորհրդային իշխանութիւնն ու մեր (Հայարտունի)²⁰² գրական սեկցիան պատշաճ կերպով ընդունեցին զինքը: Կազմակերպեցինք պատուոյ երեկոյ եւ դասախօսութիւն²⁰³: Շուտով *քէյֆ* ալ կազմենք զուցէ: - Հարցուցի Ձեր մասին: Շուտով Երեւան կերթայ Շիրվանզադէ²⁰⁴:

Կը փորձեն աշխատակցիլ «Երեւան»ին երկու բանաստեղծութիւնով²⁰⁵: Վստահ եմ թէ վարձատրութեան սկզբունքը «Երեւան»ը ընդունած է: Եթէ ոչ, հակառակ պարագային ես բաժնեգինը *խկոյն* կը փոխադրեմ:

Միայն թէ բարի եղէք հաղորդելու ինձի ժամանակին: - Եթէ բանաստեղծութիւններէս²⁰⁶ կապոց մը դրկեմ Համիկ Թումանեանի²⁰⁷ հասցէով՝ կը սպառէ՞ք: Գուցէ գրավաճառներ կան, որոնք սիրով յանձն կ'առնեն: Ի հարկէ որոշ տոկոսը կ'ըստանան: Ըստ Շիրվանզադէի, գրքի մեծ պահանջ կայ այդտեղ. մանաւանդ որ բարբառը հարազատ է: Ուղղագրութիւնը քիչ մը կը վախճամ միայն²⁰⁸: -

Ընդունեցէք իմ յատուկ յարգանքները:

Կարօտներով եւ ջերմագին զգացումներով՝

Ձեր բարեկամ

Մ. ՎԷՍՊԵՐ

Յ.Գ. – Չուբարին²⁰⁹ մասնաւոր բարեւներ ինէ:-

ՆՈՅՆ

²⁰¹ Շիրվանզադէ ճամբայ ելած է Փարիզէն դէպի Թիֆլիս 15 Փետրուար 1926ին: *Մարտիկոյի* խմբագրատունը այցելած է 4 Մարտին («Ձրոյց Շիրվանզադէի հետ», *Մարտիկոյ*, 5 Մարտ 1926, էջ 2):

²⁰² Հայարտուն (Հայ Արուեստի Տուն), գրական-մշակութային կազմակերպութիւն: Թիֆլիսի մասնաճիւղը հիմնուած է Մարտ 1921ին եւ գործած՝ մինչեւ 1930ականի կէսերը:

²⁰³ Շիրվանզադէի նուիրուած գրական երեկոն տեղի ունեցած է 21 Մարտ 1926ին («Հայարտան գրական սեկցիան», *Մարտիկոյ*, 25 Մարտ 1926):

²⁰⁴ Շիրվանզադէ Երեւան հասած է 4 Ապրիլ 1926ին («Շիրվանզադէ Երեւանի մէջ», *Երեւան*, 21 Ապրիլ 1926):

²⁰⁵ Տե՛ս՝ Վէսպեր, «Գազել երկրիս համար», *Երեւան*, 18 Ապրիլ 1926. Նոյն, «Արեւելապոէմ», *Երեւան*, 16 Մայիս 1926:

²⁰⁶ Վէսպեր, *Կայարաններ*, Ժ. Տ. Գ. Խ. Պոլիգր. բաժնի 4րդ տպ., Թիֆլիս, 1925: Տե՛ս՝ «Ստացած ենք», *Երեւան*, 25 Ապրիլ 1926, էջ 2: Գրախօսականը տե՛ս՝ Զապէլ Եսայեան, «Ուղեկիցներ», *Երեւան*, 30 Մայիս 1926:

²⁰⁷ Համիկ Թումանեան (1896-1938), հանրային գործիչ, թարգմանիչ, Յովհաննէս Թումանեանի երրորդ որդին: 1921-24ին ուսանած է Սորպոնի մէջ, այնուհետեւ վերադարձած Թիֆլիս: Գնդակահարուած է ստալինեան մաքրագործումներուն ընթացքին:

²⁰⁸ Վէսպերի հատորը արեւմտահայերէն էր՝ 1922ի ուղղագրութեամբ:

²⁰⁹ Եղիա Չուբար (1898-1938), լրագրող, 1925-27ին՝ *Երեւանի* խմբագիր: Գնդակահարուած է ստալինեան մաքրագործումներուն ընթացքին:

Յարգելի տիկին
2. Եսայեան!

Վերջին քաղաքներն ենք պատում Ամերիկայում²¹¹: Մնացին Ֆրեզնո²¹², Ս[ան] Ֆրանսիսկո²¹³ եւ Լոս-Անջելես: Լոս-Անջելեսը որոշեց մի տուն շինել իր անունով 25.000 դալլերի, Ֆրեզնոն՝ 10.000 դալլերի: Մեր այստեղի գործերի մասին «Երեւանին» խոստացան գրել 2 ընկերներ, մէկը Լոս-Անջելեսից²¹⁴, միւսը՝ Ֆրեզնոյից²¹⁵: Հաւանականաբար մինչեւ օգոստ. 25-ը կլինենք Նիւ Եորքում²¹⁶ եւ սեպտ. 1-ին կմեկնենք դէպի Եւրոպա:

Խնդրեմ այս նամակը²¹⁷ Ձեր ձեռքով յանձնէք ընկեր Սիմոնիկին²¹⁸:

Բարեւներս ձեզ, Չուբարին, Թահմազեանին²¹⁹ եւ միա ընկերներին:

Յարգանքներով՝ ԿԱՐԵՆ

²¹⁰ Նամակը կը կրէ 56 թիւը: Գրուած է դասական ուղղագրութեամբ, Ֆրեզնոյի The Californian Hotelի նամակաթուղթի վրայ:

²¹¹ Կ'ակնարկէ ՀՕԿի պատուիրակութեան, որուն մաս կը կազմէին Կ. Միքայէլեան, Գրիգոր Վարդանեան եւ բժ. Սպանդար Կամարական: Առաջին երկուքը կը ներկայացնէին ՀՕԿի Կեդրոնական Վարչութիւնը, իսկ վերջինը՝ Պետական Հայ Կարմիր Խաչը:

²¹² «Ֆրեզնոյի հայ կեանքէն», *Հայաստանի կոչնակ*, 21 Օգոստոս 1926, էջ 1207-8:

²¹³ Յովսէփ Յ. Թորիկեան, «Սան Ֆրանսիսքոյի հայ կեանքէն», *Հայաստանի կոչնակ*, 23 Հոկտեմբեր 1926, էջ 1495-96:

²¹⁴ Տե՛ս՝ Թղթակից, «ՀՕԿի պատուիրակութիւնը Լոս-Անճելըսի մէջ», *Երեւան*, 25 Օգոստոս 1926, էջ 2:

²¹⁵ *Երեւան* որեւէ թղթակցութիւն չէ հրատարակած պատուիրակութեան Ֆրեզնո այցելութեան մասին:

²¹⁶ 14 Սեպտեմբեր 1926ին, Համագաղութային Կեդրոնական Հանգանակիչ Մարմինը որջերթի ճաշկերոյթ մը տուած է Նիւ Եորքի մէջ (Ներկայ մը, «Ճաշկերոյթ ի պատիւ Հայաստանի պատուիրակութեան», *Հայաստանի կոչնակ*, 2 Հոկտեմբեր 1926, էջ 1400):

²¹⁷ Հաւանաբար կ'ակնարկէ նամակին կցուած այլ նամակի մը:

²¹⁸ Սիմոն (Սիմոնիկ) Փիրումեան (?), պետական-հանրային գործիչ: Խորհրդային Միութեան Ֆրանսայի դեսպանատան երկրորդ խորհրդականն էր եւ Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչը: Գնդակահարուած է ստալինեան մաքրագործումներուն ընթացքին:

²¹⁹ Գուրգէն Թահմազեան (1890-1936), հանրային գործիչ, ՀՕԿի ընդհանուր քարտուղար մինչեւ 1931: Աւելի ուշ, ներգաղթած է Խորհրդային Հայաստան:

17 հունիսի, 1927 թ., Երեւան

Սիրելի տիկ. Չաբէլ

Կ'իմանամ, որ դաշնակ «Դրօշակ»ը²²¹ սիրաշահող տողեր է նուիրեր Չարենցին²²² եւ ինձի, տպելով մեզմէ այնպիսի բանաստեղծութիւններ, որոնք մեր ստեղծագործութեանց ամենատխտուր էջերն են եւ պիտի մնան²²³:

Ես միշտ զղջացեր եմ բանաստեղծ լինելուս համար, որովհետեւ մեր, յեղափոխական այս դարաշրջանին մէջ ամենացաւազին զիկզակներով առաջ ընթացողները բանաստեղծներն են. ապահովաբար ոչ ոք ենթակայ չէ այնքան փորձութիւնների որքան բանաստեղծը, որովհետեւ ոչինչ չկայ աւելի քմասէր, քան մարդու զգացմունքային աշխարհը, իսկ ճշմարիտ բանաստեղծը (իմ կարծիքով) զգացմունքներինն է:

Մենք տառապելով կը բարձրանանք եւ կը փնտռենք դուրսը եւ մեր մէջ նոր մարդուն՝ իր զգացմունքներով յաճախ ե՞տ կ'երթանք, երբեմն էլ կը խոտորի՞նք... հոգ չէ, բայց ինձ առանձնապէս կը մտահոգէ այն մարդ-կանց վարքագիծը, որոնք երկրի մէջ կատարուող իրաքանչիւր գեղեցիկ ճիգն ու ցաւագին սայթաքումը կը վերածեն ամենատխտուր կոպեկների: Շա՞հ: Ունեն երեւի:

«Չարենցին հետ» բանաստեղծութիւնս լոյս պիտի տեսնէր տեղիս «Երիտ[ասարդ] Բոլշեւիկ»ի²²⁴ մէջ ընկ. Գիլու²²⁵ նախաբանով. իր հաւնած քերթուածներէն մէկն է. յարմար տեսանք, որ տպուի «Երեւան»ի մէջ²²⁶: Գուցէ առիթ տայ ձեզի եւս արտայայտուիլ եւ պատասխանելու եւ ուշադրելու համար. ամէն դէպքին՝ Ձեր հայեցողութեան:

Տղաները ամէնքն ալ լաւ են:

Երեւանը՝ տօ՛թ...

Ձերմ բարեւներս՝ Չուբարին, որն, աւաղ, ջրի պէս կուգայ, աւագի պէս կը մնայ...

Ձեր՝ Գ. ՄԱՀԱՐԻ

²²⁰ ԳԱԹ, ՅՓՖ, թիւ 56:
²²¹ *Դրօշակ*, Հ. Յ. Դաշնակցութեան պաշտօնաթերթ (1891-1914, 1925-33, 1969-96՝ Ազդակ շաբաթօրեակ-Դրօշակ անունով, 1999էն մինչեւ օրս):
²²² Եղիշէ Չարենց (1897-1937), խորհրդահայ բանաստեղծ: Բանտին մէջ մեռած է ստալինեան մաքրագործումներուն ընթացքին:
²²³ *Դրօշակ* Մահարիէն կամ Չարենցէն որեւէ բանաստեղծութիւն հրատարակած չէ:
²²⁴ *Երիտասարդ բայշեւիկ* (1926-33), Հայաստանի լենինեան կուսակցութեան երիտասարդական միութեան կեդրոնական եւ Երեւանի կոմիտէներու ամսագիր:
²²⁵ Հայկ Գիլիքեւսեան (1886-1951), գրականագէտ, փիլիսոփայ:
²²⁶ Գուրգէն Մահարի, «Չարենցի հետ», *Երեւան*, 17 Յուլիս 1927:

P.S. Իբրեւ նորոյթ պիտի հաղորդեմ, որ «ուղեկիցներ»ը կազմակերպուեցին. միութիւնը կը կրէ «Հայաստանի աշխատաւորական գրողների միութիւն» անունը²²⁷:

ՅԱՒԵԼՈՒԱԾ²²⁸
ՅՈՒԼԻԱ ՓՈՒՇՄԱՆԻՆ

25 Ապրիլ 1931

179, rue de Vaugirard
Paris (XVe)

Սիրելի Յուլիաս,

Կը պատրաստուէի քեզ գրելու երբ այս առաւօտ ստացայ ամուսնոյդ նկարահանդէսի յայտագիրը²²⁹: Դժբաղդաբար միայն ցուցակը աչքէ անցնելով պիտի բաւականանամ եւ միակ լուսանկարը որ կայ catalogueին²³⁰ մէջ մտածել կուտայ ինձ որ Պարոն Փուշման²³¹, ինչպէս միշտ այս անգամ այ յաջողած է խել բազմախորհուրդ արեւելքի խոր գաղտնիքներէն մէկ քանին եւ կտաւին վրայ սեւեռել գոյներու այն աղու համանուագը որ իր հոգիին մէջ ունի: Կը մաղթեմ իրեն այն լայն եւ ամբողջական յաջողութիւնը որուն այնքան արժանի է եւ որը ամէն բանէ առաջ իրեն պիտի տայ բարոյական բաւականութիւն: Մեծ յոյս ունիմ նաեւ որ այդ ցուցահանդէսէն յետոյ կ'ընդունուի Բարիզ գալ եւ ի՞նչպէս արդէն այս տարի Բարիզ չի գաք երբ գաղութային ցուցահանդէսը դէպ ի Բարիզ կը քաշէ ամէն երկիրներէ մեծ բազմութիւններ²³²:

Մեծապէս կը յուսամ որ քու նամակդ այդպիսի լաւ լուր մը պիտի բերէ ինձ:

Նախորդ նամակովս մանրամասն գրեր էի իմ աշխատութեան ծրագիրներու վրայ: Միշտ կը շարունակեմ աշխատիլ եւ յոյս ունիմ որ հանգրուանէ

²²⁷ Հայաստանի Աշխատաւորական Գրողների Միութիւնը հիմնուած է Օգոստոս 1927ին «ձախ ուղեկիցներ» համարուող եւ խորհրդային կարգերուն համակրող գրողներու եւ գրաքննադատներու կողմէ: Նախագահը Դերենիկ Դեմիրճեանն էր, իսկ քարտուղարը՝ Ստեփան Զօրեան: Ապրիլ 1929ին միատրուած է Հայաստանի Պրոլետ Գրողների Ասոցիացիայի հետ, կազմելով Հայաստանի Խորհրդային Գրողների Ֆեդերացիան:

²²⁸ ԳԱԹ, ՅՓՖ, թ. 7:

²²⁹ Հաւանաբար կ'ակնարկէ 10 Ապրիլ 1931ին Նիւ Եորքի մէջ Փուշմանի ներկայացուցիչ Grand Central Art Galleriesի սարքած նկարահանդէսին («Ամերիկեան մամուլը կը գնահատէ Փուշմանի գործերը», *Հայաստանի կոչնակ*, 4 Ապրիլ 1931, էջ 439):

²³⁰ Ցուցակ (Ֆրանսերէն):

²³¹ Յովսէփ Փուշման (1877-1966), ամերիկահայ համբաւուր նկարիչ:

²³² Փարիզի գաղութային ցուցահանդէսը (Exposition Coloniale) տեղի ունեցած է 6 Մայիս-15 Նոյեմբեր 1931ին:

հանգրուան պիտի հասնիմ նպատակիս: Դժուարություններ շատ կան: Բայց ի՞նչ մարդ կըլլայի եթէ դժուարություններու առջեւ կանգ առնէի եւ ո՞վ չունի կամ չէ՞ ունեցած դժուարություններ: Սօֆիս²³³ եւ Հրանդս²³⁴ լաւ են եւ առողջ: Սօֆին իր պաշտօնին վրայ է եւ Հրանդս ուամունքը կը շարունակէ²³⁵: Երկու տարիէն կը յուսամ որ կը յաջողի դառնալ ingénieur chimiste²³⁶ եւ ես ալ շունչ կառնեմ: Ձեր զաւակները²³⁷ ի՞նչպէս են: Կը յուսամ որ հանգիստ են եւ գոհ իրենց զբաղումներէն:

Սիրելի Յուլիաս, մի՛ մոռնար ինձ եւ անմիջապէս գրէ: Յիշէ՛ Սկիւտարի վարդաշատ պարտէզները եւ ծաղկեալ ու բուրումնաւէտ ճամբաները որոնց վրայէն անցած ենք յոյսերով եւ երագներով լեցուն: Այն Սկիւտարը որ կար չի կայ այլ եւս բայց միայն մեր յիշողութեան մէջ եւ երկուքով կա-րենալ յիշել պահպանել մեր կեանքի գեղեցկագոյն պահերը անքակտելի կապ մըն է: Միշտ երբ կը վերյիշեմ իմ պատանեկական տարիներս, կը յի-շեմ եւ քեզ, որովհետեւ այդ ժամանակներէն, բառին իսկական իմաստով, մնացած ենք ես ու դուն: Շատ սիրալիր եւ յարգալիր բարեւներ ձեր ամուսնոյն եւ զաւակներուն եւ շատ մը ջերմ համբոյրներ քեզ:

ԶԱՊԷԼ ԵՍԱՅԵԱՆ

²³³ Սոֆի Եսայեան (1901-1976), գրադարանավար, Եսայեանի դուստրը:

²³⁴ Հրանդ Եսայեան (1910-1982), քիմիագէտ, Եսայեանի որդին:

²³⁵ Սոֆի Եսայեան կ'աշխատէր հարաւ-արեւմտեան Ֆրանսայի Օշ քաղաքին մէջ իբրեւ գրադարանավարուհի, իսկ Հրանդ Եսայեան կ'ուսանէր Քիւրի տարրալուծարանին մէջ:

²³⁶ Քիմիական ճարտարագէտ (ֆրանսերէն):

²³⁷ Արսէն (1899-1990) եւ Արման Փուշման (1900-1999), վաճառականներ:

LETTERS ADDRESSED TO ZABEL ESSAYAN
BOTH KNOWN AND UNKNOWN
(1907-1908 AND 1922-1927)
(SUMMARY)

VARTAN MATIOSSIAN
varnyl@yahoo.com

In 1972 Armand and Arsen Pushman, sons of the celebrated Armenian American painter Hovsep Pushman (1877-1966), donated his collection of letters to the Museum of Literature and Art “Yeghishe Charents” of Armenia. The donation was received by philologist Babken Chookaszian (1923-1997), then deputy director of the Matenadaran of Yerevan, who was visiting the United States. The collection included 129 letters addressed to various writers, artists, and public figures. Chookaszian, who published various samples of that collection in 1973, stated that the collection was numbered and paginated in alphabetical order, and that the last number was 240, but that the whereabouts of the remaining letters were unknown.

In 2016 the author found a folder at a private residence in New York containing copies of various letters from that collection addressed to Pushman, to his wife Hulia Shaljian-Pushman (1874-1966), and to her friend Zabel Essayan (1878-1943), the celebrated writer, which belong to the Pushman collection. This article presents a lengthy and detailed introduction and commentary and publishes the 17 letters written to Essayan (1878-1943), along with her letter to Hulia Pushman, with extensive footnotes. The publication includes the six letters to Essayan and her letter to H. Pushman already published by Chookaszian in the modified orthography of Soviet Armenia, which are reprinted in their original text with more detailed footnotes. The originals of two of the copies, written by Yervant Chavoushian (1865-1915) and Karen Mikaelian (1885-1941), do not appear to have been sent to Armenia, and it is likely that those two copies are an indication of the 111 letters of the Pushman collection whose current location is unknown.

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ



AN ANTIQUE IN THE MAKING

**MEGERIAN
CARPET**

**MEGERIAN CARPET
ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔԱՅԼԵՐԸ՝
ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԳԻ
ՎԵՐԱԾՆՈՒՆԴԻՆ
ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ**

ՅԱՍՄԻԿ ՍԱՅԱԴԵԱՆ

hasmik.sayadyan93@gmail.com

Երեւանի նորագոյն պատմամշակութային կենտրոններից է «Մեգերեան Կարպետ»ը, որտեղ կարելի է տեսնել հայկական մշակոյթի իւրօրինակ դրսեւորում հանդիսացող ամենհայկան գորգագործութեան պահպանման, վերածաղկումին եւ վերստին տարածման սատարող օրինակելի ու ամբողջական ծրագրի յատկանշական մի գործընթաց:

Այն լոկ գորգերի արտադրութեամբ զբաղուող ընկերութիւն չէ, այլ նաեւ մշակութային կենտրոն, որտեղ ցուցադրուած հարուստ նմուշները այցելուին կը ներկայացնեն հայ գորգագործութեան հարուստ ամենադրսեւորն ու բազմադարեան պատմութիւնը: Ընկերութեան հիմնադիր Ռաֆֆի Մեգերեանը իր բազմամեայ փորձառութեամբ հաւաստում է, որ հայկական գորգերն աշխարհի տարբեր երկրներում մեծ պահանջարկ ունեն: Հայկական գորգերն արտադրում են Հայաստանում, բայց հիմնական սպառողը արտերկիրն է: Ըստ նրա, գորգագործութիւնը ազգային ինքնութիւն ունեցող, ազգային ինքնութեան սատարող մշակութային գլխատր նմուշ է:

ՄԵԳԵՐԵԱՆՆԵՐԸ

Մեգերեանների ընտանիքը, աւելի քան չորս սերունդ, զբաղում է ընդհանրապէս հին գորգերի վերականգնմամբ եւ նոր գորգերի արտադրութեամբ: 1917ին Մեգերեանները գաղթել են ԱՄՆ, Արեւմտեան Հայաստանի Չոմախլու գիւղից եւ Նիւ Եորքում հիմնել Մեգերեան Կարպետ (Megerian carpet) ընկերութիւնը, որը սկզբում զբաղուել է հին գորգերի վերանորոգմամբ եւ լուացմամբ, ինչպէս նաեւ առետրով:

1990ին, Հայաստանի Հանրապետութեան անկախութեան հռչակումից ետք, ընկերութիւնը եկաւ Հայաստան՝ նպատակ ունենալով զարկ տալ հայկական գորգարուեստին, վերականգնել հայ գորգարուեստի ամենադրսեւորը, աշխատատեղեր ստեղծել հայ գորգագործ վարպետների, հայ գորգարուեստի վտանգուած մշակոյթը ամրացնել, վերաթարմացնել, պահպանել եւ

մեծաքանակ հայկական գորգ արտադրել ու մատակարարել համաշխարհային շուկային: 2002ին Մեգերեան ընտանիքը գնում է սովետահայ շրջանի նշանատր «Հայգորգ» միատրումը, որտեղ խորհրդային տարիներին արտադրում էին տարատեսակ հայկական ձեռագործ գորգեր: Այդ գորգերը, սակայն քիմիական ներկանիւթերով եւ պարսկական մէկուկէս հանգոյցի եղանակով էին պատրաստում: Ընկերութիւնը փոխեց ՀՀ գորգարտադրութեան ամբողջ արհեստագիտութիւնը եւ այն ուղղորդեց ասանդական հայկականին. վերականգնելով հին հայկական արհեստագիտութեամբ գորգ գործելու շատ հմտութիւններ: Այս ասանդոյթը Մեգերեանների ընտանիքում փոխանցուել է սերնդէսերունդ: Յիրալի, ընկերութիւնը Երեւան հաստատուելու օրից բրդի ներկման խնդրում հրաժարուեց նախապէս օգտագործուող քիմիական ներկանիւթերից եւ փոխարէնը օգտագործեց ու զարգացրեց բրդի ներկման բնական ներկանիւթեր, որոնք ստանում է Հայկական Լեռնաշխարհի ծաղիկներից, արմատներից ու բոյսերից, այնպէս, ինչպէս դա արոււմ էր հազարամեակներ առաջ: Միաժամանակ, ընկերութիւնը կիրառեց հայկական հին կրկնակի հանգոյցը, ստեղծելով ձեռագործ գորգերի արտադրութեան գործընթացում վաղեմութեան սկզբունքը: Այսպիսով վերականգնուեցին հայ գորգագործութեան ասանդոյթները, նոր թափ հաղորդուեց հայկական ձեռագործ գորգի արտադրութեանը եւ զարգացմանը:

Մեգերեանները բացեցին 25 մասնաճիւղ ՀՀ տարբեր շրջաններում:

Բացի Հայաստանից ընկերութիւնը 2020ականներից արտադրամասեր ունի նաեւ Եգիպտոսում, Պակիստանում, Աֆղանստանում, Հնդկաստանում, Չինաստանում եւ Ռումինիայում, իսկ գորգի վաճառքի ցուցասրահներ՝ ԱՄՆում (Նիւ Եորքի 5րդ պողոտայ) եւ Երեւանում:

«Մեգերեան Կարպետ» ընկերութիւնը Երեւանում ունի նաեւ «Յովհաննէս եւ Նոյեմի Մեգերեաններ»ի անուան ընդարձակ ցուցասրահ-թանգարանը, որտեղ կազմակերպոււմ են շրջայցեր ինչպէս տեղացիների, այնպէս էլ զբօսաշրջիկների համար: Ցուցասրահ-թանգարանում ներկայացուած են աւելի քան հարիւրամեայ շուրջ միքանի տասնեակ հայկական գորգեր: Ցուցասրահի կողքին գործում է գորգագործական արտադրամաս, որտեղ աշխատում են գորգագործները:

«ՄԵԳԵՐԵԱՆ ԿԱՐՊԵՏ»-Ի ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՄԻԱԽՈՐՆԵՐԻ ՅԱՆՅՈՒՄ ՀՀՈՒՄ

Հայաստանեան մասնաճիւղերում գորգագործներն աշխատում են հայկական կրկնակի հանգոյցով եւ բնական ներկանիւթերով: Արդէն իսկ պատրաստի ներկուած թէլերը երեւանեան մասնաճիւղերից տեղփոխոււմ են մարզերի մասնաճիւղեր: Արտադրամասերում գործում են միայն գորգեր եւ ոչ՝ կարպետներ: Արցախում Մեգերեան Կարպետի մասնաճիւղ չի գործել:

Մեզերեան Կարպետ ընկերութիւնը գործում է տարբեր չափերի գորգեր: Ամենափոքր գորգերն են՝ 40x40 սմ., իսկ ամենամեծը գտնուում է ՀՀ նախագահական նստավայրում, ունի 17 մետր երկարութիւն եւ 5.80 մետր լայնութիւն, գոյացնելով շուրջ 100 մետր քառակուսի մակերես:

Այստեղ վերականգնուում են հին հայկական գորգերի գործածութիւնից դուրս մղուած զարդանախշեր: Այժմ ընկերութիւնը գործում է աշխարհի ամենահին գորգի՝ Պազիրիկի (Pazyryk) վերարտադրուած տարբերակը, նաեւ վերականգնուում է հին վիշապագորգերը, խաչխորան գորգերը, Գոհար գորգը եւն.:

Գործում են միջին խտութիւնից մինչեւ բարձր խտութիւն ունեցող գորգեր, որոնք արտադրուում են ԱՄՆ, Եւրոպա, Արաբական եւ Հիւսիսային պետութիւններ (Դանիա, Շուեդիա, Նորուեգիա, Ֆինլանդա, Իսլանդա): Ընդհանրապէս, դեռ հին ժամանակներում, հին հայկական գորգերում մէկ մետր քառակուսուում եղել է 160,000 հանգոյց: Ընկերութիւնը պահպանել է այդ ավանդոյթը:

2003-8ին ընկերութիւնը արտադրել է տարեկան միջին հաշուով 25,000 մետր քառակուսի հայկական գորգ: 2008ի համաշխարհային տնտեսական ճգնաժամի պատճառով կտրուկ անկում է ապրել արտադրութիւնը, երբ ՀՀ քսան արտադրամասերից շարունակել են աշխատել միայն երկուսը: 2010-20ի ընթացքում արտադրութեան քանակը կրկին աճել է՝ հասնելով տարեկան 12,000 մետր քառակուսու: Իհարկէ 2020ի համավարակը չէր կարող չափազանց նախապահ զորգերի արտադրութեան վրայ: Ժամանակատրամապէս փակուեցին մասնաճիւղերը, իսկ արտադրութիւնը հասաւ նուազագոյնի: 2024ից վերաբացուել են արդէն մի քանի մասնաճիւղեր եւ աստիճանաբար արտադրութեան քանակն էլ մեծանում է:

ՅԱՏԿԱՆՇԱԿԱՆ ԴՐՈՒԱԳՆԵՐ «ՄԵԳԵՐԵԱՆ ԿԱՐՊԵՏ»Ի ԳՈՐԳԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԷԶԵՐԻՑ

Հայաստանի մանուկների ձեռքով պատրաստած յոբելեանական գորգի ցուցադրութիւն-վաճառքը Նիւ Եորքում



Հայաստանի մանուկներ հիմնադրամը (COAF) եւ «Մեզերեան Կարպետ» ընկերութիւնը 2017ին իրագործեցին բարեգործական ծրագիր՝ նուիրուած Մեզերեան ընկերութեան 100ամեայ յոբելեանին: Ընկերութեան հմուտ գորգագործների օգնութեամբ Հայաստանի մանուկներ հիմնադրամի շահառու Վանանդ համայնքի մանուկները, մի քանի ամիս աշխատել են յոբելեանական գորգի ստեղծման

վրայ: Գորգը ցուցադրուել է ԱՄՆում՝ Նիւ Եորքում անցկացուող COAFի ամենամեայ դրամահաւաք-երեկոյի ընթացքում: Այն վաճառուել է բարեգործական միջոցառման աճուրդի ժամանակ, ու հասոյթը ամբողջովին ծառայել Հայաստանի մանուկներ հիմնադրամի ծրագրերին:

Երեւան քաղաքին նուիրած 17րդ դարի հայկական վիշապագորգի խճանկարը, Կարապի լճի մերձակայքում



Այլ իրագործում էր Մեգերեան ընտանիքի Երեւան քաղաքին նուիրած ԺԷ. դարի հայկական վիշապագորգի խճանկարը, որը 2017ին տեղադրուեց Կարապի լճի մերձակայքում: Այս խճանկարում արտացոլուած է Լոնդոնի «Վիկտորիա եւ Ալբերտ» թանգարանում գտնուող ԺԷ. դարի հայկական վիշապագորգը: Խճանկարը պատրաստուել է շուրջ 900 հազար կտոր տարբեր տեսակի (մարմար, գրանիտ, ազուրիտ, տուֆ-աւազաքար) քարերից:

Յուշագիր Հայաստանի պատմութեան թանգարանի հետ

Ընկերութեան բարեգործական ձեռնարկներից էր նաեւ Հայաստանի պատմութեան թանգարանի հետ կնքուած յուշագիրը 2023ին, որի արդիւնքում Հայաստանի պատմութեան թանգարանում կտրուեց «Աստղահաւք» գորգը: Այն գործել էր «Մեգերեան Կարպետ մշակութային համալիր»ի մէկ գորգագործուի՝ Հայաստանի պատմութեան թանգարանի ցուցասրահներից մէկում: Գորգը դեռեւս չի վաճառուել: Այն պէտք է աճուրդով վաճառուի եւ ստացուած գումարով Հայաստանի պատմութեան թանգարանը հին գորգ է գնելու եւ հարստացնելու իր հաւաքածուն:



Գորգ Երեւան քաղաքի 2800ամեակին առթիւ

Մեգերեան ընտանիքի արժէքատուր եւ գեղեցիկ նուէրներից մէկը եղաւ Երեւան քաղաքի 2800 ամեակին առթիւ գործուած գորգը, 2018ին: Գորգն ունի 7 մետր երկարութիւն եւ 3,5 մետր լայնութիւն: Դրանում պատկերուած են Պատմական Հայաստանի մայրաքաղաքները՝ Վան, Արմաւիր, Երուանդաշատ, Արտաշատ, Տիգրանակերտ, Վաղարշապատ, Դուին, Բագարան, Շիրակաւան, Կարս, Անի, Երեւան, Արգիշտի արքան, Երեւանի ճարտարապետ՝ Ալեքսանդր Թամանեանը, Էրեբունիի ծննդեան վկայական հանդիսացող սեպագիր արձանագրութիւնը: Ներկայիս այն գտնուում է Երեւանի պատմութեան թանգարանի մուտքին:



Զինձառայողների ապահովագրութեան հիմնադրամի եւ «Մեգերեան Կարպետ»ի նախաձեռնութիւնը

2021ին գործուել է «Ջրաբերդ» գորգը Մարիոթ հիւրանոցում՝ ինը ամիս տեսողութեամբ: Հայաստան եկած բազում հիւրեր, պատուիրակութեան անդամներ, յայտնի մարդիկ, շոու բիզնէսի ներկայացուցիչներ իրենց մասնակցութիւնն ունեցան գորգի ստեղծման գործում:



Իւրաքանչիւրը գործում էր մէկ հանգոյց, որի համար հարկատու էր վճարել 1000 ՀՀ դրամ: Հաւաքուած ամբողջ գումարը՝ աւելի քան 8 մլն. դրամ, ընկերութիւնը փոխանցել է 1000+1 բարեգործական հիմնադ-

րամին, որը զբաղում է մահացած զինուորների ընտանիքներին, ինչպես նաև հաշմանդամ զինուորներին նիւթական օժանդակութեամբ:

Երուսաղէմի Սուրբ Յարութեան տաճարին նուիրուած Պապիրիկը եւ Վիշապագորգը գեղեցկացնում եւ ամբողջական են դարձնում եկեղեցու յարդարանքն ու միջավայրը

Կարեւոր իրադարձութիւն էր, երբ Ռաֆֆի եւ Թորոս Մեգերեանները երկու գորգ նուիրեցին Երուսաղէմի գլխաւոր սրբավայրերից մէկին՝ Ս. Յարութեան տաճարին: Իրականացաւ նրանց ուխտը՝ յիշատակ ունենալ քրիստոնէական ամենանուիրեալ եւ գլխաւոր սրբատեղիում: Առաջին գորգը հայկական ամենայայտնի եւ գեղեցիկ գորգերից «Վիշապագորգ»ն է, իսկ երկրորդը աշխարհի ամենահին գորգի՝ Պապիրիկի, վերարտադրուած տարբերակը: Մեգերեան Վիշապագորգը զարդարում է նաև Ս. Ղազարի մայրավանքի եկեղեցին:



«Գանձասար» գորգն օրհնուեց եւ նուիրուեց Գանձասար վանքին

Ընկերութիւնը գորգեր է գործել նաև Արցախի եկեղեցիների համար: Մասնաւորապես «Գանձասար» գորգն ունի 8.5 մետր երկարութիւն եւ 5 մետր լայնութիւն: Գորգում առկայ բոլոր պատկերները վերցուած են Գանձասարի եկեղեցու պատերի եւ դռների զարդանախշերից:





23 Հոկտեմբեր 2017ին Արցախի Հանրապետության Գանձասար վանական համալիրում գորգերի օրհնման եւ եկեղեցուն յանձնման արարողությունից

Արցախի նախագահի նստավայրում հայկական գորգերի նուիրաբերում

Մեզերեան ընտանիքի ամենագեղեցիկ գորգերից գտնուում էր նաեւ Արցախի նախագահի նստավայրում: Դիզայնը բաղկացած է Արցախի մեկքների տոհմերի զինանշաններից:

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՒ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒՄ

Կարելի է ասել, որ ընկերության ՀՀ մուտքով շատ բան է փոխուել հայկական գորգի ու գորգարուեստի առնչութեամբ: Առաջին հերթին, հայկական գորգարուեստը լայն դռներով, նաեւ առեստրական ուղիներով, մուտք գործեց միջազգային շուկայ՝ մրցունակ եւ յաղթական, գրաւելով իրեն արժանի հարթակը համաշխարհային գորգարուեստի համապատկերում: Միսկողմից, հայ գորգարուեստը թարմացաւ, նոր շունչ առաւ ու նորովի մուտք գործեց ԻԱ. դար, դուրս գալով ներկայացման հնացած ձեւերից ու որդեգրելով ժամանակակից ճաշակի ու մատուցման միջոցներ, օգտուելով մերօրեայ մրցակցային նորագոյն արհեստամիջոցներից:




Իտես հայկական գորգի համաշխարհային վերելքին մէջ Մեզերեան կարպետի խաղացած դերին ու գնահատելով նաեւ «Հայոց Յեղասպանութեան 100րդ տարելիցի միջոցառումների կազմակերպման եւ անցկացման աշխատանքներին ցուցաբերած գործուն աջակցութիւն»ը, Հայաստանի Հանրապետութեան նախագահ Սերժ Սարգսեանը Ռաֆֆի Յովհաննէսի Մեզերեանին պարգեատրեց «Երախտագիտութեան մետալ»ով, 2015ին:

2019 Մարտի 28ին Երեւանի Ա. Խաչատրեանի անուան համերգասրիում տեղի ունեցաւ «Մերկուրի» միջազգային մրցանակաբաշխութիւնը: Այդ շրջանակում Մեզերեան կարպետ ընկերութեան նախագահ Ռաֆֆի Մե-

գերեանին տրուեց շնորհակալագիր «Մերկուրի» միջազգային մրցանակաբաշխութեան կազմակերպմանն աջակցելու համար¹:

2 Հոկտեմբեր 2017ին ՀՀ Տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարար Սուրէն Կարայեանը եւ նախարարութեան զբօսաշրջութեան պետական կոմիտէի նախագահ Զարմինէ Ջէյթունցեանը՝ զբօսաշրջութեան բնագաւառում ներդրած նշանակալի ասանդի համար Մեգերեան ընկերութիւնը պարգեատրեցին Հայաստանի Հանրապետութեան տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարարութեան ոսկէ մեդալով:

Իսկ 30 Հոկտեմբերի 2017ին, ընկերութեան նախագահ Ռաֆֆի Մեգերեանը պարգեատրուել է նաեւ «Փառապանծ մարտիկ» մեդալով եւ պատուոգրով՝ բանակաշինութեան եւ պետականաշինութեան գործին նպաստելու եւ բազում աշխատատեղեր ստեղծելու առիթով, միջազգային ոստիկանական ընկերակցութեան հայաստանեան կառոյցի եւ ոստիկանութեան ռազմականացում ջոկատի՝ ՕՍՕՆի վետերանների միութեան նախագահ, ազատամարտիկ գնդապետ Գրիշա Սարգսեանի կողմից:



Հայկական ասանդական գորգին հանգոյցը, ծանօթ՝ զոյգ հանգոյց (double knot), ինչպէս եւ Կիրոտէս անունով: Աայս հանգոյցը աւելի տոկուն եւ դիմացկուն կը դարձնի գորգը

¹ Այն կազմակերպում է 2006ից, ՀՀ առեւտրաարդիւնաբերական պալատի կողմից, եւ կոչուած է խրախուսել հայկական կազմակերպութիւններին եւ անհատներին, ստեղծել խթան՝ տարեցտարի իրենց արտադրանքի ու ծառայութիւնների որակն աւելի բարելաւելու համար:

**Նմուշներ՝ Յովհաննէս եւ Նոյեմի Մեգերեանների անուան
թանգարանի գորգերից**



«Ջրաբերդ», 1906, Արցախ



«Վահանագորգ», ԺԹ. դարավերջ, Սասուն



«Մեղու», Ի. դարասկիզբ, Արեւելեան Հայաստան



«Վահանագորգ», 1860ականներ, Արեւմտեան Հայաստան

STEPS TAKEN BY MEGERIAN CARPET CO. FOR THE REVIVAL OF
THE ARMENIAN RUG
(SUMMARY)

HASMIK SAYADYAN
hasmik.sayadyan93@gmail.com

The paper outlines the outstanding work the Megerian Carpet company has initiated in the Republic of Armenia

Originally from Chomaklu, the Megerians founded their company in 1917 in New York as an antique rug selling and repairing company. After the proclamation of independence of Armenia, the company established a branch in Armenia, with the intention of promoting the Armenian rug on the world market.

In 2002 the company bought Haygorg, the old Soviet Armenian rug factory in Yerevan, and made it its Armenia headquarters. This step gave the company further impetus to restore old Armenian rug-weaving traditions like the usage of Armenian knots, the dyeing of the wool using natural materials including plants and other natural dyes, fixing the color of the dye on the wool, and matching the density of the knots to the number of knots in a square centimeter in ancient Armenian rugs. The company set up branches in different regions and towns of the Republic. These were to be further enlarged had there not been the Covid 19 setback and international market crises.

Furthermore, the company produced copies of a number of renowned old Armenian rugs and designed and created new sets of Armenian rugs inspired by Armenian history. The company produced new versions of the oldest rug, the Pazyrik. The company toiled, strategized, promoted and marketed the Armenian rug on the world rug market with 21st century marketing methods, making it competitive and in demand.

Moreover, the company has developed an extensive social outreach program, whereby it campaigns for philanthropic and humanitarian support from different circles of Armenian society as well as cultural centers through fundraisings and auctioning several of its new, original and unique rugs.



Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒԻՍԱՌՈՐԻԶ - Ս. ԵՂԻԱ
ԱԹՈՈՒԱՆԻՍ ԵԿԵՂԵՑԻ

كاتدرائية القديسين غريغوريوس المتور
والياس النبي للأرمن الكاثوليك

CATHEDRALE ARMENIENNE CATHOLIQUE
ST. GREGOIRE - ST. ELIE


LA CATHEDRALE SAINT-GRÉGOIRE L'ILLUMINATEUR ET SAINT-ÉLIE AU FILS DES 65 ANS PÈRE RAFFI HOVANNESIAN frohanessian@hotmail.com

À l'occasion des 65 ans de la construction de la Cathédrale Saint-Grégoire l'Illuminateur et Saint-Élie, nous retraçons brièvement l'histoire de cette "jeune dame" qui fête ses 65 ans.

LA COMMUNAUTÉ ARMÉNIENNE CATHOLIQUE AU LEVANT

Commençons par situer brièvement les circonstances historiques et communautaires de l'édification de la Cathédrale.

Si des documents retracent une présence individuelle des Arméniens au Mont Liban depuis le XI^e siècle, l'installation de la communauté arménienne catholique au Liban remonte aux années 1700. Les premiers couvents s'établissent à Deir al-Kreim à Daroun-Ghosta, et à Beit Khechbao à Ghazir, tandis que le Siège patriarcal est transféré à Bzommar en 1742. Cependant, en 1830, le Siège patriarcal est déplacé de Bzommar à Constantinople, qui devient le centre de rayonnement de la communauté arménienne.





Passeport de Hagop Handjian portant la mention « Retour interdit »

Dès le XVIII^e siècle, jusqu'à la Première Guerre mondiale, l'Empire ottoman accordait aux Arméniens, comme aux autres chrétiens et aux juifs, le statut de *millet* : une autonomie communautaire concédée aux non-musulmans. Ainsi, on a vu naître au Levant une bourgeoisie arménienne composée de notables, de marchands, de banquiers et d'artisans, qui occupaient des positions enviablés dans la société.

Mais tout change avec la guerre. Le grand Génocide déporte les Arméniens d'A natolie, principalement vers le désert de Syrie. Les survivants s'installent à Alep, Damas et Beyrouth sous le Mandat français. D'autres regagnent la France ou les États-Unis.

L'EXODE AU LIBAN

La communauté arménienne catholique arrive au Liban, laissant derrière elle 156 églises et chapelles, 110 missions, 148 écoles, 32 couvents et 6 séminaires. Ils arrivent au Liban les poches vides, avec juste une vieille valise. Leurs passeports portent la mention : « Retour interdit ». Mais leur foi et leur détermination sont intactes. Ils sont secourus par des frères déjà intégrés et bien actifs.

La communauté arménienne catholique n'avait alors au Liban que le couvent de Bzommar, une petite mission à Sidon et la petite chapelle familiale des Khoukaz au centre-ville : l'ancêtre de la Cathédrale !

LA RENAISSANCE

L'Église arménienne catholique va s'établir en s'appuyant sur l'Institut du Clergé Patriarcal de Bzommar, sur l'ordre religieux des Mekhitaristes, et sur les Sœurs de l'Immaculée Conception qui construisent, en 1923, la première école arménienne au Liban : le Collège Sainte-Hripsimiants.

Traditionnellement chez les Arméniens, l'église s'adosse à une école ; ces deux centres apostoliques se renforcent mutuellement depuis des siècles ! Parfois, les églises attirent les familles arméniennes qui s'installent tout autour ; parfois, ce sont les familles déjà réunies en quartier qui construisent une



L'Autel principal de la chapelle Khoukaz

église. C'était le cas de la chapelle familiale Saint-Élie Khoukaz.

La communauté arménienne catholique s'organise progressivement autour de la petite chapelle Khoukaz. Deux écoles, une pour les garçons et une pour les filles, ainsi qu'un club sportif, sont construits à proximité. Bon nombre d'Arméniens trouvent du travail et du logement dans les quartiers de Bechara El-Khoury, Khandak El-Ghamik, Zokak El-Blat, Mazraa, rue El-Zarif, Watwat et Malla (à proximité du Dar El-Fatwa), rue Mar Elias, quartier Moussaytbeh, Sanayeh, rue Spears, rue Clemenceau, rue Hamra, etc.

En 1928, presque cent ans après le déplacement de Bzommar, le synode arménien catholique décide de revenir au Liban, à Beyrouth, en plein essor. En 1934, six ans après le retour, la communauté construit l'actuel Siège patriarcal, sur la colline Jeitawi d'Achrafieh.

REMPLENER LA CHAPELLE KHOUKAZ PAR UN LIEU DE CULTE PLUS GRAND

Avec les années, la petite chapelle Khoukaz, vieille de cent ans, demandait des réparations, et elle ne suffisait plus pour les besoins de la communauté. Il fallait impérativement assurer le remplacement de ce petit édifice religieux.

Le Patriarche Grégoire-Pierre XVI Agagianian, ce saint homme de renommée internationale, charge un comité de proposer une solution. La famille Khoukaz offre le terrain. Les plans de Pascal Paboudjian sont retenus

en 1952. La petite église est détruite. Les prêtres de la paroisse se déplacent pour célébrer les messes à l'église Saint-Vincent de Paul, sur l'avenue Bechara El-Khoury. Et le chantier commence : la première pierre est posée en 1956. On fait venir des matériaux, des ouvriers spécialisés, charpentiers et tailleurs de pierre, qui s'activent à l'ombre des échafaudages en bois, sous les directives de Paboudjian et de Khoukaz. Ce grand projet architectural évoluera pendant plus de sept ans, avec la technicité des années cinquante (la taille des pierres sur place au burin), au milieu d'un centre-ville actif et turbulent, dans une ville en pleine mutation. Le résultat, nous l'avons sous les yeux : l'architecture typiquement arménienne se sublime par le choix de pierres d'un blanc lumineux ; la Cathédrale se distingue par son caractère traditionnel et unique, rayonnant au cœur de la capitale.



La Chapelle Khoukaz construite en 1860



LA CATHÉDRALE EN FÊTE JUSQU'EN 1975

En 1959, sans attendre la fin des travaux, le Patriarche Agagianian décide de l'inaugurer en grande pompe, en présence du Président de la République, le Général Fouad Chehab, et de tout le gratin de Beyrouth. Autre signe de modernité : la Grande Cathédrale blanche abrite aussi des salons et un théâtre (là où le comédien Sami Khayat faisait rire les jeunes).

À l'image du Liban en plein développement, la Cathédrale Saint-Grégoire l'Illuminateur et Saint-Élie

accueillait de grands événements communautaires et culturels. Sa modernité architecturale était un point de référence du centre-ville de plus en plus moderne de la capitale.

Les fidèles venaient en grand nombre à la cathédrale, participant aux messes du dimanche et aux principales fêtes paroissiales. Les prêtres visitaient les paroissiens dans leurs quartiers pendant les fêtes et pour la bénédiction des

maisons. Combien de grands mariages, de baptêmes ou de funérailles ont été célébrés entre ces murs rayonnants !

En face de la Cathédrale, il y avait un presbytère. La paroisse était également propriétaire de plusieurs biens immobiliers sur l'avenue Béchara El-Khoury et dans le centre-ville, dont le fameux Bazar des Arméniens (Souk al-Arman) et le marché des orfèvres (سوق الصاغة), etc.

Les souvenirs de l'arrivée en 1915 des déportés, pieds nus et sans un sou, étaient bien loin.



Medaille comémorative, à l'occasion du centenaire du Cardinal-Patriarche Agagianian

LA CATHÉDRALE EN TEMPS DE GUERRE ET DE CRISES

La guerre a divisé la capitale, et la ligne de démarcation, « la ligne verte », passait au pied de la Cathédrale. Comme beaucoup de Libanais, nos paroissiens se sont réfugiés bien loin de la ligne verte. L'objectif des curés, dont le P. Raphael Minassian, notre actuel cher Patriarche, était de protéger la Grande Dame et de maintenir le contact avec les paroissiens éparpillés. Miraculeusement, la Cathédrale a traversé intacte les 15 ans de guerre ! L'Arménien a encore réussi à se sauver en maintenant des liens avec les différentes parties.

Dès 1991, avec le plan de reconstruction de Solidere, la vie a repris progressivement, ainsi que les activités religieuses et culturelles. En 2005, lors des manifestations du 14 février et du 14 mars, le rayonnement de la Cathédrale était significatif. En coopérant avec les forces de l'ordre, les milliers de manifestants y trouvaient un lieu sûr et un centre de premiers secours de la Croix-Rouge libanaise, grâce à la sagesse du curé P. Georges Assadourian, actuellement évêque de Damas. En 2006, des milliers de tentes occupaient la place des Martyrs. Quand tous fermaient leurs rideaux de fer, la Cathédrale restait ouverte. La présence des prêtres a sûrement sécurisé les lieux, en

éloignant tout effet néfaste, mais surtout en restant à l'écoute des besoins des occupants du centre-ville.

Les bras de notre jeune Dame étaient aussi grands ouverts pendant les manifestations de novembre 2019. La Cathédrale, ancrée au centre de la ville, continuait à rayonner comme à chaque tremblement de la vie publique de la ville.

Si l'explosion du 4 août 2020 a fait dramatiquement disparaître des piliers de la communauté, ce drame aurait pu être encore plus tragique s'il n'était survenu en début de soirée. Devant la gravité du drame, la Cathédrale s'est mobilisée. La priorité était de secourir, de s'occuper des paroissiens dévastés. Les dommages matériels de la Cathédrale n'étaient pas prioritaires : certains rafistolages persistent jusqu'à ce jour, faute de financement.

En deux mots : en temps de paix comme en temps de crise, la Cathédrale rayonne, les bras ouverts au service de tous.

LA CATHÉDRALE EN 2024

Arrivons à l'année 2024. Sans nous attarder sur sa beauté architecturale, signalons que cette grande dame détient dans son cœur des trésors d'exception:

- Les magnifiques mosaïques, chef-d'œuvres dessinées par Ariel Adjémian et exécutées par le mosaïste italien Berlendis.
- Le buste du fondateur de la Cathédrale, le Cardinal Agagianian, placé à l'entrée en 1996, à l'occasion du centenaire de sa naissance, sculpté par M. Mazmanian.
- La relique de Saint Grégoire l'Illuminateur, offerte par le Pape Saint Jean-Paul II en 2001.
- Enfin, la rare copie conforme du Saint Suaire qui a touché l'original, déposée en 2010.

Nous témoignons que plus le pays fait bouger son centre de gravité, plus la Cathédrale prouve sa constance et son rayonnement, riche de la résilience de son héritage arménien.

LE CONSEIL PAROISSIAL

En cette année anniversaire des 65 ans de notre jeune Cathédrale, nous avons mis en place un conseil paroissial. En plus des fonctions paroissiales régulières, il a d'une part initié un grand projet de rénovation et d'autre part organisé diverses activités culturelles et des célébrations. Un concours artistique est le point d'entrée de cette année anniversaire.



EN CONCLUSION

La place qu'occupe la Cathédrale souligne l'importance de notre communauté arménienne dans le tissu social, politique et économique de la capitale : elle est bien « le cœur battant de la Ville ». Cette mission, nous allons la maintenir et la développer dans l'avenir. Nous voulons jouer un rôle constructif et capital pour l'unité de la population libanaise, dépassant les appartenances confessionnelles.

NOTES TECHNIQUES SUR LA NOUVELLE CATHEDRALE SAINT GREGOIRE [L'ILLUMINATEUR] ET SAINT ELIE DES ARMÉNIENS CATHOLIQUE, A BEYROUTH¹

Le plan de cette Cathédrale, composé dans le style des églises arméniennes du VII^e siècle, comprend une nef centrale, un atrium et le sanctuaire, s'inscrivant dans un rectangle de 38 mètres de long sur 20 mètres de large.

Un atrium carré précède la nef. Trois portes – une sur chacun des côtés non accolées à la nef – s'ouvrent sur un perron auquel on accède par un escalier monumental de 6,50 mètres de large.

Cette disposition permet la dispersion en éventail de la foule sortant de l'église, prévenant ainsi l'encombrement sur l'escalier d'entrée.

A l'opposé de l'atrium est disposée l'abside principale, dont l'ampleur semblerait disproportionnée avec la nef si la Cathédrale n'était pas le siège patriarcal du Cardinal-Patriarche Agagianian, et, de ce fait, appelée à voir le déroulement des grandes cérémonies religieuses.

Deux autels latéraux sont aménagés de chaque côté du sanctuaire.

¹ Tiré des archives du Patriarcat Arménien Catholique à Beyrouth.

La nef centrale est formée d'un carré de 18,50 mètres de côté hors d'œuvre. Elle est recouverte d'une coupole de 12 mètres de diamètre et de votes en berceaux. La coupole sur pendentifs, portée par quatre groupes de trois piliers, plane à 22 mètres de hauteurs.

La multiplication des points d'appui groupés, loin d'encombrer la nef, introduit de l'élégance et de la légèreté aux massifs du support.

L'architecte a essayé dans ce plan d'imposer aux fidèles des circulations périphérique : le fidèle peut entrer à l'église par une porte latérale de l'atrium, remplir ses obligations dominicales et quitter l'église sans déranger ni troubler le recueillement des assistants à l'office du maître-autel.

La disposition des sacristies, des fonts baptismaux a été guidée par la même idée : réduire au minimum la circulation à travers le chœur et le sanctuaire.

La silhouette extérieure de cet édifice, tout en évoquant celle de Sainte Hripsimé (VII siècle) et de Horomos (X et XI siècle) a été conçue en tenant compte de la lumière méditerranéenne. Les ombres soutenues et les lumières brillantes des coupoles et des toits se développent sur une composition pyramidale.

Le regard s'élève depuis l'entrée vers le lanterneau de l'atrium, la coupole centrale et au-delà jusqu'au clocher qui se profile sur le ciel bleu.

L'architecture des piliers, des arcs, des voûtes et des coupoles constitue le principal décor intérieur.

Le maître-autel, point de mire de tous les assistants, lieu où se perpétue l'acte essentiel de la religion chrétienne, le sacrifice de la messe, a été particulièrement soigné. La dalle est un monolyte en pierre de « Chemlan » ornée d'une frise frontale sur le thème de « vigne et épis de blé », taillée dans le style de la sculpture arménienne.

L'autel est surmonté d'un ciborium porté par six colonnes à chapiteaux rappelant la frise de la table d'autel.

L'ascension du Christ, entouré par St. Grégoire et St. Elie, en mosaïques, recouvrira la conque de l'abside. Cette scène se déroule sur un fond bleu foncé étoilé d'or d'où se détachent les bras d'une croix de sang.

Les figures de la mosaïque ont été dessinées par l'artiste Ariel Adjemian, adaptées et exécutées par le mosaïste italien Berlendis.

Le clocher de 40 mètres de hauteur est doté d'un carillon de 4 cloches, coulées par la maison française Blanchet.

Les architectes Pascal Paboudjian et Elie Khoukas ont conçu les plans dont l'exécution a été confiée à la Maison Derwiche-Haddad.

Les lustres en fer forgé, les candélabres, la porte du tabernacle, la table de communion, ont été étudiés et dessinés en détail pour garder une unité de conception avec l'ensemble architectural.

NOTICE SUR LA CONSECRATION ET L'INOUGURATION DE LA CATHEDRALE
ARMENIENNE CATHOLIQUE, ERIGEE A BEYROUTH ET DEDIEE A
SAINT GREGOIRE [L'ILLUMINEUR] ET SAINT ELIE²

La Cathédrale St. Grégoire et St. Elie des Arméniens Catholiques, sise à l'angle sud-est de la place Debbas, a été consacrée le samedi 3 Janvier 1958 et inaugurée le lendemain par une Messe pontificale célébrée par S. Em. Le Cardinal Agagianian Patriarche Arménien Catholique, en la présence de S. E. L'Emir Fouad Chehab, président de la République Libanaise, du chef du Gouvernement et des Ministres, de S. Em. Le Cardinal Tappouni, de S. E. Mgr. Le Nonce Apostolique Joseph Beltrami et des Membres du Corps Diplomatiques, de L. E. Nos Seigneurs Ziadé, Nabaa, Smith, Houry, Jarjour, Zohrabian, Koguian, Batanian ; des Supérieurs des Ordres Religieux et des différents établissements catholiques, ainsi que d'une très nombreuse assistance.

La cérémonie s'est déroulée dans un ordre parfait, et les chants liturgiques ont été exécutés avec succès, de manière à provoquer l'admiration de tous les présents.

Après la cérémonie tous les présents, reçus dans les grandioses salons de la crypte de l'église, ont exprimé leurs vœux à Son Eminence le Cardinal Agagianian.

Après que lecture eût été donnée du télégramme de bénédiction de Sa Sainteté le Pape Jean XXIII, Son Eminence le Cardinal-Patriarche prononça un très beau discours de circonstance : Il remercia le Président de la République, sa suite et tous les présents pour leur participation à la solennité de la dédicace de l'église, acte public et solennel du culte.

Il parla de la fatigue nécessitée par cette construction et de la joie causée par sa consécration.

La fatigue fut la patience de ses prédécesseurs, qui dépossédés de leur siège et éloignés de leur troupeau, ont revé cette cathédrale en se soumettant à une situation humiliante pour leur dignité de Patriarche et pénible pour leur cœur de Pasteur ; c'est la générosité des bienfaiteurs qui ont su se priver pour pouvoir donner ; c'est le talent des architectes, qui n'ont épargné ni temps ni fatigue pour réaliser une œuvre d'art ; c'est la conscience et la compétence de la maison d'entreprise, qui a compris qu'elle construisait une maison destinée à devenir l'habitation du Seigneur ; c'est le dévouement émouvant de tous les ouvriers, qui n'ont eu que le souci de produire un travail fini irréprochable ; enfin c'est la prière fervente unie aux sacrifices de tant d'âmes, qui ont demandé que l'oeuvre commencée par Dieu se termine à la gloire de Notre Seigneur Jésus Christ.

² Cf. archives du Saint Elie Arménien Catholique à Beyrouth.

« Et voilà que cette construction, dit le Cardinal, fruit de tant de fatigues, de soucis et de sacrifices, devient, par la consécration, une source de douce joie ». Cette ère de joie pour les âmes commence par l'inauguration ; la voute vaste et la coupole grandiose, image de la majestueuse puissance de Dieu,

« Toutes ces considerations, conclut le Cardinal, nous portent à voir en cette Cathédrale, fruit de fatigue et cause de joie, un symbole, un mémorial et un monument » : Cette Cathédrale est le symbole de l'attachement de la Communauté Arménienne Catholique au Premier Siège de la Chrétienté, « dont le titulaire Notre Saint Père Jean XXII, Vicaire du Christ, a daigné être parmi nous, en cette circonstance par sa Bénédiction Apostolique embrassant tous les Libanais » ; elle est le souvenir amoureux de tant de martyrs, de confesseurs de la foi, de héros de notre peuple, qui ont su donner leur vie pour Dieu et pour la Patrie ; élevée au cœur même de la Capitale Libanaise, elle sera un monument qui dira aux siècles à venir la gratitude profonde de plusieurs dizaines de milliers d'Arméniens qui ont trouvé, dans le Liban, leur Patrie bien aimée ».

S'adressant enfin au président de la République, Son Eminence dit : « En cette circonstance solennelle, nous pouvons vous assurer, Monsieur le Président de la République, que cette gratitude, bien ancrée au fond du cœur de chaque Arménien, se traduira en des prières ferventes adressées, de cette Cathédrale, au Seigneur, pour que le Liban, qu'il a adigné sauver de la dure épreuve des mois passés, puisse continuer, grâce à la sagesse de ses dirigeants, guidés par Votre Excellence, et grâce au dévouement de tous ses fils, à être terre de liberté et de tolérance, de respect et de compréhension mutuels, de coexistence dans l'amour et la charité et d'émulation au bien commun, d'attachement aux valeurs morales et spirituelles et à la dignité de la personne humaine ».

Son Eminence termina son discours par le vœu, humblement adressé au Seigneur, pour « qu'il daigne agréer le temple dédié aujourd'hui à sa gloire et le rendre un centre de sa miséricordieuse bonté ; et pour qu'il veuille assister de son aide divine le Liban ».

Le jour même de l'inauguration de la Cathédrale, le Cardinal Agagianian donna, à 13hr30, au séminaire de Jounieh, un déjeuner en l'honneur de S. E. l'Emir Fouad Chehab, Président de la République Libanaise, réunissant autour de lui une élite de 54 personnes, composée de toutes les hautes autorités religieuses et civiles ainsi que de quelques notables des différentes communautés.

Parmi les présents on notait : S. E. le Président de la République, LL. Em. Les Cardinaux Tappouni et Agagianian, S. B. Mgr. Méouchi, Patriarche Maronite, LL. EE. Adel Ousseyan, Président de la chambre et les Ministres Oueyni, Eddé et Gemayel ; S. E. Alfred Naccache, ancien Président de la

République, S. E. Mgr. Beltrami, Nonce Apostolique, S. E. Louis Roché, Ambassadeur de France, S. E. Enrico Guastone Belcredi, Ambassadeur d'Italie ; LL. EE. Nos Seigneurs Ziadé, Nabaa, Smith, Chedid, Khoury, Zohrabian, Koguian, Bayan, Batanian, quelques anciens ministres, un ou deux notables de chaque communauté et quelques hauts fonctionnaires de l'état.



La chapelle à la moitié des années 1970



La chapelle dans les années 2010

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐԻԶ-Ս. ԵՂԻԱ ԵԿԵՂԵՑԻՆ ԱՆՑՆՈՂ 65 ՏԱՐԻՆԵՐՈՒՆ
(ԱՄՓՈՓՈՒՄ)

ՏԷՐ ՐԱՖՖԻ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ
frohanessian@hotmail.com

Պէյրոսի կեդրոնական շրջանին մէջ գտնուող հայ կաթողիկէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ-Ս. Եղիա եկեղեցիին հիմնարկէքը կատարուած է 1956ին: Սակայն կառոյցին արմատները կ'երթան դար մը ետ՝ 1850ականներ, երբ նոյն վայրին մէջ կառուցուած էր հայ կաթողիկէ Խուքազ (Ղուկաս) մատուռը:

1950ականներուն Լիբանանի հայ կաթողիկէ համայնքին թիփն աճը, խորհրդարանին մէջ երեսփոխանական ներկայացուցիչի մը յառաջացումը, երկրին սրընթաց բարգաւաճումը անհրաժեշտութիւն դարձուցին նոր եկեղեցիի մը կառուցումը: Մատուռը նուիրաբերող հայ կաթողիկէ Խուքազ ընտանիքը պատրաստակամութիւն կը յայտնէ նուիրաբերելու մատուռին հողը՝ հայ կաթողիկէ պատրիարքութեան: Այնուհետեւ, կաթողիկոս-պատրիարք, կարտինալ Աղաճանեանի ջանքերով եւ այլոց գործակցութեամբ, Պէյրոսի սրտին վրայ վեր կը խոյանայ հայկական ճարտարապետութեան իրայատկութիւններով օժտուած այս հոյակապ տաճարը:

Յօդուածը կ'ընէ պատումը եկեղեցիին եւ անոր անցած վերջին հարիւրամեայ ընթացքին: Յօդուածին կցուած են արխիւային երկու փաստաթուղթեր՝ նորակառոյց եկեղեցիին ճարտարապետական մանրամասնութիւններուն առնչուող:



**ՄԵՐՁԱԻՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ
ՀԱՅ ԱՐԵՏԱՐԱՆԱԿԱՆ
ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ
ՄԻՈՒԹԵԱՆ
ՎԵՐԱԿԱՆՔՆՈՒՄԸ.
1924Ի ՅԵՏԵՂԵՌՆԵԱՆ
Ա. ՀԱՄԱԺՈՂՈՎԸ ԵՒ
ՑԱՆԿԸ՝ 1924-2024
ՀԱՄԱԺՈՂՈՎՆԵՐՈՒ՝**

ՄԻՈՒԹԵԱՆ՝ ԱՌԱՋԻՆ ԺՈՂՈՎԸ

1920-24ի միջոցին Սուրիոյ եւ Լիբանանի զանազան քաղաքներուն եւ գիւղերուն մէջ հաստատուած հայերը իրենք զիրենք քիչ թէ շատ տեղաւորուած եւ տեղ-տեղ ալ կանոնաւոր եկեղեցական ու կրթական գործունէութեան սկսած էին ձեռնարկել: Հալէպի Հայ Աւետ. եկեղեցին, որ Ա. համաշխարհայինի տետղութեան իր գոյութիւնը պահած եւ հոգետոր պաշտամունքները շարունակած էր³, ի տարբերութիւն Կիլիկիոյ Հայ Աւետ. միութեան եկեղեցիներուն, առաջնորդողի դեր մը սկսաւ խաղալ նպատակ ունենալով մէկտեղել-վերահաստատել-վերականգնել ու շարունակութիւնը դառնալ Կիլիկիոյ Հայ Աւետ. միութեան եկեղեցիներուն: Աւետարանական համայնքի զաւակներուն մեծամասնութիւնը եւ կարետոր գրեթէ բոլոր հոգետոր դէմքերը Հալէպի մէջ հաւաքուած էին: Պարագաներու բերմամբ յառաջացած այս մէկտեղումութիւնը առիթ կու տայ առժամեայ յանձնախումբի մը յառաջացման, որով կը հրաւիրուին աւետարանական բոլոր եկեղեցիներն ու անոնց զաւակները Հալէպ պատուիրակ ղրկելու եւ ժողով գումարելու՝ Միութիւնը կազմելու եւ պատասխանատու պաշտօնական մարմինները վերստեղծելու համար⁴: Այս ժողովը, զոր կարելի է 'հիմնադիր ժողով' անուանել,

¹ Նիւթին յառաջացման նպատեցին վեր. Վիգէն Չոլաքեան (Յունաստան), Վերա Կոստանեան (Հայկազեան համալսարանի Տէրեան հայագիտական գրադարան):

² Այս պարագային Միութիւն եզրը պէտք է հասկնալ իբրեւ եկեղեցիներու եւ համայնքի զաւակներու պարունակ, քան թէ միասնութիւն:

³ Հալէպի հայ աւետ. եկեղեցին գոյութիւն ունէր 1850ականներէն:

⁴ Նախաեղեռնեան շրջանին, Կիլիկիոյ Հայ Աւետ. եկեղեցիներու միութեան կողքին կը գործէին նաեւ օժանդակ տարբեր յանձնախումբեր: Նախաեղեռնեան մէջ Կիլիկիոյ մէջ աւանդութիւն էին արդէն տարեկան համաժողովները:

տեղի կ'ունենայ 30 Ապրիլ-3 Մայիս 1924ի միջոցին: Գործիչներ եւ պատուիրակներ կու գան հետեւեալ վայրերէն.-

Հալէպ քաղաք՝ վեր. Կարապետ Յարութիւնեան, հոգետոր հովի, պատուիրակներ՝ Յովհաննէս Նիքոլա եւ տղքորներ Աւետիս Ճեպէճեան, Յարութիւն Գալֆայեան, Վարդան Փոլատեան, Սամուէլ Մկրտիչեան, Ս. Ռուպեան:

Հալէպ գաղթակայան (ծանօթ՝ քեմի անունով)՝ վեր. Կարապետ Քերէնճեան, հոգետոր հովի եւ Յովհաննէս Հայտոսթեան, պատուիրակ:

Ալեքսանտրէթ՝ Գէորգ Թումանեան, ամետարանիչ:

Ֆարթըսլը՝ Յարութիւն Չարխըթեան, ամետարանիչ:

Պէլլան՝ Փանոս Ահարոնեան, ամետարանիչ:

Գրըզ Խան՝ Նազարէթ Տարագճեան, ամետարանիչ:

Պիթիաս՝ պատ. Տիգրան Անդրէասեան, արտօնեալ քարոզիչ⁵, Մովսէս Րենճիլեան, պատուիրակ:

Եողուն Օլուզ՝ պատ. Պօղոս Թիֆլինճեան, արտօնեալ քարոզիչ:

Ճարապլուս՝ Հապիպ Տարագճեան, ամետարանիչ-ուսուցիչ⁶:

Քեսապ՝ Յակոբ Շնորհօթեան, ամետարանիչ:

Էքիզ Օլուզ եւ Քէօքքինէ, Ենովք Կէօքկէօզեան, ամետարանիչ:

Գալատուրան՝ Տիգրան Խրլոբեան, ամետարանիչ-ուսուցիչ:

Լաթաքիա՝ պատ. Կարապետ Հասէսեան, արտօնեալ քարոզիչ:

Դամասկոս՝ պատ. Նորայր Սարեան⁵ արտօնեալ քարոզիչ:

Պէյրութ քաղաք՝ վեր. Ենովք Հատիտեան, հոգետոր հովի:

Պէյրութ (ծանօթ՝ քեմի անունով)՝ վեր. Համբարձում Աշճեան, հոգետոր հովի:

Ժողովին իբրեւ բնական անդամ⁷ կ'անդամակցին նաեւ վեր. Գէորգ Գասարճեան, Յակոբ Գումրուեան՝ անպաշտօն եւ վեր. Սիսակ Մանուկեան իբրեւ շրջիկ⁸ ամետարանիչ: Պէյրութէն վեր. Բ. Տօնիկեան եւ Հալէպէն վեր. Ահարոն Շիրաճեան չեն անդամակցած:

Ուրիշ տեղեր ալ կանոնաւոր կամ անկանոն⁹ հոգետոր գործ կար ամետարանական փոքր համայնքներու մէջ, որոնք տակաւին զուրկ էին հոգետոր գործիչէ: Վեր. Մանուկեան իբրեւ շրջիկ ամետարանիչ կը տեղեկագրէ Սայտա, Չահիլ, Թրիփոլի, Համա, Սելիմիյէ, Պապ, Մունպուճ եւ Անտիոք

⁵ Աստուածաբանական ուսում ստացած հայ ամետարանականի առաջին հովուական տիտղոսը:

⁶ Այսմէկը պաշտօն է, անձը ձեռնադրեալ չէ:

⁷ Ժողովին քուէարկելու իրաւունք ունեցող, բայց ներկայացուցչական հանգամանք չունեցող անդամ:

⁸ Տարուան ընթացքին, զանազան եկեղեցիներ եւ համայնքներ այցելող, այնտեղ պաշտամունք կատարող անձ:

⁹ Հայ ամետ. Համայնքներ, ուր պաշտամունքն ու եկեղեցական այլեայլ արարողութիւնները տեղի եւ ժամանակի պարագայական բնոյթ ունէին:

գտնուող անհովի հայ աւետարանականներու եւ անոնց մէջ եղած հոգեւոր գործին մասին: Ճունիի մէջ ալ շատ կանուխէն հոգեւոր գործ սկսած էր:

Հիմնադիր այս ժողովին ներկայ վերոյիշեալ եօթը ձեռնադրեալ հովիւներէն, չորս արտօնեալ քարոզիչներէն, ութ աւետարանիչներէն եւ ութ պատուիրակներէն բաղկացեալ մարմինը Սուրիոյ եւ Լիբանանի մէջ Հայ Աւետարանական եկեղեցիներու միութիւնը պաշտօնապէս կազմուած կը հռչակէ՝ իբրեւ շարունակութիւնը Կիլիկիոյ Աւետ. Միութեան: Միա կողմէն, 1914-18ի տարագրութեան շրջանին եւ 1918-20ի թուրք ազգայնական շարժումին պատճառով հիւանդութեամբ կամ սպանութեամբ նահատակեալ Կիլիկիոյ հայ աւետարանական հոգեւոր գործիչները վերակոչելով, ժողովը յօտնկայս լռութեամբ յարգանք կը մատուցէ անոնց յիշատակին եւ կ'որոշէ անոնց անունները արձանագրել Միութեան ժողովի ատենագրութեան մէջ: Ստորեւ այդ անունները, ըստ տոմարի արձանագրութեան.-



ՄԱՀԱԵ միութեան Ա. համաժողով, 30 Ապրիլ--3 Մայիս 1924, Հալէպ

Սպանեալներ՝

1. Վեր. Գրիգոր Տէր Պողոսեան, հոգեւոր հովիւ Գայաճըզ թաղի Ա. Աւետ. եկեղեցւոյ, Այնթապ, նահատակուած Տէր Զօր, 1916ին:
2. Խաչատուր Տօգուլեան, աւետարանիչ Հայիկ թաղի Բ. Աւետ. եկեղեցւոյ, Այնթապ, նահատակեալ Տէր Զօր, 1916ին:
3. Պատ. Յակոբ Նաճարեան, հոգեւոր հովիւ Ալայ Պէյի թաղի Գ. Աւետ. եկեղեցւոյ, Այնթապ, նահատակեալ Տէր Զօր, 1916ին:
4. Պատ. Սողոմոն Աքքէլեան, հոգեւոր հովիւ Ուրֆայի Հայ Աւետ. եկեղեցւոյ, կախաղանի վրայ նահատակեալ Ուրֆա, 1915ին:
5. Պատ. Սիմոն Վեհապետեան, հոգեւոր հովիւ Ատիեամանի Աւետ. եկեղեցւոյ, նահատակեալ Ատիեամանի մէջ, 1916 Յունիսին:

6. Պատ. Աբրահամ Պէրպէրեան, նահատակեալ Մարաշ, 1920ին:
7. Վարդիվառ Խաչատուրեան, անտարանիչ Կապանի, նահատակեալ Կապան, 1920ին:
8. Վեր. Գասպար Հայտոսթեան, հոգետոր հովիւ Ֆընտըճագի, նահատակեալ Մարաշ, 1920ին:
9. Վեր. Ս. Զաքարեան, հոգետոր հովիւ Երէ Պաքանի, նահատակութեան տեղը անձանօթ:
10. Գրիգոր Պետրոսեան, անտարանիչ Վահկայի (Ֆեքէ), նահատակեալ Ռաս Իվ Այն, 1916ին:
11. Պատ. Սարգիս Զօպանեան, նահատակեալ 1916ին, Տէր Զօր:



ՄԱՀԱԵ միութեան Դ. համաժողով, 12-18 Ապրիլ 1928, Հալէպ

Այնթապի Կեդրոնական Թուրքիոյ քոլէճի փրոֆեսորներ.-

12. Փրոֆ. Լեւոն Պապիկեան, նահատակեալ Տէր Զօր, 1916ին:
13. Փրոֆ. Ճեսի Մաթոսեան, նահատակեալ Տէր Զօր, 1916ին:

Տարսոնի Ս. Պօղոս քոլէճի ուսուցիչներ.-

14. Պատ. Աղեքսանդր Էլմաճեան, նահատակեալ Ուրֆայի մօտ տեղ մը:
15. Պատ. Կարապետ Գսաճրգեան, նահատակեալ Մեսքենէ:
16. Մարտրոս Օղլուրգեան, նահատակեալ 1916ին, Տէր Զօր:
17. Յովհաննէս Հասրճեան, Կեդրոնական Թուրքիոյ քոլէճի ուսուցիչներէն, նահատակեալ 1916ին, Տէր Զօր:

Ժանտատենդի համաճարակի զոհ-նահատակներ՝

1. Փրոֆ. Արշակ Րումեան, Կեդրոնական Թուրքիոյ քոլէճ, 1916 Հալէպ:
2. Պատ. Սամուէլ Ինկիլիզեան, հոգետոր հովիւ Քիլիսի Աւետ. եկեղեցիի, 1915 Քիլիս:

3. Վեր. Յովհաննէս Էսքիճեան, հոգեւոր հովիւ Հալէպի Աւետ. եկեղեցւոյ, 1916, Հալէպ:
4. Վեր. Տիգրան Գունտազճեան, հոգեւոր հովիւ Քեսապի, 1916, Համա:
5. Պատ. Աբրահամ Գասարճեան, հոգեւոր հովիւ Ալպուսթանի, 1916ին, Մեսքենէ:
6. Պատ. Յ. Չիլինկիրեան, քարոզիչ Գալատուրանի, Պիրեճիք:

1918-20ի միջոցին բնական մահով հանգուցեալ գործիչներ՝

1. Վեր. Ստեփան Թովմասեան, 1920, Քիլիս:
2. Վեր. Սիմոն Թերզեան, 1922, Պէյրութ:
3. Պատ. Գէորգ Մնչերեան, 1923, Մարաշ:
4. Պատ. Ա. Տէր Կարապետեան, 1916, Հալէպ:
5. Փրոֆ. Նշան Պալիոզեան, 1924, Ամերիկա:
6. Փրոֆ. Սիմոն Քիւփէլեան, 1920, Տարսն:
7. Սիմոն Պեքեարեան, ատետարանիչ, յանկարծամահ 1924ին, Գրըզ Խան:



ՄԱՀԱԵ միութեան Ե. համաժողով, 21-28 Օգոստոս 1929, Քեսապ

Ապա, ժողովը հետեւելով Կիլիկիոյ Աւետ. միութեան աւանդական սովորութեան, կը հրաւիրէ Ամերիկեան Պորտի միսիոնարները՝ կազմելու - երկուքի մասնակցութեամբ - կայանալիք խորհրդակցական համաժողովը (conference): Պորտի Կեդր. Թուրքիոյ Առաքելութեան իբրեւ ներկայացուցիչ կը ներկայանան Այնթապի, Ատանայի, Տարսնի, Հալէպի եւ Պէյրութի 9 այր եւ 7 կին միսիոնարներ, որոնք են.- տորթ. Ուիլիլմ Նեսապիթ Չէյմպլըս, տորթ. Ճան Մարթին, տորթ. Լ. Շեփըրտ, տորթ. Հենրի Հասս, վեր. Հենրի Րիկզ, վեր. Նիլսըն, վեր. Վուլօրտ, վեր. Վուլսըն, օրք. Մէյրի եւ Էլիզապէթ Ուէպ քոյրեր, Լիպսիլ Ֆորմըն, Հ. Նորթըն, Րիյէր, Թամըր եւ Էտիթ Քոլտ:

Համաժողովը, որուն օրակարգին վրայ էին Պորտի եւ Միութեան համար հասարակաց խնդիրները, Սուրիոյ եւ Լիբանանի դաշտը կը բաժնէ երկու վարչական շրջաններու՝ Հալէպ եւ Պէյրութ, կ'ընտրէ նաեւ իւրաքանչիւրին շրջանային մարմինները:

Եկեղեցիներու Միութիւնը եւ Միութեան պաշտօնական մարմինները այսպէս կանոնաւոր կերպով հաստատուելէ ետք, գրեթէ ամէնամեայ ժողովներով զօրացուցին եւ ընդարձակեցին հայ աւետարանական գործունէութիւնը: 1924-2024ի միջոցին ՄԱՀԱԵՄը գումարած է 77 տարեկան համաժողով: Ստորեւ այդ ժողովներուն ցանկը:

- (1) Ա. Համաժողով, 30 Ապրիլ-3 Մայիս 1924, Հալէպ
- (2) Բ. Համաժողով, 7-13 Ապրիլ 1926, Հալէպ
- (3) Գ. Համաժողով, 25 Մայիս-1 Յունիս 1927, Պէյրութ
- (4) Դ. Համաժողով, 12-18 Ապրիլ 1928, Հալէպ
- (5) Ե. Համաժողով, 21-28 Օգոստոս 1929, Քեսապ
- (6) Զ. Համաժողով, 23-29 Ապրիլ 1930, Պէյրութ
- (7) Է. Համաժողով, 8-13 Ապրիլ 1931, Հալէպ
- (8) Ը. Համաժողով, 30 Մարտ-6 Ապրիլ 1932, Պէյրութ
- (9) Թ. Համաժողով, 29 Յունիս-6 Յուլիս 1934, Հալէպ¹⁰
- (10) Ժ. Համաժողով, 24-30 Ապրիլ 1935, Պէյրութ
- (11) ԺԱ. Համագումար, 15-18 Ապրիլ 1936, Հալէպ
- (12) ԺԲ. Համաժողով, 21-27 Սեպտեմբեր 1937, Շեմլան-Լիբանան
- (13) ԺԳ. Համաժողով, 26-31 Հոկտեմբեր 1938, Հալէպ
- (14) ԺԴ. Համաժողով, 3-8 Ապրիլ 1940, Պէյրութ
- (15) ԺԵ. Համաժողով, 27-30 Հոկտեմբեր 1942, Հալէպ
- (16) ԺԶ. Համաժողով, 11-19 Ապրիլ 1944, Պէյրութ
- (17) ԺԷ. Համաժողով, 11-19 Ապրիլ 1945, Պէյրութ
- (18) ԺԸ. Համաժողով, 27-30 Օգոստոս 1946, Շուէյր-Լիբանան
- (19) ԺԹ. Համաժողով, 5-10 Նոյեմբեր 1947, Հալէպ
- (20) Ի. Համաժողով, 31 Մարտ-5 Ապրիլ 1948, Պէյրութ
- (21) ԻԱ. Համաժողով, 11-17 Ապրիլ 1950, Հալէպ
- (22) ԻԲ. Համաժողով, 10-15 Յուլիս 1951, Հալէպ
- (23) ԻԳ. Համաժողով, 15-20 Ապրիլ 1952, Պէյրութ
- (24) ԻԴ. Համաժողով, 7-12 Ապրիլ 1953, Հալէպ
- (25) ԻԵ. Համաժողով, 21-25 Յուլիս 1954, Այնճար-Լիբանան
- (26) ԻԶ. Համաժողով, 12-17 Ապրիլ 1955, Հալէպ
- (27) ԻԷ. Համաժողով, 3-8 Ապրիլ 1956, Պէյրութ
- (28) ԻԸ. Համաժողով, 23-28 Ապրիլ 1957, Հալէպ

¹⁰ 1933ի համաժողովին մասին տուեալները անորոշ են: Կան համաժողովին գումարման մասին հրաւերը եւ 1948 Ապրիլի *Ջանասէրի* մէջ ցանկ մը: Համաժողովին մասին ոչ մէկ այլ տեղեկութիւն եւ տուեալ գտնուած է ցարդ:

- (29) ԻԹ. Համաժողով, 31 Մարտ--5 Ապրիլ 1959, Պեյրուֆ
- (30) Լ. Համաժողով, 4--9 Ապրիլ 1961, Հալէպ
- (31) ԼԱ. Համաժողով, 17--21 Ապրիլ 1963, Պեյրուֆ
- (32) ԼԲ. Համաժողով, 30 Յունիս--5 Յուլիս 1964, Հալէպ
- (33) ԼԳ. Համաժողով, 5--11 Յուլիս 1965, Պեյրուֆ
- (34) ԼԴ. Համաժողով, 12--17 Յուլիս 1966, Քեսապ-Սուրիա
- (35) ԼԵ. Համաժողով, 4--9 Յուլիս 1967, ՔՋԱԿ-Լիբանան
- (36) ԼԶ. Համաժողով, 27 Յունիս--2 Յուլիս 1968, Հալէպ
- (37) ԼԷ. Համաժողով, 1--6 Յուլիս 1969, Պեյրուֆ
- (38) ԼԸ. Համաժողով, 7--12 Յուլիս 1970, Քեսապ-Սուրիա
- (39) ԼԹ. Համաժողով, 29 Յունիս--4 Յուլիս 1971, Պեյրուֆ
- (40) Խ. Համաժողով, 3--9 Յուլիս 1972, Հալէպ
- (41) ԽԱ. Համաժողով, 9--14 Յուլիս 1974, Հալէպ (Յիսնամեակ)
- (42) ԽԲ. Համաժողով, 6--10 Յուլիս 1977, Այնճար-Լիբանան
- (43) ԽԳ. Համաժողով, 17--22 Ապրիլ 1979, Հալէպ
- (44) ԽԴ. Համաժողով, 8--12 Յուլիս 1980, Այնճար-Լիբանան
- (45) ԽԵ. Համաժողով, 2--6 Յուլիս 1986, Քեսապ-Սուրիա
- (46) ԽԶ. Համաժողով, 21--24 Յուլիս 1987, Այնճար-Լիբանան
- (47) ԽԷ. Համաժողով, 3--6 Յուլիս 1988, Այնճար-Այնճար
- (48) ԽԸ. Համաժողով, 28--31 Յուլիս 1991, Հալէպ
- (49) ԽԹ. Համաժողով, 29 Յունիս--3 Յուլիս 1992, Պեյրուֆ
- (50) Ծ. Համաժողով, 4--7 Յուլիս 1993, Քեսապ-Սուրիա
- (51) ԾԱ. Համաժողով, 3--6 Յուլիս 1994, Պեյրուֆ
- (52) ԾԲ. Համաժողով, 2--5 Յուլիս 1995, Հալէպ
- (53) ԾԳ. Համաժողով, 7--10 Յուլիս 1996, Պեյրուֆ
- (54) ԾԴ. Համաժողով, 7--10 Սեպտեմբեր 1997, Հալէպ
- (55) ԾԵ. Համաժողով, 6--9 Սեպտեմբեր 1998, Պեյրուֆ
- (56) ԾԶ. Համաժողով, 5--8 Սեպտեմբեր 1999, Հալէպ
- (57) ԾԷ. Համաժողով, 9--12 Յուլիս 2000, Այնճար-Լիբանան
- (58) ԾԸ. Համաժողով, 1--4 Յուլիս 2001, Քեսապ-Սուրիա
- (59) ԾԹ. Համաժողով, 7--10 Յուլիս 2002, Պեյրուֆ
- (60) Կ. Համաժողով, 7--10 Սեպտեմբեր 2003, Քեսապ-Սուրիա
- (61) ԿԱ. Համաժողով, 4--7 Յուլիս 2004, Այնճար-Լիբանան
- (62) ԿԲ. Համաժողով, 3--6 Յուլիս 2005, Հալէպ
- (63) ԿԳ. Համաժողով, 2--5 Յուլիս 2006, Այնճար-Լիբանան
- (64) ԿԴ. Համաժողով, 6--9 Յուլիս 2008, Քեսապ-Սուրիա
- (65) ԿԵ. Համաժողով, 5--8 Յուլիս 2009, Այնճար-Լիբանան
- (66) ԿԶ. Համաժողով, 4--7 Յուլիս 2010, Քեսապ-Սուրիա
- (67) ԿԷ. Համաժողով, 1--3 Յուլիս 2012, ՔՋԱԿ-Լիբանան
- (68) ԿԸ. Համաժողով, 6--9 Յուլիս 2014, ՔՋԱԿ-Լիբանան
- (69) ԿԹ. Համաժողով, 6--9 Յուլիս 2015, ՔՋԱԿ-Լիբանան

- (70) Հ. Համաժողով, 10--13 Յուլիս 2016, ԲԶԱԿ-Լիբանան
- (71) ՀԱ. Համաժողով, 2--5 Յուլիս 2017, ԲԶԱԿ-Լիբանան
- (72) ՀԲ. Համաժողով, 1--4 Յուլիս 2018, ԲԶԱԿ-Լիբանան
- (73) ՀԳ. Համաժողով, 7--10 Յուլիս 2019, ԲԶԱԿ-Լիբանան
- (74) ՀԴ. Համաժողով, 14--15 Նոյեմբեր 2021, Պէյրուս
- (75) ՀԵ. Համաժողով, 22 Նոյեմբեր 2022, ԲԶԱԿ-Լիբանան
- (76) ՀԶ. Համաժողով, 5--7 Յուլիս 2023, ԲԶԱԿ-Լիբանան
- (77) ՀԷ. Համաժողով, 30 Յունիս--3 Յուլիս 2024, Պէյրուս



ՄԱՀԱԵ միութեան ԺԷ. համաժողով, Պէյրուս, 1945

THE RESTORATION OF
THE UNION OF THE ARMENIAN EVANGELICAL CHURCHES OF THE NEAR EAST:
THE 1924 FIRST POST-GENOCIDE CONFERENCE AND THE
LIST OF THE DATES AND PLACES OF THE ENSUING CONFERENCES
(SUMMARY)

In 2024 the Union of Armenian Evangelical Churches in the Near East (UAECNE) convened its 77th annual conference in Lebanon and celebrated its 100th anniversary.

Back in 1924, after the Armenian Genocide and the second exile of the Armenians from Western Armenia, Cilicia and neighboring areas, surviving pastors of the Armenian Evangelical Churches of Cilicia and the environs gathered in Aleppo to restore the institution of the Union that existed in Cilicia, organize the newly formed Armenian Evangelical churches in Syria, Lebanon, Cyprus and the Middle East Arab countries and formalize them in a new Union which would have elements from the Cilician Union as well as new constituents. In this regard, UAECNE was both a continuation of past Armenian Evangelical traditions as well as an institutionalization of new developments with the church congregations.

This briefing includes the complete list of all the UAECNE conferences held in Syria-Lebanon in the last one hundred years.

ՄԱՀԱԳՐԱԿԱՆՆԵՐ



ԼԵՒՈՆ ԹՈՐՈՍԵԱՆ
(1935–2023)

Բառարանագիր Լեւոն Յակոբի Թորոսեան ծնած է 14 Ապրիլ 1935ին, Պէյրութ: 1941-47՝ յաճախած է Յիսուսեաններու Ս. Գրիգոր Լուսաւորիչ վարժարանը, էշրեֆիէ, Պէյրութ:

1953ին եղած է ՀԲԸՄ Պէյրութի Յովակիմեան-Մանուկեան մանչերու երկրորդական վարժարանի առաջին հունձքին 9 շրջանաւարտներէն մին: Երկրորդականի վկայականի կողքին, ան վկայագիր (General Certificate) կը ստանայ լոնտոնի համալսարանէն:

1953-54 կրթաշրջանին կ'ընդունուի Պէյրութի Ամերիկեան համալսարանի գիտութեան բաժինը զոր կ'աւարտէ 1957ին: 1958-74՝ բնագիտութիւն կը դասաւանդէ Յովակիմեան Մանուկեան եւ Հայ աւետարանական գոլէճ երկրորդական վարժարաններուն մէջ: 1965-74՝ Թորոսեան համալսարանական յատուկ դասաւանդութեանց կը հետեւի marketingի, առետրային նամակագրութեան, գերմաներէնի, սպաներէնի, համակարգչային տեղեկատուութեան ու ելեկտրական ճարտարագիտութեան մէջ:

1954էն կը սկսի իր հանրային գործունէութիւնը: 1960-75՝ մաս կը կազմէ միութենական եւ կուսակցական վարչութիւններու, կը դառնայ գործօն վարչական ՀԲԸՄ-ՀԵԸ Վահրամ Փափագեան թատերախումբին:

1965ին խումբ մը գործակիցներու (Մ. Ալամէտտին, Ֆ. Իտ, Ս. Հազիմէ եւ Ն. Նըմր) հետ, Թորոսեան կը ձեռնարկէ երկրորդական երեք կարգերու համար բնագիտութեան անգլերէն եւ ֆրանսերէն դասագիրքերու տարբեր շարքերու (ուսողութիւն եւ փորձառական գիտութիւններ, փիլիսոփայութիւն, գիտութիւն, գրականութիւն) պատրաստման: Այս դասագիրքերը կը համապատասխանէին Լիբանանի կրթական նախարարութեան մշակած ծրագրին: Անոնք լոյս կը սկսին տեսնել 1968ին, հանրաժանօթ *Librairie du Liban* հրատարակչատան կողմէ եւ անմիջապէս կ'որդեգրուին Լիբանանի երկրորդական բազմաթիւ վարժարաններու կողմէ:

Թորոսեան կը լծուի նաեւ մամուլի աշխատակցութեան, կը ստորագրէ գեղագիտութեան եւ արուեստի վերաբերեալ յօդուածներ: Շրջան մը կ'աշխատակցի Լիբանանի *Beirut* անգլիատառ պարբերականին, կը հրապարակուի Վենետիկի 1959ի միջազգային ֆիլմի փառատօնին, իբրեւ գեղագէտ քննա-

դատ: Ֆիլմերու իր վերլուծութիւնները լոյս կը տեսնեն Լիբանանի ֆրանսատառ *Cines d'Orient* եւ իր համահրատարակած *Film* շաբաթաթերթին մէջ, որ սակայն կը դադրի Լիբանանի պատերազմի սկիզբին: Ան կ'աշխատակցի նաեւ *Հարթօնքին*, *Շիրակին*, *Sketch*ին եւ այլ թերթերու, հիմնականին մէջ թատերական բեմադրութիւններու վերլուծութեամբ:

1971ին կ'ամուսնանայ Վոլթըրու Պրիկասքիի հետ եւ 1975ին, Լիբանանի քաղաքացիական պատերազմին, կը հաստատուի Վիեննա ու կը պաշտօնավարէ իբրեւ marketing manager, միաժամանակ թարգմանութիւններ կը կատարէ ամերիկեան Harper and Row հրատարակչատան համար: 1981ին կը պաշտօնակոչուի Վիեննայի մէջ գործող ՄԱԿի Աթոմական ուժանիւթի միջազգային գործակալութեան, ու կը ծառայէ մինչեւ իր հանգստեան կոչուիլը: Ան կը հրատարակէ նաեւ գործակալութեան *Echo* պարբերականը:

2014ին, Պէյրութի Շիրակ հրատարակչատունը լոյս կ'ընծայէ Մետրոպ Գոյումճեանի տասնամեակներ առաջ լոյս տեսած հայերէն-անգլերէն եւ անգլերէն-հայերէն բառարանին «այժմէականացած» տարբերակը՝ *Գրպանի նոր բառարան անգլերէն-հայերէն, հայերէն-անգլերէն* վերնագրով: Թորոսեան բառարանէն դուրս ձգած էր «անգործածելի դարձած կարգ մը բառեր եւ [աւելցուցած] շուրջ 1700 մերօրեայ բառեր»: Հրատարակած է նաեւ *Նամակ կը գրեմ. ուղեցոյց նամակագրութեան* հայերէն գրքոյկը: Արամ Սեփեթճեանի հետ հրատարակութեան պատրաստած ու հրատարակած է *Մշակութային իմ առաջին հանրագիտակց քառալեզու մատենաշարին* հայերէն տասհատորեակը, 2001-2ին:

1980ականներու աւարտէն ան մաս կը կազմէր Էքս ան Փրովանս (Ֆրանսա) հաստատուած Արեւմտահայ աշխարհաբարի եզրաբանական խորհուրդին, որ 1993էն հրատարակել սկսած էր արեւմտահայերէն աշխարհաբարի «տարբեր իմաստային դաշտերու նուիրուած ուղեցոյցներ» (նուիրուած՝ կառք-ինքնաշարժ-տեղեկագիտութիւն-ընդհանուր, նորաբանութիւններ, դրամատուն-սակարան-առետուրի, ընդհանուր նորաբանութիւններու եւ իրաւական եւ բժշկական դաշտի «ամենաէական եզրեր»ու):

Այս աշխատանքներուն կողքին, Թորոսեան լծուեցաւ գերմաներէնէ հայերէն եւ հայերէնէ գերմաներէն զոյգ բառարաններու պատրաստութեան: Ան ջանադրաբար, բազմիցս վերամշակեց այս զոյգ բառարանները որով աւելցան անոնց բառապաշարը, «իմաստներն ու դարձուածաբանական բառակապակցութիւնները՝ բառերուն ընդհանուր թիւը հասցնելով աւելի քան քառորդ միլիոնի» (Յառաջաբան Ե. տպագրութեան): Այս բառարանները ունեցան հինգ վերատպութիւն՝ ամէն անգամ ալ բառայօդուածներու յաւելումով: *Ընդարձակ բառարան հայերէնէ-գերմաներէն*ին չորրորդ հրատարակութիւնը եղաւ 2011ին, իսկ հինգերորդը՝ 2019ին: Իրայատուկն այս առումով այն է որ բառարանին մէջ նկատի առնուած են «հաւասարապէս ...արեւմտահայերէնի ինչպէս նաեւ արեւելահայերէնի բառամթերքները...»:

Իրեն՝ «այս վիթխարի աշխատանքին մէջ անգնահատելի սատար» հանդիսացած է դոկտ. Համբարձում Յարթունեսանը:

Թորոսեան մահացաւ 14 Նոյեմբեր 2023ին Վիեննա:

Վոյթրուտ Թորոսեան-Պրիկասքի
lwtorossian@chello.at



ՆԻԿՈԼԱՅ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ (1930--2024)

Հայաստանի գիտութեան վաստակաւոր գործիչ Նիկոլայ Յովհաննիսեանը ծնուել է 1930 Յունիսի 10ին, Լենինականում (ներկայիս Գիւմրի): 1953ին աւարտել է Երեւանի պետական համալսարանի միջազգային յարաբերութիւնների ֆակուլտետը, իսկ 1956ին՝ թեկնածուականը: 1968ին ստացել է պատմական գիտութիւնների դոկտորի գիտատիճան, իսկ 1971ին՝ պրոֆեսորի կոչում: 2006ին ընտրուել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ:

Պրոֆ. Յովհաննիսեանը ՀՀ ԳԱԱ Արեւելագիտութեան ինստիտուտի եւ արդի հայ արեւելագիտութեան հիմնադիրներից է: Նրա ջանքերով Հայաստանում հիմնադրուեց, կայացաւ եւ արեւելագիտութեան ոլորտում իր ուրոյն տեղը գրաւեց հայ արաբագիտութիւնը: Նա ՀՀում արաբագիտութեան պատմագիտական դպրոցի կարեւոր հիմնասիւններից էր, ով ակտիվ քան քառասուն տարի (1962-2003) գլխավորել է արաբական երկրների բաժինը: 1995-2006՝ զբաղեցրել է ԱԻԻ տնօրէնի պաշտօնը, ապա՝ տնօրէնի խորհրդականի եւ Միջազգային յարաբերութիւնների բաժնի վարիչի պաշտօնը, իսկ 2007ից՝ դարձաւ ՀՀ պաշտպանութեան նախարարութեան Դրաստամատ Կանայեանի անուան ազգային ռազմավարական հետազօտութիւնների ինստիտուտի պետի խորհրդական: Գիտութեան զարգացման համար այդ դժուարին շրջանում նրան յաջողուեց ոչ միայն պահպանել հայ արեւելագիտական դպրոցն ու դրա ձեռքբերումները, այլեւ այն համալրել երիտասարդ եւ խոստմնալից ուժերով: Նրա ղեկավարման տարիներին ԱԻԻ դարձաւ կարեւոր գիտական կենտրոններից մէկը՝ իրականացնելով նաեւ ռազմավարական առաքելութիւն: 2003ին Յովհաննիսեանը ստանձնեց նաեւ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղարի տեղակալի պարտականութիւնները: Զգալի է նրա դերն ԱԻԻում Արեւելեան Ասիայի երկրների բաժնի (որն ակտիվ ուշ ընդլայնուեց եւ վերանուանուեց Միջազգային յարաբերութիւնների բաժին) կազմաւորման եւ կայացման գործում:

Զգալի է Յովհաննիսեանի գիտական վաստակը եւ ներդրումը համաշխարհային արաբագիտութեան զարգացման բնագաւառում: Յովհաննիսեանի բեղուն գիտական գործունէութեամբ հայ արաբագիտութիւնը դարձել է համաշխարհային արաբագիտութեան կարեւոր բաղադրիչը:

Պրոֆ. Յովհաննիսեանը նշում է. «*Հայ արեւելագիտութիւնը բացառիկ նշանակութիւն է ունեցել համաշխարհային արեւելագիտութեան առանցքում: Այն կախում չի եղել արեւելագիտական այլ դպրոցներից, իսկ շփումները նրանց միջեւ չեն եղել «գերակայի եւ ստորադասի» յարաբերութիւններ: Հայ արեւելագէտներն արեւելագիտական կլոր սեղանի շուրջ նստել են հաւասարազօր իրաւունքներով՝ երբեմն նաեւ սրանձնելով առաջանցիկ դեր՝ հաւասար քայլելով եւրոպական եւ ռուսական արեւելագիտական դպրոցների հետ»¹:*

Տասնամեակներ ականաւոր արեւելագէտ-միջազգայնագէտի ուսումնասիրութիւնների կենտրոնում եղել են արաբական երկրների նորագոյն պատմութեան, միջազգային եւ տարածաշրջանային յարաբերութիւնների, հայ-արաբական, այդ թւում նաեւ միջպետական յարաբերութիւնների արդիական հիմնահարցերը: Նա առաջիններից էր, որ Խորհրդային Հայաստանում անդրադարձաւ արաբական երկրների ազգային ազատագրական շարժումների ուսումնասիրութեանը եւ ընթերցողի սեղանին դրեց արժէքաւոր մենագրութիւններ՝ *Ազգային-ազատագրական պայքարը Լիբանանում* (Երեւան, 1963, հայերէն եւ Բէյրութ, 1974, արաբերէն), *Սիրիական անկախ հանրապետութեան ստեղծումը* (Մոսկուա, 1968, ռուսերէն), *Ազգային-ազատագրական շարժումը Իրաքում* (Երեւան, 1975 ռուսերէն), *Լիբանանեան ճգնաժամը եւ Լիբանանի հայ համայնքի դիրքորոշումը (1975-1982 թթ.)*, Երեւան, 1982 եւն.:

Պրոֆ. Յովհաննիսեանը ԽՍՀՄում առաջիններից էր, ով միջարաբական յարաբերութիւնները սկսեց դիտարկել իբրեւ միջազգային յարաբերութիւնների ուսումնասիրութեան առանձին եւ կարեւոր բաղադրիչ: Իր ուսանողների հետ միասին նա սկսեց ուսումնասիրել այդ բարդ հիմնախնդիրը, որի արդիւնքը դարձաւ թեմատիկ առումով նրա եզակի մենագրութիւնը՝ *Իրաքի հանրապետութեան յարաբերութիւններն Արաբական Արեւելքի երկրների հետ* (Երեւան, 1985, ռուսերէն):

Նիկոլայ Յովհաննիսեանը լուրջ ներդրում է ունեցել նաեւ «քաղաքական իսլամի», մասնաւորապէս «Իսլամի քաղաքականացման եւ քաղաքականութեան իսլամացման» հայեցակարգի մշակման գործում: Նրա ղեկավարութեամբ հայ արաբագէտները Խորհրդային Միութիւնում առաջիններից էին, որ իրենց ուսումնասիրութիւններում կենտրոնական տեղ յատկացրին

¹ Նիկոլայ Յովհաննիսեան, «Հայ արեւելագիտութիւնը համաշխարհային արեւելագիտութեան համատեքստում (մինչխորհրդային ժամանակաշրջան)», *Պատմաբանասիրական հանդէս*, 2(193):2013, էջ 66-106:

խսլամի աշխուժացմանն ու դրա դրդապատճառների ուսումնասիրութեանը: Արդիւրում տպագրուեց «Իսլամն արդի Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկրների քաղաքական կեանքում» խմբային աշխատութիւնը (*Активизация ислама: характер, специфика и последствия, – в кн. Ислам в политической жизни стран современного Ближнего и Среднего Востока*, Երեւան, 1986)։

Հաշուի առնելով նրա ծառայութիւններն իսլամագիտութեան բնագաւառում, ԽՍՀՄ ԳԱ Արեւելագիտութեան ինստիտուտը 1985ին Ն. Յովհաննիսեանին նշանակեց Հայաստանում իսլամագիտական ուսումնասիրութիւնների համակարգող:

Նիկոլայ Յովհաննիսեանի ուսումնասիրութիւններում կարելի է տեսնել եւ զբաղեցնում նրա *Արաբական երկրների պատմութիւն (VII դ.- 2005 թ.)* քառահատոր աշխատութիւնը², որը բացառիկ է իր նշանակութեամբ: Պատահական չէ, որ այս լայնածաւալ աշխատանքը 2007ին արժանացաւ ՀՀ նախագահի մրցանակին, իսկ 2011ին թարգմանուեց արաբերէն եւ հրատարակուեց Հալէպում՝ իր տեղը գրաւելով նաեւ արաբալեզու պատմագրութեան մեջ:

Յովհաննիսեանի ուսումնասիրութիւնների շրջանակից դուրս չեն մնացել նաեւ էթնոքաղաքական հակամարտութիւնների, այդ թւում եւ ղարաբաղեան հիմնախնդրի հետազոտութիւնը, ինչպէս՝ *Ղարաբաղեան հիմնախնդիրը. անկախութեան եւ ազատութեան փշէ ճանապարհը* (Երեւան, Վենետիկ՝ անգլերէն, Հռոմ՝ իտալերէն), ԱՄՆում՝ Մերիլենդի համալսարանում հրատարակուած *էթնոքաղաքական առճակատումներն Անդրկովկասում. նրանց արմատները եւ լուծումները* եւն.:

Պրոֆ. Յովհաննիսեանի գիտական հետաքրքրութիւնների շարքում յատուկ տեղ էր զբաղեցնում Հայոց Յեղասպանութեան հայեցակարգային հիմնախնդիրների ուսումնասիրութիւնը, որին նուիրուած է նրա հետազոտութիւնների մի ամբողջ շարք: Այդ տեսանկիւնից կարելի է առանձնացնել *Հայոց Յեղասպանութիւն. հայասպանութիւնը որպէս ամենագենոցիդային գենոցիդ* (աշխարհի տասը լեզուներով՝ անգլերէն, գերմաներէն, ռուսերէն, ֆրանսերէն, թուրքերէն, հունգարերէն, ճապոներէն, հայերէն, արաբերէն, պարսկերէն, կորէերէն, ռումիներէն), միջգիտակարգային հետազոտութիւն-

² Նիկոլայ Յովհաննիսեան, *Արաբական երկրների պատմութիւն. Արաբները VII դարից մինչեւ 1516թ., հ. I*, Երեւան, 2003, *Արաբական երկրների պատմութիւն. Օսմանեան փրհապետութեան շրջան. 1516-1918, հ. II*, Երեւան, 2004, *Արաբական երկրների պատմութիւն. Անկախութեան եւ ինքնիշխանութեան դարաշրջան. 1918-2005 թթ., Ալժիր, ԱՄէ, Բահրէյն, Եգիպտոս, Եմէն, Թունիս, Իրաք, Լիբանան, Լիբիա, Կատար, հ. III*, Երեւան, 2006, 840 էջ, *Արաբական երկրների պատմութիւն. անկախութեան եւ ինքնիշխանութեան դարաշրջան. 1918-2005 թթ., Յորդանան, Մարիտանիա, Մարոկկո, Պաղեստինի Ինքնավարութիւն, Սաուդեան Արաբիա, Սիրիա, Սուդան, Քուեյթ, Օման, հ. IV*, Երեւան, 2007, 767 էջ:

նը: Այս հիմնարար աշխատանքն արժանացել է ՀՀ մշակույթի նախարարության առաջին կարգի դիպլոմի: Նիկոլայ Յովհաննիսեանի ջանքերով միջազգային լայն տարածում է ստացել «Արմենոցիդ» եզրը՝ որպես «Հայաստանության» հոմանիշ (Նիկոլայ Յովհաննիսեան, *Արմենոցիդը ճանաչուած ցեղասպանութիւն է*, «Զանգակ-97», Երեւան, 2010, 263 էջ): Պրոֆ. Յովհաննիսեանի հրատարակած աշխատութիւնների թիւը 563 է, որից անելի քան 87ը մենագրական ուսումնասիրութիւններ են:

Նիկոլայ Յովհաննիսեանի գիտական ղեկավարութեամբ անելի քան 50 պատմաբաններ պաշտպանել են թեկնածուական եւ դոկտորական ատենախօսութիւններ, այդ թում՝ Սիրիայից, Եգիպտոսից, Լիբանանից, Յորդանանից, Իրանից, Վրաստանից, Ռուսաստանից եւ արտասահմանեան այլ երկրներից: Մեծ է նրա դերն արաբագէտների միջանի սերունդների պատրաստման գործում: Յովհաննիսեանի աշակերտներից շատերն այսօր իրենց աշխատանքն են շարունակում նաեւ ՀՀ պետական մարմիններում՝ մասնատրապետ արտաքին գործերի նախարարութիւնում եւ այլ դիւանագիտական հաստատութիւններում:

Զգալի է Նիկոլայ Յովհաննիսեանի ներդրումը նաեւ հասարակական ոլորտում: Նա զբաղեցրել է խորհրդարարական բարեկամութեան եւ մշակութային կապերի ընկերակցութեան փոխնախագահի պաշտօնը, եղել է Ասիայի եւ Աֆրիկէի համերաշխութեան խորհրդային կոմիտէի եւ նրա վարչութեան անդամ, հայ-արաբական բարեկամութեան ընկերութեան նախագահ, «ԽՍՀՄ-Իրաք» բարեկամութեան ընկերութեան փոխնախագահ, «ԽՍՀՄ-Լիբանան», «ԽՍՀՄ-ԵժՂՀ» բարեկամութեան ընկերութիւնների վարչութիւնների անդամ: 1975ին Լիբանանում բռնկուած քաղաքացիական պատերազմի տարիներին, պրոֆ. Յովհաննիսեանը Խորհրդային Հայաստանից Լիբանան մեկնած պատուիրակութեան կազմում աշխուժ դերակատարում է ունեցել հայօճախին ցուցաբերած աջակցութեան կազմակերպման եւ դրա գոյութեան համար բարենպաստ քաղաքական մթնոլորտի ձեւաւորման գործում: Այս տեսանկիւնից ուշագրաւ է ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար (1974-88) Կարէն Դեմիրճեանի անտիպ գրառումներում Յովհաննիսեանին նուիրուած հատուածը: *Հայաստանի Հանրապետութիւն թերթում* (20 Օգոստոս, 1991) հրատարակուած է Յովհաննիսեանի յօդուածը՝ «Մի դրուագ հայերի հանդէպ այաթոլլահ Խոմէյնիի դիրքորոշումից», որում նշուում էր, որ 1978ին Լիբանանում դեռեւս 1975ին սկսուած քաղաքացիական պատերազմը հասել էր իր բարձր լարուածութեանը, լիբանանեան աջ ուժերն ուղղակի ճակատային յարձակում սկսեցին լիբանահայութեան նկատմամբ, որը որդեգրել էր դրական չէզոքութեան քաղաքականութիւն: *«Իրավիճակին ծանօթանալու եւ լիբանահայութեանն անհրաժեշտ օգնութիւն փորձադրելու նպատակով Հայաստանի կառավարութեան որոշմամբ 1979 Յունուարին Լիբանան մեկնեց պատուիրակութիւն, որի կազմում էր նաեւ Յովհաննիսեանը: Պատուիրակութիւնը յաջողութեամբ լուծեց իր առ-*

ջել դրուած խնդիրները: Բաական է նշել, որ մէկ ամսուայ ընթացքում Հայաստանից Բէյրութ ուղևորուեց շուրջ 30 տրանսպորտային ինքնաթիռ, որը Լիբանան հասցրեց պարէն, հագուստ, դեղորայք եւ այլ անհրաժեշտ իրեր»³:

Կառավարական պաշտօնական պատուիրակութիւնների կազմում. Յովհաննիսեանն այցելել է Լիբանան, Սիրիա, Իրաք, Յորդանան, Լիբիա, Հնդկաստան, Չինաստան եւ այլ երկրներ, մասնակցել Իրաքի նախագահ Ահմադ Հասան ԱլԲաքրի, Սիրիայի նախագահ Հաֆէզ Ասադի, Լիբանանի նախագահ Սուլէյման Ֆրանժիէի եւ վարչապետ Ռաշիդ Սոլիի, Պաղեստինի ազատագրութեան կազմակերպութեան ղեկավար Եասիր Արաֆաթի եւ այլ երկրների բարձրաստիճան պետական այրերի հետ բանակցութիւններին:

Պրոֆ. Յովհաննիսեանն արտասահմանեան մի շարք ակադեմիաների եւ գիտական ընկերութիւնների անդամ է, այդ թում՝ Փարիզի «Արարատ» միջազգային ակադեմիայի, Նիւ Եորքի գիտութիւնների ակադեմիայի, Գերմանիայի Բնութեան եւ հասարակութեան մասին գիտութիւնների միջազգային ակադեմիայի, Մոսկուայի Ազգային անվտանգութեան հիմնախնդիրների գիտութիւնների միջազգային ակադեմիայի, Աշխարհի ժողովուրդների հոգեւոր միասնութեան միջազգային ակադեմիայի (Մոսկուա), Սիրիայի արաբական գիտութեան պատմութեան ընկերութեան, ԱՄՆի ազգային աշխարհագրական ընկերութեան, Յեղասպանագիտութեան միջազգային ընկերակցութեան եւն.: 1989ին Բրիտանական ակադեմիայի հրաւերով նա գիտական ուսումնասիրութիւններ է իրականացրել Լոնդոնի, Օքսֆորդի եւ Էդինբուրգի համալսարաններում, Ֆուլբրայթի դրամաշնորհային ծրագրի շրջանակներում 1993-94՝ գիտահետազոտական աշխատանքներ է կատարել ԱՄՆի Ջորջ Ուաշինգտոնի համալսարանում, իսկ 1995ին՝ Մերիլենդի համալսարանում, ապա նաեւ Սիրիայի, Լիբանանի, Եգիպտոսի եւ Իրաքի գիտական հաստատութիւններում:

Պրոֆեսոր Ն. Յովհաննիսեանը պարգեւատրուել է Մովսէս Խորենացու, ՀՀ պաշտպանութեան նախարարութեան «Սպարապետ Վազգէն Սարգսեան» եւ «Հայկական զինուած ուժեր. 1992-2012», «Բարեկամութեան բնագաւառում ներդրման համար» (Մոսկուա) մեդալներով, ՀՀ կառավարութեան «Հայոց Մեծ Եղեռն» ոսկեգօծ մեդալով, Ֆրիտիոֆ Նանսէն յուշամեդալով, ԼՂՀ «Ղարաբաղեան Շարժում» մեդալով, ՀՀ ԳԱԱ Գովեստագրով, ՀՀ ազգային ժողովի նախագահի պատուգրով, «Հայաստան-Եգիպտոս. Դիւանագիտական յարաբերութիւններ. 15 տարի. բարեկամութիւն եւ համագործակցութիւն» մեդալով: 2015ին, ծննդեան 85ամեանկին՝ ԼՂՀ մատուցած ծառայութիւնների համար նա պարգեւատրուել է «Երախտագիտու-

³ Նիկոլայ Յովհաննիսեան, *Իրան. Այաթոլլահ Խոմէյնիի դարաշրժանը*, Երեւան, 2004, էջ 32:

թին» մեղալով, իսկ 2016 Յունուարի 23ին «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» պարգևատրուել է նաեւ 2րդ աստիճանի մեղալով:

Քեմբրիջի (Միացեալ Թագաւորութիւն) Միջազգային Կենսագրական կենտրոնը հայ մեծանուն գիտնականին 2004ին հռչակել է «Աշխարհի առաջատար գիտնական», 2005ին՝ ճանաչել «ԻԱ. դարի ականաւոր գիտնական», իսկ 2009ին՝ ներառել «100 բարձրակարգ գիտնականներ»ի ցանկում:

Նիկոլայ Յովհաննիսեանը մահացաւ 24 Նոյեմբեր 2024ին Երեւան:

Լիլիթ Յարութիւնեան
lily_har77@hotmail.com

ԼԵՒՈՆ ՔԵՉԷԵԱՆ
(1952–2022)

Ֆրանսահայ գրականագէտ, թարգմանիչ Լեւոն Քեչէեանը ծնուել է 1952ին: 2002ին Փարիզի Բարձրագոյն հետազոտութիւնների գործնական դպրոցում պաշտպանել է թեզ *Ջապէլ Եսայեան (1878-1943). կեանքը եւ ժամանակը* նիւթով, Ժան Պիեռ Մահէի ղեկավարութեամբ: Այն առանձին հատորով լոյս է տեսել նոյն թուականին՝ *Zabel Essayan (1878-1943): sa vie et son temps*, որն ընդգրկում է նաեւ գրողի ինքնակենսագրութիւնն ու նամակագրութիւնը ծանօթագրուած թարգմանութեամբ: Յօդուածով աշխատակցել է *Arménie, une passion française - le mouvement arménophile en France, 1878-1923* հատորին (2007, խմբ.՝ Քլէր Մուրադեան):

Քեչէեանի թարգմանութեամբ (հայերէնից ֆրանսերէն) լոյս են տեսել Աւետիս Ահարոնեանի *Sur le chemin de la liberté: Nouvelles* (համաթարգմանիչ՝ Ռոպէր Տէր Մերկերեան, 1978), Երուանդ Օտեանի *Journal de deportation* (2010), Ջապէլ Եսայեանի *Dans les ruines - les massacres d'Adana, avril 1909* (2011), Տիգրան Ա. Նաւասարդեանի *Contes arméniens: l'oiseau d'émeraude* (2012), Բարսեղ Շահբազի *Le pays d'Ararat le sait* (2015), Ա-Ռոյի *Van 1915 - Les grands événements de Vaspourakan* երկերը:

Քեչէեանը մահացել է 28 Հոկտեմբեր 2022ին, Փարիզում:

Արծուի Բախչինեան
artsvi@yahoo.com

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔԻՒՐՔՃԵԱՆ
(1943-2024)

Ափիւղքահայ մանկավարժ, գրականագէտ, խմբագիր Յարութիւն Լեւոնի Քիւրքճեան ծնած է Լիբանան, 14 Դեկտեմբեր 1943ին: Աւարտել է եւրոպական դպրոցի Նշան Փալանճեան ճեմարանը 1963ին, մէկ տարի կը յաճախէ International College: Իր բարձրագոյն ուսումը կը ստանայ Ecole



Supérieure des Lettresի (1964-66) եւ Սորպոնի համալսարանի (1966-68) փիլիսոփայութեան բաժանմունքներէն: Կը վերադառնայ Լիբանան, 1968ին եւ կը լծուի մանկավարժական աշխատանքի իր Մայր կրթարանին մէջ մինչեւ 1979, դասաւանդելով հայոց լեզու եւ գրականութիւն, ֆրանսերէն եւ փիլիսոփայութիւն: 1976-78՝ կրկին Սորպոն է, ուրկէ կը ստանայ «Փիլիսոփայութեան մագիստրոս» տիտղոս: 1969, Փետրուար-1975, Մարտ՝ դասաւանդած է նաեւ Հայկազեան գոլէճին (այժմ՝ համալսարան) մէջ՝ «Հիմնական գիտելիքներ հայերէն լեզուի սկսնակներու համար»: 1979-84՝ Համազգայինի հայագիտական բարձրագոյն հիմնարկին մէջ դասաւանդած է հայ գրականութիւն, քերականութիւն եւ գրականագիտութիւն: Եղած է ՀՅԴ մամլոյ դիւանի անդամ եւ պաշտօնաթերթ *Դրօշակի* աշխատակից: 1984ին փոխադրուած է Աթէնք:

Առաւելաբար գրականագիտական յօդուածներով աշխատակցած է *Ահեկան*, *Քազին*, *Յառաջ*, *Ազդակ* եւ այլ պարբերականներու: Եղած է *Ահեկանի* համասեփականատէր: Մասնակցած է բազում խորհրդաժողովներու եւ համագումարներու՝ առաւելաբար կրթական նիւթով, վերջինը՝ 2024 Յունիսին Լիզպոնի մէջ Գալուստ Կիլպէնկեան հիմնարկութեան կազմակերպած «Հաւասարում նորոգ – Սերունդներու գրոյց մը» հանդիպումը՝ իր մահէն երեք շաբաթ առաջ: Մաս կազմած է «Յուշամատեն» կայքի գիտական խորհուրդին:

Քիւրքեանի ուսումնասիրութիւններուն ծիրը կ'ընդգրկէ մանկավարժութիւնը (հայերէնի ուսուցում), գրականագիտութիւնը եւ ՀՅԴ պատմութիւնը: Աւելի քան յիսուն տարիներու ընթացքին լոյս ընծայուած անոր հատորները կը վկայեն վերոյիշեալ ասպարէզներուն հանդէպ հեղինակ-խմբագիրին բժախնդիր եւ հոգածու մօտեցումին մասին, այն աստիճան, որ կարելի չէ առաջնակարգել մէկ ծիրը միւսէն: Իրաքանչիւրին մէջ կը յայտնուին Քիւրքեան մտաւորականին լաւագոյն յատկանիշերը:

Անոր պատրաստած եւ հրատարակած դասագիրքերը Սփիւռքի տարածքին լոյս տեսած հայերէնի եւ հայ գրականութեան դասագիրքերու ոչ հարուստ ցանկին մէջ իւրայատուկ երեւոյթ են. անոնք կը զանազանուին ոչ միայն արդիական ձեւաւորումով եւ պատկերազարդումով (որոնք կատարուած են նոյնինքն հեղինակին կողմէ), այլեւ՝ բովանդակութեամբ եւ մատուցմամբ: Արդարեւ, Քիւրքեան ըստ կարելոյն փորձած է ընդգրկել մեծաթիւ գրողներ սկսեալ ԺԹ. դարէն մինչեւ Ի. դարավերջ: Դասագիրքերուն դասական պարունակէն դուրս գալը օգնած է անոր, որ շատ ծանօթ անուններու եւ մեծավաստակ գրողներու կողքին տեղ գտնեն նաեւ համեմատա-

բար համեստ վաստակի տէր եւ/կամ նուազ ծանօթ, բայց գրական շնորհքով օժտուած գրողներ, որոնք սփիւռքահայ դասագիրքի մէջ առաջին անգամ ընդգրկուելու պատիւին կ'արժանանան: Սա կը բխի, ոչ միայն գրականութեան հանդէպ արդար ըլլալու հեղինակին ճգտումէն, այլեւ դասագիրքի բովանդակային կառոյցէն, որ կը կեդրոնանայ գրական նիւթին վրայ, աւելի քան հեղինակին: Միաժամանակ կ'օգնէ, որ աշակերտը չունենայ այն տպաւորութիւնը, որ հայ գրականութիւնն այլեւս չի մշակուիր: Իսկ բարձրագոյն կարգերու զոյգ դասագիրքերը նաեւ հարուստ եւ մատչելի հանրագիտարանային աղբիւրներ են հայ մշակոյթի, արուեստի եւ պատմութեան:

Դասագիրքեր (ոմանք կնոջ՝ Մարօ Գալայճեան-Քիւրքճեանի գործակցութեամբ)

Նոր քերականութիւն հայերէն լեզուի (արեւմտահայերէն). Ա., Բ. եւ Գ. գիրքեր (հրտ. «Հայկական հրատարակչական», համապատասխանաբար 96, 152 եւ 152 էջ, Աթենք, 1989):

Հայրենի աղբիւր (Ձեռնարկ լեզուի եւ բացատրեալ ընթերցանութեան) շարքը. հեղինակային հրտ.: *Պատրաստական*, մի քանի տպագրութիւն (նոր ձեւաւորումով՝ 2013, 143 էջ), *Ա. փարի* (1993, 1996, 2000, 2009, նոր ձեւաւորումով՝ 2013), *Բ. փարի* (1993, 1996, 2003, նոր ձեւաւորումով՝ 2014, 160 էջ), *Գ. փարի* (1994, 1999, նոր ձեւաւորումով՝ 2013, 160 էջ): Բոլորին զուգահեռ լոյս տեսած են վարժութիւններու տետրակներ եւ ուսուցչի ուղեցոյցներ:

Մեր լեզուն. հայ լեզու եւ գրականութիւն 6 - 7 - 8 - 9, Հիւս. Ամերիկայի Արեւմտեան թեմի Ազգ. առաջնորդարանի հրտ., համապատասխանաբար 216, 224, 230 եւ 227 էջ, Լոս Անճելըս, 2001-9):

Հայ կեանք եւ գրականութիւն երկրորդական բաժին՝ հեղինակային հրտ.: *Ա. փարի* (2003, 2005, 326 էջ): *Նոյնին Բ. եւ Գ. փարիներ*՝ (2004, 318 էջ): Անջատաբար ունին «Ուսուցչի ուղեցոյցներ» եւ եռալեզու բառարան (հայերէն, ֆրանսերէն, անգլերէն):

Պատշաճեցումներ

«Հայրենի աղբիւր – գրադարան» շարքով, Քիւրքճեան, գործակցութեամբ իր կնոջ, իր բառով՝ խտացումի, թէեւ աւելի ճիշտ պիտի ըլլար ըսել՝ մանկավարժական պատշաճեցումի, ենթարկած է հայ գրականութենէն ուրոշ գիրքեր, զանոնք սփիւռքահայ պատանիին մատչելի դարձնելու մտահոգութեամբ: Գիրքերը օժտուած են նաեւ մանկավարժական հմտութեամբ պատրաստուած հարցարաններով: Բոլորն ալ լոյս տեսած են Պէյրութ եւ քանիցս վերահրատարակուած: Այս շարքով լոյս տեսած են.-

Վախթանգ Անանեան, *Յովազաճորի գերիները*

Արամ Հայկազ, *Տղու հոգիներ եւ ուրիշ պատմուածքներ*,

Ռաֆֆի, *Կայծեր Ա. եւ Բ.*

Աւետիս Ահարոնեան, *Իմ գիրքը*

Տասը աշխարհ, (10 գրողէ պատմուածքներ)

Երբ պատրանի ենք (Ժամանակակից 16 հայ գրողներու պատմուածքներէն խտացուած ու պարզեցուած նմուշներ), ԱՐԱՍ հրտ., Պոլիս, 2018 եւ 2023, 192 էջ:

Ինքնուսոյցներ

Manuel pratique de la langue arménienne (occidentale moderne) Ձեռնարկ հայերէն լեզուի. ֆրանսերէն-հայերէն ինքնուսոյց դասընթացք հրտ. Եւրոպայի հայ ուսանողներու միութիւն եւ Համազգային, Փարիզ-Պէյրուս, 1970, 1973 եւ 1982, 386 էջ.

Parev Բարեւ: initiation à l'arménien occidental moderne, հրատարակիչ՝ Bibliothèque publique d'information du Centre Pompidou, 1988, 1992, Փարիզ, 332 էջ եւ 10 ձայներիզ:

L'arménien instantané, Méthode d'arménien occidental, լսողական-գործնական մեթոտ հայերէնի, հրտ. Diaspora Arménienne, Nicosie-Paris-Montréal, 1990, Փարիզ, 216 էջ եւ 3 ձայներիզ:

Practical Textbook of Western Armenian Ձեռնարկ հայերէն լեզուի (արեւմտահայերէն), անգլերէն պատշաճեցումը Վիրճինիա Փեթի եւ Ռ. Սէթեան, «Հայ սփիւռք» մատենաշար, թիւ 3, 5 տպագրութիւն՝ Պէյրուս, Լոս Անճելըս 1980, 1998, 2007 եւ 2022, 388 էջ:

L'Armenien global Համադրական (լսողական-գործնական) մեթոտ հայերէն լեզուի (արեւմտահայերէն եւ ներածութիւն արեւելահայերէնի), Փարիզ, 2000, 301 էջ:

Լսողական-գործնական մեթոտ հայերէն լեզուի (արեւմտահայերէն-արեւելահայերէն, լրիւ ձայնագրուած) 1990:

Բառարաններ

Հայերէն-ֆրանսերէն բառարան, հրտ. տպարան Շիրակ, Պէյրուս, քանիցս վերահրատարակուած՝ 1976-1997:

Dictionnaire pratique français-arménien, Գործնական բառարան ֆրանսերէն-հայերէն, հրտ. տպ. Շիրակ, Պէյրուս, 1976, 472 էջ, Բ. տիպ.՝ 1981, Գ. տիպ. 1994, Դ. տիպ. 1998:

Գործնական բառարան ֆրանսերէն-հայերէն, հայերէն-ֆրանսերէն Dictionnaire pratique français-arménien, arménien-français, հրտ. տպ. Շիրակ, քանիցս վերահրատարակուած՝ մինչեւ 1998, Գրիգոր Շահինեանի համահեղինակութեամբ:

Գրականագիտութիւն

Փորձ տարա-գրութեան մասին – Essai sur l'exil յօդուածներու ժողովածուն, «Հայ սփիւռք» մատենաշար թիւ 1, հրտ. «Յառաջ»ի, Փարիզ, 1978, 287 էջ: Կը պարփակէ հեղինակին գրականագիտական յօդուածներն ու անոնց ֆրանսերէն թարգմանութիւնը:

Սփիւռք եւ ինքնացում, մատենաշար «Բագին»ի, Պէյրուս, 2022, 463 էջ: Կը պարփակէ Քիրքճեանի գրականագիտական եւ ընկերային բնոյթի յօդուածներէն փունջ մը:

Քիրքճեան խորագնին եւ քննական ընթերցումով ու սրբագրութիւններով կազմած է Յակոբ Օշականի վիպական երկերուն եւ մէկ գրականագիտական հատորի վրիպակներու ցանկերը, որոնց կարելի է ծանօթանալ առցանց՝ <https://kurkjian.info/> կայքի համապատասխան էջէն (Քննական ընթերցում Յակոբ Օշականի):

ՀՅԴ պատմութիւն

Քիրքճեան թարգմանած եւ խմբագրած է Հրաչ Տասնապետեանի *Պատմութիւն Հայ յեղափոխական դաշնակցութեան 1890–1924* գիրքը, կազմելով նաեւ անոր ժամանակագրական ցանկը: *Histoire de la Fédération Révolutionnaire Arménienne "Dachnaksoutioune, 1890/1924*, OEMME հրտ., Միլան, 1988, 220 էջ):

Անոր հեղինակութեամբ կամ խմբագրութեամբ լոյս տեսած են նաեւ հետեւեալ գիրքերը.-

Ուրուագիծ Հ. Յ. Դ. պատմութեան 1919-1924 հնգամեակի (Աթենք, 1988, 96 էջ):

Գաղափարագրութիւն Հայ յեղափոխական դաշնակցութեան եռահատոր շարքի 2 հատորները. *Ա. հատոր՝ Գաղափարաբանութիւն, Բ. հատոր՝ Կազմակերպութիւն* («Յեղափոխական մատենաշար, թիւ 14 եւ 15, հրտ. ՀՅԴ բիւրոյի, 1997):

Պատմագրութիւն Հայ յեղափոխական դաշնակցութեան. քառահատոր շարք, հրտ. «ՀՅԴ բիւրոյի Յեղափոխական մատենաշար թիւ 8, 9, 10, 11», համապատասխանաբար 1990, 1991, 1992 եւ 1995 ու 460, 485, 447, 524 էջ):

Քրիստոսափոր Միքայէլեան: Նահապարկութեան 100 ամեակ (1905-2005). Սոֆիա, 2005, 96 էջ):

Խմբագրական այլ գործեր

Յակոբ Օշական, *Շահպազ* (124 էջ), *Հածի Ապրուլլահ* (253 էջ), *Ծակ պրուկը* (507 էջ), *Մատենաշար Բագինի – դասական, Պէյրութ, 2024*: Քիրքճեան կատարած է նաեւ կարեւոր եւ մանրակրկիտ սրբագրութիւններ այս երեք գործերուն մէջ:

Թեհլիրեան արդարահարոյցը, Համազգային, Պէյրութ, 1981, 422 էջ, նաեւ 2014, 396 էջ

Լեռ Կամսար, Մարդը գործին մէջէն, ԱՐԱՍ հրատարակչատուն, Պոլիս, 2021, 480 էջ):

Ծաղկաքաղ սփիւռքահայ գրականութեան, Պէյրութ, 2009, 396 էջ):

Հայ մամուլը Յունաստանի մէջ, (թարգմ.) հետազոտութիւն «Արմենիքա» Աթենք, 2006, 65 էջ):

Բարեւ, մենք ենք, ծաղկաքաղ:

Քիրքճեանի մահէն ժամանակ մը առաջ եւ մանաւանդ անկէ ետք, անոր «Երկրորդ հաւասարում բազմաթիւ անյայտներով» դարակազմիկ յօդուածը

մոռացութեան փոշիներէն դուրս հանուեցաւ, թէեւ վաթսունականներու
աւարտին այնտեղ արտայայտուած խնդիրները երբեք փոշի չբռնեցին:

Ըլլա՛յ իր հրապարակագրութեան, ըլլա՛յ ուսումնասիրութիւններուն մէջ
Քիւրքճեան բժախնդիր գիտնականին կրցաւ միացնել ազնիւ մտաւորակա-
նը: Գիտութիւնը կրցաւ ընդելուզել առաքինութեան: Շուշանեան անձ-գրողի
հոգեխառնուածքին կամ միջինարեւելեան հայագաղութներու գերակայու-
թեան ինքնադրստորումներուն մասին ան ունի համարձակ եւ յառաջա-
պահ, ոմանց համար նաեւ վիճելի դատումներ, որոնք այլոց գրիչէն ծնած
ըլլալու պարագային, կրնային մեծ գայթակղութիւն յառաջացնել, բայց
նոյնիսկ Քիւրքճեանը անձամբ չճանչցողները չեն կրնար այդ երբեմն խիստ
եզրայանգումներուն ետին չտեսնել սրտցաւ մտաւորականը եւ մանաւանդ՝
արդար մարդը:

Հայերէնին ու անով ստեղծուած գրականութեան փոխանցումին ամէնէն
նախանձախնդիր անհատներէն մին էր ան, վկայ՝ իր քիչ խօսիլը եւ շատ
գործելը, որով ան կը կանգնի հազուագիտներու կողքին: Կան գրողներ,
արուեստագէտներ, որոնց գործը գնահատելէ ետք, երբ ճանչնաս անձը, կը
զղջաս անհատին ծանօթանալու: Գեղեցիկ պատկեր մը կ'աղարտի, հա-
մակրանք մը կը տժգունի մէջդ: Քիւրքճեանի գործին չափ անձի՛ն ծանօթա-
նալը առանձնայատուկ պատիւ էր. ատելին՝ անձը ճանչնալէդ ետք, ատելիով
կը հասկնայիր իր գաղափարները, մօտեցումները. կը հասկնայիր ու կը
գնահատէիր: Ու կը սիրէիր մարդն ու մտաւորականը:

Յարութիւն Քիւրքճեան մահացաւ 9 Օգոստոս 2024ին, Պսակաձեւ
Ժահրի հետեանքներէն, Աթենք:

ԱՐՄԷՆ ԻԻՐՆԷՇԼԵԱՆ
URNESHLIAN@YAHOO.COM

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՄԻ ԽԳ. ՀԱՏՈՐԻ ԶՈՅԳ ԳԻՐՔԵՐՈՒ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ ՊԷՅՐՈՒԹԻ...

Զորեքշաբթի, 14 Փետրուարի երեկոյեան ժամը 6ին Հայկազեան համալսարանի հանդիսասրահին մէջ տեղի ունեցաւ շնորհանդէսը համալսարանի հայագիտական տարեգիրքին, որ երկրորդ տարին է ահա, լոյս կը տեսնէ երկու գիրքով՝ մին տարուան կիսուն, միւսը՝ աւարտին:

43րդ հատորի զոյգ գիրքերուն շնորհանդէսին ներկայ էին հոգեւոր, կրթական, ակադեմական շրջանակներէ մարդիկ, գրասէր հայորդիներ: Կեդրոնական սեղանին ցուցադրուած էին համալսարանին հրատարակութիւններէն նմուշներ, իսկ ընթացիկ հատորին գիրքերը տրամադրելի էին փափաքողներուն:



Բացման խօսքը կատարեց ՀՀՀի խմբագրակազմի անդամ Սիլվա Փափազեան, որ յայտնեց, թէ զոյգ գիրքերը խմբագրութեան 18 ժողովներուն արդիւնքն էին, որոնց ընթացքին հրատարակելի նիւթերը կ'ենթարկուին բժախնդիր քննարկումի, միշտ գիտականութիւնը ունենալով իբրեւ չափանիշ եւ ուղենիշ: 33 հայրենաբնակ եւ 18 սփիւռքահայ գրողները կու գան երեք սերունդէ, կրտսերագոյնը ըլլալով 21 տարեկան. այսպիսով երիտասարդ ուսումնասիրողներու աշխատանքը գնահատելու ՀՀ հանդէսի նպատակներէն մին կը դառնայ իրական:

Ապա ելոյթ ունեցաւ Հանդէսի գլխաւոր խմբագիր դոկտ. Անդրանիկ Տազսեան, որ նշեց վերջին երեսուն տարիներու հայկական եւ միջազգային

զարգացումները՝ շեշտելով անոնց քայլ պահելու եւ զանոնք քննական միտքով ուսումնասիրելու կարելուութիւնը: Առ այդ, ան թուեց զոյգ գիրքերէն ուսումնասիրութիւններ, որոնք համահունչ էին վերոյիշեալ մտասեւեռումին: Տագէսեան նշեց, թէ արդէն կարիքը կը զգացուի, որ հայագիտութիւնը մերձենայ հոգեբանական եւ ընկերաբանական գիտակարգերու, միջուամունքային ձեւաչափով ուսումնասիրելու Սփիւոքի եւ Հայրենիքի հայութեան անցեալի եւ այժմու զանազան խնդիրները:

Համալսարանի նախագահ վեր. դոկտ. Փոլ Հայտոսթեան շնորհակալութիւն յայտնեց խմբագրակազմին, անոր աշխատակիցներուն եւ շնորհանդէսի ներկաներուն, *Հանդէսը* որակելով գանձ մը: Ան իր խօսքը ծաւալեց ո՞վ է մտաւորականը նիւթով, վեր առնելով այն անձնական՝ հոգեկան եւ մտաւոր առաքինութիւնները, որոնցմով պէտք է օժտուած ըլլայ մտաւորականը՝ անկախ իր վկայականէն, զբաղեցուցած դիրքէն ու հեղինակութենէն: Վերապատուելի Հայտոսթեան մտաւորականին հիմնական դերերէն մին նկատեց հոգեմտաւոր մարդակերտումը, որուն առաքելութիւնը պիտի ըլլայ յարափոփոխ, անհանդարտ, անարդար աշխարհին մէջ պատրաստել խղճի ձայնին անսացող, հանդարտաբարոյ, դիմացինը արժեւորող ու մանաւանդ պատմութեան փոխակերպումները վերլուծող մարդը: Վկայականներէն անդին, մտաւորականին խօսքը, ըստ Հայտոսթեանի, պէտք է ըլլայ ծանրակշիռ, որպէսզի ընդունելի, լսելի եւ ազդեցիկ դառնայ:

Աւանդական դարձած կարկանդակի հատումէն ետք, անպաշտօն մթնոլորտի մէջ շարունակուեցան շնորհաւորանքները, զրոյցներն ու քննարկումները:

...ԵՒ ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ- ԻՆՍՏԻՏՈՒՏԻՆ ՄԷՋ

Հայկազեան հայագիտական հանդէսի 43րդ հատորի զոյգ գիրքերու շնորհանդէսին երկրորդ հանգրուանը Հայոց Յեղասպանութեան Թանգարան-Ինստիտուտն էր:

16 Փետրուարին, գիտաժողովներու սրահը, մեծաթիւ ուսումնասէրներու, մտաւորականներու եւ բարեկիսմաներու ջերմ մթնոլորտի մը մէջ տեղի ունեցած այս շնորհանդէսին ներկաները ողջունեց թանգարանի տնօրէն դոկտ. Էտիթա Գզոյեանը: Ապա ան նշեց, որ ուրախ է առաջին անգամ տնօրէնի հանգամանքով *Հայկազեան հայագիտական հանդէսի* շնորհանդէսի մասնակիցները հիւրընկալելուն համար: Ան ընդգծեց, թէ *Հանդէսը* կը միատրէ Սփիւոքի եւ Հայաստանի գիտական ներուժը, եւ հայագիտութեան բնագաւառին մէջ ունի բացառիկ նշանակութիւն: Ապա *Հանդէսի* պատասխանատու խմբագիր դոկտ. Անդրանիկ Տագէսեան խօսք առնելով ընդգծեց, թէ «*Հանդէսի* խմբագրակազմը զգօն կը մնայ հայկական եւ միջազ-

գային մարդկային, ընկերաբանական, գիտական այլազան նորութիւններուն եւ կը ջանայ գանոնք արծագանգել՝ հայկական պրիսմակով, անոնց մէջ հնչել կը դառնայ ժամանակի շունչը. անոնք անուղղակիօրէն կը վերյուշեն մերօրեայ խնդիրներու անցեալի նմանակները: Ասիկա, հարազատ վերաճումն է այն աւանդին, զոր ժառանգեր ենք մեր երախտաշատ երէց խմբագիրներու տեսլականէն:... Թերեւս յաւակնոտ հնչէ, բայց համոզուած եմ որ հայ իրականութեան մէջ *Հայկազեան հայագիտական հանդէսը* այսօր կը գտնուի առաջին ետեակին մէջ հայագիտական այն հանդէսներուն, որոնք լայնագոյնս կ'արտացոլացնեն հայ իրականութիւնը՝ իր անցեալի ու մանաւանդ ներկայի բազմաբովանդակ երեսակներով:



Իր խօսքին մէջ, Մատենադարանի գիտական գծով տնօրէնի տեղակալ դոկտ. Վահէ Թորոսեան ընդգծեց որ *Հանդէսը «տասնամեակներ շարունակ լաւագոյնս իրականացնում է հայաստանեան եւ Սփիւռքի հայագիտական շրջանակներ կամրջող առաքելութիւնը*: Ան «գարմանք ու բերկրանք» արտայայտեց իտես *Հանդէսի* նիւթերու բազմազանութեան, որոնք «*ինքնին բանաձեւում են հայագիտութիւնը, տալիս նրա բովանդակային ու ժամանակային սահմանումները*»: Հուսկ, անդրադառնալով 43րդ հատորի երկրորդ գիրքի սկիզբի հարցազրոյցին, ան շեշտեց թէ հայագիտութիւնը կը դիմագրաւէ նոր մարտահրաւերներ. «*Այսօր միջազգային գիտական չափորոշիչներով բոլորովին նոր պահանջներ են սահմանուել գիտութեան եւ գիտական աշխատանքի վերաբերեալ*»:

Հայկազեան համալսարանի նախագահ, վերապատուելի դոկտոր Փոլ Հայտոսեան շնորհատրեց դոկտ. Գզոյեանի նոր պաշտօնը, գոհունակութիւն յայտնեց որ շնորհանդէսը Երեւան եւս տեղի ունեցաւ ու ւաւցոյց որ

ատենին Հանդեսի շնորհանդեսներ կազմակերպուած են նաեւ Արցախի մէջ: Ապա ան շեշտեց ներկայ ժամանակներու տագնապեցումները եւ ընդգծեց մտաւորականութեան առաքելութիւնը՝ ժամանակներն ու իրադարձութիւնները խորաշափելու, արժեւորելու եւ հանրութիւնը կողմնորոշելու առումով:

Հայկազեան հայագիտական հանդէսը լոյս կը տեսնէ 1970էն ի վեր, Պէյրութի մէջ: 2023ի զոյգ գիրքերը կը բովանդակեն խմբագրական մը, հարցապատասխան մը՝ դոկտորներ Կարէն Մաթեւոսեանի, Վարդան Մատթեւեանի եւ Աշոտ Մելքոնեանի հետ՝ «Հայագիտութիւնը ԻԱ. դարուն» նիւթով, նաեւ յօդուած-ուսումնասիրութիւններ՝ ազգագրութեան, արուեստի, արհեստներու, բանահիւսութեան, գրականագիտութեան, ընկերաբանութեան, լեզուի, կրօնքի, Հայ Եկեղեցիին, պատմութեան-հնագիտութեան, տնտեսագիտութեան, փիլիսոփայութեան նուիրուած, կան նաեւ հրապարակումներ, քննարկումներ, հաղորդումներ, գրախօսականներ, մահագրականներ, եւ համառօտ կենսագրութիւնը աշխատակիցներուն: Հանդէսի այս երկու գիրքերը միասնաբար կը հաշուեն 1080 էջ, իսկ աշխատակիցները կու գան Արժանթինէն, Արցախէն, Թուրքիայէն, Իրանէն, Լիբանանէն, Հայաստանի Հանրապետութենէն, Մ. Նահանգներէն, Սուրիայէն, Քանատայէն:

Հանդէսի այս եւ նախորդ բոլոր հատորներուն նիւթերը կարելի է գտնել առցանց՝ Հայաստանի Ազգային գրադարանի եւ ՀՀ Գիտութիւններու ազգային ակադեմիայի գրադարանի կայքէջերուն վրայ:

ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐՈՒ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Եուրի Աւետիսեան

yuriavetisyan@ysu.am

Ծնած է 1961ին, Արտաշատ: 2002ին պաշտպանած է դոկտորականը՝ «Արեւմտահայ բանաստեղծութեան լեզուն» նիւթով: 1988–2002՝ ԵՊՀ հայոց լեզուի ամբիոնի դասախօս, 2008էն՝ նոյն ամբիոնի փրոֆեսոր, 2015-9՝ ԵՊՀ սփիւռքագիտութեան ամբիոնի հիմնադիր-վարիչ, 2013էն՝ ԵՊՀ հայոց լեզուի ամբիոնի վարիչ: 2011էն անդամ է *Բանբեր Երեւանի համալսարանի*, իսկ 2013էն՝ *Հայագիտութեան հարցեր* պարբերականներու խմբագրական խորհուրդներուն: 2009–14՝ ՀՀ Սփիւռքի նախարարութեան ատեանի անդամ: Պարգևատրուած է ԹՄՄ «Հայկաշէն Ուզունեան» ամէնամեայ մրցանակ-պատուոգիրով (2003), ԵՊՀ ոսկեայ մետալով (2015): Համահեղինակ է գիրքերու, հեղինակ՝ դասագիրքերու, մենագրութիւններու, որոնց վերջինը՝ *Հայագիտութեան զուգահեռականներում* (2021):

Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն լեզուի կանոնակարգման հարցերը, հայոց լեզուն եւ խօսքի մշակոյթը, արեւմտահայերէնը, ձեւաբանութիւնը, արեւմտահայ բանաստեղծութեան լեզուն, արեւելահայերէնի եւ արեւմտահայերէնի զուգադրական քերականութիւնը, լեզուի զարգացումը, պաշտօնական լեզուն:

2011էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Արծուի Բախչինեան

artsvi@yahoo.com

Ծնած է 1971ին, Երեւան: 1996ին պաշտպանած է թեկնածուական «Վահան Տէրեանի ստեղծագործական աշխատանոցը» նիւթով: 2009էն գիտաշխատող է ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտի հայ գաղթավայրերի եւ Սփիւռքի բաժնին մէջ: Հեղինակ է բազմաթիւ ուսումնասիրական հատորներու, յօդուածներու, թարգմանութիւններու, որոնց վերջինը՝ *Հայերն Աֆրիկայում (պատմաբանասիրական ուսմանասիրութիւն)* (2024): Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն սփիւռքահայ համայնքներու պատմութիւնն ու պատմամշակութային առնչութիւնները, հայ մշակոյթի պատմութիւնը, նոր շրջանի պատմաբանասիրական նիւթերը, երեւելի հայագգիներ...: 2001-21՝ ՀՀՀ ներկայացուցիչն էր Երեւանի մէջ:

1998էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Ռուբէն Գասպարեան

ruben52@mail.ru

Ծնած է Երեւան, 1952ին: 1984ին աւարտած է ԵՊՀ բանասիրութեան ֆակուլտետը: 1986-88՝ պաշտօնավարած է Յուշարձաններու պահպանութեան պետական մարմին մէջ, իսկ 1988էն գիտաշխատող է ՀՀ ԳԱԱ հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտի վիմագրութեան բաժնին մէջ: Հեղինակ է տասնեակ մը գիտական յօդուածներու: Գիտական հետաքրք-

րուֆինններու ծիրը հայ միջնադարեան պատմագրութիւնն է: Իր ուսումնասիրութիւններուն իբրեւ աղբիւր կ'օգտագործէ ոչ միայն հայ եւ օտար պատմագիրներու երկերը, այլեւ վիմագրութիւնը: 2022էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Վաչագան Գրիգորեան

vachik_grigoryan@mail.ru

Ծնած է Կոտայքի մարզի Քաղսի գիւղը: 1983ին աւարտած է ԵՊՀ բանասիրութեան ֆակուլտէտը: 1988ին պաշտպանած է թեկնածուական, իսկ 2003ին՝ դոկտորական, 2008ին դարձած է փրոֆեսոր: 2010էն վարիչն է Գաւառի պետական համալսարանի հայոց լեզուի եւ գրականութեան ամբիոնին: 1991ին ընտրուած է Հրազդանի շրջանային ժողկրթբաժնի վարիչ, 1995-99՝ եղած է Կոտայքի մարզի կրթութեան վարչութեան պետի տեղակալ: Հեղինակ է Հրանտ Մաթետոսեանի եւ Լեւոն Շանթի մասին մենագրութիւններու, դասագիրքերու, օժանդակ ձեռնարկներու: 2013ին արժանացած է «Հրանտ Մաթետոսեան» մրցանակին: Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ դասական եւ նորագոյն շրջանի հայ գրականութիւնը: 2001էն կ'աշխատակցի *Հայկազեան հայագիտական հանդէսին*:

Լիլիթ Զաքարեան

lilitzakaryan66@gmail.com

Ծնած է 1966ին, Երեւան: 1993ին պաշտպանած է թեկնածուական՝ «Սոցիալ-տնտեսական փոփոխութիւնները խորհրդահայ գիւղում 1980ականներին» նիւթով: 2008ին ստացած է դոցենտի կոչում: Աւագ գիտաշխատող է ՀԱԱ ԳԱԱ պատմութեան ինստիտուտի նորագոյն պատմութեան բաժնին մէջ: Հեղինակ է մենագրութիւններու, վերջինը՝ *Տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման համակարգերի ձեւաւորումն ու զարգացումը Հայաստանի Հանրապետութիւնում* (2018): Գիտական հետաքրքրութիւններուն ծիրը կ'ընդգրկէ գիւղի պատմութիւնը, Հայաստանի երրորդ Հանրապետութեան պատմութիւնը, տեղական ինքնակառավարման համակարգը, ՀՀ խորհրդարանի գործունէութիւնը, քաղաքական համակարգի փոխակերպումները, կրթութեան ոլորտը: 2023էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Արթո Թաւուքեան

arto@designshiva.com

Ծնած է 1958ին, Մոնթրէալ: 1982ին աւարտած է Քոնքորտիա համալսարանի Communication Studiesի պսակաւոր արուեստից բաժինը: Թաւուքեան ինքզինք կը նկարագրէ իբրեւ «որսորդ մը արուեստի արժէքաւոր գործերու, որոնք լքուեցան, երբ հայեր ստիպուեցան փախչիլ Օսմանեան կայսրութենէն՝ 1915ին»: Ներկայիս կ'աշխատի *50 Ways to Recognize Armenian Rugs* վերնագրեալ գիրքին վրայ: Հաստատած է հայ արուեստին նուիրուած www.hyeantiques.com կայքը: Հետաքրքրութիւններուն ծիրը կ'ընդգրկէ հայ արուեստն ու հայոց պատմութիւնը:

2022էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Մանէ Խառատեան

art.phil.maneh@gmail.com

Ծնած է 1985ին, Ալավերդի: Աւարտած է ԵՊՀ փիլիսոփայութեան եւ հոգեբանութեան ֆակուլտետի մագիստրականը՝ «Ժամանակակից արուեստը՝ որպէս տեխնաձին քաղաքակրթութեան երեւոյթ» նիւթով: 2010-18՝ պաշտօնավարած է Կամերային երաժշտական թատրոնին մէջ, 2020-21՝ Ճարտարապետութեան եւ շինարարութեան Հայաստանի ազգային համալսարանին մէջ: Յունուար 2021էն Հայաստանի պատմութեան թանգարանի (ՀՊԹ) տնօրէնի օգնական է: Հրատարակած է ուսումնասիրութիւններ ՀՊԹ գիտական պարբերականին մէջ: Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ փիլիսոփայութիւնը, արուեստը, հոգեբանութիւնը, հոգեվերլուծութիւնը, բժշկագիտութիւնը, կենսաբանութիւնը, էթնոհոգեբանութիւնը:

2023էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Գայիանէ Մախմուրեան

ggmakhm@gmail.com

Ծնած է Երեւան, 1955ին: 1978ին աւարտած է Մաքսիմ Գորկիի անուան Քիւեի պետական մանկավարժական ինստիտուտի պատմական ֆակուլտետը, պատմութեան եւ հասարակագիտութեան ուսուցիչի մասնագիտութեամբ: 2009ին պաշտպանած է դոկտորական ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտին մէջ՝ «1918-1920թթ. Հայաստանի Հանրապետութիւնը Մեծ Բրիտանիայի քաղաքականութեան մէջ» նիւթով: Ներկայիս նոյն ինստիտուտի առաջատար գիտաշխատող է: Շրջան մը եղած է անդամ՝ ՀՀ պաշտպանութեան նախարարին կից գործող հասարակական խորհրուրդին:

Հեղինակ է բազմաթիւ հատորներու, որոնց վերջիններն են՝ *Օսմանեան կտրուկները 1918թ. Բաթումի պայմանագրից հրաժարուելու մասին* (2022), *The French Policy in the Republic of Armenia and Transcaucasia in 1919* (2023), *On the Historical and Political Assessment of the Treaty of Moscow, Dated March 16 (18), 1921* (2024), կազմած եւ ուսերէն (2011), ապա անգլերէն (2020) թարգմանած է՝ *Հայաստանը ԱՄՆ պետական դեսպարտամենտի 1917-1920թթ. փաստաթղթերում* հատորը, անգլերէնէ թարգմանած է Ռիչըրտ Յովհաննիսեանի *1918-1920թթ. Հայաստանի Հանրապետութեան միջազգային յարաբերութիւնները* հատորը (2007): Հեղինակ է աւելի քան 75 գիտական յօդուածներու, որոնց նորագոյնները կը կրեն հետեւեալ վերնագրերը.- «Կրթութիւնը Շուշիի եւ Ալեքսանդրապոլի գաւառներում ու նրա սոցիալական արտայայտութիւնն ըստ 1910-1917թթ. Կովկասեան տարեգրքի տուեալների» (2022), «Հայաստանի Հանրապետութեան անկախութիւնը Հայոց Ազգային խորհրդի նիստերի արձանագրութիւններում», «Բրեստ-Լիտուսկի հաշտութիւնից մինչեւ Մուդրոսի զինադադար. չկատարուած պայմանագրերի պատմութիւն», «ԽՍՀՄ փլուզման պատ-

ճառների լուսաբանումը ԱՄՆ, Միացեալ Թագաւորութեան եւ Ֆրանսայի XXI դարի պատմաբանների աշխատութիւններում» (2024): Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ ԱՄՆի, Մեծ Բրիտանիայի եւ Ֆրանսայի քաղաքականութիւնը 1918-1920ի Հայաստանի Հանրապետութեան հանդէպ, ԱՄՆի վերաբերմունքը Հայկական Հարցին՝ 1916-23, Մեծ Եղեռնի պատմութիւնը 1915-23:
2015էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Վարդան Մատթէոսեան

varny1@yahoo.com

Ծնած է 1964ին, Մոնթեվիտո: 2005ին պաշտպանած է թեկնածուականը՝ «Հայերը Արժանթինի մէջ՝ սկիզբէն մինչեւ 1950» նիւթով, ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտին մէջ: 2019էն կը վարէ Նիւ Եորքի Հայաստանեայց Առաքելական եկեղեցոյ արեւելեան թեմի (կիլիկեան աթոռ) դիւանապետի պաշտօնը: Հեղինակ է հայերէն, սպաներէն ու անգլերէն հատորներու, բազմաթիւ գիտական յօդուածներու, խմբագրած ու թարգմանած է բազմաթիւ հատորներ՝ հայերէն, սպաներէն ու անգլերէն, որոնց վերջինն են *The Politics of Naming the Armenian Genocide: Language, History, and "Medz Yeghern,"* (2022), եւ *A Woman of the World: Armen Ohanian, the "Dancer of Shamakha",* (2022, Արծուի Բախշինեանի հետ): 2023ին արժանացաւ Կիլիկիոյ հայոց կաթողիկոս Արամ Ա. վեհափառի «Մեսրոպ Մաշտոց» շքանշանին: Գիտական հետաքրքրութիւններուն ծիրը կ'ընդգրկէ Սփիւքը, հայոց հնագոյն եւ նոր պատմութիւնը, հայ նոր եւ նորագոյն գրականութիւնը, պատմաբանասիրական խնդիրներ: 1996էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Գագիկ Մարտոյեան

martoyangagik474@gmail.com

Ծնած է 1965ին, Երեւան: 1992ին աւարտած է ԵՊՀ բանասիրական ֆակուլտէտը: 1992-94՝ պաշտօնավարած է ՀՀ պաշտպանութեան նախարարութեան մէջ, որպէս լրատուութեան եւ վերլուծութեան բաժնի պետ: 1994-2000՝ զբաղած է լրագրութեամբ, աշխատակցելով *Ազգ, Առաւօր, Հայաստանի Հանրապետութիւն* օրաթերթերուն: 2000-4՝ պաշտօնավարած է ՀՀ ՆԳՆ ներքին գործերուն մէջ, որպէս ակումբի պետ: Հեղինակ է շարք մը մենագրութիւններու, որոնց վերջինը՝ *Ժողովրդական միհրապաշտութիւնը եւ գարնանային տարեմուտը* Սասնայ ծռեր էպոսում (2018): Ունի նաեւ շարք մը յօդուածներ: Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ հայ ազգագրութիւնը եւ աստղային առասպելաբանութիւնը: 2000էն կ'աշխատակցի *Հայկազեան հայագիտական հանդէսին*:

Արմէն Միքայէլեան

armen_michaelian@yahoo.com

Ծնած է 1960ին, Երեւան: 1982ին աւարտած է ԵՊՀ պատմութեան բաժանմունքը, 1982-91՝ աշխատած է Հայաստանի ԳԱ պատմութեան հիմնարկը, 1990ին պաշտպանած է ատենախօսութիւն՝ պատմութեան, քարտէզագրու-

թեան եւ լեզուաբանութեան խնդիրներու շուրջ, 1993ին աւարտած է Ֆրանսայի գործարարներու եւրոպական ուսումնավայրի դասընթացքը: Հրատարակած է գիտական եւ հրապարակախօսական յօդուածներ, հեղինակ է ապագայագիտական, գիտափիլիսոփայական եւ լեզուաբանական աշխատութիւններու, ուսած է քսանէն աւելի լեզու: 2020էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Վիլէն Մնացականեան

mnatsakanyanvilen@gmail.com

Ծնած է 1998ին, Ռուսաստան: 2023ին մագիստրականը ստացած է Հայ-Ռուսական համալսարանի «Տնտեսութեան պետական կարգաւորում» բաժինէն: Հեղինակ է երկու գիրքի, վերջինը՝ *Ինտեգրացիոն գործընթացների ազդեցությունը միգրացիոն հոսքերի վրայ* (2020): 2024էն կ'աշխատի դոկտորականին վրայ՝ Հայ-Ռուսական համալսարանին մէջ՝ «Միջազգային տնտեսագիտութիւն» մասնագիտութեամբ, միաժամանակ կը դասաւանդէ ՀՀ տնտեսութիւն, Միջազգային տնտեսագիտութիւն եւ Արտասահմանեան երկրների տնտեսութիւն: Եղած է անդամ գործադիր եւ օրէնսդիր մարմիններու փորձագիտական խումբերու:

2023էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Վահրամ Շէմմասեան

vahram.shemmassian@csun.edu

Ծնած է Թրիփոլի, Լիբանան: 1996ին պաշտպանած է դոկտորականը՝ “The Armenian Villagers of Musa Dagh: A Historical-Ethnographic Study, 1840-1915” նիւթով: 2006էն տնօրէնն է California State University, Northridgeի ժամանակակից եւ դասական լեզուներու եւ գրականութեան բաժանմունքի հայագիտութեան բաժնին: Ունի բազմաթիւ յօդուածներ, Մուսա Լեռան բնակչութեան նուիրուած մենագրութիւններ, վերջինը՝ *The Armenians of Musa Dagh: From Obscurity to Genocide Resistance and Fame (1840-1915)* (2020): Պարգևատրուած է ՀՀ Սփիւռքի նախարարութեան Ուիլյըմ Սարոյեան շքանշանով (2010): Արժանացած է Ծիծեռնակաբերդի Հայոց Յեղասպանութեան թանգարան-ինստիտուտի Ֆրանց Վերֆէլ պատուանշանին՝ առ ի գնահատանք Մուսա Լեռան մասին իր գիտաշխատութիւններուն (2015): 1996էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Արթիւր Շէնեան

arthurshenian@gmail.com

Ծնած է 1997ին, Ռումիէ, Լիբանան: 2020ին աւարտած է Հայկազեան համալսարանի հայագիտական ճիւղի քառամեայ ընթացքը՝ ստանալով պակաւոր արուեստից վկայականը: 2022էն կը հետեւի Փարիզի ԻՆԱԼՔՕ համալսարանի ԻՄԱՍ (International Master's in Armenian Studies) առցանց ծրագրին: Ներկայիս կը պաշտօնավարէ իբրեւ Հայկազեան համալսարանի Տէրեան եւ Պարսումեան գրադարաններու վարչական պատասխանատու: Հանդէս կու գայ պատմութեան, յօդուածներով ու թարգմանութիւններով: Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ սփիւռքա-

հայ նոր եւ նորագոյն գրականութիւնը, ինչպէս նաեւ արեւմտահայերէնի լեզուաոճական հարցերը:

Վարուժան Պօղոսեան

varuzhan.poghosyan@bk.ru

Ծնած է 1955ին, Երեւան: 2009ին պաշտպանած է դոկտորական՝ «Հայոց Յեղասպանութեան առաջին փուլը ֆրանսիական պատմագրութեան եւ հասարակական մտքի գնահատմամբ (1895-1918թթ.)» նիւթով: Հեղինակ է հայերէն, ռուսերէն, ֆրանսերէն մենագրութիւններու եւ յօդուածներու: Հրատարակած է հայ մեծանուն պատմաբաններ՝ Աշոտ Յովհաննիսեանի եւ Աբգար Յովհաննիսեանի անտիպ գիրքերը: 2001էն առաջատար գիտաշխատող է ԵՊՀ Հայագիտական հետազոտութիւններու ինստիտիտին մէջ: 2014-22՝ եղած է ԵՊՀ Հայագիտութեան հարցեր հանդէսի պատասխանատու քարտուղարը: Գիտական հետաքրքրութիւններուն ծիրը կ'ընդգրկէ ԺԸ. դարու ֆրանսական յեղափոխութիւնը, հայ-ֆրանսական յարաբերութիւնները, Հայոց Յեղասպանութիւնը, խորհրդային եւ ժամանակակից ռուսական պատմագրութիւնը:

2011էն կաշխատակցի ՀՀՀին:

Յասմիկ Սայադեան

hasmik.sayadyan93@gmail.com

Ծնած է Երեւան, 1993ին: Աւարտած է ԵՊՀ պատմութեան ֆակուլտետի արուեստաբանութեան բաժինը: 2016-17՝ ուսանած է Ֆրանսա՝ Էքս-Մարսէյ համալսարանի արուեստաբանութեան բաժինը: 2017ին պաշտպանած է թեկնածուական՝ Անիի «Տիգրան Հոնենց եկեղեցու որմնանկարները» նիւթով: 2017-24՝ եղած է «Յովհաննէս եւ Նոյեմի Մեգերեաններ»ու անուան հին գորգերու թանգարանի արուեստաբան: Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ հին գորգերու ուսումնասիրութիւն, գեղանկարչութեան վերլուծութիւն, հոգեբանութիւն:

Խաչատուր Ստեփանեան

kh.stepanyan@gmail.com

Ծնած է 1976ին, Ջաւախք: Վարիչն է Խ. Աբովեանի անուան հայկական պետական մանկավարժական համալսարանի համաշխարհային պատմութեան եւ անոր դասաւանդման մեթոտաբանութեան ամբիոնին:

Հրատարակած է աւելի քան 120 գիտական եւ գիտամեթոդական յօդուած, հեղինակ է համահեղինակ է բուհական, ուսումնական ձեռնարկ-դասագիրքերու, ունի 7 մենագրութիւն, որոնց վերջինը՝ Հայաստանում խորհրդային իշխանութեան հաստատման հիմնահարցը սփիւռքահայ հասարակական-քաղաքական մտքի գնահատմամբ (1920-1930ականներ) (2021): Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ ԺԹ. դարավերջ-Ի. դարասկիզբի հայ ազգային-ազատագրական շարժման, Հայաստանի Ա. Հանրապետութեան, հայ-վրացական փոխյարաբերութիւններու, 1920-30ականներու սփիւռքահայ հասարակական-քաղաքական միտքի, հայութեան

տեղաշարժերու եւ փոխակերպումներու, Խորհրդային Հայաստանի եւ Անդրկովկասի պատմութեան, սովետագիտութեան հարցերը:

Արփի Վարդումեան

avardumyan8@gmail.com

Ծնած է 1948ին, Երեւան: 1972ին աւարտած է Կոմիտասի անուան Երեւանի պետական կոնսերվատորիայի երաժշտութեան պատմութեան եւ տեսութեան բաժինը: Այժմ գիտաշխատող է Մատենադարանի արուեստի պատմութեան եւ գրչութեան կեդրոններու ուսումնասիրութեան բաժինին մէջ: 1998էն անդամ է Հայաստանի կոմպոզիտորների եւ երաժշտագետների միութեան: Հրատարակութեան պատրաստած է հայր Ղեւոնդ Տայեանի բազմահատոր *Շարակնոցի*, Ա. հատորը, նաեւ՝ Վիեննայի Մխիթարեան միաբանութեան մատենադարանի «Մատենա երաժշտականութեան» ծաւալուն ձեռագրի բնագիրը: Գիտաուսումնական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ հայ միջնադարեան շարականները, Կոմիտաս վարդապետի երաժշտական գործունէութիւնը, Եղիա Տնտեսեանի երաժշտական բերքը: 2012էն կ'աշխատակցի *Հայկազեան հայագիտական հանդէսին*:

Անդրանիկ Տազէսեան

adakessian@haigazian.edu.lb

Ծնած է 1960ին, Պէյրութ: 2011ին պաշտպանած է դոկտորականը՝ “Democracy and Integration in Multicomunal Polities: The Armenians and the Kurds in Lebanon” նիւթով: 1993-2017՝ պատասխանատու քարտուղար, իսկ 2018էն պատասխանատու խմբագիրն է *Հայկազեան հայագիտական հանդէսին*: Անդամ է *Հայագիտական հարցեր* (2014), *Ցեղասպանագիտական հանդէս* (2018), *Բանբեր Հայաստանի արխիւների* (2023) պարբերականներու խմբագրակազմերուն: Անդամ է Ծիծեռնակաբերդի Հայոց Ցեղասպանութեան Թանգարան-Ինստիտուտի գիտական խորհուրդին (2020) եւ Ուաշինկթընի Armenian National Instituteին (2024): 2011էն տնօրէն է Հայկազեան համալսարանի հայկական Սփիւռքի ուսումնասիրութեան կեդրոնին: Այդ հանգամանքով կազմակերպած է ամենամեայ գիտաժողովներ: Խմբագրած է գիրքեր, վերջինը՝ *Հայերը Ծոցի արաբական երկիրներուն մէջ գիտաժողովի նիւթեր* (2024), կազմած է գիրքեր, վերջինը՝ *ՀԲԸՄ Հաճընի որբանոցը* (1919-1920) (2021), ունի մենագրութիւններ, վերջինը՝ *Լիբանանի հայօճախը, գիրք Ա., համարկումին խաչուղիները (1920-2005)* (2015): Գիտական հետաքրքրութիւններուն ծիրը կ'ընդգրկէ ժողովրդավարացումը, մարդկային իրաւանց, ինքնութեան, համարկումի, Սփիւռքի մշակոյթի եւ պահպանման, Միջին Արեւելքի հայօճախներու պատմութեան հարցերը: 1993էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Տէր Րաֆֆի Տէր Յովհաննէսեան

frohanessian@hotmail.com

Ծնած է Պէյրութ, 1972ին: 1991-95՝ Հռոմի Պապական Գրիգորեան համալսարանին մէջ ուսանած է փիլիսոփայութիւն, իսկ Պէյրութի Աէն ժողէֆ հա-

մալսարանին մէջ 2003ին պաշտպանած է մագիստրական՝ կրօնագիտութեան ուղղութեամբ: 2000-9՝ եղած է Librairie Orientalի հայկական բաժնի պատասխանատուն, իսկ 2007-20՝ վարած է լիբրաններէն *Սաութ ալ մահապալէ* ռատիոյկայանի Կիրակնօրեայ միժամեայ հայկական յայտագիրը: 2019-23՝ դիւանապետն է Հայ Կաթողիկէ պատրիարքութեան, իսկ 2023էն Պէյրութի Ս. Գրիգոր Լուսաւորիչ-Ս. Եղիա աթոռանիստ եկեղեցիի հոգեւոր հովին է: Հեղինակն է *Père Sahak Kéchichian. Le consolé consolateur* (2023) գիրքին: Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ լիբանահայ մշակութային միութիւններու գործունէութիւնը, միջեկեղեցական եւ միջկրօնական համագործակցութիւնը:

Փրոֆեսոր Սիմոն Փայասլեան

payas@bu.edu

Վարիչն է Պոստոնի Համալսարանի Չարլզ Ք. եւ Էլիզապէթ Մ. Քենսետանի Անուան Ժամանակակից Հայոց Պատմութեան եւ Գրականութեան Ամբիոնին: 1992ին, Ուէյն Համալսարանէն ստացած է դոկտորական վկայական՝ քաղաքական գիտութիւններու մարզին մէջ, իսկ Եու. Սի. Էլ.Էյ.էն՝ 2003ին, երկրորդ դոկտորականը՝ հայոց պատմութեան մէջ: Դասուանդած է զանազան համալսարաններու մէջ, ներառեալ՝ Միչիկընի, Սատըրն Քելիֆորնիայի, Սուն Եաթ Սէնի (Կանժու, Չինաստան) եւն.:

Հեղինակ է շարք մը գիրքերու, վերջինը՝ *The Political Economy of Human Rights in Armenia: Authoritarianism and Democracy in a Former Soviet Republic* (2011): Ֆրետերիք Փիրսընի համահեղինակութեամբ իր *International Political Economy: Conflict and Cooperation in the Global System* գիրքը (լոյս տեսած 1999ին), չինարէն թարգմանութեամբ հրատարակուած է 2006ին: Ունի նաեւ ուշագրաւ ուսումնասիրութիւն-յօդուածներ, ինչպէս՝ “Diasporan Subalternities: The Armenian Community in Syria,” եւ՝ “Imagining Armenia,” (*The Call of the Homeland: Diaspora Nationalisms, Past and Present*, Brill, 2010) գիրքին մէջ: Փրոֆ. Րիչըրտ Յովհաննէսեանի հետ խմբագրած է *Armenian Constantinople* (2010) եւ *Armenian Cilicia* (2008) հատորները: Ներկայիս աւարտելու վրայ է Դանիէլ Վարուժանի նուիրուած ուսումնասիրութիւն մը եւ՝ *Diasporization and the Politics of Recognition: U.S. Foreign Policy and the Armenian Question* գիրքը:

Աշխատակիցներու Ուշադրութեան

Հայկազեան հայագիտական հանդէս (ՀՀՀ) տարեգիրքը լոյս կ'ընծայուի 1970էն ի վեր, Հայկազեան համալսարանի հայագիտական ամբիոնին կողմէ: 2022էն սկսեալ ան լոյս կը տեսնէ վեցամսեայ դրութեամբ:

ՀՀՀն կ'ընդգրկէ Հայաստանի եւ հայութեան ազգագրական, աշխարհագրական, բանասիրական, գրական, իմաստասիրական, իրաւագիտական, լեզուագիտական, կրօնական, հնագիտական, մշակութային (կրթութեան, թատրոնի, սինեմարուեստի, երաժշտութեան, պարարուեստի, ճարտարապետութեան, կերպարուեստի, մամուլի եւն.), պատմական, տնտեսագիտական, բնական, քաղաքական եւ ընկերային գիտութիւններու բնոյթի անցեալի եւ ժամանակակից նիւթեր:

ՀՀՀն կը հրատարակէ հայերէն, անգլերէն, արաբերէն, ֆրանսերէն անտիպ գիտական յօդուածներ, ուսումնասիրութիւններ, հետազոտութիւններ, վերլուծումներ, հրապարակումներ, քննարկումներ, յուշագրութիւններ, գրախօսականներ, հաղորդումներ, վիճակագրական-մատենագիտական ցանկեր, մահագրականներ, հրատարակուած նիւթերու տարակարծիք ուսումնասիրութիւններ: Բացառիկ պարագաներու ՀՀՀի խմբագրութիւնը իր հայեցողութեամբ նկատի կ'առնէ այլ բնոյթի նիւթեր եւ:

Ներկայացուած յօդուած-ուսումնասիրութիւնները եւ հրապարակումները պարտին ըլլալ նախընտրաբար՝ առաւելագոյնը շուրջ 8000 բառ (ծանօթագրութիւններուն հետ), քննարկումները՝ առաւելագոյնը շուրջ 4000 բառ (ծանօթագրութիւններուն հետ), հաղորդումները՝ առաւելագոյնը 3000 բառ, գրախօսականները՝ 2000 բառ, մահագրականները՝ մինչեւ 1000 բառ, բոլորը՝ համակարգիչի ARMENIAN UNICODE ծրագրի շարուածքով:

Աշխատակցութիւնները պարտին ունենալ հետեւեալ կառոյցը.- մուտք/ներածական, բուն նիւթը (ենթավերնագրերով շաղկապուած), եզրակացութիւն:

Ծանօթագրութիւնները պարտին ըլլալ հետեւեալ կերպ.-

Մամուլի պարագային՝ հեղինակ, «յօդուածի անուն», *մամուլի անուն* եւ տպագրութեան վայր, յօդուածի տպագրութեան թուական եւ էջաթի:

Յօդուածներու ժողովածուի պարագային՝ հեղինակ, «յօդուածի անուն»՝ *գիրքի անուն* եւ *հատոր*, խմբագիր/կազմող, հրատարակիչ/մատենաշար, տպագրութեան վայր, տպարան եւ տպագրութեան թուական, էջաթի:

Գիրքի պարագային՝ հեղինակ, *գիրքի անուն* եւ *հատոր*, խմբագիր/կազմող, հրատարակիչ/մատենաշար, տպագրութեան վայր եւ տպարան, տպագրութեան թուական եւ էջաթի:

Արխիւային փաստաթուղթերու պարագային՝ փաստաթուղթի հեղինակը, խորագիրը, գտնուած վայրը, թիւը:

Հարցազրոյցներու պարագային՝ մասնակիցներուն անունները, հարցազրոյցին վայրն ու թուականը:

Կայքէջի պարագային՝ լրի հասցեն եւ մատչումի թուականը:

Աշխատակցութիւնը պարտի ունենալ նաեւ անգլերէն կամ հայերէն ամփոփում, շուրջ 250 բառ: Նիւթին պէտք է կցուած ըլլան նաեւ հեղինակային համաձայն ինքնակենսագրականը (ծննդեան թուական, ծննդավայր, բարձրագոյն ուսում, պաշտպանած գիտական բարձրագոյն աստիճանը եւ թեզին նիւթը, հրատարակած գիրքերու եւ նիւթերու ծիրը, վերջին երկու գիրքերուն անունները (թուական-հրատարակչատուն, վայր), ներկայ պաշտօնը, նկար մը եւ ելեկտրոնային հասցեն առ ի հրատարակութիւն:

Հրատարակելի աշխատակցութիւնները, ըստ կարիքի, կ'ենթարկուին լեզուական խմբագրումի: Այլ փոփոխութիւններ կը համաձայնեցուին հեղինակին հետ: Հայագիր յօդուածները կը հրատարակուին դասական ուղղագրութեամբ: Աշխատակցութիւններուն կրնան կցուիլ նաեւ լատրակ պատկերներ, փաստաթուղթեր եւ քարտէզներ, որոնց աղբիւրը եւ հրատարակման արտօնութիւնը ապահովելու է հեղինակը:

Աշխատակցութիւնները կը ներկայացնեն հեղինակներուն տեսակէտը:

Աշխատակցութեան, թղթակցութեան, բաժանորդագրութեան, հատորներու ստացումի, հրատարակութիւններու փոխանակման եւ այլ հարցերով հաղորդակցիլ հետեւեալ կերպ.-

Dr. Antranik Dakessian

Haigazian Armenological Review

P.O.Box 111748 Beirut Lebanon

Fax: 01349230/1, 03712058

Email: adakessian@Haigazian.edu.lb

Իւրաքանչիւր աշխատակցութեան ստացումը անմիջապէս կ'իմացուի հեղինակին, իսկ հրատարակման որոշումը՝ աշխատակցութեան ստացումէն առաւելագոյնը երեք ամիս ետք:

Հատորի մը գրախօսուիլը փափաքողներ, խմբագրութեան սկզբունքային համաձայնութենէն ետք պարտին ՀՀՀ խմբագրութեան յղել հատորէն 2 օրինակ:

ՀՀՀ մէջ հրատարակուած նիւթերէն կարելի է մէջբերել: Հրատարակուած նիւթին հեղինակը կը ստանայ ՀՀՀ տուեալ հատորէն 1 օրինակ:

ՀՀՀ հատորները մատչելի են հետեւեալ կայքերուն վրայ.-

<http://www.haigazian.edu.lb/Publications/Pages/HaigazianArmenologicalReview.aspx> .

<http://tert.nla.am/mamul/HAIGAZIAN/Table.html> .

<https://www.flib.sci.am/> .

Notes to Contributors

Haigazian Armenological Review (HAR) has been published annually since 1970 by the Department of Armenian Studies at Haigazian University. Since 2022 it is being published twice a year.

The *Review* is devoted to studies concerning Armenia and the Armenians. These may include works dealing with archaeology, culture (education, theatre, cinema, music, dance, architecture, plastic arts, mass media, etc.), economics, ethnography, geography, history, linguistics, literature, philology, philosophy, politics, religion, legal, natural, and social sciences, previously unpublished documents, memoirs, investigative articles, reviews, briefings, bibliographical lists and necrologies in Armenian, Arabic, English and French. Other sorts of materials might be published at the discretion of the Editorial Board.

Articles submitted to *HAR* should preferably be not more than 8,000 words (including the footnotes), for investigative articles not more than 4000 words, for briefings not more than 3000 words, for book reviews not more than 2000 words and for obituaries not more than 1000 words. They will be considered on the understanding that they are not being offered for publication elsewhere, and have not been published in any language. It is preferred that manuscripts submitted for consideration are on CD with a hard copy.

Manuscripts should have an introduction, the body (with subtitles) and a conclusion. Footnotes should have the following details.-

In case of newspapers/periodicals: author, "title of the article", *name of the newspaper*, place of publication, date and page number.

In case of an article from a book: author, "title of the article", *name of the book and volume*, editor, publisher/series, place of publication, date and page number.

In case of books: author, *name of the book and volume*, editor, publisher/series, place of publication, date and page number.

In case of archival materials: author of the document, "title of the document", name of the document file, place reserved, number, date.

In case of interviews: names of the interviewer and interviewee, date and place.

In case of websites: the title, the address and date accessed.

Submitted manuscripts must include a 250-word summary in Armenian or English and a short biography of the author (birthplace and birth date, higher education, degree, title of the thesis defended, the scope of the

books published, the titles of the last two books published – with date and publisher – current position, and a passport size photo).

The editors reserve the right to edit manuscripts to conform to the *HAR*'s style and format. Authors will be informed before publication in case of more substantial editing. Spelling in articles published in Armenian will be edited to conform to the rules of classical Armenian orthography.

Authors may submit with their contributions printable photographs, tables, figures, and maps on condition that they mention their sources and take responsibility for obtaining permission to publish any such material under copyright.

All opinions expressed (except those in the Editorial) are those of the individual authors and not necessarily of *HAR* or Haigazian University.

Manuscripts, correspondence, subscription queries, and inquiries regarding back issues should be addressed to:

Haigazian Armenological Review
P.O.Box111748, Beirut Lebanon.
Fax: (01)341230/31 or (03)712058
Email: adakessian@haigazian.edu.lb

All submissions received will be acknowledged immediately. Decisions concerning publication will be conveyed to the authors within three months of the date of receipt of the submitted contributions. Manuscripts not accepted for publication will be returned to their authors.

Authors or publishers who wish to have their titles considered for review should send two copies of the said publication to the Editor. One copy will be passed on to the reviewer, while the second will be deposited in the Derian Armenological Library of Haigazian University and become available to the general public.

Quotations can be made from contributions published in *HAR*. The Editorial Board likes to be kept informed in this regard.

Authors are entitled to one copy of the volume in which their contribution is published.

The *Haigazian Armenological Review* volumes are accessible on the following websites:

<http://www.haigazian.edu.lb/Publications/Pages/HaigazianArmenologicalReview.aspx> .

<http://tert.nla.am/mamul/HAIGAZIAN/Table.html> .

<https://www.flib.sci.am/> .

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ/TABLE OF CONTENTS

Դոկտոր Արշալոյս Թօփալեան Dr. Archalouyse Topalian	5
Գայիանէ Մախմուրեան Վահրամ Շէմմասեան Խաչատուր Ստեփաննեան Սիմոն Փայասլեան Gayane Makhmourian Vahram Shemmassian Khachadour Stepanian Simon Payaslian	7
<div style="display: flex; justify-content: space-between;"> <div style="width: 30%;"></div> <div style="width: 60%;"> <p>Հարց-պատասխան՝ «Հայ Պատմագիտութիւնը ԻԱ. դարուն» Interview: Armenian Historiography in the 21st Century</p> </div> </div>	

ՅՕԴՈՒԱԾ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ ARTICLES

Ազգագրութիւն Ethnography

Գագիկ Մարտոյեան Gagik Martoyan	Յլի եւ Օձավիշապի աստղային եղանակային կողերը հին հայոց աշխարհայեացքում The Constellation Codes of the Ox and the Serpent in Old Armenian Perception During Different Seasons	21
--------------------------------------	--	----

Արուեստ եւ Արհեստ Arts and Crafts

Arto Tavukciyan	Misattributions of Armenian <i>Mafrashes</i> and the Myth of the Shahsevan Pile Rug	47
Արթօ Թաւուքչեան	Սխալապատումներ հայկական գորգին առնչութեամբ եւ Շահսեան գորգին առասպելը	
Մանէ Խառատեան Mane Kharatian	Էջեր հայկական ոռքի պատմութիւնից. Մասն Ա. հայերը ոռքում Pages of Armenian Rock Music History. Part A.- The Armenians in Rock Music	61
Արփի Վարդումեան Arpi Vardumyan	Յովհաննէս Թումանեանի «Անուշ» պոեմը եւ Կոմիտասի համանուն անաւարտ օպերան Hovhannes Tumanyan's Poem "Anush" and the Homonymous Unfinished Opera by Komitas	85
Անդրանիկ Տազէսեան Antranik Dakessian	Ակնարկ հայկական արծանագրութեամբ, կամ հայապատկան կնիք կրող պղնձեայ դգալներու եւ պատառաքաղներու A Survey of Armenian Copper Forks and Spoons	103

Արծուի Բախչինեան Artsvi Bakhchinyan	Հայ-սպանական մշակութային կապերու դրուագներ (ԺԹ. դար-1930ականներ) Armenian-Spanish Cultural Relations (19 th Century-1930s)	121
--	---	-----

Գրականութիւն Literature

Վաչագան Գրիգորեան Vachagan Grigoryan	Թադեոս Տոնոյեան. աշխարհ, որ ընդլայնում է գոյութեան սահմանները (Ա.) Thadevos Donoyan: A World that Enlarges/Widens the Limits of Existence (I)	139
---	--	-----

Լեզու Linguistics

Արմէն Միքայէլեան Armen Michaelian	Օտար յատուկ անունների տառադարձութեան սկզբունքները (Մասն ԺԱ. – վրացերէն) The Principles of Transliterating (Transcribing) Foreign Proper Names into Armenian, Part XI – Georgian Language	171
Եւրի Աւետիսեան Yuri Avetisyan	Գոյականի առկայացման քերականական կարգը արդի հայերէնում. որոշեալութեան եւ անորոշութեան ենթակարգեր The Grammatical Category of Noun Determination in Modern Armenian: Subcategories of Definition and Indefinition	201

Պատմութիւն եւ Հնագիտութիւն History and Archeology

Լիլիթ Հաքարեան Lilit Zakaryan	Պետականաշինութեան հիմնախնդիրները ՀՀ գերագոյն խորհրդում 1990-1995ին The Basic Issues of State Building in the Armenian Parliament Between 1990 and 1995	221
Vahram Shemmassian Վահրամ Շէմմասեան	The Protestant Schools in Musa Dagh During the 1920s-1930s Մուսա Տաղի աւետարանական դպրոցները 1920-30ականներուն	253
Ռուբէն Ռաֆիկի Գասպարեան Ruben Gasparyan	Մահկանաբերդցի Սադուն Բ.ի աթաբէկ, ամիրսպասալար տիտղոսներն ըստ վիմական սկզբնաղբիւրների The Atabek, Amirspasalar Titles of Sadun II of Mahkanaberd According to Epigraphic Sources	281

Տնտեսութիւն Economy

Վիլէն Մնացականեան Vilen Mnatsakanyan	Հայաստանի Հանրապետութեան եւ Ծոցի արաբական երկրների միջեւ տնտեսական կապեր. ռիսկեր ու հնարատրութիւններ Economic Relations Between Armenia and the Arab Gulf States: Risks and Opportunities	301
---	---	-----

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ UNPUBLISHED DOCUMENTS

Վարուժան Պողոսեան Varuzhan Poghosyan	Մօրուս (Մարգար) Հասրաթեանի գիտական ելոյթները Բէյրութի Հայկազեան համալսարանում (1965-66) Morus Hasratian, A Visiting Professor at Haigazian University in 1965-1966	335
Արթիւր Շէնեան Arthur Shenian	Անդրանիկ Ծառուկեանի նամակները Նիկողոս Սարաֆեանին (1947-58) Antranig Dzarugian's Letters to Nigoghos Sarafian (1947-1958)	345
Վարդան Մատթէոսեան Vartan Matiossian	Զապէլ Եսայեանին Ուղղում յայտնի եւ անյայտ նամակներ (1907-1908 եւ 1922-1927) Letters Addressed to Zabel Essayan Both Known and Unknown (1907-1908 and 1922-1927)	367

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ BRIEFINGS

Յասիկ Սայադեան Hasmik Sayadyan	Megerian Carpet ընկերութեան քայլերը՝ հայկական գորգի վերածնունդին ուղղութեամբ Steps for the Revival of the Armenian Rug	411
Père Raffi Hovannessian Տէր Րաֆֆի Յովհաննէսեան	La Cathédrale Saint-Grégoire l'Illuminateur et Saint-Élie au Fils des 65 Ans Ս. Գրիգոր Լուսատրիչ-Ս. Եղիա եկեղեցին անցնող 65 տարիներուն	423
	Մերձաւոր Արեւելքի Հայ աւետարանական եկեղեցիներու միութեան վերականգնումը. 1924ի յետեղեռնեան Ա. համաժողովը եւ ցանկը՝ 1924-2024 համաժողովներու The Restoraion of the Union of the Armenian Evangelical Churches of the Near East: The 1924 First Post-Genocide Conference and the List of the Dates and Places of the Ensuing Conferences	435

ՄԱՀԱԳՐԱԿԱՆՆԵՐ OBITUARIES

Լեւոն Թորոսեան, Սիբրլայ Յովհաննիսեան, Լեւոն Քեչեան, Յարութին Քիրքճեան	443
--	-----

Հայկազեան հայագիտական հանդէսի ԽԳ. հատորի զոյգ գիրքերու շնորհանդէսը Պէյրուսի եւ Երեւանի մէջ The Launching of <i>Haigazian Armenological Review</i> Books 43/1 & 43/2 in Beirut and in Yerevan	457
Համառօտ կենսագրութիւն հատորին աշխատակիցներուն Brief Biography of the Contributors	461
Աշխատակիցներու ուշադրութեան Note to Contributors	469
Բովանդակութիւն Table of Contents	473
Յիշատակարան Colophon	477

Յիշատակարան

Հայկազ Էան Հայագիտական Հանդեսի 2024 տարուան երկու- գիրքներու- խմբագրման եւ Հրատարակման աշխատանքներուն ընթացիկն ականատես եւ- ականջալուր եղանկ Համաշխարհային եւ Հայկական Բազմազան Իրատարչո- թի-ններու, աննախընթաց դեպքերու: Արդարեւ,

Ի թիւանի ընկերայնորեական, Վաղախան անորոշո-թի-նը եւ նաՀանջը շարունակու-եցան, թէեւ զերջ Գրատարայէլի Հեղ պատերազմը, որ րեւ-եց 66 օր եւ պարճաու-եց շո-րջ 3500 մահեր, րանեակ Հազարա-որ զիրա-որներ, ա-երեց Բազմաթի- Գի-ղեր, պարճաու- րարչա- շո-րջ 1.500.000 ներքին Գաղ- թականո-թեան, Բնակչո-թեան կենսագործո-նէո-թեան խախտման: Եւ ինչ- պէս 2020 Օգոստոս 4ի Պէյրո-թի նա-աՀանգիտի աՀեղ պայնո-մէն երդ ՎՎՎ խմբագրակազմի անտամներոս պրացեր էին Հեո-աչաչնային, Համացան- ցի, դիմարեցրի թէ այլալան Հաղորդամիջոցներով Հարի-րա-որ նամակներ Վանդէի աշխարհարաւ աշխատակիցներէն, ընթերցողներէն, Բարեկամներ- րէն, նոյնպէս եւ այս անգամ պրացանկ զօրակցական Հաղորդո-մներ, որոնց Համար շնորՀակալ էնի:

Սո-րիոյ մէջ իշխանո-թի-նը րապալեցաւ եւ զԳո-շա-որ Լա-արեական շո-նչ մը կը րիբէ Հոն այս օրերուն: Պաղեստին-Իարայէլ Հակամարտո-թեան էնթախորիկն զրայ Պաղսայի դեմ իարայէլեան 15ամեայ յարչակո-մը ցարդ պարճաու-եց ա-երի Վան 43.000 մահ, 100.000 զիրա-որ եւ 1.200.000 Գաղթա- կանո-թի-ն եւ այս պաՀո-ն մարդկային ու սեփականո-թեանց դեմ ա-երաւո- թի-նը կը շարունակու-ի: Ար շարունակու-ի նաեւ ոո-սո-վրանական պատերազ- մը:

Արցախի ինդրով ականատես եղանկ Գի-ղերո- Հիմնայարակ կործանման, մշակո-թային յո-շարչաններո- ցեղապանո-թեան Գործընթացի յաո-աջացման: Ընլոյժ մնացին ՊաՎո-ի Բաներո-ն մէջ Արցախի արգելափակէալ ղեկավար- ներո- եւ Գերեզարեալներո- ալար արչակման ինդիրներ: ՄիջալԳային իրեական դարարանի նախկին դարախալ Լո-իս Մորէնօ Օվամփօ, Բո-նագրա- ո-աժ Արցախի Հայ Բնակչո-թեան նկարամբ Արարէյճանի Գործող ո-թի-ն- ները որակեց ՅԵՂԵՍՊԵՆՈՒԹԻՒՆ, եւ Հայո-թեան յղաժ նամակով կոչ րրա- մշակէլո- ընդՀանո-ր ո-ալ մալարո-թի-ն: Լա Վէյի դարարանը մերժեց Ա- րարէյճանի նախնական աո-արկո-թի-նները՝ Արարէյճանի կողմէ ցեղապաշ- րական իրարականո-թեան Բոլոր Յե-երո- զերացման միջալԳային պայմանագի- րի Հայարանի Հանրապետո-թեան պնդո-մներ:

Համաշխարհային աո-ո-մով ականատես կը մնանկ մարդկային արժեՀամա- կարգերո-, իսոպի եւ Գործիկ անՀա-արալի Հակասո-թի-ններո-, մարդկային իրեալներո- իրարակո-մին:

Սակայն, ի Հեճո-կա զերոյիշեալ եւ այլ րագնապալի իրատարչո-թի-ններ- րո-ն, արչանագրո-եցան նաեւ Հարարաո-ի թանախընթաց դեպքեր-

Հայկազեան հայագիտական հանդես, հրր. 44/2. տպաքանակ՝ 125
Գին՝ Լիբանան 100,000Լ. ոսկի, արտասահման 30 տոլար
Տպագրութիւն՝ Rouhana Chemaly, Daroun s.a.l.
Haigazian Armenological Review, Vol. 44/2
P.O.Box 11-1748 Beirut Lebanon
Fax: 01349230/1, 03712058
Email: adakessian@haigazian.edu.lb